

ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՇԵԿՈՅԱՆ Վ.Ա., ՄԱՆՈՒԿՅԱՆ Կ.Ղ.

**ԲԺՇԿԱԿԱՆ  
ՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՎԻՐՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ  
ԵՎ ԻՄՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Երկրորդ հրատարակություն,  
լրացված և վերախմբագրված

ԵՊԲՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ 2015

ՀՏԴ 579.61 : 578 : 577.27 (07)  
ԳՄԴ 52.64 + 28.3 + 28.073 g7  
Ը 437

Դաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության  
կողմից որպես բուհական դասագիրք

Դասագիրքը տպագրության է Երաշխավորվել Երևանի Ս.Դերացու անվան  
պետական թժշկական համալսարանի գիտական խորհրդի կողմից

**Գրախոսներ՝ Դամբարձումյան Ա.Զ., ԵՊԲՀ համաճարակաբանության  
ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պողթեսոր  
Գարրիելյան Ս.Ն., ՀՀ ԱՆ ԱՍԻ մանրէաբանության  
ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ  
Ավագան Ս.Ս., ՀՊԱՀ մանրէակենսաբանության և  
վիրուսաբանության ամբիոնի վարիչ, ա.գ.թ., դոցենտ  
Նուրուլյան Ա.Գ., ՀՊԱՀ մանրէակենսաբանության և  
վիրուսաբանության ամբիոնի պողթեսոր, ա.գ.թ.**

**Լեզվաբան խմբագիր՝  
Սուքիասյան Յ.Կ., բան.գ.թ., դոցենտ**

Ծ437 Ծեկոյան Վլադիմիր Արմենակի, Մանուկյան Կոստանդին Ղուկասի,  
Թժշկական մանրէաբանություն, Վիրուսաբանություն և իմունաբանություն:  
Դասագիրք. - Եր.: ԵՊԲՀ հրատարակչություն, 2009.- 478 էջ:

Մ.Դերացու անվան Երևանի պետական թժշկական համալսարանի թժշկական  
մանրէաբանության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պողթ. Վ.Ա.Ծեկոյանի և բ.գ.թ., դոցենտ  
Կ.Դ.Մանուկյանի դասագրքում ներկայացված են թժշկական մանրէաբանության,  
վիրուսաբանության և իմունաբանության ժամանակակից ձեռքբերումները: Դամա-  
ծայն թժշկի և դեղագետի որոկավորման շրջանակներում «Թժշկական մանրէա-  
բանություն» առարկայի դասավանդման ծրագրի, դասագիրքը բավկացած է հինգ  
մասից՝ 1.Ընդհանուր թժշկական մանրէաբանություն, 2.Ուսմունք ինֆեկցիայի մասին,  
3.Ուսմունք իմունիտենտի մասին, 4.Սասմավլոր թժշկական մանրէաբանություն և  
5.Թեստային խնդիրներ: Դասագիրքը նախատեսված է թժշկական համալսարանի  
բոլոր ֆակուլտետների ուսանողների, կիմիկական օրինատորների և ասպիրանտ-  
ների համար: Այն կարող է օգտակար լինել նաև թժշկի մասնագետներին, որպես  
մանրէների և դրանցով հարուցված հիվանդությունների տեղեկատու:

ԳՄԴ 52.64 + 28.3 + 28.073 g7

ISBN 978 - 99941 - 40 - 92 - 3

. Ծեկոյան Վ.Ա., 2009թ.  
. Մանուկյան Կ.Դ., 2009թ.

## ՆԱԽԱԲԱՆ

XX դարի վերջում և ներկայիս հարյուրամյակի սկզբում, որը նշանավորվում է մանրէաբանության, վիրուսաբանության, ինունաբանության տարբեր բաժիններում և այլ բժշկակենսաբանական գիտություններում խոշոր ձեռքբերումներով, անհրաժեշտություն առաջացավ հնացած դրույթների վերանայման և միկրոօրգանիզմների ախտածնության մեխանիզմներին, դրանցով հարուցված ինֆեկցիոն հիվանդությունների պարոգենեզին և ինունաբանությանը, ինչպես նաև վակցինոպրոֆիլակտիկային, քիմիոթերապիային և լաբորատոր ախտորոշմանը վերաբերվող նոր տեղեկությունների շարադրման:

Ավելին, հայերեն լեզվով մեր դասագրքի՝ «Բժշկական մանրէաբանություն, վիրուսաբանություն և ինունաբանություն» (Երևան, «Լիգանդ» 1991) հրատարակման սկզբից անցել է շուրջ 18 տարի:

Մենք նպատակահարմար չենք համարել դասագրքում ընդգրկել ողջ այն նոր տեղեկությունները, որոնք գտնվում են մեր տրամադրության տակ, այլ օգտագործել ենք առավել հավաստի և կարևոր տվյալները, որոնք անհրաժեշտ են առաջին հերթին որոշ բժշկակենսաբանական և կլինիկական առարկաների, հատկապես ինֆեկցիոն հիվանդությունների ուսումնասիրման համար:

Փաստացի նյութի ընտրությունը հիմնվել է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում բժշկի և դեղագետի ուսումնական ծրագրի շրջանակներում, ըստ հիմնական մասնագիտությունների՝ «բուժական գործ», «ստոմատոլոգիա», «դեղագիտություն», մշակված տեսական, բժշկակենսաբանական և կլինիկական առարկաների հետ ինտեգրացված ուսուցման պլանի վրա, ինչը թույլ է տվել խուսափել կենսաբանության, նորմալ անատոմիայի, նորմալ ֆիզիոլոգիայի, հյուսվածաբանության և այլ ամբիոններում ուսանողի ավելի վաղ ստացած ինֆորմացիայի կրկնություններից:

Ուսումնական ծրագրին համապատասխան դասագիրքը բաղկացած է հինգ մասերից՝ I - «Ընդհանուր բժշկական մանրէաբանություն», II - «Ուսմունք ինֆեկցիայի մասին», III - «Ուսմունք

իմունիտետի մասին», IV - «Մասնավոր բժշկական մանրէաբանություն», V - «Թեստային խնդիրներ»:

Դասագրքում չեն ընդգրկվել ստոմատոլոգիական հիվանդությունների մանրէաբանությանն ու իմունաբանությանը և դեղահունքի մանրէաբանությանը վերաբերվող նյութերը, որոնք ԵՊԲՀ մանրէաբանության ամբիոնի աշխատակիցների կողմից հրատարակվել են որպես ուսումնական ձեռնարկներ ստոմատոլոգիական և դեղագիտական ֆակուլտետների ուսանողների համար:

Յեղինակները շնորհակալություն են հայտնում բժշկական մանրէաբանության ամբիոնի աշխատակիցներին՝ դասագիրքը գրելու ընթացքում ցուցաբերած աջակցության համար:

Մ ա ս ն ա ռ ա ջ ի ն

## Ը Ն Դ Հ Ա Ն ՈՒ Ր Բ Ժ Շ Կ Ա Կ Ա Ն Մ Ա Ն Ռ Ե Ա Բ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գլուխ 1

ՄԱՍՐԵԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Եթե կյանքի տարբեր ձևերի վերլուծությունը սկսենք առավել մեծ չափեր ունեցող կենդանի էակներից և աստիճանաբար անցնենք փոքր օրգանիզմներին, ապա կզա մի պահ, երբ ուսումնասիրվող օբյեկտը կանհետանա մեր տեսողությունից: Այստեղ անցնում է այն սահմանը, որից այն կողմ սկսվում է փոքրագույն կենդանի էակների՝ մանրէների աշխարհը, որտեղ անզեն աչքով, առանց մանրադիտակի անհնար է մուտք գործել:

Այսօր արդեն հայտնի է, որ մանրէների գոյության վերաբերյալ առաջին հավաստի տեղեկություններն արձանագրվել են XVII դարի երկրորդ կեսին հոլանդացի Անտոնի Վան Լենհուկի կողմից: Նա 160-300 անգամ խոշորացնող երկություններն արձանագրվել են XVII դարի պատրաստված մանրադիտակով ջրի կաթիլում, ատամի փառում, կղանքում և այլ նյութերում հայտնաբերեց փոքրագույն կենդանի էակներ՝ անվանելով դրանց «կենդանի գազանիկներ» (լատ. animalcula vivæ): Փոքրիկ չափեր ունեցող այդ կենդանի էակներին հետազայում անվանեցին մանրէներ (միկրոբներ կամ միկրոօրգանիզմներ), իսկ գիտությունը, որն զբաղվում է դրանց ուսումնասիրնամբ՝ մանրէաբանություն - միկրոբիոլոգիա (հուն. micros-փոքր, bios-կյանք, logos-ուսմունք):

Մանրէաբանությունը գիտություն է, որն ուսումնասիրում է մանրէների կյանքի և զարգացման օրինաչափությունները, դրանց

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵՎԲԱՆԻԹՅՈՒՆ

համակարգումն ու դասակարգումը, կենսաբանական հատկանիշները, էկոլոգիան և այն փոփոխությունները, որոնք առաջանում են մարդկանց, կենդանիների, բույսերի օրգանիզմներում ու անկենդան բնության մեջ, մանրէների հետ փոխազդեցության արդյունքում:

Մանրէները հայտնաբերվեցին XVII դարում, սակայն միայն XIX դարի կեսերին մանրէաբանությունը հանդես եկավ որպես ձևավորված, լիովին կայացած գիտություն իր սեփական մեթոդներով և սկզբունքներով, ընդ որում, թե՛ մեթոդները և թե՛ սկզբունքները հիմնականում տրամաբանական հետևանքն էին Լուի Պաստերի հանճարեղ հայտնագործությունների, ըստ որոնց՝ միկրոօրգանիզմներն են պայմանավորում եեխնան և խմորնան պրոցեսներն ու առաջացնում մարդու և կենդանիների վարակիչ հիվանդություններ։ Դենց այս հայտնագործություններն էին, որոնք հիմք հանդիսացան մանրէաբանության՝ որպես ինքնուրույն գիտության ձևավորման և բուռն զարգացման համար։ Այն համեմատաբար կարծ ժամանակահատվածում հասավ տեսական և գործնական աննախադեպ նվազումների, որն իրավացիորեն թույլ տվեց մանրէաբանությունը դասել հիմնական բնագիտական գիտությունների շարքին։

Մանրէների քանակը կենսոլորտում (բիոսֆերա) գրեթե անսահման է։ մոտավոր հաշվարկներով բնության մեջ բնակվում են նվազագույնը  $10^{30}$  բակտերիաներ, իսկ վիրուսների, նախակենդանիների, սակերի և այլ մանրէների քանակը հաշվարկնան ենթակա չէ։

Անսահմանության ձգտող քանակով և զանազան հատկանիշներով օժտված մանրէների ողջ բազմազանությունը միավորող հիմնական չափանիշը դրանց մանրադիտակային մեծությունն է, որը չափվում է միկրոմետրերով ( $1\text{մկմ}=10^{-3}\text{մմ}$ ), կամ նանոմետրերով ( $1\text{նմ}=10^{-3}\text{մմ}$ )։

Մանրէները հիմնականում միաբջիջ օրգանիզմներ են, որոնք գենետիկորեն կապված են ինչպես բուսական, այնպես էլ կենդանական աշխարհի հետ։ Որոշ մանրէներ (բողբոսասնկեր) ունեն բազմաբջիջ կառուցվածք, վիրուսները զուրկ են բջջային կառուցվածքից, իսկ XX դարի վերջում հայտնաբերվեցին սպիտակուցային

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

մոլեկուլներ՝ պրիոններ, որոնք օժտված են ինֆեկցիոնությամբ և առաջացնում են վարակիչ (ինֆեկցիոն) հիվանդություններ՝ տրամադիսիվ սպունգաննան ենցեֆալոպատիաներ (Կրետոցֆելդ-Ցակորի հիվանդություն, կուրու, Գերստման-Շտրենուլեր-Շեյնկերի համախտանիշ, ընտանեկան մահացու անքնություն):

Մանրէները տարածված են ամենուր և ուղեկցում են մարդուն ամբողջ կյանքի ընթացքում՝ ծննդից մինչև մահ: Դրանք հայտնաբերվում են երկրագնդի կեղևում և այրող անապատների չոր ավագներում, օվկիանոսների հատակում և օդում, նույնիսկ ստրատոսֆերայում: Ամեն օր և ամեն ժամ օդի, ջրի և սննդի միջոցով մենք կլանում ենք հարյուրավոր և հազարավոր մանրէներ, որոնք փաստորեն կազմում են կենդանի բնության երրորդ թագավորությունը, առանց որի անհնար է պատկերացնել կյանքը: Այս առունով մարդու կյանքում և տնտեսության մեջ միկրոօրգանիզմները 2 տարբեր, հակառակ դեր ունեն: Մի կողմից դրանք օգտակար են, քանի որ պայմանավորում են նյութերի և էներգիայի շրջանառությունը բնության մեջ, նպաստում են օրգանական միացությունների տարրալուծմանը և սինթեզին, կարևոր դեր են կատարում հողի բերքատվության, քարածիկի և նավթի առաջացման հարցերում, լայնորեն կիրառվում են սննդարդյունաբերության և այլ բնագավառներում: Դրանք բազմաթիվ արժեքավոր միացությունների՝ լիարժեք սպիտակուցների, տարբեր լիափնդների, պոլիսախարիդների, հակաբիոտիկների, ամինաթթուների, վիտամինների և այլ կենսաբանական ակտիվ նյութերի չգերազանցված արտադրողներն են, որը լայն կիրառություն է գտնել բիոտեխնոլոգիայում և մանրէաբանական արդյունաբերությունում: Մյուս կողմից գոյություն ունի միկրոօրգանիզմների ստվար մի խումբ, որն էվոլյուցիայի ընթացքում հարմարվել է գոյատևման մակարույժ (պարագիտային) կենսաձևին և մեծ չարիք է մարդկության համար՝ հարուցելով մարդու, կենդանիների և բուսականության տարաբնույթ ինֆեկցիոն հիվանդություններ:

## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱՎԱՆ ՄԱՆՐԵՎԱԲԱՆԻԹՅՈՒՆ

Որպես կենսաբանական գիտություն՝ մանրէաբանությունը սերտողեն առնչվում է բուսաբանության, կենդանաբանության, ֆիզիոլոգիայի, հիգիենայի, բժշկության հետ: Այն նշանակալի ներդրում ունի կենսաբիմիայի և գենետիկայի բնագավառներում՝ նպաստելով մոլեկուլային կենսաբանության զարգացմանը:

Ինչպես գիտական այլ ուղղությունների, այնպես էլ մանրէաբանության զարգացումը անմիջականորեն պայմանավորված է գործնական կյանքի պահանջներով, հատկապես գիտության և տեխնիկայի ընդհանուր առաջընթացով: Հասարակության հարցադրումներով և պահանջներով պայմանավորված՝ մանրէաբանությունը տարանջատվել է ընդհանուր, տեխնիկական (արդյունաբերական), բժշկական, սանիտարական, անասնաբուժական, ծովային, կոսմիկական և այլ ուղղությունների:

**Ընդհանուր մանրէաբանությունն** ուսումնասիրում է միկրոօրգանիզմների կառուցվածքային առանձնահատկությունները, դրանց զարգացման և կենսագործունեության ընդհանուր օրինաչափություններն ու դերը բնության մեջ:

**Արդյունաբերական** մանրէաբանությունը զբաղվում է այն մանրէների ուսումնասիրությամբ, որոնք կիրառվում են տնտեսության տարբեր ոլորտներում, այս կամ այն արտադրական պրոցեսներում՝ հակարիոտիկների, վիտամինների, տարբեր կենսաբանական ակտիվ նյութերի արտադրությունը դեղագործական արդյունաբերությունում, կաթնարդյունաբերության, գինեգործության բնագավառներում կիրառվող խմորում առաջացնող մանրէները և այլն:

**Գյուղատնտեսական մանրէաբանությունը** պարզում է այն միկրոօրգանիզմների դերը և նշանակությունը, որոնք մասնակցում են հողի կառուցվածքի ձևավորմանը, բուսականության սնուցման պրոցեսներին՝ նպաստելով բերքատվության բարձրացմանը:

**Անասնաբուժական մանրէաբանությունը** ուսումնասիրում է կենդանիների վարակիչ հիվանդությունների հարուցող մանրէները, որոնցից շատերը ախտահարում են նաև մարդկանց և մշակում է

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

մեթոդներ այդ հիվանդությունների ախտորոշման, բուժման և կանխարգելման համար:

**Բժշկական մանրէաբանության** ուսումնասիրության առարկան ախտածին (պաթոգեն) միկրոօրգանիզմներն են, որոնք առաջացնում են վարակիչ հիվանդություններ միայն մարդկանց մոտ, ինպես նաև այն մանրէներից, որոնք ախտածին են և կենդանիների, և մարդկանց համար: Բժշկական մանրէաբանությունը ուսումնասիրում է նաև պայմանական ախտածին և ոչ ախտածին միկրոօրգանիզմները, որոնք գտնվում են շրջակա միջավայրում ու մարդու օրգանիզմում և գգալի նշանակություն ունեն մարդու առողջության համար:

**Ժամանակակից բժշկական մանրէաբանությունը** ծավալուն առարկա է, որը բաղկացած է առանձին ինքնուրույն գիտություններից՝ բակտերիաբանություն (ուսմունք բակտերիաների մասին), վիրուսաբանություն (ուսմունք վիրուսների մասին), միկոլոգիա (ուսմունք սնների մասին), պլոտոփոլոգիա (ուսմունք նախակենդանների մասին), իմունաբանություն (ուսմունք ախտածին և ոչ ախտածին ագենտներից մակրոօրգանիզմի պաշտպանական մեխանիզմների մասին) և այլն:

Բժշկական մանրէաբանության հիմնական և կարևորագույն նպատակն է պայքարը ինֆեկցիոն հիվանդությունների դեմ: Այդ իսկ պատճառով մանրէների հատկությունների ուսումնասիրությանը զուգահեռ՝ այն ուսումնասիրում է ինֆեկցիայի առաջացման մեխանիզմները, մշակում է դրանց լաբորատոր ախտորոշման, յուրահատուկ (սպեցիֆիկ) կանխարգելման և բուժման մեթոդներ: Օգտագործելով գիտության և տեխնիկայի ձեռքբերումները (ռադիոակտիվ իզոտոպներ, խրոմատոգրաֆիա, սպեկտրոսկոպիա, ֆազոկոնտրաստային, լուսմինեսցենտային, էլեկտրոնային մանրադիտակագնում, գենետիկայի և մոլեկուլային կենսաբանության ժամանակակից մեթոդներ)՝ պատմական առօլով համեմատաբար կարծ ժամանակահատվածում, բժշկական մանրէաբանությունը ինֆեկցիոն հիվանդությունների դեմ պայքարի բնագավառում

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵՎԱՍՈՒԹՅՈՒՆ

հասավ աննախադեպ հաջողությունների, ինչին մեծապես նպաստեց նաև իմունաբանության զարգացումը: Իմունաբանությունը ձևավորվել է մանրէաբանության զարգացմանը զուգահեռ և սկզբնական փուլում դիտվում էր որպես գիտություն, որն զբաղվում է ինֆեկցիոն հիվանդությունների նկատմամբ մակրոօրգանիզմի պաշտպանական մեխանիզմների (ոչ սպեցիֆիկ և սպեցիֆիկ) ուսումնասիրությամբ և դրանց կանխմանը, նվազեցնամն ու վերացմանը ուղղված աշխատանքներով: Սակայն աստիճանաբար կուտակվող գիտական փաստերը հաստատեցին, որ օրգանիզմի պաշտպանական ռեակցիաները (իմուն ռեակցիաներ) արտահայտվում են ոչ միայն մանրէների, այլ նաև օտարածնության դրոշնը կրող յուրաքանչյուր նյութի (հակածին) նկատմամբ, ինչը միտված է օրգանիզմի հոմեոստազի՝ ֆունկցիոնալ և կառուցվածքային անբողջականության պահպանությանը:

Ներկայումս իմունաբանությունը դասվում է կենսաբանական և բժշկական կարևորագույն գիտությունների շարքին և դրանց հետ միասին մշակում է ախտորոշման, կանխարգելման ու բուժման մեթոդներ ինչպես ինֆեկցիոն, այնպես էլ ոչ ինֆեկցիոն հիվանդությունների, որոնց հիմքում ընկած են իմուն համակարգի խանգարումները:

Ինչպես հայտնի է, այնպիսի հիվանդությունները, ինչպիսիք են բնական ծաղիկը, ժանտախտը, խոլերան, թօսվոր տիֆը, մալարիան, դիֆթերիան և այլն, համայն մարդկության համար մեծ չարիք են եղել: Տարածվելով մի բնակավայրից մյուսը, մի պետությունից մեկ այլ պետություն՝ դրանք մեծ թվով մարդկային զոհերի պատճառ են դարձել: Ներկայումս այդ հիվանդությունները տնտեսապես զարգացած երկրներում առավելագույնս նվազել են՝ արձանագրվելով եզակի դեպքերի ձևով: Դրան նպաստել են ինֆեկցիաների դեմ պայքարի բազմազան մեթոդները՝ մշակված բժշկական մանրէաբանության մասմագետների կողմից:

Վարակիչ հիվանդությունների դեմ պայքարը յուրաքանչյուր պետության առաջնահերթ խնդիրներից մեկն է, առավել ևս այնպիսի

## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Երկրների, որոնց առողջապահությունը հիմնվում է կանխարգելման սկզբունքների վրա: Նման համակարգի արդյունավետության ապացույց է նի շարք վարակիչ հիվանդությունների վերացումը՝ բնական ծաղիկ, ժանտախտ, համաճարակային բժավոր և հետադարձ տիֆեր: Դիվանդացությունը պոլիմիելիտով, դիֆերիայով, տուլարեմիայով, սիբիրյան խոցով, որովայնային տիֆով նվազել է հասնելով եզակի դեպքերի:

Մանրեաբանության ուսումնասիրության բազմաթիվ և տարաբնույթ խնդիրների շրջանակով էլ պայմանավորվում է նրա բացառիկ դերն ու նշանակությունը բժիշկ-մասնագետների պատրաստման համակարգում: Մանրեաբանական հետազոտության մեթոդներից լայնորեն օգտվում են համաճարակաբանությունը և հիգիենան, ախտաֆիզիալոգիայի և ախտաանատոմիայի այն բաժինները, որոնք ուսումնասիրում են ինֆեկցիոն պրոցեսը և օրգանիզմի պաշտպանական ռեակցիաները, վիրաբուժությունը, ներքին հիվանդությունները և այլն: Չկա բժշկագիտության մի որևէ մասնաճյուղ, որի հիմնահարցերը այս կամ այն կերպ չառնչվեն ուսումնասիրող առարկայի հիմնախնդիրների հետ: Այդ պատճառով, անկախ նրանից, թե ինչ ներ մասնագիտություն կընտրի բժշկական համալսարանի շրջանավարտը, նա իր հետագա աշխատանքում անընդհատ կառնչվի բժշկական մանրեաբանությանը, որը և պայմանավորում է այս առարկայի դասավանդման կարևորությունը բժշկական բուհում:

### **1.1. ՄԱՍՐԵԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԷՏԱՊՆԵՐԸ**

Ախտածին միկրոօրգանիզմների և դրանց կենսագործունեության տարբեր դրսնորումների, մասնավորապես վարակիչ հիվանդությունների հետ մարդկությունը առնչվել է դեռ շատ վաղ անցյալում՝ քաղաքակրթության ձևավորման ժամանակաշրջանում և իր համար անբացատրելի երևույթները հիմնականում կապել է

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԲԱՆՈԹՅՈՒՆ

գերբնական ուժի՝ աստծու հետ: Սակայն դարերի ընթացքում մարդկության առաջադեմ ներկայացուցիչների՝ Գալենի, Լուկրեցիայի, Բարոնի, Դիպուկրատի, դիտարկումների ընթացքում կուտակված փորձը պայմաններ է ապահովել վարակիչ հիվանդությունների վերաբերյալ որոշակի գաղափարներ ձևավորելու: Մանրեների հայտնաբերումից դեռ դարեր առաջ ննան հիվանդությունների առաջացման գործընթացում աչքի համար անտեսանելի նյութերի դերի, հիվանդից առողջին վարակի փոխանցման ուղիների, բուժման ու կանխարգելման միջոցառումների վերաբերյալ հստակ տեղեկություններ են տրվել նաև միջնադարի հայ մեծանուն բժիշկների՝ Ս. Շերացու, Գ. Տարեացու, Ա. Անասիացու, Մ. Գոշի, Գ. Մագիստրոսի, Յ. Երզնկացու ձեռագիր աշխատություններում: Դամոզմունքը վարակիչ հիվանդությունների նյութական պատճառի մասին էլ ավելի է ամրապնդվել միջին դարերում, երբ Եվրոպայում աննկարագրելի արագությամբ տարածվում էր պատմության մեջ «սև մահ» անվանումով հայտնի ժամանակակից ժամանակակից ժամանակակից (1347-1352թ.), մարդկային մեծ թվով զոհերի պատճառ էին դառնում բնական ծաղկի, բծավոր տիֆի և այլ ինֆեկցիոն հիվանդությունների համաճարակները:

XV դարում Զիրոլամա Ֆրակաստորոն (1478-1553թ.) կարծիք է հայտնել, որ վարակիչ հիվանդություններն առաջանում են մարդու օրգանիզմ կենդանի ագենտների ներթափանցման հետևանքով: Սակայն, անհրաժեշտ գիտական և համապատասխան նյութատեխնիկական բազայի բացակայության պատճառով նրա այդ համարեղ միտքը պատշաճ ուշադրության չի արժանացել, մինչև Անտոնի վան Լևենհոլի (1632-1723թ.) կողմից պատրաստված՝ դիտարկվող օբյեկտը 160-300 անգամ խոշորացնող, սարքի օգնությամբ մանրեների աշխարհի հայտնաբերումը: Նա տարբեր նյութերից պատրաստված պատրաստուկներում (քսուք-պրեպարատ, պրեպարատ) հայտնաբերել է փոքրագույն էակներ, որոնց անվանել է կենդանի գազանիկներ (լատ. animalcula vivæ): Դարկ է նշել, որ Լևենհոլի կողմից կատարված հստակ նկարագրությունները և ճշգրիտ պատկերումները հավաստում են, որ նրան հաջողվել է դիտարկել միկրոօրգա-

## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

Այսօնական ժամանակի բոլոր հիմնական ձևերը, որոնք մենք այսօր տարբերում ենք: Միևնույն ժամանակ նա կարծիք է հայտնել ոչ միայն միկրոօրգանիզմների բազմազանության, այլև նրանց անհավանական առատության և տարածվածության վերաբերյալ: Այսպիսով, Լևենհոլի հայտնագործությունը հիմք դրեց մանրէաբանությանը, ավելի ճշշտ միկրոօրգաֆիային, քանի որ մինչ XIX դարի կեսերը գիտության այդ բնագավառում հետազոտությունները սահմանափակվում էին մանրէների տարբեր ձևերի կարագրությամբ: Դա մանրէաբանության առաջին՝ **մորֆոլոգիական** շրջանն էր (Ակ.1):

Դասարակական տնտեսական հարաբերությունների արագ զարգացումը XVIII դարի վերջում և XIX դարի սկզբում պայմանավորեցին բնական և տեխնիկական գիտությունների, այդ թվում և մանրէաբանության բուռն զարգացումը: Անհրաժեշտ է ընդգծել, որ մանրէաբանության բնագավառում կարևորագույն հայտնագործությունները կապված են ֆրանսիացի հանճարեղ գիտնական, քիմիկոս և մանրէաբան Լոլի Պաստերի (1822-1895թ.) անվան հետ, որն իրավամբ հանարվում է մանրէաբանության՝ որպես գիտության, հիմնադիրը: Նրա գործունեությանը սկսվում է մանրէաբանության բուռն զարգացման երկրորդ՝ ֆիզիոլոգիական շրջանը:

- **Մորֆոլոգիական (XVII դարի վերջ - XIX դարի առաջին կես)**
- **Ֆիզիոլոգիական՝ Պաստերյան (XIX դարի երկրորդ կես - XX դարի սկիզբ)**
- **Մանրէաբանության և իմունարաբանության հետազարդացման, վիրուսաբանության կայացման (XX դարի առաջին կես)**
- **Ծանակակից՝ մոլեկուլյար-գենետիկական (XX դարի երկրորդ կես - XXI դար)**

### Ակ.1. Մանրէաբանության զարգացման պատճական էտապները

Պաստերը պարզեց խմորման բնույթը, որի պատճառը, ինչպես ցույց տվեցին նրա ճշգրիտ փորձերը, մանրէներն են՝ խմորասնկերը: Հետագայում նա ցույց տվեց, որ խմորման յուրաքանչյուր քիմիական տիպ (կաթնաթթվային, կարագաթթվային, սպիրտային)

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԱԾՈՒԹՅՈՒՆ

պայմանավորված է միկրոօրգանիզմների որոշակի տեսակի գործունեությամբ, որն էլ ապահովում է այդ պրոցեսներից յուրաքանչյուրի սպեցիֆիկությունը: Ուսումնասիրելով կաթնաթթվային խմորումը՝ Պաստերը հայտնաբերեց կենսաբանության հիմնաքարային փաստերից ևս մեկը՝ անաերորդիոզը: Պաստերի հետագա աշխատանքերի հիմնական ուղղությունը վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի միջոցների մշակումն էր, որը պսակվեց մեծագույն հաջողությամբ. նա հայտնագործեց պատվաստանյութ (վակցինա)՝ հավերի խոլերայի, սիրիոյան խոցի, կատաղության դեմ:

Իր հետազոտություններում Պաստերը չշրջանցեց նաև կյանքի ինքնածնան տեսությունը և ապացուցեց, որ կենդանի էակների ինքնածնում գոյություն չունի: Այդ հետազոտությունները շրջադարձային եղան բժշկության մեջ, մասնավորապես վիրաբուժությունում: Չինք ընդունելով այդ հանգանանքը՝ անգլիացի բժիշկ Ջոզեֆ Լիստերը վիրաբուժական պրակտիկա ներմուծեց անտիսեպտիկայի (հականեխում) սկզբունքները՝ վերքերի վարակագերծումը քիմիական ախտահանիչ նյութերով:

Բժշկական մանրէաբանության բուռն զարգացումը XIX հարյուրամյակի վերջում սերտորեն կապված է գերմանացի հայտնի գիտնական Ռոբերտ Կոխի (1843-1910թ.) անվան հետ: Նա իր աշխատանքներով փորձեց հաստատել միկրոօրգանիզմների դերը ինֆեկցիոն հիվանդությունների էթիոլոգիայում՝ առաջադրելով հստակ չափանիշներ: Այն պատմության մեջ մտել է որպես «Շենլե-Կոխի տրիադա», ըստ որի՝

1.Ենթադրյալ մանրէ-հարուցիչը պետք է հայտնաբերվի միայն տվյալ հիվանդության և ոչ թե նաև այլ հիվանդությունների դեպքում, ինչպես նաև առողջ անձանց մոտ,

2.պետք է հնարավոր լինի անջատել մանրէ-հարուցիչի մաքուր կուլտուրան,

3.անջատված կուլտուրայով փորձարարական կենդանիների վարակման դեպքում, վերջիններիս մոտ պետք է զարգանա մարդու

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՍ ՄԱՍՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

հիվանդությանը պարոգենետիկ և կլինիկական արտահայտությամբ նման հիվանդություն:

Մանրէաբանության զարգացման համար առանձնակի նշանակություն ունեցավ միկրոօրգանիզմների նաքուր կուլտուրայի անջատման մեթոդների մշակումը, որը ներկայումս էլ մանրէաբանական աշխատանքների հիմքն է: Կոխի և նրա աշակերտների կողմից լաբորատոր ախտորոշման պրակտիկա ներմուծվեցին պինդ սննդային միջավայրերը, անիլինային ներկերը, մանրադիտակի իմերսիոն համակարգը, Աբբեի կոնդենսորը, միկրոլուսանկարահանումը: Այս նորանուժությունները հնարավորություն ընձեռեցին հետագա շուրջ 2 տասնամյակի ընթացքում հայտնաբերել բակտերիաներով պայմանավորված գրեթե բոլոր ինֆեկցիոն հիվանդությունների հարուցիչները: Կոխը հայտնաբերել է տուբերկուլյոզի միկրօբակտերիան (1882թ.) և խոլերայի վիրոհինը (1883թ.): 1876թ.-ին անջատել է սիրիոյան խոցի հարուցիչի մաքուր կուլտուրան:

XIX դարի վերջին արդեն վերջնականացես հաստատվել էր ինֆեկցիոն հիվանդությունների մանրէային բնույթը, սակայն դեռևս կար վարակիչ հիվանդությունների մի ստվար խունք՝ այդ թվում հեռավոր անցյալից մարդկությանը հայտնի բնական ծաղիկը, կատաղությունը, որոնց հարուցիչները հայտնաբերված չեն: Այդ հիվանդությունների եթոլոգիան հաստատվեց ռուս գիտնական-բուսաբան Դ. Իվանովսկու (1864-1920թթ.) հայտնագործությամբ: Ուսումնասիրելով ծխախոտի մոզաիկ հիվանդությունը՝ նա ցույց տվեց, որ ախտահարված բույսերի տերևների մզվածքից ստացված նյութի ֆիլտրատը, որում մանրադիտակի օգնությամբ որևէ միկրոօրգանիզմ չէր հայտնաբերվել և ցանքը արհեստական սննդային միջավայրերի վրա եղել էր ստերօ, վարակիչ է առողջ բույսերի համար: Այդ տվյալների հիման վրա Իվանովսկին հանգեց հետևողան, որ ֆիլտրատում կան անտեսանելի հարուցիչներ, որոնք մինչ այդ հայտնի բոլոր միկրոօրգանիզմներից տարբերվում են իրենց անհամեմատ փոքր՝ նամոմետրով հաշվվող չափերով: Այդ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԲԱՆՈԹՅՈՒՆ

մանրէները հետագայում ստացան վիրուս (լատ. virus-թույն) անվանումը, իսկ գիտությունը՝ վիրուսաբանություն:

Բժշկական մանրէաբանության զարգացման գործում արժանի տեղ ունի ռուս մեծ գիտնական Ի. Սեչնիկովը (1845-1916թթ): Նա առաջարդեց կենսաբանական լիարժեք մի տեսություն՝ ուսմունք ֆագոցիտողի մասին, որը մանրէաբանության զարգացման պատմական երրորդ՝ մանրէաբանության, իմունաբանության հետագա զարգացման և վիրուսաբանության կայացման էտապի սկիզբն էր: Բազմաթիվ հետազոտությունների ընթացքում նա որոշ բարձրակարգ կենդանիների մոտ հայտնաբերեց և ուսումնասիրեց ներբջային մարսողության պրոցեսը, որն իրականացվում էր մեզոդերնալ ծագման բջիջների կողմից: Ծովաստդի թափանցիկ մարմնում մանրադիտակով դիտարկելով ամերանման շարժունակությամբ բջիջները, նա ապացուցեց, որ դրանք կենդանում պաշտպանում են ներարկված օտարածին նյութերից: Այս դիտարկումները հիմք հանդիսացան այն ենթադրության, որ նմանատիպ բջիջները (լեյկոցիտներ, փայծաղի, ուսկրածուծի բջիջներ) պաշտպանում են մարդկանց և կենդանիներին ախտածին մանրէներով վարակվելու դեպքում: Երևույթը նա անվանեց ֆագոցիտող, իսկ այն իրականացնող բջիջները՝ ֆագոցիտներ: Ֆագոցիտար տեսության մասին գեկուցվեց Օդեսայում 1909-ին, որը նշանավորվեց Սեչնիկովին միջազգային Նորելյան մրցանակի շնորհմամբ: Սեչնիկովի աշխատանքները չեն սահմանափակվել միայն ֆագոցիտողով, նա ուսումնասիրել է խոլերայի պարոգենեզը և խոլերանման վիրիոնների կենսաբանությունը, մշակել է էքսպերիմենտալ սիֆիլիսի վերարտադրության մեթոդիկա, նրա և Պաստերի կողմից սկիզբ դրվեց մանրէների անտագոնիզմի մասին ուսմունքին: Սեչնիկովը զգալի աշխատանք է կատարել նաև ծերացման դեմ պայքարի միջոցների որոնման ուղղությամբ:

Պատմական այդ էտապում իմունիտեսի ֆագոցիտար տեսությանը զուգահեռ՝ գիտական շրջաններում քննարկվում էր պաշտպանության մեկ այլ՝ հումորալ տեսությունը, որի հեղինակն էր

## ԸՆԴՀԱԱՍՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

գերմանացի հետազոտող Պ.Էրլիխը (1854-1915թթ): Ըստ այդ տեսության՝ օրգանիզմի պաշտպանությունը իրականանում է ի հաշիվ հակամարմինների, որոնք գտնվում են օրգանիզմի հեղուկներում: Այս տեսության շուրջ ծագեց գաղափարների երկարատև և համար պայքար, որը գիտմականներին բաժանեց 2 մեծ ճամբարների՝ Էրլիխի կողմնակիցների և նրա հակառակորդների՝ Մեչնիկովի գլխավորությամբ: Այս բանավեճը նպաստեց ինունիտետի վերաբերյալ բազմաթիվ հետազոտությունների իրականացմանը, որոնք ապացուցեցին, որ ինֆեկցիոն հիվանդությունների նկատմամբ անընկալությունը պայմանավորված է թե՛ բջջային և թե՛ հումորալ գործոններով:

Մանրէաբանության առաջընթացի նոր՝ **Ժանմանակակից** (մոլեկուլային գենետիկական) էտապ է համարվում XX դարի երկրորդ կեսը, որը մեծապես պայմանավորված էր գենետիկայի բուռն զարգացմամբ, գիտության նոր ոլորտի՝ մոլեկուլային կենսաբանության կայացմամբ, ինչպես նաև վարակիչ հիվանդությունների յուրահատուկ կանխարգելման բնագավառում անշափ կարևոր հայտնագործություններով, դրանց բուժման նոր միջոցների և մեթոդների մշակման՝ քիմիոպրեպարատներ, հակաբիոտիկներ: XX դարում վիրուսաբանությունը և ինունաբանությունը առանձնացան որպես ինքնուրույն գիտություններ և չտեսնված հաջողությունների հասան ոչ միայն տեսական գիտելիքների, այլև գիտական հետազոտությունների արդյունքների գործնական ներդրման առումով թե՛ առողջապահության և թե՛ կյանքի այլ բնագավառներում:

### **1.2. ԵՐԵՎԱՆԻ Մ. ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ**

Ղիմնադրվել է 1923-ին: Անբիոնը ղեկավարել են պրոֆ. Ա.Ի. Խսահակյանը (1923-51թթ.), պրոֆ. Բ.Գ. Ավետիքյանը (1951-54թթ.), պրոֆ. Վ.Գ. Միքայելյանը (1954-75 թթ.), դոց. Լ.Ա. Ֆրանգուլյանը (1975-86 թթ.), պրոֆ. Վ.Ա. Շեկոյանը (1986թ. առ այսօր):

## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱՎԱՆ ՄԱՍՐԵՎԲԱՆԻԹՅՈՒՆ

Մանրէաբանության ամբիոնը իր գործունեության ընթացքում զգալի աշխատանք է կատարել գիտամանկավարժական կադրերի պատրաստման և հանրապետությունում բժշկական մանրէաբանության զարգացման ուղղությամբ:

Տարբեր տարիներ ամբիոնում իրենց գիտամանկավարժական գործունեությունն են ծավալել Ա.Հ.Միրզաբեկյանը, Մ.Հ.Մելքոնյանը, Զ.Հ. Ամյանը, Ե.Գ. Շեկոյանը, Զ.Ա. Ահարոնովան, Ռ.Հ.Մանուկյանը, Ն.Պ.Բաբյանը, Լ.Դ.Մինեյանը, Վ.Ս.Թովմասյանը, Ն.Ա.Թարվերյանը, Մ.Ս.Յովիկաննիսյանը, Կ.Ղ.Մանուկյանը, Ս.Ց.Չիլինգարյանը, Կ.Խ.Քալաշյանը, Դ.Ս. Մուրադյանը, Ս.Յու. Զալիխյանը, Ք.Հ. Աբգարյանը և ուրիշներ:

Ամբիոնի հիմնադիրն է գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Աբգար Խսահակի Խսահակյանը (1885-1977թ.): Ավարտել է Օդեսայի համալսարանի բժշկական ֆակուլտետը: 1914-ին գինվորական ծառայության է անցել Յայաստանում և գիտագործնական աշխատանքներ է կատարել ինֆեկցիոն հիվանդությունների դեմ պայքարի, կանխարգելման միջոցառումների մշակման ուղղությամբ: Ակտիվորեն մասնակցել է սանհիգիենիկ գիտահետազոտական և անասնաբուժական, անասնաբուժական ինստիտուտների հիմնադրմանը, տարիներ շարունակ ղեկավարել է առաջինի մանրէաբանական բաժանմունքը, իսկ երկրորդի՝ մանրէաբանության ամբիոնը:

Շուրջ 20 տարի ամբիոնը ղեկավարել է գիտության վաստակավոր գործիչ, բ.գ.դ., պրոֆեսոր Վերօգին Գևորգի Միքայելյանը, որը մեծ ավանդ ունի Յայաստանում բժշկական կրթության, մանրէաբանության և ինունաբանության զարգացման գործում: Վ.Գ.Միքայելյանը 1927-ին առաջին 32 շրջանավարտների թվում ավարտել է Երևանի պետական համալսարանի բժկական ֆակուլտետը և անցել աշխատանքի գործնական առողջապահության համաճարակաբանական ծառայությունում, գործունեություն ծավալելով Յայաստանի մի շարք շրջաններում: 1932թ. աշխատել է

## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱՎԱՍ ՄԱՍՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

բժշկական ինստիտուտում՝ սկզբում որպես համաճարակաբանության ամբիոնի ասիստենտ, այնուհետև 1938-44թթ. եղել է բժշկական ինստիտուտի ռեկտոր, 1954-75թթ. ղեկավարել է մանրէաբանության ամբիոնը: 1940-ին պաշտպանել է թեկանածուական, իսկ 1948-ին դոկտորական ատենախոսություններ: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են ավելի քան 15 թեկանածուական և մեկ դոկտորական ատենախոսություններ, որոնք նվիրված են եղել ինֆեկցիոն հիվանդությունների ախտորոշման, կանխարգելման և ինունաբանական հիմնահարցերի լուծմանը:

1986-ից ամբիոնը ղեկավարում է ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ բժշկական ակադեմիայի ակադեմիկոս, բ.գ.դ., պրոֆեսոր Վլադիմիր Արմենակի Շեկոյանը: Ծնվել է 1942-ին Երևանում: 1964-ին ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժաբորբխական ֆակուլտետը և շուրջ 50 տարի գիտանանկավարժական գործունեություն է իրականացնում բժշկական համալսարանում, անցնելով աշխատանքային հետևյալ ուղին մանրէաբանության ամբիոնի ասպիրանտ, ասիստենտ, պրոֆեսոր և ամբիոնի վարիչ: 1979-81թթ. աշխատել է ինստիտուտի ԿԳՅԼ-ում որպես ինունաբանության լաբորատորիայի վարիչ: 1967-ին պաշտպանել է թեկանածուական, իսկ 1978թ. Լենինգրադում՝ դոկտորական ատենախոսություններ: 1982թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: Ավելի քան 40 տարի նրա գիտական գործունեությունը նվիրված է նյարդային և ինուն համակարգերի փոխազդեցության դերի ուսումնասիրությանը ինունաբանական գործընթացներում: Նեղինակ է շուրջ 150 գիտամեթոդական հրապարակումների, այդ թվում՝ մենագրության, դասագրքի և մի շարք ուսումնական ձեռնարկների: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են մեկ դոկտորական և յոր թեկանածուական ատենախոսություններ: Պրոֆեսոր Վ.Ա. Շեկոյանը պաշտպանական մասնագիտական և մի շարք գիտական հանդեսների խմբագրական խորհուրդների անդամ է: 1979-82թթ. ընտրվել է ինստիտուտի արհեկոմիտեի նախագահ, 1983-91թթ. բուժական ֆակուլտետի ղեկան, 2002-2011թթ. աշխատել է համալսարանի

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԲԱՆՈԹՅՈՒՆ

ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր: Բազմամյա ու բեղմնավոր կազմակերպչական և գիտամանկավարժական գործունեության համար 2000-ին պարզեցատրվել է Ս.Հերացու անվան կառավարական մեդալով:

Դիմնադրման պահից մինչև Համաշխարհային երկրորդ պատերազմի ավարտը ամբիոնի գիտահետազոտական աշխատանքները հիմնականում նվիրված են եղել արևադարձային տեղական ինֆեկցիաների ուսումնասիրությանը և օգալի հետազոտություններ են կատարվել պապատաշի տենդի, լեյշմանիոզների, տղային հետադարձ տիֆի, նախակենդանիներով պայմանավորված աղիքային ինֆեկցիաների վերաբերյալ: Մանրէաբանական հարցերից բացի ուսումնասիրությունների առարկա են դարձել այդ հիվանդությունների տարածման ուղիները, մշակվել են պայքարի արդյունավետ եղանակներ: Դետպատերազմյան ժամանակաշրջանում ամբիոնը զբաղվել է բակտերիային աղիքային ինֆեկցիաների (որովայնային տիֆ, դիօնտերիա, սալմոնելյոզներ), միկոպլազմային վարակների (Mycoplasma pneumoniae) ուսումնասիրությամբ: Կարևոր են նաև ինունաբանության ասպարեզում կատարված հետազոտությունները, հատկապես նեյրոակտիվ ամինաթթուների, հակաբիոտիկների ինունոնդուլյատոր ազդեցության վերաբերյալ, որոնց արդյունքները ամփոփվել են մի շարք ատենախոսություններում:

Վերջին երկու տասնամյակներում ամբիոնում մեծ աշխատանք է կատարվել ուսումնական գործընթացի կատարելագործման, ուսումնամեթոդական գրականության ստեղծման և նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ: Հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով հրատարակվել են ուսումնական ձեռնարկներ: Համակարգչային տեխնիկայի և ինտերնետ կապի հնարավորությունների կիրառմանը ստեղծվել է էլեկտրոնային բանկ, որը ներառում է երեք լեզուներով մշակված և միասնականացված դասախոսություններ ու թեստեր, մանրէների մորֆոլոգիան և ուլտրակառուցվածքը ներկայացնող էլեկտրոնային ատլաս, առարկայի տարբեր բաժիններն

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

արտացոլող տեսաֆիլմեր, մուլտիմեդիաներ, լազերային սկավառակներ և այլ ցուցադրական նյութեր: Գիտահետազոտական աշխատանքները նվիրված են նյարդային և ինուն համակարգերի փոխազդեցության դերի ուսումնասիրությանը նորմայում և պարուղիայում (վերքային ինֆեկցիոն պրոցես, ինորիլիզացիոն սրբես, հիպոկինեզիա) ինունաբանական պրոցեսների առաջացնան և զարգացնան ընթացքի վրա, ինչպես նաև կատարվում են աշխատանքներ նվիրված երեխաների և դեռահասների մորֆոֆունկցիոնալ զարգացման առանձնահատկություններին ու նրանց աղիների նորմալ միկրոֆլորայի ուսումնասիրությանը:

## Գլուխ 2

### ՄԱՆՐԵՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ, ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄԸ

Կենդանի բնության հետ էվոլյուցիայի ենթարկվելով՝ մանրէների աշխարհը բնական ընտրության հետևանքով ընդունել է բազմազան ձևեր և հատկություններ: Եվ որպեսզի այն ուսումնասիրվի ձևերի իր ողջ բազմազանությամբ և ֆունկցիաների յուրօրինակությամբ, հայտնաբերվի ժառանգական հատկությունները և հնարավոր լինի հետևել էվոլյուցիայի արողեսին, անհրաժեշտ է մանրէների գիտականորեն հիմնավորված համակարգում և դասակարգում: Դամակարգումը մանրէների միավորումն է հիմք ընդունելով վերջիններիս ննանություններն ու տարրերությունները, ինչպես նաև դրանց փոխհարաբերությունները միմյանց հետ: Դամակարգման շնորհիվ միանման միկրոօրգանիզմների առանձնացումը որոշակի խմբերում անվանվում է դասակարգում՝ տաքսոնոմիա (հուն. *taxis-ηήρο,* կարգ): Դեռևս մանրէաբանության զարգացման վաղ շրջաններում միկրոօրգանիզմների համակարգման համար հիմք են ընդունել դրանց ֆենոտիպային (**ֆենոհամակարգում**) հատկանիշները՝ մորֆոլոգիական, ֆիզիոլոգիական, կենսաքիմիական, սակայն գիտության զարգացմանը զուգահեռ՝ ֆենոհամակարգման հետ կիրառվել են նաև դասակարգման թվային, քիմիական, գենետիկական, շճաբանական տաքսոնոմիական համակարգերը: **Թվային տաքսոնոմիան** ենթարկում է բոլոր ֆենոտիպային հատկանիշների հավասարագորություն: Բազմաթիվ (մի քանի տասնյակ) ֆենոտիպային հատկանիշների համեմատության և համընկնող հատկանիշների քանակի համակարգչային մշակմամբ կատարվում է միկրոօրգանիզմների խմբավորում: **Քիմիական դասակարգման** համար ֆիզիկաքիմիական (գազահեղուկային քրոմատոգրաֆիա, էլեկտրոֆորեզ) և կենսաքիմիական մեթոդներով միկրոբային քջի տարրեր կառույցներում որոշվում է լիպիդների, ամինաթրուների, հիմնական շաքարների կազմը: **Շճադասակարգման** հիմքը միկրո-

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՍՄ ՄԱՍՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

օրգանիզմների սպեցիֆիկ հակածինների հայտնաբերումն է: Վերջին տարիներին լայնորեն կիրառվում է **գենոտաքսոնոմիան**, որի հիմքում ընկած է ԴՆԹ-ի նուկլեոտիդային կազմի որոշումը և գենոմի առավել ընդհանուր բնութագրերի ուսումնասիրությունը: Գենետիկ միատարրության առավել ճշգրիտ չափանիշը ԴՆԹ-ի հոմոլոգության աստիճանի և գուանին-ցիտոզին (Գ+Ց) գումարային պարունակության որոշումն է: Որքան շատ են համանման գեները, և մոտ են Գ+Ց գումարային պարունակությունը, այնքան մոտ է գենետիկ ազգակցությունը: Այսպես, ԴՆԹ-ի հոմոլոգության 60-100% դիապազոնը վկայում է պատկանելությունը միևնույն տեսակին, 40-60%-ը՝ միևնույն ընտանիքի տարբեր ցեղերին և այլն:

Նենսաբանական գիտություններում այդ թվում մանրէաբանությունում, **դասակարգման միավորը տաքսոնն է**, որը բնութագրվում է որպես միանման մորֆոլոգիական, ֆիզիոլոգիական, կենսաքիմիական, մոլեկուլային-կենսաբանական հատկանիշներով օժտված օրգանիզմների խումբ՝ միավորված այս կամ այն **տաքսոնոմիական կատեգորիայի** սահմաններում: Բարձրագույն տաքսոնոմիական կատեգորիաներն են կայսրություններն ու թագավորությունները, որոնք մանրէների գենետիկական ազգակցության սերտացմանը համընթաց միվորում են հետևյալ տաքսոնոմիական կատեգորիաները՝ **դաս (classis)**, **կարգ (ordo)**, **ընտանիք (familia)**, **ցեղ (genus)**, **տեսակ (species)**: Դասակարգման առանցքային կատեգորիան տեսակն է (*species*): Այն ստանդարտ պայմաններում գոյատևող ու կենսագործող, ծագումնաբանական ընդհանուր արմատներ, ընդհանուր գենոտիպ և առավելագույն համանման ֆենոտիպային հատկություններ ունեցող միկրոօրգանիզմների անբողջությունն է: Տվյալ տեսակի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում (որոշակի աղբյուրից, որոշակի ժամանակահատվածում) անջատված կուլտուրան անվանվում է **շտամ (stammes-ծագել)**: Հարկ է նշել, որ միկրոօրգանիզմների փոփոխականության բարձր հաճախականության հետևանքով, միևնույն տեսակի տարբեր շտամները որոշակիորեն կարող են միմյանցից տարբերվել, որը պայմանավորում է, առանձին

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԲԱՆՈԹՅՈՒՆ

հատկանիշներով ստանդարտ տեսակից տարբերվող վարիանտների՝ տիպերի, տարբերակների (մորֆովար, բիովար, ֆագովար, սերովար, էկովար, պաթովար և այլն) առկայությունը: Բակտերիաների տեսակը նշվում է երկանվանակարգմանք (Staphylococcus aureus, Brucella melitensis), որտեղ առաջին բառը գրում են մեծատառով. այն արտահայտում է ցեղային պատկանելությունը, իսկ երկրորդը՝ տեսակը, գրում են փոքրատառով:

Մանրէների ողջ բազմազանությունը միավորող հիմնական չափանիշը դրանց մանրադիտակային չափերն են: Շատ այլ հատկանիշներով, մասնավորապես բջջի մոլեկուլային-կենսաբանական կազմավորնան մակարդակով՝ գենոմի կառուցվածքով, սպիտակուց սինթեզող համակարգի, բարձրակարգ օրգանոիդների, թաղանթային կառույցների առկայությամբ կամ բացակայությամբ, բազմացման առանձնահատկություններով դրանք էականորեն տարբերվում են միմյանցից: Ըստ այդմ, ժամանակակից դասակարգմանը մանրէների ողջ աշխարհը տարբերակվում է կյանքի բջջային (բակտերիաներ, սնկեր, նախակենդանիներ) և ոչ բջջային (վիրուսներ, պրիոններ) ձևերի (նկ.2): Բջջային ձևերը ընդգրկված են երեք կայսրություններում «Bacteria», «Archaeae», «Eukarya», ոչ բջջային ձևերը՝ «Vira» թագավորությունում: Մարդու համար ախտածին մանրէները դասվում են՝

**1.«Bacteria» կայսրությանը** (բակտերիաներ, սպիտակությաներ, շողանկեր, ոիկետսիաներ, խլամիդիաներ, միկոպլազմներ), որոնք ըստ բջջի կառուցվածքի պրոկարիոտ (նախակորիգային) օրգանիզմներ են:


**2.«Eukarya» կայսրության «Fungi»** (խմորասնկեր և բորբոսասնկեր), և **«Protozoa»** (նախակենդանիներ), թագավորություններին, որոնք եռկարիոտ (իրական կորիզավոր) օրգանիզմներ են:

**3.«Vira» թագավորությանը** (վիրուսներ, պրիոններ):

«Archaeae» կայսրությունում ընդգրկված մանրէները պրոկարիոտ օրգանիզմներ են: Դրանք մարդու համար ախտածին տեսակ-

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

Աեր չեն ընդգրկում, սակայն էական դեր ունեն բնության մեջ նյութերի և էներգիայի շրջանառության գործընթացներում:



### Նկ.2. Մանրէների դասակարգումը

Ներկայումս բակտերիաների համակարգման և տարբերակման համար լայնորեն կիրառվում է Բերզի «Բակտերիաների կարգավորումը» տեղեկատու աշխատությունը (ռուսերեն լեզվով II իրատարկություն, 2001թ), որտեղ «Bacteria» կայսրության պրոկարիոտ մանրէները ըստ բջջապատի կառուցվածքի՝ բաժանվում են 4 բաժիններ՝ **Gracilicutes** (նույր բաղանթ ունեցողներ՝ գրամ բացասականներ), **Firmicutes** (հաստ բաղանթ ունեցողներ՝ գրամ դրականներ), **Tenericutes** (բջջապատ չունեցող), **Mendosicutes** (պեպտիդոգլիկանից զուրկ բջջապատ): Այնուհետև հայտնի բոլոր

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

բակտերիաները միավորվում են նշված բաժինների տարբեր տարսուններում:

Գործնականում ինֆեկցիոն հիվանդությունների լաբորատոր ախտորոշման համար՝ էթոլոգիական ագենտի (ախտածին մանրէ) հայտնաբերում և տեսակային պատկանելության հաստատման հիմքում ընկած հատկությունների (մորֆոլոգիական, տինկտորիալ, ֆիզիոլոգիական, կուլտուրալ, կենսաքիմիական, անտիգենային, գգայունություն յուրահատուկ ֆագերի նկատմամբ) ուսումնասիրություն, կարևորագույն խնդիր է միկրոօրգանիզմների մաքուր կուլտուրայի ստացումը: Մաքուր կուլտուրան միևնույն տեսակին պատկանող միկրոօրգանիզմների պոպուլյացիան է՝ ստացված պինդ կամ հեղուկ արհեստական սննդային միջավայրերում: Մաքուր կուլտուրայի ստացման գրավականը մեկուսացված գաղութի ստացումն է, որը մեկ մայր բջջից առաջացած դուստր բջջների անզեն աչքով տեսանելի կուտակումն է պինդ սննդային միջավայրերի մակերեսին: Մեկ բջջից ստացված մաքուր կուլտուրան անվանվում է կլոն:

Այսպիսով, գենոտիպը և ֆենոտիպը արտացոլում են յուրաքանչյուր օրգանիզմի էությունը, նրա ինքնությունը, իսկ գենոհամակարգումը և ֆենոհամակարգումը՝ օրգանիզմների նմանություններն ու տարբերությունները, դրանց գենետիկ ազգակցության աստիճանը:


## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՍ ՄԱՍՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

### Գլուխ 3

ՄԱՍՐԵՆԵՐԻ (ԲԱԿՏԵՐԻԱԼԵՐԻ) ՄՈՐՖՈԼՈԳԻԱՆ,  
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԸ

#### 3.1. ԲԱԿՏԵՐԻԱԼԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵՎԵՐԸ

Տարբերում են բակտերիաների հետևյալ հիմնական ձևերը՝ գնդածն (սփերիկ) կամ կոկաննան (հուն. kokkos-հատիկ, գունդ), ցուպիկածն (ցիլինդրիկ), ոլորուն (սպիրալաննան) (նկ.3):



**Նկ.3. Բակտերիաների հիմնական ձևեր**

Գնդածն բակտերիաները հիմնականում ունեն ճիշտ գնդի ձև, երբեմն լորածն կամ նշտարածն (լանցետանման) են: Չափերը տատանվում են 0.5-1.5մկմ-ի սահմաններում: Բազմացման ժամանակ ըստ կիսման հարթության և կիսվելուց հետո փոխադարձ դասավորության՝ տարբերում են հետևյալ խմբերը՝

◆ **Միկրոկոկեր** (լատ. mikros-փոքր)՝ կիսվում են մեկ հարթությամբ և կիսվելուց հետո դասավորվում են մեկական, խառը: Մարդու համար ախտածին տեսակներ չեն ընդգրկում:


◆ **Դիպլոկոկեր** (լատ. diplos-կրկնակի)՝ կիսումը ընթանում է մեկ հարթությամբ գույզ բջիջների առաջացումով, որոնք լորածն են (*Neisseria gonorrhoeae*) կամ նշտարածն (*Streptococcus pneumoniae*) (նկ.4): Մարդու ախտաբանությունում առավել կարևորվում են նեյսերիաները և պնևմոնիայի ստրեպտոկոկը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ



Նկ.4. *Streptococcus pneumoniae*

♦ Ստրեպտոկոկեր (լատ. *streptos*-շղթա)՝ կիսվում են մեկ հարթությամբ և բազմանալով՝ բջջները պահպանում են կապը միմյանց միջև՝ առաջացնելով տարբեր երկարության շղթաներ (նկ.5):




Նկ.5. *Streptococcus pyogenes*

Ստրեպտոկոկերի բազմաթիվ տեսակներ (*S.pyogenes*, *S.agalactia*, *S.anginosus*) մարդու համար ախտածին են:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՍ ՄԱՏՐԻԱԲԱՆՈԹՅՈՒՆ

◆ **Ստաֆիլոկոկեր** (լատ. staphylo-ողկույզ)՝ կիսվում են երեք հարթություններով և բազմանալով՝ առաջացնում են ողկուզաձև կուտակումներ (նկ.6): Ստաֆիլոկոկերը (*S.aureus*, *S.epidermidis*, *S.saprophyticus*) առաջացնում են մարդու ավելի քան 100 հիվանդություն: Դրանք թարախային բորբոքումների առավել հաճախ հանդիպող հարուցիչներն են:



**Նկ.6. *Staphylococcus aureus***

◆ **Ետրակոկեր** (լատ. tetra-չորս)՝ կիսվում են 2 ուղղահայաց հարթություններով և դասավորվում են չորսական: Մարդու հաճախ ախտածին ներկայացուցիչներ հանդիպում են շատ հազվադեպ:

◆ **Սարցինաներ** (լատ. sarcina-կապոց, փաթեթ)՝ կիսվում են 3 փոխադարձ ուղղահայաց հարթություններով և առաջացնում են 8,16,32 - ական փաթեթներ: Առավել հաճախ հանդիպում են օդում և հիմնականում պայմանական ախտածին են:

**Ցուպիկաձև բակտերիաները** տարբերակվում են ըստ չափի. փոքր՝  $0.5 \times 2.0$  մկմ, որոնց անվանում են նաև կոկորակտերիաներ (Francisella tularensis, Brucella melitensis), միջին՝  $2.0 \times 5.0$  մկմ (Escherichia coli և աղիքային ինֆեկցիաների հարուցիչների մեջա-

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

մասնությունը), խոշոր՝ ավելի քան  $5.0 \times 10.0$  մկմ (*Clostridium novyi*): Բակտերիաների ծայրերը կարող են լինել կլորացած (*Escherichia coli* նկ.7), սրացած (*Fusobacterium*), հատած (*Bacillus anthracis*): Բակտերիաները կարող են լինել ձվածն՝ օվոիդ (*Yersinia pestis*): Ցուպիկածն բակտերիաները կուերի նման կիսվելուց հետո կարող են տարբեր դասավորություն ունենալ՝ մեկական և խառը, զույգերով՝ դիպլորակտերիաներ, շղթաներով՝ ստրեպտոբակտերիաներ:



Նկ.7. *Escherichia coli*

Սպոր առաջացնող ցուպիկները բաժանվում են՝

♦ **բացիլների** (*Bacillus anthracis*)՝ օժտված շնչառության աերոր տիպով (սպորը վեգետատիվ ձևի դեֆորմացիա չի առաջացնում),

♦ **կլոստրիդիաների** (*Clostridium tetani*)՝ օժտված շնչառության անաերոր տիպով (սպորի առաջացնան հետևանքով վեգետատիվ ձևը դեֆորմացվում է նմանվելով իլիկի՝ հուն. closter-իլիկ, թմբկափայտի, թենիսի ռակետի):

**Սպիրալածն կամ ոլորուն բակտերիաներ:** Տարբերում են 3 մեծ խումբ՝


**Վիբրիոններ** (հուն. *vibrio*-թեքվել), որոնք ունեն մեկ կորություն, որը չի գերազանցում պարույրի մեկ գալարի քառորդ մասը: Սրանք կարող են նաև ուղիղ լինել (*Vibrio cholerae*):

## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՍՄ ՍԱՄՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

**Սպիրիլներ** (հուն. speira - գալար), որոնք ունեն լայնակի մեծ կտրվածք և 2-3 գալար (Spirillum minor):

**Սպիրոխետներ** (հուն. speira - գալար, chaite - մազ), որոնք գալարների տարրեր թվով, շարժուն միկրոօրգանիզմներ են (նկ.8):

Տարբերում են նաև **թելանման բակտերիաներ**, որոնք առաջանում են ցուցիկաձև բակտերիաների ածի և կիսման կարգավորման խանգարման հետևանքով:



**Նկ.8. Սպիրոխետներ**


Նպաստավոր պայմանների դեպքում, դրանք վերադառնում են իրենց ելքային վիճակին: Պետք է նշել, որ բակտերիաները բնորոշվում են բարձր աղիմորֆիզմով (ձևի անհատական փոփոխականությամբ, որը չի փոխանցվում ժառանգաբար), առանձնապես արիեստական սննդային միջավայրերի վրա բազմացնելիս: Տարբեր գործուների ազդեցությամբ տեղի են ունենում զանազան փոփոխություններ, որոնք ազդակի վերացման դեպքում կարող են վերադառնալ ելքային վիճակին:

### 3.1.1. Բակտերիային բջջի կառուցվածքը

Բակտերիաները կառուցվածքային և ֆունկցիոնալ առանձնահատկություններով օժտված միաբջիջ օրգանիզմներ են, որոնց իիմնական տարբերությունը էռկարիոտ բջիջներից ներքին միջա-

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԲԱՆՈԹՅՈՒՆ

Վայրի բաժանումներն ապահովող տարրական թաղանթային կառուցների (Գոլցի ապարատ, էնրոպլազմատիկ ցանց, կորիզաթաղանթ) բացակայությունը է (Ըկ.9): Բակտերիային բջիջի հիմնական կառուցվածքային տարրերն են թաղանթը, բջջապլազման, որում տեղակայված են բջջի կենսագործունեությունը ապահովող «օրգանիդները»՝ մեզոսոմներ, ռիբոսոմներ, պարփակումներ (ներբջջային ներառումներ), և նուկլեոնիդ: Մի շարք միկրոօրգանիզմներ ունեն արտաբջջային կառուցներ՝ մտրակներ, միկրոթավիկներ և անբարենպաստ պայմաններում սպոր առաջացնելու ունակություն:



### Ըկ.9. Պրոկարիոտ բջջի կառուցվածքը

Բակտերիաների թաղանթը կազմված է երեք շերտից՝ արտաքին լորձային շերտ, բջջապատ, ցիտոպլազմատիկ թաղանթ: Լորձային շերտը տարբեր մածուցիկության ու քիմիական կազմով դոնդողանման միացություն է, որից որոշ բակտերիաների մոտ կարող է ձևավորվել պատիճ: Վերջինս, պայմանավորված արտահայտման աստիճանով, տարբերակվում է մուկոպլիսախարիդային բնույթի, միկրոֆիբրիլների տեսքով միկրոպատիճի՝ անուր հաված բջջապատիճ, որն առկա է բոլոր բակտերիաների մոտ և պոլիսախարիդային բնույթի (*Streptococcus pneumoniae*, *Klebsiella pneumoniae*), երբեմն՝

## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՍՍ ՄԱՍՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

պոլիապեպտիդային (*Bacillus anthracis*, *Yersinia pestis*) **մակրոպատիճի:**

Մակրոպատիճ առաջացնում են ոչ բոլոր բակտերիաները, այն գենոտիպով պայմանավորված տեսակային հատկանիշ է և ունի ախտորոշիչ տարրերակիչ նշանակություն: Մի շարք ախտածին բակտերիաներ մակրոպատիճ առաջացնում են միայն մարդու և կենդանիների օրգանիզմում (*Streptococcus pneumoniae*, *Bacillus anthracis*, *Clostridium perfringens*), իսկ որոշ մանրէների մոտ (*Klebsiella pneumoniae*, *Klebsiella ozaenae*, *Klebsiella rhinoscleromatis*) այն հայտնաբերվում է մշտապես: Պատիճը օժտված է հետևյալ ֆունկցիաներով՝

◆ **պաշտպանական**, որով բակտերիային բջիջը պաշտպանվում է կենսաբանական, թիմիական, ֆիզիկական ազդակներից (ֆազողիտոզ, հակամարմիններ, հակաբակտերիային պրեպարատներ, չորություն),

◆ պայմանավորում է **վիրուլենտությունը**, ուստի պատիճը կորցնելու դեպքում այն նվազում է, կամ վերանում,

◆ **ապահովում է աղիեզիան** թիրախ բջիջի մակերեսին, ինչը հանդիսանում է յուրաքանչյուր ինֆեկցիոն պրոցեսի սկզբնական փուլը,


◆ **օժտված է անտիգենությամբ**, որով պայմանավորված է բակտերիաների թաղանթային, մակերեսային կամ K – պատիճային անտիգենը:

Զրի մեծ քանակի պարունակության պատճառով պատիճը դժվարությամբ է ներկվում անիլինային ներկերով, կամ ամենակի չի ներկվում: Այն հայտնաբերում են Յինս-Բուրիի կամ Իոնեի ներկման եղանակներով:

**Բջջապատը (ԲՊ)** կազմում է բջջաթաղանթի միջին շերտը: Այն թիմիական բարդ կառուցվածքի հետերոպոլիմեր է, որի հիմնական թաղադրամասը **պեպտիդոգլիկան** է: Վերջինիս հենքը կազմում են β-գլիկոզիդային կապերով կապված N-ացետիլ գլիկոզամինի և N-ացետիլ մուրամաթթվի իրար հաջորդող օղակներով ձևավորված

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՆՐԵԱԲԱՆԻԹՅՈՒՆ

**գլիկանային** շղթաները, որոնք միմյանց միացած են կողմնային՝ տետրապեպտիդային և միջածիգ՝ պենտապեպտիդային (պենտա-գլիցինային շղթաներ) կապերով։ Կողմնային շղթաները մի քեռով կապված են N-ացետիլ մուրամաթրվի մոլեկուլներին, իսկ մյուսով միացած են միմյանց պենտագլիցինային կամքակներով (նկ.10): Նման կապերն ապահովում են պեպտիդոգլիկանի ցանցածև, ամուր և ճկուն կառուցվածքը, որի շնորհիվ այն չխոչընդոտելով բակտերիային բջջի նյութափոխանակությանը իրականացնում է մի շարք կարևորագույն ֆունկցիաներ։ Տետրապեպտիդների կազմում այլ ամինաթթուների հետ առկա են D ամինաթթուներ (D-ալանին, D-գլուտամին) և լիցին կամ ռինամինապիմելինաթթու (ՊԱՊ): Վերջինս




#### **Ակ. 10. Պեպտիդոլիկանի կառուցվածք**

հայտնաբերվում է միայն պրոկարիոտ օրգանիզմներում և չի հայտնաբերվում բուսական ու կենդանական բջիջներում: Պեպտիդոգլիկանը կարող է քայլայվել մի շարք ֆերմենտներով (լիզոցիմ՝ քայլայում է  $\beta$ -գլիկոզիդային կապերը, ամիդազներ, էնդոպեպտիդազներ), իսկ նրա սինթեզը ծննդվում է պենիցիլինային խմբի հակաբիոտիկներով, որոնք խորհնութում են աենտառակինային կամու-

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

ջակի առաջացումը կողմնային շղթաների D-ալանիմի և ՂԱՊ-ի միջև։ Ըստ բջջապատի կառուցվածքային առանձնահատկությունների և գրամի եղանակով տարբեր գույներով ներկվելու ունակության՝ բակտերիաները բաժանվում են երկու խմբի՝ գրամ դրական (G+) ներկվում են կապտամանուշակագույն) և գրամ բացասական (G-) ներկվում են վարդագույն) բակտերիաներ (նկ.11):



Նկ.11.Բջջաթաղանթի կառուցվածքը

Գրամ դրական բակտերիաների բջջապատը հաստ է (50-60նմ), միատարբ: Այն բաղկացած է հիմնականում պեպտիդոլիկանի գլիկանային բազմաթիվ շերտերից (նկ.12), որը նրա չոր զանգվածի



Նկ.12. Գրամ դրական բջջապատ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՆՐԵՄԱՆՆԹՅՈՒՆ

40-90%-ն է և տեյխոյաթթվի (հուն. *teichos*-պատ) պոլիմերներից՝ կազմված 8-50 գլիցերինի կամ ռիբիտի մնացորդներից (ռիբիտ-տեյխոյաթթու, գլիցերինտեյխոյաթթու):

Միկրոօրգանիզմների յուրաքանչյուր տեսակում առկա է տեյխոյաթուներից միայն մեկը, որը հիմնական մակերեսային անտիգենն է: Սպիտակուցները և լիպիդները կազմում են գրամ դրական բջջապատի չոր գանգվածի չնչին մասը՝ շուրջ 1-2%: G+ բակտերիաների բջջապատի կորստի դեպքում առաջանում են պրոտոպաստներ:

**Գրամ բացասական բակտերիաները** ունեն համեմատաբար բարակ (15-20նմ), բազմաշերտ բջջապատ՝ կազմված ռիգիդ՝ պետիոնովիկանի գլիկանային մեկ-երկու շերտերից (բջջապատի չոր զանգվածի 5-10%), դրա վրա մողայիկ տեղակայված պլաստիկ՝ ֆուֆոլիպիդային, լիպոպոլիսախարիդային (ԼՊՍ), սպիտակուցային շերտերից (նկ.13), որոնց հաստությունը զգալիորեն գերազանցում է պետիոնովիկանային շերտի հաստությունը:



### Նկ. 13. Գրամ բազասական բջիջապատ

Տեյսոյաթուները գրան բացասական բջջապատում բացակայում են: Պլաստիկ շերտի ֆուֆոլիպիդները պեպտիդոգլիկանին ամրացած են լիպոպոտեհններով:

**Լիպովոլիսախարիդը** բաղկացած է երեք կառուցվածքային միավորներից՝


## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՍ ՄԱՍՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

◆ Ա-լիպիդից, որը գործնականում նույնն է բոլոր գրամ բացասական բակտերիաների մոտ և օժտված է արտահայտված տոքսիկությամբ, ինչի պատճառով ԼՊՍ-ը անվանվում է նաև էնդոտոքսին,

◆ բազիսային պոլիսախարիդային միջուկից,

◆ կողմնային շղթաներից, որոնք ձևավորվում են միանման օլիգոշաքարների կրկնվող հաջորդականություններով: Վերջիններով պայմանավորված է գրամ բացասական մանրէների Օ սոնատիկ անտիգենի սպեցիֆիկությունը, ինչն ունի տարբերակիչ ախտորոշիչ նշանակություն (նկ.14):

Սպիտակուցների որոշ մասը (պորիններ) բջջապատի հաստության մեջ առաջացնում է խողովակներ, ապահովելով ցածրամոլեկուլային նյութերի կոխսանակությունը, մյուս մասը (պերմեազներ) մասնակցում է սնուցմանը՝ սննդանյութերի հեշտացված դիֆուզիային կամ ակտիվ տրանսպորտին, իսկ երրորդ մասը կատարում է ընկալիչային ֆունկցիա: Գրամ բացասական բակտերիաները բջջապատի կորստի դեպքում վեր են ածվում սֆերոպլաստների: Պրոտոպլաստ ները և սֆերոպլաստները, որոնք ունակ են բազմացնան, ստացել են L-ձևեր անվանումը:



Նկ.14. Լիպոպոլիսախարիդի կառուցվածքը

Բակտերիաների բջջապատը իրականացնում է հետևյալ ֆունկցիաները՝

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

- ◆ ապահովում է բակտերիային բջջի ձևը,
- ◆ պաշտպանական,
- ◆ պայմանավորում է ներկումը ըստ Գրամի,
- ◆ պայմանավորում է վիրուլենտությունը,
- ◆ ունի տաքսոնոմիկ նշանակություն,
- ◆ ընկալչային՝ փոխազդելով բակտերիոֆագերի, բակտերիոֆինիների և տարբեր քիմիական միացությունների հետ,
- ◆ պայմանավորում է անտիգենային հատկությունները:

**Ցիտոպլազմատիկ թաղանթը (ՑԹ)** պարզագույն կենսաբանական թաղանթը է կազմված երկշերտ ֆուֆոլիափիդներից և դրա մեջ ընկղմված, նյութափոխանակությունը ապահովող սպիտակուցներից (նկ.15): Այն գտնվում է անմիջապես բջջապատի տակ ու սահմանափակում է ցիտոպլազման, և բակտերիային բջջի համար ունի կենսական նշանակություն:



### Նկ.15. Ցիտոպլազմատիկ թաղանթ

Ցիտոպլազմատիկ թաղանթն ունի հետևյալ ֆունկցիաները՝

- ◆ օսմոտիկ արգելք է,
- ◆ ապահովում է նյութափոխանակությունը,
- ◆ կապված է ՂՆԹ-ի հետ և մասնակցում է նրա ռեպլիկացիային,
- ◆ ապահովում է բակտերիային բջջի կիսումը,
- ◆ մի շարք բակտերիաների մոտ մասնակցում է սպորագոյացմանը:

Ցիտոպլազմատիկ թաղանթն առաջացնում է ներփքումներ՝ մեղսոսմներ, որոնք տեղակայվում են ՑԹ-ի տարբեր հատվածներում և բջջի կտրվածքի վրա կարող են ունենալ օդի, թելի կծիկի, միմյանց

## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՍՍ ՄԱՍՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

հպված թիթեղիկների կամ խողովակների ու այլ ձևեր: Վերջիններս կապված են ՂՆԹ-ի հետ և մասնակցում են բջջի կիսմանն ու սպորագոյացմանը: Մեզոսոմներում իրականանում է բակտերիաների էներգետիկ փոխանակությունը: Դրանք եռկարիոտ բջջների միտոքրոմիտումներին հաճարժեք կառուցմեր են: ՑԹ-ի ամբողջականության խախտումը առաջացնում է բակտերիային բջջի մահ:

**Ցիտոպլազման** բարդ, կոլորիդ համակարգ է, որը բաղկացած է շուրջ 75% ջրից ու 25% չոր մնացորդից՝ միներալ միացություններ, ճարպեր, ածխաջրատներ, սպիտակուցմեր, նուկլեինաթրուներ և այլն: Լուսային մանրադիտակի տեսադաշտում այն համասեռ է, թափանցիկ: Էլեկտրոնային մանրադիտակով դիտարկելիս ցիտոպլազման երևում է հատիկավոր կառուցվածքով, ինչը պայմանավորված է նուկլեոիդի, պլազմիդների, ռիբոսոմների, մեզոսոմների և պարփակումների առկայությամբ:

**Նուկլեոիդը** իր կառուցվածքով և քիմիական կազմով համարժեք է էռկարիոտ բջջի կորիզին, ներկայացված է եզակի (հապլոիդ հավաքակազմ), երկթել, օղակաձև, խիստ ոլորված ՂՆԹ-ի մոլեկուլով: Էռկարիոտների օրինակով այն հաճախ անվանում են քրոնոսոն, որում կոդավորված է բջջի ողջ ժառանգական ինֆորմացիան: Այն զուրկ է թաղանթից, կորիզակներից, հիստոն սպիտակուցմերից, ցիտոպլազմայում տեղակայված է կոնպակտ կծիկի ձևով կամ դիֆուզ տարածված է այնտեղ, չի կիսվում միտոզով: Պարզ կիսման ժամանակ, հատկապես բազմացման լոգարիթմական փուլում՝ կիսվելուց առաջ, նուկլեոիդի քանակը բակտերիային բջջում կարող է կրկնապատկվել, քառապատկվել: Նուկլեոիդին զուգահեռ՝ բակտերիային բջջում կարող են գտնվել նաև փոքր մոլեկուլային զանգվածով, ավտոնոմ ՂՆԹ-ի երկթել, փակ օղակաձև մոլեկուլներ՝ պլազմիդներ, որոնցում ևս կոդավորված է ժառանգական ինֆորմացիա: Սրանք օժտում են բակտերիային բջջին որոշակի հատկանիշներով, որոնք սակայն պարտադիր չեն ու բջջի համար չունեն կենսական նշանակություն:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԱԾՈՒԹՅՈՒՆ


Ոիբոսոմները (60% ուշև և 40% սպիտակուց) սպիտակուց սինթեզող գոյացություններ են, բաղկացած են 2 ենթամիավորից՝ 50S և 30S: Էռլարիոտ բջիջների ոիբոսոմներից տարբերվում են սպիտակուցային միացությունների կազմով և ուլտրացենտրիֆուլգացման ժամանակ նստեցման արագությամբ՝ սեղմենտացիայի գործակիցը 70S: Այս տարբերությունը պայմանավորում է որոշ բիմիոբերապւետիկ պրեպարատների ազդեցությունը բակտերիային բջջի ոիբոսոմի վրա և սպիտակուցների սինթեզի արգելակումը դրանցում՝ անվնաս թողնելով մակրոօրգանիզմի բջիջների սպիտակուց սինթեզող համակարգը՝ ոիբոսոմները, որոնց սեղմենտացիայի գործակիցը 80S է:

**Պարփակումները** պրոկարիոտ և էռլարիոտ բջիջների նյութափոխանակության արգասիքներ են, տեղակայվում են ցիտոպլազմայում և միաժամանակ պահեստային սննդանյութեր են: Դրանք կարող են հանդես գալ գլիկոգենի, օսլայի, ճարպերի, ծծումբի, խեժի, պոլիֆոսֆատների (վոլուտինյան հատիկներ) և այլ միացությունների տեսքով: Որոշ միկրոօրգանիզմների՝ մասնավորապես *Corynebacterium diphtheriae*-ի և *Spirillum volutans*-ի, ցիտոպլազմայում վոլուտինյան հատիկների առկայությունը ունի տարբերակիչ ախտորոշիչ նշանակություն՝ պայմանավորված մետաքրոնագիայի երևույթով և բակտերիային բջջում յուրօրինակ տեղակայմամբ: Դիֆթերիայի հարուցիչում վոլուտինյան հատիկները հայտնաբերում են նեյսերի ներկման եղանակով:

Բակտերիաների մի ստվար խումբ օժտված է շարժունությամբ, ընդ որում տարբերում են երկու բնույթի շարժումներ՝ **սողացող** (սպիրոլիստներ) և **լողացող** (աղիքային ցուպիկ), որոնք երկուսն ել պայմանավորված են կծկողական հատկությամբ օժտված, սպիտակուցային (ֆլագելին) թելանման գոյացություններով: Առաջին դեպքում դրանք տեղակայված են բջջաբանների խորության մեջ՝ բջջի ամբողջ երկայնքով (միջածիգ առանցքային թել՝ աքսիստի), և ապահովում են բջջի ոլորուն կառուցվածքն ու մարմնի կծկումները: Լողացող բակտերիաների սպիտակուցային թելիկներն ունեն

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՍ ՄԱՏՐԵԱԲԱՆԹՅՈՒՆ

արտաքջային դասավորություն և ստացել են մտրակներ անվանումը: Մտրակները 12-18նմ լայնակի կտրվածքով, մինչև 20նկմ երկարության կառույցներ են՝ կազմված ֆլագելին սպիտակուցի միահյուսված թելիկներից, միջուկից և արտաքին շապիկից: Մտրակը բակտերիային բջջին ամրացած է բջջաբաղանքի հաստության մեջ գտնվող բազալ մարմնիկի և դրա արտաքջային տեղակայման շարունակության՝ կեռիկի միջոցով (նկ.16):




**Նկ.16. Մտրակի կառուցվածքը**

Մտրակի շարժումներն ապահովում են, գրամ դրական բակտերիաների բազալ մարմնիկում առկա մեկ զույգ, իսկ գրամ բացասականներում՝ երկու զույգ սկավառակները: Բջջի մակերեսին մտրակների տեղակայմամբ և քանակով (նկ.17) տարրերում են՝

- ◆ մոնոտրիխներ՝ մեկ մտրակ բջջի մի բևեռում (*Vibrio cholerae*),
- ◆ լիֆոտրիխներ՝ մեկ փունջ մտրակներ մի բևեռում (*Pseudomonas aeruginosa* ցեղի ներկայացուցիչներ),
- ◆ ամֆիտրիխներ՝ մեկական մտրակ կամ փնջեր երկու բևեռներում (*Spirillum* ցեղի ներկայացուցիչներ),
- ◆ պերիտրիխներ՝ բազմաթիվ մտրակներ ամբողջ մակերեսով (*E. coli*):

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ



### Նկ.17. Մտրակների տեղակայումը

Բակտերիաների շարժունակությունը, մտրակների քանակը և դասավորությունը ունեն տարբերակիչ ախտորոշիչ նշանակություն, որը հայտնաբերվում է էլեկտրոնային մանրադիտակով և նատիվ արեպարատների մթնադաշտային մանրէազննամբ՝ կախված կամ ճզմված կաթիլում:

Մտրակները կատարում են **շարժողական** (լոկոմոտոր) և **անտիգենային** (Հ-անտիգեն) ֆունկցիաներ:


**Միկրոբավիկները** (ախլիներ, ֆիմբրիաներ, թարթիչներ) և շարժուն, և' անշարժ բակտերիաների ողջ մակերեսը ծածկող, բարակ, սնամեջ, 10նմ լայնակի կտրվածքով և 0.3-10.0մկմ երկարությամբ, ցիտոպլազմատիկ թաղանթից սկսվող, սպիտակուցային թելիկներ են, որոնք ի տարբերություն մտրակների օժտված չեն լոկոմոտոր ֆունկցիայով: Դրանց քանակը բջջի մակերեսին հասնում է մի քանի հարյուրից մի քանի հազարի՝ ընդհանուր տիպի միկրոբավիկներ (Նկ.18), որոնք նպաստում են բակտերիային բջջի մակերեսի մեծացմանը և լրացուցիչ պայմաններ են ստեղծում նյութափոխանակության համար, օժտված են անտիգենությամբ:

Ֆունկցիոնալ նշանակությամբ տարբերում են նաև **մասնագիտացված միկրոբավիկներ՝**

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

♦ **Ֆիմբրիաներ՝** ապահովում են բակտերիային բջջի աղիեզիան թիրախ բջջի մակերեսին, որոնց քանակը կարող է հասնել մի քանի հարյուրի:

♦ **F-պիլիներ (անգլ. fertility-պտղաբերություն, լատ. pilus-մազիկ)** կամ սերս պիլիներ, կոնյուգատիվ պիլիներ: Բակտերիային բջջի մակերեսին 1-4 գլանաձև, մինչև 10.0մկմ երկարության, հաճախ ծայրերին գնդաձև հաստացումներով, սնամեջ սպիտակուցային գոյացություններ են, որոնք մասնակցում են բակտերիաների կոնյուգացիային: Դրանց առաջացումը կողավորվում է F- պլազմիդներով:




**Նկ.18. Միկրոթափիկներ**

**Սպոր:** Սպորագոյացումը իրականանում է արտաքին միջավայրի անբարենպաստ պայմաններում՝ որպես տեսակը պահպանելու միջոց: Բակտերիային մեկ բջջից առաջանում է մեկ սպոր, որը կարող է լինել կլոր կամ ձվաձև: Բակտերիաների որոշ տեսակների (*Clostridium botulinum*) սպորի տրամագիծը գերազանցում է վեգետատիվ ձևի լայնակի կտրվածքը՝ պայմանավորելով ցուպիկի դեֆորմացումն ու իլիկաձև տեսքը: Այլ տեսակներ (*Bacillus anthracis*) սպորագոյացման դեպքում չեն դեֆորմացվում: Մանրէ վեգետատիվ ձևում տեղակայվում են ծայրային (*Clostridium tetani*),

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Ենթածայրային (*Clostridium botulinum*) և կենտրոնական (*Bacillus anthracis*) մասերում (նկ.19):

Սպորագոյացման ունակությունը, սպորի ձևը, չափը, տեղակայումը բակտերիային բջջի վեգետատիվ ձևում գենոտիպով պայմանավորված տեսակային հատկանիշներ են և ունեն տարրերակիչ ախտորոշիչ նշանակություն:




**Նկ.19. Սպորների տարրերակումը**

Սպոր առաջացնող ցուպիկները բաժանվում են **բացիլների**, որոնք սպոր գոյացնող, աերոր բակտերիաներ են (*Bacillus antracis*-սիրիոյան խոցի հարուցիչ) և **կլոստրիդիաների** (լատ. *clostridium*-իլիկ), որոնք անաերոր սպոր գոյացնող միկրօրգանիզմներ են (*Clostridium tetani* - փայտացման հարուցիչ):

Սպորը առաջանում է 15-18 ժամվա ընթացքում՝ անցնելով հետևյալ փուլերը (նկ.20): ցիտոպլազմայի և նուկլեոփիլի խտացում բջջի որևէ հատվածում և **սպորոգեն գոնայի** ձևավորում, ցիտոպլազմատիկ բաղանթի միջոցով միջնապատի առաջացում, սպորոցեն գոնայի անջատում ցիտոպլազմայի մնացած մասից և **պրոսպորի**

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵԱԲԱՆԻԹՅՈՒՆ

առաջացում՝ շրջափակված կրկնակի ցիտոպլազմատիկ թաղանթով, վերջինիս արտաքին և ներքին շերտերի միջև յուրահատուկ պեպտիդոգլիկանային դիամինապիմելինային թթվի փոխարեն դիպիկոլինաթթվի առկայությամբ կորտեքսի ձևավորում, վեգետատվ ձևերում չհանդիպող սպիտակուցային, լիալիդային և այլ միացություններով կազմված արտաքին թաղանթի առաջացում և հասուն սպորի ձևավորում:



### Նկ.20. Սպորագոյացման փուլերը

Ցետագայում վեգետատիվ ձևը ոչնչանում է, և սպորը որպես ինքնուրույն ձև կարող է պահպանվել անսահման երկար ժամանակ։ Սպորի կայունությունը անբարենպաստ պայմաններում, ի տարբերություն բակտերիաների վեգետատիվ ձևերի, պայմանավորված է՝


- ◆ բազմաշերտ թաղանթով,
- ◆ Ca-ի բարձր խտությամբ,
- ◆ ազատ ջրի բացակայությամբ,
- ◆ դիպիկոլինաթթվի առկայությամբ,
- ◆ ♦Երմենտների ինակտիվ վիճակով։

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Բարենպաստ պայմաններում սպորը 4-12 ժամվա ընթացքում ծլում և փոխարկվում է վեգետատիվ ձևի:

### 3.2. ՍՊԻՐՈԽԵՏՆԵՐ

Սպիրոխետներն օժտված են այրոկարիոտ բջիջներին բնորոշ բոլոր հատկություններով, սակայն ըստ մորֆոլոգիական և կենսաբանական մի շարք առանձնահատկությունների՝ ընդգրկվել են առանձին՝ *Spirochaetales* կարգում: Դրանց հիմնական կառուցվածքային միավորը պրոտոպլազմատիկ գլանն է, որը շրջափակված է բազմաշերտ արտաքին թաղանթով (ցիտոպլազմատիկ թաղանթ, գրամ բացասական բջջապատ): Ցիտոպլազմատիկ գլանի և արտաքին թաղանթի միջև, իսկ որոշ հեղինակների կարծիքով բջջապատի հաստության մեջ ցիտոպլազմատիկ գլանի երկու ծայրերի հաստացումներից՝ **բլեֆարոպլաստներից**, սկսվում և դեպի բջջի կենտրոն միմյանց ընդառաջ են գնում ֆիբրիլներ (նկ.21)՝ **միջածիգ առանցքային թել (աքսիստիլ)**, որոնք ոլորվում են ինչպես իրենց առանցքի



Նկ.21. Սպիրոխետների կառուցվածքը

այնպես էլ մեկը մյուսի և պրոտոպլազմատիկ գլանի շուրջը՝ պայմանավորելով միկրոօրգանիզմի ոլորուն կառուցվածքը: Մարդու ախտաբանությունում կարևորվում են 2 ընտանիք՝ *Spirochaetaceae* և *Leptospiraceae*: *Spirochetaceae* ընտանիքում ախտածին են


## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՍՍ ՄԱՍՐԵԱԲԱՍՈՒԹՅՈՒՆ

Borrelia և Treponema ցեղերը (*Treponema pallidum* – սիֆիլիսի հարուցիչ, *Borrelia recurrentis* – համաճարակային հետադառձ տիֆի հարուցիչ): Leptospiraceae ընտանիքը ներկայացված է *Leptospira* ցեղով, որի տարբեր տեսակներն ախտածին են մարդու և բազմազան կենդանիների համար (*Leptospira interrogans*–լեպտոսպիրոզի կամ ջրային տենդի հարուցիչ):

Մրանք ոլորում, շարժում միկրոօրգանիզմներ են, որոնց չափերը տատանվում են շատ լայն սահմաններում՝  $0.1\text{-}0.3 \times 5\text{-}250\text{մկմ}$ : Որպես կանոն, ախտածին տեսակներն ավելի փոքր և նուրբ են: Ֆիբրիլների քանակը, դրանցով պայմանավորված առաջնային գալարների հաճախականությունը, հանաչափությունը, անպլիտուդան, առաջացրած երկրորդային գալարները նշանակություն ունեն նշված միկրոօրգանիզմների դասակարգման և տարբերակման ժամանակ (*Treponema* ցեղ՝ երկրորդային գալարներ չեն առաջացնում, առաջնային գալարները՝ թվով 8-12, տեղաբաշխված են բջջի երկարությամբ հավասարաչափ, մոտ 1 մկմ հեռավորությամբ, *Borrelia* ցեղ՝ 3-8 անհամաչափ գալարներով, բարակած ծայրերով, երկրորդային գալարներ առաջացնող միկրոօրգանիզմներ են, *Leptospira* ցեղի տեսակներն ունեն սեղմված բարակ զսպանակի ձև՝ պայմանավորված բազմաթիվ՝ 20-30 առաջնային մանր գալարներով: Առաջացնում են երկրորդային գալարներ՝ բևեռներում կարթանման, ծայրերը կոճականման հաստացած են): Սպիրոխետների տարբեր ցեղերին դասվող տեսակների խնամակցությունը անիլինային ներկերի նկատմամբ տարբեր է, սակայն ընդհանուր առնամբ, հատկապես տրեպոնեմաներինը թույլ է արտահայտված: Այդ պատճառով դրանց քսուք-պրեպարատների ներկումը կատարվում է Ունանովսկի-Գիմզայի եղանակով, որի արդյունքում տրեպոնեմաները ներկվում են բաց վարդագույն, բորելիաները՝ կապտամանուշակագույն, լեպտոսպիրաները՝ կարմիր-վարդագույն, ինչը ևս ունի տարբերակիչ նշանակություն: Սպիրոխետների մանրադիտակազմնումը իրականացվում է նաև նատիվ պրեպարատներում՝ մութ դաշտում կամ ֆազոկոնտրաստային մանրադիտակով:

### 3.3. ՈՒԿԵՏՍԻԱՆԵՐ

Ուկետսիաների (Rickettsiaceae) ընտանիքն ընդգրկում է մարդու համար ախտածին 3 ցեղ՝ Rickettsia, Rochalima, Coxiella: Վերջիններս փոքր չափերի, պոլիմորֆ, գրամ բացասական ցուպիկներ են, սակայն հանդիպում են դրանց ինչպես կոկանման, այնպես էլ թելանման ձևերը: Դրանք, ինչպես և այլ պրոկարիոտ միկրոօրգանիզմներն ունեն թաղանթ, ցիտոպլազմա և հատիկավոր ներառումներ: Կորիզանյութը կազմված է մեկից ավելի գոյացություններից: Ըստ ձևի և բջջում կորիզանյութի տեղակայման՝ Զդրոդովսկին տարբերակել է ուկետսիաների մորֆոլոգիական հետևյալ տիպերը (նկ.22):



Նկ.22. Ուկետսիաների մորֆոլոգիական տիպերը

♦Կոկած՝ փոքր, հոմոգեն հատիկավորությամբ, օվոիդ էլիպսանման, մինչև 0.5մկմ չափերի բջիջներ են, որոնք առավել հաճախ հանդիպող մորֆոլոգիական ձևեր են ու բնորոշ են թիրախ բջջում հարուցիչի ինտենսիվ բազմացման ֆազային:

## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵԱԲԱՆԹՅՈՒՆ

◆ Ցուցիկաձև՝ երկու բևեռներում կուտակված հատիկավորությամբ, 1.0-1.5մկմ չափերի միկրոօրգանիզմներ են, որոնք ևս բնորոշ են ինտենսիվ բազմացման ֆազային:

◆ Բացիլանման՝ մի փոքր կորացած կամ երկարած, բևեռներում երկիատիկավոր, երբեմն նաև 4 հատիկավոր (զույգ հատիկներ բևեռներում), 3-4մկմ երկարությամբ ցուպիկներ են: Բնորոշ են ավելի դանդաղ բազմացմանը և գրավում են միջանկյալ տեղ:

◆ Թելանման՝ բազմահատիկավոր, 20-40մկմ երկարությամբ ձևեր են, բնորոշ են ինֆեկցիայի սկզբնական փուլերին և բազմացման դանդաղ ֆազաներին:


Ոիկետսիաներն ունեն գրամ բացասական բակտերիաներին բնորոշ բջջապատի կառուցվածք: Սպոր և պատիճ չեն առաջացնում, գուրկ են մտրակներից: Յայտնաբերվում են Զդրողովով, ինչպես նաև Ռոմանովսկի-Գիմզայի եղանակներով ներկված պրեպարատների մանրէազնմամբ: Արիեստական սննդամիջավայրերում չեն աճում՝ բացարձակ ներքջային պարագիտներ են: Այս հատկանիշների և փոքր չափեր ունենալու պատճառով ոիկետսիաները մինչև 60-ական թվականները դասվում էին «vira» բագավորությանը: Դրանց կենսական ցիկլը ընդգրկում է 2 փուլ՝ **վեգետատիվ** և **հանգստի:** Վեգետատիվ ձևերը ցուպիկաձև են, ակտիվորեն կիսվում են բինար կիսման ճանապարհով: Հանգստի վիճակի ոիկետսիաներն ունեն սփերիկ կառուցվածք և չեն բազմանում:

### 3.4. ԽԼԱՄԻԴԻԱՆԵՐ

Խլամիդիաները գրամ բացասական, անշարժ, սպոր և պատիճ չառաջացնող պրոկարիոտ միկրոօրգանիզմներ են, որոնք դասվում են **Chlamydiaceae** (հուն. chlamydos-թիկնոց) ընտանիքի **Chlamydia** ցեղին: Խլամիդիաները, ինչպես և ոիկետսիաները պարտադիր ներքջային պարագիտներ են, ըստ ձևի պոլիմորֆ են (գնդաձև, ցուպիկաձև), տարբեր չափերի (0.2-1.5մկմ), ինչը մեծապես պայմանավորված է դրանց կենսական ցիկլի առանձնահատկություններով:

## ԸՆԴԱՍՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵՎԱՍՈՒԹՅՈՒՆ

Կենսունակ բջջից դուրս խլամիդիաները գոյատևում են 0.2-0.5մկմ չափերով, եռաշերտ բջջապատով, մետաբոլիկ առումով քիչ ակտիվ, ելեմենտար մարմնիկների (ԷՄ) ձևով, որոնք ինֆեկցիոն միավորներ են ու ախտահարում են ինտակտ բջջները: **Ներքջային՝ ռեպրոդուկտիվ ծեր՝ ռետիկոլյար մարմնիկ** (ՌՄ), առաջանում է թիրախ բջջի ցիտոպլազմայում, 5-6 ժամվա ընթացքում՝ ներթափանցած էլեմենտար մարմնիկներից: Այն ունի ավելի խոշոր մինչև 1.5մկմ չափեր, ցանցանան կառուցվածք, նույր բջջապատ: Սկզբում ԷՄ-ից ձևավորվում է ինիցիալ մարմնիկ (վեգետատիվ ծեր), իետո՛ ՌՄ, որն սկսում է կիսվել՝ ախտահարված բջջի ցիտոպլազմայում առաջացնելով հարկորիզային պարփակումներ: ՌՄ-ի կոնդենսացման հետևանքով հետագայում ձևավորվում է հորթի աչք հիշեցնող միջանկյալ մարմնիկ, որն էլ տրանսֆորմացվում է բջջից դուրս գալու պատրաստ ԷՄ-ների: Էլեմենտար մարմնիկների ելքը ուղեկցվում է ախտահարված բջջի լիզիտով (նկ.23):




**Նկ.23. Խյամիդիաների կենսական ցիկլը**

## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

Խլամիդիաները հայտնաբերվում են Ռոմանովսկի-Գիմզայի եղանակով, ընդ որում էլեմենտար մարմնիկները ներկվում են կարմիր, ռետիկուլյար մարմնիկները՝ կապույտ գույնով:

### 3.5. ՄԻԿՈՊԼԱԶՄԱՆԵՐ

Միկոպլազմաներն եվուուցիոն զարգացման ընթացքում կորցրել են բջջապատի բաղադրիչները սինթեզելու ունակությունը և փաստորեն գենետիկորեն զուրկ են դասական բջջապատից՝ նմանվելով բակտերիաների L-ձևերին (Ըկ.24):



**Ըկ.24. Միկոպլազմաներ**

Ըստ բջջաբաղանթի կառուցվածքի՝ դասվում են *Tenericutes* բաժնի **Mollicutes** դասին, որը միավորում է մարդու ախտաբանությունում կարևորվող միկոպլազմա և ուրեոպլազմա ցեղերի տեսակները: Վերջիններս ունեն փոքր չափեր ( $0.2\text{-}0.9\text{ }\mu\text{m}$ , վիրուսների նման անցնում են բակտերիային ֆիլտրերով), ամուր բջջապատի բացակայության պատճառով պոլիմորֆ՝ գնդաձև, ցուպիկաձև, թելաննան, ճյուղավորված մասնիկների տեսք: Բջջապատի ֆունկցիան կատարում է եռաշերտ ցիտոպլազմատիկ թաղանթը, որի հիմնական բաղադրիչը խոլեսթերինն է: Այն միկոպլազմաները ստանում են հյուսվածքներից կամ սննդային միջավայրից, քանի որ իրենք ինքնուրույն սինթեզելու ունակ չեն: Միկոպլազմաները գրամի եղանակով ներկվում են կարմիր, անշարժ են, սպոր և պատիճ չեն առաջացնում, բազմանում են պարզ կիսման եղանակով:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Արիեստական սննդամիջավայրերի նկատմամբ պահանջկուտ են, պահանջում են խոլեսթերինի պարտադիր ավելացում, նպաստավոր միջավայրերում առաջացնում են յուրօրինակ «յափուզա – գլազունք», գաղութներ: Մարդու մոտ միկոպլազմաներով հարուցված հիվանդություններն անվանվում են միկոպլազմոզներ և ուրեոպլազմոզներ:


### 3.6. ՇՈՂԱՍՍԿԵՐ

Շողասնկերը՝ *Actinomycetes* կազմավորման մակարդակով զբացեցնում են միջանկյալ տեղ բակտերիաների և սմկերի միջև (հուն. aktis-շող, ճառագայթ, mykes-սունկ): Ըստ կառուցվածքային և ֆիզիկաքիմիական առանձնահատկությունների՝ դասվում են «**Bacteria**» կայսրության, **Actinobacteria** դասի, *Actinomycetes* ցեղին: Պրոկարիոտ միկրոօրգանիզմներ են, որոնց ճնշող մեծամասնությունը ազատ ապրող սապրոֆիտներ են: Արիեստական սննդային միջավայրերում առաջացնում են իսկական (թելիկները զուրկ են միջնապատերից) **միցելիներ**՝ սուբստրատային կամ օդային, որոնք մինչև 1մկմ տրամագիծով և 100-600մկմ երկարությամբ թելիկների ճյուղավորված խուրճ են (նկ.25): Օդային միցելի թելիկների վրա գտնվում են **սպորներ** և **պտղաբեր ճյուղեր** (հիֆեր): Բազմանում են անսեռ ճանապարհով՝ սպորներով, հիֆերի ֆրագմենտացիայով, կամ բողբոջմամբ:

Մարդու ախտաբանությունում առավել կարևորվում են **Actinomycetes** և **Nocardia** ցեղերի ախտածին տեսակները: Առաջինները հարուցում են **ակտինոմիկոզներ**՝ տարբեր օրգան-համակարգերի քրոնիկական, գրանուլեմատոզ, թարախաբորբռքային հիվանդություններ, հաճախ թարախակույտերի և խուղակների ձևավորմամբ: Ախտահարված հյուսվածքներում դրանք առաջացնում են յուրօրինակ մորֆոլոգիական կառուցմենք՝ **դրուզներ**, որոնք կենտրոնում խառը միահյուսված, դեպի պերիֆերիան ճառագայթածև ձգվող միցելների կուտակումներ են: Գրամ դրական են, անշարժ, որոշ

## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

տեսակներ կարող են առաջացնել պոլիսախարիդային պատիճ, հիմնականում անաերոր են: Մնանդային միջավայրերի նկատմամբ պահանջկոտ չեն: Պինդ միջավայրերում առաջացնում են փոքր չափերի, տարբեր գունավորման (մանուշակագույն, կապույտ, կանաչ, կարմիր, գորշ), հարթ կամ անհարթ եզրերով գաղութներ:



### Նկ.25 Ակտիմոմիցետներ

Կենսաքիմիական ակտիվությունը բազմազան է, դրանցից շատերը սինթեզում են Բ խմբի վիտամիններ, հակարիոտիկ օյութեր, ինչը մեծապես կիրառվում է մանրէաբանական արդյունաբերությունում: Ախտածին տեսակները օժտված են արտահայտված պրոտեոլիտիկ և շաքարոլիտիկ ակտիվությամբ (շաքարները տարրալուծում են մինչև թթվի առաջացնան): Անտիգենությունը պայմանավորված է հիմնականում բջջապատի պոլիսախարիդով՝ տեսակային անտիգեն: Էկզոտոքսին չեն սինթեզում, վիրուլենտության գործոններ են պատիճը, աղիեզիվության և ագրեսիվության ֆերմենտները: Բորբոքային օջախում ֆազոցիտոզը անավարտ է: Շրջակա միջավայրում բավականին կայուն են, կարող են դիմակայել և բազմանալ ջերմաստիճանային և թՀ-ի լայն դիապազոնում (թՀ 4.5-9.0):

Նոկարդիաները առաջացնում են հաճանուն՝ **նոկարդիոզ**, հիվանդությունը, որը հիմնականում ընթանում է ներքին օրգանների՝ հաճախ թոքերի, մաշկի, ենթամաշկի, ոսկրերի թարախային բորբոքումներով: Մորֆոլոգիական, կուլտուրալ հատկություններով

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԲԱՆՈԹՅՈՒՆ

Անան են ինչպես ակտինոմիցետներին, այնպես էլ միկոբակտերիաներին, համդիպում են և՝ ցուպիկանման, և՝ թելանման ձևերը, միցելը ավելի արտահայտված է, քան շողասնկերինը, անշարժ են, թթվակայուն, գրամ դրական են: Տարբեր տեսակների մոտ գերակշռում է շնչառության աերոր տիպը: Շրջակա միջավայրի ազդակների նկատմամբ բավականին կայուն են, երկարատև կարող են պահպանվել հողում, որը դրանց բնական շտեմարանն է:

### 3.7. ՍՆԿԵՐ

Ներկայիս դասակարգմամբ սնկերը դասվում են «Eukarya» կայսրության, «Fungi» բազավորության, Myxomycota (խմորասնկեր և բորբոսասնկեր) և Eumycota (իսկական սնկեր) բաժիններին: Բջջային կառուցվածքով էուկարիոտներ են և ունեն էուկարիոտ բջջներին բնորոշ հիմնական կառուցներ՝ բջջաթաղանթ, ցիտոպլազմա, ձևավորված կորիզ, ոիքոսուններ, միտոքոնդրիումներ, պարփակումներ, բջջի ներքին միջավայրը բաժանող թաղանթային կառուցներ: Myxomycota բաժնում տարբերում են սնկերի երկու հիմնական խումբ՝ բորբոսասնկեր (հիֆալ սնկեր) և խմորասնկեր:

Բորբոսասնկերը բաղկացած են երկար, բարակ թելիկներից՝ հիֆերից, որոնք միահյուսվելով՝ առաջացնում են միցել: Սննդային սուբստրատի խորության մեջ ընկրոված հիֆերը պատասխանատու են սնուցման համար և համարվում են վեգետատիվ հիֆեր: Սուբստրատի մակերեսին առաջացած հիֆերը պատասխանատու են անսեռ բազմացման համար և անվանվում են օդային կամ վերարտադրողական (ռեպրոդուկտիվ) հիֆեր: Այն սնկերը, որոնց հիֆերը ունեն միջնապատեր (սեպտա), անվանում են բարձրակարգ սնկեր: Վերջիններիս միցելները բազմաբջիջ են: Ցածրակարգ սնկերի հիֆերում սեպտաները բացակայում են, դրանք միաբջիջ են:

Խմորասնկերը հիմնականում կլոր, միաբջիջ օրգանիզմներ են, բազմանում են և անսեռ, և սեռական ճանապարհներով: Միայն անսեռ ճանապարհով բազմացող խմորասնկերը անվանվում են

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՍ ՄԱՍՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

**Խմորանման սմկեր:** Մի շարք սմկեր բնութագրվում են դիմորֆիզմով՝ ինչպես միցելյար, այնպես էլ դրոժանման աճ առաջացնելու ունակությամբ, որը պայմանավորված է կուլտիվացման պայմաններով:

Ըստ բազմացման՝ տարբերում են կատարյալ սմկեր, որոնք բազմանում են և սեռական, և անսեռ ճանապարհներով: **Սեռական բազմացումը** իրականանում է գամետի, սեռական սպորների առաջացման և սեռական այլ ձևերով: **Միայն անսեռ բազմացմանը** օժտված սմկերը անվանվում են անկատար: Վերջիններիս բազմացումը իրականանում է բողբոջմամբ, հիֆերի կտրատմամբ, ինչպես նաև անսեռ սպորներով:

Սպորները զարգանում են պտղաբեր հիֆերի ծայրերին առաջացող լայնացած կլոր կառույցի (**սպորանգիում**) ներսում՝ էնդոսպորներ (**սպորանգիոսպոր**), իսկ որոշ տեսակների մոտ՝ պտղաբեր հիֆերի արտաքին մակերեսին՝ **էկզոսպորներ** (**կոնիդիում**)՝ առաջացնելով շղթաներ:

Մարդու համար ախտածին սմկերի մեծամասնությունը պատկանում է Zygomycetes՝ ցածրակարգ-կատարյալ, Ascomycetes, Basidiomycetes՝ բարձրակարգ-կատարյալ և Deuteromycetes՝ բարձրակարգ-անկատար սմկերի դասերին:

**Ասկոմիցետներին** են դասվում Aspergillus, Penicillium ցեղերի մի շարք տեսակներ, որոնք կարող են պատճառ հանդիսանալ ասպերգիլյոզի, աֆլատոքսիկոզի, պենիցիլիոզի առաջացմանը: Այդ դասին են պատկանում նաև որոշ խմորասմներ՝ խմորասմնկային միկոզներ, և **էրգոսիզմի** հարուցիչը, որը պարագիտում է հացահատիկային բույսերում:

**Ղետերոմիցետներին** են դասվում խմորանման սմկերի որոշ ցեղեր, մասնավորապես Candida ցեղը, որի տարրեր տեսակները՝ Candida albicans, մարդու նորմալ միկրոֆլորայի ներկայացուցիչներն են ու որոշակի պայմաններում կարող են պատճառ հանդիսանալ կանոնիրոզի զարգացման:

## Գլուխ 4 ՄԱՍՐԵՆԵՐԻ ՖԻԶԻՈԼՈԳԻԱՆ

Յուրաքանչյուր կենդանի օրգանիզմի, այդ թվում նաև մանրէների, ֆիզիոլոգիան ամենապարզ ձևով կարելի է ներկայացնել որպես սեփական կառուցների վերաբտադրություն, կենսականորեն անհրաժեշտ ֆունկցիաների իրականացում և վերջապես սերնդի ապահովում, որն իրականանաւ է արտաքին աշխարհի հետ նյութափոխանակության՝ սնուցման միջոցով:

### 4.1. ՄԱՍՐԵՆԵՐԻ ՍՆՈՒՑՈՒՄԸ,

#### ՍՆՈՒՑՄԱՆ ԱՌԱՋԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒ ՏԻՊԵՐԸ

Սնուցումը, ինչպես ողջ կենդանի բնության, այնպես էլ մանրէների համար, կենսականորեն անհրաժեշտ պրոցես է, ինչը ապահովում է դրանց աճը և բազմացումը՝ կառուցվածքների վերականգնումն ու վերաբտադրությունը, կենսասինթետիկ պրոցեսների համար անհրաժեշտ էներգիան: Մանրէների սնուցումը, ըստ էության, կարելի է դիտարկել որպես **նյութափոխանակություն (մետաբոլիզմ)** նրա ներքին և արտաքին միջավայրերի միջև: Այն հակադարձ, սակայն միմյանց հետ սերտ կապված երկու պրոցեսի՝ **կատարության** (էներգետիկ մետաբոլիզմ) և **անաբոլիզմի** (պլաստիկ, կոնստրուկտիվ մետաբոլիզմ) միասնություն է: Կատարության արդյունքում առաջացած էներգիան ծախսվում է բջջանյութի սինթեզի՝ անաբոլիզմի համար, անաբոլիզմի հետևանքով սինթեզված նյութերը կարող են հանդիսանալ էներգիայի աղբյուր: Անաբոլիզմի և կատարության միասնությունը արտահայտվում է նաև **ամֆիբոլիտ-ների** սինթեզով, որոնք օգտագործվում են ինչպես էներգետիկ, այնպես էլ պլաստիկ պրոցեսներում:


Մանրէների կառուցվածքի յուրօրինակությունը պայմանավորում է դրանց սնուցման առանձնահատկությունները՝

♦ չունեն սնուցման հատուկ օրգաններ,

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՍ ՄԱՍՐԵԱԲԱՆԻԹՅՈՒՆ

- ◆ սննդանյութերը ներծծվում են բջջի ամբողջ մակերեսով,
- ◆ անարոլիզմը և կատարոլիզմը իրականանում են արտակարգ արագությամբ,
- ◆ ունեն արտաքին միջավայրի սննդային պայմաններին հարմարվելու մեջ ունակություն:

Մանրէների համար որպես սննդանյութեր կարող են հանդես գալ տարբեր օրգանական և անօրգանական միացություններ, ինչը ըստ կենսականորեն անհրաժեշտ օրգանոգենների (O,H,N,C,P,S) աղբյուրի ու յուրացման՝ պայմանավորում է դրանց սնուցման տիպերի բազմազանությունը (նկ.26): Բոլոր մանրէների համար ջրածնի և թթվածնի աղբյուր է ջուրը և մթնոլորտային թթվածինը:



Նկ.26.Բակտերիաների սնուցման տիպերը

## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵՎԲԱՆԻԹՅՈՒՆ

Ըստ ածխածնի յուրացման՝ բակտերիաները տարբերակվում են առևտոտրոֆների (լատ. *autos*—ինքնուրույն, *trophe*—սնուցում) և հետերոտրոֆների (լատ. *heteros*—ուրիշ, ուրիշի հաշվին սնվող): Առաջինները թօջի ածխածնին պարունակող բոլոր բաղադրիչների սինթեզի համար որպես ածխածնի միակ աղբյուր օգտագործում են մթնոլորտային  $CO_2$ -ը: Քետերոտրոֆներին անհրաժեշտ է ածխածնին պարունակող զանազան օրգանական միացություններ: Ըստ էներգիայի աղբյուրի՝ տարբերակվում են ֆոտոտրոֆներ (էներգիայի աղբյուր է բնական լույսը) և քեմոտրոֆներ (էներգիան ստանում են օքսիդավերակնանման ռեակցիաներից): Ֆոտոտրոֆները բացառապես սապրոֆիտներ են: Քեմոտրոֆները, հիմնականում պարագիտներ են և ըստ էլեկտրոնների դոնորի՝ բաժանվում են լիթոտրոֆների՝ հոլո. lithos-քար (քեմոաուտոտրոֆներ) և օրգանոտրոֆների (քեմոհետերոտրոֆներ): Միկրոօրգանիզմների որոշ մասը ազոտ պարունակող կենսական նշանակություն ունեցող միացությունները (ամինաթթուներ, պուրիններ, ադենիններ) սինթեզում են մթնոլորտային մոլեկուլային ազոտից կամ ամոնիումի աղերից՝ նիտրատներից, նիտրիտներից (ամինաուտոտրոֆներ): Մյուսները, որպես ազոտի աղբյուր, օգտագործում են միայն օրգանական միացությունները (ամինոհետերոտրոֆներ): Միկրոօրգանիզմները, որոնք իրենց անհրաժեշտ բոլոր օրգանական միացությունները սինթեզում են գյուկոզից և ամոնիումի աղերից, անվանվում են պրոտոտրոֆներ: Ախտածին և պայմանական ախտածին միկրոօրգանիզմների մի ստվար խումբ ունակ չէ սինթեզելու որոշ օրգանական միացություններ՝ մասնավորապես **աճի գործոններ**: Այդ պատճառով նման միացությունները դրանք ստանում են պատրաստի վիճակում՝ մակրոօրգանիզմի հյուսվածքներից կամ հարստացված սննդային միջավայրերից: Նման միկրոօրգանիզմները անվանվում են առևկատրոֆներ: Աճի գործոններ են ամինաթթուները, պուրինային և ադենինային հիմքերը, որոշ լիափիններ (խոլեստերին և այլ ստերիններ), վիտամինները, երկարպորֆիրինները: Միկրոօրգանիզմների կենսասինթետիկ պրոցեսնե-


## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՍՄ ՍԱԱՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

Իի համար անհրաժեշտ են նաև Mg, K, Ca, Fe իոններ և այլ միկրոէլեմենտներ:

### 4.2. ՍԱԱՐԵՆԵՐԻ ՍՆՈՒՑՄԱԸ ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐԸ

Մանրէները սննդանյութերը յուրացնում են ցածրամոլեկուլային միացությունների ձևով, այդ պատճառով սպիտակուցները, պոլիսախարիդները և այլ բարձրամոլեկուլային միացությունները որպես սննդանյութեր կարող են ծառայել բակտերիային էկզոֆերմենտներով ավելի պարզ միացությունների տրոհվելուց հետո: Վերջիններս բակտերիային թշիջ կարող են թափանցել հետևյալ մեխանիզմներով (նկ.27):

◆ **Պասիվ դիֆուզիա:** Այս եղանակով թափանցում են H<sub>2</sub>O, O<sub>2</sub>, CO<sub>2</sub>, N<sub>2</sub>: Պրոցեսը իրականանում է կոնցենտրացիայի գրադիենտի ուղղությամբ, առանց էներգիայի ծախսի:



**Նկ.27. Բակտերիաների սնուցման մեխանիզմները**

◆ **Հեշտացված դիֆուզիա:** Իրականանում է մեմբրանային սպիտակուցների՝ տրամալոկագների օգնությամբ, կոնցենտրացիայի գրադիենտի ուղղությամբ, առանց էներգիայի ծախսի:

◆ **Ակտիվ տրամապորտ:** Իրականանում է պերմեագների օգնությամբ, ընդ որում յուրաքանչյուր պերմեազ տեղափոխում է որոշակի կոնկրետ միացություն, կոնցենտրացիայի գրադիենտի հակառակ ուղղությամբ, էներգիայի ծախսով:


◆ **Ռադիկալային տրամալոկացիան** ակտիվ տրամապորտի տարատեսակ է, թաղանթով անցնելու ընթացքում իրականանում է տեղափոխվող մոլեկոլի ֆուֆորիլացում (ֆուֆորանսֆերացային ռեակցիա):

#### 4.3. ԲԱԿՏԵՐԻԱԼԵՐԻ ՖԵՐՄԵՆՏՆԵՐԸ

Բակտերիաները սինթեզում են ֆերմենտներ, որոնք դասվում են հայտնի բոլոր վեց դասերին՝ օքսիդոռեդուկտագներ, տրամաֆերագներ, լիազներ, իդրոլազներ, իզոմերազներ և լիգազներ: Որպես օրգանական կատալիզատորներ՝ բակտերիային ֆերմենտների հիմնական ֆունկցիան միկրոօրգանիզմներում ընթացող բազմազան կենսական պրոցեսների ապահովումն է: Ցուրաքանչյուր մանրէի ֆերմենտների հավաքակազմը կողավորված է նրա գենոմում և բավականին կայուն հատկանիշ է: Տարբեր տեսակների կողմից այս կամ այն ֆերմենտի (շաքարները, սպիտակուցները տարրալուծող) սինթեզի ունակությունը՝ ֆերմենտատիվ ակտիվությունը, կիրառվում է բակտերիաների տեսակների և նույնիսկ վարիանտների նույնականացման և տարբերակման համար: Գործնականում ֆերմենտի առկայությունը հայտնաբերվում է որոշակի սուբստրատի (շաքարներ, սպիտակուցներ) վրա դրա ազդեցության արձանագրմանը: Այդ նպատակով կիրառվում են տարբեր շաքարներով, սպիտակուցներով հարստացված, որոշակի ինդիկատորի և ապակե լողանի առկայությամբ արհեստական սննդային միջավայրեր՝ մասնավորապես Յիսի խայտաբղետ շարքը (Ակ.28): Միկրոօրգանիզմների

## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

Կողմից այս կամ այն շաբարը քայլայելու հետևանքով առաջացած թթու միացությունների ազդեցությամբ վերականգնվում է ինդիկատորը և միջավայրը գունափոխվում է, իսկ գազ առաջանալու դեպքում լողանք դուրս է մղվում սննդային միջավայրի մակերեսից:



- Ձ - շաբարների քայլայումից առաջանում է բրու
- ՁԳ - շաբարների քայլայումից առաջանում է բրու և գազ
- - սպիտակուցների քայլայումից առաջանում է ինդոլ
- - սպիտակուցների քայլայումից առաջանում է Հ<sub>2</sub>S

### Նկ.28. Բակտերիաների տարրերակումը Դիսի խայտարդետ շարքում

Սպիտակուցների, պետոնների ծեղզման վերջնական միացություններ կարող են լինել ինդոլը, ծծմբաջրածինը, ամոնիակը, որոնց առաջացման դեպքում գունափոխվում են խցանի տակ հարմարեցված համապատասխան ինդիկատորային ժապավենները: Գոյություն ունեն նաև բակտերիային ֆերմենտներ՝ նեյրամինիդազա, հիալուրոնիդազա, ալազմակուգուլազա և այլն, որոնցով պայմանավորված է ախտածնության աստիճանի՝ վիրուլենտության դրսնորումը, քանի որ դրանց ազդեցության թիրախն են մակրոօրգանիզմի հյուսվածքների, բջիջների կազմության մեջ մտնող միացությունները:

Որոշ ֆերմենտներ՝ էնդոֆերմենտները, տեղակայվում են բակտերիային բջջի ցիտոպլազմայում, ցիտոպլազմատիկ թաղանթում,


## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԲԱՆՈԹՅՈՒՆ

պերիպլազմատիկ տարածքում, մյուսները՝ էկզոֆերմենտները, մասնավորապես հիդրոլազները, արտազատվում են բջջից դուրս և ապահովում են բարձր մոլեկուլային օրգանական միացությունների քայլայումը մինչև բջջի կողմից յուրացման համար մատչելի պարզ նյութերի: Էնդոֆերմենտների մի մասը բակտերիային բջջում գործում է մեկուսի, մյուսներից անկախ (մոնոֆերմենտներ), այլ ֆերմենտներ սերտորեն կապված են միմյանց (մոլտիֆերմենտային համակարգեր) և ապահովում են մետաբոլիկ պրոցեսների հաջորդականությունը (շնչառական համակարգի ֆերմենտներ): Ֆերմենտները, որոնք որոշակի քանակներով մշտապես սինթեզվում են և առկա են բակտերիային բջջում, անվանվում են կոնստիտուտիվ: Որոշ ֆերմենտներ բակտերիային բջջում գտնվում են հետքային քանակներով կամ իսպառ բացակայում են՝ ինդուցիբել ֆերմենտներ, սակայն դրանց սինթեզը կտրուկ ավելանում է միջավայրում որոշակի սուրստրատի առկայության դեպքում: Բակտերիային ֆերմենտների ֆունկցիոնալ ակտիվությունը մեծապես պայմանավորված է միկրոմիջավայրի ջերմաստիճանով ու pH-ով:

### 4.4. ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ ԱՆՇ ԵՎ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ

Ախտածին մանրէների գերակշռող մեծամասնությունը էվոլյուցիոն գարգացման ընթացքում ծեղը է բերել որոշակի հարմարվողական ունակություններ և հեշտությամբ կարող է աճել ու բազմանալ արհեստական սննդամիջավայրերում: **Աճը** բջջի կոմպոնենտների (բջջանյութ) և կառույցների համակարգված վերարտադրությունն է, որի հետևանքով ավելանում է բջջի ծավալը և զանգվածը: **Բազմացումը** բակտերիային պոպուլացիայում որոշակի ժամանակահատվածում առանձնյակների քանակի ավելացումն է: Այն հիմնականում իրականանում է պարզ կիսման եղանակով (նկ.29), որոշ դեպքում՝ բողբոջմամբ: Սնկերը բազմանում են սպորներով, հատվելով, բողբոջմամբ և սեռական ճանապարհով: Նախակենդանիները բազմանում են սեռական և անսեռ եղանակներով, իսկ վիրուսները՝ վերարտադրությամբ (ուեպորոդուկցիա):

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ



**Նկ.29. Բակտերիաների պարզ կիսումը**

Բակտերիաներին բնորոշ է բազմացման մեջ արագությունը, ինչը պայմանավորված է **գեներացիայի ժամանակով**: Դա այն ժամանակահատվածն է, որի ընթացքում տեղի է ունենում բջջի կիսումը և երկու դուստր բջիջների առաջացումը: Այն տարբեր միկրոօրգանիզմների մոտ տատանվում է 15-20 րոպեից (աղիքային ցուպիկ) մինչև 24-48 ժամ (տուբերկուլյոզի հարուցիչ)՝ պայմանավորված տեսակային պատկանելությամբ, սննդամիջավայրի բաղադրությամբ, pH-ով, ջերմաստիճանով, աերացիայով և այլ գործոններով: Եռկարիոտ բջիջների գեներացիայի ժամանակը 24 և ավելի ժամ է:


**Քերուկ սննդամիջավայրերում** բակտերիաների աճը և բազմացումը՝ պայմանավորված տեսակային պատկանելիությամբ, արտահայտվում է՝

- ◆ միջավայրի ռիֆուզ պղտորությամբ,
- ◆ փառի առաջացումով հեղուկի մակերեսին,
- ◆ նատվածքով փորձանորի հատակին կամ պատին (նկ.30):

Միևնույն ժամանակ արձանագրվում է բակտերիային պոպուլյացիայի զարգացման առանձին փուլերի հաջորդական փոխարինումը մեկը մյուսով՝ ելքային ստացիոնար, բազմացման արգելակման, լոգարիթմական բազմացման, բացասական արագացման, մաքսիմումի ստացիոնար, լոգարիթմական մահացման,


## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԴԵՂՈՒԿ ՍՍՆԴԱՄԻՋԱՎԱՅՐԵՐ



Նկ.30. Բակտերիամերի աճը և բազմացումը հեղուկ սննդամիջավայրերում

ինը արտացոլում է դրանց աճի ու բազմացման ընդհանուր օրինաչափությունները (Նկ.31):




Նկ.31. Բակտերիամերի բազմացման փուլերը

Պիմու սննդամիջավայրերում բակտերիամերի աճը և բազմացումը դրսնորվում է գաղութների առաջացմանք (Նկ.32), որը մեկ մայր բջջից առաջացած դուստր բջջների անգեն աչքով տեսանելի

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱՎԱՐ ՄԱՍՐԵԱԲԱՆԹՅՈՒՆ

Կուտակումն է պինդ սննդային միջավայրերի մակերեսին: Դրանց արտաքին տեսքը մանրէների մի շարք տեսակների համար այնքան բնորոշ է, որ կարող է տարբերակիչ հատկություններից մեկը լինել:



**Նկ.32.Բակտերիաների ածը և բազմացումը պինդ սննդամիջավայրերում**

Գաղութները բնութագրվում են չափերով, ձևով, կոնսիստենցիայով, եզրերի և մակերեսի կառուցվածքով, բափանցիկությամբ, գունավորմամբ և այլ հատկանիշներով, սակայն ըստ կուտիվացման պայմանների՝ դրանք կարող են փոփոխվել:

### 4.4.1. Բակտերիային պիզմենտներ

Որոշ բակտերիաներ կենսագործունեության արդյունքում սինթեզում են քիմիական բաղադրությամբ, լուծելիությամբ և գույնով միմյանցից տարբերվող ներկանյութեր (պիզմենտներ): Դրանք բակտերիային բջջին օժտում են կայունությամբ տարբեր ֆիզիկական, քիմիական ազդակների նկատմամբ և ունեն պաշտպանական նշանակություն: Մի շարք ակտինոմիցետներ, միկրոբակտե-

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵՎԲԱՆԻԹՅՈՒՆ

րիաներ (M.tuberculosis), սարցինաներ սինթեզում են կարմիր, նարնջագույն, դեղին կարոտինոհային, ճարպալույժ պիգմենտներ: Բակտերոիդներին դասվող որոշ տեսակներ առաջացնում են մելանին կոչվող, սև-դաշնագույն, ջրում և նույնիսկ խիտ թթուներում չլուծվող պիգմենտ: Ալ կարմիր պղողիգիոզին պիգմենտը սինթեզվում է սերացիաների, իսկ կապտականաչ, ջրալույժ պիցոցիանինը՝ կապտաթարախային ցուափիկի կողմից: Գործնական մանրէաբանությունում միկրոօրգանիզմների պիգմենտ առաջացնելու ունակությունը կիրառվում է վերջիններիս տարբերակման նպատակով:

### 4.5. ՄԱՍՐԵՆԵՐԻ ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Բակտերիային բջջի կառույցների վերարտադրության, տարբեր ֆիզիոլոգիական ֆունկցիաների իրականացման, աճի ու բազմացման համար սննդանյութերին զուգահեռ անհրաժեշտ է որոշակի էներգիա, որը առաջանում է բակտերիային բջջում կենսաբանական օքսիդացման պրոցեսների՝ շնչառության շնորհիվ և պահեստավորվում է ԱԵՖ-ի մոլեկուլների ձևով: Հայտնի է, որ օքսիդավերականգնման ռեակցիաները ընթանում են որոշակի սուբստրատի օքսիդացման՝ վերջինից անջատված ջրածնի պրոտոնների ( $H^+$ ) և էլեկտրոնների ( $e^-$ ) փոխանցմանը մեկ այլ սուբստրատի՝ ակցեպտորի, որը վերականգնվում է: Բնության մեջ տարածված են բակտերիաների բազմազան տեսակներ, և տարբեր միկրոօրգանիզմներում կենսաբանական օքսիդացումն ու էներգիայի կուտակումը, պայմանավորված ջրածնի և էլեկտրոնների վերջնական ակցեպտորվ, իրականանում է տարբեր մեխանիզմներով: Ըստ այդմ, տարբերում են շնչառության աերոր տիպ, որով օժտված միկրոօրգանիզմները կարիք ունեն ազատ թթվածնի ( $O_2$ ), որը օքսիդացման արդյունքում առաջացած ջրածնի կամ էլեկտրոնների համար վերջնական ակցեպտոր է: Գոյություն ունեն բացարձակ՝ օբլիգատ աերոր բակտերիաներ (կապույտ հազի հարուցիչ), որոնք կորցնում են կենսունակությունը  $O_2$ -ի նույնիսկ չնշին սահմանափակման դեպքում: Շնչառության աերոր տիպը իրականանում է

## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

ցիտոքրոմօքսիդազմերի, օքսիդազմերի, ղեհիդրոգենազմերի մասնակցությամբ, իսկ գգալի քանակով անջատված էներգիան կուտակվում է ԱԵՖ-ի մոլեկուլների ձևով: **Անաերոր շնչառության տիպով** օժտված միկրոօրգանիզմները էներգիան ստանում են թթվածնի բացակայության պայմաններում, օրգանական միացությունները մինչև պիրոխաղողաբթվի ճեղքան հետևանքով, սուրստրատային ֆոսֆորիլացման ռեակցիաներում, որտեղ որպես ջրածնի կամ էլեկտրոնների վերջնական ակցեպտոր հանդես են գալիս նիտրատները (ֆակուլտատիվ անաերորներ՝ աղիքային ցուպիկ) կամ սուլֆատները (բացարձակ անաերորներ՝ փայտացման հարուցիչ): Բացարձակ օբլիգատ անաերոր բակտերիաները չեն կարող գոյատևել թթվածնի նույնիսկ չնչին քանակների առկայության պայմաններում: **Ֆակուլտատիվ անաերորները** ոչ միայն գոյատևում, այլ նաև ակտիվ կենսագործում են և անթթվածին, և թթվածնային պայմաններում: Տարբերում են նաև **միկրոաերոֆիլ** բակտերիաներ՝ O<sub>2</sub>-ի խտությունը մինչև 1%, կապնոֆիլ (հելիկորակտերիաներ), որոնք առավել արդյունավետ կենսագործում են CO<sub>2</sub>-ի բարձր խտությունների պայմաններում, և **աերոտոլեռանտ**, որոնք կարճատև կարող են գոյատևել, բայց ոչ բազմանալ թթվածնային պայմաններում: Կենսաբանական օքսիդացման մեկ այլ տարատեսակ է **խնորումը**, որի դեպքում էլեկտրոնների ու ջրածնի թե՛դոնոր, և թե՛ վերջնական ակցեպտոր են օրգանական միացությունները (պիրուվատ, լակտատ և այլն): **Աերոր միկրոօրգանիզմների** տոլերանտուլյունը թթվածնի նկատմամբ պայմանավորված է դրանց ունակությամբ սինթեզելու այնպիսի ֆերմենտներ (սուլֆերօքսիդիտիմուտազա, կատալազա), որոնց ազդեցությամբ վնասազերծվում են աերոր պայմաններում առաջացած, թթվածնային տոքսիկ միացությունները (սուլֆերօքսիդ անիոն, H<sub>2</sub>O<sub>2</sub>): Այդպիսի ֆերմենտներ օբլիգատ անաերոր բակտերիաների մոտ չկան:

## 4.6. ՍՆՆԴԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԵՐ

Ինֆեկցիոն հիվանդությունների ախտորոշման, բուժման, կանխարգելման և գիտահետազոտական աշխատանքների իրականացման նպատակով, միկրոօրգանիզմների մաքուր կուլտուրաների անջատման համար (**բակտերիաբանական մեթոդ**) մանրէաբանական լաբորատորիաներում կիրառվում են զանազան արհեստական սննդամիջավայրեր, որոնց ներկայացվող պահանջներն են՝

- ◆ սննդանյութերի բավարար քանակ,
- ◆ ածի գործոնների բավարար քանակ,
- ◆ օպտիմալ թԻ,
- ◆ իզոտոպնիկություն,
- ◆ խոնավություն,
- ◆ բացարձակ ստերիլություն,
- ◆ բափանցիկություն:

**Սննդային միջավայրերը դասակարգվում են՝**

**1.Ըստ ծագման՝ բնական, արհեստական, սինթետիկ.**

ա) բնական միջավայրերը պատրաստվում են սննդամթերքներից՝ կարտոֆիլ, միս, կաթ, ձու և այլն,

բ) արհեստականը ստանում են վերամշակված բնական նյութերից՝ մսածուր, մսի եփուկ, արյան շիճ և այլն;

գ) սինթետիկը՝ քիմիական նաքուր միացություններից, որոնց կառուցվածքը հայտնի է (ամինաթթուներ, ածխաջրատներ, վիտամիններ):

**2.Ըստ ագրեգատային վիճակի** (կոնսիստենցիա) հեղուկ, պինդ, կիսահեղուկ: Պինդ և կիսահեղուկ սննդային միջավայրեր ստանալու համար հեղուկ սննդամիջավայրին ավելացվում է ագար-ագար դոնդողանան նյութը՝ առաջին դեպքում 2-3%, երկրորդ դեպքում՝ մինչև 1%: Ագար-ագարը հալվում է 95-100°C-ի պայմաններում և պնդանում 45-50°C ջերմաստիճանում:

Որոշ դեպքերում պինդ սննդային միջավայրեր ստանալու համար հեղուկ սննդամիջավայրին ավելացվում է 10-15% ժելատին:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՍՍ ՄԱՍՐԵԱԲԱՆԻԹՅՈՒՆ

Մակարդված շիճուկը և ձվի սպիտակուցը ևս պինդ սննդամիջավայրեր են:

**3.Ըստ բաղադրությամ՝** պարզ (մսապեպտոնային բուլյոն՝ ՄՊԲ, մսապեպտոնային ագար՝ ՄՊԱ) և բարդ՝ պարզ սննդային միջավայրեր են հարստացված ածխաջրատներով (գյուկող, լակտող, ֆրուկտող), սպիտակուցներով (արյուն, շիճ, ասցիտային հեղուկ):

**4.Ըստ նշանակությամ՝** հիմնական, հատուկ (ընտրովի կամ էլեկտիվ), ախտորոշչ-տարբերակի:

**Դիմնական** սննդային միջավայրերը՝ ՄՊԲ, ՄՊԱ, ունիվերսալ են և կիրառվում են ախտածին ու ոչ ախտածին մանրէների մեծանասնության կուլտիվացման համար:

**Դատուկ** (ընտրովի կամ էլեկտիվ) սննդամիջավայրերը (դեղնուցաղային ագար՝ ստաֆիլոկերի համար, 1%-ոց հիմնային պեպտոնաջուր՝ խոլերայի հարուցիչների համար և այլն) ապահովում են բարենպաստ պայմաններ որոշակի միկրոօրգանիզմների աճի ու բազմացման համար՝ չխոչընդոտելով այլ միկրոօրգանիզմներին: Վրոյունքում առաջինների աճը և բազմացումը արձանագրվում է ավելի վաղ:

**Տարբերակիչ-ախտորոշչ միջավայրերը՝** (Էնոյի, Լիինի, Պլոսկիրկի միջավայրեր՝ աղիքային խմբի բակտերիաների համար, Դիսի խայտաբղետ միջավայրեր և այլն), պայմանավորված բակտերիաների կուլտուրալ առանձնահատկություններով և ֆերմենտատիվ ակտիվությամբ, կիրառվում են բակտերիաների կողմնորոշիչ տարբերակման նպատակով:

### **4.7. ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԿՐՈՕՐԳԱՍԻՉՄԱՆԵՐԻ ՎՐԱ**

Նշանակալի դեր ունենալով կենսոլորտի ձևավորման գործում և պայմանավորելով նյութերի և էներգիայի շրջանառությունը բնության մեջ՝ մանրէները նշտապես ենթարկվել են շրջակա միջավայրի տարբեր (Փիզիկական, քիմիկական, կենսաբանական) գործոնների ազդեցությանը, ինչը նպաստել է դրանց հզոր հարմարվողական

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԲԱՆՈԹՅՈՒՆ

մեխանիզմների առաջացմանը: Մանրէները ի տարբերություն այլ կենդանի օրգանիզմների կարող են պահպանել կենսունակությունը ջերմային, թհ-ի, մթնոլորտային ճնշման, սննդային անբարենպաստ պայմանների լայն դիապազոնում: Սակայն միկրոօրգանիզմների յուրաքանչյուր տեսակի համար գոյություն ունեն գենետիկորեն դետերմինացված դիմադրողականության ժայրահեղ սահմաններ, որից այն կողմ դրանց կենսագործունեությունը դադարում է՝ **բակտերիցիդ** (բակտերիասպան), կամ կանգ է առնում աճը և բազմացում՝ **բակտերիոստատիկ** ազդեցություն: Որոշ դեպքերում բակտերիցիդ կամ բակտերիոստատիկ արդյունք կարող է արձանագրվել միկրոօրգանիզմի կենսունակությունը ճնշող մուտագեն ազդեցությունների շնորհիվ:

**Ֆիզիկական գործոններ:** Ըստ ջերմության նկատմամբ վերաբերմունքի՝ տարբերում են թերմոֆիլ (50-60°C), պսիխոֆիլ (10-25°C) և մեզոֆիլ (35-37°C) միկրոօրգանիզմներ, ընդ որում մարդու համար ախտածին բակտերիաների գերակշիռ մեծամասնությունը մեզոֆիլ է: Ծայրահեղ բարձր ջերմաստիճանը մանրէների վրա միանշանակ բակտերիասպան ազդեցություն ունի, ինչը գործնականում կիրառվում է որոշակի դեպքերում մանրէազերծ պայմաններ ապահովելու համար: Ցածր ջերմությունը մանրէները լավ են տանում, որի վրա հիմնված է դրանց երկարատև պահպանումը 0°C-ից ցածր՝ սառեցման պայմաններում: Մանրէների վրա մահացու ազդեցություն կարող են ունենալ չափից ավելի չորացումը, իոնիզացնող ճառագայթումը, ուլտրաձայնը և այլն:

**Քիմիական գործոններ:** Մարդուն ախտահարող միկրոօրգանիզմներից շատերի համար բարենպաստ պայմաններ են չեզոք, թույլ հիմնային կամ թույլ թթվային միջավայրերը: Այդ պայմանների երկարատև խախտումը կարող է նպաստել դրանց ոչնչացմանը: Բակտերիասպան ազդեցություն ունեն տարբեր քիմիական նյութերի և միացություններ՝ հալոգեններ, թթուներ, հիմքեր, ծանր մետաղների աղեր և այլն: Մրանց ազդեցությունը պայմանավորված է մանրէների համար կենսական նշանակություն ունեցող կառուցվածքների՝

## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՍՍ ՄԱՍՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

բջջապատի, ցիտոպլազմատիկ թաղանթի, նուկլեինաքրուների քայքայմամբ կամ դրանց սինթեզի ընկճմամբ, ինչպես նաև կենսագործունեությունը ապահովող ֆերմենտների ինակտիվացման:

### **4.7.1. Ստերիզացում (ստերիլիզացիա)**

Վարակիչ իիվանդությունների դեմ պայքարի կազմակերպման հիմքում ընկած է զանազան մեթոդներով ախտածին և պայմանական ախտածին մանրեների ոչնչացումը կամ դրանց աճի ու բազմացման ճնշումը կենդանի օրգանիզմներում (իիվանդներ կամ բակտերիակիրներ) և արտաքին միջավայրում (տարբեր իրեր ու առարկաներ, կենդանի փոխանցողներ, ջուր, սննդանթերք), որոնց միջոցով մանրեները կարող են փոխանցվել ընկալ օրգանիզմներին՝ մարդկանց կամ կենդանիներին: Սկզբունքորեն միևնույն նպատակը հետապնդելով՝ անկենդան օբյեկտների մանրէագերծումը՝ ստերիզացումը (լատ. sterilis-ամուլ) և վարակագերծումը, էականորեն տարբերվում են կենդանի օրգանիզմների նկատմամբ կիրառվող համապատասխան միջոցառումներից՝ անտիսեպտիկա, քիմիոթերապիա:

Ստերիզացումը (լիակատար ամլացում) օբյեկտի լրիվ ազատումն է մանրեներից՝ ախտածին, պայմանական ախտածին և ոչ ախտածին, ինչին կարելի է հասնել ֆիզիկական, քիմիական, մեխանիկական եղանակներով:

#### **Ստերիզացման ֆիզիկական եղանակներ**

Շիկացումը հիմնականում իրականացվում է սպիրտայրոցի բոցի վրա: Ուժի սահմանափակ կիրառություն՝ բակտերիաբանական օղեր, ունելիներ (պինցետներ), փորձանորի եզրեր:

Եռացման եղանակով ստերիլիզատորների մեջ ստերիզացնում են հիմնականում ներարկիչները, վիրաբուժական ոչ սուր գործիքները, առարկայական ապակիները, ծածկապակիները:

Ստերիզացումը չոր տաք օրով կատարվում է չորացնող պահարաններում (Պաստերյան վառարան)  $165^{\circ}\text{C}$  – ում 60 րոպե,

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԲԱՆՈԹՅՈՒՆ

180°C - ում 40 րոպե: Չոր տաք օդում ստերիլացվում են ապակյա իրերը՝ փորձանոթներ, Պետրիի թասեր, կաթոցիկներ (պիպետներ):

**Ստերիլացումը ջերմությամբ, գոլորշու ճնշման տակ կատարվում է ավտոկլավում:** Բարձր ճնշումը ապահովում է ջրի եռնան կետի բարձրացում և նախընտրելի ջերմաստիճանային ռեժիմ, ինչը համեմատաբար կարծ ժամանակահատվածում առավել արդյունավետ է դարձնում մանրէազերծումը (նկ.33):

Բարձր ջերմաստիճանում (հարյուրից ավելի) բնագրկվող նյութերի ստերիլացումը կատարվում է 100°C-ում **հոսող գոլորշիների միջոցով**, կոտորակային եղանակով՝ յուրաքանչյուր փուլը 30-60 րոպե ժամանակահատվածում: Նման սարքերն աշխատում են ավտոկլավի սկզբունքով, որտեղ կան գոլորշիների շրջանառության պայմաններ:

t°C	մթն.ճնշում	ստերիլացում
110	0.5	180րոպե
120	1.0	45րոպե
130	2.0	20րոպե

### Նկ.33.Ստերիլացման ռեժիմը ավտոկլավում

Ձերմագգայուն նյութերի՝ սպիտակուցմեր, ժելատին, վիտամիններ պարունակող սննդային միջավայրեր, արյան շիճուկ և այլն, ստերիլացումը իրականացվում է նաև այլ կոտորակային եղանակով՝ թիմդալացում, ջրային բաղնիքում 58-60°C-ում՝ 3-4 օրվա ընթացքում, օրական մեկ ժամ տևողությամբ:

**Պաստերացումը** խնայողական ռեժիմով ջերմային մշակմամբ ստերիլացման եղանակ է, որը կիրառվում է սննդամթերքների՝ գինու, գարեջրի, կաթի մանրէազերծման համար: Պայմանավորված սննդամթերքի տեսակով, այն հիմնականում իրականացվում է 70° C-ի պայմաններում 20-30 րոպեի ընթացքում:

Ուլտրամանուշակագույն ճառագայթներով ստերիլացումը (բակտերիցիդ լամպեր) կիրառվում է մանրէաբանական լաբորատորիա-

## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱՎԱԾՍ ՄԱՍՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

Աերի մեկուսարանների, վիրահատական սրահների և այլ փակ տարածքների մանրէագերծնան համար:

### **Քիմիական ստերօջացում**

Մեծ չափեր ունեցող իրերի, սարքավորումների, գործիքների, ինչպես նաև ջերմազգայուն որոշ նյութերի՝ ռետինե և պոլիմերային իրերի ու գործիքների, տիտանի համաձուլվածքների ստերօջացման համար կիրառվում է քիմիական եղանակը՝ գագերի կամ լուծույթների միջոցով։ Ներկայումս առավել կիրառական են հետևյալ լուծույթները՝ պերվոմուր, ջրածնի պերօքսիդ, բիանոլ, անոլիտ, գիգասեպտ, գլուտարալիդեհիդ, ռյուլբակ և այլն։

### **Մեխանիկական ստերօջացում**

Կիրառվում է այն բոլոր դեպքերում, երբ բարձր ջերմությունը և քիմիական նյութերը կարող են խստ բացասարար անդրադարձնայլ ստերօջացվող նյութի՝ հեղուկ սննդամիջավայրերի, շիճուկների, հակարիոտիկների լուծույթների, բակտերիային տոքսինների որակի վրա։ Այն կատարվում է մանր ծակոտկենություն ունեցող Շամբեռլանի, Բերկեֆելիի, Զեյջի ֆիլտրերով, որոնցով չեն անցնում բակտերիաները և դրանց սպորները, ինչպես նաև ցենտրիֆուգացմանը։

#### **4.7.2. Վարակագերծում (դեղինֆեկցիա)**

**Դեղինֆեկցիան ախտածին և պայմանական ախտածին մանրէների ոչնչացումն** է կամ դրանց քանակի նվազեցումը արտաքին միջավայրում և բժշկական սարքավորումների, գործիքների վրա։ Այն ևս կատարվում է տարբեր եղանակներով՝ ֆիզիկական (եռացում, այրում, իոնիզացմանող ճառագայթներ), մեխանիկական (թափահարում, մաքրում, ֆիլտրում, լվացում, օդափոխում), քիմիական։ Առավել տարածված է քիմիական դեղինֆեկցիան, որի դեպքում կիրառվում են հիմնականում հետևյալ քիմիական նյութերը՝ քլորակիր, քլորամին, ակվասեպտ, դիբրոմանտին, պերվամուր, դենոս և այլն։ Նախկինում լայնորեն կիրառվող ֆենոլը ներկայումս դուրս է մղվել գործածությունից, արտահայտված տոքսիկ հատկու-

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

թյան ու գրգռիչ հոտի պատճառով՝ տեղը զիջելով ավելի արդյունավետ և մարդու համար անվնաս պրեպարատներին:

Անտիսեպտիկան մակրոօրգանիզմի որոշակի բիոտոպերում՝ մաշկում և լորձաթաղանթներում, ախտածին և պայմանական ախտածին մանրէների աճի ու բազմացման արագ ժնշումը կամ ոչնչացումն է՝ գերազանցապես քիմիական նյութերի (հակասեպտիկ պրեպարատներ) օգնությամբ: Դրանց կիրառվող կոնցենտրացիաները, օժտված լինելով բակտերիցիդ, կամ բակտերիոստատիկ ազդեցությամբ, անվնաս են մակրոօրգանիզմի համար:

Ասեպտիկան միկրոօրգանիզմների ոչնչացմանը կամ դրանց քանակի նվազեցմանը ուղղված համալիր գործընթաց է (ստերիլացում, դեզինֆեկցիա, անտիսեպտիկա), որի նպատակն է ստեղծել մանրէազերծ կամ մանրէների չնչին քանակով գոտի վիրահատական միջանտությունների, գիտահետազոտական աշխատանքների համար:

## Գլուխ 5

### ԾՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՐՈՒՏԱԲԱՆԻԹՅՈՒՆ

#### 5.1. ՎԻՐՈՒՏԱՆԵՐԻ ԱՌԱՋԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վիրուսներն առաջինը հայտնագործել է ռուս գիտնական Դ.Ի.Իվանովսկին: 1887-ից նա ուսումնասիրել է ծխախոտի մոզայիկ հիվանդությունը: Նիվանդ բույսերի տերևներից ստացված հյութի ֆիլտրատով, որում կենսաբանական մանրադիտակով միկրոօրգանիզմներ չեն հայտնաբերվում, իվանովսկին վարակում էր առողջ բույսերին և վերարտադրում հիվանդությունը: Այդ մանրէները նա անվանեց վիրուսներ: Նետագայում պարզվեց, որ վիրուսները լայն տարածում ունեն բնության մեջ և կարող են պարագիտել ոչ միայն բույսերի, կենդանիների ու մարդու օրգանիզմում, առաջացնելով բազմազան հիվանդություններ, այլ նաև միկրոօրգանիզմներում: Մանրէներին ախտահարող վիրուսներն անվանվեցին բակտերիոֆացեր:

Վիրուսների մասին գիտելիքների կուտակման և հաստատմանը գուգահեռ՝ հայտնաբերվեցին վստահելի չափանիշներ, որոնք պայմանավորում են դրանց առանձնահատկությունները և տարբերակումը միկրոօչխարհի մնացած բոլոր ներկայացուցիչներից՝

- ◆ուլտրամանրադիտակային չափեր,
- ◆միայն մեկ տեսակի նուկլեինաթթվի՝ ԴՆԹ-ի կամ ՌՆԹ-ի առկայություն,
- ◆բազմացման յուրօրինակ՝ տարածական վերարտադրության եղանակ (դիսյունկտիվ ռեպրոդուկցիա),
- ◆սեփական սպիտակուց սինթեզող համակարգի բացակայություն,
- ◆սեփական նյութափոխանակության բացակայություն,
- ◆ոչ բջջային կառուցվածք,
- ◆բացարձակ ներբջջային պարագիտիզմ:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս տեսանկյունով վիրուսները կարելի է դիտել որպես **միայն մեկ տիպի նուկլեինաթթվավով օժտված**, սեփական նյութափոխանակությունից և սպիտակուց սինթեզող համակարգից գուրք, այդ իսկ պատճառով բացարձակ ներքջային պարագիտ կյանք վարող, ուլտրամանրադիտակային չափերի օրգանիզմներ:

Ելելով վիրուսների վերը թվարկված առանձնահատկություններից, մանրէների դասակարգման համակարգում դրանք ընդգրկվել են առանձին «*Vira*» թագավորությունում: Ներկայում «*Vira*» թագավորությունում ընդգրկված են նաև այլ ինֆեկցիոն ագենտներ՝ ախտածնությամբ օժտված պրոտեինային (այրիոններ) և նուկլեինաթթվային (վիրոիդներ) մոլեկուլներ: Վիրոիդները փոքր մոլեկուլային զանգվածով, օղակաձև, գերոլորված ՌՆԹ շղթաներ են, որոնք մարդու ախտաբանությունում դեր չունեն, առաջացնում են բույսերի հիվանդություններ:

### 5.2. ՎԻՐՈՒՍՆԵՐԻ ՂԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՈՒ ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄԸ

Որոշակի տաքսոնմիական կատեգորիաներում վիրուսների դասակարգման համար հիմք են հանդիսանում հետևյալ հատկանիշները՝ վիրունի չափը, կառուցվածքը՝ պարզ և բարդ, գենոմային նուկլեինաթթվի տիպը, թելերի քանակը և բնույթը, վերարտադրության յուրահատկությունները թիրախ բջջում (գենոմի ռեպլիկացիայի և վիրուսապեցիֆիկ սպիտակուցների սինթեզի առանձնահատկությունները), նուկլեոկապիդի տարածական սիմետրիան, կապոմերների քանակը, վիրունի արտաքին ձևը, անտիգենային կառուցվածքը, հյուսվածքների նկատմամբ տրոպիզմը, եթերների նկատմամբ զգայունությունը: Վիրուսի տեսակը անվանակարգվում է հիվանդության անվանումով՝ գրիպի, կարմրուկի, կատաղության վիրուս և այլն: Բինոմինալ անվանակարգում ինչպես բակտերիաների դեպքում է չի կիրառվում: Որոշակի հատկանիշներով միմյանց նման վիրուսի տեսակները միավորվում են ցեղերում,


## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

որոնց անվանումը ավարտվում է «-virus» վերջածանցով՝ *Calicivirus*, *Astrovirus*, *Adenovirus*: Խնաճ ցեղերն ընդգրկվում են ենթաընտանիքներում, որոնց անվանումներն ավարտվում են «-virinae» վերջածանցով, իսկ ենթաընտանիքները՝ ընտանիքներում, որոնք կրում են «-viridae» վերջավորությունը:

### 5.3. ՎԻՐՈՒՏԻ (ՎԻՐԻՈՆԻ) ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

#### ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Վիրուսների կազմավորման միավորը **Վիրիոնն** է, որը վիրուսային մասնիկի ձևավորման վերջնական ֆազան՝ արտաքչային ձևն է: Այն ուսումնասիրում են էլեկտրոնային մանրադիտակի տեսադաշտում, մի քանի տասնյակ միլիոն խոշորացման պայմաններում: Ըստ չափերի վիրուսները տարբերակվում են՝ փոքր (30-70nm՝ պոլիոմիելիտի վիրուս), միջին (80-150nm՝ գրիպի վիրուս), խոշոր (150-500nm՝ բնական ծաղկի վիրուս), ինչը որոշում են էլեկտրոնային մանրէազննամբ, ուլտրացենտրիֆուգացմանբ, դիֆուզիայի արագությամբ գել միջավայրում, որոշակի թողունակությամբ բակտերիային ֆիլտրերով:




**Նկ.34. Պարզ և բարդ վիրուսներ**

Ըստ կառուցվածքի տարբերում են՝ պարզ և բարդ վիրուսներ (նկ.34): **Պարզ վիրուսները** բաղկացած են գենոմային նուկլեինաթթվից (ԴՆԹ կամ ՌՆԹ) և այն շրջափակող սպիտակուցային

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵՎԱՍՈՒԹՅՈՒՆ

պատյանից, որն անվանում են կապսիդ (հուն. capsα-տուփ): Բարդ վիրուսները բաղկացած են նուկլեոկապսիդից (նուկլեինաթրուն և կապսիդը միասին) և լրացուցիչ պատյանից՝ սուպերկապսիդ կամ պեպլոս (հուն.ρεπλօս-թիկոնց):

Կապսիդը կազմված է միատեսակ սպիտակուցային մոլեկուլներից, որոնք միավորվում և ձևավորում են պատյանը տարածական սիմետրիայի երկու տիպով՝ սպիրալաձև և խորանարդաձև (իկոսաէդրիկ) (նկ.35):



### Նկ.35. Վիրիոնի տարածական կառուցվածքը

Սպիրալաձև սիմետրիայի դեպքում, որով օժտված են թելանման վիրուսները, սպիտակուցային մոլեկուլները շրջափակում են գենոմային նուկլեինաթրուն դասավորվելով նրա շուրջը սպիրալի ձևով: Սիմետրիայի երկրորդ տիպի հիմքում ընկած են սպիտակուցային մոլեկուլներով հավասարակողմ եռանկյունների՝ կապսոներ (հուն. μέρος-մաս), առաջացումը, որոնցով կառուցվում են տետրաէդրներ, օկտաէդրներ, իկոսաէդրներ: Կապսոներները՝ խորանարդաձև տարածական սիմետրիայի տիպով կառուցված, կապսիդի մորֆոլոգիական միավորներն են: Մեկ կապսոները կազմված է 2,3 կամ 5 սպիտակուցի միատեսակ մոլեկուլներից:

## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՍՍ ՄԱՍՐԵԱԲԱՍՈՒԹՅՈՒՆ

Այսպես, 60 սպիտակուցային մոլեկուլներ կարող են կազմել 30 դիմեր, 20 տրիմեր կամ 12 պենտամեր՝ կապսոմերի: Կապսոմերների կառուցվածքը և քանակը տվյալ տեսակի համար հաստատուն է և ունի տարբերակիչ նշանակություն: Բարդ վիրուսների սուպեր-կապսիդը սովորական, պարզագույն կենսաբանական թաղանթ է՝ կառուցված բջջային ծագում ունեցող թաղանթից և դրա հաստության մեջ ընկղմված վիրուսային գլիկոլիզացված սպիտակուցային մոլեկուլներից, որոնք փշանման ելունների տեսքով դուրս են մղված արտաքին թաղանթի մակերեսից:

**Վիրուսների քիմիական կազմը:** Եվ' պարզ, և' բարդ որոշ վիրուսների նույնեղոկապսիդի կազմում, գենոմային նույնեղինաթթվի և կապսիդի սպիտակուցների հետ մեկտեղ, պարունակվում են նաև ֆերմենտատիվ ակտիվությամբ սպիտակուցներ, որոնք ապահովում են վիրուսի ռեպրոդուկցիան: Բարդ վիրուսների սուպերկապսիդը կազմված է թիրախ բջջի լիպիդներից ու սպիտակուցներից և վիրուսային գլիկոպրոտեիններից: Վերջիններիս կառուցվածքը կողավորված է վիրուսի գենոմում:

**Վիրուսային ԴՆԹ-ն** տասնյակ անգամներ փոքր է բակտերիային ԴՆԹ-ից: Տարբեր վիրուսների մոտ այն կարող է լինել ինչպես երկրել, այնպես էլ միաթել շղթաների ձևով, որոնք կարող են ունենալ գծային կամ օղակաձև, անընդհատ կամ ֆրազմենտավորված կառուցվածք: **ՌՆԹ** վիրուսների գենետիկական ինֆորմացիան կողավորված է ՌՆԹ-ի շղթայում, այնպիսի կողով և սկզբունքով, ինչպես ԴՆԹ-ի շղթայում է: Քիմիական կազմով այն չի տարբերվում բջջային ծագման ՌՆԹ-ից, սակայն բնութագրվում է որոշակի առանձնահատկություններով: Դասական միաթել կառուցվածքից բացի կարող է ունենալ երկրել կառուցվածք, ընդ որում դրանք երկուսն էլ կարող են լինել ինչպես գծային, այնպես էլ օղակաձև, անընդհատ և ֆրազմենտավորված:

Միաթել ՌՆԹ-ն ըստ ֆունկցիոնալ առանձնահատկությունների՝ տարբերակվում է դրական (+) և բացասական (-) շղթաների: Դրական շղթա (+)ՌՆԹ-ն օժտված է (h)ՌՆԹ-ի ֆունկցիայով և

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵՎԲԱՆԻԹՅՈՒՆ

իրականացնում է կողավորված ինֆորմացիայի տրամադրման թիրախ բջջի ռիբոսմի վրա ու վիրուսապեցիֆիկ սպիտակուցների սինթեզը: Բացասական շղթա (-)ՈՆԹ-ն օժտված չէ ինֆորմացիոն ՌՆԹ-ի ֆունկցիայով և ծառայում է որպես մատրիքս (Ի)ՈՆԹ-ի սինթեզի համար:

Վիրուսային սպիտակուցները տարբերակվում են 2 խմբի՝ կառուցվածքային և ֆունկցիոնալ: Առաջինները հիմնականում կազմում են վիրուսի կապսիդը, իսկ ֆունկցիոնալ սպիտակուցները՝ ֆերմենտները, որոնք որոշ վիրուների մոտ կարող են առկա լինել վիրիոնի կազմում, իսկ մյուսների մոտ այդ ֆերմենտների կառուցվածքը կոդավորված է վիրուսի գենոմում: Ֆերմենտներն ապահովում են վիրուսի ռեպրոդուկցիան՝ ռեպլիկացիա, տրանսկրիպցիա, տրանսլյացիա:

Վիրուսների մոտ տարբերում են նուկլեուկապսիդով պայմանավորված միջուկային՝ S- և մակերեսային՝ V-անտիգեններ:

### 5.4. ՎԻՐՈՒՏԻ ԵՎ ԹԻՐԱԽ ԲԶՁԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Վիրուսի փոխազդեցությունը թիրախ բջջի հետ կատարվում է 3 եղանակով.

**I.Պրոդուկտիվ փոխազդեցության** դեպքում իրականանում է վիրուսի ռեպրոդուկցիա՝ վերարտադրություն նոր սերնդի ելքով, որի արդյունքում ախտահարված բջիջը ի վերջո ոչնչանում է (նկ.36): Այն բազմատիճան պրոցես է և ընթանում է իրար հաջորդող մի քանի փուլերով՝

**1.Ախտորբցիա,** որը բնութագրվում է վիրիոնի ամրացմանք բջջային ընկալիչներին (ռեցեպտոր):


**2.Վիրուսի ներթափանցումը** թիրախ բջիջ, իրականանում է երկու եղանակով՝

♦ վիրուսի և թիրախ բջջի թաղանթների միաձուլումից ձևավորվում է խողովակ, որով վիրուսի նուկլեինաթթուն անցնում է թիրախ բջջի ցիտոպլազմա,

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

♦ ռեցեպտոր էնդոցիտոզ կամ վիրոպեքսիս՝ թիրախս բջջի մակերեսին վիրուսի աղսորբցիային հետևում է բջջաթաղանթի ներփռումը, որի հետևանքով վիրիոնը ցիտոպլազմատիկ վակուոլի կազմում հայտնվում է ցիտոպլազմայում:

3. Նուկլեինաթթվի մերկացման փուլն ապահովում է գենոմի ազատումը վիրուսի ու վակուոլի թաղանթներից և «մերկ» նուկլեինաթթվի անցումը ցիտոպլազմա կամ կորիզ:



**Նկ.36. Վիրուսի փոխազդեցության փուլերը**


4. Բուն վերարտադրության փուլն ունի տարածական բնույթ: Վիրուսի կառուցվածքային միավորները՝ կապսիդի և սուպերկապսիդի սպիտակուցները, գենոմային նուկլեինաթթուն սինթեզվում են բջջի տարբեր մասերում: Սուպերկապսիդի սպիտակուցները՝ վշանման ելունների տեսքով, միարձվուն են բջջաթաղանթի հաստության մեջ՝ ձևափոխելով այն:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

5. Ինքնահավաքման փուլում գենոմային նուկլեինաթթվից և կապսիդային սախտակուցներից ձևավորվում է նուկլեոկապսիդ: Այն պարզ վիրուսի կազմավորման վերջնական էտապն է: Բարդ վիրուսի նուկլեոկապսիդը ուղղվում է դեպի բջջաթաղանթի վիրուսապեցիֆիկ սախտակուցներով ձևափոխված հատվածը, որտեղից դուրս է գալիս բոլորջման եղանակով իր վրա վերցնելով ձևափոխված թաղանթի մի հատվածը՝ ձևավորելով հասուն վիրիոն՝ շրջափակված սուպերկապսիդով:

6.Եթեր թիրախս բջջից իրականանում է բջջաթաղանթից վիրուսային մասնիկների սողոսկման, բոլորջման կամ ցիտոլիզի եղանակներով: Առաջին երկու եղանակների դեպքում բջջը դեռևս որոշ ժամանակ մնում է կենսունակ, սակայն վիրուսի ռեպրոդուկցիայի հետևանքով բջջի կենսական պոտենցիալի նվազումը ի վերջո հանգեցնում է նրա ոչնչացմանը:

II.Ինտեգրատիվ փոխազդեցությունը վիրուսի նուկլեինաթթվի ներդրումն է թիրախս բջջի քրոմոսոմի կազմի մեջ (նկ.37):




**Նկ.37. Ինտեգրատիվ ինֆեկցիա**

Ինտեգրված նուկլեինաթթուն անվանվում է պրովիրոս՝ նախավիրուս, երևույթ՝ վիրոզենիա:

III.Աբորտիվ փոխազդեցության դեպքում վիրուսի ռեպրոդուկցիան որևէ մի փուլում ընդհատվում է և ախտահարված բջջի հետագա սերնդում վիրուսի նուկլեինաթթուն անհետանում է՝ վնասազերծվում (նկ.38):

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՍ ՄԱՍՐԵԱԲԱՆԹՅՈՒՆ



**Նկ.38. Արորտիվ փոխազդեցություն**

### 5.5. ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄԸ ԵՎ ԻՆԴԻԿԱՑԻԱՆ

Բացարձակ պարագիտիզմով պայմանավորված՝ վիրուսների ռեպրոդուկցիան հնարավոր չէ արհեստական սննդամիջավայրերում, այդ պատճառով դրանց կուլտիվացումը կատարվում է կենսունակ բջջային միջավայրերում՝ փորձարարական (էքսպերիմենտալ) կենդանիների օրգանիզմում, հավի աճող սաղմում և բջջային (հյուսվածքային) կուլտուրաներում:

Դավի սաղմնային բջջներում բազմանում են համարյա բոլոր վիրուսները, սակայն յուրաքանչյուր տեսակի համար պետք է ընտրել տարբեր սաղմնաթաղանթներ: Վարակումից հետո սաղմը պահպում է թերմոստատում այնքան ժամանակ, որքան անհրաշեշտ է տվյալ վիրուսի վերարտադրման համար:

Փորձարարական կենդանիներին (սպիտակ մկներ և առնետներ, գերմանամկներ, ծովախոզուկներ, ճագարներ, կապիկներ, տարբեր թոչուններ և այլն) վարակում են վիրուս պարունակող հետազոտվող նյութով: Նախորդ, նկատի ունենալով վիրուսների արտահայտված հյուսվածքային խնամակցությունը, որոշվում է կենդանու վարակման եղանակը (ներմաշկային, ենթամաշկային, ներմկանային, ներերակային, ներքրային, ներորովայնային, բերանի խոռոչով և այլն): Կենդանու օրգանիզմում վիրուսի ռեպրոդուկցիայի մասին վկայում են համապատասխան հիվանդության կլինիկական

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

ախտանիշների դրսնորումը, օրգանների և հյուսվածքների ախտամորֆոլոգիական փոփոխությունները, ինչպես նաև ախտահարված օրգաններից պատրաստված կախուկի հետզոտության դրական արդյունքը հենագյուտինացիայի ռեակցիայով։ Հենագյուտինացիայի ռեակցիան հիմնված է վիրուսների հատկության վրա՝ սունձելու նարդու կամ կենդանիների էրիթրոցիտները։

Բջջային կուլտուրաները, հյուսվածքի կտորներ կամ նրա առանձին բջիջներն են արհեստական սննդային միջավայրերում, որտեղ նրանք պահպանում են իրենց կենսունակությունը, իսկ որոշները նաև բազմանում են։ Ներայումս մեծ կիրառություն ունեն սաղմնային և ուռուցքային հյուսվածքների բջիջներից ստացված բջջային կուլտուրաները, որոնք հասուն օրգանիզմի նորմալ բջիջների հետ համեմատած օժտված են աճի և բազմացման առավել բարձր ակտիվությամբ։ Բջջային կուլտուրաների համար նախատեսված սննդային միջավայրերը (Իգլի, Խենքսի, «199» միջավայրեր) ունեն բարդ բաղադրություն և պարունակում են հանքային աղեր, վիտամիններ, ամինաթթուներ, գյուկոզ, արյան շիճ, բուֆերային լուծույթներ և այլն։

Պատրաստման եղանակով պայմանավորված՝ բջջային կուլտուրաները լինում են՝

♦**Օրգանային կուլտուրաներ:** Մրանք օրգանների կամ հյուսվածքների ամբողջական կտորներ են, որոնք օրգանիզմից դուրս պահպանում են իրենց ելքային կառուցվածքը։

♦**Միաշերտ բջջային կուլտուրաներ,** որոնց բջիջները ունակ են ամրանալու լաբորատոր սրվակների պատին և բազմանալու՝ առաջացնելով միաշերտ ծածկույթ։

♦**Բջջային կուլտուրայի կախուկ:** Բջիջները բազմանում են սննդամիջավայրի ամբողջ ծավալում։

Որոշ բջջային կուլտուրաներ արհեստական սննդային միջավայրերում կարող են անսահմանորեն աճել ու բազմանալ՝ ապահովելով բազմաթիվ սերունդներ։ Այլ բջջային կուլտուրաների

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՍՍ ՄԱՍՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

սերունդ ապահովելու հնարավորությունները սահմանափակ են: Ըստ այդմ տարբերում են՝

◆ **Առաջնային կամ առաջնային տրիպսինացված բջջային կուլտուրաները** ստանում են հյուսվածքի կտորները պրոտեոլիտիկ ֆերմենտներով մշակելու եղանակով: Նման բջիջները մի քանի սերունդ ապահովելուց հետո ոչնչանում են:

◆ **Վերահյուսվող կամ կայուն բջջային կուլտուրաները** պարբերաբար նոր սննդային միջավայր տեղափոխելու՝ պասաժներ կատարելու պայմաններում, տասնյակ տարիներ շարունակ կարող են բազմանալ՝ ապահովելով անսահման քանակի սերունդներ: Այս բջիջները ստանում են հիմնականում ուռուցքային բջիջներից՝ HeLa, HEp-1, HEp-2, VERO և այլն:

◆ **Կիսավերահյուսվող՝ դիպլոիդային բջջային կուլտուրաները՝ WI-38, MRC-9, IMR-90 և այլն,** ստանում են հիմնականում էմբրիոնային դիպլոիդ բջիջներից, որոնք 40-50 պասաժներից հետո ոչնչանում են:


Վիրուսի ռեպրոդուկցիան բջջային կուլտուրաներում արտահայտվում է՝ ցիտոախտածին էֆեկտով, բժերի առաջացմանք ագարային ծածկույթով միաշերտ բջջային կուլտուրայում, հեմադրոբջիայով, հեմագլյուտինացիայով, գրւավոր փորձով, ներցիտոպլազմատիկ կամ ներկորիզային ներառումների առկայությամբ:

### 5.6. ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ ՎԻՐՈՒՍՆԵՐ (ԲԱԿՏԵՐԻՈՖԱԳ)

Բակտերիոֆագերը (լատ. phagos-խժել) «vira» թագավորությանը դասվող մանրեներ են՝ վիրուսներ, որոնք էվոլյուցիոն զարգացման ընթացքում հարմարվել են բակտերիաների որոշակի տեսակին և նույնիսկ տիպին պարագիտելու կենսակերպին: Դրանք բնության մեջ տարածված են ամենուր, որտեղ կան համապատասխան մանրեներ՝ հողում, ջրում, օդում, մարդկանց ու կենդանիների օրգանիզմում, բուսական ծածկույթում և այլն: Բակտերիոֆագերի դասակարգումը էականորեն չի տարբերվում վիրուսների դասակար-


## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

գումից, իսկ անվանակարգման հիմքը «տեր» բակտերիայի անվանումն է՝ ստաֆիլոկոկային բակտերիոֆազ, սալմոնելային բակտերիոֆազ և այլն: Բակտերիոֆազերը հանդես են գալիս մի քանի մորֆոլոգիական տիպերով (նկ.39)՝ թելանման (I), ելունի անալոգով (II), կարծ ելունով (III), չկծկվող պատյան ունեցող ելունով (IV), կծկվող պատյան ունեցող ելունով (V):



**Նկ.39.Բակտերիոֆազերի մորֆոլոգիական տիպերը**

Առավել ուսումնասիրված է V տիպը, մասնավորապես T2-բակտերիոֆազը: Այն սպերմատազորիդանման է, կազմված է իկոսաեղրիկ տարածական սիմետրիայի գլխիկից, սպիրալաձև սիմետրիայի ելունից, որը կծկվող պատյանով սնամեջ խողովակ է (նկ.40):



**Նկ.40.Ֆազի կառուցվածքը**

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱՎԱՍ ՄԱՍՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

Բակտերիոֆազի գլխիկում տեղակայված է նուկլեինաթքուն՝ յսթ կամ ՈՆԹ, որի մի ծայրը իջում է ելունի միջուկի մեջ: Ելունը ավարտվում է վեցակողմ թիթեղիկով, վերջինիս յուրաքանչյուր անկյունից դուրս են գալիս բարակ թելիկներ, որոնցով բակտերիոֆազը ամրանում է բակտերիային բջջի մակերեսին:

Բակտերիոֆազերի և բակտերիաների փոխազդեցությունն իրականանում է պրոդուկտիվ և ինտեգրատիվ ինֆեկցիաների տիպով: Պրոդուկտիվ ինֆեկցիան, որն առաջացնում են վիրուլենտ ֆազերը, չի տարբերվում այլ վիրուսների վերարտադրությունից և անցնում է հետևյալ փուլերը՝

◆ **Աղսորբցիան** իրականանում է ֆազի ելունի դիստալ հատվածում տեղակայված ընկալիչների և բակտերիային բջջի բջջապատում առկա ընկալիչների համապատասխանության դեպքում, որոշ ֆազեր աղսորբցվում են սերս պիլիների մակերեսին:

◆ **Ներթափանցում:** Պատյանի կծկման հետևանքով, ելունի միջուկը մեխանիկորեն ծակում է բջջարադանթը և նուկլեինաթքուն առանց կապսիդի տարրերի, «մերկացած», հայտնվում է թիրախ բջջի ցիտոպլազմայում: Կծկվող պատյանից զուրկ ֆազերի ներթափանցունը կատարվում է կապսիդում առկա լիզոցին ֆերմենտի շնորհիվ:

◆ **Բուն ռեպրոդուկցիան** իրականանում նուկլեինաթքվի ռեպլիկացիայի, տրանսկրիպցիայի և տրանսլյացիայի մեխանիզմներով, սակայն ի տարբերություն այլ վիրուսների՝ նոր սերնդի ձևավորման ժամանակահատվածը զգալիորեն կարծ է:

◆ **Նոր սերնդի ելքը** իմնականում ուղեկցվում է ախտահարված բակտերիայի քայլայմամբ՝ **լիզիսով**:

Գործնականում վիրուլենտ ֆազի փոխազդեցությունը համանուն բակտերիային կուլտուրայի հետ դրսևորվում է հեղուկ կուլտուրայի դեպքում պղտորության պարզեցմանը (18-24 ժամվա ընթացքում միջավայրը դառնում է բափանցիկ), թիթեղային ագարի մակերեսին ստերիլ բժերի առաջացնամբ (բագտերիոֆազի գաղութներ): Բակտերիոֆազի կուլտուրայի ամենամեծ նոսրացունը,

որն ապահովում է որոշակի խտության համանում բակտերիային կուլտուրայի լիզիսը, նրա տիտրն է, ինչը որոշվում է և՛ հեղուկ բակտերիային կուլտուրայի պարզեցմանը (Ապելմանի մեթոդ), և՛ թիթեղային ագարի մակերեսին ստերիլ բժերի առաջացմանը (Գրացիայի մեթոդ՝ ագարի մակերեսին առաջացած բժերի ընդհանուր թիզը համապատասխանում է ներմուծված բակտերիոֆագերի քանակին):

Ինտեգրատիվ փոխազդեցության դեպքում բակտերիոֆագի նուկլեինաթրուն ներդրվում է բակտերիային քրոմոսոմի կազմության մեջ՝ դրա հետ ենթարկվելով ռեալիկացիայի, ընդ որում, բակտերիոֆագի նոր սերնդի ելք և բակտերիաների լիզիս չի արձանագրվում: Նման բակտերիոֆագերը հանարվում են չափավոր: Ֆագի նուկլեինաթրուն ներդրված բակտերիային քրոմոսոմի կազմում, անվանում են պրոֆագ (նախաֆագ): Բակտերիային բջիջները, որոնք իրենց գենոմում կրում են պրոֆագ, անվանվում են լիզոգեն բակտերիաներ, իսկ երևոյթը՝ լիզոգենիա: Նման անվանումը պայմանավորված է, պրոֆագի հնարավորությամբ, որոշակի պայմաններում բակտերիային քրոմոսոմից անջատվելու և սկիզբ տալու պրոդուկտիվ հնֆեկցիայի, ֆագերի նոր սերնդի ելքի ու բակտերիաների լիզիսի: Գոյություն ունեն նաև դեֆեկտային չափավոր ֆագեր, որոնք ունակ չեն առաջացնելու պրոդուկտիվ ինֆեկցիա: Յարկ է նշել, որ չափավոր ֆագով լիզոգենացված բակտերիաները կայուն են համանում վիրուլենտ ֆագով վարակման նկատմամբ, ինչը պայմանավորում է դրանց ամբողջականության և կենսունակության պահպանումը բակտերիային պոպուլացիայում: Ակնհայտ է, որ լիզոգեն բակտերիաներում նոր գենետիկական իօֆորմացիայի՝ պրոֆագի առկայությունը կարող է պայմանավորել նոր հատկանիշների դրսնորումը՝ տոքսինագոյացման ունակության ձեռք բերում, անտիգենային, կենսաքիմիական, մորֆոլոգիական հատկանիշների փոփոխություն և այլն: Բակտերիաների որոշակի տեսակների նոր հատկանիշների դրսնորումը լիզոգենացման հետևանքով, անվանվում է լիզոգեն կոնվերսիա:

## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Բակտերիոֆագերի հատկությունը, բակտերիաների կոնկրետ տեսակի և նույնիսկ տիպի հետ խիստ սպեցիֆիկորեն փոխազդելու, պայմանավորում է նրանց գործնական կիրառությունը ինֆեկցիոն հիվանդությունների ախտորոշման, բուժման և կանխարգելման նպատակով, ինչպես նաև, որպես պարզ և մատչելի մոդել, գենետիկական հետազոտություններում:

Ֆագոտիպացման մեթոդը լայնորեն կիրառվում է ոչ միայն մանրէաբանական պրակտիկայում, այլ նաև համաճարակաբանական հետազոտությունների բնագավառում՝ հաստատելու հիվանդության հարուցիչի ֆագոտիպը, ինչը հնարավորություն է ընձեռում հաստատելու ինֆեկցիայի աղբյուրն ու տարածման ուղիները և իրականացնելու արդյունավետ հակահամաճարակային միջոցառումներ:

Ներկայունս արտադրվում և նշված նպատակներով կիրառվում են դիզենտերային, որովայնատիֆային, սալմոնելյոզային, կոլիպրոտեային, ստաֆիլակոկային և այլ բակտերիոֆագերի պրեպարատները:

### 5.7. ՊՐԻՌՈՒՍԵՐ

Պրիոնները XX դարի վերջին երկու տասնամյակներում տրամադրվել սպունգանման էնցեֆալոպատիաներով հիվանդ մարդկանց (կուրու, կրետցֆելդ-Յակոբի հիվանդություն, Գերստնան-Շտրեուլեր-Շեյնկերի համախտանիշ, ընտանեկան մահացու անքնություն) և կենդանիների (ոչխարների և այծերի սկրեպի, խոշոր եղջերավոր կենդանիների սպունգանման էնցեֆալոպատիա) մոտ հայտնաբերված, բակտերիային ֆիլտրերով անցնող սպիտակուցային մոլեկուլներ են: Անվանումը առաջարկվել է U.Պրուլզիների կողմից «proteinaceous infectious particle» - սպիտակուցային ինֆեկցիոն մասնիկ, որը կայուն է նուկլեինաթթուները մոդիֆիկացնող, ինակտիվացնող ազդակների՝ բարձր ջերմաստիճան, իոնիզացնող ճառագայթներ, ուլտրաձայն, պրոտեազներ և այլն, նկատմամբ: Պրիոնները կարող են երկարատև պերսիստենցիայի ենթարկվել մակրոօրգանիզմում:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԲԱՆՈՒԹՅՈՒՆ

չառաջացնելով իմուն պատասխան, քանի որ բջջային ծագում ունեն: Ուղեղային հյուսվածքում դրանց կուտակումը առաջացնում է պրիոնային սպիտակուցների բյուրեղացում, բջիջների ամիլոդիային փոփոխություններ ու մահ: Պրիոնային սպիտակուցները բնության մեջ հանդիպում են երկու կարգավիճակով՝ նորմալ և ինֆեկցիոն: Նորմալ, բջջային ձևը՝ Prion Protein of Cell (PrPC), առկա է բոլոր կաթնասունների, այդ թվում նաև մարդկանց նյարդային հյուսվածքում և իրականացնում է կենսականորեն անհրաժեշտ ֆունկցիաներ՝ մասնակցում է նյարդային գրգիռների հաղորդմանը, և որ ամենակարևորն է, բջիջներում, հյուսվածքներում, օրգաններում ու ամբողջական օրգանիզմում կարգավորում է ակտիվության և հանգստի օրական ցիկլերը՝ ծերացման պրոցեսը: Պրիոնային սպիտակուցների նորմալ ձևերի երրորդային, չորրորդային կառուցվածքի փոփոխությունը հանգեցնում է դրանց ինֆեկցիոն ձևերի՝ Prion Protein of Scrapie (PrPSc), առաջացնանը: Ենթադրվում է, որ նորմալ պրիոնային սպիտակուցների կոնֆորմացիան իրականանում է օրգանիզմ թափանցած ինֆեկցիոն պրիոնային սպիտակուցների հետ շփման հետևանքով, ինչը պայմանավորում է ինֆեկցիոն պրիոնային մասնիկների կուտակումը և հիվանդության զարգացումը:

## Գլուխ 6

### ՄԻԿՐՈՕՐԳԱՆԻՉԱՄՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱՆ

#### 6.1. ՄԱՆՐԵՆԵՐԸ ԵՎ ԲԻՈՍՖԵՐԱՆ

Միկրոօրգանիզմների դերը կենդանի մատերիայի ձևավորման և հետագա զարգացման բնագավառում առաջին անգամ առաջարիթ է կենսոլորտի (բիոֆերա) մասին ուսմունքի հեղինակ Վ.Ի. Վերնադսկին: Նա ծևակերպել է գաղափարը բիոսֆերայի՝ երկրագողի կենդանի թաղանթի վերաբերյալ, որպես էկոլոգիական ինտեգրացիայի բարձրագույն նակարդակի:

Էկոլոգիական մանրէաբանությունը ծևավորվել է դեռևս XIX դարի վերջերին, XX դարի սկզբին՝ նպատակ հետապնդելով միավորելու ընդհանուր և կիրառական մանրէաբանության այն բաժինները, որոնք զբաղված էին միկրոօրգանիզմների փոխադարձ կապի ուսումնասիրություններով ինչպես մինյանց, այնպես էլ կենդանի և անկենդան բնության հետ: Մանրէների էկոլոգիայի, որպես գիտական ուղղության, իհմք կարելի է համարել Ս.Ն.Վինոգրադսկու աշխատանքները, որը հայտնաբերել է հողի մանրէների մասնագիտացված տեսակները և ապացուցել դրանց մասնակցությունը հողում նյութերի տրամադրմացիայի պրոցեսներին: Յողում միկրոօրգանիզմների համակեցության օրինակով, նա առաջինը ձևակերպեց կոնկրետ էկոլոգիական սանդղակում մշտական (առտոխտող) և ոչ մշտական (ալոխտող) միկրոֆլորայի վերաբերյալ դրույթը, ինչը պարզվեց ունիվերսալ է և կիրառելի նաև այլ միկրոբային համակեցությունների համար՝ ջրային, բուսական, կենդանական: Յարկ է նշել նաև, որ նույն ժամանակաշրջանում Ի.Ի.Մեշնիկովն առաջարկեց հիպոթեզ մարդու և կենդանիների աղիների միկրոֆլորայի և դրա տրոֆիկ դերի վերաբերյալ: Նա գիտականորեն հիմնավորեց նեխսան բակտերիաների բացասական աղեցության ճնշման եղանակ՝ լակտոբակտերիաներով հարուստ կեֆիրի կանոնավոր օգտագործմամբ:

Եկոլոգիա բառացիորեն նշանակում է գիտություն բնակավայրի մասին (հուն. էկոս-բնակարան), որն ուսումնասիրում է որոշակի պայմաններում գոյատևող ու կենսագործող կյանքի տարրեր դրսերումների փոխարարերությունները մինյանց ու անկենդան բնության հետ: Եկոլոգիական մանրէարանությունը իր ուսումնասիրությունների բնագավառում կիրառում է ընդհանուր եկոլոգիայի հասկացությունները և կատեգորիաները: **Բիոտոպը՝ կյանքի համար համեմատաբար միատարր պայմաններով,** բիոսֆերայի տարածքային սահմանափակ տեղամասն է: Որոշակի բիոտոպում միկրոօրգանիզմների պոպուլյացիաների համակեցությունը անվանում են **միկրոբիոցենոզ:** Միկրոօրգանիզմների պոպուլյացիան միևնույն բիոտոպի սահմաններում բնակվող նույն տեսակի առանձնյակների ամբողջությունն է, որը բնութագրվում է հետերօգենությամբ: Բիոտոպը և բիոցենոզը միասին կազմում են **էկոհամակարգերը** (էկոսիստեմա): **Գեոսֆերան, հիդրոսֆերան, ատմոսֆերան, օնտոսֆերան** համապատասխանաբար հողային, ջրային, օդային և պարագիտար էկոհամակարգերի ամբողջությունն է: Բոլոր էկոսիստեմները միասին կազմում են երկրագնդի կենդանի թաղանթը՝ **բիոսֆերան**, որը ձևավորվել է շուրջ 3 միլիարդ տարի առաջ, երբ երկրագնդի միակ բնակիչները պրոկարիոտ միկրոօրգանիզմներն են եղել, ինչը թույլ է տալիս հավաստելու դրանց առաջնային դերը բիոսֆերայի ձևավորման հարցում: Երկրագնդի գոյատևման ներկայիս էտապում ևս, երբ այն բնակեցված է բազմազան և բազմաքանակ կենդանի օրգանիզմներով՝ բուսականությամբ, կենդանիներով, մարդկանցով, առաջնային դերը պատկանում է միկրոօրգանիզմներին, քանի որ դրանք ակտիվորեն իրականացնում են բնության մեջ նյութերի և էներգիայի շրջանառությունը: Դայտնի է, որ բուսական և կենդանական աշխարհը սինթեզում են շատ ավելի մեծ քանակներով օրգանական նյութեր, քան իրենք իսկ, կամ արիոգեն գործոնները կարող են միներալիզացիայի ենթարկել, ինչը կարող է բերել «պահեստավորման էֆեկտի» և կարևորագույն օրգանոգենների՝ C,N,S,P լինիտավորված պարունակության: Այս հանգանանքը

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՍ ՄԱՍՐԵԱԲԱՆԹՅՈՒՆ

կսահմանափակեր կյանքի դրսւորման հնարավորությունները՝ ընդհուած մինչև վերացում: Յենց այստեղ է, որ օգնության են հասնում միկրոօրգանիզմները, որոնք ի տարբերություն բարձրակարգ կենդանի օրգանիզմների՝ ունակ են տրանսֆորմացնելու բոլոր օրգանական միացությունները և ինքնուրույն սինթեզելու բիոմասսա՝ տրոհելով այն մինչև ելքային էլեմենտների: Այսպես, ազոտ ֆիքսող բակտերիաները օդի մոլեկուլային ազոտից սինթեզում են սախտակուցներ, ամոնիֆիկատորները տրանսֆորմացնում են սախտակուցները մինչև ամոնիակի և նրա աղերի, միտրիֆիկացնողները վերափոխում են ամոնիակի աղերը ազոտական թթվի, իսկ դենիտրիֆիկատորները վերականգնում են այն մինչև մոլեկուլային ազոտի: Միկրոօրգանիզմների մի խումբ ածխաթու գազից և ածխածնի այլ անօրգանական միացություններից սինթեզում է ածխաջրատներ, մեկ այլ խումբ խոնրման պրոցեսում վերջիններս տարրալուծում է  $\text{CO}_2$ -ի և կարբոնատների: Նմանատիպ վերափոխումներ իրականանում են նաև այլ օրգանօգենների հետ: Սրանով է պայմանավորված միկրոօրգանիզմների տարածվածությունը բիոսփերայի տարրեր էկոհամակարգերում և էկոլոգիական մանրէաբանության նշանակությունը:

Միկրոօրգանիզմներն ամենուր գոյատևում են բարդ ասոցիացիաների՝ միկրոբիոցենոզների ձևով, որոնք ներկայացված են բազմաթիվ և բազմապիսի տեսակներով: Միկրոբիոցենոզներում պոպուլյացիաների միջև փոխհարաբերությունները բարդ են, բազմազան և դիմամիկ, որոնք կարելի է բաժանել մի քանի տեսակների՝

◆ **Նեյտրալիզմ** միևնույն բիոտոպում բնակվող միկրոօրգանիզմների պոպուլյացիաները միմյանց վրա ո՞չ դրական և ո՞չ բացասական ազդեցություն չեն թողնում:

◆ **Միմբիոզը** լայն իմաստով պոպուլյացիաների համակեցություն է ինչպես շահավետ, այնպես էլ ոչ շահավետ (անտագոնիզմ) պայմաններով: Նեղ իմաստով՝ սիմբիոնտ պոպուլյացիաների փոխշահավետ համակեցությունն է, որը պայմանավորված փոխկապվածության աստիճանով կարող է տատանվել թույլ համագործակցությունից

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵՎԲԱՆԻԹՅՈՒՆ

մինչև լրիվ մուտքուալիզմ: Վերջինս այն դեպքերն են, երբ սիմբիոնտները իրականացնում են միմյանց լրացնող կենսականորեն անհրաժեշտ ֆունկցիաներ: **Մետարիոզ**, երբ մի օրգանիզմը շարունակում է մյուսի առաջացրած պրոցեսը: **Միներօփիզմ**՝ միաժամանակյա աճեցման դեպքում սիմերօփիստը ուժեղացնում է մյուսի հիմնական ֆիզիոլոգիական ֆունկցիան: **Սատելիտիզմ**՝ սատելիտ միկրոօրգանիզմի կողմից սինթեզված նյութերը սննդանյութ են մյուսի համար: **Կոմենսալիզմ**, երբ մի տեսակն ապրում է մյուսի հաշվիմ՝ չվճասելով նրան:

◆ **Անտագոնիստական** փոխհարաբերությունների դեպքում մի պոպուլյացիան ինչ որ չափով ճնշում է մյուսին, ընդհուպ մինչև վերացում: Ըստ այդմ, տարբերում են անտագոնիստական փոխհարաբերությունների հետևյալ աստիճանները՝ մրցակցություն (կոնկորդենցիա), գիշատչություն, պարագիտիզմ և անտիբիոզ:

Միկրոօրգանիզմների գոյատևման հիմնական միջավայրը առաջին հերթին հողը, ջուրը, օդն են, ապա նաև նարդու և կենդանիների մաշկն ու այն բոլոր խոռոչների լորձաթաղանթները, որոնք ինչ որ ձևով կապ ունեն արտաքին աշխարհի հետ:

### 6.2. ՅՈՂԻ, ԶՐԱՄԲԱՐՆԵՐԻ, ՕՐԻ ՄԻԿՐՈՖԼՈՐԱՆ

**Յողի միկրոֆլորա:** Յողի միկրոֆլորայի տեսակային կազմի ձևավորման համար կարևոր նշանակություն ունի հողի տիպը և կառուցվածքը, հանքային և օրգանական նյութերի բաղադրությունը, ջերմաստիճանը, խոնավությունը, աերացիան, ինսոլիացիան, բուսական և կենդանական ծածկույթը, ինչպես նաև ագրոտեխնիկական միջոցառումները՝ հերկումը, ռռոգումը, պարարտացումը և այլն: Միկրոֆլորայով առավել հարուստ են հողի վերին՝ 15-20սմ խորությամբ շերտերը, 1-2մ-ից ավելի խորը շերտերը գործնականում մանրէազերծ են: Յողում բացի սեփական միկրոֆլորայից, ինչը ապահովում է վերջինիս կառուցվածքը՝ բիոմասսայի սինթեզը և էներգիայի կուտակումը, պարունակվում են մեծ քանակությամբ ախտածին մանրէներ, որոնց աղբյուրը մարդը և կենդանիներն են: Նորմայում յուրաքանչյուր էկոհամակարգում՝ այդ թվում նաև հողում,

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՍՍ ՄԱՍՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

իրականանում են ինքնամաքրման պրոցեսներ, սակայն մի շարք հանգամանքներով պայմանավորված՝ ախտածին մանրէները կարող են երկարատև պահպանվել և նպաստել մարդու վարակմանը։ Մանրէների վեգետատիվ ձևերը կարող են գոյատևել մի քանի օրից մինչև մի քանի ամիս, իսկ սպորավոր ձևերը՝ մի քանի տարուց մինչև տասնյակ տարիներ։ Այս առումով, որպես վարակի հնարավոր աղբյուր, կարևորվում է հողի սանիտարաբակտերիաբանական վիճակի գնահատումը, ինչը իրականացվում է հողում առկա թերմոֆիլ բակտերիաների և կղանքային աղտոտման ցուցանիշ հանդիսացող մանրէների քանակական փոխարաբերությամբ։ Կղանքային աղտոտման մասին վկայող մանրէների գերակշռությամբ հողերը սանիտարական առումով համարվում են անբարենպաստ։ Աղտոտվածության վաղենությունը պարզելու համար որոշում են մի քանի սանիտարացուցադրական մանրէների առկայությունը։ Աղիքային ցուպիկը և *Enterococcus faecalis*-ը (նախկին անվանումն է կղանքային ստրեպտոկոկ *Streptococcus faecalis*) վկայում են թարմ, իսկ ենտերոբակտեր և ցիտրոբակտեր ցեղերի հարուցիչները՝ ոչ թարմ աղտոտվածության մասին։ *C.perfringens*-ի առկայությունը վաղ աղտոտվածության նշան է։ Առավել ճշգրիտ գնահատումը կատարվում է ըստ կոլի (պերֆրինգինս) ինդեքսի՝ մեկ գրամ հողում աղիքային ցուպիկի (*C.perfringens*-ի) քանակը, և ըստ կոլի (պերֆրինգինս) տիտրի՝ հողի մասսան գրամներով, որում առկա է համապատասխան մանրէի մեկ առանձնյակ։

**Զրամբարների միկրոֆլորան բաժանում են երկու խմբի՝ սեփական (առևտութող) և բերովի, վերջինս կարող է անցնել հողից, օդից, կենդանիներից ու մարդուց։ Չնայած ջուրը անբարենպաստ է ախտածին և պայմանական ախտածին մանրէների համար, այնուամենայիկ դրանցից շատերը ոչ միայն կարող են գոյատևել, այլև կարող են բազմանալ ջրում։ Դա պայմանավորված է բազմաթիվ հանգամանքներով՝ սկսած ջրի քիմիական բաղադրությունից մինչև տվյալ տարածաշրջանի ազգաբնակչության կենցաղային, սոցիալական, տնտեսական, կրոնական առանձնահատկություն-**

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Աերը: Սիրիոյան խոցի հարուցիչի սպորմերը կարող են պահպանվել տարիներ, էնտերովիրուսները, սալմոնելաները, լեպտոսպիրաները՝ ամիսներ, դիզենտերիայի, խոլերայի, բրուցելոզի հարուցիչները՝ օրեր, շաբաթներ: Զրի սանիտարամանրէաբանական վիճակը գնահատվում է:

◆ միկրոբային թվով՝ մեզոֆիլ բակտերիաների քանակն է 1մլ ջրում,

◆ կոլի տիտրով՝ ջրի նվազագույն ծավալն է միլիլիտրերով, որում առկա է մեկ աղիքային ցուպիկ,

◆ կոլի ինդեքսով՝ մեկ լիտր ջրում աղիքային ցուպիկի քանակն է:

Ըստ պետական ստանդարտների՝ խնելու ջրի միկրոբային թիվը առավելագույնը 100 է, կոլի տիտրը՝ նվազագույնը 300, կոլի ինդեքսը՝ 3-ից ոչ ավելին:

**Օդի միկրոֆլորան:** Օդը պիտանի չէ միկրոօրգանիզմների բազմացնան համար, քանի որ չի պարունակում բավարար խոնավություն և սննդանյութեր, սակայն կենցաղային և արտադրական փակ տարածքների օդում մանրէները կարող են կենսունակ մնալ այնքան ժամանակ, ինչը բավական է այդտեղ գտնվող մարդկանց վարակելու համար: Փակ տարածքների սանիտարաբակտերիաբանական վիճակը գնահատում են միկրոբային թվով՝ 1մ<sup>3</sup> օդում մանրէների թվով, և սանիտարացուցադրական մանրէների առկայությամբ՝ հետովարիկ ստրեպտոկոկեր, ուկեզույն ստաֆիլոկոկ:

### 6.3. ՄԱՐԴՈՒ ՕՐԳԱՆԻՉԱՄԻ ՄԻԿՐՈՖԼՈՐԱՆ

**Առողջ մարդու օրգանիզմի միկրոֆլորան:** Մարդը ևս երկրի բիոսֆերայի ներկայացուցիչ է և բնականաբար նրա օրգանիզմի հյուսվածքներն ու խոռոչները (մաշկ, աչքի, ականջի լորձաթաղանթներ, շնչական ուղիների վերին հատվածներ, բերանի խոռոչ, ստամոքսաղիքային տրակտ, միզասեռական համակարգ), որոնք առնչվում են արտաքին աշխարհի հետ, հանդիսանում են բաց

## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

Էկոհամակարգեր (բիոտոպեր և դրանց բնութագրական միկրոբիոգենոզներ) և բնակեցված են բազմազան մանրէներով: Առողջ մարդու օրգանիզմի մնացած բոլոր հյուսվածքները ստերջ են: Որոշ ոչ ախտածին և պայմանական ախտածին միկրոօրգանիզմներ էվոլյուցիոն զարգացման ընթացքում հարմարվել են մարդու առանձին բիոտոպերում գոյատևելուն՝ մարդու օրգանիզմի բնական կամ նորմալ միկրոֆլորա, և նրանց միջև ձևավորվել է սիմբիոտիկ փոխհարաբերություններ: Ընդ որում, տարբեր բիոտոպերում պայմանավորված վերջիններիս անատոմիական կառուցվածքով, իրականացրած ֆունկցիաներով, միկրոմիջավայրի ջերմաստիճանով, գազային կազմով, pH-ով, մանրէների քանակական և տեսակային կազմը տարբեր է, իսկ յուրաքանչյուր բիոտոպի համար այն հարաբերականորեն հաստատուն է և նորմալ պայմաններում բավականին կայուն է անբարենպաստ գործոնների ազդեցության նկատմամբ: Որպես կանոն տարբեր մարդկանց համանուն բիոտոպերում միկրոֆլորան գրեթե միևնույն է: Չնչին անհատական տարբերությունները միկրոբիոցենոզներում կարող են պայմանավորված լինել բազմազան գործոններով՝ աշխարհագրական տարածք, բնակլիմայական պայմաններ, տարիք, սեռ, մասնագիտություն, սոցիալական պայմաններ, սննդի ռեժիմ և կազմ և այլն:

Բնականաբար մարդը չի ծնվում այն միկրոֆլորայով որն ուղեկցում է նրան ողջ կյանքի ընթացքում: Պտուղը մոր արգանդում ստերիլ է, ծննան պահից հետո մի քանի տարիների ընթացքում ձևավորվում են յուրաքանչյուր բիոտոպին բնութագրական միկրոբիոցենոզները, որոնք նորմալ պայմաններում գտնվում են դինամիկ հավասարակշռության պայմաններում: Անբարենպաստ ազդակների ներգործությամբ այդ հավասարակշռության խախտումը կարող է նպաստել նորմալ միկրոֆլորայում ընդգրկված պայմանական ախտածին տեսակների ակտիվացմանը և էնդոգեն ինֆեկցիաների զարգացմանը: Բացի այդ նորմալ միկրոֆլորան կազմող մանրէների թե՛ քանակական և թե՛ առավելապես տեսակային կազմի կայուն, երկարատև փոփոխությունն արդեն հիվան-

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԱԾՈՒԹՅՈՒՆ

դուրյուն է և անվանվում է **դիսբակտերիոզ**: Դրա պատճառ կարող են հանդիսանալ բազմազան գործոններ՝ սննդի կազմը և որակը, ալկոհոլի չարաշահումը, ծխելը, սթրեսային իրավիճակները, աղիների պերիստալտիկայի խանգարումներն ու ոչ ժամանակին դատարկումը, սակայն առավել մեծ դեր ունեն այնպիսի հիվանդությունները, որոնց հետևանքով փոփոխվում է լորձաթաղանթի էպիթելի ֆիզիկաքիմիական կազմը, ինչպես նաև տարբեր հիվանդությունների ժամանակ հակաբիոտիկների չհիմնավորված և չկարգավորված երկարատև կիրառությունը:

**Մաշկի միկրոֆլորան:** Տարբերում են մաշկի սեփական (առևտոխտոն) և բերովի (տրանզիտոր) միկրոֆլորա, վերջիններս արագ ոչնչանում են մաշկի բակտերիցիդ ազդեցությամբ և անտագոնիստ առևտոխտոն տեսակների շնորհիվ: Մշտական միկրոֆլորան ներկայացված է հիմնականում ստաֆիլոկոկերով և կորինոբակտերիաներով, կարող են հանդիպել նաև միկրոկոկեր, սարցինաներ: Տեսակային կազմը նշանակալիորեն փոփոխվում է խորոշների բնական բացվածքներին մոտենալուն գուգընթաց:

Բերանի խոռոչի և քթընապանի միկրոֆլորանյին բնորոշ է բակտերիաների, սմկերի, վիրուսների, նախակենդանիների տարբեր տեսակների բազմազանությունը: Տարբերում են առևտոխտոն և ալոխտոն (այլ բիոտոպերից) միկրոֆլորա: Առևտոխտոն ֆլորայում տարբերում են օբլիգատ և տրանզիտոր միկրոօրգանիզմներ՝ վերջիններս ախտածին են: Օբլիգատ առևտոխտոն ֆլորան կազմում են կանաչեցնող ստրեպտոկոկերը (*S. mutans*, *salivarium* և այլն), պեպտոկոկերը, տարբեր անաերոբները, կորինոբակտերիաները, միկրոբակտերիաները, սպիրոխետները, միկրոպլազմաները, նեյսերիաները և այլն: Քթի և ականջի լորձաթաղանթում գերակշռում է *S.epidermidis*-ը: Շնչական ուղիների լորձաթաղանթը բրոնխներից դեպի ցած ստերիլ է:

**Միզասեռական համակարգի միկրոֆլորան** քանակական առումով հարուստ չէ, սակայն տեսակային կազմով բազմազան է՝ արտաքին սեռական օրգաններում և միզուկում առավել հաճախ

## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՍՄ ՍԱՄՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

հայտնաբերվում են միկրօբակտերիաներ (M.smegebatis) և ֆուզորակտերիաներ: Առողջ կնոց հեշտոցում գերակշռում են Դոդերլայնի ցուպիկները (Lactobacillus ցեղի տարբեր ներկայացուցիչներ) և դիֆթերոիդները: Կյանքի ռեպրոդուկտիվ շրջանում կանանց շուրջ 60%-ի մոտ հայտնաբերվում են գարդերելաներ՝ Gardnerella vaginalis, որոնք այլ պայմանական ախտածին միկրոօրգանիզմների նման, որոշակի պայմաններում կարող են հարուցել օպորտունիտական ինֆեկցիաներ: Քիչ քանակներով կարող են հայտնաբերվել նաև ստրեպտոկոկեր, ստաֆիլոկոկեր, պետոստրեպոտոկոկեր, կլոստրիդիաներ, ոչ ախտածին նեյսերիաներ, սապրոֆիտ տրեպոնեմաներ (Treponema refringens), գրամ բացասական ցուպիկներ: Միզուկի դիստալ հատվածներից դեպի վեր հեռանալուն զուգահեռ՝ միրոօրգանիզմների քանակը զգալիորեն պակասում է և առողջ մարդկանց միզապարկը, միզուլինները, կանանց արգանդը, ֆալուպյան փողերը գործնականում ստերիլ են:

**Ստամոքսի և բարակ աղիների միկրոֆլորան աղքատ է:** Բարակ աղիներում քիչ քանակներով հանդիպում են լակտոբակտերիաներ, բիֆիդոմբակտերիաներ, մոնոկոկեր:

**Դաստ աղու միկրոֆլորայի որակական և քանակական կազմը** այլ բիոտոպերի հետ համեմատած առավել բազմազան և բազմաքանակ է, որը պայմանավորված է մի քանի հանգամանքներով՝ այն արտազատական օրգան է, նրանում բացակայում է լիզոցինը, ավելի սակավ է արտահայտված լիմֆոիդ հյուսվածքը, քան բարակ աղիներում: Այստեղ կան նպաստավոր թH, ջերմաստիճան, և սննդային պայմաններ: Նորածնի հաստ աղու միկրոֆլորան ներկայացված է հիմնականում կարնաթրվային բակտերիաներով, որոնք գյուկոզի քայլայման շնորհիվ առաջացնում են կարնաթրու:

Դասուն մարդու հաստ աղու միկրոֆլորայում տարբերում են լորձային և լուսանցքային ֆլորա: Լորձայինը հիմնականում կազմված է բիֆիդո- և լակտոբակտերիաներից: Լուսանցքային ֆլորայում տարբերում են միկրոօրգանիզմների չորս հիմնական խումբ՝

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԲԱՆՈԹՅՈՒՆ

◆ Սպոր չառաջացնող խիստ անաերոբներ, որոնք կազմում են ֆլորայի հիմնական մասսան (շուրջ 96-99%)՝ Bifidobacterium ցեղի գրամ դրական բակտերիաներ և Bacteroidaceae ընտանիքի գրամ բացասական միկրոօրգանիզմներ:

♦ Երկրորդ խումբը կազմում են ֆակուլտատիվ անաերոբները (1-4%) գրամ բացասական աղիքային ցուպիկ, գրամ դրական էնտերոկոկեր (*Enterococcus faecalis*) և սպոր չառաջացնող *Lactobacillus* ցեղի կաթնաթթվային ցուպիկներ:

♦ Դաջորդ խումբը կազմում է մնացորդային միկրոֆլորան, որը հաստ աղու միկրոօրգանիզմների 0.01-0.001%-ն է: Այն ներկայացված է *Staphylococcus*, *Proteus*, *Candida*, *Clostridium*, *Pseudomonas* ցեղերով:

♦ Վերջին խումբը կազմված է *Enterobacteriaceae* ընտանիքի տարբեր ցեղերից՝ *Salmonella*, *Shigella*, *Enterobacter* և այլն, որոնք կարող են հանդիպել ժամանակավոր՝ երբեմն հարուցելով աղիքային ինֆեկցիաներ:

Այսպիսով, օրգանիզմի արտաքին ծածկույթները և լորձաթաղանթները բնակեցված են բազմաթիվ և բազմազան միկրոօրգանիզմներով, որոնք մակրոօրգանիզմի հետ կազմում են մի միասնական, ամբողջական էկոհամակարգ, և դրանցից յուրաքանչյուրի վիճակը պայմանավորվում է մյուսով: Մասնավորապես նորմալ միկրոֆլորայի դերը մակրոօրգանիզմի համար արտահայտվում է հետևյալ կերպ՝

♦ այն օրգանիզմի ոչ սպեցիֆիկ պաշտպանական գործոն է,

♦ խթանում է ինուն համակարգի ձևավորումը,

♦ մասնակցում է մարսողության պրոցեսներին՝ նպաստելով բարդ նյութերի քայլայմանը և օրգանիզմի համար անհրաժեշտ նյութերի ներծծմանը,

♦ մասնակցում է ինչպես էնդոգեն, այնպես էլ էկզոգեն որոշ տոքսիկ նյութերի չեղոքացմանը,

♦ սինթեզում է մի շարք վիտամիններ՝ B, K:

## Գլուխ 7 ՄԱՍՐԵՆԵՐԻ ԳԵՆԵՏԻԿԱՆ

### 7.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Գենետիկան (հուն. genesis-ծագում) գիտություն է օրգանիզմների և դրանց կառավարման մեթոդների մասին: Վերջիններս կենդանի բնության կարևորագույն հատկանիշներն են և օրգանական աշխարհի զարգացման հիմքը: Ժառանգականությունը նյութական և ֆունկցիոնալ կապ է հաստատում սերունդների միջև, մինչդեռ փոփոխականությունը ապահովում է տեսակը կազմող անհատների միջև տարբերությունները և պոպուլյացիաների հետերոգենությունը:

Ժառանգականության դիսկրետ միավորի՝ գենի գոյությունը հաստատվել է դեռևս 1865-ին գ. Մենդելի կողմից: **Գենը** կենդանի մատերիայի ունիվերսալ կառուցվածքային միավոր է, որն իրենում պարփակված, կոդավորված ինֆորմացիայի շնորհիվ ապահովում է կյանքի գոյատևման բոլոր ձևերի միասնությունը ու բազմազանությունը, նրա անընդհատությունն ու էվոլյուցիան: Գենը կյանքի միակ կրողն ու պահպանողն է, իսկ նրա արտադրանքը՝ սպիտակուցը, պայմանավորում է կյանքի գոյատևման ձևը և եղանակը: Գենը ներկայացված է նուկլեինաթթվի շղթայով և իրականացնում է հետևյալ ֆունկցիաները՝

- ◆ ժառանգական անընդհատություն,
- ◆ օրգանիզմի կառուցվերի և ֆունկցիաների կառավարում,
- ◆ օրգանիզմների էվոլյուցիա:

Ժառանգական անընդհատությունը ապահովում է ԴՆԹ-ի ռեպլիկացիայով: Օրգանիզմի կառուցվերի և ֆունկցիաների կառավարումը իրականացվում է գենետիկական կոդի օգնությամբ, որը նուկլեինաթթվում ժառանգական ինֆորմացիայի գրանցումն է նուկլեոտիդների հաջորդականության տեսքով: **Գենետիկական կոդի**

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

միավոր կողոնն է, որը ներկայացված է նույնականացների տրիպականությամբ:

Կենդանի էակի բոլոր գեների ամբողջությունը, որը բնութագրվում է կառուցվածքային կազմավորման որոշակի նակարդակով և էքսպրեսիայի յուրահատկություններով, այսինքն գեներում գրանցված ինֆորմացիայի իրականացմամբ (արտահայտումը հատկանիշի ձևով) անվանում ենք գենետիկական համակարգ: Այն օժտված է բացառիկ հատկություններով, ինչը առավելապես պայմանավորված է ՂՆԹ-ի երկրել կառուցվածքով: Այդ հատկություններով է պայմանավորված գենետիկական համակարգի ֆունկցիաները՝

- ◆ ինքնակրկնապատկման,
- ◆ ինքնարտահայտման՝ էքսպրեսիայի՝ (Ի)ՂՆԹ-ի սինթեզի կարգավորման շնորհիվ,
- ◆ ինքնանորացման՝ մուտացիաների և ռեկոնֆինացիաների շնորհիվ,
- ◆ ինքնապաշտպանական՝ ռևերսիայի, ռեպարացիայի, սուպրեսիայի մեխանիզմների օգնությամբ:

**ԳԵՆՈՏԻՎՈՐ** կոնկրետ առանձնյակի անհատական գեների ամբողջությունն է: Այն ներկայացված է գեների համակարգով, որը սահմանում է դրանում գրանցված ինֆորմացիայի ֆենոտիպային արտահայտման պոտենցիալ հնարավորությունը որոշակի հատկանիշների ձևով: **ՖԵՆՈՏԻՎՈՐ** տվյալ առանձնյակի գենետիկորեն դետերմինացված հատկանիշների ամբողջությունն է, այսինքն գենոտիվի անհատական արտահայտումը: Գոյատևման պայմանների փոփոխության դեպքում ֆենոտիվը կարող է փոփոխվել առանց գենոտիվի փոփոխման:

### 7.2. ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ

#### ԱՊԱԽԶԱՋԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բակտերիաների գենետիկական համակարգը ի տարբերություն է ուկարիումների՝ ունի որոշ առանձնահատկություններ՝

◆ Բակտերիաների քրոմոսոմը, ինչպես նաև պլազմիդները ազատորեն տեղակայված են ցիտոպլազմայում, դրանից սահմանագատված չեն որևէ թաղանթով և որոշակի ռեցեպտորներով կապված են ցիտոպլազմատիկ թաղանթին: Քանի որ քրոմոսոմի երկարությունը անհամենատ գերազանցուն է բակտերիային բջջի երկարությունը, այն ցիտոպլազմայուն դասավորվում է կոմպակտ՝ 12-80 գալարների ձևով, որոնք միանում են նույլեոիդի կենտրոնում, հատուկ դասի ՈՆԹ-ով: Այսպիսի համակարգված դասավորությունը ապահովում է քրոմոսոմի առանձին օպերոնների (օպերոնը քրոմոսոմի ֆունկցիոնալ միավորն է) անընդհատ տրանսկրիպցիան և չի խոչընդոտում դրա ռեպլիկացիային:

◆ Չնայած բակտերիաները հապլիդ օրգանիզմներ են (ունեն մեկ քրոմոսոմ), դրանցում ՂՆԹ-ի պարունակությունը հաստատուն չէ, այն բարենպաստ պայմաներում կարող է հասնել 2,4,6 և նույնիսկ 8 քրոմոսոմին համարժեք քանակների: Մնացած բոլոր կենդանի էակների մոտ ՂՆԹ-ի պարունակությունը հաստատուն է և կրկնապատկվում է միայն կիսվելուց առաջ: Այս առանձնահատկության կենսաբանական նշանակությունն այն է, որ կարգավորվով սեփական գեների պատճենների պարունակությունը, բակտերիաները միաժամանակ կարգավորում են իրենց բազմացման արագությունը՝ ըստ աճի պայմանների: ՂՆԹ-ի պարունակության մեծացմանը զուգահեռ՝ մեծանում է նաև ռիբոսոմների քանակը: Այս ամենի շնորհիվ ստեղծվում են անհրաժեշտ պայմաններ մի քանի գեների պատճենների միաժամանակյա տրանսկրիպցիայի և տրանսլյացիայի համար, մեծանում է բջջային և ենթաքաջային բոլոր կառույցների բիոսինթեզի գումարային արագությունը, համապատասխանաբար՝ բակտերիաների բազմացման արագությունը: Բակտերիաների կիսման ցիկլը՝ գեներացիայի ժամանակը, կրծատվում է և մի քանի ժամից հասնում է 20-30 րոպեի: Բազմացման արագությունը պայմանավորում է բնության մեջ բակտերիաների տվյալ տեսակի մեջ քանակներով կուտակման հնարավորությունը, ինչը և միլիոնավոր տարիներ դրանց գոյատևելու և տեսակը պահպանելու

## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵՎԱՍՈՒԹՅՈՒՆ

գլխավոր նախապայմանն է: Բակտերիային պոպուլյացիայի գոյատևման մյուս, ոչ պակաս կարող հանգանաքը հետերոգենությունն է, այսինքն բակտերիային պոպուլյացիայում փոփոխված հատկանիշներով առանձնյակների առկայությունը, որոնք հետերոգեն են բակտերիային բջիջների ճնշող մեծամասնության նկատմամբ և առավել լավ են հարմարվում միջավայրի փոփոխված պայմաններին:

◆Գենետիկական ինֆորմացիայի փոխանցումը բնական պայմաններում բակտերիաների մոտ իրականանում է ոչ միայն ուղղահայաց՝ մայր բջջից դուստր բջջին, այլև հորիզոնական՝ կոնյուգացիայի, տրանսդուկցիայի, տրանսֆորմացիայի մեխանիզմներով;


◆Բակտերիաների մոտ բացի քրոնոսումային գենոմից, հաճախ առկա են նաև լրացուցիչ, արտաքրոնոսումային գենետիկական ինֆորմացիա կրող ԴՆԹ-ի շղթաներ՝ պլազմիդներ, տրանսպոզոններ, *Is*-հաջորդականություններ, որոնք իրարից տարբերվում են մոլեկուլային նաևսայով, դրանցում կորավորված ինֆորմացիայի ծավալով, ինքնուրույն ռեպլիկացիայի ունակությամբ ու այլ հատկանիշներով։ Դրանք բակտերիային բջիջների համար կենսական նշանակություն չունեն, քանի որ ո՞չ պլաստիկ և ո՞չ էլ էներգետիկ փոխանակությունը ապահովող ֆերմենտների սինթեզի մասին ինֆորմացիա չեն կրում, սակայն բակտերիաներին օժտում են որոշակի սելեկտիվ առավելություններով՝ օրինակ հակաբիոտիկակայունությամբ։

### **7.3. ՊԼԱԶՄԻԴՆԵՐ, ՏՐԱՆՍՊՈԶՈՆՆԵՐ, *Is*-ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Պլազմիդները բակտերիային բջջում գտնվում են կամ ազատ, կամ քրոնոսումի հետ կապված (ինտեգրացված) (նկ.41) և կարող են ռեպլիկացիայի ենթարկվել երկու վիճակում էլ, թե՛ ավտոնոմ և թե՛ ինտեգրացված։ Դրանք կատարում են ռեգուլյատոր և կոդավորող ֆունկցիաներ։ Ռեգուլյատոր ֆունկցիան արտահայտվում է նրանով,

## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

որ ինտեգրվելով ռեալիկացիայի անընդունակ, վնասված բակտերիային գենոմի կազմի մեջ՝ վերականգնում էն նրա ֆունկցիան իրենց սեփական ռեալիկոնի հաշվին: **Կողավորող** ֆունկցիան արտահայտվում է պլազմիդի ավտոնոմ վիճակում դրանում գրանցված ինֆորմացիայի իրագործմանը և նոր հատկանիշի առաջացմանը:



**Նկ.41. F այլազմիդի ֆիզիոլոգիական կարգավիճակները**

Ինտեգրված պլազմիդների ավտոնոմ վիճակի անցնելը և դրանցում գրանցված ինֆորմացիայի ռեալիկացիան հաճախ պայմանավորված է արտաքին միջավայրի ինդուկցող ազդեցություններով: Ավտոնոմ ռեալիկացիան ապահովվում է դրանց գոյատևումը և փոխանցումը սերունդներին: **Պլազմիդների** ինտեգրացումը պրոֆագերի նման իրականանում է միայն բակտերիային քրոմոսոմի հոնդող տեղամասերում, իսկ տրամսպոզոնների և **I**-հաջորդականությունների ինտեգրացումը՝ պատահած տեղամասում: Ներկայումս նկարագրված է 2 տասնյակից ավելի պլազմիդներ՝ հակաբիոտիկակայունության (R), պտղաբերության (F), պաթոգենության, բակտերիոցինային և այլն:

**Տրամսպոզոնները** 2000-20500 գույգ նույլեուտիդներից բաղկացած ՂՆԹ-ի շղթաներ են, որոնք կրում են ինֆորմացիա տրամսպոզիցիայի համար: Բակտերիային ՂՆԹ-ին ինտեգրվելու դեպքերում դրանք առաջացնում են դուալիկացիաներ, իսկ տեղաշարժվելիս՝ դելեցիաներ և ինվերսիաներ: Բակտերիային բջջի քրոմոսոմի հետ ռեալիկացիայի ենթարկվելով, դրանց որոշ պատճեններ կարող են միգրացվել պլազմիդների և ՂՆԹ ֆագերի մեջ, իսկ վերջիններս թափանցելով այլ բակտերիային բջիջներ, նպաստում են տրամսպոզոնների տարածմանը պոպուլյացիայում:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵՎԱՍՈՒԹՅՈՒՆ

Մրանից հետևում է, որ դրանց կարևոր հատկությունն է մի ռեպլիկոնից (քրոմոսոմային ԴՆԹ) մյուսը (ալազմիդ) տեղափոխվելու ունակությունը: Բացի այդ, որոշ տրանսպորներ ինչպես և պլազմիդները, օժտված են կոդավորող և կարգավորող ֆունկցիաներով: Կենդանիների և մարդու հյուսվածքային բջիջներում ինտեգրվելու դեպքում դրանք ննանվում են պրովիրուսներին: Տրանսպորները կարող են գտնվել նաև ազատ վիճակում օղակածն նոլեկուլի տեսքով, սակայն ի տարբերություն պլազմիդների՝ այդ վիճակում դրանք ռեպլիկացիայի ունակ չեն:

**Ig-հաջորդականությունները** (անգլ. insertion-ներդրված, sequence-hաջորդականություն) 1000-2000 նուկլեոտիդներից կազմված ԴՆԹ-ի շղթաներ են, որոնցում գրանցված է ինֆորմացիա միայն իրենց տրանսպորտիչայի համար, այսինքն ԴՆԹ-ի տարբեր տեղամասեր տեղափոխվելու: Այսիսի տեղաշարժերով պայմանավորված դրանք կարող են կատարել հետևյալ ֆունկցիաները՝

◆ տրանսպորների, պլազմիդների և չափավոր ֆագերի փոխազդեցության համակարգում ինչպես իրար միջև, այնպես էլ բակտերիային քրոմոսոմի հետ, դրանց հետագա ռեկոնֆինացիայի ապահովում,

◆ կարգավորող,

◆ մուտացիաների առաջացում՝ դելեցիաների, դուպլիկացիաների և ինվերսիաների ձևով:

Մրանք ինքնուրույն չեն ռեպլիկացվում և ազատ վիճակում չեն հայտնաբերվում:

### 7.4. ՄԱՍՐԵՆԵՐԻ ՓՈՓՈԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՎԵՐԸ

Կառուցվածքային առանձնահատկություններով և կյանքի կարճատևությամբ պայմանավորված՝ բակտերիաները առավել արագ են ենթարկվում փոփոխականության, քան մնացած օրգանիզմները: Տարբերում են մանրէների փոփոխականության հետևյալ ձևեր՝ **գենոտիպային և ֆենոտիպային**: Միկրոօրգանիզմների որևէ հատկանիշի կամ հատկանիշների ֆենոտիպային փոփոխությունը, որը չի

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

ուղեկցվում ՂՆԹ-ի առաջնային կառուցվածքի փոփոխությամբ, անվանում են **մոդիֆիկացիա**: Այս առաջանում է որպես աղապտատիվ ռեակցիա առանձին բակտերիային բջիջների կամ ամբողջ պոպուլյացիաների մոտ՝ ի պատասխան միջավայրի փոփոխվող պայմանների: Այսպիսի փոփոխականությունը հնարավորություն է ընձեռում միկրոբային պոպուլյացիային արագորեն հարմարվելու նոր պայմաններին և պահպանելու իր կենսունակությունը համապատասխան միջավայրում: Մոդիֆիկացիաները արտահայտվում են մորֆոլոգիական, կենսաքիմիական և շատ այլ հատկանիշների փոփոխությամբ, հետագայում այն առաջացնող ազդակի վերացման դեպքում առաջնային ֆենոտիպին վերադառնալու հնարավորությամբ, քանի որ վերանում է տվյալ մոդիֆիկացիայի պահպաննան անհրաժեշտությունը: Մոդիֆիկացիաների կենսաքիմիական հիմքը կազմում է ֆերմենտների ինդուկցված սինթեզը, ինչը ապահովվում է ռեգուլյատոր գեների կողմից վերահսկվող, կառուցվածքային գեների ինդուկցիայով և ռեպրեսիայով: Մոդիֆիկացիաները ժառանգաբար չեն փոխանցվում:

**Գենոտիպային** փոփոխականության հիմքում ընկած են մուտացիաները և գենետիկական ռեկոմբինացիաները, հատկապես ռեկոմբինացիաները, որոնք ընթանում են տրանսպորտների և Իշխաջորդականությունների մասնակցությամբ: **Մուտացիան գենոտիպի**, այսինքն ՂՆԹ-ի առաջնային կառուցվածքի փոփոխությունն է, որն առաջացնում է ժառանգականորեն ամրագրված հատկանիշի, կամ հատկանիշների փոփոխություն: Մուտացիաները դասակարգվում են՝

◆ Ըստ ծագման տարբերում են **սպոնտան և ինդուկցված** մուտացիաներ: **Սպոնտան** մուտացիաները կազմում են բնական ֆոնը և առաջանում են միկրոբային պոպուլյացիայում *in vitro* և *in vivo* առանց որևէ հատուկ ազդեցության, ամենատարբեր պատճառներից: Սպոնտան մուտացիաների միջին հաճախականությունը կազմում է  $1:10^{-6}$  (1000000 առանձնյակներից մեկ մուտացիայի ենթարկված բջիջ): Բնական ֆոնի փոփոխության պատճառ կարող է

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵՎԲԱՆԻԹՅՈՒՆ

հանդիսանալ ռեպարացիոն ֆերմենտների աշխատանքի սխալը, ՂՆԹ-ի ռեպլիկացիայի ժամանակ ՂՆԹ-պոլիմերազայի սխալը, որոնց հետևանքով սինթեզվող դրուտը շղթայում մեկ ազոտային հիմքի փոխարեն կարող է միանալ այլ, մայր շղթային ոչ կոմպլեմենտար ազոտային հիմք: Բնական ֆոնի փոփոխության պատճառ կարող են դառնալ նաև ինսերտացիոն մուտացիաները, որոնք առաջանում են միկրոբային բջջի գենոմ Is-հաջորդականությունների, տրամապողոնների և պլազմիդների ինտեգրացիայի հետևանքով, ընդ որում մուտացիայի ֆենոտիպը պայմանավորված է ինտեգրացման տեղակայմանք, եթե այն պրոմոտորի շրջակայքում է, ապա խանգարվում է ռեգուլյատոր գենի ֆունկցիան, իսկ եթե մոտ է կառուցվածքային գենին, ապա դրանում կոդավորված պրոդուկտի սինթեզը: Բակտերիաները կարող են օժտված լինել մուտատոր գեներով, որոնց առկայությամբ մուտացիաների հաճախականությունը մեծանում է 100 և ավելի անգամ: **Ինդուկցված** անվանում են այն մուտացիաները, որոնք ստանում են էքսպերիմենտում, որևէ մուտագենի ազդեցությանք:

◆ Ըստ ՂՆԹ-ի առաջնային կառուցվածքի փոփոխության՝ տարբերում են **գենային** և **քրոմոսոմային** մուտացիաներ: Առաջինները հաճախ կետային մուտացիաներ են, որոնք իրենցից ներկայացնում են ՂՆԹ-ի շթայում ազոտային հիմքի ներդրում, անկում և փոխարինում: Վերջիններս կարող են լինել **պարզ**, երբ ՂՆԹ-ի շթայում պուրինային հիմքը փոխարինվում է պուրինայինով, իսկ պիրիմիդինայինը՝ պիրիմիդինայինով և **բարդ**՝ պուրինային հիմքը փոխարինվում է պիրիմիդինայինով և հակառակը, ինչն առաջացնում է կոդոնի փոփոխություն, որի հետևանքով մի ամինաթթվի փոխարեն կոդավորվում է մեկ այլ ամինաթթու, կամ առաջանում է **անիմաստ կոդոն**, որը չի կոդավորում ոչ մի ամինաթթու: Նույնականացնելու անկանությունը կամ ներդրմամբ պայմանավորված մուտացիաները պայմանավորում են հետագա բոլոր կոդոնների փոփոխությունը (հաշվան տեղաշարժով մուտացիաներ): Որևէ գենում կետային մուտացիա կրող միկրոօրգանիզմի նույն գենում կարող է առաջանալ **երկրոր-**

դային մուտացիա, որի հետևանքով կվերականգնվի (ռեբրսիա) վայրի ֆենոտիպը: Առաջնային մուտացիան, որն առաջացնում է մուտանտ ֆենոտիպ, անվանում են **ուղղակի**, իսկ մուտացիան, որը պայմանավորում է վերադարձը վայրի շտամին՝ **հակադարձ մուտացիա**: Այն դեպքում, եթե վերականգնվում է և՛ գենոտիպը, և՛ ֆենոտիպը, անվանում են **իսկական ռեվերսիա**: Միայն ֆենոտիպի վերականգնումը կարող է իրականանալ **սուպրեսիայի**, այսինքն մուտանտ ֆենոտիպի ճնշման արդյունքում: Սուպրեսիան կարող է լինել **Աերգենային**, եթե ԴՆԹ-ի շղթայի մի հատվածում տեղի է ունենում առաջնային մուտացիա նույնականացնելու անկմանը կամ **Աերդրմանը**, իսկ նույն գենի մեկ այլ հատվածում՝ հակառակ բնույթի երկրորդային մուտացիա, որի արդյունքում վերականգնվում է հաշվան հաջորդականությունը: Առաջնային մուտացիոն փոփոխությունները ճնշող արտագենային **սուպրեսիաների** դեպքում երկրորդային մուտացիան իրականանում է (S)ՈՆԹ-ի սինթեզը կողավորող գեներում՝ **«սուպրեսոր գեն»**: Այսպիսի մուտացիայի դեպքում փոփոխված (S)ՈՆԹ-ն սինթեզվող պոլիպեպտիդային շղթա է հասցնում անհրաժեշտ ամինաթթուն, որի արդյունքում վերականգնվում է ֆենոտիպը, առանց գենոտիպի վերականգնման: **Քրոմոսոմային մուտացիաները** ԴՆԹ-ի առանձին հատվածների խոշոր վերակառուցումներ են: Դրանք առաջանում են ԴՆԹ-ի մի հատվածի անկման (**դելեցիա**), 180°-ով շրջման (**ինվերսիա**) կամ կրկնման (**դուպլիկացիա**) հետևանքով: Քրոմոսոմային մուտացիաների մի տարատեսակ է **ինսերտացիոն մուտացիան**:

♦ **Ֆենոտիպային հետևանքներով** մուտացիաները տարբերակվում են երեք խմբի՝ նեյտրալ, պայմանական լետալ և լետալ: **Նեյտրալ** մուտացիաները ֆենոտիպորեն որևէ հատկանիշի փոփոխությամբ չեն արտահայտվում, քանի որ դրանք սինթեզվող սպիտակուցի ֆունկցիոնալ ակտիվության վրա նշանակալի ազդեցություն չեն ունենում: Մուտացիաները, որոնք նպաստում են սինթեզվող ֆերմենտի ֆունկցիոնալ ակտիվության փոփոխությանը, բայց ոչ կորստին, անվանում են **պայմանական լետալ**: **Լետալ** մուտացիա-

## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱՎԱՆ ՄԱՍՐԵՎԱՍՈՒԹՅՈՒՆ

Աերը բնութագրվում են բջջի համար կենսական նշանակություն ունեցող ֆերմենտի կամ ֆերմենտների սինթեզի արգելակմամբ:

◆ **Ըստ փոփոխված հատկանիշի բնույթի՝** մուտացիաները դրսենորվում են մորֆոլոգիական հատկանիշների փոփոխությամբ, առևկսուրոֆուրյան անցմամբ, դեղորայքակայունության ձեռք բերմամբ և այլն:

Փոփոխականության յուրահատուկ ձև է բակտերիաների **R-S դիսցուլմբ**: Փոփոխությունները, որոնք առաջացնում են R-S դիսցուլմ, դասվում են **իմսերտացիոն մուտացիաներին**, քանի որ դրանք հետևանք են բակտերիային քրոմոսոմում ժառանգականության արտաքրոնոսմային գործնների ներդրման: Եթե այդ մուտացիան առաջանում է գրամ բացասական բակտերիաների LՊՍ-ի պոլիսախարիդային դետերմինանտ խմբերի կառուցվածքը վերահսկող գեներում, ապա առաջանում են անհարթ եզրերով և մակերեսով գաղութներ, միևնույն ժամանակ փոխվում են դրանց անտիգենային հատկությունները և խիստ իջնում է վիրուլենսությունը: R-S դիսցուլման կենսաբանական նշանակությունը բակտերիաների որոշակի սելեկտիվ հատկությունների ձեռքբերումն է, որն ապահովում է նրանց բարձր կենսունակությունը օրգանիզմում կամ արտաքին միջավայրում: S-ձևերն օժտված են բարձր կայունությամբ ֆազոցիտոզի և արյան շիճուկի բակտերիցիդ ազդեցության նկատմամբ: R-ձևերն առավել կայուն են արտաքին միջավայրի տարբեր աղդակների նկատմամբ: Բակտերիաների R-S դիսցուլմը հաճախ դժվարացնում է ինֆեկցիոն հիվանդությունների բակտերիաբանական ախտորոշումը:

Պրոկարիոտ բջիջներում գենետիկական **ռեկոմբինացիաները** իրականանում են՝

◆ **Ներգենոմային վերակառուցումների** հետևանքով, որի ելքունը գեների տեղակայման փոփոխությունն է քրոմոսոմի շրջանակներում:


◆ **Ունորի քրոմոսոմային գեների ներթափանցմամբ** ռեցիպիենտ բջիջ, ինչը պայմանավորում է **ոչ լրիվ գիգոտի՝ մերոգիգոտի** ձևավո-

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՍ ՄԱՍՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

Իումը: Վերջինիս գենոտիպը ներկայացված է հիմնականում ռեցի-ախենտի գենոտիպով, ավելացրած դրոնորի ՂՆԹ-ի ֆրազմենտը:

**Ցրոնոսոմային** գեների փոխանցումը մի բակտերիային բջջից մյուսին իրականանում է **տրանսֆորմացիայի**, տրանսդուկցիայի և կոնյուգացիայի ճանապարհներով, իսկ ալազմիդային գեներինը՝ **տրանսդուկցիայով** և **կոնյուգացիայով**: Գենետիկական ռեկոնֆինացիաներն ընթանում են մի շարք ֆերմենտների մասնակցությամբ, որոշակի գեների սահմաններում յուրահատուկ րես-գեների օգնությամբ, որոնք պայմանավորում են բակտերիաների ռեկոնֆինացիոն ունակությունները:

**Տրանսֆորմացիան** գենետիկական նյութի՝ ՂՆԹ-ի ֆրազմենտի անմիջական փոխանցումն է դրոնորից ռեցիպիենտ բջջին (նկ. 42), որն առաջին անգամ իրականացրել է Ֆ.Գրիֆիտսը: Դոնոր ՂՆԹ-ից ռեցիպիենտ բջջին սովորաբար փոխանցվում է միայն մեկ գեն: Դա



**Նկ.42. Տրանսֆորմացիա**


պայմանավորված է ՂՆԹ-ի տրանսֆորմացնող ֆրազմենտի երկարությամբ: Սովորաբար այն չի գերազանցում բակտերիային քրոնոսոմի  $1/100$  մասը, այսինքն կարող է ընդգրկել մեկ կամ մի քանի գեն: Տրանսֆորմացիան առավել արդյունավետ ընթանում է տարբեր գենոտիպ ունեցող միևնույն տեսակի բակտերիաների միջև, ընդ որում ՂՆԹ-ի տրանսֆորմացնող ազդեցությունը դրսնորվում է բակտերիային պոպուլյացիան կազմող ոչ բոլոր բջիջների վրա: Բջիջները, որոնք ընդունում են դրոնորական ՂՆԹ, անվանում են

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

**Կոմպետենտ:** Կոմպետենտություն բակտերիային բջջում առաջանում է հիմնականում բազմացման լոգարիթմական ֆազայի վերջում, ինչը բացարձություն է ՂՆԹ-ի բարձր պոլիմերային ֆրագմենտների համար բակտերիային բջջապատի թափանցելիության մեջացմանը: Տրամսֆորմացիայի պրոցեսը կարելի է բաժանել երեք ֆազայի՝

- ◆ ղոնոր ՂՆԹ-ի աղսորբցիա ռեցիպիենտ բջջի մակերեսին;
- ◆ ՂՆԹ-ի ներթափանցում ռեցիպիենտ բջիջ;
- ◆ ՂՆԹ-ի միացում բակտերիային քրոմոսոմի հոմոլոգ հատվածին և հետագա ռեկոնֆինացիա:

**Տրամսդրուկցիան** գենետիկական նյութի փոխանցումն է մեկ բակտերիայից մյուսին ֆագերով (Ակ.43):



**Ակ.43. Տրամսդրուկցիա**

Գենետիկական փոփոխականության այս ձևը հայտնաբերել են Ն. Ցինդերոնը և Զ.Լեդերբերգը 1951-ին: Տարբերում են տրամսդրուկցիայի երեք տիպ՝

◆ **Ոչ սպեցիֆիկ** տրամսդրուկցիան իրականանում է պրոդուկտիվ փոխագրեցության դեպքում: Ֆագի ռեպրոդուկցիայի պրոցեսում, ինքնահավաքման ժամանակ, ֆագի գլխիկ է ներթափանցում թիրախ բջջի ՂՆԹ-ի որևէ պատահական հատված, որը ֆագի հետ թափանցելով ռեցիպիենտ բջիջ, ինտեգրվում է վերջինիս քրոմոսոմի հոմոլոգ հատվածում: Ֆագի ՂՆԹ-ն չի մասնակցում ռեկոնֆինանտի՝ տրամսդրուկտանտի առաջացմանը, այսինքն հանդես է գալիս միայն որպես փոխանցող:


◆ **Սպեցիֆիկ** տրամսդրուկցիան բնորոշվում է ֆագի ունակությամբ տեղափոխելու որոշակի կոնկրետ գեներ ղոնոր բակտերիա-

## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

յից ռեցիպիենտին և ֆագի նուկլեինաթթվի հետ ինտեգրվելու նրա քրոմոսոմում: Սա տեղի է ունենում լիզոգեն բակտերիաներում, երբ բակտերիային գենոմից պրոֆագի անջատման ժամանակ անջատվում են նաև հարևանությամբ տեղակայված բակտերիային քրոմոսոմի որոշ ֆրագմենտներ: Ի դեպ այս պրոցեսում ֆագը կարող է կորցնել իր ԴՆԹ-ի մի հատվածը և դառնալ դեֆեկտային, ինչպիսին է gal-գենը տեղափոխող λ-տրանսդուկցող ֆագը՝ λ<sup>gal</sup>, որը վերահսկում է գալակտոզի ֆերմենտացումը: Դեֆեկտային ֆագով լիզոգենացված բակտերիաները համանուն վիրուլենտ ֆագով չեն վարակվում:

♦Աբորտիվ տրանսդուկցիայի դեպքում ֆագի հետ եկած ԴՆԹ-ի ֆրագմենտները չեն ինտեգրվում ռեցիպիենտ բջջի քրոմոսոմում, այլ տեղակայվում են ցիտոպլազմայում և կարող են այդ վիճակում գործել: Այդպիսի բջջի կիսման ժամանակ տրանսդուկցված ԴՆԹ-ի ֆրագմենտը փոխանցվում է դուստր բջիջներից միայն մեկին, այսինքն ժառանգվում է միակողմանիորեն և բջջի հետագա սերունդներում ի վերջո կարող է անհետանալ:

Կոմյուգացիան գենետիկական նյութի փոխանցումն է դոնոր բջիջից ռեցիպիենտին խաչաձևաման ժամանակ (Նկ.44):



Նկ.44. Կոմյուգացիա

Այս երևույթն առաջին անգամ նկարագրել են Դ. Լեդերբերգը և Է.Տեյսումը 1946-ին: Դետագայում պարզվել է, որ այս պրոցեսում

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵՎԱԼՈՒԹՅՈՒՆ

գենետիկ նյութի դոնոր են F պլազմիդ (սեռական գործոն) կրող բջիջները՝ F<sup>(+)</sup> բջիջ: F պլազմիդից գուրք բջիջները նշվում են որպես F<sup>(-)</sup> բջիջներ: Այս երկու տիպի բջիջների խաչաձևման դեպքում սեռական գործոնը փոխանցվում է մոտ 100% հաճախականությամբ, դոնորի քրոմոսոմից անկախ: Արդյունքում գրեթե բոլոր ռեցիպիենտ բջիջները ստանում են սեռական գործոն և դաշնում են F<sup>(+)</sup> բջիջներ:


F պլազմիդների կարևոր հատկությունը դրանց ունակությունն է ինտեգրվելու բակտերիային բջջի քրոմոսոմի համապատասխան տեղամաս և դառնալու դրա մասը, ինչպես չափավոր ֆագի դեպքում: Որոշ դեպքերում F պլազմիդը, անջատվելով բակտերիային քրոմոսոմից, ֆագի ննան պոկում է հարևան գեները: Այդպիսի պլազմիդների անվան մեջ նշվում է նաև նրա կազմի մեջ մտած բակտերիային գենը: Կոնյուգացիայի առաջին էտապը դոնոր բակտերիայի անրացումն է ռեցիպիենտ բջիջն սերս պիլիներով: Այնուհետև երկու բջիջների միջև առաջանում է կոնյուգացիոն կամրջակ, որի միջոցով դոնոր բջիջը ռեցիպիենտին կարող է փոխանցվել F գործոնը և այլ պլազմիդներ, որոնք բակտերիային բջջում գտնվում են ավտոնոմ վիճակում:

**Կոնյուգացիայի դեպքում բակտերիային քրոմոսոմի փոխանցման համար անհրաժեշտ է ՂՆԹ-ի շղթայի երկփեղկում և դրանցից որևէ մեկի հատում, ինչը իրականանում է F պլազմիդի ինտեգրման տեղամասում էնդոնուկլեազների մասնակցությամբ: Բակտերիային ՂՆԹ-ից անջատված շղթայի պրոքսիմալ հատվածը կամրջակով անցնում է ռեցիպիենտ բջիջն և ինտեգրվելով դրա քրոմոսոմում անմիջապես վերակառուցվում է մինչև երկրել կառուցվածքի: Հետևաբար, կոնյուգացիայի դեպքում փոխանցվում է ՂՆԹ-ի միայն մեկ թելը, իսկ երկրորդը վերակառուցվում է ռեցիպիենտ բջջում:**

Այսպիսով, F պլազմիդի ինտեգրումը բակտերիային բջջի քրոմոսոմում, նպաստում է ՂՆԹ-ի շղթայի երկփեղկմանը, ինչը ապահովում է դրանցից մեկի փոխանցման հնարավորությունը ռեցիպիենտ բջիջ: Դոնոր բակտերիաների այդպիսի շտամները

## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵԱԲԱՆԻԹՅՈՒՆ

ստացել են **Hfr** շտամներ (անգլ. high frequency of recombination-ռեկոմբինացիայի բարձր հաճախականություն) անվանումը (Ըկ.45):



Ըկ.45. Hfr շտամի կոնյուգացիան

Hfr շտամների և  $F^{(+)}$  բակտերիաների խաչաձևան ժամանակ  $F$  գործողը որպես կանոն չի փոխանցվում, քանի որ այն տեղակայված է բակտերիային քրոմոսոմի դիստալ հատվածում: Բարձր հաճախականությամբ փոխանցվում են միայն բակտերիային քրոմոսոմի գեները:

## Գլուխ 8

### ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԻՄԻՉՈԹԵՐԱՊԻԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Քիմիոթերապիան տարբեր ծագման ինֆեկցիոն հիվանդությունների բուժումն է, մակրոօրգանիզմում հանապատասխան հարուցիչների աճը և բազմացումը ընտրողաբար ճնշող պրեպարատների (քիմիոթերապևտիկ պրեպարատներ) օգնությամբ։ Ներկայումս հականանրեային ազդեցությամբ օժտված հսկայական քանակությամբ պրեպարատներ կան, որոնք միմյանցից տարբերվում են ծագմամբ, քիմիական բնույթով, ազդեցության սպեկտրով ու մեխանիզմով և այլ հատկանիշներով։ Ինֆեկցիոն հիվանդությունների բուժման և կանխարգելման բնագավառում գործնական կիրառման համար դրանք պետք է օժտված լինեն մի շարք հատկություններով՝

**1.Տոքսիկ ազդեցության բացակայություն** մարդու օրգանիզմի վրա, ինչը որոշվում է քիմիոթերապևտիկ ինդեքսի (ՔԻ) օգնությամբ՝ ՔԻ=նվազագույն թերապևտիկ դրույթ / օրգանիզմի համար առավելագույն տանելի դրույթ < 1։ Քիմիոթերապևտիկ ինդեքսի մեկից փոքր լինելու դեպքում միայն պրեպարատը կարելի օգտագործել համապատասխան ինֆեկցիոն հիվանդության բուժման նպատակով։

**2.Բակտերիցիդ** կամ **բակտերիոստատիկ** ազդեցություն։ Առաջինը պայմանավորում է միկրոօրգանիզմների ոչնչացումը, երկրորդը՝ դրանց աճի և բազմացման լիովին կամ մասնակի ճնշումը, սակայն պետք է նկատի ունենալ, որ բակտերիոստատիկ ազդեցությունը ևս ի վերջո հանգեցնում է մանրէների վերացման։

**3.Արտահայտված ընտրողական ազդեցություն** միկրոօրգանիզմի վրա, ինչը որոշվում է հականանրեային սպեկտրով։ Որոշ միկրոօրգանիզմներ օժտված են ազդեցության լայն սպեկտրով, նյոււնները ազդում են կրնկրետ տեսակների վրա։

## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

4. Դրանց երկարատև կիրառությունը հնարավորինս չպետք է նպաստի մանրէների հակարիոտիկակայուն շտամների առաջացմանը:

### 8.1. ՔԻՄԻՈԹԵՐԱՊԵՎՏԻԿ ՊՐԵՊԱՐԱՏՆԵՐԻ

#### ՉԻՍՆԱԿԱՆ ԽՄԲԵՐԸ

Առաջին քիմիոթերապևտիկ պրեպարատները սինթեզվել են Պ.Էրլիխի կողմից (1908թ.), որոնք մկնդեղի ածանցյալներ էին (սալվարսան, նեոսալվարսան) և կիրառվում էին սիֆիլիսի բուժման նպատակով: Հետագայում Գ. Դոմագկը առաջարկեց առաջին սուլֆանիլամիդային պրեպարատները (1935թ.)՝ սորեպտոցիդ, նորսուլֆազոլ և այլն: Վերջիններիս հակաբակտերիային ազդեցության մեխանիզմների ուսումնասիրությունները հանգեցրին հակամետաբուլիտների բազմազան խնճերի հայտնաբերմանը՝

◆ **Սուլֆանիլամիդներ՝** սուլֆազին, սուլֆադիմեզին, սուլֆապիրիդազին, սուլֆամոնոմետօքսին, սուլֆադիմետօքսին: Ուրոլոգիական պրակտիկայում ուրոսուլֆան: Համակցված պրեպարատներ՝ բակտրիմ (քսեպտոլ, սուլֆատոն), որը կազմված է սուլֆամետօքսազոլից և տրիմետոպրիմից:

◆ **Իզոնիկոտինաթթվի անալոգներ՝** իզոնիազիդ, ֆտիվազիդ, տուբազիդ, մետազիդ, էրիոնամիդ, պլորիոնամիդ, պարաամինոսալիցիլաթթվի ածանցյալներ:

◆ **Դևթ-տրոա նիտրոֆուրանի, նիտրոիմիդազոլի ածանցյալներ՝** ֆուրացիլին, ֆուրազոլիդոն, մետրոնիդազոլ, տիմիդազոլ:

◆ **Ուելիկացիան և տրանսկրիպցիան արգելակող խիմոլոնների խումբ՝** նալիդիկսաթթու, նորֆլոքսացին, օֆլոքսացին:

◆ **Էներգետիկ մետաբոլիզմը խաթարող օքսիլիմոլինի ածանցյալներ:**

◆ **Թիոսեմիկարբազոնի ածանցյալներ՝** ֆարինգոսեպտ:

Հակամետաբուլիտների ազդեցության հիմքում ընկած է դրանց կառուցվածքային նմանությունը բջիջների կենսական պրոցեսներն

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՄՐԵՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ապահովող կարևորագուն մետաբոլիտների հետ: Դրանց ներգրավումը մետաբոլիկ ռեակցիաներում պայմանավորում է համապատասխան քջիշների աճի ու բազմացման ճնշումը, այնուհետև մահը: Պետք է նշել, որ հակամետաբոլիտներն օժտված են հավասարազոր բջջասպան ազդեցությամբ թե՛ նամրեների և թե՛ նակրոօրգանիզմի քջիշների նկատմամբ, ինչը մեծապես խոչընդոտում է դրանց լայն կիրառությամբ:

XX դարի քառասունական թվականներից ինֆեկցիոն հիվանդությունների բուժման նպատակով սկսեցին կիրառվել մանրէային ծագման, արտահայտված հակաբակտերիային ազդեցությամբ օժտված պրեպարատներ՝ **հակաբիոտիկներ**, որոնց առաջին ներկայացուցիչը, պենիցիլում բորբոսանկերի կողմից սինթեզված, **պենիցիլին** պրեպարատն է (Ա. Ֆլեմինգ, 1929թ.): Ներկայումս հակաբիոտիկները բնորոշվում են, որպես բարձր ակտիվությամբ, միկրոօրգանիզմների վրա ընտրողական ազդեցությամբ օժտված, կենսաբանական ծագման (բակտերիաներ, ակտինոմիցետներ, սմկեր, բույսեր, կենդանիներ) միացություններ, որոնց քանակն անընդհատ ավելանում է ներառելով նաև բնական պրեպարատների սինթետիկ անալոգները: Սա պայմանավորում է հակաբիոտիկների դասակարգումը ըստ ծագման, քիմիական կառուցվածքի, ազդեցության մեխանիզմի, հակամանրէային սպեկտրի և այլն:

Ըստ ծագման հակաբիոտիկները լինում են **բնական** և **սինթետիկ**: Քիմիական կառուցվածքով դրանք տարրերակվում են մի շարք խմբերի, որոնցից առավել կարևորվում են՝

### **1.β Լակտամային հակաբիոտիկներ՝ ընդգրկում են երեք խումբ՝**

◆ **Պենիցիլիններ** - բենզիլպենիցիլին, մետիցիլին, օկսացիլին, կլոկսացիլին, նաֆցիլին, ամաֆցիլին, ամոքսացիլին, կարբենիցիլին, մեզլոցիլին, մեցիլամ:

◆ **Ցեֆալոսպորիններ** – ցեֆալորիդին (ցեպորին), ցեֆալօքսին, կեֆլին, ցեֆուրօքսին, կեֆզոլ, կլաֆորան, ֆորտում:

◆ **Ցիկլոսերին**:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՍՍ ՄԱՍՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

2. **Պոլիեններ** - նիստատին, լսորին, ամֆոտերիցին-Բ, գրիզեռ-ֆուլվին, կլոտրիմազոլ:
3. **Պոլիմիքսիններ** - պոլիմիքսին-Ա, պոլիմիքսին-Բ:
4. **Ամինոգլիկոզիդներ** - ստրեպտոմիցին, նեոմիցին, մոնոմիցին, կանամիցին, գենտամիցին, տոբրամիցին, սիղոմիցին, ամիկացին:
5. **Տետրացիկլիններ** – տետրացիկլին, տետրացիկլինի հիդրոքլորիդ, մորֆոցիկլին, մետացիկլին հիդրոքլորիդ, ռոնդոմիցին, վիբրոնմիցին:
6. **Մակրոլիդներ** – էրիթրոմիցին, օլեանդրոմիցին:
7. **Ոիֆամիցին** - ռիֆամիցին, ռիֆամպիցին:

Նշված հակաբիոտիկների բակտերիոստատիկ կամ բակտերիցիդ ազդեցությունը իրագործվում է միկրոօրգանիզմներում ընթացող կենսականորեն անհրաժեշտ տարբեր ֆունկցիաների (կենսաքիմիական ռեակցիաներ, մորֆոլոգիական կառույցների վերարտադրություն) նպատակային ընկճանամբ կամ արգելակումով, ինչը հնարավորություն է ընձեռում դասակարգելու այդ պրեպարատները՝ ըստ ազդեցության մեխանիզմների՝

◆ բջջապատի սինթեզի ճնշում՝ β-լակտամային հակաբիոտիկներ,

◆ ցիտոպլազմատիկ թաղանթի ֆունկցիայի խանգարում՝ պոլիեններ, պոլիմիքսիններ,

◆ սպիտակուցի սինթեզի ճնշում՝ ամինոգլիկոզիդներ, տետրացիկլիններ, մակրոլիդներ,

◆ նուկլեինաթթուների սինթեզի ճնշում՝ ռիֆամիցին:

Հակաբիոտիների ազդեցությունը միկրոօրգանիզմների վրա չափվում է ազդեցության միավորներով (ԱՄ), որը պարունակվում է պրեպարատի 1մլ լուծույթում կամ քիմիապես մաքուր պրեպարատի 1մկգ-ում։ Սովորաբար 1մկգ քիմապես մաքուր պրեպարատին համապատասխանում է ազդեցության մեկ միավոր՝ 1մկգ=1ԱՄ։ Ազդեցության սպեկտրով հակաբիոտիկները տարբերակվում են՝

1. Հակաբակտերիային

ա) լայն սպեկտր (ամինոգլիկոզիդներ, տետրացիկլիններ),

բ) նեղ սպեկտր (բենզիլաբենիցիլիններ):

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵՎԱՍՈՒԹՅՈՒՆ

2. Հակասնկային - ամֆոտերիցին, նիստատին,
3. Հակապարազիտային – ֆումագիլին,
4. Հակառաօրուցքային – ռուբոմիցին, միտոնիցին C,
5. Հակավիրուսային – օկտոլին, տետրոֆեխին, ռենանտադին, ացիկլավիր:

### **8.2. ՔԻՄԻՈԹԵՐԱՊԻԱՅԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Քիմիոթերապիայի զարգացման դեռևս սկզբնական ժամանակաշրջանում, նոր հակարիտուիկ պրեպարատների ստացումը, դրանց հզոր արսենալի ապահովումը և լայնածավալ կիրառությունը ինֆեկցիաների դեմ պայքարի բնագավառում, բացառիկ հաջողություններին զուգահեռ՝ արձանագրեցին որոշակի բարդություններ, որոնք կարող են դրսնորվել թե՝ մակրո- և թե՝ միկրոօրգանիզմներում՝

◆Տոքսիկ ազդեցություն, որը պայմանավորված է պրեպարատի քիմիական կառուցվածքով, դոզայով, ներարկման եղանակով, հիվանդի վիճակով և այլն՝

- ա) հեպատոտոքսիկ (տետրացիլիններ),
- բ) նեֆրոտոքսիկ (ամինոգլիկոզիդներ, պոլիեններ, գլիկոպեպտիդներ),
- գ) օսոտոքսիկ՝ նեյրոտոքսիկ (գլիկոպեպտիդներ, ամինոգլիկոզիդներ),
- դ) հեմատոտոքսիկ (տետրացիլիններ, սուլֆանիլամիդներ),
- ե) էնբրիոտոքսիկ (տետրացիլիններ, ամինոգլիկոզիդներ):

◆Դիսրակտերիոզ:

◆Ազդեցություն իմուն համակարգի վրա:

◆Ալերգիաներ:

◆Մանրէների հակարիտուիկալայուն շտամների առաջացում:

◆Մանրէների հակարիտուիկալայուն շտամների առաջացում:

Հակարիտիկների նկատմամբ կայունությունը կարող է պայմանավորված լինել միկրոօրգանիզմների տեսակային պատկանելությամբ՝ պրեպարատի ազդեցության համար թիրախի բացակայությամբ, ինդուկցված ֆերմենտներով (ֆենոտիպային փոփոխականություն): Բացի այդ, բակտերիային պոպուլյացիայում հակարիտի-

## ԸՆԴՀԱՍՈՒՐ ԲԺՇԿԱՎԱՍ ՄԱՍՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

կակայուն շտամներ կարող են առաջանալ մուտացիաների, գենետիկական ռեկոմբինացիաների արդյունքում:

Դակաբիոտիկաթերապիայի արդյունավետությունը և բարդությունների բացառումը ընդհանուր առմանք պայմանավորված է մակրոօրգանիզմում հակաբիոտիկ պրեպարատի կառուցվածքային ամբողջականության պահպանման, բջջի ներքին միջավայր ներթափանցման և ազդեցության թիրախի հետ փոխազդեցության ապահովմամբ, իսկ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհրաժեշտ է ելնել հետևյալ սկզբունքներից՝

◆մանրէաբանական՝ հիվանդից անջատված մանրէների մաքուր կուլտուրայի զգայունության որոշում հակաբիոտիկ պրեպարատների նկատմամբ,

◆ֆարմակոլոգիական՝ նշանակված պրեպարատի ազդեցության մեխանիզմի պարզաբանում, չափաբանակի և կիրառման երկարատևության որոշում,

◆կլինիկական՝ հիվանդի ընդհանուր վիճակի գնահատում ելնելով նրա տարիքից, սեռից, ուղեկցող հիվանդություններից և այլն,

◆համաճարակաբանական՝ տեղեկություններ տվյալ միջավայրում շրջանառվող մանրէների հակաբիոտիկակայուն շտամների, վերջին տարիներին առավել լայնորեն կիրառվող հակաբիոտիկների վերաբերյալ,


◆դեղագործական՝ տեղեկություններ կիրառվող պրեպարատի պիտանելիության ժամկետի, տեղափոխման ու պահպանման պայմանների մասին:

Դիվանդից անջատված բակտերիաների մաքուր կուլտուրայի զգայունությունը հակաբիոտիկ տարբեր պրեպարատների նկատմամբ որոշվում է երկու հիմնական եղանակով՝ **հաջորդական նոսրացումների և ագարային միջավայրում հակաբիոտիներով ներծծված սկավառակների** (նկ.46):

Առաջին դեպքում միկրոօրգանիզմների աճի ու բազմացման ճնշումը դրսեղրվում է փորձանոթում պղտորության բացակայու-

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՐԵՎԱՆՈԹՅՈՒՆ

թյամբ, իսկ երկրորդ դեպքում՝ սկավառակի շուրջ թափանցիկ՝ ստերիլ, գոտու առկայությամբ։ Ըստ ցուցադրված նկարի՝ բակտերիային կուլտուրան առավել զգայուն է տետրացիկլինի նկատմամբ, ընդ որում հաջորդական նոսրացումների դեպքում արձանագրվում է նաև, թե որ նաոսրացումից սկսած (1/32) հակրիոտիկի կիրառումը արդյունավետ լինել չի կարող։



### Նկ.46. Հակաբիոտիկազգայունության որոշում

Միկրոօրգանիզմների հակաբիոտիկակայուն շտամների դեմ պայքարը ներառում է՝

◆ նոր արդյունավետ հակաբակտերիային պրեպարատների ստեղծում,

◆ միջոցառումներ հակաբիոտիկակայուն շտամների տարածման կանխման նպատակով,

◆ նախքան բուժումը սկսելը հակաբիոտիկազգայունության որոշում,

◆ հակաբիոտիկների անհարկի կիրառության սահմանափակում։

### 8.3. ՀԱԿԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՊՐԵՊԱՐԱՏՆԵՐ

Բակտերիային ինֆեկցիաների դեմ ներկայումս բավականին հաջողությամբ կիրառվող վերը թվարկված հակաբիոտիկ պրեպարատները անարդյունավետ են վիրուսային ինֆեկցիաների դեպքում,

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՍ ՄԱՍՐԵԱԲԱՆՈԹՅՈՒՆ

ինչը բացատրվում է վերջիններիս առանձնահատկություններով: Այս հանգամանքը ակնառու դժվարություններ է առաջացնում հակավիրուսային պրեպարատների ընտրության խնդրում, քանի որ վիրուսի ռեարողուկցիայի ճնշումը մակրոօրգանիզմում հավասարապես ուղեկցվում է թիրախ բջիջների վնասման՝ կենսականորեն կարևոր ֆունկցիաների ճնշմանը ու դեստրուկցիայով: Չնայած նշված դժվարությանը՝ ներկայումս կիրառվում են մի շարք հակավիրուսային պրեպարատներ, որոնք ըստ ազդեցության մեխանիզմների՝ կարելի է դասակարգել մի քանի խմբի՝

- 1.Վիրուլոցիդ - օքսոլին, տետրոֆեին (ազդում են արտաքչային վիրիոնի վրա),
- 2.Վիրիոնի ադսորբցիայի արգելակում – վիրուսային ընկալիչների կառուցվածքային անալոգներ (կեղծ ընկալիչներ),
- 3.Վիրիոնի «ներկացման» արգելակում – ռենանտադին,
- 4.Առևկլեհնաթթվի ռեպլիկացիայի ճնշում – վիդարաբին, ացիկլովիր,
- 5.Վիրիոնի ինքնահավաքման ճնշում - մետիսազոն (մարբորան),
- 6.ռետրովիրուսների հակադարձ տրանսկրիպտազայի ճնշում - ազիդոթիմիդին, դիդեզօքսիցիտադին:

Մասն երկրորդ

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՆՖԵԿՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Գլուխ 9

ԻՆՖԵԿՑԻԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԵՎ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ինֆեկցիան (լատ.infectio – վարակում) կամ ինֆեկցիոն պրոցեսը ֆիզիոլոգիական և ախտաբանական, հարմարվողական ու վերականգնողական ռեակցիաների ամբողջությունն է, որոնք առաջանում և զարգանում են մակրոօրգանիզմում որոշակի պայմաններում, ախտածին միկրոօրգանիզմների հետ փոխազդցության ընթացքում՝ առաջացնելով նրա ներքին միջավայրի և ֆիզիոլոգիական ֆունկցիաների խանգարում: Ակնհայտ է, որ ինֆեկցիոն պրոցեսի զարգացմանը մասնակցում են երեք հիմնական գործոն՝ ախտածին միկրոօրգանիզմ, ընկալ մակրոօրգանիզմ և միջավայրի նպաստավոր պայմաններ, այդ թվում նաև սոցիալական: Նշված գործոններից զատ առանձնակի կարևորվում է ինֆեկցող դոզամ մանրէների նվազագույն քանակը, որն ունակ է առաջացնել ինֆեկցիոն պրոցես: Այն պայմանավորված է ինչպես հարուցիչ տեսակային պատկանելությամբ՝ նրա վիրուլենտությամբ, այնպես էլ մակրոօրգանիզմի ոչ սպեցիֆիկ և սպեցիֆիկ պաշտպանական մեխանիզմների վիճակով: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ախտածին հարուցիչների ներթափանցում մակրոօրգանիզմի ներքին միջավայր՝ ինֆեկցիայի մուտքի դուր: Դյուսվածքները, որոնք կոնկրետ որևէ տեսակի միկրոօրգանիզմի նկատմար զրկված են ֆիզիոլոգիական պաշտպանությունից, անվանում են ինֆեկցիայի մուտքի դուր: Վերջինս պայմանավորում է ինչպես հարուցիչի

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՆՖԵԿՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

տեղակայումը օրգանիզմում, այնպես էլ ինֆեկցիոն հիվանդության պարզգենետիկ և կլինիկական առանձնահատկությունները: Ստաֆիլոկոկը և ստրեպտոկոկերը, անցնելով արյան հոսք, առաջացնում են սեպսիս, ներթափանցելով շնչուղիների լորձաթաղանթում՝ թարախային միզուկաբռնքեր: Աղիքային ցուցիկը, մաշկի միջոցով ներթափանցելով օրգանիզմ, առաջացնում է թարախաբռնքային պրոցեսներ, իսկ հաստ և բարակ աղիների լորձաթաղանթում՝ աղիքային ինֆեկցիաներ:

Ինֆեկցիոն պրոցեսը կարող է արտահայտվել մարդու օրգանիզմի կազմավորման բոլոր մակարդակներում՝ մոլեկուլային, բջջային, հյուսվածքային, օրգանային, օրգանիզմային, ինչն էլ կազմում է ինֆեկցիոն հիվանդության էությունը: **Ինֆեկցիոն հիվանդությունը ինֆեկցիոն պրոցեսի զարգացման ժայրահեղ աստիճանն է, որը դրսևորվում է որոշակի, տվյալ հիվանդությանը բնորոշ, յուրահատուկ ախտանիշներով:**

### **9.1. ԱԽՏԱԾՈՒՆ ՄԱՍՐԵՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՍՅ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ախտածնությունը (պաթոգենություն) միկրոօրգանիզմի գենոտիպով պայմանավորված տեսակային հատկությունն է առաջացնելու ինֆեկցիոն պրոցես, իր նկատմամբ ընկալ մարդու կամ կենդանու օրգանիզմում: Այն բնորոշվում է գեների տարբեր խմբերով վերահսկվող հատկանիշների համակարգով, այսինքն ախտածնությունը պոլիդետերմինանտ հատկանիշ է, որը պայմանավորված է մանրեների կառուցվածքում կենսաբանական ակտիվ նյութերի՝ սպիտակուցների, պոլիսախարիդների, լիպիդների առկայությամբ, ինչպես նաև դրանց կողմից թույների, որոշ ֆերմենտների սինթեզման ունակությամբ: Պաթոգենությունը համարվում է նաև գենոտիպով պայմանավորված պոտենցիալ ունակություն, քանի որ այն հարուցում է ինֆեկցիոն պրոցես միայն իր նկատմամբ ընկալ օրգանիզմում:

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՆՖԵԿՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Պաթոգենությունը բնութագրվում է սպեցիֆիկությամբ, այսինքն իրեն բնորոշ մուտքի դրաներով վարակնան դեպքում, որոշակի օրգաններում և հյուսվածքներում տվյալ տեսակի հարուցիչների համար տիպիկ պաթոֆիզիոլոգիական և պաթոնոֆիզիական փոփոխություններ առաջացնելու ունակությամբ, որն արտահայտվում է ինֆեկցիայի համապատասխան պաթոգենետիկ և կլինիկական տիպում՝ թարախային, ռեսպիրատոր, աղիքային և այլն: **Պաթոգեն միկրոօրգանիզմների գենոտիպը ֆենոտիպորեն արտահայտվում է վիրուլենտությամբ և տոքսիգենությամբ:**

Վիրուլենտությունը ախտածնության աստիճանն է, դրա քանակական արտահայտությունը, ինչը պայմանավորված է հատկանիշների որոշակի համակարգով՝ **Վիրուլենտության գործոններ**, որոնք ապահովում են մանրէի ամրացումը (**ադհեզիա**) մակրոօրգանիզմի բջիջներին, բազմացումն ու ախտահարված տեղամասի **գաղութացումը** (բնակեցում), ներթափանցումը բջիջների ներքին միջավայր (**պենետրացիա**) կամ խորանիստ հյուսվածքների (**հնվագիա**), ոիմակայումը օրգանիզմի ոչ սպեցիֆիկ և սպեցիֆիկ պաշտպանական մեխանիզմներին (**ազրեսիա**):

**Տոքսիգենությունը** միկրոօրգանիզմների ունակությունն է սինթեզելու սպիտակուցային թույներ՝ տոքսիններ: Վիրուլենտությունը և տոքսիգենությունը չափում են պայմանական ընդունված միավորներով՝ **DLM** (լատ. *dosis letalis minima*-նվազագույն մահացու չափաքանակ) և **LD<sub>50</sub>**: DLM-ը տոքսինի այն նվազագույն չափաքանակն է, որը նույնատիպ պարամետրերով փորձարարական կենդանիներին ներարկելու դեպքում առաջացնում է դրանց 95 և ավելի տոկոսի մահ:

### 9.2. ՎԻՐՈՒԼԵՆՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Բակտերիաների վիրուլենտության գործոններով է պայմանավորված ինֆեկցիոն պրոցեսի զարգացումը: **Փենոտաքսիսը** իրականանում է որոշակի քիմիական գրադիենտի ուղղությամբ, որոնք գտնվում են մակրոօրգանիզմի հյուսվածքներում, բջիջներում: **Աղիք-**

## ՈՒՍՄՈՒՆՔ Ի ՏՖԵԿՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

զիայի ֆենոմենը բաղկացած է մի քանի էտապից, որի արդյունքում մանրէներն ամրանում են թիրախ բջիջների մակերեսին: Այստեղ առաջին հերթին գործում են ոչ սպեցիֆիկ ֆիզիկաքիմիական մեխանիզմները, որոնք պայմանավորված են մանրէների հիդրոֆոբությամբ, ձգողականության ու վաճողականության գումարային էներգիայով: Մյուս կողմից աղիեզիայի ունակությունը պայմանավորված է մանրէների մակերեսին գտնվող որոշակի կառուցվածքով՝ յուրահատուկ քիմիական խմբավորումներով՝ աղիեզիմներով և թիրախ բջիջների ընկալիչներով, որոնք միմյանց պետք է համապատասխանեն այնպես, ինչպես բանալին փականին, հակառակ դեպքում աղիեզիան չի իրականանա: Աղիեզիններն իրենց բնույթով շատ բազմազան են, սակայն դրանցից յուրաքանչյուրն ունի բացարիկ, միայն որոշակի տեսակին կամ նույնիսկ շտամին բնորոշ կառուցվածք, ինչը պայմանավորում է տվյալ պրոցեսի խիստ սպեցիֆիկությունը ու միկրոօրգանիզմների խնամակցությունը այս կամ այն հյուսվածքային բջիջների նկատմամբ: Բակտերիաների աղիեզիններ են հիմնականում դրանց թաղանթային կառույցները՝ պատիճ, մակերեսային սպիտակուցներ, տեյխոյաթթուներ, լիպոտեյխոյաթթուներ, գրան բացասական միկրոօրգանիզմների ֆինբրիաները, ինչպես նաև որոշ ֆերմենտներ: Սակրոօրգանիզմի հյուսվածքային բջիջների ընկալիչները ևս միատարր չեն՝

♦Նատիվ կամ բնական ընկալիչները պայմանավորված են գենոտիպով և բնորոշ են բջիջների տվյալ տիպին, տեղակայված են դրանց մակերեսին և մասնակցում են համապատասխան բակտերիաների աղիեզիային:

♦Ինդրուկցված ընկալիչները առաջանում են վիրուսով ախտահարված բջիջների մակերեսին (գրիպով հիվանդանալուց հետո շնչական համակարգի հյուսվածքային բջիջների թաղանթում դրսևորված վիրուսապեցիֆիկ գլիկոպրոտեինները ընկալիչներ են պնևմոնոկերի և այլ բակտերիաների համար):

♦Զեռքբերովի ընկալիչներն ի հայտ են գալիս որոշակի պայմաններում և ներկայացվում են ինունոգլուբուլիններով, որոնք

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՆՖԵԿՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

կապող օղակ են՝ կամրջակ, թջիջների և բակտերիաների համապատասխան աղիեզինների միջև:

Դարուցիչների վիրուլենտությունը կարող է արտահայտվել որոշ տեսակների ունակությամբ՝ ներթափանցելու (պենետրացիա)՝ եպիթելային թջիջների, լեյկոցիտների կամ լիմֆոցիտների մեջ: Այլ տեսակներ ունակ են հաղթահարելու լորձային և շարակցակալու վածքային արգելքներն ու թափանցելու առավել խորանիստ հյուսվածքներ՝ **ինվազիվություն**: Այդ հատկությունը պայմանավորված է միկրոօրգանիզմների կողմից այնպիսի ֆերմենտների արտազատմանք, ինչպիսիք են հիալուրոնիդազան, նեյրամինիդազան, տարբեր պրոտեազները և այլն:

Վիրուլենտության գործոնները, որոնք դիմակայում են օրգանիզմի պաշտպանական ուժերին, անվանում են ազրեսիններ, իսկ երևույթը՝ **ազրեսիա**: Ազրեսիններին են դասվում բակտերիային թջիջնակերեսային տարբեր կառույցներ ու թիմիական միացություններ՝ պատիճ, գրամ բացասական բակտերիաների լիպոպոլիսախարիդ, գրամ դրականների պեպտիդոգլիկան, ստաֆիլակոկերի թջապատի պրոտեին A, ստրեպտակոկերի պրոտեին M և այլն: Դրանցից շատերը ճնշում են լեյկոցիտների միգրացիան, դրանով իսկ ֆագոցիտողը: Օրգանիզմի պաշտպանական ֆունկցիաները ճնշվում են նաև որոշ ֆերմենտների (պրոտեազներ, կոագուլազաներ, ֆիբրինոլիզին, լեցիտինազա) կողմից:

Ըստ պաթոգենետիկ ազդեցության՝ միկրոօրգանիզմների ֆերմենտները կարելի է տարբերակել՝

◆ Ֆերմենտներ, որոնք առաջացնում են թջիջների և հյուսվածքների քայլայում հիալուրոնիդազա, նեյրամինիդազա, պրոտեազներ և այլն:

◆ Ֆերմենտներ՝ ուրեազա, դեկարբոքսիլազներ և այլն, որոնք նպաստում են մակրոօրգանիզմի հյուսվածքներում ու թջիջներում մեծ քանակներով տոքսիկ մետաբոլիտների առաջացնան ու կուտակնանք:

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՆՖԵԿՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Օբյեկտ ներբջջային պարագիտների՝ խլամիդիաների, ռիկետսիաների վիրուլենտությունը պայմանավորված է տիրոջ օրգանիզմի բջիջներում դրանց բազմացմամբ, որի հետևանքով, բջիջները նահանում են:

### **9.3. ԲԱԿՏԵՐԻԱՅԻՆ ԹՈՒՅՆԵՐԻ (ՏՈՔՍԻՆՆԵՐԻ) ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Ըստ քիմիական բնույթի բակտերիային տոքսինները լինում են սպիտակուցային և լիպոպոլիսախարիդային: Վերջինս գրամ բացասական միկրոօրգանիզմների բջջապատի կառուցյ է և մակրոօրգանիզմի վրա պաթոգենետիկ ազդեցություն է թողնում միայն բակտերիային բջջի քայլայումից ու լիպոպոլիսախարիդի անջատումից հետո: Այլ կերպ այն անվանում են էնդոտոքսին: Ենդոտոքսինի հատկությամբ կարող է օժտված լինել նաև գրամ դրական բակտերիաների բջջապատը:

Սպիտակուցային թույներն (**էկզոտոքսին**) ըստ արտազատման լինում են՝ լիովին արտազատվող, մասնակի արտազատվող, չարտազատվող:

**Սպիտակուցային թույներ:** Ներկայումս նկարագրված է ավելի քան 80 բակտերիային տոքսին, որոնք միմյանցից տարբերվում են մոլեկուլային գանգվածով, քիմիական կառուցվածքով, մակրոօրգանիզմի թիրախ բջիջների նկատմամբ խնամակցությամբ, կենսաբանական ակտիվությամբ, ջերմության նկատմամբ վերաբերմունքով և այլն: Սակայն նշված տարբերություններին զուգահեռ՝ սպիտակուցային բնույթից զատ, դրանց միավորում են մի շարք հատկություններ, որոնք ել պայմանավորում են սպիտակուցային տոքսինների առանձնահատկությունները՝

◆ Օժտված են բարձր տոքսիկությամբ: Դա բացատրվում է տոքսինների և մակրոօրգանիզմի բջիջների կենսականորեն կարևոր ֆերմենտների, հորմոնների, նեյրոմեդիատորների կառուցվածքային նմանությամբ, ինչի շնորհիվ տոքսինները թիրախ բջջում հանդես են գալիս որպես հակամետաբոլիտներ և արգելակելով կամ ճնշելով ֆերմենտների ֆունկցիոնալ ակտիվությունը՝ հանգեցնում են բջջի

## ՈՒՍՏՈՒՆՔ ԻՍՖԵԿՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

մահվան: Յարկ է նշել, որ սպիտակուցային բոլոր տոքսինները բաղկացած են 2 ֆրակցիայից, որոնցից մեկը, ֆիբսվելով հաճապատասխան թիրախ բջիջ ընկալիչին, ապահովում է երկրորդ՝ տոքսիկ ֆրագմենտի ներբափանցումը բջիջ:

◆ Սպիտակուցային տոքսինները՝ ի տարբերություն էնդոտոքսինների, բնութագրվում են առավել արտահայտված **անտիգենային** ու **իմունոգեն** հատկություններով, ինչը դրսևորվում է մակրոօրգանիզմում ինուն պատասխան առաջացնելու ունակությամբ, մասնավորապես սպեցիֆիկ հակամարմինների՝ հակատոքսինների սինթեզով:

◆ Բնութագրվում են **յուրահատկությամբ**՝ մակրոօրգանիզմի որոշակի հյուսվածքների թիրախ բջիջների ընկալիչների նկատմամբ ընտրողական խնամակցությամբ:

◆ Ենդոտոքսինի համեմատությամբ ջերմագգայուն են:

◆ Մի շարք սպիտակուցային բույներ ֆորմալինի և այլ գործոնների ազդեցությամբ կորցնում են տոքսիկությունը՝ պահպանելով իմունագեննությունը, ինչը հնարավորություն է ընձեռում այդպիսի տոքսիններից **անատոքսինի** ստացման:

Ըստ ազդեցության մեխանիզմների՝ սպիտակուցային բույները դասակարգվում են չորս տիպի (նկ. 47), համապատասխան ենթափերով՝

◆ **Ցիտոտոքսիններ:** Մակրոօրգանիզմի բջիջներում արգելակում են սպիտակուցի սինթեզը՝ անտիէլոնգատորներ (ոհիֆերիայի հիստոտոքսին), **էնտերոտոքսիններ**, **դերմոնեկրոտոքսիններ**:

◆ **Մեմբրանոտոքսիններ**, որոնք բարձրացնում են էրիթրոցիտների (**հեմոլիզին**) և լեյկոցիտների (**լեյկոցիտին**) մակերեսային թաղանթի թափանցելիությունը, նպաստելով դրանց քայլացմանը:

◆ **Ֆունկցիոնալ թլուկատորներ**, որոնք ընդգրկում են **էնտերոտոքսինները**: Մրանք ակտիվացնում են ադենիլատ-ցիլազային համակարգը, պայմանավորում ջրաադային փոխանակության խանգարումն ու թաղանթային կառուցների թափանցելիության բարձրացումն էնտերոցիտներում և ջրի արտահոսքն աղիների լուսանցք՝ նպաստելով դիառեայի զարգացմանը: **Տոքսիկոբլո-**

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՍՖԵԿՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

կատորներն առաջացնում են ցիկլիկ աղենոզին մոնոֆուֆատի կուտակում հյուսվածքներում և այտուցի գարգացում: Նեյրոտոքսիններն արգելակում են նյարդային գրգիռների հաղորդումը գլխուղեղի և ողնուղեղի բջջներում:

♦Եքսֆոլիատիմներ, որոնք սինթեզվում են ուկեգույն ստաֆիլոկերի որոշ շտամների և էրիթրոզենիններ՝ քութեշի ստրեպոկերի կողմից: Ազդում են միջքջային փոխազդեցությունների վրա:

### Բակտերիալ քույներ (տոքսիններ)

Սպիտակուցային	Լիալոպոլիսախարիդային
1.ցիտո-տոքսին	դ.նեկրոտոքսին – S.pyog. P.aeru. B.pert. - էնտերոտոքսին – S.aur. C.perfr.
	հակալորնատոք – C.diph. S.fl. S.son. P.aeru.
2.մեմբրանո-տոքսին	հեմոլիզին – S.aur. S.pyog. C.perfr. P.aeru. լևիոցիլին – S. aur. S.pyog. C.perfr. C.botul.
3.ֆունկցիոնալ բլոկատոք	էնտերոտոքսին – E.coli, S.enterit. K.pneu. Y.ent. տոքսիկոբլոկատոքներ – Y.pest. B.pert. B.anth. նեյրոտոքսիններ – C.botul. C.tetani
4.Լրսֆոլիատին, Էրիթրոզենին	- S.aur. S.pyog.

### Նկ.47. Սպիտակուցային քույների դասակարգումը

Ենդոտոքսինների տոքսիկ հատկությունները պայմանավորվում են ամբողջական մոլեկուլով, ոչ թե դրա առանձին ֆրագմենտներով: Ի տարբերություն սպիտակուցային տոքսինների՝ էնդոտոքսիններն առավել կայուն են բարձր ջերմաստիճանի նկատմամբ, տոքսիկությունը, ինունոգենությունը ավելի թույլ է արտահայտված և օժտված չեն սպեցիֆիկությամբ (նկ.48): Տարբեր միկրոօրգանիզմներից անջատած էնդոտոքսինների ներարկումը փորձարարական կենդանիներին առաջացնում է միանման ռեակցիա: Բարձր դոզաների ներարկումը ճնշում է ֆագոցիտոզը, նկատվում է արտահայտված տոքսիկոզի պատկեր, որն ուղեկցվում է թուլությամբ, հևոցով,

## ՈՒՍՍՈՒՆՔ ԻՆՖԵԿՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

դիառնեայով, սրտի աշխատանքի թուլությամբ, ջերմության անկումով։ Փոքր դոզամերով ներարկման ժամանակ դիտվում է հակառակ ազդեցություն՝ խթանվում է ֆագոցիտոզը, տոքսիկոզը թույլ է արտահայտվում, բարձրանում է մարմնի ջերմությունը։

ՏՈՔՍԻՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	ԷԿZXՈՏՈՔՍԻՆ	ԷՆԴՈՏՈՔՍԻՆ
արտադրող	G+ և G- բակտերիաներ	G- բակտերիա- ների բջջապատ
քիմ. բնույթ	սպիտակուց 2 ֆրակցիայից	LՊՍ
Ե-ի նկատմամբ զգայունություն	բարձր	չափավոր
ազդեցություն օրգանիզմում	ուղղակի, սպեցիֆիկ	միջնորդված, ոչ սպեցիֆիկ
իմունոգենություն	բարձր	թույլ
անատոքսինի ստացում	արտահայտ- ված	բացակայում է

### Նկ.48.Սպիտակուցային և լիպոպոլիսախարիդային


#### թույների համեմատական բնութագիրը

Մարդկանց մոտ էնդոտոքսինը արյան հոսք անցնելու դեպքում առաջացնում է տեսն՝ պայմանավորված արյան ծևավոր տարրերի (գրանուլոցիտներ, մոնոցիտներ) վրա դրա ազդեցությամբ, որի հետևանքով վերջիններս արտազատում են պիրոգեն միացություններ։ Էնդոտոքսինենիայի դեպքում նկատվում է հիպոտոնիա, ինչպես նաև արյան շրջանառության խանգարում և ացիտը, կապված արյան մեջ սերոտոնինի և կինինների մեջ քանակներով կուտակման հետ։ Էնդոտոքսինը ալտերնատիվ մեխանիզմով ակտիվացնում է կոմպլեմենտի C<sub>3</sub> ֆրակցիան, որի հետևանքով նվազում է դրա քանակը արյան շիճուկում, և մեծանում է կենսաբանական ակտիվ ֆրակցիաների՝ C<sub>3a</sub>, C<sub>5a</sub> (անաֆիլատոքսիններ), կոնցենտրացիան։ Էնդոտոքսինի առավել մեծ քանակների անցումը արյան հոսք կարող է առաջացնել տոքսիկոսեպտիկ շոկ։

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՍՖԵԿՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

### 9.4. ԻՍՖԵԿՑԻԱՅԻ ԶԵՎԵՐԸ

Ախտածին մանրէների մեջ բազմազանությունը, ծագումն ու հատկությունները, մակրոօրգանիզմ բափանցելու և այնտեղ տարածվելու օրինաչափություններն ու առանձնահատկությունները, դրանց հետևանքով օրգանիզմում առաջացած վոփոխությունների, այդ թվում նաև ինուն տեղաշարժերի բնույթը և շատ այլ հանգամանքներ, պայմանավորում են ինֆեկցիոն պրոցեսի և ինֆեկցիոն հիվանդությունների տարբերակումը (նկ.49) բազմազան ձևերի՝



#### Նկ.49. Ինֆեկցիայի ձևերը

◆ Ըստ հարուցիչի բնույթի՝ ինֆեկցիոն հիվանդությունները տարբերակվում են՝ բակտերիային, վիրուսային, սնկային և պրոտոզոային:

◆ Ըստ ինֆեկցիայի աղբյուրի՝ տարբերում են՝ **ա)** էկզոգեն ինֆեկցիա, երբ հարուցիչները բափանցում են մակրոօրգանիզմ արտաքին միջավայրից սմնդամթերքներով, ներշնչած օդով, հողով, ջրով, որոնք աղտոտված են հիվանդների ու մանրէակիրների արտաքրանքներով, **բ)** էնդոգեն ինֆեկցիան հարուցվում է անհատի

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՆՖԵԿՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

նորմալ միկրոֆլորան կազմող պայմանական ախտածին միկրոօրգանիզմներով, մակրոօրգանիզմի ընդհանուր ռեզիստենտության անկնան պայմաններում: Որպես էնդոֆեն ինֆեկցիայի մեկ առանձին տարատեսակ կարելի է դիտարկել **առևտոինֆեկցիան**, որն առաջանում է ինքնավարակման հետևանքով՝ օրգանիզմի նորմալ միկրոֆլորան կազմող հարուցիչի տեղափոխմանք, իրեն բնորոշ բիոտոպից մեկ այլ բիոտոպ: Առևտոինֆեկցիայի օրինակ է բերանի խոռոչի, քրի, ըմպանի միկրոֆլորան կազմող մանրէների աճուրմը վերքային մակերես, կամ աղիքային միկրոֆլորայի ներկայացուցիչների անցումը միզասեռական ուղիներ և այլն, որոնց հետևանքով կարող են զարգանալ թարախաբորբոքային հիվանդություններ: Դարկ է նշել, որ ոչ հազվադեպ առևտոինֆեկցիայի պատճառ կարող է հանդիսանալ դիսբակտերիոզը՝ որևէ բիոտոպի նորմալ միկրոֆլորան կազմող մանրէների քանակական և որակական փոխհարաբերության կայուն փոփոխությունը:

◆Սատ հարուցիչի տեղակայման (լոկալիզացիայի)՝ տարբերում են՝ **ա)օջախային ինֆեկցիա**, երբ ախտածին հարուցիչները, ներթափանցելով մուտքի դրանով, չեն տարածվում անբողջ օրգանիզմով, այլ առաջացնում են տեղային բորբոքային պրոցես՝ ֆուրունկուլյոզ, կոնյուկտիվիտ և այլն: Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ մակրո- և միկրոօրգանիզմի միջև հավասարակշռության չնշին խանգարումը կարող է առաջացնել օջախային ինֆեկցիայի գեներալիզացում, ինչի դեպքում հարուցիչները տարածվում են ամբողջ օրգանիզմում՝ ավշային կամ արյունային ճանապարհներով: Վերջին դեպքում ինֆեկցիոն պրոցեսի զարգացումը կարող է տարբեր ընթացք ունենալ՝ հարուցիչների մեխանիկական տարածումից մինչև բակտերիային կամ տոքսիկուեպտիկ շոկ: Արյան հոսքով հարուցիչների մեխանիկական տարածումը, առանց նրանում ածի ու բազմացնան, անվանվում է **բակտերեմիա**՝ (որովայնային տիֆ), **վիրուսեմիա** (օրիհա), **պարազիտեմիա** (մայսարիհա), **ռիկետսեմիա** (համաճարակային բծավոր տիֆ): Որոշ հիվանդությունների ընթացքում լոկալ բորբոքային պրոցեսը կարող է

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՆՖԵԿՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

ուղեկցվել հարուցիչների կողմից արտազատված սպիտակուցային թույների անցումով արյան հոսք ու դրանց գեներալիզացմանը՝ **տոքսինեմիա:** Նման հիվանդությունների պաթոգենետիկ ընթացքը և կլինիկական դրսերումները հիմնականում պայմանավորվում են այդ տոքսիններով՝ դիֆերիա, քուբեց, փայտացում, գազային գանգրենա, բռտուլիզմ և այլն: Գեներալիզացված ինֆեկցիայի առավել ժամր ձև է **սեպսիսը,** որը բնութագրվում է արյան մեջ հարուցիչների բազմացմանը՝ մակրոօրգանիզմի պաշտպանական բոլոր մեխանիզմների խիստ ճնշման պայմաններում: Տարբեր ներքին օրգաններում բարախային բորբոքային օջախների առաջացումը սեպսիսի դեպքում անցում է **սեպտիկոպահինիայի:** Ծայրահեռ ժամր դեպքերում կարող է տեղի ունենալ հարուցիչների և դրանց կենսագործունեության արգասիքների՝ թույների, ֆերմենտների, ինչպես նաև հյուսվածքների դեստրուկցիայի հետևանքով առաջացած տոքսիկ մետաբոլիտների մասսայական անցում արյան հոսք՝ բակտերիային կամ **տոքսիկոսեպտիկ շոկ:**

◆ Ըստ ինֆեկցիոն պրոցեսի էթիոլոգիայում միկրոօրգանիզմների տեսակների բազմազանության՝ տարբերում են **մոնոինֆեկցիա,** որն հարուցվում է մեկ տեսակի մանրէներով, իսկ **խառը՝ միքստ ինֆեկցիամ՝** միաժամանակ մեկից ավելի տեսակներով: Վերջինիս ցայտուն օրինակ է վերին շնչական ուղիների վարակիչ հիվանդությունները՝ հարուցված միաժամանակ պնակներուներու ստրեպտոկոկերով, գրիպի վիրուսով, միկոպլազմներով, որոնք կարող են ամենատարբեր հարաբերակցություններ ունենալ: Որպես միքստ ինֆեկցիայի մասնավոր տարբերակ կարել է դիտել **երկրորդային ինֆեկցիան,** որոնք սակայն չի կարելի նույնացնել այն պատճառով, որ այս դեպքում արդեն առկա ինֆեկցիոն հիվանդությանը գումարվում է նորը՝ հարուցված այլ միկրոօրգանիզմներով: Որպես կանոն, երկրորդային ինֆեկցիան առաջանում է մակրոօրգանիզմի և առևտոֆլորայի նորմալ սիմբիոզի խախտման պատճառով, որի հետևանքով ակտիվանում է պայմանական պաթոգեն միկրոֆլորան: Այն ինֆեկցիաները, որոնց դեպքում

դիտվում է մեկից ավելի պարզեն միկրոօրգանիզմների միաժամանակյա կամ հաջորդական համակցված ազդեցություն մակրոօրգանիզմի վրա, ընդունված է անվանել **ասոցացված** ինֆեկցիաներ: Դարձ է նշել, որ օրգանիզմի վրա մեկից ավելի միկրոօրգանիզմների ազդեցությունը դրանցով հարուցված հիվանդությունների պարզ միագումար չէ, այլ բարդ և ոչ միանշանակ պրոցես է, որի հանդիպման հաճախականությունը ակնհայտորեն աճում է:

◆Այն բոլոր դեպքերում, երբ ինֆեկցիաները մակրոօրգանիզմում կայուն, լարված անընկալություն չեն առաջացնում, առողջացումից հետո հնարավոր է նույն հարուցիչով կրկնակի վարակում և հիվանդության զարգացում **ռեինֆեկցիա** (դիզենտերիա, գոնորեա և այլն): **Սուպերինֆեկցիայի** դեպքում վարակումը նույն հարուցիչով տեղի է ունենում դեռևս հիվանդը չապաքինված: Կլինիկական ախտանիշների վերադարձը առանց կրկնակի վարակման, օրգանիզմում պահպանված հարուցիչների հաշվին, ինչպես օրինակ՝ կարմիր քամու, օստեոմիելիտի, բծավոր տիֆի ժամանակ, անվանվում է **ռեցիրիվ:**

◆Ինֆեկցիոն պրոցեսի դասակարգման մեկ այլ չափանիշ է մակրո- և միկրոօրգանիզմի փոխազդեցության երկարատևությունը, ըստ որի՝ տարբերում են **սուր** և **քրոնիկական ինֆեկցիաներ:** Սուր ինֆեկցիաների տևողությունը համեմատաբար կարճ է: Դրանք բնորոշվում են տվյալ հիվանդության համար որոշակի պարունակով ու կլինիկական ախտանիշներով և որպես կանոն ապաքինումից հետո հարուցիչը օրգանիզմից անհետանում է: Մի շարք դեպքերում սուր ինֆեկցիաները կարող են անցնել **քրոնիկականի,** որոնց տևողությունը կարող է տատանվել մի քանի ամսից մինչև տարիներ: Քրոնիկական ինֆեկցիաները բնորոշվում են օրգանիզմում հարուցիչի երկարատև գոյատևմամբ՝ **պերսիստենցիայով** (կայունություն): Քրոնիկական ինֆեկցիաների ժամանակ հարուցիչները երկարատև պահպանվում են օրգանիզմում և կարող են արտազատվել արտաքին միջավայր: Այն երևույթը, երբ հարուցիչները կլինիկական առողջացումից հետո դեռևս շարունակում են

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՆՖԵԿՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

արտազատվել, կոչվում է մանրէակրություն: Մինչև երեք ամիս տևողությամբ մանրէակրությունը անվանվում է սուր, դրանից ավելին՝ քրոնիկական:

◆Ըստ հարուցիչների՝ օրգանիզմ ներթափանցելու առաջնայնության և օրգանիզմի ռեակցիայի՝ տարբերվում են առաջնային և երկրորդային ինֆեկցիաներ:

◆Առանց կլինիկական ախտանիշների ընթացող ինֆեկցիաներն անվանվում են աճախմատոն, բնորոշ ախտանիշների դրսնորման դեպքում՝ **մանիֆեստ:** Անսիմպտոն ինֆեկցիան կարող է ավարտվել ապաքինմամբ կամ փոխարկվել մանիֆեստի՝ սուր կամ քրոնիկական ընթացքով:

### 9.5. ԻՆՖԵԿՑԻՈՆ ՑԻՎԱՍԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

#### ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Վարակիչ հիվանդությունները որոշակիորեն տարբերվում են սոմատիկ հիվանդություններից, ինչը արտահայտվում է հետևյալ հիմնական առանձնահատկություններով՝ կրնտագիոզություն (վարակելիություն), սպեցիֆիկ էթիոլոգիական ագենտի՝ ախտածին մանրէի առկայություն, հիվանդության պրոցեսում իմունիտետի ձևավորում, պարտադիր ինկուբացիոն շրջանի առկայություն, հիվանդության ցիկլիկ ընթացք:

Ինֆեկցիայի մանիֆեստ ձևերը բնութագրվում են որոշակի, տվյալ հիվանդությանը յուրահատուկ սիմպտոմներով և հիվանդության ցիկլիկ ընթացքով, այսինքն միմյանց հաջորդող առանձին շրջաններով՝ **գաղտնի** (ինկուբացիոն, թաքնված, լատենտ), **նախանշանային** (պրոդրոմալ), **ծաղկման** և **ապաքինման** (ռեկոնվալեսցենցիայի), որոնք միմյանցից տարբերվում են ընթացքի տևողությամբ, կլինիկական ախտանիշներով, մանրէաբանական, իմունաբանական, պարոգենետիկ և համաճարակաբանական յուրահատկություններով:

♦**Ինկուբացիոն շրջանը սկսվում է հարուցիչի օրգանիզմ ներքափանցելուց հետո և շարունակվում է մինչև հիվանդության առաջին ախտանիշների ի հայտ գալը: Բակտերիային ինֆեկցիաների մեծամասնության դեպքում այն տևում է մի քանի ժամից մի քանի օր և նույնիսկ շաբաթ: Այդ ընթացքում հարուցիչները, որպես կանոն, արտաքին միջավայր չեն արտազատվում, և հիվանդները շրջապատի համար վարակման առունով վտանգ չեն ներկայացնում, բացառությամբ որոշ մանկական վիրուսային ինֆեկցիաների:**

♦**Պրոդրոմալ շրջանը հաջորդում է ինկուբացիոնին: Դրա տևողությունը կազմում է մի քանի ժամից մի քանի օր: Այս էտապում հարուցիչները ինտենսիվորեն բազմանում և գաղութացնում են համապատասխան հյուսվածքները, ինչպես նաև սկսում են սինթեզել ֆերմենտներ և տոքսիններ: Ի հայտ են գալիս ընդհանուր բնույթի ախտանիշներ:**

♦**Հիվանդության ծաղկման շրջանը բնութագրվում է յուրահատուկ ախտանիշների որունորմամբ, ինչը պայմանավորված է հարուցիչների ինտենսիվ բազմացմամբ, դրանց կողմից վիրուլենտության տարբեր գործոնների, այդ բվում տոքսինների սինթեզով, ինչպես նաև օրգանիզմի հյուսվածքների դեստրուկտիվ փոփոխությունների հետևանքով տոքսիկ մետաբոլիտների առաջացումով: Այս շրջանի դերևս առաջին օրերից հիվանդի արյան շիճուկում կարող են հայտնաբերվել սպեցիֆիկ հակամանրեային, հակասոքսիկ հակամարմիններ, որոնց տիտրը հետագայում մեծանում է: Հարուցիչների ինտենսիվ բազմացումը և կուտակումը օրգանիզմում պայմանավորում է վերջիններիս մեծ քանակներով արտազատումը և առավել վտանգավորությունը շրջապատի համար:**

♦**Ապաքինման՝ ռեկրուպալեսցենցիայի, շրջանը հաջորդում է հիվանդության ծաղկման շրջանին: Այս փուլի ընթացքում աստիճանաբար վերականգնվում են ախտահարված բջիջների, հյուսվածքների, օրգանների և ամբողջական օրգանիզմի ֆունկցիաները: Հակամարմինների տիտրը հասնում է առավելագույնի: Տևողությունը պայմանավորված է օրգանիզմի վիճակով, բուժման ու վերականգ-**

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՆՖԵԿՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Առաջական միջոցառումների որակով և այլն: Ինֆեկցիոն հիվանդությունը կարող է ավարտվել ապաքինմամբ, մանրէակրությամբ և կարող է լետալ վախճան ունենալ:

### 9.6. ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ԻՆՖԵԿՑԻԱՆԵՐԻ

#### ԱՌԱՋԱՎԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վիրուսների կառուցվածքային, ֆիզիոլոգիական, կենսաբանական առանձնահատկությունները պայմանավորում են վիրուսային ինֆեկցիաների, ինչպես նաև հիվանդության ընթացքում մակրոօրգանիզմում իրականացող ինուն տեղաշարժերի առանձնահատկությունները: Վիրուսային ինֆեկցիաների հիմքում ընկած է վիրուսի և թիրախ բջջի գենոմների փոխազդեցությունը, ինչը պայմանավորում է այն գաղափարը, ըստ որի՝ թիրախ բջջի մակերեսին վիրուսսեցիֆիկ ընկալիչների առկայությունը անպայմանորեն նպաստում է ինֆեկցիոն պրոցեսի զարգացմանը: Այսինքն, ըստ Էության, վիրուսների համար կիրառելի չէ ախտածնություն և վիրուլենտություն կատեգորիաները, քանի որ դրանք բնորոշ են միայն կենդանի ակտիվ կենսագործող բջջներին՝ բակտերիաներին: Այս առումով վիրուսների համար առավել կիրառելի է ինֆեկցիոնություն կամ ինֆեկցիոնություն տերմինները:

Վիրուսային և բջջային գենոմների փոխազդեցությունը կարող է ընթանալ մակրոօրգանիզմի բջջների ռիբոսումների ներգրավմամբ վիրուսսեցիֆիկ ֆերմենտների և սպիտակուցների սինթեզի գործընթացում կամ վիրուսային նուկլեինաթթվի ինտեգրմամբ վարակված բջջի քրոնոսոմի կազմի մեջ:

Վիրուսային հիվանդությունների, ինչպես և այլ ինֆեկցիաների առաջացման համար անհրաժեշտ է հարուցիչի ներթափանցումը օրգանիզմ՝ համապատասխան նուտքի դրներով: Դաջորդ էտապը վիրուսի **ադսորբցիան** է մակրոօրգանիզմի զգայուն բջջների մակերեսին, որից հետո ընթացող բոլոր պրոցեսները, ի տարբերություն բակտերիային, սնկային և պրոտոզոային ինֆեկցիաների, պայմա-

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՆՖԵԿՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

նավորվում են վիրուսային նուկլեինաթթվով, ինչը և արտահայտվում է միայն վիրուսային ինֆեկցիաներին բնորոշ առանձնահատկություններով:

◆Գրեթե բոլոր ՂՆԹ և որոշ ՌՆԹ վիրուսներ ունակ են առաջացնելու խնտեգրատիվ ինֆեկցիա (վիրոգենիա), ինչն իրականանում է վիրուսի նուկլեինաթթվի ներդրմամբ տիրոջ բջջի քրոմոսոմի մեջ: Վիրոգենիայի դեպքում, որպես կանոն, բացակայում են վիրուսի ռեպրոդուկցիայի, ինքնահավաքման էտապները և ելքը թիրախ բջջից: Վերջիններս կարող են պահպանել իրենց ֆունկցիան, սակայն որոշ դեպքերում վիրուսային գենոմի խնտեգրումը կարող է առաջացնել մուտացիաներ և թիրախ բջիջների չղեկավարվող բազմացում: Ներդրված վիրուսային ՂՆԹ-ը (պրովիրուսը) բջջային ՂՆԹ-ի հետ զուգահեռ ռեպլիկացիայի է ենթարկվում և կիսման ժամանակ փոխանցվում է դուստր բջիջներին: Խնտեգրատիվ ինֆեկցիայի ժամանակ վիրուսային գենոմը կարող է տրանսկրիպցիայի չենթարկվել կամ ենթարկվել մասնակիորեն: Բջջային ՂՆԹ-ից նրա անջատման դեպքում տեղի է ունենում ավտոնոմ ռեպլիկացիա, ինչը ավարտվում է վիրուսի ռեպրոդուկցիայով և վիրուսի նոր սերնդի ելքով, ինչպես արողուկտիվ ինֆեկցիայի դեպքում:

◆Վիրուսեմիայի փուլի առկայություն, որի ընթացքում վիրուսը արյան հոսքով շրջանառվում և տարածվում է օրգանիզմում: Այս առունով բացառություն են կազմում այն վիրուսները, որոնք տարածվում են նեյրոգեն ճանապարհով:

◆Վիրուսների կողմից ինուն համակարգի բջիջների պարտադիր ախտահարում՝ մասնավորապես լիֆոցիտների:


◆Մի շարք վիրուսային ինֆեկցիաների դեպքում՝ բնական ծաղիկ, կարմրուկ, հերպես, կատաղություն, ներքջջային վիրուսային պարփակումների առաջացում (Գվարնիերի մարմնիկներ-բնական ծաղիկ, Բաբեց-Նեգրիի մարմնիկներ-կատաղություն և այլն), որոնք ունեն ախտորոշիչ նշանակություն:

Վիրուսներով հարուցված ինֆեկցիոն պրոցեսի հետևանքները շատ բազմազան են՝ բջջի կենսագործունեության պահպանումից

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՆՖԵԿՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

մինչև լայն սպեկտրով ախտահարումները: Ընդ որում, ապաքինումից հետո վիրուսները կա'մ աճրողովով վերամում են օրգանիզմից, կա'մ պահպանվում են, ինչը որոշ դեպքերում կարող է տևել տարիներ:

Վիրուսային հիվանդություններն ընթամում են պրոդուկտիվ և պերսիստենցվող ինֆեկցիաների ձևով (Ակ.50): Պրոդուկտիվ կամ սուր ինֆեկցիան ուղեկցվում է վիրուսի ռեպրոդուկցիայով և դրանց բավականին արագ արտազատումով օրգանիզմից: Սուր ինֆեկցիաները կարող են լինել **օջախային և գեներալիզացված**:



### Ակ.50. Վիրուսային ինֆեկցիաներ

Պերսիստենցվող ինֆեկցիան կարող է արտահայտվել տարբեր ձևերով՝ լատենտ, քրոնիկական և դանդաղ:

Լատենտ անսիմպտոմ ինֆեկցիան բնութագրվում է երկարատև, իսկ երբեմն էլ ցմահ վիրուսակրությամբ, որի ընթացքում վիրուսը չի արտազատվում արտաքին միջավայր: Որոշ դեպքերում դա պայմանավորված է վիրուսի գենոմի դեֆեկտով, որի հետևանքով այն կորցնում է վերարտադրվելու ունակությունը: Այլ դեպքերում լատենտ ինֆեկցիան պայմանավորված է վիրուսի գենոմի ինտեգրմանը բջջային քրոմոսոմի կազմի մեջ և ինտեգրատիվ ինֆեկցիայի առաջացումով, որի հետևանքները դժվար են կանխատեսել: Եթե վիրու-

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՆՖԵԿՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

սային նույլեհնաթքուն տեղակայվում է պրոմոտորին մոտ, կարող է խանգարվել սպիտակուցի սինթեզի ռեգուլյացիան և առաջանալ բջիջների չկարգավորվող բազմացում ու ուռուցքագոյացում:

**Քրոնիկական** ինֆեկցիաների դեպքում վիրուսը պարբերաբար արտազատվում է արտաքին միջավայր:

**Դանդաղ** ինֆեկցիաներին բնորոշ է երկարատև ամիսներ և տարիներ ձգվող ինկուբացիոն շրջանը, իիվանդության ախտանիշների աստիճանական ի հայտ գալը, որը հաճախ ավարտվում է մահով, քանի որ հիմնականում ախտահարվում է ԿՆԴ-ը:

Մ ա ս ն ե ր բ ո ր դ

**ՈՒՍՄՈՒՆՔ ԻՍՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ  
(ԻՍՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ)**

Գլուխ 10

ԻՍՈՒՆԻՏԵՏԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ԻՍՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՌՈԴ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Իմունաբանությունը գիտություն է օրգանիզմի պաշտպանական հատկությունների՝ ինումիտետի (լատ. Immunitas-ազատվել ինչ-որ բանից) մասին: Այն բնութագրվում է որպես հատկությունների և մեխանիզմների ամբողջություն, որոնք ապահովում են օրգանիզմի կայունությունը և պաշտպանությունը ինչպես ինֆեկցիոն, այնպես էլ գենետիկորեն օտարածին ցանկացած ագենտներից:

Մարդկությանը վաղուց է հայտնի, որ որոշ ինֆեկցիոն հիվանդություններից հետո ապաքինված մարդը նույն այդ հիվանդությամբ երկրորդ անգամ չի հիվանդանում, և շատ են այն տեղեկությունները, որ համաճարակների ժամանակ հիվանդների խնամքով զբաղվում էին արդեն հիվանդացածները: Դիմք ունենալով այսպիսի դիտարկումները, փորձում էին պաշտպանվել այնպիսի ծանր հիվանդություններից, ինչպիսիք են բնական ծաղիկը, ժանտախտը: Չինաստանում դեռևս մեր թվարկությունց առաջ փորձեր էին կատարվում կանխարգելելու բնական ծաղկով հիվանդացումը՝ հիվանդի վերքերի կերպներից պատրաստում էին փոշի և ներմուծում էին առողջ օրգանիզմ ներշնչելով այն: Չնորկաստանում նաշկը տրորում էին մինչև այսուցի առաջացումը և վրան դնում բնական ծաղկով հիվանդի թարախով ներծծված կտոր: Պաշտպանության նման եղանակը ստացել էր վարիոլացիա անվանումը: Այս ամենը կատարվում էր հիվանդության թերև ձևեր առաջացնելու նպատակով, սակայն թիւ չէին դեպքերը, երբ դրանք ողբերգական վախճան

## ՈՒՍՏՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

Էին ունենում: Այնուամենայնիվ նման միջոցառումները ակնառու կերպով ապացուցում էին արհեստական ճանապարհով հիվանդության թերև ձևերի և անընկալության առաջացման հնարավորությունն, ու նախապատրաստում էին հասարակական գիտակցությունը վակցինացիայի հրականացման գաղափարին, որն առաջին անգամ առաջարկել է Է.Զենները: Նրա տարիների դիտարկումները հաստատեցին, որ կովերի ծաղկով հիվանդացած կրվորուիհիները այլևս չեն հիվանդանում բնական ծաղկով: Զենները Զեյմս Ֆիպս անունով մի տղայի պատվաստեց կովի ծաղկի հարուցիչով, և երեխան համաճարակի բռնկման ժամանակ չիհվանդացավ բնական ծաղկով: Նա հետագայում բազմաթիվ անձանց այդպիսի պատվաստումներ կատարեց և իր դիտարկումների արդյունքները հրապարակեց 1798-ին: Զենների առաջարկած մեթոդը, չնայած բավականին մեծ խոշընդուների, շատ արագ ճանաչում ստացավ, և հետագա մի քանի տարիների ընթացքում պատվաստնան ենթարկվեցին հարյուր հազարավոր մարդուկ: Զենների հայտնագործությունը բնական ծաղկի դեմ պայքարի գործում մեծագույն նվաճում էր, սակայն այն երկար տարիներ գործեն նշանակություն չունեցավ ինունաբանության զարգացման համար, քանի որ պարզված չէր ինֆեկցիոն հիվանդությունների էթիոլոգիան: Միայն L.Պաստերի աշխատանքներից հետո, որոնք ապացուցում էին ինֆեկցիոն հիվանդությունների կապը միկրոօրգանիզմների հետ, Զենների հայտնագործությունը դիտվեց նոր տեսանկյունով ու անկասկած մեծ ազդեցություն ունեցավ ինչպես Պաստերի աշխատանքների հետագա ընթացքի, այնպես և ինունաբանության՝ որպես գիտության կայացման ու զարգացման համար: Պաստերի աշխատանքները հավերի խոլերայի, սիբիրյան խոցի, կատաղության վերաբերյալ ապացուցեցին արհեստական ճանապարհով հարուցիչների պարոգեն հատկությունների թուլացման և վակցինաների (լատ.vacca-կով) ստացման հնարավորությունը: Նա գիտականորեն հիմնավորեց ինֆեկցիոն հիվանդությունների դեմ պայքարի հիմնական սկզբունքը՝ արհես-

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

տական ճանապարհով կոլեկտիվ իմունիտետի առաջացումը դրանց նկատմամբ:

Իմունաբանության զարգացման խնդրում մեծ ավանդ ունեն ուս գիտնական Ի.Ի.Մեչնիկովը և գերմանացի Պ.Էրլիխը իրենց բազմաթիվ հետևողությունով: Մեչնիկովը, տարբեր կենդանիների մոտ ուսումնասիրելով բորբոքային պրոցեսները, նկատեց, որ օրգանիզմ ներմուծված օտար մարմինները շրջապատվում են մեզոդերմալ ծագման ամերանման բջիջներով և կլանվում են դրանց կողմից: Այս երևույթը նա անվանեց **ֆագոցիտող**, իսկ բջիջները, որոնք իրականացնում են ֆագոցիտող՝ **ֆագոցիտներ**: Մեչնիկովը ցույց տվեց, որ միաբջիջ օրգանիզմներում այդ երևույթը ծառայում է սնուցմանը, իսկ բազմաբջիջ օրգանիզմներում՝ պաշտպանությանը: Շարունակելով աշխատանքները՝ նա առաջարկեց իմունիտետի **ֆագոցիտար տեսությունը**, ըստ որի՝ օրգանիզմի բուժական հատկությունները պայմանավորված են, բնության կողմից հենց այդ նպատակով ստեղծված, հատուկ բջիջների համակարգով՝ ֆագոցիտներով: Միաժամանակ ուսումնասիրություններ էին ընթանում նաև **հակամարմինների** վերաբերյալ, որոնք սինթեզվում են հիվանդի օրգանիզմում նանրեների և դրանց տրքսինների նկատմամբ: 1897-ին Պ.Էրլիխը առաջարկեց դիֆքերիայի տոքսինի և անատոքսինի պրեպարատների ստանդարտացման գործնական մեթոդ (**հումորալ տեսություն**): Գիտության զարգացման սկզբնական էտապում իմունիտետը դիտում էին որպես անընկալություն միայն ինֆեկցիոն հիվանդությունների նկատմամբ, սակայն աստիճանաբար կուտակվող փաստերը վկայում էին, որ իմուն ռեակցիան արտահայտվում է ոչ միայն մանրեների, այլ նաև այլ բջիջների և հյուսվածքների նկատմամբ, ինչը հաստատում էր, որ ինֆեկցիոն իմունիտետից բացի գոյություն ունի նաև ոչ ինֆեկցիոն իմունիտետ: Ֆ.Բերնետը 1964-ին հանդես եկավ դրույթով, ըստ որի՝ իմունիտետի միջոցով իրականացվում է մշտական հսկողություն գենետիկական հոմեոստացի պահպանության համար, որի հիմնական կենսաբանական մեխանիզմը սեփականի և օտարի տարբերակումն է:

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

### 10.1. ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ժամանակակից իմունաբանությունում տարրերում են երկու հիմնական բաժին՝ **ինֆեկցիոն և ոչ ինֆեկցիոն**: Ինֆեկցիոն իմունաբանությունը գրաղվում է վարակիչ իիվանդությունների նկատմամբ անընկալության մեխանիզմների, իմունիտետի ձևավորման հարցում հումորալ և բջջային գործոնների դերի, հակամարմինների մոլեկուլային կառուցվածքի և կենսասինթեզի, անտիգեն-հակամարմին սպեցիֆիկ փոխազդեցության մեխանիզմների պարզաբանման նպատակով հակամարմինների ակտիվ կենտրոնների կառուցվածքի, T- և B-լիմֆոցիտների ու մակրոֆագերի, օտար ագենտը ճանաչելու, կոռպերատիվ փոխազդեցության բնույթի և համապատասխան իմուն պատասխան տալու հարցերի ուսումնասիրությամբ: Այս հիմքի վրա ինֆեկցիոն իմունաբանությունը մշակում և կատարելագործում է ինֆեկցիոն իիվանդությունների ախտորոշման, բուժման սպեցիֆիկ մեթոդներ, ինչպես նաև կամխարգելման միջոցներ՝ արհեստական իմունիտետ առաջացնելու ճանապարհով: Տարբերում են հակամարմինների իմունիտետի հետևյալ ձևերը՝

◆ ♦ ֆիլոգենետիկորեն առավել վաղ ձևավորված **տեսակային**, բնական, ժառանգական, ի ծնն կամ ոչ սպեցիֆիկ,


◆ **ձեռքբերովի կամ սպեցիֆիկ:**

Ոչ ինֆեկցիոն իմունաբանությունում ձևավորվել և հաջողությամբ զարգանում են մի շարք գիտական ուղղություններ՝ իմունոգենետիկա, վակցինոլոգիա, տրանսպլանտացիոն իմունաբանություն, օնտոգենեզի իմունաբանություն, տոլերանտություն, հակառակուցքային իմունաբանություն, իմունախտաբանություն և այլն (նկ.51):

### 10.2. ՏԵՍԱԿԱՅԻՆ ԻՄՈՒՆԻՏԵՏ, ՕՐԳԱՆԻՉԱՄԻ

#### ՊԱՇՏՈԱՍՈՒԹՅԱՆ ՈՉ ՍՊԵՑԻՖԻԿ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Տվյալ տեսակի կենդանուն կամ մարդուն բնորոշ, բնածին կենսաբանական յուրահատկություններով պայմանավորված անընկալությունը անվանում են **տեսակային**:




### Ակ.51. Իմունարամության զարգացումը

Ըստ Էության, դա տեսակային հատկանիշ է, որը շատ այլ հատկանիշների նման փոխանցվում է **ժառանգաբար**: Շատ հարուցիչների նկատմամբ տեսակային իմունիտետը բավականին կայուն է, սակայն բացարձակ չէ: Կենսաբանական գործոնները, որոնք պայմանավորում են տեսակային իմունիտետը, կոչվում են **պաշտպանության ոչ սպեցիֆիկ գործոններ** (նկ.52): Վերջիններս չունեն որևէ ընտրողական ուղղվածություն հարուցիչների առանձին

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

տեսակների նկատմանը, դրանց պաշտպանական դերը արտահայտվում է անկախ վնասակար ազդակի բնույթից: Պաշտպանական ռեակցիաները իրագործվում են որոշակի բջջային և հումորալ գործոնների միջոցով, ինչը պայմանավորում է բջջային և հումորալ իմունիտետ հասկացությունների տարրերակումը:



### Նկ.52.Օրգանիզմի պաշտպանության ոչ սպեցիֆիկ գործոնները

Հակախնֆեկցիոն պաշտպանության ոչ սպեցիֆիկ գործոններն են՝

- ♦ արտաքին և ներքին պատճեններ՝ անվնաս մաշկ և լորձաթաղանթներ, մարմնի նորմալ միկրոֆլորա, ավշային հանգույցներ, հյուսվածքային ու բջջային պատճեններ,

- ♦ բջջային ու հումորալ մեխանիզմներ՝ ֆագոցիտոց, բնական քիլեր բջիջներ, կոմպլեմենտի համակարգ, լիզոցիմ, բերանի խոռոչի ու աղիքային տրակտի հակածիկրոբային այլ ֆերմենտներ, ցիտոկիններ՝ ինտերֆերոն, սուր փուլի (ֆազայի) սպիտակուցներ,

- ♦ բորբոքում, տենդ, արտազատական համակարգեր:

#### 10.2.1. Մաշկ և լորձաթաղանթներ

Անվնաս մաշկը նախ մեխանիկական պատճեց է շատ ախտածին մանրէների ճանապարհին, և բացի այդ, նրա մակերեսային շեր-

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

Տի անընդհատ նորացումը նպաստում է մահացած բջիջների հետ մանրէների հեռացմանը: Առողջ, անվնաս մաշկն օժտված է արտահայտված բակտերիցիդ ազդեցությամբ, ինչը պայմանավորված է ճարպագեղձերի, քրտնագեղձերի սեկրետներով և դրանց փոխազդեցությամբ առաջացած ակտիվ միացություններով՝ թթվածնի և ջրածնի ակտիվ ռադիկալներ, ջրածնի պերօքսիդ, ամոնիակ, միզանյութ և այլն: Օրգանիզմի տարբեր խոռոչները պատող լորձային շերտը այլ ֆիզիոլոգիական ֆունկցիաներին զուգահեռ իր վրա է ադսորբցում մանրէները և սեկրետի հետ հեռացնում է օրգանիզմից: Բացի այդ, լորձաթաղանթներում արտազատված տարբեր ֆերմենտներն ու կենսագործունեության այլ արգասիքները ևս օժտված են հակաբակտերիային ազդեցությամբ:

### **10.2.2. Օրգանիզմի նորմալ միկրոֆլորա**

Օրգանիզմի նորմալ միկրոֆլորայի պաշտպանական դերը պայմանավորված է առաջին հերթին պաթոգեն մանրէների հետ բարդ փոխազդեցության ձևավորմամբ, ինչն արտահայտվում է պարզ մրցակցությամբ մինչև անտագոնիզմ: Նորմալ միկրոֆլորան նպաստում է իմուն համակարգի հասունացմանը և դրա ֆունկցիոնալ ակտիվության պահպաննանը՝ շնորհիվ օրգանիզմում անընդհատ շրջանառվող միկրոբային անտիգենների: Ստամոքսաղիքային տրակտի, շնչական ուղիների, միզասեռական համակարգի նորմալ միկրոֆլորան կազմող միկրոօրգանիզմները պաշարում են լորձային շերտի էպիթելիային բջիջները՝ խոչընդոտելով ախտածին մանրէների աղիեզիան:

### **10.2.3. Ավշային հանգույցներ**

Ավշային հանգույցները սփռված են ամբողջ օրգանիզմով մեկ, մասնավորապես ստամոքսաղիքային տրակտի, շնչական, միզասեռական ուղիների լորձաթաղանթներում, ենթամաշկում՝ կատարելով յուրօրինակ ֆիլտրի դեր: Ավիշն, սկիզբ առնելով հյուսվածքների

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

միջբջջային տարածությունից, ավշային ուղիներով սահմանային ավշային հանգույցներ է տեղակոխում օտար անտիգենները, այդ թվում և մանրէները, որտեղ դրանք ենթարկվում են մակրոֆազերի ազդեցությանը: Այստեղ կուտակվում են նաև այդ իսկ անտիգենների կողմից ակտիվացած բջիջները, որոնք իրականացնում են սպեցիֆիկ իմուն պատասխան:

### **10.2.4. Ֆագոցիտոզ**


Դեռևս Ի.Մեչնիկովի կողմից արձանագրվել է, որ բարձրակարգ կենդանի օրգանիզմների, այդ թվում նաև մարդու արյան ու լիմֆայի հատիկավոր լեյկոցիտները, իմնականում պոլիմորֆ կորիզավոր նեյտրոֆիլները՝ **միկրոֆազեր**, ինչպես նաև մոնոցիտներն ու հյուսվածքային **մակրոֆազերը**, օժտված լինելով ֆագոցիտար ունակությամբ, իրականացնում են պաշտպանական ֆունկցիա: Ներկայումս մակրոֆազերը և բոլոր այն ֆագոցիտները (ֆագոցիտոզ իրականացնող բջիջներ), որոնք օժտված են կառուցվածքային ու ֆիզիոլոգիական որոշակիորեն նման առանձնահատկություններով՝ ակտիվ շարժունություն, մակերեսի ծալքավոր կառուցվածք, արտաքին թաղանթում բազմաթիվ ընկալիչների առկայություն (մանոզաֆուկոզային՝ MFR, Ig-ների Fc ֆրազմենտի՝ FcR, կոմպլեմենտի C3 ֆրակցիայի՝ C3R, γ ինտերֆերոնի՝ γ-intR նկատմամբ, I և II դասերի հիստոհամատեղելիության անտիգեններ՝ MHC, նկ.52), լիզոսոմալ հզոր ապարատ, ընդգրկված են միասնական **մոնոցիտար ֆագոցիտների համակարգում (ՄՖՀ)**: Նշված առանձնահատկությունների շնորհիվ մակրոֆազերը օրգանիզմում իրականացնում են հետևյալ հիմնական ֆունկցիաները՝

- ◆ պաշտպանական (ֆագոցիտոզ),
- ◆ սեկրետոր՝ կենսաբանական ակտիվ նյութերի սինթեզ,
- ◆ անտիգեն ներկայացնող (պրեզենտացիոն):

Պաշտպանական ֆունկցիան՝ ֆագոցիտոզը (նկ.53) իրականացնում է հետևյալ, միմյանց հաջորդող էտապներով՝

## ԱՌԱՋՈՒՄՆԵՐԻ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

**1. Ֆագողիտար բջջի նպատակային շարժում և մոտեցում ֆագոցիտվող օբյեկտին՝ քենոտաքսիս:** Այն իրականանում է ֆագոցիտար բջջի մակերեսին քենոտարակտանուների (մանրէ և դրա առանձին բաղադրամասեր, օրգանիզմի հյուսվածքների քայլքայման արգասիքներ, կոմպլեմենտի համակարգի ակտիվ ֆրակցիաներ, լիմֆոկիններ և այլն) նկատմամբ ընկալիչների առկայության շնորհիվ:



**Նկ.53. Սակրոֆազի բնկայիչները և ֆազոցիտոզի փուլերը**

2.Օբյեկտի ամրացում ֆագողիսի մակերեսին՝ **աղիծզիա**, որը նույնպես իրականանում է համապատասխան ընկալիչային մեխանիզմներով, ինչպես նաև ֆիզիկաքիմիական ոչ սպեցիֆիկ փոխադրությունների սկզբունքով:

3.Կլանում՝ Ենդոցիտոզ, ինչն այսպես կոչված՝ պրոֆեսիոնալ ֆագոցիտների հիմնական ֆիզիոլոգիական ֆունկցիան է: 0.1մկմ և ավել չափերի մասնիկների կլանումն անվանվում է ֆագոցիտոզ, իսկ դրանից փոքր մասնիկների և մոլեկուլների կլանումը՝ պինդիտոզ: Ենդոցիտոզի արդյունքում ձևավորվում է ֆագոցիտար վակուում՝ ֆազոսում, ըստ որում իներտ մասնիկների (ածուխի փոշու

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

հատիկներ, լատեքսի կտորներ և այլն) կլանումն իրականանում է առանց սպեցիֆիկ ընկալիչների մասնակցության՝ կեղծ ոտիկներով մասնիկի շրջափակման մեխանիզմով: Մանրէների մեծամասնության կլանումը իրականանում է ֆագոցիտների մակերեսին առկա մանողութուզովային ընկալիչների (MFR) միջնորդությամբ, սակայն ֆագոցիտոզն առավել արդյունավետ է, եթե իրականանում է իմունոգլոբուլինների Fc և կոմպլեմենտի C3 ֆրակցիայի նկատմամբ ընկալիչների (FcR, C3R) միջնորդությամբ՝ **իմուն ֆագոցիտոզ:** Յարկ է նշել, որ իմուն ֆագոցիտոզի մեխանիզմով էնդոցիտոզի են ենթարկվում գերազանցապես միկրոօրգանիզմների վիրուլենտ շտամները:

4. Ֆագոստմի և լիզոստմի միաձուլում՝ **ֆագոլիզոստմի** առաջացում:

5. **Ներքջային մարսումն իրականանում է ֆագոլիզոստմում երկու եղանակով՝ թթվածին կախյալ,** որի դեպքում միկրոօրգանիզմները ոչնչացվում են օքսիդացիոն պայերյումի մեխանիզմով, ինչը պայմանավորված է ֆագոցիտի կողմից թթվածնի ու գյուկոզի յուրացման ինտենսիվացմամբ և թթվածնի ակտիվ, արտահայտված բակտերիցիդ ազդեցությամբ ձևերի առաջացնաամբ (սուպերօքսիդային անիոն՝  $O_2^-$ , ջրածնի պերօքսիդ՝  $H_2O_2$ , հիդրօքսիլ ռադիկալ՝  $OH^-$ ) և **թթվածին անկախ,** որն իրականանում է լիզոստմալ ֆերմենտների ազդեցությամբ: Սակայն միշտ չէ, որ ֆագոցիտոզը ավարտվում է կլանված մանրէների ոչնչացմամբ ու վճասագերծմամբ, և ըստ այդմ տարբերում են՝

♦ **ավարտուն ֆագոցիտոզ՝** ֆագոցիտված բջիջների լիակատար մարսում և վճասագերծում,

♦ **անավարտ ֆագոցիտոզ՝** կլանված բակտերիաները ոչ միայն պահպանում են կենսունակությունը, այլև ակտիվորեն բազմանում են և գեներալիզացվում օրգանիզմում:

Անավարտ ֆագոցիտոզն արձանագրվում է հետևյալ դեպքերում՝ 1. մանրէն ցուցաբերում է կայունություն լիզոստմալ ֆերմենտների նկատմամբ (գոնոկոկեր), 2. արգելակվում է ֆագոլիզոստմի

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

առաջացումը (տուրերկուլյոզի հարուցիչներ), 3.մանրէն լքում է ֆագոսոմը շատ ավելի վաղ, քան կծնավորվի ֆագոլիզոսոմը (ռիկետսիաներ):

Ֆագոցիտողը որպես մակրոֆագերի հիմնական, կենտրոնական ֆունկցիա՝ խթանում է դրանց կոռուպցիա լայն ազդեցության, բազմաթիվ կենսաբանական ակտիվ նյութերի՝ լիզոնիմ, այլ լիզոսոմալ ֆերմենտներ, պրոստոռլանդիններ, լեյկոտրոհիններ, թթվածնի ակտիվ ռադիկալներ, կոնալեմենտի ֆրակցիաներ, այդ թվում և ինուն պատասխանի միջնորդների՝ ԻԼ-1, ինտերֆերոն, սինթեզը և **արտազատումը** միջավայր՝ սեկրետոր ֆունկցիա, ինչը հնարավորություն է ընձեռում բակտերիջիդ ազդեցության իրականացումը ոչ միայն ֆագոլիզոսոմում այլև շրջակա միկրոնիջավայրում, ինչպես նաև ապահովում է մասնակցությունը միջքջային փոխազդեցություններում:

Մակրոֆագերի **պրեզենտացիոն ֆունկցիան** արտահայտվում է ֆագոցիտոզի ներքջային մարսման փուլում անտիգենի մշակմամբ (պրոցեսինգ) ու սեփական թաղանթի վրա դրա դետերմինանտ խմբերի **ներկայացմամբ** ինունոկումպետենտ բջիջներին: Ըստ այս ֆունկցիայի՝ նոնցիտար ֆագոցիտների համակարգում ընդգրկված բջիջները դիտարկվում են ոչ միայն որպես օրգանիզմի պաշտպանության ոչ սպեցիֆիկ՝ բնական ռեզիստենտության գործոն, այլ նաև ծեռքբերովի ինունիտետի զարգացմանը նպաստող կարևորագույն օղակ, քանի որ սպեցիֆիկ հականարմինների սինթեզը և գերզայուն լիմֆոցիտների ու հիշողության բջիջների պրոլիֆերացիան իրականանում է դրանց պարտադիր մասնակցությամբ:

### 10.2.5. Բնական քիլեր (NK) բջիջներ

NK բջիջները լիմֆոցիտանման բջիջներ են, բնորոշվում են յուրահասուկ մարկերներով: Մորֆոլոգիորեն դրանք հատիկավոր ցիտոպլազմայով, խոշոր լիմֆոցիտներ են, որոնց ազուրոֆիլ հատիկները, ֆագոցիտար ակտիվությամբ բջիջների լիզոսոմների

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

համարժեք կառույցներն են, սակայն բնական քիլեր բջիջները ֆագոցիտար ակտիվությամբ օժտված չեն: Դրանց բջջասպան ազդեցությունը սպեցիֆիկ չէ, պայամանվորված չէ օտարածին անտիգենի (ախտածին մանրեներ, վիրուսով ախտահարված բջիջներ, ուռուցքային բջիջներ) բնույթով: Որպես ցիտոտոքսիկ գործոն՝ հանդես է գալիս օտարածին բջիջների հետ շփման ընթացքում բնական քիլերների կողմից սինթեզվող պերֆորին սպիտակուցք, որը, թիրախ բջջի թաղանթում պոլիմերացվելով, ապահովում է նրանում փոքր տրամագծի անցուղիների առաջացումը: Վերջիններս պայամանավորում են ներքին օսմոտիկ ճնշման բարձրացումն ու բջիջների մահը: Բջջասպան ազդեցությունը ապահովվում է նաև նշված անցուղիներով լիմֆոցիտի էսթերազների անցմամբ թիրախ բջջի ներքին միջավայր: Այդ ֆերմենտների ներգործությամբ բարձրանում է ներբջջային  $\text{Ca}^{2+}$ -ի մակարդակը, որը նպաստում է սեփական էնդոնուկլեազների ակտիվացմանը և ապոպտոզին:

### 10.2.6. Կոմպլեմենտի համակարգ

Արյան թարմ շիճուկը օժտված է արտահայտված բակտերիցիդ ազդեցությամբ, որն այլ գործոններին զուգահեռ՝ պայմանավորված է նաև կոմպլեմենտի համակարգով: Այն արյան շիճուկի սպիտակուցների շուրջ 10%-ը կազմող բազմաբաղադրիչ, ամբողջական համակարգ է, որի տարրեր բաղադրիչները սինթեզվում են հեպատոնիտների, ֆագոցիտար բջիջների կողմից և սովորաբար ակտիվ չեն: Դրանք ակտիվանում են որոշակի ազդակների ներգործությամբ:

Ներկայունս հայտնի է այդ համակարգի ավելի քան 20 բաղադրամասեր (ֆրակցիաներ), որոնցից ինը համարվում են հիմնական ֆրակցիաները և նշվում են՝ C1, C2, C3..., C9: Կարևոր նշանակություն ունեն նաև համակարգի D, B և P(պրոպերդին) սպիտակուցային գործոնները:

Կոմպլեմենտի համակարգը բակտերիաների և օտարածնությամբ օժտված այլ բջիջների անմիջական ոչնչացմանը զուգահեռ

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ


իրականացնում է նաև հետևյալ ֆունկցիաները՝ օժտված է քենոտարսիկ ակտիվությամբ, մասնակցում է անաֆիլակտիկ ռեակցիաների զարգացմանը, C3 ֆրակցիայի միջնորդությամբ պայմանավորում է ինում ֆագոցիտողը:

Կոմպլեմենտի բակտերիասպան ագրեցությունը դրսնորվում է նրա տարրեր ֆրակցիաների հաջորդական (կասկադային) ակտիվացման շնորհիվ, որն իրականանում է հետևյալ ճանապարհներով (նկ.54):

♦ **Դասական (կլասիկ) ճանապարհով** կոմպլեմենտի համակարգի ակտիվացումը իրականանում է օրգանիզմ ներմուծված հակածնին (ՅԸ) համապատասխան, հակամարմինների (Յմ) առկայության պայմաններում, այսինքն կոմպլեմենտի ակտիվացման խթան է հակածին-հակամարմին (ՅՅՅՅ) կոմպլեքսը՝ ձևավորված միայն M և G դասերի ինունոգլոբուլիններով: Հակածնի միացումը հակամարմնին փոխում է վերջինիս կառուցվածքը, և նրա Fc ֆրագմենտում տեղակայված ընկալիչները դառնում են մատչելի կոմպլեմենտի C1 ֆրակցիային կապվելու համար:  $Ca^{2+}$  իոնների առկայությամբ ձևավորվում է **ՅՅՅՅC1** կոմպլեքսը, որն, սկզբում փոխազդելով C4, այնուհետև  $Mg^{2+}$  իոնների միջնորդությամբ C2 կոմպոնենտների հետ, պայմանավորում է **ՅՅՅՅC1C4C2** համակարգի առաջացումը: Վերջինս ակտիվացնում է C3 ֆրակցիա՝ կատարելով C3 կոնվերտազայի ֆունկցիա, որի հետևանքով առաջանում են C3a և C3b ենթաֆրակցիաները: C3b-ն միանում է նախորդ կոմպլեքսին՝ օժտելով նրան պեպտիդազային ակտիվությամբ՝ **ՅՅՅՅC1C4C2C3b**, որն էլ փոխազդում է C5-ի հետ, նպաստելով նրա ակտիվ՝ C5b ձևի առաջացմանը և կոմպլեմենտի համակարգի մնացած ֆրակցիաների հետ հետագա փոխազդեցությունների արդյունքում քաղանք (մեմբրան) գրոհող համակարգի՝ **C5bC6...C9-ի** ձևավորմանն ու ցիտոլիզին: Կոմպլեմենտի համակարգի ակտիվացման ընթացքում առաջացած **C3a** և **C5a** ցածրամոլեկուլային ենթաֆրակցիաները՝ անաֆիլատոքսիններ, դեր ունեն անաֆիլակտիկ ռեակցիաների զարգացման խնդրում, հանդիսանում են քենոատրակտանտներ:

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

♦Այլընտրանքային (ալտերնատիվ) ճանապարհով կոմպլեմենտի ակտիվացման խթան են հանդիսանում որոշ անտիգեններ՝ գրամ բացասական բակտերիաների լիպոպոլիսախարիդ, մի շարք գրամ



### Նկ.54. Կոմպլեմենտի համակարգի ակտիվացումը

Դրական մանրէներիների բջջապատի պեպտիդոլիկան, վիրուսների մակերեսային կառույցներ՝ գլիկոպրոտեիններ, IgA-ի և IgE-ի հետ իմուն կոմպլեքսներ: Այս դեպքում շրջանցվում են C1, C4, C2 ֆրակցիաները, գործում են պրոպերդինը, D և B շիճուկային սպիտակուցները՝  $Mg^{2+}$  իոնների ներկայությամբ: Պրոտեազային հատկությամբ օժտված D սպիտակուցի ներգործությամբ ակտիվացնում է B սպիտակուցը՝ Bb, որը, C3b կոմպլեմենտի հետ փոխազդելով, պայմանավորում է ալտերնատիվ ճանապարհի C3 կոնվերտազայի՝ C3bBb-ի, առաջացումը:

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

◆ կոմպլեմենտի ակտիվացման լեկտինային ճանապարհն ընթանում է առանց հակամարդինների մասնակցության, արյան հասուլ սպիտակուցների միջնորդությամբ, որոնք ունակ են կապելու բակտերիաների թաղանթում առկա մանողը: Վերջինիս հետ փոխազդեցության արդյունքում ակտիվացնում է C4 ֆրակցիան: Ակտիվացման հետագա ընթացքը կրկնում է դասական ճանապարհը:

Այսպիսով, անկախ կոմպլեմենտի համակարգի ակտիվացման խթանից, հանգուցային է **C3 կոնվերտազայի՝** մի դեպքում **C4C2-ի,** մյուս դեպքում **C3bBb-ի** առաջացումը, որոնք ակտիվացնելով **C3,** այնուհետև **C5 ֆրակցիան՝** պայմանավորում են թաղանթը գրոհող կոմպլեքսի սինթեզը: Վերջինս միսրծվում է բջջաթաղանթի հաստության մեջ, բարձրացնում դրա թափանցելիությունը, ինչի արդյունքում ջուրը շրջապատից անցնում է բջջի ներքին միջավայր և առաջացնում է դրա ամբողջականության խախտում՝ ցիտոլիզ, երիթրոցիտների դեպքում հեմոլիզ:

### 10.2.7. Լիզոնցիմ

Լիզոնցիմը թերմոստաբիլ սպիտակուց է, արտադրվում է արյան մոնոցիտների ու հյուսվածքային մակրոֆագերի, նեյտրոֆիլների կողմից և առկա է գրեթե բոլոր կենսաբանական հեղուկներում: Այն հիդրոլազներին դասվող ֆերմենտ է՝ մուրամիդազա (լատ. murus-պատ), որի ազդեցության մեխանիզմը պրոկարիոտ օրգանիզմների բջջապատի պեպտիդոլիկանի թ-գլիկոգլիտային կապերի հիդրոլիզն է, ինչը նպաստում է բակտերիային թաղանթի թափանցելիության մեծացմանը, բջջի պարունակության արտահոսքին և մահացմանը:

### 10.2.8. Ցիտոլիզներ

Ցիտոլիզներն օրգանիզմի նորմալ և տարրեր ազդակներով ակտիվացած բջիջների կողմից սինթեզվող, պեպտիդային կամ գլիկոպրոտեինային բնույթի, բազմազան հատկություններով և

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

Ֆունկցիաներով օժտված, միջբջջային փոխագդեցության միջնորդ-ներ են, որոնց սինթեզի ու կարգավորման օրինաչափությունները հանգում են հետևյալին՝

◆ Նույն ցիտոկինը կարող են սինթեզել տարբեր բջիջներ, նույն բջիջը՝ տարբեր ցիտոկիններ:

◆ Միևնույն ցիտոկինը կարող է և խթանել և ճնշել թիրախ բջջի ակտիվությունը:

◆ Մի բանի ցիտոկինների միաժամանակյա ազդեցությունը թիրախ բջջի վրա կարող է լինել և սիներգիստական և անտագոնիստական:

◆ Ցիտոկինների հետ կարող են փոխագդել բջջից անջատված ընկալիչները, արգելակելով դրանց կոնտակտը թիրախ բջիջների հետ:

◆ Ցիտոկինները ազդում են ցածր խտություններով (0.001մկգ/մլ):

◆ Բջջի վրա դրանց ազդեցության համար բավական է որպեսզի կապվեն բջջի համապատասխան ընկալիչների 10%-ը:

Ցիտոկինները պայամնավորում են օրգանիզմի կարևորագույն, կենսականորեն անհրաժեշտ ֆունկցիաները, այդ թվում նաև բնածին ու ձեռքբերովի իմունիտետի ռեակցիաները: Մրանց սինթեզի համար խթան կարող են հանդիսանալ անտիգենները, նյարդամիջնորդանյութերը, հորմոնները, պրոստագլամինները, այլ ցիտոկիններ և այլն: Ցիտոկինների մեծամասնությունն անվանվում են այն ազդեցությամբ, որն առաջին անգամ արձանագրվել է (ուռուցքի մեռուկացման գործոն, գրանուլոցիտների և մոնոցիտների հասունացումն ու դիֆերենցումը և դրանց բազմացումը խթանող գործոն և այլն): Ներկայում ցիտոկինները խմբավորվում են ըստ ծագման՝ **լիմֆոկիններ** (սինթեզվում են լիմֆոցիտների կողմից), **մոնոկիններ** (սինթեզվում են արյան մոնոցիտների և մակրոֆագերի կողմից), և ըստ ազդեցության բնույթի՝ **բորբոքմանը նպաստող (պրոբորբոքային)** և **հակարորոքային:** Ցիտոկինները, որոնք ապահովում են իմուն համակարգի բջիջների փոխագդեցության կարգավորումը

## ՈՒՍՄՈՒՆՔ Ի ՍՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

միմյանց և այլ բջիջների միջև անվանվում են **ինտերլեյկիններ (ԻԼ)**: Վերջիններս թվով տասնութը են (ԻԼ1,ԻԼ2,ԻԼ3...ԻԼ18), որոնց մեծամասնությունը հանգուցային դեր ունի սպեցիֆիկ իմուն պատասխանի ձևավորման խնդրում:

### **10.2.9. Ինտերֆերոնի համակարգ**

Վաղուց է հայտնի, որ երկու տարրեր վիրուսների միաժամանակյա կամ մինչև 24 ժամ տարբերությամբ մակրոօրգանիզմ ներթափանցման դեպքում նկատվում է յուրահատուկ փոխազդեցություն, որի հետևանքով դրանք փոխադարձաբար ճնշում են միմյանց՝ **ինտերֆերենցիա**: 1957-ին L. Այզեքսը և Զ. Լինդեմանը հայտնաբերեցին, որ ինտերֆերենցիայի երևույթը պայանանվորված է վիրուսներով ախտահարված օրգանիզմում հատուկ սպիտակուցի՝ **ինտերֆերոնի սինթեզով**: Դետագայում պարզվեց, որ դա ոչ թե մեկ, այլ մի ամբողջ շարք սպիտակուցներ են՝ α-, β- և γ-ինտերֆերոններ, որոնք սինթեզում են օրգանիզմի որոշակի բջիջների կողմից: **α-ինտերֆերոնը** սինթեզում են արյան լեյկոցիտները (լեյկոցիտար ինտերֆերոն), **β-ինտերֆերոնը՝** ֆիբրոբլաստները (շարակցական հյուսվածքի բջիջներ), իսկ **γ-ինտերֆերոնը՝** ակտիվացած T-լիմֆոցիտները, NK-բջիջները և մակրոֆագերը, այդ պատճառով այլ կերպ անվանվում է իմուն ինտերֆերոն:

Ըստ քիմիական բնույթի՝ դրանք գլիկոպրոտեիդներ են, որոնց մոլեկուլային մասսան տատանվում է 17-45kD-ի սահմաններում՝ α- և β-ինտերֆերոնների համար, 20-80kD՝ γ-ինտերֆերոնի համար: Ինտերֆերոնի ինդուկցիայի հիպոթեզի համաձայն՝ բջիջներում նրա սինթեզը արգելակված է հատուկ ռեպրեսոր գեներով: Ինդուկտորի՝ մասնավորապես վիրուսի հետ բջիջի կոնտակտի դեպքում, ռեպրեսորը կապվում է, ինչը նպաստում է օպերոնի ակտիվացմանը և ինտերֆերոնի սինթեզին: Ինտերֆերոնի հակավիրուսային ազդեցությունը արտահայտվում է վիրուսի ներքջային ռեպրոդուկցիան ճնշելու ունակությամբ: Այն անմիջականորեն չի փոխագրում վիրո-

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

Այ իետ և չի խոչընդոտում նրա աղսորբցիային ու ներթափանցմանը բջիջ: Ինտերֆերոնի հակավիրուսային ազդեցությունը պայմանավորված չէ որևէ սպիտակուցի սինթեզով, այլ արտահայտվում է բջիջի փոխանակության հանգուցային ֆերմենտների սինթեզի և ակտիվության բարձրացմամբ, որի արդյունքում ճնշվում է վիրուսային մակրոմոլեկուլների սինթեզը: Ըստ բջջային ընկալիչների բնույթի, դրանց յուրահատկությունների և ինտերֆերենցիայի տիպի՝ ինտերֆերոնները իրենց ազդեցությունը իրականացնում են տարբեր ֆերմենտային համակարգերի ակտիվացմանբ: Ինտերֆերոնի սինթեզին նպաստում են ամենատարբեր գործոններ՝ վիրուսներ, բակտերիաներ, ուռուցքային բջիջներ, իննիզացնող ճառագայթներ, ինչպես նաև սինթետիկ միացություններ: Ինտերֆերոնի կենսաբանական ազդեցության առավել բնութագրական հատկանիշներն են՝

◆ունիվերսալություն՝ ԻՖ-ն ակտիվ է բոլոր վիրուսների և կատմամբ,

◆արտահայտված տեսակային սպեցիֆիկություն՝ մարդու օրգանիզմի հանար արդյունավետ ազդեցություն կարող է ունենալ միայն մարդուց ստացված ինտերֆերոնը, իսկ կենդանիների համար՝ տվյալ կենդանու տեսակից:

◆ԻՖ-ի կենսաբանական ակտիվությունը պայմանավորված է նրա պոլիպեպտիդային, իսկ տեսակային սպեցիֆիկությունը՝ ածխաջրատային կոմպոնենտներով,

◆հետքային էֆեկտի առկայություն՝ բջիջների վրա ինտերֆերոնի պրեպարատով ներգործելուց և այնուհետև լվանալուց հետո դեռևս երկար ժամանակ պահպանվում է նրա ազդեցությունը՝ ճնշելու վիրուսի ռեպրոդուկցիան,

◆տոքսիկ ազդեցության բացակայություն՝ բջիջների մշակումը ինտերֆերոնով չի խանգարում դրանց նորմալ կենսագործունեությանը,

◆ազդեցության բարձր էֆեկտիվություն՝ ԻՖ-ի ամենաչնչին քանակը (մի քանի տասնյակ մոլեկուլ) օժտված է հակավիրուսային ազդեցությամբ:

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

Տարբեր ինտերֆերոնների կենսաբանական ակտիվությունը կարող է արտահայտվել տարբեր աստիճաններով՝ α- և β-ինտերֆերոնները օժտված են առավել արտահայտված հակավիրուսային և հակառաօտցքային ազդեցությամբ, քան γ-ն, վերջինս օժտված է առավելապես ինունախբանիչ ազդեցությամբ։ Այսպիսով, օտարածնության յուրաքանչյուր ազդակի դեպքում օրգանիզմում որպես առաջնային պատասխաններից մեկը, սինթեզվում են ԻՖ-ի մոլեկուլներ, որոնք ներգրավելով բջիջներում, հյուսվածքներում և օրգաններում ընթացող տարբեր նյութափոխանակային պրոցեսներում՝ ապահովում են հոմեոստազի պահպանությունը կառուցվածքային տարբեր մակարդակներում՝ բջջից մինչև ամբողջական օրգանիզմ։

### 10.2.10. Սուր փուլի սպիտակուցներ

Սուր փուլի սպիտակուցները հակամանրեային ազդեցությամբ օժտված, ֆագոցիտողին, կոմպլեմենտի ակտիվացմանը, բորբոքային օջախի ձևավորմանն ու լիկվիդացմանը նպաստող սպիտակուցների մի մեծ խումբ են։ Սրանք սինթեզվում են հյուսվածքներում և հիմնականում յարդում տարբեր վնասվածքներից ու ախտածին մանրեներով վարակումից հետո, պաշտպանական բորբոքային ռեակցիաների զարգացման ընթացքում որոշ ցիտոկինների (մասնավորապես ԻԼ-1, ԻԼ-6, ΟԼՄԳ) ազդեցությամբ։ Դրանց զգալի մասը կազմում է C ռեակտիվ սպիտակուցը, A և P ամիլոդիները, ինչպես նաև արյան մակարդելիության որոշ գործոններ, մետաղները կապող սպիտակուցներ, կոմպլեմենտի կոմպոնենտներ և այլն։

### 10.2.11. Բորբոքում

Բորբոքումը որպես ամբողջական օրգանիզմի պաշտպանական մեխանիզմ առաջացել է էվլոյուցիոն զարգացման ավելի բարձր մակարդակներում, արյունատար և նյարդային համակարգերով օժտված կենդանիների մոտ։ Ֆագոցիտողի հետ մեկտեղ, որը

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

բորբոքային ռեակցիայի պարտադիր կոմպոնենտներից է, նրանում գործում են նաև այլ պաշտպանական մեխանիզմներ, որոնք նպաստում են բորբոքային օջախի սահմանափակմանը, տեղայնացմանը (լոկալիզացում), միկրոօրգանիզմների կուտակմանը (ակումուլացիա) և ոչնչացմանը: Բորբոքային պրոցեսում էական ռեր են կատարում հիմնականում պարարտ քչիջների կողմից արտազատված կենսաբանական ակտիվ նյութերը՝ հիստամին, սերոտոնին, որոնք բարձրացնելով նազանորների պատի թափանցելիությունը՝ նպաստում են բորբոքման զոնայում մակրոֆագեր, կոնալեմենտ, լեյկոտոքսին, ֆիբրինոգեն, հակամարմիններ պարունակող էքսուդատի կուտակմանը և այտուցի առաջացմանը: Բոլոր այս գործոնների կոռպերացիան ապահովում է բորբոքում առաջացնող մանրէների ոչնչացումը, ինչին նպաստում են նաև տեղային ացիդոզի, հիպօքսիայի և հիպերթերմիայի զարգացումը:

### 10.2.12. Տեսն

Օրգանիզմի ջերմության բարձրացում այս կամ այն չափով, նկատվում է գրեթե բոլոր ինֆեկցիոն հիվանդությունների ժամանակ: Ջերմաստիճանի բարձրացումը նպաստում է արյան հոսքի արագացմանը և փոխանակային պրոցեսների ինտենսիվացմանը օրգանիզմում:  $38\text{-}40^{\circ}\text{C}$ -ը համարվում է օպտիմալ մակրոֆագերի ակտիվացման համար, ջերմաստիճանի հետագա բարձրացումը ճնշում է այն: Սրան զուգահեռ՝ ջերմաստիճանի բարձրացումը մանրէների վրա մոլուստիկ ազդեցություն է թողնում, և առաջացած ջերմազգայուն մոլուստները  $38\text{-}40^{\circ}$ -ի պայմաններում կորցնում են բազմանալու ունակությունը կամ այն խիստ ճնշվում է: Բարձր ջերմաստիճանը անբարենպաստ է նաև տարբեր վիրուսների ներբջջային վերարտադրության համար:


Ոչ սպեցիֆիկ պաշտպանական մեխանիզմներից են արտազատական համակարգերը՝ ստամոքսաղիքային, միզական, քրտնագեղձեր և այլն:

### 10.3. ԶԵՌՔԲԵՐՈՎԻ ԻՄՈՒՆԻՏԵՏԸ

Ինչպես արդեն նշվել է, հակաինֆեկցիոն պաշտպանության երկրորդ էտապը ծեռքբերովի իմունիտետն է, որն ունի սպեցիֆիկ ուղղվածություն յուրաքանչյուր մանրէի՝ անտիգենի նկատմամբ և ինչպես անվանումն է նախանշում, ձևավորվում է յուրաքանչյուր օրգանիզմի անհատական զարգացման ընթացքում։ Սպեցիֆիկությունից բացի ծեռքբերովի իմունիտետը բնութագրվում է **իմունաբանական հիշողության** ձևավորմամբ՝ անտիգենային ազդակի կրկնման դեպքում առավել արագ և ուժեղ պատասխան ապահովելու ունակությամբ։ Ըստ այդմ, տարբերում են **առաջնային** և **երկրորդային** իմուն պատասխան։ Պայմանավորված անտիգենի օրգանիզմ ներթափանցելու եղանակով և օրգանիզմում զարգացող իմուն տեղաշարժերով, տարբերում են ծեռք բերովի իմունիտետի հետևյալ տեսակները՝ **բնական և արհեստական** (նկ.55)։ Վերջիններս երկուսն ել կարող են լինել **ակտիվ և պասիվ**։ Ակտիվ իմունիտետը զարգանում է անտիգենի մակրոօրգանիզմ ներթափանցման արդյունքում։ Եթե այն ձևավորվում է ինֆեկցիոն հիվանդություններից հետո, ապա անվանվում է **բնական ակտիվ կամ հետինֆեկցիոն անընկալություն**։ Վակցինացումից հետո առաջացած անընկալությունը՝ արհեստական ակտիվ կամ **հետվակցինային իմունիտետ**։ **Պասիվ բնական անընկալությունն** առաջանում է նորածինների օրգանիզմում, մոր արյան G դասի հակամարմինների կամ մայրական կաթով ստացված A դասի սեկրետոր հակամարմինների շնորհիվ։ **Պասիվ արհեստական անընկալությունը** ձևավորվում է իմուն շիճուկների կամ մաքուր վիճակում ստացված իմունօգլոբուլինների ներարկման ճանապարհով։ Ըստ անտիգենի բնույթի՝ իմունիտետը կարող է լինել **հակաբակտերիային, հակավիրուսային, հակասորսիկ և այլն**։ Որպես կանոն, ինֆեկցիոն հիվանդությունների նկատմամբ անընկալությունը մակրոօրգանիզմում պահպանվում է հարուցիչի բացակայության պայմաններում, սակայն որոշ ինֆեկցիաների դեպքում (տուբերկուլյոզ, համաճարակային բծավոր տիֆ)

## ՈՒՍՍՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

անընկալությունը պայմանավորված է հարուցիչի առկայությամբ՝ ինֆեկցիոն կամ ոչ ստերիլ ինունիտետ:



### Ակ.55. Զեռքբերովի ինունիտետի տեսակները

Տարբերում են նաև տեղային ինունիտետ, որն ապահովում է օրգանիզմի խոռոչներում Ա դասի սեկրետոք հակամարմիններով: Զեռքբերովի անընկալությունը տվյալ հիվանդության նկատմամբ յուրաքանչյուր օրգանիզմում ձևավորվում է ինուն համակարգի օրգաններով և քիցիններով, հիվանդության հարուցիչ՝ անտիգենի հետ փոխազդեցության ընթացքում:

#### 10.4. ԱՍՏԻԳԵՆ (ՇԱԿԱԾԻՆ)

Անտիգեն անվանվում են այն բոլոր նյութերը, անկախ քիմիական բնույթից, որոնք օրգանիզմ ներթափանցելու դեպքում օրգանիզմի ինուն համակարգի կողմից ճանաչվում են որպես օտար և ինդուկցում են ինուն պատասխանի ձևավորում՝

- ◆ սպեցիֆիկ հակամարմինների սինթեզ,
- ◆ զգայուն լիմֆոցիտների պրոլիֆերացում և կուտակում,
- ◆ ինունաբանական հիշողություն,
- ◆ ինունաբանական տոլերանտություն:

Անտիգեններ են կենդանական, բուսական, մանրէային ծագման, ինչպես նաև սինթետիկ քիոպոլիմերները՝ կիմնականում սպի-

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

տակուցները և դրանց կրօնական միացությունները ածխաջրատների (գլխոպրոտեհիդներ), ճարաբերի (լիպոպրոտեհիդներ), նոկլեհինաքթուների (նուկլեոպրոտեհիդներ) հետ, քանի որ հենց սպիտակուցների կառուցվածքային առանձնահատկություններով է դրսևովում յուրաքանչյուր օրգանիզմի գենետիկական անհատականությունը։ Անօրգանական միացությունները, առանձին վերցրած, անտիգեններ չեն կարող լինել։ Բակտերիային բնույթի լիպոպլիսախարիդները և պոլիսախարիդները, պայմանավորված կառուցվածքի առանձնահատկություններով, կարող են հանդես գալ որպես անտիգեններ։ Բոլոր անտիգենները օժտված են մի շարք բնութագրական հատկանիշներով՝

- ◆ անտիգենություն,
- ◆ իմունոգենություն կամ տոլերոգենություն,
- ◆ յուրահատկություն (սպեցիֆիկություն),
- ◆ օտարածնություն։

**Անտիգենությունը** պայմանավորված է թիոպոլիմերի ամբողջական կառուցվածքով, քիմիական բնույթով, մոլեկուլային մասսայով, կոլոիդ վիճակով, կատարողիկ քայլայման նկատմամբ զգայունությամբ (ֆազոցիտար քչիզներում անտիգենի դետերմինանտ խնճերի ներկայացում), ինչպես նաև իմունացվող կենդանու տեսակով, օրգանիզմ ներմուծման եղանակով (էնտերալ և պարենտերալ՝ ներմաշկային, ենթամաշկային, միջմկանային, ներորովայնային և այլն), դոզայով, օրգանիզմում դենատուրացիայի ենթարկվելու արագությամբ։

**Օտարածնությունը** սուբստրատի գենետիկական առանձնահատկությունն է, ինչով այն տարբերվում է ազդեցության թիրախ օրգանիզմի անտիգեններից։ Օրգանիզմի սեփական անտիգենները նորմալ պայմաններում օտարածնությամբ օժտված չեն։

**Իմունոգենությունը** անտիգենային սուբստրատի հատկանիշն է օրգանիզմում ինորուցելու իմուն ռեակցիաների զարգացում՝ հակամարմինների սինթեզ կամ գերզայուն լիմֆոցիտների կուտակում։ Իմունոգենությանը հակառակ հատկանիշ է տոլերոգենությունը, ինչը

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ


բնորոշվում է սեփական անտիգենների նկատմամբ անտարբերությամբ և խոչընդոտում է առոտություն ռեակցիաների զարգացմանը: Տողերանտուրյունը սեփական անտիգենների նկատմամբ ձևավորվում է անհատական զարգացման ընթացքում:

**Սպեցիֆիկությունը** անտիգենի ունակությունն է ընտրողաբար փոխազդելու համապատասխան հակամարմինների կամ լիմֆոցիտների հետ, ինչը բացահիկ կենսաբանական երևույթ է և ընկած է անտիգենների տարբերակնաման ինունաբանական մեթոդների, ինֆեկցիոն հիվանդությունների շճախտորոշման, սպեցիֆիկ կանխարգելման և բուժման հիմքում: Ի տարբերություն անտիգենության՝ սպեցիֆիկությունը պայմանավորված է ոչ թե բիոպոլիմերի ամբողջական մոլեկուլով, այլ դրա անհատական առանձնահատկություններով օժտված կառուցներով՝ դետերմինանտ խմբերով կամ էպիտոպամերով, որոնք բիոպոլիմերի վրա տեղակայված են առավել մակերեսորեն և ուղղված են դեպի միկրոմիջավայր: Սպիտակուցային անտիգեններում էպիտոպամերի բազմազանությունը պայմանավորված է ինչպես ամինաթթուների կազմով ու հաջորդականությամբ, այնպես էլ տարածական կառուցվածքով: Բիոպոլիմերի մակերեսին կարող են դրսկորվել մեկից ավելի էպիտոպամեր, ինչը պայմանավորում է անտիգենի վալենտությունը՝ մոնովալենտ, պոլիվալենտ: Մեկ էպիտոպայի նկատմամբ, պլազմոնիտների միևնուն կլորնի կողմից սինթեզված, հակամարմինները անվանում են մոնոկլոնալ:

Այն հակածինները, որոնք խթանում են հակամարմինների սինթեզն ու գերզգայուն լիմֆոցիտների կուտակունը և ունակ են սպեցիֆիկորեն փոխազդելու դրամց հետ, անվանում են **լիարժեք անտիգեններ**: Գոյություն ունեն նաև ոչ լիարժեք հակածիններ՝ հապտեններ, որոնք գուրկ են իմունոգեննությունից, սակայն ունակ են սպեցիֆիկ փոխազդեցության մեջ մտնելու համապատասխան հակամարմինների կամ լիմֆոցիտների հետ (Ակ.56): Վերջիններս առաջանում են այդ իսկ անտիգենների և կրող սպիտակուցի (կոնյուգացված անտիգեն) կոմպլեքսով օրգանիզմի իմունացման

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՍՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

արդյունքում: Կոնյուգացված անտիգենների ստացումը էքսպերի-նենտում հիմնված է այս սկզբունքի վրա:



### Նկ.56. Անտիգենի կառուցվածքը

Ներկայունս տարբերում են **սուպերանտիգեններ**, որոնք ի տարբերություն այլ անտիգենների՝ ունակ են միաժամանակ խթանելու տարբեր կլոնների անտիգեն ռեակտիվ լիմֆոցիտների պրոլիֆերացումը և ինուն պատասխանի զարգացումը բազմազան, այդ թվում նաև սեփական անտիգենների նկատմամբ, ինչը հաճախ կարող է առաջանալ ռեակցիաների և հիվանդությունների պատճառ դառնալ:

#### 10.4.1. Մարդու օրգանիզմի անտիգենները

Մարդու օրգանիզմում կան բազմազան անտիգեններ, որոնք բնութագրում են նրա ծագումնաբանական առանձնահատկություններն ու անհատականությունը կենդանի բնության դասակարգման և օրգանիզմի կազմավորման բոլոր մակարդակներում: Անտիգենների մի խումբ սպեցիֆիկ է ընդհանրապես բոլոր կաթնասունների, մյուսը՝ մարդու (տեսակային), երրորդը՝ մարդկային առանձին խմբերի (հզուանտիգեններ) համար: Բացի այս, անտիգենային սպեցիֆիկությամբ օժտված են նաև օրգանները, հյուսվածքները, բջիջները՝ օրգանային, հյուսվածքային, բջջային սպեցիֆիկության անտիգեններ:

## ՈՒՍՄՈՒՏՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

Անտիգենները, որոնք բնութագրական են միայն տվյալ օրգանիզմին, անվանում են ալոանտիգեններ: Վերջիններիս դասվում են հյուսվածքային համատեղելիության անտիգենները՝ հիստոհամատեղելիության գլխավոր կոմպլեքսի (անգլ. Major Histocompatibility Complex) գեների արտադրանքը (նկ.57):




Նկ.57. Մարդու օրգանիզմի անտիգենները

Տարբեր մարդկանց անտիգենները, որոնք միմյանցից չեն տարբերվում, անվանվում են սինգեն: Նորմայում օրգանիզմի սեփական անտիգենների նկատմամբ իմուն ռեակցիաներ չեն զարգանում, քանի որ օրգանիզմը դրանց նկատմամբ տղեռանտ է: Դյուսվածքային համատեղելիության անտիգենները (ԴՀԱ) խմբավորվում են երեք դասում, որոնցից երկուսը՝ I-ը և II-ը, անմիջականորեն առնչվում են իմուն համակարգի գործունեության հետ, իսկ երրորդը ներկայացված է կոմպլեմենտի համակարգի առանձին ֆրակցիաներով, ցիտոկիններով և ջերմային շոկի սպիտակուցներով: I դասի ՀՀԱ-ներն առկա են օրգանիզմի բոլոր կորիզավոր բջիջների մակերեսին և ապահովում են օտարածին անտիգենների ներկայացումը CD8 լիմֆոցիտներին, իսկ դրանց ճանաչումը տրանսպլանտացիայի ժամանակ, ռեցիպիենտ օրգանիզմի ԱՆԲ-ների կողմից,

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՍՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

Ապաստում է տրանսպլանտացիոն իմունիտետի զարգացմանը՝ տրանսպլանտամտի օտարմանը:

II դասի **ՀՀԱ-ները** դրսկորված են բացառապես պրոֆեսիոնալ անտիգենների ներկայացնող քջիջների՝ մակրոֆագերի, դենդրիտուսին քջիջների և Ե-լիմֆոցիտների մակերեսին ու ապահովում են օտարածին անտիգենի ներկայացումը CD4 լիմֆոցիտներին (նկ.58),



**Նկ.58. Օտար հակածնի կրկնակի ծանայում**

ինչը բերում է իմուն պատասխանի հումորալ կամ քջային մեխանիզմների զարգացմանը: Այս երկակի ճանաչումը՝ օտար անտիգենի դետերմինանտ խումբ (էպիտոպ) և ՀՀ II դասի անտիգեն, լրացուցիչ երաշխիք է ապահովում, որպեսզի լիմֆոցիտը չակտիվանա սեփական օրգանիզմի անտիգեններով և չնպաստի առևտություն ռեակցիաների առաջացնանը:


### 10.4.2. Մանրէների անտիգենները

Յուրաքանչյուր միկրոօրգանիզմ, որքան էլ պարզ կառուցվածք ունենա, օժտված է անտիգենների մի ամբողջ համակարգով (նկ.59), որոնք, պայմանավորված սպեցիֆիկության մակարդակով, տարբերակվում են **Խմբասպեցիֆիկ** անտիգենների (հանդիպում են միևնույն ընտանիքի կամ ցեղի տարբեր տեսակների մոտ), **տեսակային** սպեցիֆիկության (բնութագրում են տեսակը կազմող առանձնյակներին և ընդհանուր են դրանց համար), **տիպոսապեցիֆիկ**, որոնք

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

պայմանավորում են տեսակի ներսում առանձնյակների տարբերությունները:

Եվույուցիայի ընթացքում մարդու օրգանիզմում պարագիտարկենսակերպին հարմարված մի շարք մանրէների կառուցվածքում և մարդու օրգանիզմի տարբեր հյուսվածքներում ծևավորվել են միանման սպեցիֆիկության ընդհանուր անտիգեններ՝ հետերոանտիգեններ, որոնք խաչած փոխազդեցության արդյունքում (խաչած փոխազդող անտիգեններ) կարող են պատճառ հանդիսանալ անտիգենային միմիկրիայի՝ մանրէի քողարկման մակրոօրգանիզմի պաշտպանական մեխանիզմներից:



### Նկ.59. Մանրէների անտիգենային սպեցիֆիկությունը


Ավանիայտ է, որ խաչած փոխազդող անտիգենները մանրէների համար ունեն պաշտպանական նշանակություն, սակայն ինչ վերաբերվում է մակրոօրգանիզմին, ապա վերջիններիս առկայությունը կարող է խթան հանդիսանալ առևտություն ռեակցիաների զարգացմանը՝ պայմանավորելով իիվանդության պաթոգենետիկ և կլինիկական ընթացքի բարդացումը:

Բակտերիաների կառուցվածքում տարբերում են հետևյալ անտիգենները՝ մակերեսային կամ թաղանթային՝ K-անտիգեն, մարմնական կամ սոմատիկ՝ O-անտիգեն և մտրակային՝ H-անտիգեն (նկ.60):

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ԱՎԱԻՆ

Մտրակային անտիգենը ներկայացված է ֆլագելին սպիտակուցով և զգայուն է ջերմության նկատմամբ: Մարմնական անտիգենը

### **Օ-մարմնական (սոմատիկ)**




### Նկ.60. Բակտերիային բջի անտիգեններ

ջերմակայուն է և պայմանավորված է բջջապատի կառուցվածքով: Գրամ բացասական միկրոօրգանիզմների մոտ, անտիգենային դետերմինանտ խմբերը կապված են ԼՊՍ-ի պոլիսախսարիդային շղթաների վերջնային կրկնվող օղակների հետ: Թաղանթային անտիգենը տեղակայված է առավել մակերեսային և հաճախ քողարկում է մարմնական անտիգենը: Մակրոպատիճ առաջացնող բակտերիաների մոտ այն անվանվում է պատիճային անտիգեն: Ըստ ջերմության նկատմամբ վերաբերնունքի՝ Կ-անտիգենները տարբերակվում են A, B և L անտիգենների, որոնցից առավել ջերմակայուն է A-ն, սակայն դրանք բոլորն ել ավելի ջերմագգայուն են քան սոնատիկ անտիգենը: Մակերեսային անտիգեններից է Vi-վիրուլենտության անտիգենը, որը առկա է որոշ էնտերոբակտերիաների մոտ և պայմանավորում է վերջիններիս վիրուլենտությունը: Լիարժեք անտիգենային հատկություններով օժտված են նաև բակտերիաների կողմից սինթեզված սպիտակուցային թույները: Որոշ մանրեներով հարուցված ինֆեկցիաների դեպքում բորբքային օջախում հայտնաբերվում է արտահայտված ինունգենությամբ օժտված անտիգեն (պրոտեկտիվ անտիգեն), որը միկրոօրգանիզմի

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

մշտական կրոնպենտը չէ, այլ սինթեզվում է մակրոօրգանիզմում ինֆեկցիոն պրոցեսի զարգացման ընթացքում: Առաջին անգամ նման անտիգեն հայտնաբերվել է սիբիրյան խոցի հյուսվածքային էքսուդատում:

Վիրուսների անտիգենային հատկությունները պայմանավորված են վիրուսապեցիֆիկ սպիտակուցներով ու դրանց կոմպլեքսներով՝ միջուկային (լուծվող, նուկլեոկապսիդային, S անտիգեն) և մակերեսային՝ V անտիգեն (նկ.61): Վերջինս պայմանավորված է կապսիդի, իսկ բարդ վիրուսների մոտ նաև սուպերկապսիդի կառույցներով:



### Նկ.61. Վիրուսային անտիգեններ

Այս երկու խուճք անտիգեններից զատ, վիրիոնի կազմում կարող են հանդիպել նաև թիրախն բջջի անտիգեններ:


## 10.5. ԻՄՈՒՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ՕՐԳԱՆՆԵՐԸ

### ԵՎ ԲՁԻՇՆԵՐԸ

Իմուն համակարգը ընդհանուր ծագում ունեցող օրգանների, հյուսվածքների, առանձին բջիջների ու մոլեկուլների ամբողջություն է, որոնց միասնական գործունեությունը ուղղված է օրգանիզմի բջջային, գենետիկական հոմեոստազի պահպանությանը:

## ՈՒՍՄՈՒՆք ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ԱՎԱԻՆ

Տարբերում են իմուն համակարգի կենտրոնական օրգաններ՝ ոսկրածուծ, ոլոցագեղձ (թիմուս), յարդ՝ սաղմի ներարզանդային զարգացման ընթացքում և Ֆաբրիցիուսի տոպրակ (bursa Fabricii) թռչունների մոտ (նկ.62), որտեղ իրականանում է իմունոկոմպետենտ բջիջների առաջացումն ու անտիգեն անկախ հասունացումը,



Նկ.62. Մարդու իմուն համակարգի օրգանները

և պերիֆերիկ օրգաններ՝ արյուն, ավիշ, ավշային հանգույցներ, փայծաղ, ստամոքսաղիքային, միզասեռական, շնչական ուղիների ենթալորձային շերտի լիմֆոիդ հյուսվածքի կուտակումներ

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

(խմբային լիմֆատիկ ֆոլիկուլներ, նշիկներ, պերյան բջեր), որոնցում անտիգենային խթանից հետո հասուն լիմֆոցիտները ենթարկվում են պրոլիֆերացման ու հետագա տարբերակման:

Իմուն համակարգի բոլոր բջիջներն առաջանում են **ոսկրածուծում** պոլիպուտենտ ցողունային արյունաստեղծ բջիջներից, որոնք կազմում են ոսկրածուծի բջիջների չնշին մասը՝ 0.01%-ը: Վերջիններիս 80-90%-ը գտնվում է հանգստի վիճակում, իսկ 10-20%-ի բազմացման արդյունքում ձևավորվում են նույնպիսի ցողունային բջիջներ, ինչպես նաև լիմֆոցիտների ու միելոցիտների նախնի բջիջները, որոնցից սկիզբ են առնում արյան ու լիմֆայի բոլոր ձևավոր տարրերը: Ոսկրածուծում հասունանում և դիֆերենցվում են Յ լիմֆեցիտները: Ոսկրածուծը կատարում է նաև իմուն համակարգի պերիֆերիկ օրգանի ֆունկցիա, այնտեղ իրականանում է Յ լիմֆոցիտների անտիգեն կախյալ հասունացումը և տարբերակումը պլազմատիկ՝ հակամարմին սինթեզող բջիջների:

Պտղի սաղմնային օրգան զարգացման ընթացքում **յարդը** ապահովում է Յ լիմֆոցիտների առաջնային պոպուլյացիայի ձևավորումը: Լյարդում իրականանում է ոսկրածուծից տեղաղափոխված նախն-Յ բջիջների անտիգեն անկախ հասունացումն ու դիֆերենցումը հասուն Յ լիմֆոցիտների:

**Թիմուսը** լիմֆուէփիթելային օրգան է: Ոսկրածուծում առաջացած, լիմֆոցիտների նախնի բջիջները արյան հոսքով տեղափոխվում են թիմուս, որի կեղևային շերտում հասունանում ու դիֆերենցվում են հասուն Տ լիմֆոցիտների առանձին ենթապոպուլյացիաների: Հասունացման ընթացքում լիմֆոցիտների մակերեսին դրսևորվում են նոր կառույցներ, որոնք օժտված են անտիգենային հատկություններով: Վերջիններս համարվում են տարբերակման ցուցանիշ՝ **cluster of differentiation** (CD): Տ լիմֆոցիտները թիմուսում ծերոք են բերում իրենց բոլորին բնորոշ CD2 (պայմանավորում է աղիեզիվությունը) և CD3 (հանդիսանում է ընկալիչ օտար անտիգենի համար) անտիգեններ, ինչպես նաև անտիգեններ, որոնք պայմանավորում են նրանց դիֆերենցումը

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՍՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

Երկու ենթապոպուլյացիաների՝ CD4<sup>+</sup> օժտված հելպերային (Th) ու CD8-ցիտոտոքսիկ՝ քիլեր (Tք) հատկությամբ: Թիմուսի կեղևային շերտում T լիմֆոցիտներն անցնում են երկու կարգի ընտրություն: **Պոզիտիվ ընտրության հետևանքով ձևավորվում են անտիգեն ռեակտիվ բջիջներ (ԱՌԲ) CD4<sup>+</sup> և CD8<sup>+</sup>, որոնք օժտված են սեփական իիստոհամատեղելիությամ անտիգենների և բազմազան օտար անտիգենների նկատմամբ ընկալիչներով: Սրանք ապահովում են T լիմֆոցիտի կոնտակտի հնարավորությունը օտար անտիգենը ներկայացնող բջիջների հետ ու ինուն ռեակցիաների զարգացումը: Կեղևային շերտում իրականանում է նաև նեզատիվ ընտրություն լիմֆոցիտները, որոնք սեփական ՀՎԱ-ներին կոնվլեմենտար ընկալիչներին զուգահեռ ձեռք են բերում ընկալիչներ սեփական այլ անտիգենների նկատմամբ, վերջիններիս հետ կոնտակտի ընթացքում ոչնչանում են՝ պայմանավորելով օրգանիզմի բնական տողեռանտության զարգացումը սեփական անտիգենների նկատմամբ: Արդյունքում, թիմուս բափանցած լիմֆոցիտների միայն 3-5%-ն է վերջնական դիֆերենցվում CD4<sup>+</sup>(Th) և CD8<sup>+</sup>(Tք) բջիջների՝ պատրաստ իրականացնելու համապատասխանաբար հելպերային ու քիլեր ֆունկցիաներ բազմազան օտար անտիգենների նկատմամբ:**

Լիմֆատիկ հանգույցները ավշային և արյունատար անորոնների երկայնքով տեղակայված, անբողջ օրգանիզմով սփռված լիմֆոիդ հյուսվածքի կուտակումներ են: Մարդու օրգանիզմում հաշվվում են շուրջ 1000 լիմֆատիկ հանգույցներ և խոռոչների ենթալորձային շերտում ու մաշկում տեղակայված լիմֆոիդ հյուսվածքի ավելի փոքր կուտակումներ: Սրանք ապահովում են օրգանիզմի ոչ սպեցիֆիկ պաշտպանությունը՝ կատարելով յուրօրինակ ֆիլտրի դեր: Միևնույն ժամանակ լիմֆատիկ հանգույցներում առաջանում են հակամարմիններ սինթեզող և ինուն ռեակցիաներն իրականացնող բջիջները:

**Փայծաղը** իրականացնում է գրեթե նույն ֆունկցիաները, ինչ լիմֆատիկ հանգույցները:

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

Իմուն համակարգի բջիջները ըստ ֆունկցիայի՝ տարբերակվում են երեք խնդիր՝

♦ Իմունոկոմպետենտ բջիջները բացառապես լիմֆոցիտներն են և պայմանավորված այն հանգամանքով, թե որ օրգանում են հասունանում և վերջնական դիֆերենցվում որպես էֆեկտոր բջիջներ, տարբերակվում են **T-(քիմուս)** և **B-(ֆարբիցիուսի բուրսա՝ տոպրակ)** պոպուլյացիաների: Վերջիններս, օժտված լինելով ընկալիչներով օտար անտիգենների ճկատմամբ, ունակ են ձևավորելու սպեցիֆիկ իմուն պատասխան:

♦ **Անտիգեն ներկայացնող բջիջները (ԱՆԲ)** տարբերակում են սեփական անտիգենները օտարից և ներկայացնում վերջիններիս իմունոկոմպետենտ բջիջներին:

.Անտիգեն ոչ սպեցիֆիկ պաշտպանության բջիջներն օժտված են տարբերակելու սեփական անտիգենները օտարից և վերջիններս ոչնչացնելու ֆազոցիտոզի կամ ցիտոտոքսիկ մեխանիզմներով: Այս խմբին դասվում են արյան լեյկոցիտները՝ էոզինոֆիլներ, բազոֆիլներ, նեյտրոֆիլներ:

### 10.5.1. Իմունոկոմպետենտ բջիջներ

Տ լիմֆոցիտները կազմում են օրգանիզմի լիմֆոցիտների ընդհանուր քանակի շուրջ 80%-ը: Լուսային մանրադիտակի տեսադաշտում շատ նման են **B** բջիջներին, սակայն դրանցից տարբերվում են մակերեսային CD մարկերներով և ֆունկցիաներով (նկ.63): Ի տարբերություն Յ լիմֆոցիտների, որոնք ապահովում են հումորալ իմունիտետը, **T** լիմֆոցիտները պատասխանատու են անընկալության բջջային մեխանիզմների համար և միևնույն ժամանակ կարգավորում են բոլոր միջբջջային փոխազդեցությունները թե՛ հումորալ և թե՛ բջջային ռեակցիաներում՝ նպաստելով լիարժեք իմուն պատասխանի զարգացմանը: Ըստ էության, **T** բջիջները կատարում են 2 հիմնական ֆունկցիա՝ **կարգավորող (Th) ու էֆեկտոր (Tg)**:

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՍՈՒՆԻՏԵՏԻ ԱՎԱԻՆ

CD4 անտիգենով օժտված, հասուն **Թ լիմֆոցիտների (CD4<sup>+</sup>)** իմունարանական ֆունկցիայի հրականացումը սկսվում է անտիգեն ներկայացնող բջիջների մակերեսին **օտար անտիգեն-լիասիՇՌԱ**

Բնութագիրը	Լիմֆոցիտներ	
	T-լիմֆոցիտներ	B-լիմֆոցիտներ
Ծագումը	Ոսկրածուծ	Ոսկրածուծ
Հասունացումը	Թիմուս	Ոսկրածուծ
Պարունակությունը արյան մեջ	65-80%	10-15%
Ուղենպատրներ անտիգենի համար	Պրոտեինային ենթերոլիներ ասոց. CD3-ի հետ, CD4, CD8	Իմունոզրուվինի մոլեկուլ
Մասնակցությունը հումորալ պատասխանում Ig-ի սինթեզի խթանում Ig-ի սինթեզ	- եվ + -	+ +
Մասնակցությունը բջջային պատասխանումում	+	-
CD-անտիգենները	CD-2,3,4 կամ 8,5,7,28	CD-19,21,22,23, 24,37

### **Ակ.63. T և B լիմֆոցիտների համեմատական բնութագիրը**

Կոմպլեքսի ճանաչմամբ: Ստանալով օտար անտիգենային ազդակը, Th լիմֆոցիտները պրոլիֆերացվում և դիֆերենցվում են Th1 և Th2 բջիջների (նկ.64): Th1-ի առաջացումը հիմնականում պայմանավորված է ներբջջային պարագիտներով՝ բակտերիաներ, վիրուսներ, իսկ Th2-ի առաջացման համար, որպես կանոն խթան են հանդիսանում ալերգենները, հելմինտների անտիգենները, բակտերիային սպիտակուցային տոքսինները և այլ սպիտակուցային միացություններ:

Նշված երկու խումբ Th բջիջների հիմնական տարրերությունը պայմանավորված է դրանց կողմից սինթեզվող ինտերլեկիններով:  
**Th1 լիմֆոցիտների** կողմից սինթեզվող ցիտոկինները (ԻL2, ԻԼ12, ՂՖ, αΠΤՍԳ) ապահովում են բորբոքումը և գերազանցապես **բջջային իմուն ռեակցիաները՝ հակավիրուսային իմունիտետ**, առևտոիմուն ռեակցիաներ: **Th2 բջիջների** կողմից սինթեզված ցիտոկինները (ԻԼ4,

## ՈՒՍՏՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

ԻԼ5, ԻԼ6, ԻԼ10, ԻԼ13) նպաստում են **հոլմորալ իմուն պատասխանի** զարգացմանը: Պրոլիֆերացման ընթացքում այս երկու խնբերից էլ դիֆերենցվում են հիշողության բջիջներ: **CD4<sup>+</sup>** բջիջներից կարող են

T լիմֆոցիաներ	Tx1	Tx2
Խրանող անտիգեններ	Ներքոցային պարագիաների անտիգեններ (բակտերիաներ, վիրուսներ)	Ալերգեններ, հելմինտների անտիգեններ, սպիտակուցային անտիգեններ
Անտիգեն ներկայացնող բջիջներ	Դենդրիտուսային բջիջներ, մակրոֆազեր	Դենդրիտուսային բջիջներ, մակրոֆազեր, B-լիմֆոցիաներ
Մինթեզվող ցիտոկիններ	ԻԼ-2, ԻԼ-12, γԻՖ, αΠԻՄՖ	ԻԼ-4,5,6,10,13
Զարգացող ունակցիաներ	բջջային ունակցիաներ, հակավիրուսային իմունիտեսա, առատություն ունակցիաներ	Հումորալ իմունիտեսա, ալերգիկ ունակցիաներ, հակապարագիտար իմունիտեսա
Շնչվող ունակցիաներ	Հումորալ ունակցիաներ	բջջային ունակցիաներ

### Նկ.64. Th1 և Th2 լիմֆոցիտների համեմատական բնութագիրը

Դիֆերենցվել նաև էֆեկտոր՝ դանդաղ տիպի գերզգայունության (Tուգ) բջիջներ:

**CD8<sup>+</sup>** լիմֆոցիտները հիմնական ցիտոտոքսիկ ազդեցությամբ օժտված բջիջներն են (Tք) և կազմում են T լիմֆոցիտների ընդհանուր քանակի մինչև 30%-ը: Դրանց հարաբերությունը CD4<sup>+</sup> բջիջների հետ 1:2-1:2.5 է: Եվ՛ Th, և՛ Tք բջիջները օտարածին անտիգենների նկատմամբ օժտված են նույնատիպ ընկալիչներով, սակայն նրանք տարբերվում են ընկալիչներով ՀՀԱ-ների նկատմամբ: Ի տարբերություն Տ հելպերների՝ CD8<sup>+</sup> լիմֆոցիտները օտար հակածինը անտիգեն ներկայացնող բջիջների մակերեսին ճանաչում են ասոցացված բացառապես | դասի ՀՀԱ-ի հետ: Ի դասի ՀՀԱ-ները գտնվում են մակրոօրգանիզմի բոլոր կորիզավոր բջիջների մակերեսին, որի շնորհիկ Տք-ները փոխազդում են օտարածինության դրոշմը կրող յուրաքանչյուր բջջի հետ և ակտիվանալով՝ պայմանավորում են հակավիրուսային, հակառառուցքային, տրանսպլանտացիոն իմունիտետը: CD8<sup>+</sup> բջիջների ակտիվացմանը նպաստում է նաև Th1-ի կողմից սինթեզված ԻԼ2-ը: Tք

## ՈՒՍՄՈՒՆՔ ԽՍՌԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

բջիջների կոնտակտը թիրախ բջջի հետ ուղեկցվում է լիմֆոցիտի կողմից աերֆորին սպիտակուցի արտազատմամբ, որը, թիրախ բջջի թաղանթում պոլիմերացվելով, ապահովում է փոքր տրամաչափի անցուղիների առաջացում և լիմֆոցիտի էսթերազմների անցում բջջի ներքին միջավայր: Նշված ֆերմենտների ագրեցությամբ բարձրանում է ներքջային *Ca-ի* մակարդակը, որը նպաստում է սեփական էնդոնուկլեազների ակտիվացմանը և ապոապոզին:

Ե լիմֆոցիտները կազմում են արյան լիմֆոցիտների 20-25%-ը և իրականացնում են երկու կարևոր ֆունկցիա՝ դիֆերենցվում են պլազմատիկ բջիջների (պլազմատիկ բջիջները՝ պլազմոցիտները, Ե լիմֆոցիտների անտիգեն կախյալ դիֆերենցման արդյունքում առաջացած, կարճատև ապրող, հակամարմինների հիմնական զանգվածի սինթեզը իրականացնող բջիջներ են) և մասնակցում են անտիգենի ներկայացմանը *Th-ներին*: Ե բջիջներն օժտված են մակերեսային ընկալիչներով բազմազան անտիգենների նկատմամբ, որոնք ներկայացված են իմունոգլոբուլինների մոլեկուլներով, ընդ որում յուրաքանչյուր լիմֆոցիտում ծևավորվում են ընկալիչներ միայն մեկ սպեցիֆիկության անտիգենի համար: Ե լիմֆոցիտներն անտիգենի հետ կարող են փոխազդել ինչպես ներկայացված ԱՆԲ-ների մակերեսին, այնպես էլ ուղղակի՝ առանց միջնորդի և դրանից հետո իմուն պատասխանը զարգանում է երկու մեխանիզմով՝ *T* կախյալ և *T* անկախ:

Անտիգենների մեծամասնության նկատմամբ իմուն պատասխանը զարգանում է **T կախյալ մեխանիզմով** CD4<sup>+</sup> բջիջների կողմից սինթեզված ցիտոկինների միջնորդությամբ: Անտիգենային խրանի դեպքում, Ե լիմֆոցիտներին զուգահեռ, ակտիվանում են և *Th-ները*, որոնք սինթեզում են *IL2*, *IL4*, *IL5* ցիտոկիններ և նպաստում են Ե լիմֆոցիտի պրոլիֆերացմանն ու դիֆերենցմանը, ընդհուած մինչև հակամարմիններ սինթեզող պլազմատիկ բջիջներ (պլազմոցիտներ): Այս գործընթացում ծևավորվում են նաև Ե հիշողության բջիջներ: Հակամարմինների սինթեզի ընթացքում *Th-ների* կողմից սինթեզված

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

այլ ցիտոկինոները՝ IL4, IL6, IL2, γFS, ապահովում են M իմունոգլոբուլինների սինթեզի փոխարկումը IgG-ի:

Տ անկախ մեխանիզմը խթանվում է որոշ ոչ սպիտակուցային անտիգեններով (իիմնականում քակտերիային ծագման պոլիսախարիններ) և ընթանում է առանց T լիմֆոցիտների միջնորդության: Նման դեպքերում իմուն պատասխանը ավելի պարզունակ է, չի ուղեկցվում իմունաբանական հիշողության ձևավորմամբ, և IgM-ի սինթեզը չի փոխարկվում այլ դասերի իմունոգլոբուլինների սինթեզով:

### 10.5.2. Անտիգեն ներկայացնող բջիջներ (ԱՆԲ)

Ինուն համակարգի ԱՆԲ-ներին դասվում են մակրոֆագերը, դենդրիտային բջիջները (դրանց բվում առավել հայտնի են էպիդեմիսի Լանգերհանսի բջիջները), B-լիմֆոցիտները, անորների ենդոթելի, երիկամների գլոմերուլների բջիջները, որոնք պարտադիր օժտված են II դասի ՀՀԱ-ով և ունակ են կլանելու, մշակելու ու սեփական թաղանթի մակերեսին դրսերելու օտարածին անտիգենի դետերմինանտ խմբերը:

Դարկ է նշել, որ առաջին երեքը «պրոֆեսիոնալ» անտիգեն ներկայացնող բջիջներ են: **Մակրոֆագերը** մոնոնուկլեար ֆագոցիտների համակարգի բջիջներ են, որոնք սերվում են ոսկրածուծի ցողունային բջիջներից: Դասունանալով և տարբերակվելով արյան մոնոցիտների՝ դրանք արյունից անցնում են հյուսվածքներ ու վեր ածվում շուրջ 20-25 անգամ մոնոցիտների քանակը գերազանցող հյուսվածքային մակրոֆագերի: Վերջիններից են լարդի կուտֆերյան բջիջները, կենտրոնական նյարդային համակարգի միկրոգլիան, ոսկրային հյուսվածքի օստեոկաստները, թոքային ալվեոլների մակրոֆագերը և այլն: Ինուն պատասխանում ԱՆԲ-ների դերը հաճագում է օտարածին սուրստրատի կլաննան ու նրա դետերմինանտ խմբերի դրսերմանը, սեփական II դասի ՀՀԱ-ի հետ ասոցացված, իր իսկ թաղանթի մակերեսին և ձևավորված կոմպլեքսի ներկայացմանը T լիմֆոցիտներին՝ անմիջական կոնտակտի ճանապարհով: Բացի

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՍՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

այդ, անտիգենով ակտիվացած լիմֆոցիտների համար լրացուցիչ աղղակ է մակրոֆաքերի կողմից սինթեզված ԻԼ1-ը, որը խթանում է դրանց պրոլիֆերացումը և նպաստում անտիգենի նկատմամբ իմունարանական ռեակցիաներ իրականացնող, սպեցիֆիկ լիմֆոցիտների կլոնի ձևավորմանը: **Դեմորիտային բջիջները** գուրկ են ֆագոցիտար ակտիվությունից և էնդոցիտոզից հետո անտիգենի դետերմինանու խմբերը ներկայացնում են ասոցացված ինչպես հիստոհամատեղելիության առաջին, այնպես էլ երկրորդ դասի անտիգենների հետ՝ և CD4, և CD8 լիմֆոցիտներին:

### 10.6. ՄԻՋԲՁՁՎՅԻՆ ԿՈՂՊԵՐԱՑԻԱՆ ԻՄՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՏԱՐԲԵՐ ԶԵՎԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ


Ինչպես հետևում է վերը շարադրվածից, Տ լիմֆոցիտներն իրականացնում են իմուն պատասխանի **բջջային**, իսկ B լիմֆոցիտները՝ **հիումորալ** մեխանիզմները: Սակայն երկու մեխանիզմներն եւ չեն կարող իրականանալ ինքնուրույն, առանց անտիգեն ներկայացնող բջիջների մասնակցության, որոնք ի լրացումն անտիգեն ռեակտիվ բջիջներին ներկայացվող սպեցիֆիկ անտիգենային աղղակի ձևավորում են նաև ոչ սպեցիֆիկ՝ ցիտոկինային աղղակ:

Եվ՝ բջջային, և՝ հումորալ իմուն պատասխանի զարգացումը սկսվում է CD4<sup>+</sup> լիմֆոցիտի կողմից, անտիգեն ներկայացնող բջջի մակերեսին, անտիգենային **Էպիտոպ-ԻլեասիթՅԱՆ** կոմպլեքսի ճանաչմանը: Դրան զուգահեռ CD4<sup>+</sup> լիմֆոցիտը խթանվում է ԱՆԲ-ի կողմից արտազատած **ԻԼ1-ով**: Սպեցիֆիկ անտիգենային և ցիտոկինային աղղակներ ստացած CD4<sup>+</sup> լիմֆոցիտները իրենք են սկսում սինթեզել տարբեր ցիտոկիներ՝ ԻԼ2,3,4,5,6, ցԻՖ և այլն, որոնք նպաստում են ինչպես այլ բջջային պոպուլյացիաների, այնպես էլ իրենց իսկ ֆունկցիաների ակտվացմանը՝ այդ ցիտոկիների նկատմամբ սեփական թաղանթի վրա ընկալիչների դրսնորման միջոցով: Ակտիվացած CD4<sup>+</sup> լիմֆոցիտները հասունանում, դիֆերենցվում են Թ-ների և բազմանում, որոնց մի մասը արյան մեջ շրջանառվում է որպես անտիգեն սպեցիֆիկ հիշողության բջիջներ, իսկ մյուս մասը

## ԱՌԱՋՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ապահովում է ինուն պատասխանի տարբեր ծեսերի կարգավորումը և զարգացումը:

**Բջջային իմուն պատասխանի ձևավորման դեպքում օրգանիզմ** ներմուծված օտար անտիգենը ոչ միայն ակտիվացնում է CD4<sup>+</sup> բջջները՝ պայմանավորելով Th-ների դիֆերենցումն ու բազմացումը, այլ միաժամանակ ճանաչվում է CD8<sup>+</sup> լիմֆոցիտների կողմից: Սակայն ի տարբերություն CD4<sup>+</sup> բջջների՝ դրանք անտիգենային էափսուած ճանաչում են ասոցացված **Իլիասի ՀՀԱ-ի հետ**, և քանի որ վերջիններս առկա են օրգանիզմի բոլոր կորիզավոր բջջների մակերեսին, CD8<sup>+</sup> լիմֆոցիտների համար ԱՆԲ-ի շրջանակը գգալիորեն լայնանում է՝ վիրուսով ախտահարված հյուսվածքային բջջներ, ուռուցքային բջջներ և այլն: Ակտիվանալով սպեցիֆիկ անտիգենով և ստանալով լրացուցիչ ցիտոկինային ազդակ նույն անտիգենով ակտիվացած Th-ներից ու մակրոֆազերից՝ CD8<sup>+</sup> բջջները հասունանուն են, դիֆերենցվում անտիգեն սպեցիֆիկ ցիտոտոքսիկ (քիլեր) բջջների և ինտենսիվ պրոլիֆերացման ենթարկվելով՝ ձևավորում են **Տք լիմֆոցիտների** պոպուլյացիան, պատրաստ իրականացնելու ցիտոտոքսիկ ֆունկցիա (նկ.65):



#### **Նկ.65. Բջջային իմուն պատասխանի գարզագումը**

Բջջային իմուն պատասխանը՝ պայմանավորված անտիգենային ազդակի բնությով, կարող է դրսենորվել նաև  $CD4^+$  բջիջներից,


## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՍՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

Եֆեկտոր ազդեցությամբ օժտված, Դանդաղ տիպի գերզգայունության Տ լիմֆոցիտների (Դուք), դիֆերենցմամբ: Սրանք պահպանվում ու շրջանառվում են օրգանիզմում և նույն անտիգենի կրկնակի ներթափանցնան դեպքում, ճանաչում են նրան անտիգեն ներկայացնող բջիջների մակերեսին՝ ասոցացված Ալդասի ՀՅԱ-ի հետ, ակտիվանում են, ենթարկվում պրոլիֆերացման ու իրականացնում միջնորդված ցիտոտոքսիկ ազդեցություն՝ ապահովելով բորբոքային օջախի ձևավորումն ու մակրոֆագերի և այլ ֆագոցիտար բջիջների ակտիվացնումն ու միգրացիան դեպի անտիգենը (Ակ.65): Ակտիվացած մակրոֆագերը պաշտպանական ֆունկցիան իրականացնում են ինչպես ֆագոցիտոզի մեխանիզմով, այնպես էլ ցիտոկինների, տարբեր կենսաբանական ակտիվ միացությունների սինթեզի ճանապարհով, որոնք պայմանավորում են բակտերիաների և այլ օստար բջիջների ու անտիգենների ոչնչացումը: **Դանդաղ տիպի գերզգայունությունը (ԴՏԳ)** օրգանիզմի տեղային իմուն պատասխանն է, որը կարող է զարգանալ որևէ անտիգենի նկատմամբ գերզգայուն օրգանիզմի յուրաքանչյուր հյուսվածքում, նույն անտիգենի կրկնակի ներմուծման դեպքում: Գործնականում ԴՏԳ-ն դիտարկվում է գերազանցապես մաշկային ալերգիկ ռեակցիաների տեսանկյունով:

**Դումորալ իմուն պատասխանը** իրականանում է Բ լիմֆոցիտների և իմուն համակարգի այլ բջիջների և առաջին հերթին Th-ների հետ կոռպերացիայի արդյունքում (Ակ.66), ընդ որում վերջիններիս համար որպես ԱՆԲ-ներ մակրոֆագերի հետ միասին կարող են հանդես գալ նաև անտիգենով ակտիվացած Բ լիմֆոցիտները: Բ լիմֆոցիտը, առանց այլ ԱՆԲ-ների միջնորդության, ուղղակի կոնտակտի ճանապարհով ճանաչում է ՀԾ-ն, ենթարկում էնդոցիտոզի և նրա էպիտոպները դրսառելով սեփական թաղանթի մակերեսին Ալդասի ՀՅԱ-ի հետ ներկայացնում է Th-ին: Th-ն անտիգենը ճանաչում է միաժամանակ այլ ԱՆԲ-ների մակերեսին և նրան գուգահեռ՝ կրկնակի ակտիվացնում է մակրոֆագերի կողմից սինթեզված ԻԼ1-ի միջոցով, ինչի արդյունքում դրա կողմից սինթեզված ԻԼ2;4;5-ը ակտիվացնում են արդեն անտիգենով խթանված Բ լիմֆոցիտներին,

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

ապահովելով վերջիններիս ինտենսիվ պրոլիֆերացումը և լիարժեք հումորալ ինուն պատասխանի զարգացումը՝ հակամարմիններ սինթեզող, պլազմատիկ բջիջների (պլազմոցիտ) կուտակումը:



ՏԲՈ-Տ հելպեր բջջի ռեցեպտոր, ԱՆԲ-անտիդեն ներկայացնող բջիջ,  
ՄԱԳ-ճակրովազը ակտիվացնող գործոն, ԲԲԱԳ-Յ բջջը ակտիվացնող  
գործոն, ՅՇ և ՅՇ- հիստոհամատեղելիուրյան երկրորդ դասի հակածին

### Նկ.66. Հումորալ իմուն պատասխանի զարգացումը

Դետագայում ԻԼ6;4;2 ցիտոկինները և ցիֆ-ն նպաստում են M իմունոգլոբուլինների սինթեզի փոխարկմանը IgG-ի: Ելիմֆոցիտի ակտիվացումը միայն մեկ ազդակով՝ անտիգենային կամ ցիտոկինային, չի կարող նպաստել լիարժեք հումորալ ինուն պատասխանի զարգացմանը:


## 10.7. ՀԱԿԱՍԱՐՄԻՆՆԵՐ

Հակամարմիններն արյան շիճուկի շուրջ 1/3-ը կազմող, պլազմոցիտների կողմից սինթեզվող, γ-գլոբուլիններին դասվող գլիկոպրոտեինային մոլեկուլներ են, որոնք առաջանում են օրգանիզմում ի պատասխան օտարածին անտիգենի և ունակ են սպեցիֆիկորեն փոխազդելու վերջիններիս հետ: Ներկայումս դրանք միջազգային

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՍՈՒՆԻՏԵՏԻ ԱՎԱԻՆ

դասակարգմանը անվանվում են **իմունոգլոբուլիններ** (Ig): Որևէ կոնկրետ սպեցիֆիկության հակամարմինները պլազմոցիտների մեջ կլոնի արգասիքն են և անվանվում են **մոնոկլոնալ հակամարմիններ**:

Դակամարմինների կարևորագույն դերը օտարածին անտիգենների վնասագեղձման խնդրում խթան հանդիսացավ վերջիններիս մոլեկուլային կառուցվածքի ուսումնասիրությունների համար: Առավել պարզ կառուցվածքով ներկայացված Ig-ի մոլեկուլի սպիտակուցային բաղադրանասը կազմված է 4 պոլիպեպտիդային շղթայից՝ երկու միանման ծանր՝ H-շղթա (անգլ. Heavy-ծանր) և երկու միանման թերև՝ L-շղթա (անգլ. Light-թերև) (նկ.67):




### Նկ.67. Իմունոգլոբուլինի մոնոմերի կառուցվածքը

Պոլիպեպտիդային շղթաներից ամեն մեկը բաղկացած է փոփոխական (վարիաբել)՝ V, և հաստատուն (կոնստանտ)՝ C հատվածներից: Յուրաքանչյուր թերև շղթան C հատվածով, դիսուլֆիդային կամքակով, կապվում է ծանր շղթայի C հատվածին, իսկ ծանր շղթաներն ել իրենց հերթին C հատվածներով նույնպիսի կամքակներով կապվում են միմյանց՝ առաջացնելով **իմունոգլոբուլինի մոնոմերը**: Ծանր և թերև շղթաների միավորված վարիաբել հատվածներով ձևավորվում է Ig-ի երկու ակտիվ կենտրոն՝

## ՈՒՍՏՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

պարատոպ կամ **Fab** (fragment antigen binding) ֆրազմենտ, որոնք ապահովում են հակամարմնի սինթեզը խթանող անտիգենի հետ սպեցիֆիկ փոխազդեցությունը: Հաստատուն շղթաները կազմում են իմունոգլոբուլինի **Fc** ֆրազմենտը (fragment cristallizable): Նշված երկու ֆրազմենտների միջև տարրերում են ճկուն գրտին, որը հնարավորություն է ընձեռում Ig-ի մոլեկուլին այդ հատվածում թեքումներ կատարելու և ապահովում է առավել սերտ կոնտակտ անտիգենի հետ: **Լիարժեք** հակամարմինները առնվազն երկվալենտ են, այսինքն մոնոմերի երկու Fab ֆրազմենտներից յուրաքանչյուրը կարող է կապվել միևնույն էպիտոպով օժտված մեկ անտիգենի հետ: Fc ֆրազմենտը օժտված չէ անտիգենը կապելու ունակությամբ, այն նույնն է տարրեր սպեցիֆիկության հակամարմինների համար և ապահովում է դրանց մի շարք ֆունկցիաները՝ կոմպլեմենտի համակարգի ակտիվացում կլասիկ ճանապարհով, իմուն ֆագոցիտոզ՝ կապվելով նաև ֆագերի Fc ռեցեպտորների հետ և այլն:

Իմունոգլոբուլինները, ինչպես յուրաքանչյուր սպիտակուցային մոլեկուլ, օժտված են անտիգենությամբ և արտահայտված իմունոգենությամբ: Ըստ այդմ, տարրերում են հակամարմինների հետևյալ անտիգենային դետերմինանտները՝ իգոստիպային, ալոտիպային և իդիոտիպային (նկ.68), որոնք բնութագրում են դրանց տեսակային, խմբային, անհատական ու նաև անտիգենային սպեցիֆիկությունը:



Նկ.68. Ig-ների անտիգենային սպեցիֆիկությունը

Իգոստիպային առանձնահատկությունները պայմանավորված են Ig-ի ծանր շղթաներով, որոնք հանդես են գալիս կառուցվածքային հինգ տարրերակով՝ իգոստիպ,  $\gamma$ ,  $\mu$ ,  $\alpha$ ,  $\delta$ ,  $\epsilon$ , ինչի հիման վրա բոլոր հակամարմինները տարրերակվում են հինգ համապատաս-

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՍՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

Խան դասերի՝ **G(γ), M(μ), A(α), D(δ), E(ε)**: Իզոտիպային դետերմինանտները բնութագրում են Ig-ի տեսակային սպեցիֆիկությունը, դրանք նույն են միևնույն տեսակի բոլոր առանձնյակների մոտ: Ինունօգլորուվինների թերև շղթաները նույն են բոլոր հինգ դասերի համար և ներկայացված են երկու իզոտիպերով՝ λ, κ:

Ալոտիպը Ig-ի անհատական պատկանելությունն է միևնույն տեսակի սահմաններում:

**Իդիոտիպերի** տարբերակումը պայմանավորված է տվյալ անտիգենի նկատմամբ սինթեզված հակամարմինների Fab ֆրագմենտների հիպերվարիաբել հատվածների՝ ակտիվ կենտրոնների, անտիգենային առանձնահատկություններով: Յուրաքանչյուր իդիոտիպի հակամարմինների կուտակումը օրգանիզմում խթանում է ինուն պատասխանի զարգացումը վերջիններիս նկատմամբ ու հակահակամարմինների (հակախիոտիպային հակամարմիններ) սինթեզը:

Բոլոր դասերի հակամարմինների կառուցվածքի հիմքը երկուական ծանր և թերև շղթաներով կազմված մոնոմերներն են, որոնք ձևավորում են դի- և պոլիմերներ: Ինունօգլորուվինների դասերը տարբերվում են մոնոմերների քանակով, վալենտությամբ՝ անտիգենը կապող ակտիվ կենտրոնների քանակով (մոնովալենտ, բիվալենտ, պոլիվալենտ), ընդ որում մոնովալենտները համարվում են ոչ լրիվ հակամարմիններ, ավիդությամբ՝ անտիգենի հետ կապվելու արագությամբ և ամրությամբ, պլացենտար պատճեշն անցնելու ունակությամբ և այլն (նկ.69):

**Գ դասի ինունօգլորուվինները** մոնոմեր են (նկ.70), սինթեզվում են առաջնային ինուն պատասխանի գագաթնակետին և երկրորդային ինուն պատասխանի ժամանակ, կազմում են արյան Ig-ների մինչև 70-80%-ը: Դրանք օժտված են բավականին բարձր ավիդությամբ և կապվելով անտիգենների հետ՝ առաջացնում են ցանցանման կառույց՝ ագլուտինատ, պրեցիպիտատ: **Անտիգեն-հակամարմին կոմպլեքսի** առաջացումն ապահովում է IgG-ի Fc ֆրագմենտի միացումը կոմպլեմենտի C1 ֆրակցիային և կոմպլեմեն-


## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

Մի համակարգի ակտիվացումը կլասիկ ճանապարհով: G իմունոգլոբուլիններով է պայմանավորված իմուն ֆազոցիտոզը: G իմունոգլոբուլինները միակն են, որ անցնում են պլացենտար պատճեղը

Իմունոգլոբուլինների հասկարյաւնները	Իմունոգլոբուլինների դասերը				
	IgG	IgM	IgA	IgD	IgE
H-շղթա	γ	μ	α	δ	ε
Մոնոմերների քանակը	1	5	1.2.3.4.	1	1
Մոլ. մասան հՃ	150	900	160-400	180	190
Պարտականությունը արյան մեջ	12 ր/լ	1 ր/լ	2.5 ր/լ	0.03 ր/լ	0.0002 ր/լ
Կիսատրոհումը օրերով	21	10	6	3	2
Անցումը պլացենտայով	+	-	-	-	-
Կոմպլեմենտի ակտիվացում ԿՃ	++	+++	-	-	-
Տոքինների չեզոքադրում	+	+	+	-	-
Հակավիրաւային ակտիվություն	++	+	+++		
Ազյուտինացիա, պրեցի- պիտացիա	+	+	-	-	-
Օպտիմազում, քակտերիալիզ	++++	±	+	-	-
Յիսովիլարյան	-	-	-	?	+

### Նկ.69. Իմունոգլոբուլինների համեմատական բնութագիրը


և կյանքի առաջին մի քանի ամիսների ընթացքում նորածնին պաշտպանում են մի շարք ինֆեկցիոն հիվանդություններից:



### Նկ.70. G դասի իմունոգլոբուլինի կառուցվածքը

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՍՈՒՆԻՏԵՏԻ ԱՎԱԻՆ

Ա դասի իմունոգլոբուլինները պենտամեր են (նկ.71), սինթեզվում են առաջնային իմուն պատասխանի սկզբում և կազմում են շիճուկային իմունոգլոբուլինների մոտ 5-10%-ը:




Նկ.71. Ա դասի իմունոգլոբուլինի կառուցվածքը

Առավել բարձր ավիդությամբ օժտված հակամարմիններն են, կարող են առաջացնել ազյուտինացիա, պրեցիպիտացիա և կոնյուլեմենտի համակարգի ակտիվացում: Պլացենտար պատճեշը չեն անցնում:

Ա դասի իմունոգլոբուլինները մոնոմեր են և կազմում են շիճուկային Ig-ների 10-15%-ը (շիճուկային A դասի հակամարմիններ): Դրանք չեն ազյուտինացնում և չեն պրեցիպիտացնում անտիգենները: Արյան A դասի իմունոգլոբուլինների շուրջ 60%-ը, անցնելով օրգանիզմի տարբեր խոռոչների լորձային շերտի էպիթելային թղթներով, ձեռք են բերում վերջիններիս կողմից սինթեզված սեկրետոր կոմպոնենտը, որով երկու կամ երեք մոնոմերներ միմյանց

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

կապվելով, ձևավորում են **սեկրետոր A իմունոգլոբուլիններ** (SIgA) (Նկ.72):



### Նկ.72. A դասի իմունոգլոբուլինի կառուցվածքը

SIgA-ն պայմանավորում է տեղային իմունիտետը՝ խոչընդութելով ախտածին մանրեների արիեգիան էպիթելիային բջիջների մակերեսին: Ազդեցածված վիճակում ակտիվացնում է կոմպլեմենտի համակարգը ալտերնատիվ ճանապարհով, ինչն իր հերթին խթանում է տեղային ֆագոցիտար պաշտպանությունը:


Ե դասի իմունոգլոբուլինները նորմալ պայմաններում արյան մեջ գտնվում են չնչին քանակներով (0.002%) և օժտված են արտահայտված ցիտոֆիլությամբ, ինչը պայմանավորում է դրանց անրացումը պարարտ բջիջներին, կենսաբանական ակտիվ նյութերի՝ հիստամինի, կինինների արտազատումը վերջիններիս կողմից և անաֆիլակտիկ ռեակցիաների զարգացումը: Այս հանգամանքով պայմանավորված Ե հակամարմինները այլ կերպ անվանվում են ռեագիններ:

Ծ դասի հակամարմինների (0.2%) խնդրում դեռևս միանշանակ կարծիքներ չկան:

Հակամարմինների սինթեզը օրգանիզմում սկսվում է դեռևս ներարգանդային կյանքի 20-րդ շաբաթում և ծնվելուց հետո առավելագույնի է հասնում հասում տարիքում: Առամձին դասերի հակամարմինների խտությունը, դրանց քանակական փոխհարաբերությունը, սինթեզի դինամիկան ու ինտենսիվությունը, սպեցիֆիկությունը պայմանավորված են բազմազան գործոններով՝ օրգանիզմ ներմուծված հակածնի քիմիական բնույթով, մուտքի դրաներով, դոզայով, մակրոօրգանիզմի տարիքով, սեռով, իմունաբանական

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՍՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

Կարգավիճակով և այլն: Սակայն, անկախ այդ ամենից, հակամարմնների սինթեզն ընթանում է որոշակի օրինաչափությամբ՝ մինյանց հաջորդող ինդուկտիվ-լատենտ, լոգարիթմական, ստացիոնար և նվազման ֆազաներով (նկ.73):



**Նկ.73. Դականարմինների սինթեզի դիմամիկան**

Առաջնային իմուն պատճենամի ինդուկտիվ ֆազայի 3-5 օրերի ընթացքում ԱՆԲ-ները իրականացնում են անտիգենի մշակումը և ներկայացնումը իմունոկոմպետենտ բջիջներին, որոնք ակտիվանալով պրոլիֆերացվում են՝ սկիզբ տալով անտիգեն սպեցիֆիկ հակամարմինների սինթեզին պատրաստ պլազմատիկ բջիջների պուլի ձևավորմանը: Այս էտապում հականարմիններն արյան մեջ դեռևս չեն հայտնաբերվում: **Լոգարիթմական ֆազայի** 7-15 օրերի ընթացքում պլազմոցիտների կողմից սինթեզված հակամարմիններն անցնում են արյան և ավշային համակարգեր ու տարածվում են ողջ օրգանիզմում: **Ստացիոնար ֆազայի** ընթացքում հակամարմինների խտությունը օրգանիզմում հասնում է առավելագույնի և մինչև մեկ ամսվա ժամանակահատվածում պահպանվում որոշակի կայուն

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

մակարդակով, այնուհետև հաջորդում է նվազման ֆազան, որը կարող է ճգվել 5-6 և ավելի ամիսներ: Առաջնային իմուն պատասխանի առանձնահատկությունը այն է, որ առաջնահերթ սինթեզվում են M դասի իմունոգլոբուլիններ, այնուհետև՝ IgG:

Անտիգենի կրկնակի ներմուծման, երկրորդային իմուն պատասխանի զարգացման դեպքում իմունիտիվ ֆազան կրծատվում է ընդհուաց մինչև մի քանի ժամ (առավելագույնը 1-2 օր): Դա բացատրվում է նրանով, որ ներմուծված անտիգենը անմիշապես խթանում է օրգանիզմում առաջնային իմուն պատասխանից հետո շրջանառվող, նույն անտիգենով սենսիբիլացված **հիշողության բջիջները**, պայմանավորելով դրանց ինտենսիվ պրոլիֆերացումն ու հականարմինների սինթեզը: Լոգարիթմական ֆազան բնութագրվում է հականարմինների տիտրոի առավել արագ աճով և զգալիորեն բարձր մակարդակով, ինչը հետագա ֆազաների ընթացքում աստիճանաբար, մի քանի տարիների ընթացքում նվազում է՝ որոշ ինֆեկցիաների դեպքում պահպանվելով նույնիսկ տասնյակ տարիներ: Երկրորդային իմուն պատասխանի դեպքում սինթեզվում են առավելապես G իմունոգլոբուլիններ:

### **10.8. ԻՄՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ**

Իմունաբանական հիշողությունը իմուն համակարգի ունակությունն է պատասխանելու անտիգենի կրկնակի ներմուծմանը՝ սպեցիֆիկ իմուն ռեակցիաների արագ զարգացմամբ, երկրորդային իմուն պատասխանի տիպով: Այն պայմանավորված է նախկինում նույն անտիգենով գերզգայունացած (սենսիբիլացված), օրգանիզմում շրջանառվող, էֆեկտոր ֆունկցիայից գերծ T և B հիշողության բջիջներով: Իմուն հիշողության ֆենոմենը արտահայտվում է ինչպես հումորալ, այնպես էլ բջջային ռեակցիաներում: Տվյալ անտիգենի նկատմամբ զգայուն T և B հիշողության բջիջները շրջանառվում են օրգանիզմում հանգստի վիճակում, նույն անտիգենի հետ կրկնակի կոնտակտի դեպքում շատ արագ ենթարկվում են պրոլիֆերացման ձևավորելով հականարմին սինթեզող և ցիտոտոքսիկ բջիջների:

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՍՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

ծավալուն պուլ: Իմունաբանական հիշողությունը պահպանվում է շատ երկար ժամանակ, իմնականում և հիշողության բջջների հաշվին:

### 10.9. ԻՄՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ՏՈԼԵՌԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Նորմալ պայմաններում օրգանիզմի իմուն համակարգը տարբերում է սեփական անտիգենները օտարից և ապահովում է օտարածին անտիգենի վնասազերծումն ու էլիմինացիան օրգանիզմից՝ անվնաս թողնելով սեփական հյուսվածքները և բջջները: Իմուն համակարգի առեակտիվությունը սեփական անտիգենների նկատմամբ անվանվում է բնական տողեռանտություն (անտարբերություն), ինչը յուրաքանչյուր օրգանիզմում սկսում է ձևավորվել դեռևս սաղմնային շրջանում՝ շարունակվելով ողջ անհատական զարգացման ընթացքուն, ընդհուած մինչև կյանքի վերջ՝ շնորհիվ լիմֆոցիտների նեգատիվ սելեկցիայի: Սեփական անտիգենների նկատմամբ տողեռանտության վերացումը նպաստում է առևտություն հիվանդությունների զարգացմանը:

Ինչպես արդեն նշվել է, օտարածին անտիգենի նկատմամբ օրգանիզմի իմուն պատասխանը կարող է դրսնորվել նաև իմունաբանական տողեռանտությամբ, որի զարգացումը պայմանավորված է ինչպես անտիգենի ծագմանը, թիմիական բնույթով, այնպես էլ մի շարք նպաստող գործոններով՝

♦օրգանիզմի իմուն համակարգի ֆունկցիաները ճնշող գործոններ,

♦ակտիվ իմունիտետի զարգացման համար անտիգենի անբավարար դոզա («ցածր դոզային» տողեռանտություն),

♦օրգանիզմ ներմուծված անտիգենի չափից ավելի մեծ դոզաներ («բարձր դոզային» տողեռանտություն կամ իմունաբանական պարալիզ):

Տողեռոգենությամբ իմնականում օժտված են ցածրամոլեկուլային սպիտակուցային անտիգենները, հապտենները:

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

### 10.10. ԻՄՈՒՆԱԲԱՆՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինունաախտաբանությունը ուսումնասիրում է այն ախտաբանական պրոցեսները և հիվանդությունները՝ ինունաբանբավարարության վիճակներ, գերզգայուն ռեակցիաներ (ալերգիաներ), առևտություն ռեակցիաներ/հիվանդություններ, որոնց առաջացման խնդրում որոշակի դեր ունի ինուն համակարգը:

Ինունաբանբավարարությունը (ինունողեֆիցիտ) օրգանիզմի կողմից անտիգենի նկատմամբ նորմալ ինուն պատասխանի և այլ ինունաբանական ֆունկցիաների իրականացման անկարողությունն է: Այսպիսի կարգավիճակներն օրգանիզմում կարող են արձանագրվել ի ծնե և կարող են ծեռք բերվել կյանքի ընթացքում: **Ի ծնե ինունողեֆիցիտները** պայմանավորված են սաղմնային զարգացման ընթացքում ինուն, էնրոկիրին և այլ համակարգերի թերություններով: Զեռքբերովի ինունողեֆիցիտները կարող են զարգանալ տարբեր հիվանդությունների՝ ինֆեկցիաներ, ինտոքսիկացիաներ, սթրեսային իրավիճակներ, մետաբոլիկ խանգարումներ (դիաբետ, ճարպակալում, սպիտակուցային քաղց, հյուծում, աթերոսկլերոզ և այլն), բուժական միջոցառումների (ճառագայթում, ինունոսուպրեսոր պրեպարատների կիրառում, վիրաբուժական միջամտություններ), ինչպես նաև օրգանիզմի ծերացման հետևանքով: Ինունողեֆիցիտ իրավիճակները հաճախ կարող են պատճառ դաշնալ այլ ինունախտաբանական ռեակցիաների՝ ալերգիաների և առևտությունների:

**Ալերգիան** (հուն. *allos*-այլ, *ergon*-ազդեցություն) օրգանիզմի գերզգայուն վիճակն է ինչպես օտարածին, այնպես էլ սեփական անտիգենների նկատմամբ, որն առաջանում է տվյալ օրգանիզմի ռեակտիվականության փոփոխության պատճառով: Ալերգիկ ռեակցիաներ առաջացնող անտիգեններն անվանում են **ալերգեններ**: Ալերգիկ ռեակցիաների զարգացումը օրգանիզմում պատճառ է դաշնամունքի շարք ախտաբանական պրոցեսների և հիվանդությունների, սակայն որոշ դեպքերում դրանք ունեն նաև պաշտպանական նշանակություն՝ դանդաղ տիպի գերզգայունություն: Պայմանավոր-

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՍՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

Ված ալերգենի բնույթով, զարգացման մեխանիզմով և կլինիկական արտահայտությամբ՝ գերզգայուն ռեակցիաները տարբերակվում են 4 հիմնական տիպի, սակայն կոնկրետ անձանց մոտ ավելի հաճախ հանդիպում են համակցված ռեակցիաներ: Դրանցից առաջին երեքը դասվում են անմիջական տիպի գերզգայուն ռեակցիաներին:

**Առաջին տիպը անաֆիլակտիկ ռեակցիան է** (հուն.առահակառակ, phylaxis-պաշտպանություն): Այն օրգանիզմի ընդհանուր կան տեղային ռեակցիան է՝ ի պատասխան ալերգենի ներմուծման, որի դերում առավել հաճախ հանդես են գալիս ցածրամոլեկուլային միացությունները՝ կենդանական, բուսական ծագման փոշիներ, սննդամբերը, դեղորայք, տնային փոշու տարրեր, միկրօրգանիզմների կոմպոնենտներ, որոշ սպիտակուցային պրեպարատներ և այլն: Վերջիններս, հեշտությամբ անցնելով լորձաթաղանթներով, խթանում են գերազանցապես **Ե իմունոգլոբուլինների՝ նորմայից շատ ավելի քանակների սինթեզը**, որոնք, օժտված լինելով ցիտոֆիլությամբ, ֆիքսվում են պարարտ բջիջների, բազոֆիլ լեյկոցիտների մակերեսին (գերզգայունացում):

**Օրգանիզմ կրկնակի ներմուծված ալերգենները շատ արագ փոխազդում են պարարտ բջիջների մակերեսին **ֆիքսված Ե հակամարմինների հետ** (IgE-ալերգեն կոմպլեքսի առաջացում)՝ խթանելով դրանց կողմից կենսաբանական ակտիվ միացությունների (իխոտամին, սերոտոնին, անաֆիլակսին, հեպարին, լիզոսոմալ ֆերմենտներ) սինթեզը և մեծ քանակներով արտազատումը: Նշված միացությունները (անաֆիլատոքսիններ) պայմանավորում են սուրբ բորբոքյախն ռեակցիայի զարգացումը, հարթ մկանների, անորմների, բրոնխների սպազմը, ինչը կլինիկորեն դրսևորվում է մաշկում և լորձաթաղանթներում ցանի, ինֆիլտրատների գոյացմամբ, բրոնխների օքստրուկցիայով ու շնչահեղձությամբ, ռինիտով և այլն: Անաֆիլակտիկ ռեակցիաներն արտահայտվում են սենսիբիլացված օրգանիզմ ալերգենի կրկնակի ներթափանցումից անմիջապես հետո, 10-30 րոպեի ընթացքում, ինչով դրանք տարբերվում են գերզգայուն ռեակցիաների այլ տեսակներից (նկ.74):**

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

Անաֆիլակտիկ ռեակցիաները բնութագրվում են նաև ալերգենի փոքր դոզաների կրկնակի ներմուծման դեպքում, դեսենսիֆիլիզացիայի հնարավորությամբ, ինչը ապահովվում է ալերգենի նկատմամբ IgE-ի սինթեզի փոխարկմամբ IgA-ի կամ IgG-ի սինթեզի,

ԱՆՌԵԱԿԱՆ ՏԻՊ	ԴԱՏԱՎԱՐՏԻՊ
Ռեակցիան դրամորփում է սենսիբիլիզված օրգանիզմ ՀԾ-ի կրկնակի ներմուծումից 15-30 րոպե անց	Ռեակցիան զարգանում է 6-8 մինչև 48 և ավելի ժամ անց
Ռեակցիան առավել հաճախ ընթանում է արյան անոքներով հարուստ օրգաններում, անմիջականորեն արյան հոսքում և հարք մկաններում	Հաճախ ընթանում են մաշկի եւս ալերգենի երկարավան կոնտակտի պայման ներում
Արյան հոսքում առկա են շրջանառվող IgE	Հական արմինները արյան հոսքում բաց ակայում են
Հնարավոր է գերզգայունության պասիվ փոխանցում սենսիբիլիզված արյան շիճուկով	Պասիվ փոխանցումը հնարավոր է լինֆոիդ օրգանների բջիջներով, լեկոցիաներով

### Նկ.74. Անմիջական և դամդաղ տիպի գերզգայում

#### ՌԵԱԿՋԻԱՆԵՐԻ ԻԱՄԵՆԱՍՈՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

որոնք կուտակվելով օրգանիզմում՝ կապվում են ալերգենին և խոչնորուում են ալերգեն-IgE կոմպլեքսի առաջացմանը: Սուր ալերգիկ ռեակցիաներից խուսափելու համար այնպիսի նյութերի ներարկման ժամանակ, մասնավորապես ինուն շիճուկների, հակաբիոտիկի պրեպարատների, որոնց նկատմամբ օրգանիզմը կարող է գերզգայուն լինել, կիրառվում է Բեզզեղկայի եղանակը՝ սկզբնական ներարկումը շատ փոքր դոզայով, ռեակցիայի բացակայության դեպքում ամբողջական դոզայի ներարկում: Անաֆիլակտիկ ռեակցիայի արտահայտման ծայրահեղ վիճակը՝ անաֆիլակտիկ շոկը, պայմանավորված է անոթների կտրուկ լայնացմամբ, արյան ճնշման անկմանը և հարք մկանների ու բրոնխների սպազմով, որը կլինիկորեն դրսևորվում է հեղողով, տախիկարդիայով, վերջույթների

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

սառնությամբ ու մարմնի ջերմաստիճանի բարձրացմամբ, այտուցներով, ցավերով հոդերում և կենտրոնական նյարդային համակարգի ախտահարմամբ:

Ե իմունոգլոբուլինների նորմայից ավելի քանակների սինթեզը կարող է պայմանավորված լինել ինչպես անտիգենի բնույթով, այնպես էլ ժառանգական նախատրամադրվածությամբ: Նորմալ օրգանիզմում Ե իմունոգլոբուլինների սինթեզի ինտենսիվությունը հակադարձ համեմատական է Ա դասի հակամարմինների սինթեզին, և IgA-ի դեֆիցիտով անձինք, որոնք 1000-ից երկու-երեքն են, ալերգիկ ռեակցիաների զարգացման ռիսկի խմբերից մեկն են: Ժառանգական նախատրամադրվածությամբ պայմանավորված Ե իմունոգլոբուլինների սինթեզով միջնորդված անմիջական տիպի գերզգայունության ռեակցիաները անվանվում են ատոպիաներ (հուն. atopos-անսովորություն, տարօրինակություն), որոնք արձանագրվում են միայն մարդկանց մոտ և դրանց կանխարգելումը դեսենսիբիլիզացիայի ճանապարհով որպես կանոն չի հաջողվում: Ատոպիաների կլինիկական արտահայտությունը մեծապես պայմանավորված է այն օրգաններով և հյուսվածքներով, որոնց բջիջների վրա իրականանում է IgE-ի ֆիբուլը: Պրոցեսում մաշկի բջիջների ընդգրկման դեպքում զարգանում է ալերգիկ եղնացան, նորածինների էկզեմա, վերին շնչական ուղիների դեպքում՝ ալերգիկ հարբուխ, բրոնխների դեպքում՝ բրոնխային ասթմա, աչքի կոնյուկտիվայի դեպքում՝ կոնյուկտիվիտ և այլն:

**Երկրորդ տիպի (ցիտոտոքսիկ)** գերզգայուն ռեակցիաների զարգացման հիմքում ընկած են օրգանիզմի բջիջների թաղանթային անտիգենների նկատմամբ սինթեզված հակամարմինները: Նման անտիգենների դերում կարող են հանդես գալ և՝ օրգանիզմի բջիջների առևտունտիգենները, և նաև դրանց թաղանթներում ֆիբուլած դեղանյութերի անտիգենները: Թիրախի բջիջների վնասման հիմնական մեխանիզմը կոմպլեմենտ կախյալ ցիտոլիզն է՝ պայմանավորված ալերգենի M կամ G դասի հակամարմինների հետ կոմպլեքսի առաջացմամբ: Գերզգայունության ցիտոտոքսիկ տիպը կարող է

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

հանդիպել որոշ դեղանյութերի՝ պենիցիլինային խմբի պրեպարատների, սուլֆանիլամիդների կիրառման, անհամապատասխան արյան փոխներարկման (հեմոլիտիկ անեմիա), առևտություն հիվանդությունների ժամանակ:

**Երրորդ տիպի** գերզգայունության ռեակցիաները պայմանավորված են օրգանիզմի տարբեր կենսաբանական հեղուկներում, այդ թվում նաև արյան մեջ առաջացող և շրջանառվող **հակամարմինանտիգեն ինուն կոմպլեքսներով**, որոնք նորմալ պայմաններում ապահովում են անտիգենի վնասագերծումն ու էլիմինացիան օրգանիզմից: Սակայն որոշակի դեպքերում, երբ ինուն կոմպլեքսները ձևավորվում են շատ ավելի արագ և մեծ քանակներով, քան կարող են հեռացվել օրգանիզմի արտազատական համակարգերով, դրանք կարող են կուտակվել, ֆիքսվել հյուսվածքներում և ինդուկցել կոմպլեքներ կախյալ ցիտոլիզը, բորբոքային օջախի ձևավորումն ու դրան հաջորդող հյուսվածքների վնասումը: Ընդ որում, ինուն կոմպլեքսները կարող են կուտակվել և առաջացնել բորբոքային օջախներ ամենատարբեր օրգաններում և հյուսվածքներում՝ մաշկ, հոդեր, անորոներ, մկաններ, երիկամներ՝ պայմանավորելով հիվանդությունների համակարգային բնույթը, որոնց դասվում են շիճուկային հիվանդությունը, կարմիր գայլախտը և այլն:

**Չորրորդ՝ դամդաղ տիպի գերզգայուն ռեակցիաների** հիմքում ընկած է ինուն պատասխանի բջջային մեխանիզմը, որի դեպքում CD4 բջիջներից հասունանում և դիֆերենցվում են նաև դամդաղ տիպի գերզգայունության **T էֆեկտոր լիմֆոցիտներ (T<sub>սգ</sub>)**: Վերջիններս մակրոօրգանիզմ նույն անտիգենի կրկնակի թափանցման դեպքում ճանաչում են նրան ԱՆԲ-ների մակերեսին, ասոցացված լիդասի ՀՀԱ-ի հետ, ակտիվանում են, ենթարկվում պրոլիֆերացման և իրականացնում միջնորդված ցիտոտոքսիկ ազդեցություն՝ ապահովելով մակրոֆագերի և այլ ֆագոցիտար բջիջների ակտիվացումն ու միգրացիան դեպի անտիգենը, դրանով իսկ բորբոքային օջախի ձևավորումը: Ակտիվացած մակրոֆագերը ֆագոցիտողին գուգահեռ՝ արտազատում են մեծ քանակներով տարբեր կենսաբանական

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

ակտիվ միացություններ, որոնց ազդեցությամբ ևս բակտերիաները, ուռուցքային և այլ օտարածին բջիջները ոչնչանում են: Բջջային տիպի ալերգիաները հիմնականում զարգանում են ինֆեկցիոն հիվանդություններից հետո՝ տուբերկուլյոզ, բրուցելյոզ, տուլարմիա և այլն: Օրգանիզմի գերզգայունացում կարող են առաջանել նաև մի շարք կենդանի վակցինաներ:

### 10.11. ԻՄՈՒՆԱԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ԻՄՈՒՆԱԲՈՒԺՈՒՄ

Կիրառական մանրէաբանության կարևորագույն ուղղություններից մեկը ինֆեկցիոն հիվանդությունների իմունականխարգելման և բուժման արդյունավետ միջոցների ստեղծումն է, որոնք ներկայումս դասվում են իմունակենսաբանական պրեպարատների շարքին: Վերջիններս այն պրեպարատներն են, որոնք կամ անմիջականորեն ազդում են իմուն համակարգի վրա՝ խթանելով կամ ճնշելով նրա ֆունկցիան, կամ դրանց ազդեցության հիմքում ընկած են իմունաբանական ռեակցիաներ: Իմունակենսաբանական պրեպարատները, պայմանավորված բնույթով, ծագմամբ, ստացման և կիրառման եղանակներով, տարբերակվում են հետևյալ խմբերի՝

◆ վակցինաներ և այլ պրոֆիլակտիկ ու բուժական պրեպարատներ՝ ստացված մանրէներից և դրանց կենսագործունեության արգասիքներից (անատոքսիններ, ֆագեր, էուրիոտիկներ),

- ◆ իմուն շիճուկներ,
- ◆ իմունամոդուլյատորներ,
- ◆ ախտորոշիչ պրեպարատներ, այդ թվում և ալերգեններ:

**Իմունականխարգելումը**, առանձին անհատների մոտ կամ որոշակի խմբերում, ինֆեկցիոն հիվանդությունների կանխումն է արհեստականորեն ձեռքբերովի, սպեցիֆիկ իմունիտետի առաջացմամբ, ինչին կարելի է հասնել իմունացման երկու հիմնական ճանապարհով՝

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

♦ ակտիվ իմունացման հիմքում ընկած է մանրէների անտիգենների (վակցինաներ) ներարկումը օրգանիզմ, որի շնորհիվ ձևավորվում է ակտիվ իմունիտետ,

♦ պասիվ իմունացումն իրականացվում է սպեցիֆիկ հակամարդինների (իմուն շիճուկներ, իմունոգլոբուլիններ) ներարկմամբ:

Բոլոր այն պրեպարատները, որոնք կիրառվում են որոշակի մանրէների կամ դրանց տոքսինների դեմ՝ օրգանիզմում արհեստական, ձեռքբերովի, ակտիվ իմունիտետի առաջացման նպատակով, անվանվում են վակցինաներ: Անկախ ծագումից և բնույթից, բոլոր վակցինաները պետք է բավարարեն մի շարք պարտադիր պայմանների՝

♦ պետք է օժտված լինեն բավականին բարձր իմունոգենուրյամբ, այսինքն առաջացնեն կայուն և հնարավորինս երկարատև իմունիտետ,

♦ օրգանիզմի համար պետք է լինեն բացարձակ անվտանգ,

♦ պետք է լինեն քիչ ռեակտուգեն և չառաջացնեն անցանկալի կողմնակի ռեակցիաներ,

♦ Ծիշտ տեղափոխման և պահպանման դեպքում պետք է կայուն պահպանեն անտիգենային և իմունոգեն հատկությունները:

Ըստ վակցինաների կառուցվածքի՝ մեջ մտնող անտիգենների կազմի՝ տարբերում են մոնովակցինաներ, որոնք պարունակում են մեկ սերովարի անտիգեններ, պոլիվակցինաներ՝ մի քանի սերովարների անտիգեններ պարունակող, կոմպլեքսային (կոմբինացված կամ ասոցացված)՝ տարբեր տեսակների անտիգեններ պարունակող: Վակցինաների օրգանիզմ ներմուծման մեթոդները, պայմանավորված միկրոօրգանիզմների առանձնահատկություններով, որոնցից որանք ստացվել են, կարող են լինել տարբեր՝ վերմաշկային, ներմաշկային, ենթամաշկային, միջմկանային, ինտրանազալ, պերօրալ:

Ըստ ծագման և կառուցվածքի՝ բոլոր վակցինաները տարբերակվում են հետևյալ հիմնական խնդերի՝

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ԱՎԱԻՆ

♦ Կենդանի ատենուացված (թուլացված) վակցինաներ: Սրանք առաջին սերնոյի պատվաստանյութերն են, որոնք ախտածին միկրոօրգանիզմների հաջորդական պասաժների արդյունքում, նպատակառողված ընտրությամբ ստացված, ցածր վիրուլենտությամբ կամ ընդհանրապես վիրուլենտությունից գուրև, սակայն պահպանված անտիգենային և ինունօգեն հատկություններով շտամներ են: Վերջիններս, պատվաստվածների օրգանիզմում բազմանալով, առաջացնում են անսիմպտոմ (latent) ինֆեկցիա՝ պայմանավորելով արհեստական ձեռքբերովի ինունիտետի զարգացումը: Ընդ որում, այն գրեթե ոչնչով չի տարբերվում բնական ձեռքբերովի անընկալությունից և որպես կանոն կայուն է, երկարատև, ընդհուած ցմահ: Ներկայումս կենդանի վակցինաները հաջողությամբ կիրառվում են ինչպես վիրուսային, այնպես էլ բակտերիային ինֆեկցիաների կանխարգելման նպատակով: Շատ ավելի վաղ հայտնի և երկարատև կիրառություն ունեցող բակտերիային վակցինաներից է հակատուրերկուլյոզային՝ BCG վակցինան, ավելի ուշ ստացվել են ժամտախտի, տուլարենիայի, սիբիրյան խոցի, բրուցելյոզի, որովայնատիֆային պատվաստանյութերը: Փորձարկումներ է անցնում կապույտ հազի դեմ վակցինան, որը ստացվել է տոքսինագոյացման մոլուստ գենով շտամներից: Վիրուսային ինֆեկցիաների կանխարգելման նպատակով կիրառվում են հետևյալ կենդանի վակցինաները՝ Սեբինի պոլիոմիելիտային, կարմրուկային, պարօտիտային, կատաղության, բնական ծաղկի, կարմրախտի, դեղին տենդի և այլն: Յարկ է նշել, որ կենդանի վակցինաները դրական կողմերի հետ մեկտեղ ունեն նաև մի շարք թերություններ՝

- 1.օրգանիզմի գերզգայունացում,
- 2.քույլ օրգանիզմներում կարող են առաջացնել կլասիկ ինֆեկցիա,
- 3.որոշ հակավիրուսային պատվաստային շտամներ կարող են պատճառ դառնալ ծանր պերսիստենտային ինֆեկցիաների զարգացման:

♦ Սպանված կամ ինակտիվացված վակցինաներն անվտանգ են ինֆեկցիոն պրոցես առաջացնելու առումով, սակայն, որպես կանոն, ավելի քիչ ինունգեն են, քան կենդանի վակցինաները։ Դրանք ստացվում են ախտածին միկրոօրգանիզմներից, շերմային կամ քիմիական նյութերով մշակման եղանակով, որը սակայն բացառում է կարևորագույն անտիգենների բնագրելուն։ Սպանված վակցինաներ կիրառվում են ինչպես բակտերիային, այնպես էլ վիրուսային մի շարք ինֆեկցիաների կանխարգելման համար՝ լեպտոսավիրոզ, կապույտ հազ, գրնորեա, բրուցելյոզ, գրիպ, տղային էնցեֆալիտ։ Ինչպես կենդանի վակցինաները, վերջիններս ևս ունեն որոշակի թերություններ՝ օրգանիզմի սենսիբիլացում, ինուն համակարգի մեջ թերոնավորում, ունակտոգենություն և սորսիկություն՝ պայմանավորված լիպիդների և այլ քիմիական միացությունների առկայությամբ։

♦ Մանրէները ներկայացված են անտիգենների մի ողջ բազմազանությամբ, որոնցից քչերն են կարևոր, մաժորային էպիտոպներ՝ օժտված առավել պրոտեկտիվ հատկություններով։ Այս առումով կարևոր տեղ են գրավում կրոմպոնենտային, ենթամիավորային, քիմիական վակցինաները՝ զերծ «ոչ անհրաժեշտ» անտիգեններից, որոնք կարող են ոչ ցանկալի, լրացուցիչ ծանրաբեռնվածություն ստեղծել ինուն համակարգի համար։ Այս սկզբունքով ստացվել են պատվաստանյութեր բժավոր տիֆի, խոլերայի, մենինգոկուլային ինֆեկցիայի, որովայնային տիֆի, գրիպի, Յեպատիտի կանխարգելման համար։ Կոմպոնենտային վակցինաներից կարևոր է նշել անատոքսինները, որոնք ստացվում են բակտերիային էկզոտոքսինների շերմային և քիմիական մշակման ճանապարհով՝ դիֆթերիային, փայտացման, ստաֆիլոկուլային։ Փայտացման և դիֆթերիայի անատոքսինները կիրառվում են նաև կոմբինացված ԱԿԴՓ (ադսորբցված կապույտ հազի, դիֆթերիայի, փայտացման վակցինա) և ԱԴՓ (ադսորբցված դիֆթերիայի, փայտացման վակցինա) վակցինաների ձևով։ Ներկայումս մեծ ուշադրություն է դարձվում լիպոսոմային վակցինաների ստացման եղանակների մշակմանը, որոնք ներկայացված են լիպոֆիլ կրողի և անտիգենների կոմպլեքսով։

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՍՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

Վերջիններս առավել պաշտպանունակ են մակրոօրգանիզմում. ապահովում են անտիգենային էպիտոպների անփոփոխ տեղափոխումը ու ներկայացումը ինունկոնպետենտ բջջներին և ավելի ինտենսիվ են խթանում հակամարմինների սինթեզը՝ կատարելով միաժամանակ այդուվանտի դեր:

◆ **Սինթետիկ վակցինաներ,** որոնք ստացվում են անտիգենների դետերմինանտ խմբերը կազմող ամինաթրուների հաջորդականությամբ և տարածական կառուցվածքով պեպտիդների, ինչպես նաև կրող սուբստրատի քիմիական սինթեզի ճանապարհով:

◆ **Գենոինժեներային,** ռեկոնֆինանտային վակցինաները ներկայացված են մարդու համար ոչ ախտածին միկրոօրգանիզմների շտամներով, որոնք գենային ինժեներիայի մեթոդներով ձեռք են բերել որևէ ախտածին մանրէի առավել ինունոգեն անտիգենները սինթեզելու հատկություն: Ստացվել են մի շարք վիրուսային ինֆեկցիաների վակցինաներ՝ վակցինային վիրուսի գենոմում ախտածին վիրուսի գենների ներդրման ճանապարհով: Ներկայումս փորձարկումներ են անցնում Յ հեպատիտի և փայտացման դեմ վակցինաները, որոնք ստացվել են վերջիններիս գենների ներդրմանք սալմոնելամերի գենոմում:

◆ **Չամենատարար վերջերս սկզբունքորեն իհմնավորվել է հակախիոտիպային վակցինաների ստացումը և կիրառումը, ինչը բացատրվում է անտիգենային դետերմինանտ խմբերի և հակախիոտիպային հակամարմինների ակտիվ կենտրոնների (Fab ֆրագմենտ) կառուցվածքային նմանությամբ:**

Ներկայացված որոշ պատվաստանյութեր՝ հակասութերկուլյոգային BCG, պոլիոմիելիտային, կարմրուկային, պարօտիտային, կարմրախտային, ԱԿԴՓ, կիրառվում են մանկական ազգաբնակչության պարտադիր պլանային վակցինացման համար: Որոշ վակցինաներ պարտադիր են որոշակի էնդեմիկ օջախներում և որոշակի պրոֆեսիոնալ խմբերի համար: Կան վակցինաներ, որոնք կիրառվում են՝ ելնելով համաժարակային իրավիճակից:

## ՈՒՍՄՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

Մեծ թվով բակտերիային և վիրուսային ինֆեկցիաների ժամանակ օրգանիզմի իմուն պաշտպանությունը իրագործվում է գերազանցապես սպեցիֆիկ հակամարմինների միջոցով, սակայն վերջիններիս մաքսիմալ կուտակումը օրգանիզմում արձանագրվում է հիվանդության կամ վակցինացման երկրորդ, երրորդ շաբաթներում: Նման դեպքերում ցուցված է իմուն շիճուկների կամ իմունոգլոբուլինների կիրառությունը ինչպես սերոպրոֆիլակտիկայի, այնպես էլ սերոթերապիայի նպատակով: Իմուն շիճուկները կիրառվում են նաև շճախտորոշման ռեակցիաներում:

Իմուն շիճուկները ստանում են կենդանիների բազմակի իմունացման ճանապարհով, սակայն այսպիսի պրեպարատները հետերոգեն են և դրանց մեջ քանակների կիրառումը կարող է անցանկալի հետևանքներ (ալերգիկ ռեակցիաներ) առաջացնել: Այդ պատճառով, առավել կիրառություն են ստացել մարդկային հոմոլոգիական իմուն շիճուկները, որոնք ստանում են հատուկ այդ նպատակով իմունացված դոնորներից կամ պլացենտար արյան պուլից: Պասիվ իմունիտետի ստեղծման համար իմունոգլոբուլինների ստացման ուղղությամբ հետագա աշխատանքների հաջողությունները կապվում են մարդու կիբրիորնային քջային կուլտուրաներում մոնոկլոնալ հակամարմինների ստացման հնարավորությունների հետ:

Ներկայումս ինֆեկցիոն հիվանդությունների բուժնան և կանխարգելման համար լայն կիրառություն են գտել իմունախրանիչները՝ իմունամոդուլյատորները: Դրանք կենդանի օրգանիզմներից կամ քիմիական սինթեզի ճանապարհով ստացված նյութեր են, որոնք ունակ են կարգավորելու՝ խթանելու կամ ճնշելու օրգանիզմի իմուն պատասխանը՝ մասնակցելով վերջինիս զարգացման միջքջային փոխազդեցություններին: Ըստ ծագման՝ իմունամոդուլյատորները լինում են՝ **հոմոլոգիական և հետերոլոգիական**: Առաջինները ենողեն միացություններ են, սինթեզվում են մարդու օրգանիզմում՝ տարբեր ցիտոկիններ, ինտերֆերոն, ինտերլեյկիններ, ՈՒՍԳ, թիմուսային գործոններ և այլն: Յետերոլոգիական իմունամոդուլյատորները

## ՈՒՍՄՈՒՆք ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ

ստացվում են քիմիական ճանապարհով՝ լևամիզոլ (դեկարիս), լևակաղին, ցիկլոսպորին A, ինչպես նաև որոշ բակտերիաներից՝ պոլիսախարիդներ և լիպոպոլիսախարիդներ, մուրամիլդիպեպտիդ, պիրոգենալ, պրոդիգիոզան և այլն:

Մասնավոր յօրիգինալ

## ՄԱՍՆԱՎՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՎՈՐ ՅՈՒԹ

Մասնավոր բժշկական մանրէաբանության ուսումնասիրության առարկան մարդու (անբրոպոնոց), մարդու և կենդանիների (զռոանքրոպոնոց) վարակիչ (հնֆեկցիոն) հիվանդություններ առաջացնող ախտածին (պաթոզեն) միկրոօրգանիզմներն են: Ինֆեկցիոն ախտաբանությունում ախտածին մանրեներին զուգահեռ կարևորվում են նաև մարդու տարբեր բիոտոպերը բնակեցնող, օրգանիզմի նորմալ միկրոֆլորան կազմող պայմանական ախտածին միկրոօրգանիզմները, որոնք օրգանիզմի համար անբարենպաստ պայմաններում կարող են դրսնորել ախտածին հատկություններ ու առաջացնել այսպես կոչված օպորտունիստական ինֆեկցիոն հիվանդություններ: Վերջիններս ներկայումս ընդգրկված են կլինիկական մանրէաբանության ուսումնասիրությունների ոլորտում:

Բժշկական մանրէաբանության նպատակին (պայքար ինֆեկցիոն հիվանդությունների դեմ) և խնդիրներին (ինֆեկցիոն հիվանդությունների ախտորոշում, բուժում, կանխարգելում) համահունչ, մասնավոր և կլինիկական մանրէաբանությունը կիրառում է լաբորատոր հետազոտությունների հետևյալ եղանակները՝

1.Մանրադիտակային հետզոտությամբ, ախտաբանական նյութից կամ մաքուր կուլտուրայից պատրաստված պրեպարատներում ուսումնասիրվում են միկրոօրգանիզմների մորֆոլոգիան և տինկուրիալ հատկությունները: Պայմանավորված հետազոտության նպատակով և մանրէների կառուցվածքային և կենսաբանական առանձնահատկություններով, կիրառվում են տարբեր մանրադիտակներ՝ կենսաբանական, ֆազոկոնտրաստային, յումինեսցենտային, էլեկտրոնային:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

2.Բակտերիաբանական և վիրուսաբանական եղանակը ենթադրում է հետազոտվող նյութից հարուցիչների մաքուր կուլտուրայի անջատումը և դրա իդենտիֆիկացումը մորֆոլոգիական, տինկտորիալ, կուլտուրալ, կեսաքիմիական և անտիգենային հատկությունների հիման վրա:

3.Շճաբանական՝ հետազոտվող արյան շիճուկում իմունաբանական ռեակցիաների (ազյուտինացիա, պրեցիպիտացիա, կոնյլեմենտի կապման ռեակցիա, իմունոֆերմենտային, ռադիոիմուն անալիզ և այլն) օգնությամբ յուրահատուկ հակամարմինների հայտնաբերումը հայտնի ախտորոշիչ նյութով (անտիգեն) և հակառակը՝ հայտնի իմուն շիճուկներով անտիգենի հայտնաբերում:

4.Մաշկաալերգիկ եղանակով որոշում են մի շարք ինֆեկցիոն հիվանդությունների դեպքում (տուբերկուլյոզ, բրուցելյոզ, սիբիրախտ և այլն) օրգանիզմում զարգացող ինֆեկցիոն ալերգիայի առկայությունը:

5.Կենսաբանականը պատմակաանորեն առավել վաղ առաջադրված հետազոտության եղանակն է, որը հիմնված է ընկալ փորձարարական կենդանիներին ախտաբանական նյութով վարակման, հիվանդության վերաբարդման, այնուհետև դրանց օրգանիզմից մաքուր կուլտուրայի անջատման վրա:

Ախտաբանական նյութի (արյուն, թարախ, լորձ, մեզ, կղանք և այլն) ընտրությունը կախված է մի շարք հանգամանքներից՝ հիվանդության նախնական կլինիկական ախտորոշումից, հիվանդության պաթոգենեզից, փուլից և ընտրված հետազոտության եղանակից:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Գլուխ 11

ԲԱԿՏԵՐԻԱՅԻՆ ԻՆՖԵԿՑԻԱՆԵՐ

### 11.1. ԹԱՐԱԽԱԲՈՐԲՈՔԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՐԱՐՈՒՑԻՉՆԵՐ

Մարդու և կենդանիների թարախաբորբոքային հիվանդությունները դասվում են առավել տարածված ինֆեկցիաների թվին, ինչը պայմանավորված է դրանք հարուցող պայմանական ախտածին և ախտածին բազմազան մանրեներով՝ գրամ դրական և գրամ բացասական կոկեր, Enterobacteriaceae ընտանիքին դասվող, գրամ բացասական ֆակուլտատիվ անաերոր ցուպիկներ (Escherichia, Proteus, Klebsiella, Pseudomonas և այլն), սպոր չառաջացնող օբլիգատ անաերոբներ (Bacteroidaceae ընտանիք): Սակայն թարախային ու շճաթարախային բորբոքումների ճնշող մեծամասնությունը հարուցվում են բնության մեջ լայնորեն տարածված գնդաձև բակտերիաներից շատ քերով միայն: Դրանք ստաֆիլոկոկերի և ստրեպտոկոկերի, նեյսերիաների ու անաերոր կոկերի որոշ տեսակներն են:

#### 11.1.1. Գրամ դրական կոկեր

##### 11.1.1.1. Ցեղ Ստաֆիլոկոկ (Staphylococcus)

Ստաֆիլոկոկերը հայտնաբերվել են 1878-ին Ռ.Կոխի, իսկ հետագայում՝ 1880-ին, L.Պաստերի կողմից: Վերջինս, վարակելով ճագարներին, վերջնականապես ապացուցեց դրանց դերը թարախաբորբոքային հիվանդությունների եթիոլոգիայում: Ստաֆիլոկոկ անվանումը տրվել է 1881-ին Ա.Օգստոնի կողմից, հատկանիշների մանրակրկիտ նկարագրությունը ներկայացրել է 1884-ին Ֆ.Ռոգենբախը:

**Համաճարակաբանական առանձնահատկությունները:** Մարդու կյանքի առաջին իսկ օրերից ստաֆիլոկոկերը բնակեցնում են մաշկի մակերեսը՝ *S.epidermidis*, ինչպես նաև բերանի, քրի խոռոչների,

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

աղիների լորձաթաղանթները: Դրանք ընդգրկվում են նորածնի ձևավորվող միկրոֆլորայում հաստատելով սինթիոտիկ փոխարաբերություններ մակրո- և միկրոօրգանիզմների միջև: Միևնույն ժամանակ ստաֆիլոկոկերը անընդհատ շրջակա միջավայր են անցնում մարդուց և կարող են հայտնաբերվել կենցաղային տարրեր իրերի, առարկաների վրա, օդում, հողում, բուսականության վրա և այլուր: Առավել ուշադրության է արժանի ոսկեգույն ստաֆիլոկոկը (*S.aureus*), որպես մարդու համար պոտենցիալ ախտածին: Ինֆեկցիայի առյուրի հետ շփվելիս ոչ բոլորն են վարակվում ոսկեգույն ստաֆիլոկոկերով: Ոսկեգույն ստաֆիլոկոկով բակտերիակրության ձևավորմանը նպաստում են սպեցիֆիկ *S IgA*-ի ցածր խտությունը մակրոօրգանիզմի տարրեր խոռոչների արտազատուկներում, ինչպես նաև իմուն համակարգի ֆունկցիոնալ անբավարության այլ արտահայտությունները: Նման դեպքերում մարդկանց շուրջ 20%-ի մոտ առաջանում է ռեզիտենտ բակտերիակրություն, այսինքն *S.aureus*-ի մշտական բնակավայր են դառնում նշված լորձաթաղանթները: Միկրոօրգանիզմները, լորձաթաղանթներում ակտիվորեն բազմանալով, նպաստում են առտոինֆեկցիայի և էկզումֆեկցիայի զարգացմանը՝ պայմանավորված վարակի փոխանցման կենցաղկոնտակտային, օդափոշային, օդակաթիլային և սննդային (ալիմենտար) մեխանիզմներով:

**Դասակարգում:** *Staphylococcus* ցեղը դասվում է *Micrococcaceae* ընտանիքին և ընդգրկում է ավելի քան 20 տեսակ, որոնք բաժանվում են 2 մեծ խմբի՝ կոագուլազարդական և կոագուլազարցանական: Դրանց միայն մի մասն է էկոլոգիապես կապված մարդու օրգանիզմի հետ և կարող է առաջացնել հիվանդություն: Տարբեր տեղակայման թարախային հիվանդությունները հարուցվում են հիմնականում *S.aureus*, երբեմն՝ *S.epidermidis* և հազվադեպ *S.saprophyticus* տեսակների գանազան շտամներով:

**Staphylococcus aureus:**

**Մորֆոլոգիա և ֆիզիոլոգիա:** Գրամ դրական, ճիշտ գնդածև, 0.5-1.5մկմ տրամագծով միկրոօրգանիզմներ են: Ախտաբանական նյութից պատրաստված պրեպարատներում դասավորվում են առանձին, երեմն՝ փոքր կուտակումներով: Մաքուր կուլտուրայից պատրաստված պրեպարատներում դասավորվում են ողկուզածև (նկ.75): Չուրկ են մտրակներից, անշարժ են, սպոր չեն առաջացնում:



Նկ.75. *Staphylococcus aureus*

Ֆակուլտատիվ անաերոբներ են, սակայն լավ աճում և բազմանում են աերոր պայմաններում, բացառություն է կազմում *S.saccharolyticus*-ը, որն օբլիգատ անաերոր է: Սննդային միջավայրերի նկատմամբ պահանջկուտ չեն, բայց առավել լավ աճում և բազմանում են 6-15%-անոց կերակրի աղի միջավայրում, ինչը դրանց համար հանդիսանում է ընտրովի (էլեկտիվ): Բարենպաստ ջերմաստիճանը 35-37°C է, pH-ը՝ 6.2-8.4: Պինդ սննդային միջավայրերում առաջացնում են 2-4մմ տրամագծով, հարթ եզրերով, ուռուցիկ, անթափանց,

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

պիգմենտի գույնով ներկված՝ ոսկեգույն, գաղութներ: Յեղուկ միջավայրերում աճը ուղեկցվում է հավասարաչափ պղտորությամբ՝ հետագայում առաջացնելով փափուկ նստվածք: Պատիճ չունեն, սակայն նակրորգանիզմում և պլազմայով կամ արյան շիճուկով կիսահեղուկ ագարի խորության մեջ ներարկելիս, ոսկեգույն ստաֆիլոկոկի որոշ շտամներ կարող են առաջացնել նուրբ պատիճ: Այդպիսի շտամները նշված միջավայրում առաջացնում են դիֆուզ գաղութներ, իսկ պատիճ չառաջացնողները կոնպակտ: Յենոլիզին արտազատող շտամներն արյունային ագարի մակերեսին՝ գաղութի շուրջ, առաջացնում են հեմոլիզի գոտի:

Ստաֆիլոկոկերն օժտված են կենսաքիմիական բարձր ակտիվությամբ (նկ.76), ֆերմենտացնում են առանց գազի, թթվի առաջացմանը գլիցերինը, գյուկոնը, մալտոնը, մանիտը, լակտոնը, սախարոնը:

Հատկանիշ	Տեսակ			
	S.aureus	S. epidermidis	S.saprophyticus	
ածխացրատների ֆերմենտացնում թթվի ստացմանը, առանց գազի	սախարոն ֆրուկտոն լակտոն մանոն արաքինոն	+	+	+
<b>գլուկոզի եվ ճամնիտի անաերոք խմբում</b>	+	-	-	
գլիցերինի ֆերմենտացնում	+	-	-	
օսմայի հիդրոլիզ	-	-	-	
նիտրատների վերականգնում նիտրիտների	+	±	-	
սպիտակուցների եվ ճարպերի հիդրոլիզ	+	±	±	
ինդոլի առաջացնում	-	±	?	
H <sub>2</sub> S-ի առաջացնում	+	±	?	
մելատոնինի ձագարաձեռ ջրիկացում (4-5րոլ օր)	+	-	-	
հեմոլիզ	+	±	±	
կատարազա	+	+	-	
օքսիդազա	-	-	?	
որեազա	±	+	+	

### Նկ.76. Staphylococcus ցեղի տեսակների տարրերակումը

Անաերոք պայմաններում խմորում են գյուկոնը և մանիտը, առաջացնելով թթու, առանց գազի: Վերջինս ստաֆիլոկոկերի համար ունի տարրերակիչ-ախտորոշչի նշանակություն: Կատալազա և ուրեազա դրական են, օքսիդազա՝ բացասական, վերականգնում

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Են նիտրատները նիտրիտների, ակտիվորեն հիդրոլիզում են սպիտակուցները և ճարպերը, առաջացնում են  $H_2S$ , իսկ ցանքի 4-5-րդ օրը ժելատինի ծագարածն ջրիկացում՝ լցված հեղուկով։ Ստաֆիլոկոկերը չեն հիդրոլիզում օսլան, ինդու չեն առաջացնում։ Սինթեզում են տարբեր ֆերմենտներ՝ պլազմակոագուլազա, թլակտամազա, ֆիբրինոլիզին, լեցիտինազա, լիզոնցին, իհմնային ֆուսֆատազա, ԴՆԹ-ազա, հիալուրոնիդազա, տելուրիտռեղուկտազա, պրոտեինազա, ժելատինազա և այլն։

**Նարուցիչների կայունությունը:** Սպոր չառաջացնող բակտերիաների խմբում ստաֆիլոկոկերը, ինչպես միկրօբակտերիաները արտաքին միջավայրի տարբեր ազդակների նկատմամբ օժտված են առավել կայունությամբ։ Դրանք շաբաթներ և նույնիսկ ամիսներ կարող են ոչ միայն գոյատևել, այլև պահպանել վիրուլենտությունը մանր, չոր փոշու հատիկներում՝ դառնալով փոշային ինֆեկցիայի աղբյուր։ Արևի ուղիղ ճառագայթների ազդեցությամբ դրանք ոչնչանում են միայն մի քանի ժամվա էքսպոզիցիայի ընթացքում, իսկ ցրված ճառագայթները ազդում են շատ թույլ։ Կայուն են բարձր ջերմաստիճանի նկատմամբ,  $80^{\circ}C$  չոր օդի պայմաններում կարող են գոյատևել շուրջ 2 ժամ, երկարաժամկետ պահպանում են կենսունակությունը ցածր ջերմաստիճաններում, սակայն բավականին զգայուն են տարբեր քիմիական նեզգինֆեկտանտների նկատմամբ։

**Անտիգեններ:** Ստաֆիլոկոկերի մոտ հայտնաբերված են ավելի քան 50 անտիգեն, որոնցից յուրաքանչյուրի նկատմամբ օրգանիզմում սինթեզվում են հակամարմիններ։ Այդ անտիգենների որոշ մասը օժտված է ալերգենի հատկությամբ։ Ըստ սպեցիֆիկության՝ դրանք բաժանվում են **ցեղային** (ընդհանուր անբողջ ցեղի համար), խաչածև փոխազդող (ընդհանուր արյան էրիթրոցիտների, մաշկի և երիկամների իզոանտիգենների հետ, որոնցով պայմանավորված են առոտոիմուն հիվանդությունները), տեսակային և տիպասպեցիֆիկ անտիգենների։ Տեսակային սպեցիֆիկությամբ օժտված են տեյխոյաթրուն, պատիճը, ինչպես նաև ուսկեզրույն ստաֆիլոկոկի սպիտակուց A-ն։ Վերջինս կովալենտ կապով միացած է պեպտիդոգլիկանին

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

և ունի մակերեսային տեղակայում: Այն օժտված է G իմունոգլոբուլինների Fc ֆրազմենտին կապվելու ունակությամբ, ինչի շնորհիվ կիրառվում է կոագյուտինացիայի ռեակցիայում:

**Վիրովվենտության գործոններ:** Մարդու օրգանիզմի բջիջների և հյուսվածքների վրա ստաֆիլոկոկերի ախտահարող ազդեցությունը պայմանավորված է դրանց կողմից սինթեզվող տոքսիններով և ֆերմենտներով, ինչպես նաև աղիեզիվության, ինվազիվության գործոններով, պատիճով, սպիտակուց A-ով:

**1.Ֆերմենտներ:** Կատալազա՝ պաշտպանում է միկրոօրգանիզմը ֆագոցիտների թթվածին կախյալ մեխանիզմներից, թ-լակտամազա՝ քայլայում է թ-լակտամային հակարիտիկները, լիպազա՝ հեշտացնում է աղգեզիան և ինվազիան, կոագուլազա՝ հանդիպում է 3 անտիգենային տարրերակով, խթանում է պրոթրոմբինի փոխարկումը թրոմբինի՝ նպաստելով ֆիբրինոգենի մակարդմանը, որի հետևանքով յուրաքանչյուր բակտերիային բջիջ պատկում է լրացուցիչ ֆիբրինային թաղանքով՝ պաշտպանելով նրան ֆագոցիտողից, հիալուրոնիդազա՝ նպաստում է ստաֆիլոկոկերի տարածմանը՝ պայմանավորված միջքջային նյութի կառուցվածքում առկա հիալուրոնաթթվի քայլայմանը ու հյուսվածքների թափանցելիության բարձրացմանը, լեցիտինազա՝ քայլայում է լեյկոցիտների և այլ բջիջների թաղանթի կազմության մեջ գտնվող լեցիտինը՝ պայմանավորելով լեյկոպենիան, ֆիբրինոլիզին՝ քայլայում է տեղային բորբոքային պրոցեսը սահմանազատող ֆիբրինը՝ նպաստելով ինֆեկցիայի գեներալիզացմանը:

**2.Ֆագոցիտոզը ճնշող գործոններ:** Մրանց առկայությունը արտահայտվում է քենոտաքսիսի և ֆագոցիտոզի ճնշմամբ, ֆագոցիտների կողմից հարուցիչի կլանման դեպքում դրանցում բազմանալու և «օքսիդացիոն պայթյունը» արգելակելու հատկությամբ: Ֆագոցիտոզի ճնշումը ոչ միայն խոչընդոտում է ստաֆիլոկոկերից օրգանիզմի ազատմանը, այլ նաև խանգարում է պրոցեսինզի ֆունկցիան և անտիգենի ներկայացումը T և B լիմֆոցիտներին, որը նվազեցնում է ինուն պատասխանի ուժը:

**3.Եկզոտոքսիններ:**

♦**Տոքսիկ շոկի համախտանիշ (ՏԾՇ) առաջացնող տոքսին:** Քամախտանիշը բնորոշվում է ջերմության բարձրացմամբ, մաշկային ցանով, երբեմն դիառեայով, արյան ճնշման անկնամբ, երիկամների ախտահարմամբ և այլն: Ուսկեգույն ստաֆիլոկոկի այս տոքսինը արտազատող շտամները տարբերվում են այլ շտամներից քույլ հեմոլիտիկ ակտիվությամբ, կազեինի նկատմամբ բարձր պրոտեոլիտիկ ակտիվությամբ: Քիվանդանում են հիմնականում երիտասարդ հասակում:

♦**Մեմբրանոտոքսիններ (հեմոլիզիններ):** Սրանք ունակ են քայլայելու օրգանիզմի տարբեր հյուսվածքային քջինները և ըստ ազդեցության արդյունքի՝ անվանվում են լիզիններ, նեկրոտոքսիններ, լետալ տոքսիններ: Մեմբրանը վնասող տոքսինները՝ α, β, γ, κ, δ, տարբերվում են անտիգենային կառուցվածքով, երիթրոցիտների տարրալուծման սպեկտրով, լետալ վախճանի առաջացման արագությամբ և այլ հատկություններով:

♦**Լեյկոցիտին:** Անտիգենային հատկություններով տարբերվում է այլ լիզիններից, ընտրողաբար ազդում է լեյկոցիտների վրա՝ առաջացնելով դրանց տարրալուծում:

♦**Էքսֆոլիատին:** Այս տոքսինով է պայմանավորված ստաֆիլոկոկերի հատկությունը՝ առաջացնելու նորածինների բշտաբորբ, որն ընթանում է վերնամաշկի էպիթելի շերտազատումով՝ առաջացնելով ստերիլ հեղուկով լցված, միաձուլվող բշտեր: Քարկ է նշել, որ ստաֆիլոկային ախտահարման լոկուսը հիմնականում գտնվում է մաշկային ախտահարման վայրից հեռու՝ սովորաբար պորտային վերքում: Այս տոքսինի ազդեցությամբ է պայմանավորված նաև բույսող իմապետիզոյի և քութեշանման ցանի առաջացումը:

♦**Էնտերոտոքսիններ A, B, C1, C2, C3, D, E:** Սրանք բնութագրվում են անտիգենային սպեցիֆիկությամբ, կայուն են ֆորմալինի (չեն վերափոխվում անատոքսինի) և մարսողական ֆերմենտների նկատմամբ, վերջինով է պայմանավորված սննդային ինտոքսիկացիաներ առաջացնելու դրանց հատկությունը: Առավել հաճախ այն

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆՐԵՄԲԱՆՈՒԹՅՈՒՆ

հարուցվում է A և D էնտերոտոքսիններով: Սակայն հարկ է նշել, որ դրանց ազդեցության մեխանիզմը, ի տարբերություն այլ բակտերիաների էնտերոտոքսինների, որոնք խախտում են աղենիլատցիկ-լազային համակարգի ֆունկցիան, պայմանավորված է աղիների հարթ մկանների գրգռմամբ և մոտորիկայի ուժեղացմամբ, որի հետևանքով առաջանում է դիառեա: Բացի այդ, ստաֆիլոկոկային էնտերոտոքսինները օժնված են սուպերանտիգենի հատկությամբ, դրանք ինդուկցում են ինտերլեյկին-2-ի սինթեզը, որի ավելցուկ քանակներով է պայմանավորված օրգանիզմի ինտոքսիկացիան՝ գլխացավ, ջերմության բարձրացում, նողկանք, փսխում, ցավեր ենթաստանոքսային շրջանում, լուծ և այլն:

Ստաֆիլոկոկային ինֆեկցիաների պարոգենետիկ ընթացքում և կլինիկական դրսարդումներում կարևոր դեր ունի ստաֆիլոկոկերի բջջային որոշ կառույցների, էկզոտոքսինների և կենսագործունեության այլ արգասիքների **ալերգիզացնող հատկությունը**: Ստաֆիլոկոկային ծագման ալերգենները ունակ են առաջացնելու ինչպես անմիջական, այնպես էլ դանդաղ տիպի գերզգայուն ռեակցիաներ: Մրանք մաշկային և ռեսայիրատոր ալերգիաների հիմնական «մեղավորներն» են: Ստաֆիլոկոկային ինֆեկցիաների պարոգենեզի յուրահատկությունը և քրոնիկական ձևերին անցնելու հակումը, պայմանավորված է ԴՏԳ առաջացնելու դրանց հատկությամբ: Այստեղ կարևոր դեր ունեն և՝ խաչաձև փոխսագրող անտիգենները, որոնց հետ կապվում է առոտոհակամարմինների սինթեզը, և՝ առոտոհմուն հիվանդությունների գարգացումը:

**Պաթոգենեզ և կլինիկա:** Ստաֆիլոկոկերի համար մուտքի դուռ կարող են լինել մաշկի և լորձաբաղանքների ամենաչնչին վնասվածքները, որտեղով ներթափանցելով օրգանիզմի ներքին միջավայր՝ դրանք առաջացնում են ամենաստարբեր թարախաբորբոքային հիվանդություններ՝ ֆուլումնկուլ, ֆլեգմոնա, արսցես, օստեոնիթելիտ, ինչպես նաև ծանրագույն ախտահարումներ՝ պերիստոնիտ, էնդրոկարդիտ, սեպսիս, սեպտիկոպհիեմիա և այլն: Ստաֆիլոկոկերը մեծ դեր ունեն վիրաբուժական և մանկաբարձագիննեկոլոգիական պրակտի-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԱՆ ՌԵՎԱՐԱՆ ՈՒԹՅՈՒՆ

կայում որպես վերքային թարախաբորբոքային հիվանդությունների հարուցիչներ: Դրանք նորածինների սեպասի և մահացության ամենագլխավոր պատճառներից մեկն են: Ունենալով ալերգենի հատկություններ՝ ստաֆիլոկոկերը կարող են առաջացնել պսորիազ, հեմոռօաֆիկ վասկուլիտ, ոչ սպեցիֆիկ պոլիարթրիտ և այլն: Սննդամթերքի ախտահարումը ստաֆիլոկոկերով նպաստում է սննդային տոքսիկոինֆեկցիաների առաջացմանը:

**Ինունիտետ:** Առօղջ նեծահասակ մարդիկ կայուն են ստաֆիլոկային ինֆեկցիաների նկատմամբ, ինչը պայմանավորված է ինչպես պաշտպանության ոչ սպեցիֆիկ գործոններով, այնպես էլ ինունիտետի բջջային և հումորալ մեխանիզմներով: Հարկ է նշել, որ հումորալ ինունիտետում դեր ունեն և՛ հակաբակտերիային, և՛ հակատոքսիկ, և՛ հակաֆերմենտային հակամարմինները:

**Լաբորատոր ախտորոշում:** Հետազոտվող նյութի ընտրությունը կատարում են՝ ըստ հիվանդության կլինիկական արտահայտության: Այն ենթարկում են մանրադիտակային և բակտերիաբանական հետազոտության ցանք կատարելով Պետրիի թասերում՝ դեղնուցաաղային, կաթնաղեղնուցաաղային, արյունային ագարային սննդամիջավայրերի մակերեսին: Խերմոստատում  $37^{\circ}\text{C}$ -ի պայմաններում, 18-24 ժամվա եքսպոզիցիայից հետո կատարում են կասկածելի գաղութների ընտրություն, դրանց մանրադիտակազմնում և փոխացանք թեք ագարի վրա՝ մաքուր կուլտուրայի ստացման նպատակով: Հետագա տարրերակումն իրականացվում է՝ կուագուլազային թեստ, գյուկոզի ֆերմենտացում անաերոր պայմաններում, ֆագոտիպացում և այլն:

**Կանխարգելում և բուժում:** Ոչ սպեցիֆիկ կանխարգելման նպատակն է բակտերիակիրների հայտնաբերումը և նրանց սանացիան: Սպեցիֆիկ կանխարգելման համար կիրառվում է ստաֆիլոկոկային անատոքսին, բակտերիոֆագ: Պասիվ անընկալություն առաջացնելու նպատակով առաջարկված է հակաստաֆիլոկոկային ինունոգլոբուլին, դոնորական հակաստաֆիլոկոկային հիպերիմուն

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

շիճուկ: Բուժումը հակաբիոտիկներով է, անջատված մաքուր կուլտուրայի հակաբիոտիկազգայունության որոշումից հետո:

### 11.1.1.2. Ցեղ Ստրեպտոկոկ (Streptococcus)

Ստրեպտոկոկերը հայտնաբերվել են Տ.Բիլթոնի կողմից 1874-ին կարմիր քամիով և վերքային ինֆեկցիաներով մարդկանց հյուսվածքներում, հետագայում՝ սեպտիցեմիայով հիվանդների արյունում և թարախային վերքերում՝ Լ.Պասերի (1878թ.) և Ա.Օգստոնի կողմից (1881թ.): Մաքուր կուլտուրայում անջատվել և ուսումնասիրվել են Ֆ.Ֆլեյգենի (1883թ.) և Ֆ.Ռոզենբախի (1884թ.) կողմից:

**Դամաճարակաբանություն:** Տարբերում են միայն մարդու և մարդու ու կենդանիների համար ախտածին էկովարների ստրեպտոկոկեր: Մարդկային էկովարները բնակվում են բերանի խոռոչում, շնչուղիների լորձաթաղանթում, աղիներում, երբեմն նաև մաշկի մակերեսին: Ստրեպտոկոկային հիվանդությունների հիմնական մասն ունեն էնդոգեն ծագում: Էկզոգեն ինֆեկցիայի աղբյուր են հիվանդ մարդը և բակտերիակիրը, տարածման ուղին հիմնականում օդակաբթիլային է:

**Դասակարգում:** *Streptococcus* ցեղը *Streptococcaceae* ընտանիքի 7 ցեղերից մեկն է և ընդգրկում է շուրջ 20 տեսակ, որոնք միմյանցից տարբերվում են էկզոգիֆական, ֆիզիոլոգիական, կենսաբիմիական հատկություններով, մարդու համար ախտածնությամբ և այլն: Գործնականում առավել կիրառություն ունի Բրաունի դասակարգումը (1919թ.), որը պայմանավորված է արյունային ագարի մակերեսին ստրեպտոկոկերի աճի ու բազմացման առանձնահատկություններով (Ակ.77): Ըստ այդ տարբերում են՝


◆**α-հեմոլիտիկ** ստրեպտոկոկ՝ գաղութի շուրջ արձանագրվում է կանաչ հեմոլիզի գոտի՝ պայմանավորված էրիթրոցիտների քայքայման հետևանքով մեթեմոգլոբինի առաջացմամբ:

◆**β-հեմոլիտիկ** ստրեպտոկոկ՝ գաղութի շուրջ արձանագրվում է լիարժեք հեմոլիզի գոտի:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

♦ $\gamma$ -հեմոլիտիկ կամ անհեմոլիտիկ ստրեպտոկոկ՝ հեմոլիզը բացակայում է կամ անգեն աչքով անտեսանելի է:

Ո.Լենսֆիլդի դասակարգմանը (1933թ.), բջջապատի կառուցվածքում առկա ածխաջրատների (սబստանցիա C) անտիգենային սպեցիֆիկությամբ, ստրեպտոկոկերը տարբերակվում են շուրջ 20 շճախմբի, որոնք նշվում են լատինական այբուբենի մեծատառերով՝



### Նկ.77. $\beta$ -հեմոլիտիկ ստրեպտոկոկ


Ա-ից մինչև V: Շճախմբերում ըստ M, R և T սպիտակուցային անտիգենների՝ ստրեպտոկոկերը բաժանվում են շճատիպերի: Միայն M անտիգենի սպեցիֆիկությամբ A խմբի  $\beta$ -հեմոլիտիկ ստրեպտոկոկերը տարբերակվում են ավելի քան 100 շճատիպի, որոնց որոշումն ունի համաճարակաբանական կարևոր նշանակություն: Ստրեպտոկոկերն ունեն նաև խաչաձև փոխազդող անտիգեններ՝ ընդհանուր մաշկի բազալ շերտի էպիթելային և թիմուսի կեղևային էպիթելի բջջների հետ, ինչը այս կոկերի կողմից հարուցված առևտոինուն խանգարումների հավանական պատճառն է: Անտիգենային հատկությամբ օժտված են նաև բջջապատի իմունոգլոբուլինային IgG ընկալիչները, լիպոտեյխոյաթթուները, ինչպես նաև արտազատվող տոքսիններն ու ֆերմենտները:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստրեպտոկոկային թարախաբորբոքային ինֆեկցիաների մեջ մասը հարուցվում են Ա-շճախմբին դասվող  $\beta$ -հեմոլիսին ստրեպտոկոկերով՝ *Streptococcus pyogenes*:

### 11.1.1.2.1. *Streptococcus pyogenes*

**Մորֆոլոգիա և ֆիզիոլոգիա:** Գրամ դրական, գնդաձև կամ ձվաձև, 0.6-1.0մկմ տրամագծով միկրոօրգանիզմներ են: Ախտաբանական նյութից պատրաստված քսուքներում դասավորվում են եզակի և կարծ շղթաներով, մաքուր կուլտուրայից պատրաստված այլեպարատներում՝ երկար շղթաներով (նկ.78): Սպոր չեն առաջացնում, անշարժ են, վիրուլենտ որոշ շտամներ կարող են առաջացնել



Նկ.78. *Streptococcus pyogenes*

**պատիճ:** Ֆակուլտատիվ անաերոբներ են: Բարենպաստ ջերմաստիճանը  $37^{\circ}\text{C}$  է,  $\text{pH-ը՝ } 7.2\text{-}7.6$ : Սննդային միջավայրերի նկատմամբ պահանջկուտ են. հասարակ սննդամիջավայրերում չեն աճում կամ աճում են շատ նոսր: Դրանց աճի և բազմացման համար սննդային միջավայրերին ավելացնում են գլյուկոզ, շիճ կամ արյուն (չբնագրկված սպիտակուցներ): Յեղուկ սննդամիջավայրերում առաջացնում են հատակային և հարպատային աճ, ընդ որում միջավայրը մնում է թափանցիկ: Ա-շճախմբի ստրեպտոկոկերի պատիճավոր

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Վիրուլենտ շտամները պինդ սննդային միջավայրերի մակերեսին առաջացնում են փայլուն, ջրի կաթի հիշեցնող, կաչուն կոնսիստենցիայով S գաղութներ:

Կատալազա բացասական են, ֆերմենտացնում են գյուկոզը, մալտոզը, սախարոզը և այլ շաքարներ՝ առաջացնելով թթու առանց գազի: Կաթը չեն մակարդում (բացի *S.lactis*-ից), պրոտեոլիտիկ ակտիվությունը շատ բույլ է (Ակ.79):

Համականիշ	Տեսակ		
	<i>S.pyogenes</i>	<i>S.pneumoniae</i>	<i>S.faecalis</i>
ածխաջրառների ֆերմենտացիա թթվի սննդային մասնակի, առանց գազի	լակտոզ	+	+
	մանի խո	-	-
	գլիցերին	-	-
	գյուկոզ	+	-
	մալտոզ	+	-
	սախարոզ	+	-
աճը հետևվայալ սննդամիջավայրերում	40% լեզային	-	-
	6.5% NaCl	-	-
ինուիլինի ֆերմենտացում զգայունությունը օպտուսինի նկատմամբ հեճողից	ինուիլինի	-	+
	զգայունությունը օպտուսինի նկատմամբ	-	+
	հեճողից	β	α
	O-ստրեպոտիլին	+	-
	S-ստրեպոտիլին	+	+
	ստրեպոտիլինազա (Փիթրինուլիկին)	+	-
	հիալուրոնիդազա	+	+
ստրացական նույնականացնություն	ԴՆԹ-սազա	+	+
	ՌՆԹ-սազա	+	+
	կատարազա	-	-

### Ակ.79. *Streptococcus* ցեղի ախտաժին տեսակների տարրերակումը

**Յարուցիչների կայունությունը:** Շրջակա միջավայրում ստրեպտոկոկները պահպանում են կենսունակությունը ոչ այնքան երկար, որքան ստաֆիլոկոկները, սակայն լավ դիմանում են ցածր ջերմաստիճաններին, չորացմանը՝ առանձնապես սպիտակուցային միջավայրում: 56°C տաքացման պայմաններում ոչնչանում են 30 րոպեում, սովորական դեգինֆեկտանտների ազդեցությամբ՝ 15 րոպեում:

**Վիրուլենտության գործոններ:** Ինչպես և այլ ինֆեկցիաների ժամանակ, աղիեզիվության գործոնը նպաստում է մանրների էպիթելիային բջիջներին ֆիբսվելուն ու գաղութացմանը, խոշն-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

դուտելով դրանց հեռացմանը տարբեր սեկրետների հետ: Հիմնական աղիեզին է լիպոտեյխոյաթթուն, որը ծածկում է մակերեսային ֆիմբրիաները:

**Պատիճը** պաշտպանում է մանրէին ֆագոցիտներից և հեշտացնում է արհեզիան:

**Սպիտակուց M-ը** խոչընդոտում է ֆագոցիտար ռեակցիաները, կապում է ֆիբրինոգենը, ադսորբցում է այն իր մակերեսին՝ քողարկելով սեփական ընկալիչները կոնալեմենտի համակարգի, ինչպես նաև տարբեր օպսոնինների համար: Ունի սուլավերանտիգենային հատկություններ:

**Իմունոգլոբուլինային Fc ընկալիչները** ճնշում են ֆագոցիտողը, կոնալեմենտի համակարգը, առաջացնում են իմունոգլոբուլինների դիսրալանս:

**Չիալուրոնիդազան** ինվազիվության գործոն է:

**Ֆիբրինոլիզինը** (ստրեպտոկինազա) փոխարկում է պլազմինոգենը պլազմինի, վերջինս էլ հիդրոլիզում է ֆիբրինը՝ նպաստելով տեղային բորբոքային օջախի ընդարձակմանը և ինվազիվության բարձրացնմանը:

**Օ-ստրեպտոլիզինը** թերմոլարիլ սպիտակուց է, օժտված է անտիգենությամբ, դրա նկատմամբ հիվանդի օրգանիզմում սինթեզվում են հակա Օ-ստրեպտոլիզիններ: Առաջացնում է հեմոլիզ, օժտված է ցիտոտոքսիկ ազդեցությամբ, այդ թվում՝ լեյկոտոքսիկ, կարդիոտոքսիկ: Քայլայում է նաև լիզոսոմային թաղանթները, որի արդյունքում ազատված ֆերմենտները առաջացնում են հյուսվածքների դեստրուկցիա:

**S-ստրեպտոլիզինը** նուկլեոպոտեհիդ է, անտիգենային հատկություններից զուրկ: Օժտված է հեմոլիտիկ և ցիտոտոքսիկ ազդեցությամբ, ինչպես և նախորդը, կարող է քայլայել լիզոսոմների թաղանթները:

**Լեյկոցիտինը**, տարրալուծելով բազմածև կորիզային լեյկոցիտները, պարալիզում է մակրոօրգանիզմի ֆագոցիտար պաշտպանական ռեակցիան:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

**Ցիտոտօքսիները** ախտահարում են մի շարք հյուսվածքների՝ մասնավորապես երիկամային կծիկների բջջները, պայմանավորելով գլոմերուլոնեֆրիտի զարգացումը: *S.pyogenes*-ի որոշ շտամների կողմից սինթեզվող կարդիոհեպատիկ տոքսինը մասնակցում է սրտամկանի և լյարդի ախտահարմանը:

**Երիթրոգենինի (քութեշային տոքսին)** սինթեզը պայմանավորված է լիզոգեն կոնվերսիայով: Այն պայմանավորում է քութեշի պարոգենետիկ ընթացքը՝ մաշկի և լորձաթաղանթների ալ կարմիր գույնը: Օժտված է պիրոգեն, ալերգեն, ինունոսուպրեսիվ և միտոգեն ազդեցություններով:

**Պաթոգենեզը և կիխնիկան:** Ստրեպոկոկերի մուտքի դուռ են մաշկի և լորձաթաղանթների անգամ ամենաչնչին վնասվածքները: Թափանցելով օրգանիզմի ներքին միջավայր, պայմանավորված վերը թվարկված վիրուլենտության գործոնների հզոր արսենալով, ստաֆիլոկոկերի նման հարուցում են տարբեր տեղակայման թարախաբռնոքային ինֆեկցիաներ: Վերջիններս հիմնականում օպորտունիստական բնույթի են և կարող են ունենալ ինչպես սուր, այնպես էլ քրոնիկական ընթացք: Ստրեպոկոկերն առաջացնում են նաև տարբեր օրգան-համակարգերի սպեցիֆիկ ախտահարումներ, որոնք առանձին նողոլոգիական միավորներ՝ ինքնուրույն հիվանդություններ են:

**Կարմիր քամին վերքային ինֆեկցիա** է, ընթանում է մաշկի և ենթամաշկի լիմֆատիկ ուղիների և հանգույցների բորբոքմամբ:

**Ստրեպոկոկային տոքսիկ շոկի համախտանիշը** որպես նորոգոլոգիական ծև առանձնացվել է վերջերս: Սովորաբար զարգանում է որպես ցելյուլիտների, ֆասցիտների, բակտերեմիայի բարդություն: Կիխնիկական արտահայտությամբ նման է սեպտիկ շոկին, մահացությունը հասնում է մինչև 30%:

**Ումատիզմը** զարգանում է որպես նազոֆարինգիալ ինֆեկցիաների բարդություն, կարող է ունենալ տարբեր դրսևորումներ՝ սուր միզրացվող պոլիարթրիտ, ոսկրային ցցուկների վրա ենթամաշկային հանգույցներ, էնդոկարդիտ, որը կարող է ընթանալ

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

միտրալ փականների սպիացումով, միոկարդիտ, որը կարող է բարդանալ սուր սրտային անբավարարությամբ և այլն:

**Քութեշը (լատ. scarlatium-ալ կարմիր գույն)** սուր ինֆեկցիոն հիվանդություն է, կլինիկորեն արտահայտվում է անգինայով, լիմֆատինիտով, մաշկի և լորձաթաղանթների մանր կետավոր, ալ կարմիր ցանով, որը հետագայում շերտազատվում է, ինչպես նաև օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիայով, թարախսասեպտիկ ու ալերգիկ բարդացումների հակումով: Ախտահարվում են իիմնականում մանկական հասակում:

Քութեշի էթիոլոգիայի պարզաբանման հարցում մեծ ավանդ ունեն ռուս գիտնականներ Գ.Ն.Գաբրիչևսկին և Ի.Գ.Սավչենկոն, ինչպես նաև ամերիկացի Դիկ ամուսինները (G.F.Dick, G.H.Dick): Դեռևս 1905-1906թթ. Սավչենկոն պարզեց, որ քութեշային ստրեպտոկոկի տոքսինի դեմ ստացված հակատոքսիկ շիճուկը նպաստում է հիվանդության արդյունավետ բուժմանը: 1923-1924թթ. Դիկ ամուսինները ապացուցեցին որ՝

◆քութեշով չիիվանդացածներին տոքսինի փոքր քանակի ներմաշկային ներարկումը առաջացնում է մաշկային տեղային ռեկցիա՝ կարմիրություն, այսուց (Դիկի ռեակցիան-դրական),

◆իիվանդացածների մոտ այդ ռեակցիան բացասական է (տոքսինը չեզոքացվում է հակատոքսինով),

◆չիիվանդացածներին տոքսինի մեծ դոզամերի ներարկումը առաջացնում է քութեշին բնորոշ կլինիկական ախտանիշներ:

Դարկ է նշել, որ քութեշ հարուցում է ոչ թե ստրեպտոկոկի մի որևէ առանձին շճատիպ, այլ էրիթրոգենին արտազատող յուրաքանչյուր թ-հեմոլիտիկ ստրեպտոկոկ, որը լիզոգենացված է տոքսինագոյացման գենը կրող չափավոր ֆագով: Այդ իսկ պատճառով ժամանակի ընթացքում տարբեր երկրներում այդ շճատիպերը կարող են փոփոխվել: **Իմունիտետը քութեշից հետո կայուն է, երկարատև:** Կրկնակի հիվանդացություն արձանագրվում է 2-16% դեպքերում: Նորածինների պասիվ իմունիտետը պահպանվում է 3-4 ամիս:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԻՎԱՐԵԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Ստրեպտոկոկերի այլ շճախմբերով հարուցված ինֆեկցիաներ՝

◆ **B-շճախումբ** (*S.agalactia*)՝ կարող են առաջացնել նորածինների սեպսիս, կանանց ուրոգենիտալ ինֆեկցիաներ, էրոզիվ ստոմատիտ և այլն:

◆ **C-շճախումբ**՝ արձանագրված են որպես շնչական և միզասեռական ուղիների ինֆեկցիաների հարուցիչներ:

◆ **D-շճախումբ** (Էնտերոկոկեր)՝ ապրում են առողջ մարդու աղիներում և որոշակի պայմաններում կարող են առաջացնել լեղուղիների բորբոքում, էնդոկարդիտ, իսկ ընկնելով վերքերի մեջ՝ վերքային թարախսաբորբոքային ինֆեկցիաներ:

◆ **H և K շճախմբերի** ստրեպտոկոկերն անջատվել են էնդոկարդիտների ժամանակ:

◆ **Խմբասպեցիֆիկ անտիգենից գուրկ կանաչեցնող ստրեպտոկոկեր՝** *S.pneumoniae*, *S.mutans*, *S.salivarium* և այլն:

◆ **Ըստ M անտիգենի՝ 12-րդ շճատիպը** համարվում է նեֆրիտոգեն:

**Ինունիտետը** տիպասպեցիֆիկ է:

Լաբորատոր ախտորոշումը կատարվում է մանրադիտակային, բակտերիաբանական (շաքարային բուլոն, արյունային ագար) եղանակներով: Ծճախմբերը տարբերակում են խմբասպեցիֆիկ՝ A,B,C,D,... շիճուկներով՝ պրեցիպիտացիայի ռեակցիայով, շճատիպերը՝ ագլյուտինացիայի: Կիրառվում է նաև կոագյուտինացիայի, ինունաֆերմենտային անալիզի ռեակցիաները:

**Կանխարգելում և բուժում:** Սպեցիֆիկ կանխարգելման միջոցներ չկան, բուժումը հակաբակտերիային պրեպարատներով է:

### 11.1.1.2.2. Պնևմոնիայի ստրեպտոկոկ (*Streptococcus pneumoniae*)

Քայտնաբերել է L.Պաստերը 1881-ին, երբ աշխատում էր հակակատաղության վակցինայի ստացման ուղղությամբ: Մարդու մոտ առաջացնում է կրուպոգ թոքաբորբ, բրոնխիտ, աչքի եղջրաբա-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Դանթի սողացող խոց, սեպսիս և այլն: Թոքաբորբի զարգացման ժամանակ **S.pneumoniae**-ի էթիոլոգիական դերը ապացուցել են Կ.Ֆրենկելը և Ա.Վեյխզելբաումը 1884-ին:

**Դամաճարակաբանությունը:** Բնական շտեմարան են հիվանդները և բակտերիակիրները, որոնց մոտ հարուցիչները գտնվում են վերին շնչական ուղիներում: Դիվանդությունը կարող է հարուցվել և' ենդոգեն (տարբեր պատճառներից օրգանիզմի դիմադրողականության անկնան պայմաններում), և' էկզոգեն կոնտակտային (արտաքին շփման), օդակաթիլային մեխանիզմներով: Դիվանդության պիկը գրանցվում է տարվա ցուրտ ամիսներին:

**Մորֆոլոգիա և ֆիզիոլոգիա:** Գրան դրական, օվալ կամ նշտարաձև, 1մկմ տրամագծով կուկեր են (նկ.80):



**Նկ.80. *Streptococcus pneumoniae***

Կլինիկական նյութից պատրաստված քսուքներում դասավորվում են զույգերով, որոնցից յուրաքանչյուրը շրջափակված է **հաստ պատիճով**, սննդամիջավայրերում կարող են դասավորվել շղթաներով: Անշարժ են, սպոր չեն առաջացնում: Ֆակուլտատիվ անաերոր են, բարենպաստ ջերմաստիճանը  $37^{\circ}\text{C}$  է,  $\text{pH-ը } 7.8$ : Սննդամիջավայրերի նկատմամբ պահանջվում են, լավ աճում են արյուն, շիճ, 1% գյուկոզ պարունակող միջավայրերում: Դասարակ սննդային միջավայրերում առաջացնում են նուրբ պատիճ, որի զարգացմանը

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԻՉԵՐԱՆ ՈՒԹՅՈՒՆ

նպաստում է արյան ավելացումը: Հեղուկ սննդամիջավայրերում առաջացնում են հավասարաչափ պղտորություն և ոչ մեծ բամբականման փուլսի նստվածք: Պինդ սննդամիջավայրերում առաջացնում են 1մմ տրամագծով, նուրբ, կիսաթափանցիկ, հստակ եզրագծված գաղութներ, երբեմն դրանք կարող են լինել հարթ, կենտրոնում՝ ներիրված: Արյունային ագարի մակերեսին գաղութները շրջափակվում են կանաչավուն ա հեմոլիզով:

**Կենսաքիմիական ակտիվությունը** չափավոր է, տարբերվում են այլ ստրեպտոկոկերից նրանով, որ ֆերմենտացնում են ինուլինը և ցուցաբերում են բարձր զգայունություն օպտոխինի ու լեզու նկատմամբ: Առաջացնում են ջրածնի պերօքսիդ, սակայն կատալազա բացասական են և դա է պատճառը, որ դրանց աճի ու բազմացնման համար սննդամիջավայրին ավելացնում են այդ ֆերմենտը պարունակող սուբստրատներ՝ արյուն, շիճ:

**Կայունությունը:** Օրգանիզմից դուրս արագ ոչնչանում են, չեն դիմանում տաքացմանը,  $55^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում՝ խոնավ պայմաններում ոչնչանում են 10 րոպեում, դեզինֆեկտանտների ազդեցությունից՝ 1-2 րոպեում: Չոր խորխում պահպանվում են երկարաժամկետ:

**Անտիգեններ:** Զուրկ են խմբասպեցիֆիկ անտիգեններ, օժտված են բջջապատի պոլիսախարիդային անտիգենով, M-սպիտակուցով և պատիճային պոլիսախարիդային անտիգենով, ըստ որի՝ տարբերակվում են շուրջ 84 շճատիպի:

**Վիրովենտության գործոններն** են պատիճը, բջջապատի պոլիսախարիդը, M-սպիտակուցը, հիալուրոնիդազան, պեպտիդազան (քայլքայում է սեկրետոր IgA-ն), հեմոլիզինները՝ S-ստրեպտոլիզին, լեյկոցիդին:

**Պաթոգենեզ և կլինիկա:** Ինֆեկցիայի մուտքի դուռը շնչուղիների ստորին հատվածների լորձաթաղանթն է: Ախտահարվում է թոքային հյուսվածքը, առաջանում են բորբոքային ինֆիլտրատներ, առավել վիրուլենտ շտամների դեպքում թոքերի ապրենքիմայում գոյանում են խոռոչներ: Առաջնային օջախից հարուցիչները կարող են անցնել պլկրալ խոռոչ և պերիկարդ, իսկ հեմատոգեն դիսի-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱՔՏԱՆ ՈՒԹՅՈՒՆ

մինացիայի ճանապարհով՝ հարուցել պնևմոկոկային մենինգիտ, միոկարդիտ, էնդոկարդիտ, հոդերի ախտահարումներ և այլն: Հիվանդությունը սկսվում է համկարծակի, բարձր ջերմությամբ, պրոդուկտիվ հազոր և կրծքավանդակի ցավով: Հիվանդանում են բոլոր հասակներում, բայց առավել հակված են երեխաները, տարեցները, ինչպես նաև տարբեր հիվանդություններով տառապող անձինք: Ծանր դեպքերում մահացությունը հասնում է մինչև 80%:

**Ինունիտետ:** Հետինֆեկցոն ինունիտետի անկայունությունը բացատրվում է դրա տիպասաբեցիֆիկ բնույթով, ինչով և պայմանավորված են պնևմոնիայով հիվանդացման կրկնակի դեպքերը և պրոցեսի անցնան հնարավորությունը քրոնիկական ձևերի:

**Լարորատոր ախտորոշումը** կատարվում է մանրադիտակային, բակտերիաբանական, շճաբանական, կենսաբանական եղանակներով: Յարկ է նշել, որ ախտաբանական նյութը անհրաժեշտ է անմիջապես հետազոտել, քանի որ այն արագ կարող է ենթարկվել առւտոլիզի՝ ի հաշիվ ներբջջային ֆերմենտների ակտիվացման: Այլ ստրեպտոկոկերից տարբերակում են **օպտոխինոնի** փորձով, որը ճնշում է դրանց աճը, դեօքսիխոլատային փորձով՝ զգայունությունը լեղու նկատմամբ, ինչպես նաև տիպասաբեցիֆիկ **պատիճային անտիգեններով:**

**Կանխարգելում և բուժում:** Յուրահատուկ կանխարգելման միջոցներ չկան, բուժումը կատարվում է հակաբիոտիկներով:

### **11.1.2. Գրամ բացասական կոկեր**

#### **Ցեղ Նեյսերիա (Neisseria)**

Գրամ բացասական կոկերին է դասվում Neisseriaceae ընտանիքը: Անվանումը տրվել է ի պատիկ Ա.Նեյսերի, որը 1879-ին հայտնաբերել է գոնորեայի հարուցիչը՝ *N. gonorrhoeae*: Ընտանիքն ընդգրկում է 4 ցեղ՝ *Neisseria*, *Moraxella*, *Acinetobacter*, *Kingella*, որոնցից մարդու մոտ հիվանդություններ են առաջացնում *Neisseria* ցեղի *N.meningitidis* և *N.gonorrhoeae* տեսակները: Մնացած 3 ցեղերի


## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

տեսակները բնութագրվում են որպես պայմանական ախտածիններ, կամ սապոռֆիտներ:

### **11.1.2.1. Մենինգոլիկ (Neisseria meningitidis)**

**Համաճարակաբանությունը:** Հարուցիչների շտեմարանը մարդու քթընպանն է, ինֆեկցիայի աղբյուրը՝ իիվանդ մարդը և բակտերիակիրը, իիվանդությունը խիստ անթրոպոնոզ է: Փոխանցման մեխանիզմը օդակաթիլային է, սերտ կոնտակտի պայմաններում: Վարակվածներից շուրջ 1/10-ի մոտ զարգանում են նազոֆարինգիտի երևոյթներ, և միայն չնչին մասի մոտ կարող են առաջանալ իիվանդության գեներալիզացված ձևերը՝ մենինգոլիկեմիա: Հիվանդացության բարձրացումը սովորաբար արձանագրվում է բակտերիակրության լայն տարածվածության ֆոնի վրա: Համաճարակների ժամանակ բակտերիակիրների թիվը մոտենում է 95%-ի: Հիվանդությունը հանդիպում է ամենուրեք, եզակի դեպքերի ձևով՝ առավելապես երեխաների և երիտասարդների շրջանում և մասսայական բռնկումներով՝ 10-12 տարվա ընդմիջումներով: Համաճարակների ժամանակ գերակշռում է իիմնականում Աշճախումբը:

**Մորֆոլոգիա և ֆիզիոլոգիա:** Առաջին անգամ նկարագրվել է Ա.Վեյխզելբաումի կողմից 1887-ին: Գրամ բացասական, գնդաձև, 0.6-0.8մկմ տրամագծով բջիջներ են: Ախտաբանական նյութից պատրաստված արեպարատներում ունեն սուրճի հատիկի տեսք, հաճախ դասավորվում են գույգերով (ոլիպլակոլ), քառյակներով կամ անկանոն, երբեմն լեյկոցիտների ներսում (նկ.81): Սպոր չեն առաջացնում, անշարժ են: Բացի B խմբի մենինգոլիկերից, մնացած բոլորը մակրոօրգանիզմում առաջացնում են նուրբ պատիճ: Օբլիգատ աերոր են, սննդային միջավայրերի նկատմամբ պահանջկուտ. աճի և բազմացնան համար պահանջում են չբնագրկված սպիտակուցներ՝ շիճ, արյուն, ասցիտային հեղուկ, լավ աճում են 5-8% CO<sub>2</sub>-ի պայմաններում: Նպաստավոր ջերմաստիճանը 37°C է, pH-ը՝ 7.2-7.4, 22°C-ից ցածր չեն աճում:



Նկ.81. *Neisseria meningitidis*

Շիճուկային բուլյոնում առաջացնում են դիֆուզ պղտորություն, մի քանի օր հետո մակերեսին գոյանում է փառ: Պինդ սննդային միջավայրերում գաղութները նուրբ են, թափանցիկ, 2-3մմ տրամագծով: Յշվանդներից կատարված ցանքի դեպքում առաջացնում են S գաղութներ, որոնք փոխացանքերի ընթացքում կարող են դիսունցվել:

**Կենսաքիմիական ակտիվությունը** բույլ է, տարրալուծում են գյուկոզը և մալտոզը թթվի առաջացմամբ, առանց գազի, ժելատինը չեն ջրիկացնում: Կատալազա, ցիտոքրոմօքսիդազա դրական են, ուրեազա՝ բացասական (նկ.82):

**Կայունությունը:** Շրջակա միջավայրում շատ արագ ոչնչանում են, վատ են տանում բարձր և ցածր ջերմաստիճանները, չորությունը: 50°C-ում ոչնչանում են 5 րոպեում, սովորական դեղինֆեկտանտները դրանց սպանում են գոեթ անմիջապես:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

**Անտիգեններ:** Անտիգենային կառուցվածքը բավականին բարդ է, տարբերում են պատիճային-պոլիսախարիդային անտիգեն, ըստ որի բաժանվում են հետևյալ շճախսների՝ A, B, C, D, X, Y, Z, 29 E, W-135 և վերջերս անջատված H, I, K, L: Բջջապատի արտաքին թաղանթի սպիտակուցային անտիգեն, որոնք նշվում են թվերով 1, 2

Հատկանիշ	Տեսակ			
	N.meningitidis	N.gonorrhoeae	N.subflavia	
Կատարազա	+	+	+	
Օքսիդազա	+	+	+	
Ուրեազա	-	-	-	
Ժելատինի ջրիկացում	-	-	?	
Աճ 22°C	-	-	+	
պահանջը արյան շիճուկի նկատմամբ	+	+	-	
Ֆերմենտ ացիա քրվի առաջաց մամբ,	գլուկոզ լակտոզ մալտոզ սախարոզ	+	+	+
Նիտրատների վերականգնում	-	-	-	

### Նկ.82. Neisseria ցեղի որոշ տեսակների տարրերակրումը

և այլն: Ըստ յուրահատկության՝ տարբերակում են ցեղային, տեսակային, խմբասպեցիֆիկ և տիպասպեցիֆիկ անտիգեններ, որոնց հայտնաբերումը նշանակություն ունի ոչ միայն հարուցիչների վիրուլենտության գնահատման, այլև համաճարակաբանական առումով: **Անտիգենությամբ** և իմունագենությամբ **օժտված** է և բջջապատի լիպոպոլիսախարիդը՝ էնդոտոքսինը:

**Վիրուլենտության գործոններ:** Ֆիմբրիաները նպաստում են հարուցիչների ադհեգիային քրըմպանի էափելին և ենթադրվում է նաև ուղեղաթաղանթի հյուսվածքային բջիջներին: **Պատիճ:** Լիպոպոլիսախարիդային էնդոտոքսին՝ պայմանավորում է հիվանդության և' սեպտիկ, և' տոքսիկ արտահայտությունը, դրանով է պայմանավորված նաև ցանի առաջացումը և բարձր ջերմությունը, բացի այդ, այն օժտված է նեկրոտիկ և լետալ ազդեցությամբ:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Ախտածնության գործոններից են նաև հարուցիչների կողմից սինթեզվող տարրեր ֆերմենտները՝ IgA-պրոտեազներ, հիալուրոնիդազա, ներամինիդազա, պլազմակուագուլազա, ֆիբրինոլիզին, ինչպես նաև հեմոլիտիկ և հակալիզոցիմային ակտիվության այլ գործոններ:

**Պաթոգենեզ և կլինիկա:** Հարուցչի մուտքի դուռ է քթըմպանի լորձաբաղանքը, որին դրանք ամրանում են ֆիմբրիաներով: Պատիճը դրանց պաշտպանում է մակրոօրգանիզմի պաշտպանական մեխանիզմներից: Օրգանիզմում տարածվում են հեմատոզեն ճանապարհով, ինչը ուղեկցվում է հարուցիչների մասսայական ոչնչացնամբ և մեծ քանակության էնդոտոքսինի անջատմամբ, այդ իսկ պատճառով հիվանդության պարոգենեզը ընդգրկում է տոքսիկ և սեպտիկ բնույթի ախտահարումներ՝ համակցված ալերգիկ ռեակցիաներով՝ մաշկի ցանային դրսենորումներ: Այս կամ այն կոմպոնենտի գերակշռումը արտահայտվում է տարրեր կլինիկական ձևերում՝ նազղքարինզիտ, մենինզիտ և մենինզոկուլոզենիա, համապատասխան ծանրության աստիճաններով: Մենինզոկուլային ինֆեկցիայի գեներալիզացնաման պատճառներից կարևորվում է մակրոօրգանիզմի դիմադրողականության անկումը՝ վիրուսային ինֆեկցիաներ, տարրեր բնույթի սոմատիկ հիվանդություններ, տրավմաներ և այլն, որոնք փոխում են օրգանիզմի իմուն կարգավիճակը՝ առաջացնելով տրանզիտոր ինունադեֆիցիտ:

**Ինունիտետ:** Լոկալ կամ գեներալիզացված ինֆեկցիայից հետո ձևավորվում է կայուն երկարատև ինունիտետ՝ պայմանավորված հակամարդեային հակամարմիններով և հիշողության քջիններով, ընդդեմ գրեթե բոլոր շճախմբերի մենինզոկուլերի: Կարծիք կա, որ անընկալություն կարող է ձևավորվել նաև բակտերիակիրների մոտ: Հնարավոր է տրանսպլազմատար ճանապարհով հակամարմինների անցում մորից պտղին, որը նորածնին կարող է պաշտպանել կյանքի առաջին ամիսների ընթացքում:

**Լաբորատոր ախտորոշումը** կատարվում է մանրադիտակային, բակտերիաբանական, շճաբանական՝ սպեցիֆիկ հակամարմինների կամ անտիգենի հայտնաբերում, եղանակներով:

**Կանխարգելումը և բուժումը:** Արիեստական ինունիտետ ձևավորելու համար առաջարկված են վակցինաներ, որոնք սակայն ուղղված են ոչ բոլոր շճախմբերի դեմ: Բուժումը իրականացվում է հակաբակտերիային պրեպարատներով:

### 11.1.2.2. Գոնոկոկ (Neisseria gonorrhoeae)

Գոնոկոկերի միակ շտեմարանը հիվանդ մարդն է: Դրանք տեղակայվում են իիմնականում միզասեռական օրգանների, երբեմն ուղիղ աղիքի և ընպանի լորձաթղանթում: Վարակումը տեղի է ունենում գերազանցապես սեռական ճանապարհով, հազվադեպ կենցաղային՝ սերտ կոնտակտի պայմաններում: Հնարավոր է պտղի վարակումը ծննդաբերության ժամանակ՝ ծննդաբերական ուղիներով անցնելիս:


Դարուցիչը հայտնաբերել է Ա. Նեյսերը 1879-ին, սակայն հիվանդությունը մարդկությանը հայտնի է անտիկ ժամանակներից, իսկ «գոնորեա» տերմինը առաջարկվել է մեր թվարկության 2-րդ դարում Գալենի կողմից (հուն. gonos-սերմ, սպերմ, ռհօε-հնուել):

**Մորֆոլոգիա և ֆիզիոլոգիա:** Գրամ բացասական, սուրճի հատիկի նման, 0.5-1.5մկմ տրամագծով դիպլոկոկեր են՝ միմյանց ուղղված գոգավոր մակերեսներով: Ախտաբանական նյութից պատրաստված պրեպարատներում խիստ բնութագրական է աճավարտ ֆագոցիտոզի երևույթը (նկ.83): Մակրոօրգանիզմում և թարմ կուլտուրաներում առաջացնում են նուրբ պատիճ: Անշարժ են, սպոր չեն առաջացնում: Քիմիոթերապակտիկ պրեպարատների ազդեցությանը կարող են վերածվել L-ձևերի: Աերոր են, բարենպաստ ջերմաստիճանը  $37^{\circ}\text{C}$  է,  $\text{pH-ը՝ } 7.2\text{-}7.4$ :

Մասնամիջավայրերի նկատմամբ պահանջվում են, լավ աճում են չքնազրկված սպիտակուցային միջավայրերում: Նեղուկ մրջավայրերում առաջացնում են դիֆուզ պղտորություն, որը մի

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԵՐԱԾՈՒՅԹՆԵՐՆ

քանի օրից նստում է: Ասցիտային ագարի մակերեսին առաջացնում են 1-3նմ տրամագծով, նուրբ, թափանցիկ, հարթ եզրերով, ցողի



**Նկ.83. *Neisseria gonorrhoeae* (անալյարտ ֆազոցիտոց)**

կաթիլ հիշեցնող գաղութներ, որոշ տեսակները կարող են առաջացնել փոքր-ինչ պղտոր գաղութներ: Պրոտեոլիտիկ ակտիվությամբ օժտված չեն, արյունային միջավայրերում հենողից չեն առաջացնում: Շաքարներից տարրալուծում են միայն գյուլկոզը, կատալազա և օքսիդազա դրական են:

**Կայունությունը:** Մարդու օրգանիզմից դուրս շատ արագ ոչնչանում են, սակայն արյան հաստ կաթիլում կարող են պահպանել կենսունակությունը մինչև 1 օր: Չեն դիմանում չորացնանք, սառեցմանը,  $40^{\circ}\text{C}$ -ից բարձր ջերմաստիճանին: Դեզինֆեկտանտների նկատմամբ զգայուն են:

**Անտիգենները:** Անտիգենային կառուցվածքը միատարր չէ և կարող է փոփոխվել դուստր պոպուլյացիաներում, բայց և այնպես հարկ է նշել, որ անտիգենային հատկությամբ օժտված են բարանթային մակերեսային պոլիսախարիդները՝ Կ անտիգեն, միկրոթափկինները, բջջապատի լիպոպոլիսախարիդը, բջջաթաղանթի

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

**սպիտակուցները:** Ըստ վերջիններիս՝ գոնոկոկերը տարբերակում են 16 անտիգենային շճատիպերի:

**Վիրուլենտության գործոններն են՝ ֆիմբրիաներ, պատիճ, բջջապատի լիպոպոլիսախարիդ (էնդոտոքսին)՝ օժտված ցիտոտոքսիկ ազդեցությամբ, StgA-պրոտեազներ, թ-լակտամազներ՝ պայմանավորված R պլազմիդներով:**

**Պարոգենեզ և կլինիկա:** Ինֆեկցիայի մուտքի դրւու է տղամարդկանց միզուկի, կանանց հեշտոցի նախադրամ, միզուկի և արգանդի վզիկի լորձաթաղանթները: Ամրանալով միզասեռական ուղիների լորձաթաղանթի գլանածն էափելին՝ ինվազիվության գործոնների շնորհիվ, գոնոկոկերը թափանցում են բջջի ներքին միջավայր՝ առաջացնելով ուրետրիտ, ցերպիցիտ: Կանանց մոտ արգանդի հետ մեկտեղ կարող են ախտահարվել և հավելումները, տղամարդկանց մոտ՝ սերմնաբշտերը, շագանակագեղձը: Յնարավոր է բարախարորդության պրոցեսի էքստրագենիտալ տեղակայում կոկորդում, ուղիղ աղիքում: Յազվադեալ հնարավոր են բարդացումներ՝ պայմանավորված ինֆեկցիայի գեներալիզացմանը (արթրիտ, էնդոկարդիտ, մենինգիտ, ֆարինգիտ, ինչպես նաև գոնոկոկային սեպտիկոպիեմիա): Յիշանդ մորից ծնված նորածինների մոտ կարող է զարգանալ գոնոկոկային կոնյուկտիվիտ՝ **բլենոռեա:** Ինկուբացիոն շրջանը տատանվում է 1 օրից մինչև 2-3 շաբաթ, սակայն առավել հաճախ 3-4 օր: Կլինիկորեն տարբերում են 2 իմմնական ձև՝ **սուր և քրոնիկական:** Սուր գոնորեայի տիպիկ կլինիկական ախտանիշներն են միզուկի, կանանց մոտ նաև սեռական օրգանների ստորին հատվածի գեղձերի և արգանդի վզիկի բարախարին բորբջումը, որն ուղեկցվում է ցավերով և **բարախի առատ** արտազատմամբ: Քրոնիկական ձևերի դեպքում ախտանիշները թույլ են արտահայտված, **բարախարին արտադրությունը բացակայում է:**

**Ինունիտետ:** Յիշանդացածների արյան մեջ հայտնաբերվում են բավականին բարձր տիտրերով հակամարմիններ, սակայն հետին-ֆեկցիոն ինունիտետ չի ձևավորվում, ինչը հավանաբար պայմանավորված է հակամարմինների տիպասպեցիֆիկ բնույթով:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

**Լաբորատոր ախտորոշում:** Սուր գոնորեայի դեպքում ախտաբանական նյութի (միզուլից, արգանդի վզիկից քսուք) բակտերիուսկոպիայի բնութագրական նշաններն են գրամբացասական, լորածև դիպլոկոկերի առկայությունը, դրանց ներբջջային տեղակայումը (անավարտ ֆագոցիտող): Չսուրներում գոնուկուերի հայտնաբերման համար կիրառվում է նաև ուղղակի և անուղղակի իմունոֆլուորեսցենտային ներողը: Քրոնիկական ձևերի դեպքում կատարում են նեզի նստվածքի մանրադիտակազննում, բակտերիաբանական հետազոտություն՝ ցանք արյունային, շճային ազարի, թեյլի (միջավայր ճագարի մսով կամ եզան սրտամկանով և շիճով) միջավայրերում, որտեղ 1-8 օրերի ընթացքում առաջանում են ցողի կաթիլ հիշեցնող, նուրբ, 1-3նմ տրամագծով գաղութներ: Բնութագրական է գաղութների, արդեն իսկ առաջին օրերից նկատվող, կենտրոնից սկսվող և դեպի պերիֆերիա գնացող առևտոլիզը: Մաքուր կուլտուրայի անջատումից հետո կենսաքիմիական ակտիվության դրոշում գյուկոզի տարրալուծում մինչև թթու առանց գազի, կատալազա - դրական, ցիտոքրոմօքսիդազա - դրական: Շճարանական հետազոտության համար կիրառվում է կոմպլեմենտի կապման ռեակցիան, որը դրական կարող է լինել սուր գոնորեայի ժամանակ շուրջ 35%, իսկ քրոնիկական՝ 65% դեպքերում:

**Կանխարգելումը և բուժումը:** Սպեցիֆիկ կանխարգելման միջոցներ չկան, բուժումը հակաբակտերիային պրեպարատներով է:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

### 11.2. Աղիքազին ԻՆՖԵԿՑԻԱՆԵՐԻ

#### ՀԱՐՈՒՑԻՉՆԵՐԻ

Սուրբ բակտերիային աղիքային ինֆեկցիաները՝ դիառեաները, դասվում են ամենատարածված իիվանդությունների թվին: Սրանք կարող են հարուցվել ամենատարբեր տեսակների մանրէներով, սակայն առավել հաճախ նման ինֆեկցիաների պատճառ են Enterobacteriaceae ընտանիքի, ավելի քան 30 ցեղերի՝ Escherichia, Citrobacter, Enterobacter, Hafnia, Klebsiella, Salmonella, Erwinia, Serratia, Edwardsiella, Shigella, Yersinia, Proteus, Morganella, Providencia, Աերկայացուցիչները, որոնց մեծամասնության հիմնական բնակավայրը մարդու և կենդանիների աղիներն են: Թվարկված բոլոր ցեղերին դասվող միկրոօրգանիզմները բնութագրվում են մի շարք նման հատկանիշներով՝ մորֆոլոգիական, ֆիզիոլոգիական, էկոլոգիական և այլ: Դրանք հիմնականում միջին չափերի, գրան բացասական, պերիտրիխ դասավորությամբ մտրակներով օժտված, սպոր և պատիճ չառաջացնող, մարդու համար ախտածին և պայմանական ախտածին ցույցիներ են: Միևնույն ժամանակ դրանցից յուրաքանչյուրն օժտված է որոշակի առանձնահատկություններով (նկ.84), որոնք Enterobacteriaceae ընտանիքի ցեղերի

Տեսող	Գլու-	Լակ-	Ման-	Սախա-	Խն-	Ուրիշ-	Ծարժ.	H <sub>2</sub> S	ՄԿ	ՖՊ	NO <sub>3</sub>
	լիոզ	տոզ	նիտ	րոզ	դրոլ	գուազ	37°C				
E.coli	+	+	+	—	+	—	+	—	+	—	+
K.pneum.	+	+	+	+	—	+	—	—	—	+	+
Sh.dysent.	+	—	+	—	+	—	—	—	+	—	+
Sh.sonnei	+	+	+	—	—	—	—	—	+	—	+
S.typhi	+	—	+	—	—	—	+	+	+	—	+
S.paratyphi A	+	—	+	—	—	—	+	—	+	—	+
S.paratyphi B	+	—	+	—	—	—	+	+	+	—	+
S.typhimur.	+	—	+	—	—	—	+	+	+	—	+
P.vulgaris	+	—	—	—	+	+	+	+	+	—	+
Y.enterocol.	+	—	+	+	+	+	—	—	+	+	+

(+\*- շաբարների քայլայում թթվի և գազի առաջացնամբ)

Նկ.84. Enterobacteriaceae ընտանիքի հիմնական հատկանիշները

և տեսակների տարբերակման հիմքն են՝ շաքարների տարրալուծում, ծծմբաջրածնի և խնդոլի առաջացում, միզանյութի հիդրոլիզ, արգինինի դեկարտատացում, օրնիտինի դեկարբոքսիլացում, գլյուկոզի ֆերմենտացման դեպքում ացետինի առաջացում (Ֆոգես-Պրոսկառուերի ռեակցիա), մերիլեն կարմիրի հետ փորձ, աճ նատրիումի ցիտրատով միջավայրերում, շարժունություն և այլն։ Տարբերակման համար կարևոր նշանակություն ունի նաև անտիգենային կառուցվածքը, որի հիմքում ընկած է դրանց O, H և K անտիգենների ուսումնասիրությունը։

### 11.2.1. Աղիքային ցուպիկ (*Escherichia coli*)


Ցեղն ընդգրկում է մի քանի տեսակներ, որոնցից մարդու և կենդանիների համար կարևորվում է միայն **E.coli**-ին։ Այն հայտնաբերել է Թ.Էշերիխը 1885-ին, երեխաների աղիներում և անվանել է **Bacterium coli commune**։ Հետագայում *Escherichia* ցեղը բակտերիաների անվանակարգման միջազգային կոմիտեի կողմից ճանաչվել է որպես Enterobacteriaceae ընտանիքի տիպային ներկայացուցիչ։

**Դամանարակաբանությունը**։ Տարբերում են ախտածին և պայմանական ախտածին **E.coli**։ Վերջինս կազմում է մարդու ստամոքսաղիքային ուղու նորմալ միկրոֆլորայի շուրջ 5-6%-ը և նպաստում է մարդու համար կարևոր մի շարք ֆիզիոլոգիական ֆունկցիաների իրականացմանը։ Կղանքի հետ անընդհատ արտազատվելով արտաքին միջավայր, այն հանդիսանում է հողի, ջրի բակտերիային աղտոտվածության ցուցանիշներից մեկը։ Պայմանական ախտածին աղիքային ցուպիկն ունակ է առաջացնելու տարբեր տեղակայման թարախաբորբոքային հիվանդություններ՝ կոլիքակտերիոզներ, ինչպես էնդոքեն, այնպես էլ էկզոգեն բնույթի։ Այս առումով բավականին մեծ է դրա դերը՝ որպես ներիիվանդանոցային վարակների հարուցիչ։ Վերքերի թարախակալումը զարգանում է հիմնականում էկզոգեն ինֆեկցիայի տիպով։ Ի տարբերություն պայմանական ախտածինների՝ ախտածին էշերիխիաները, որոնք այլ կերպ անվանվում են դիառեային աղիքային ցուպիկներ, առողջ մարդկանց ստամոքս-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

աղիքային տրակտում չեն հայտնաբերվում: Տարբեր ուղիներով թափանցելով աղիների լուսանցք, դրանք առաջացնում են սուր աղիքային ինֆեկցիաներ (ՍԱԻ)՝ էշերիխիոզներ: Վերջիններս բացառապես էկզոգեն ինֆեկցիաներ են՝ փոխանցնան ֆեկալ-օրալ մեխանիզմով: Ինֆեկցիայի աղբյուրը են հիվանդ մարդիկ և բակտերիակիրները: Դիվանդանում են հիմնականում երեխաները, որնոց միջն 2 տարեկան հասակային խմբում ՍԱԻ-ների շուրջ 60%-ը պայմանավորված է ախտաժին էշերիխիաներով:

**Մորֆոլոգիա և ֆիզիոլոգիա:** Գրամ բացասական, միջին չափերի՝ 3.0-6.0մկմ երկարության, կլորացած ծայրերով, պերիտրիխ մտրակներով (կարող են հանդիպել և ոչ շարժուն ձևերը), անկանոն դասավորությամբ ցուպիկներ են (նկ.85): Ֆակուլտատիվ անաերոբներ են, բարենպաստ ջերմաստիճանը 37°C է, քH-ը 7.2-7.5:



Նկ.85. *Escherichia coli*

Սննդամիջավայրերի նկատմամբ պահանջվուտ չեն, սակայն չեն աճում ցիտրատային «քաղցած», միջավայրում: Նեղուկ միջավայրերում աճում են դիֆուզ պլտորության ձևով, թիթեղային ագարի մակերեսին առաջացնում են կլոր հարթ մակերեսով և եղրերով, կիսաթափանցիկ, գորշ գաղութներ, որոնք կարող են ենթարկվել R-S

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

դիսոցման: Լակտոզ պարունակող բոլոր միջավայրերում տարրալուծում են այն և ներկվում են ինդիկատորի գույնով: Ենդոյի միջավայրում առաջացնում են կարմիր, մետաղական փայլով գաղութներ (նկ.86): Արյունային ագարի մակերեսին կարող են առաջացնել



**Նկ.86. *Escherichia coli*-ի գաղութները Ենդոյի միջավայրում**

իեմոլիզ: Վիրուլենտ շտամները օժտված են պատիճով և պինդ սննդամիջավայրերում առաջացնում են լորձային գաղութներ: Տարրալուծում են շաքարները մինչև թթու և գազ, պրոտեոլիտիկ ակտիվությունը համեմատաբար թույլ է արտահայտված, առաջացնում են ինրոլ, նիտրատները վերականգնում են նիտրիտների, ծծմբաջրածին չեն առաջացնում, միզանյութը չեն քայլայում, ժելատինը չեն ջրիկացնում: Օքսիդագա բացասական են, կատալազա՝ դրական, մեթիլեն կարմիրի թեստը դրական է, Ֆոգես-Պրոսկառաւերը՝ բացասական: Շտամների մեծամասնությունը սինթեզում են տարբեր բնույթի կոլիցիններ: Շրջակա միջավայրում՝ հողում, ջրում, կարող են պահպանվել մի քանի ամիս: Դեղինֆեկտանտների նկատմամբ զգայուն են, 60°C-ի պայմաններում ոչնչանում են 15 րոպեում:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԱՆ ՌԵՎԱՐԱՆ ՈՒԹՅՈՒՆ

**Անտիգենային կառուցվածք:** Հիմնականը Օ մարմնական անտիգենն է, ըստ որի՝ տարբերակում են շուրջ 173 շճախուր: Եշրիխիաների հ անտիգենը տիպասպեցիֆիկ է, որը պայմանավորում է շճատիպերը Օ շճախմբերում: Հայտնի է ավելի քան 55 հ շճատիպ: Կ անտիգենը ըստ ջերմության նկատմամբ զգայունության տարբերակվում է A, B և L տիպերի, վերջին 2-ը թերմոլարիլ են: Այն բջջաբաղանքում տեղակայված է ավելի մակերեսային և քողարկում է սոնատիկ անտիգենը: Այդ պատճառով Օ ագլյուտիանացիայի իրականացումից առաջ, Կ անտիգենը քայքայելու նպատակով, բակտերիային կուլտուրան ենթարկվում է ջերմային մշակման: Տարբերում են պատիճային անտիգենի 80-ից ավելի վարիանտ: Առանձին շտամների անտիգենային կառուցվածքը ներկայացվում է ֆորմուլայով՝ E.coli O111,K58,H2, որի բացահայտումը ունի ոչ միայն ախտորոշիչ, այլև կարևոր համաճարակաբանական նշանակություն:

**Վիրովլենտության գործոններ:** Պայմանական ախտածին E.coli-ի ազդեցությունը բջիջների և հյուսվածքների վրա պայմանավորված է հիմնականում էնդոտոքսինով, որն անջատվում է հարուցիչների մասսայական ոչնչացման հետևանքով: **Ախտածին E.coli-ն** օժտված է վիրովլենտության հետևյալ գործոններով:

1.Արիեգիվության և գաղութացման գործոններ, որոնք հիմնականում ունեն սպիտակուցային ծագում և ֆինբրիալ կառուցվածք:

2.Ինվազիվության գործոններ՝ պլազմիդներով կողավորվող արտաքին թաղանթի սպիտակուցներ, որոնց օգնությամբ հարուցիչները թափանցում են աղիների էպիթելային բջիջներ, բազմանում այնտեղ և քայքայում դրանք:

3.Էկզոտոքսիններ, որոնք տարբերակվում են էնտերոտոքսինների և ցիտոտոքսինների: Էնտերոտոքսինները խթանում են աղիների կողմից հեղուկի հիպերսեկրեցիան, որն առաջացնում է ջրաաղային հավասարակշռության խանգարում և դիառքա: Ցիտոտոքսինները պայմանավորում են մազանոքների էնդոթելային բջիջների, աղիների պատի քայքայումը, դրանք նման են դիգեն-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՍՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

տերիայի հարուցիչների արտազատած ցիտոսոքսինին, այլ կերպ անվանվում են շիգելամնան տոքսիններ և կողավորվում են չափավոր ֆագերով:

4. Էնդոտոքսին, որը պայմանավորում է հարուցիչների անտիգենային սպեցիֆիկությունը, գաղութների ձևը և էնդոտոքսիկողի պատճառ է:

Այսպիսով, աղիքային ցուպիկի ախտածնության գործոնները վերահսկվում են ոչ միայն քրոնոսումային, այլև ներմուծված պլազմիդների և ֆագերի գեներով, ինչը ցույց է տալիս, որ աղիքային ցուպիկի ախտածին տարբերակները միշտ էլ կարող են առաջանալ դրանց պոպուլացիաներում, պլազմիդների և չափավոր ֆագերի տարածման հետևանքով: Ըստ վիրուլենտության վերը թվարկված գործոնների՝ դիառեային աղիքային ցուպիկները բաժանում են հետևյալ կատեգորիաների՝ էնտերոպարոզեն *E.coli* (EPEC), էնտերոտոքսիգեն *E.coli* (ETEC), էնտերինվազիվ *E.coli* (EIEC), էնտերինեմորօզիկ *E.coli* (EHEC), էնտերոադիկիվ *E.coli* (EAEC):

EPEC-ն ընդգրկում է 13 շճախումբ՝ O26, O55, O111 և այլն: Աղիքիվորթյան և գաղութացման գործոններն ապահովում են հարուցիչների ամրացումը և բազմացումը բարակ աղիների էպիթելիային բջիջների միկրոթավիկների մակերեսին, որի հետևանքով զարգանում է բորբոքային պրոցես և վնասված միկրոթավիկների անջատման հետևանքով առաջանում են էրոզիվ մակերեսներ: Հիվանդությունը բնութագրվում է հաճախակի դիառեայով, փսխումով և օրգանիզմի ջրազրկմամբ: Հիվանդանում են հիմնականում երեխաները կյանքի առաջին տարվա ընթացքում: Վարակումը տեղի է ունենում գերազանցապես կենցաղ-կոնտակտային, հազվադեպ՝ ալիմենտար ճանապարհով:

ETEC-ն ընդգրկում է շուրջ 17 շճախումբ՝ O25, O124, O144, O6, O8, O11 և այլն: Աղիքիայի ու գաղութացման գործոնները և էնտերոտոքսինը կողավորվում են միևնույն պլազմիդի կողմից: Գաղութացման են բարակ աղիների էպիթելի թավիկները՝ առանց դրանք վնասելու: Էնտերոտոքսինն առաջանում է ջրաաղային

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՐԴԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

հավասարակշռության խանգարում խոլերոգենի ազդեցության մեխանիզմով՝ խոլերանման դիառեա: Դիվանդուքյունը հաճախ անվանում են «ճանապարհորդների դիառեա»՝ հիվադանում են հիմնականում 1-3 տարեկան երեխաները և տարեցները, բռնկումները ջրային տիպի են:

ԵԻԵԸ-ն ներկայացված է 9 շճախմբով՝ O25, O124, O143, O144, O152 և այլն: Հարուցում են դիօքենտերանման ինֆեկցիաներ: Շիգելաների նման էնտերոինվազիվ աղիքային ցուպիկները ունակ են ներթափախանցելու աղիների էպիթելային բջիջներ, բազմանալու այնտեղ և քայլայելու վերջիններս, ինչը պայմանավորված է պլազմիդների և չափավոր ֆագերի կողմից կորավորվող մակերեսային սպիտակուցներով ու ցիտոսուքսինով: Ինչպես և շիգելաները, ԵԻԵԸ-ները նույնպես անշարժ են և լակտոզ-մեգատիվ: Հարուցիչների ինվազիվության ցուցանիշ է արյան և լեյկոցիտների մեծ քանակը կղանքում: Այս հիվանդությունն արձանագրվում է համեմատաբար ավելի քիչ, քան նախորդը:

ԵԻԵԸ-ն ներկայացված է 4 շճախմբով, առավել հաճախ հանդիպում է O157-ը, ախտածնությունը պայմանավորված է աղիեզիվության և գաղութացման գործոններով, շիգելանման տոքսինով: Վերջինս քայլայում է մանր արյունատար անոթների էնդոթելի բջիջները, որի արդյունքում առաջացած մակարդուկը խանգարում է արյան հոսքը, առաջանում է արյունահոսություն, իշեմիա և նեկրոզ: Դիտվում է ուրեմիկ, հեմոլիտիկ համախտանիշ, ոչ հազվադեպ լետալ վախճանով: Դիվանդուքյան սկիզբը սուր է, սկսվում է աղիների սպազմով, լուծով, հետագայում՝ արյունախառը: Դիվանդանում են երեխաները, և մեծահասակները, բռնկումները ալիմենտար տիպի են:

ԵԱԵԸ-ն դեռևս ոչ մի շճախմբով ներկայացված չէ:

**Ինունիտետ:** Կոլիբակտերիոզներից հետո ինունիտետ չի ձևավորվում: Ենտերոպարոգեն աղիքային ցուպիկով հարուցված կոլիինֆեկցիաների ժամանակ պաշտպանական մեխանիզմներից ամենակարևորը M դասի շիճուկային հակամարմինների սինթեզն է:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Վերջիններս չեն անցնում պլացենտար պատճեշը, հետևաբար դա է պատճառը, որ նորածինները ընկալ են այդ ինֆեկցիայի նկատմամբ, ի տարբերություն դիզենտերանման էշերիխոզի, որի դեպքում սինթեզված G հակամարմինները անցնում են պլացենտար պատճեշը: Էշերիխոզների դեպքում կարևոր դեռ է վերապահվում նաև սեկրետոր IgA-ին: Վերը թվարկված հանգամանքները հիմք են տալիս ենթադրելու, որ էշերիխոզներից հետո ձևավորվում է թույլ արտահայտված, տիպասպեցիֆիկ ինունիտետ: Կրկնակի հիվանդացումները հնարավոր են:

Լաբորատոր ախտորոշումն իրականացվում է հիմնականում բակտերիաբանական եղանակով: Կոլիբակտերիխոզների դեպքում հետազոտության նյութ են թարախը, մեզը, լեղին, արյունը՝ պայմանավորված բորբոքային պրոցեսի տեղակայմամբ: ՍԱԻ-ների ժամանակ բակտերիաբանական հետազոտության է ենթարկվում կղանքը, և աղիքային ցուպիկի մաքուր կուլտուրայի անջատումից հետո իրականացվում է տարբերակում մորֆոլոգիական, կենսաքիմիական հատկանիշներով, ինչպես նաև OK պոլիվալենտ ախտորոշիչ իմուն շիճուկների տարբեր հավաքածուներով՝ OKA, OKB, OKC, OKD, OKE: Հնարավոր է շճաբանական ռեակցիաների կիրառությունը՝ թերմոլաբիլ և թերմոստաբիլ էկզոտոքսինների հայտնաբերման նպատակով:

**Կանխարգելում և բուժում:** Կանխարգելման յուրահատուկ միջոցներ չկան: Բուժումը կատարում են կաթնաթթվային բակտերիաներ պարունակող պրեպարատներով (նարինե, բիֆիոդոբակտերին, լակտոբակտերին), հակարիոտիկներով: Օրգանիզմի ջրազքրկման և ընդհանուր ինտոքսիկացիայի դեմ պայքարի նպատակով իրականացվում է ռեհիդրատացիոն թերապիա:

### 11.2.2. Ցեղ Սալմոնելլա (Salmonella)

Ցեղն անվանվել է ամերիկացի հետազոտող Դ.Սալմոնի անունով, որը 1885-ին S.Սմիթի հետ, մինչ այդ անհայտ ցուպիկաձև

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

հարուցիչներ է անջատել սատկած խոզերի օրգաններից և անվանել դրանք *Bacterium suispestifer* (*ներկայիս անվանումը՝ Salmonella choleraesuis*): Մննդային թունավորումներից մահացած մարդկանց օրգաններում և օգտագործած սննդամբերքներում հաճանման միկրոօրգանիզմներ է հայտնաբերել Գերտները 1888-ին՝ Գերտների ցուպիկ, **ներկայիս անվանումն է *S.enteritidis***: Դիմք ընդունելով XX դարի 30-ական թվականներին *S.Կառոֆմանի* և *Պ.Ուայթի* կողմից սալմոնելաների անտիգենային կառուցվածքի (O, H և K անտիգեններ) վրա հիմնված դասակարգումը (**նկ.87**) այսօր սալմոնելաները ներկայացվում են մեկ՝ ***S.enteritica*** տեսակով (որոշ աղբյուրների

Ընալիամբ	Օ-անալիզեն	H-անալիզեն	
		I-ֆազա (սպեց.)	II-ֆազա (ոչ սպեց.)
<b>A</b> <i>S.paratyphi A</i>	1.2.12	a	/1.5/
<b>B</b> <i>S.schottmulleri</i> (paratyphi B) <i>S.abony</i> <i>S.typhimurium</i> <i>S.derby</i> <i>S.wien</i> <i>S.haifa</i> <i>S.heidelberg</i>	1.4./5./12 1.4./5./12 1.4./5./12 1.4./5./12 1.4.12.27 1.4./5./12 1.4./5./12	b b i f,g b z r	1.2 e,n,x 1.2 /1.2/ 1,w 1.2 1.2
<b>C</b> <i>S.hirschfeldii</i> <i>S.choleraesuis</i> <i>S.montevideo</i> <i>S.leopoldville</i> <i>S.bonn</i>	6.7. /Vi/ 6.7 6.7 6.7 6.7	c /c/ m,s,/p/ b l,y	1.5 1.5 - z e,n,x
<b>D</b> <i>S.typhi</i> <i>S.enteritidis</i> <i>S.dublin</i> <i>S.rostock</i> <i>S.moscow</i> <i>S.gallinarum</i>	9.12. /Vi/ 1.9.12 1.9.12 1.9.12 9.12 1.9.12	d g,m g,p g,p,u b,g s,q	- /1.7/ - - - -
<b>E</b> <i>S.london</i> <i>S.anatum</i> <i>S.amsterdam</i> <i>S.zanzibar</i>	3.10 3.10 3.10 3.10	l,y e,h g,m,s k	1.6 1.6 - 1.5

### **Նկ.87. Սալմոնելաների դասակարգումը ըստ Կառոֆմանի և Ուայթի**

համաձայն 2 տեսակով՝ ***S.bongori***, որն ախտահարում է միայն սառնարյուն կենդանիներին) և ընդգրկում են ավելի քան 2700 շճատիա, որոնց թվում առանձին նոզոլոգիական ձևերի՝ որովայնային տիֆի, A և B պարատիֆերի հարուցիչներն ու շուրջ 800 շճատիպեր, որոնք հարուցում են մարդկանց, կենդանիների, թռչունների սուր սննդային տոքսիկոինֆեկցիաներ և գաստրոէնտերոլոկոլիտներ (սալմոնելյոզներ):

## ՄԱՍՏԱՎՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սալմոնելաների կառուցվածքում տարբերում են 60-ից ավելի սպեցիֆիկության Օ անտիգեն, որոնք նշվում են արաբական թվերով ու դրանց տարբեր կոմբինացիաներով տարբերակվում են շճախմբերը՝ A, B, C, D, E և այլն: Ի անտիգենը տարբերակվում է 2 տիպի՝ I ֆազայի (80 և ավելի տարբերակ) և II ֆազայի (9 տարբերակ), որոնք պայմանավորում են հարուցիչի շճատիպը: Դրանցից առաջինը նշվում է լատինական փոքրատառերով, իսկ երկրորդը արաբական թվերով: Կ անտիգենը ներկայացված է Vi և M տարբերակներով:

### 11.2.2.1. Որովայնային տիֆի և պարատիֆերի սալմոնելաներ (S.typhi, S.paratyphi A, S.paratyphi B)

Որովայնային տիֆի հարուցիչը՝ **S.typhi-ն**, հայտնաբերել է 1880-ին Կ.Էբերտը որովայնային տիֆից նահացածների փայծաղի, լիմֆատիկ հանգույցների և բարակ աղիների պերյան բժերի ախտաբանական կտրվածքներում: 1884-ին մաքուր կուլտուրայում անջատել է Գ.Գաֆֆկին: A-պարատիֆի հարուցիչը՝ **S.paratyphi A-ն**, հայտնաբերել է 1898-ին Գվինը (Բրիոն-Կայզերի ցուախիկ), B-պարատիֆի ցուախիկը՝ **S.paratyphi B-ն**, անջատել են 1896-ին Աշարը և Բենսոնը (S.schottmulleri): Որոշ հեղինակներ առանձնացնում են նաև C-պարատիֆ: Որովայնային տիֆը որպես ինքնուրույն նոզոլոգիական միավոր առանձնացնելու փորձեր է կատարել ռուս բժիշկ Ա.Պյատնիցկին դեռևս 1804-ին, սակայն դա հիմնավորապես իրականացրել է Ռ.Բրետոնն 1822-ին՝ տարբերակելով այն աղիների տուրբերկուլոզից, միևնույն ժամանակ ենթադրություն անելով նրա կոնտագիոզ բնույթի վերաբերյալ:

**Դամաճարակաբանությունը:** Որովայնային տիֆը և A-պարատիֆը տիպիկ անթրոպոնոզ են, մյուս երկուսի հարուցիչները անջատվել են նաև կենդանիներից: Փոխանցման մեխանիզմը ֆեկալ-օրալ՝ կոնտակտային, ալիսմենտար, ջրային ճանապարհներ:

**Մորֆոլոգիա և ֆիզիոլոգիա:** Մորֆոլոգիորեն տիֆի և պարատիֆերի հարուցիչները միմյանցից և ընդհանրապես սալմոնելա

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԱՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

ցեղի մնացած ներկայացուցիչներից չեն տարբերվում: Դրանք գրամ բացասական, կլորացած ծայրերով, միջին չափերի՝ 1.0-5.0 մկմ երկարությամբ ցուպիկներ են: Սպոր և պատիճ չեն առաջացնում, ունեն պերիտորիիս դասավորված մտրակներ: Ֆակուլտատիվ անաերոբներ են, աճի և բազմացման բարենպաստ ջերմաստիճանը 37°C է, pH-ը՝ 6.8-7.2, սննդային միջավայրերի նկատմամբ պահանջվում չեն, ցիտրատուային՝ «քաղցած», ագարային միջավայրում չեն աճում: Յեղուկ միջավայրերում առաջացնում են դիֆուզ պղտորություն, թիթեղային ազարի մակերեսին՝ 2-4մմ տրամագծով, նուրբ, հարթ մակերեսով և եզրերով, կիսաթափանցիկ գաղութներ, սակայն Vi անտիգենով օժտված S.typhi գաղութները պղտոր են: S.paratyphi B գաղութներն ավելի կոպիտ են և մի քանի օր անց շրջափակվում են լորձանման թմբիկով, ինչը դրանց համար ունի տարբերակիչ-ախտորոշիչ նշանակություն: Էնդոյի միջավայրում բոլոր 3 հարուցիչի առաջացրած գաղութներն անգույն են, բիսմուտ-սուլֆիտ-ազարային միջավայրում՝ սև: Ընտրովի միջավայր է լեղային բույրնը: Կատալազա դրական են, օքսիդիազա՝ բացասական, մեթիլեն կարմիրի հետ ռեակցիան դրական է, ֆոգես-Պիռուկառուերը՝ բացասական, չեն հիդրոլիզում միզանյութը, չեն առաջացնում ինդոլ, չեն ջրիկացնում ժելատինը, առաջացնում են H<sub>2</sub>S: Լակտոզը չեն տարրալուծում: Տիֆի հարուցիչը տարրալուծում է գյուկոզը և այլ շաքարներ մինչև թթու, իսկ պարատիֆերինը՝ մինչև թթու և գազ (նկ.88):

Տեսակ	Գլու-	Լակ-	Ման-	Մախս	Ին-	Ութեա	Շարժ.	H <sub>2</sub> S	ՄԿ	ՖՊ	NO <sub>3</sub>
	կոզ	տառ	նիս	րոզ	դր	գա					
E.coli	+	*	+	*	--	+	--	+	--	+	--
S.typhi	+	--	+	--	--	--	+	+	+	--	+
S.paratyphi A	+	*	--	+	*	--	--	+	--	+	--
S.paratyphi B	+	*	--	+	*	--	--	+	+	+	--
S.typhimurium	+	*	--	+	*	--	--	+	+	+	--

(+\*- շաքարների քայլայում թթվի և գազի առաջացնամբ)

### Նկ.88. Տիֆ-պարատիֆերի տարրերակումը

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի տարբեր ազդակների նկատմամբ բավականին կայուն են՝ բաց ջրամբարներում, խմելու ջրում պահպանվում են 2-3 ամիս, հողում՝ մինչև 9 ամիս, սննդամբերքում մի քանի շաբաթից մինչև 1 տարի: Դեղինֆեկտանտների նկատմամբ կայուն են՝ քլորակրի 0.3% պարզեցված լուժույթը դրամց ոչնչացնում է 1 ժամից հետո միայն:

**Անտիգենները:** Օժտված են Օ և Ի անտիգեններով, տիֆի հարուցիչները՝ նաև նակերեսային Vi անտիգենով՝ վիրուլենտության անտիգեն:

**Ախտածնությունը:** Տիֆ, պարատիֆերի հարուցիչների կարևորագույն կենսաբանական հատկությունը ֆազոցիտոզին դիմակայելու և լիմֆոիդ համակարգի բջիջներում բազմանալու ունակությունն է: Վիրուլենտության հիմնական գործոնը, բացի Vi անտիգենը, էնդոտքսինն է, որը բնութագրվում է առանձնահատուկ բարձր տոքսիկությամբ:

**Պաթոգենեզը և կլինիկան:** Հարուցիչները, պերօրալ ճանապարհով մուտք գործելով մակրոօրգանիզմ, պայմանավորում են պաթոգենետիկ հետևյալ փուլերի զարգացումը.

### **1.Մարսողական կամ դիգեստիվ փուլ:**

**2.Մեզենտերիալ լիմֆադենիտի փուլ:** Անցնելով ստամոքսաղիքային ուղու վերին հատվածների պաշտպանական արգելվները, բարակ աղիներում բարենպաստ պայմաններ գտնելով՝ ադիեզիայի են ենթարկվում դրանց էպիթելային բջիջների միկրոթափիկների վրա ու ինվազիվության գործոնների շնորհիվ մուտք են գործում Պեերյան բօեր և սոլիտար ֆոլիկուլներ: Հետագայում լիմֆատիկ ուղիներով անցնում են մեզենտերիալ լիմֆատիկ հանգույցներ, որտեղ և ինտենսիվորեն բազմանում են՝ առաջացնելով լիմֆանգիտ և լիմֆադենիտ՝ յուրօրինակ որովայնատիֆային գրանուլեմաներ: Կլինիկորեն սա համընկնում է հիվանդության ինկուբացիոն շրջանին՝ միջին հաշվով 2 շաբաթ, որի վերջում հարուցիչները լիմֆատիկ հանգույցներից կրծքային ծորանով անցնում են արյան հոսք, որն արդեն պաթոգենետիկ երրորդ շրջանն է:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

**3.Բակտերիմիայի շրջանում ի հայտ են գալիս հիվանդության կլինիկական նշանները, որոնք սկսվում են աստիճանաբար և արտահայտվում են ընդհանուր ինտոքսիկացիայի ախտանիշներով՝ մարմնի ջերմաստիճանը բարձրանում է  $39\text{-}40^{\circ}\text{C}$ , լեզուն չոր է՝ պատված գորշ փառով, հաստացած է՝ եղբերին ատամների հետքերով։ Որովայնը չափավոր փքված է, 3-5 օրերի ընթացքում նկատվում է լյարդի և փայծաղի մեծացում։ Անհրաժեշտ է նշել, որ այս փուլում իմմնական պարոգեննետիկ նշանակություն ունի արյան բակտերիոցինների ազդեցությամբ միկրոօրգանիզմների քայլաման հետևանքով անջատված էնդոտոքսինը, որի ներգործությունը տարբեր օրգան-համակարգերի վրա արտահայտվում է համապատասխան կլինիկական ախտանիշներով։ Այսպիսի մեջ հայտնաբերվում են հակառովայնատիֆային սպեցիֆիկ հակամարմիններ։**

**4.Պարենքիմատոզ դիսիմինացիայի փուլ։** Դեմատոգեն ճանապարհով հարուցիչները թափանցում են տարբեր օրգաններ և հյուսվածքներ՝ լյարդ, փայծաղ, ոսկրածուծ և այլն, որոնցում բազմանալով՝ առաջացնում են որովայնատիֆային սպեցիֆիկ բորբոքային օջախներ՝ գրանուլաներ։ Ախտահարված օրգաններից հարուցիչները կրկին անցնում են արյան հոսք, խորանում է օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիան, ինչը կլինիկորեն արտահայտվում է հիվանդության ծաղկման շրջանին բնորոշ ախտանիշներով՝ գիտակցության նթագնում (*status typhosa; հուն. typhos-նշուշ*), ռոգեոլոզ ցանի առաջացում որովայնի, այնուհետև կրծքավանդակի և մեջքի մակերեսին։ Վերջիններս մաշկի վերին շերտերի լիմֆատիկ ուղիների շրջակայքի ալերգիկ բնույթի տեղային պրոդուկտիվ-բորբոքային պրոցեսի արդյունք են։ Դարկ է նշել, որ նշված ցանային գոյացությունները պարունակում են մեծ քանակով հարուցիչներ, ինչը կարող է դեր ունենալ հիվանդության ախտորոշման ժամանակ։ Լեղուղիներում և լեղապարկում առավել նպաստավոր պայմաններ գտնելով և բազմանալով, տիֆ-պարատիֆերի հարուցիչները լեղու հետ մեծ քանակներով արտագատվում են 12 մատնյա աղու լուսանցք։ Անցնելով բարակ աղիներ, սալմոնելաները

## ՄԱՍՆԱՎՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

կրկին տեղակայվում են մեզենտերիալ լիմֆադենիտի փուլում իրենց իսկ կողմից սենսիբիլացված լիմֆատիկ ֆոլիկուլներում, որով էլ սկսվում է 5-րդ պաթոգենետիկ շրջանը:

**5.Ալերգիկ-արտազատական փուլ:** Իմունիտետի ձևավորմանը համընթաց՝ սկսվում է հարուցիչների մասսայական հեռացումն օրգանիզմից, որին մասնակցում են գրեթե բոլոր արտազատական համակարգերը՝ թքագեղձերը, քրտնագեղձերը, կերակրող մայրերի կաթնագեղձերը, միզական համակարգը և առավել ակտիվորեն յարդն ու լեղապարկը: Լեղու հետ անցնելով 12-մատնյա, այնուհետև բարակ աղիներ՝ հարուցիչները մեծ քանակներով արտազատվում են կղանքի հետ: Սալմոնելամերի մի մասը, ինչպես վերը նշվեց, նորից անցնում են լիմֆատիկ ֆոլիկուլներ՝ առաջացնելով հիպերէրգիկ ռեակցիա՝ նեկրոզ և խոցեր, որը կարող է բարդանալ աղիքի պատի թափածակումով, արյունահոսությամբ և պերիտոնիտով:

**6.Ապաքինման՝ ռեկոնվալեսցենցիայի փուլ:** Խոցերի լավացման պրոցեսն ընթանում է առանց դեֆորմացնող սպիների առաջացման: Կլինիկական ախտանիշներն աստիճանաբար հետ են զարգանում, սակայն կլինիկական առողջացումը միշտ չէ, որ ուղեկցվում է հարուցիչներից օրգանիզմի լիակատար ազատմամբ:

Առողջացածների շուրջ 5%-ը դաշնում են տիֆի կամ պարատիֆերի հարուցիչների քրոնիկական կրողներ: Բակտերիակրության ձևավորման հարցում առաջնային դերը տրվում է մակրոօրգանիզմի կարգավիճակին, կարևոր նշանակություն ունի նաև այս միկրօրգանիզմների L-տրանսֆորմացիայի ենթարկվելու ունակությունը:

**Իմունիտետ:** Դիվանդության ընթացքում հիվանդների արյան շիճուկում ի հայտ են գալիս պրոտեկտիվ հատկություններով օժտված հակամարմիններ, որոնք ակտիվացնում են օրգանիզմի ֆագոցիտար ռեակցիան, նպաստում են մանրէների լիզիսին: Դակամարմինների տիտրի աճը սկսվում է հիվանդության 2-րդ շաբաթից, ինչը կարելի է բացահայտել շճաբանական ռեակցիաներով:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Ապաքինված հիվանդների օրգանիզմում ձևավորվում է լարված, երկարատև, հաճախ ցմահ իմունիտետ, կրկնակի հիվանդացումներ արձանագրվում են հազվադեպ: Սակայն հիվանդների մի մասի մոտ հնարավոր են ռեցիտիվներ և բակտերիակրություն՝ սուր կամ քրոնիկական, ինչը բացատրվում է հումորալ իմունիտետի ոչ լիարժեքությամբ: Հետվակցինային իմունիտետը կարճատև է՝ մոտ 12 ամիս:

### **Լաբորատոր ախտորոշում:**

♦ Հիմնական մեթոդը բակտերիաբանականն է՝ հեմոկուլտուրայի կամ միելոկուլտուրայի անջատումը Ռապովորտի միջավայրում (Լեղային բույսոն, գյուվկոզ, ինդիկատոր և ապակյա լողան): Ցանքն անհրաժեշտ է ինկուբացնել 37°C-ի պայմաններում առնվազն 8 օր, նկատի ունենալով L-ձևերի հնարավոր առկայությունը՝ 3-4 շաբաթ: Անջատված կուլտուրայի տարրերակումը կատարվում է կենսաքիմիական ակտիվության որոշմամբ և O9 (S.Typhi), O4 (S.paratyphi B), O2 (S.paratyphi A) ախտորոշչչ շիճուկներով սպեցիֆիկ անտիգենների հայտնաբերմամբ: S.typhi-ն, որը չի ագյուտինացվում O9 շիճուկով, անհրաժեշտ է ստուգել նաև «Vi» դիագնոստիկումով: Հիվանդության հետագա շաբաթների ընթացքում կղանքի, մեզի, լեղու, ինչպես նաև ցանային էլեմենտներից վերցված նմուշների բակտերիաբանական հետազոտությունն իրականացվում է ախտորոշման հաստատման, ինչպես նաև բակտերիակրության հսկողության համար:

♦ **Շճարանական եղանակ:** Հիվանդության 2-րդ շաբաթից արյան մեջ ի հայտ են գալիս հակամարմիններ Օ անտիգենի նկատմամբ, որոնց տիտրը ապաքինվելուց հետո արագորեն նվազում է: Ավելի ուշ առաջանում են հակամարմիններ Ի անտիգենի նկատմամբ, որոնց տիտրը հիվանդությունից և վակցինացիայից հետո պահպանվում է տարիներով: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ Վիդալի ագյուտինացիայի ռեակցիան դրվում է տիֆի և պարատիֆերի Օ և Ի անտիգենների հետ: Կիրառվում է նաև հեմագյուտինացիայի ռեակցիան, որում էրիթրոցիտար դիագնոս-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

տիկումը սենսիբիլացված է O, H, Vi անտիգեններով՝ համապատասխան հակամարմինների հայտնաբերման համար:

♦Մաշկաալերգիկ եղանակի դեպքում կիրառվում է Vi անտիգեն պարունակող դիագնոստիկում (Vi տիֆին), որը մակրոօրգանիզմում Vi հակամարմինների առկայության դեպքում, 20-30 րոպեի ընթացքում, առաջացնում է տեղային ալերգիկ ռեակցիա՝ կարմրություն, այտուց:

**Կամխարգելում և բուժում:** Բուժումը կատարվում է հակարիոտիկներով, ինչպես նաև սիմպտոմատիկ: Ցուրահատուկ կանխարգելման համար սահմանափակ կիրառություն ունի որովայնատիֆային քիմիական մոնովակցինան, կոնքինացված TАВթ (որովայնային տիֆի, A-պարատիֆի, B-պարատիֆի, փայտացման վակցինա) վակցինան և որովայնատիֆային բակտերիոֆագը:

### 11.2.2.2. Սալմոնելյոզներ (Սալմոնելային դիառեաներ)

**Դամաճարակաբանությունը:** Սալմոնելյոզները նարդու, կենդանիների և թռչունների պոլիեթիոլոգիական, սուր ինֆեկցիոն հիվանդություններ են, ֆեկալ-օրալ փոխանցման մեխանիզմով: Դիմնական հարուցիչներն են՝ **S.typhimurium**, **S.heidelberg**, **S.enterica**, **S.derby**, **S.haifa**, **S.anatum**, **S.panama**, **S.infantis** և այլն: Սարդու համար ինֆեկցիայի հիմնական աղբյուրը տնային թռչուններն են և դրանց ձվերը: Դարկ է նշել, որ ձուն կարող է ախտահարվել և իր զարգացման ընթացքում, և հետագայում: Զվարտուման ընթացքում սալմոնելաները ունակ են թափանցելու նաև անվնաս կեղևի միջով: Դամաճարակաբանական վտանգ կարող են ներկայացնել սալմոնելաներով վարակված խոշոր եղչերավոր կենդանիները, խոզերը, ոչխարները, ձիերը, որոնք հարուցիչներն արտաքին միջավայր են արտազատում կղանքով, մեզով, թթով և այլն: Կարևորվում է նաև նրանց միսն ու մսամթերքը, որոնք բավկանին բարենպաստ միջավայր են սալմոնելաների աճի ու բազմացման համար և կարող են ախտահարվել թե՛ կենդանության և թե՛ մորթի, տեղափոխման կամ մշակման ընթացքում: Որպես

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՐԴԱՐԱՆԻ ԹՅՈՒՆ

ինֆեկցիայի աղբյուր՝ կարևոր դեր ունի նաև մարդը։ Վարակի փոխանցումը հիվանդից կամ բակտերիակրից առողջ մարդուն իրականանում է ոչ միայն ախտահարված սննդամթերքով, այլև կենցաղ-կոնտակտային ճանապարհով։ Փոխանցման այս եղանակը նպաստում է հիվանդության անսիմպտոմ ձևերի և բակտերիակրության լայն տարածմանը։

**Վիրուլենտության գործոններն են հարուցիչների աղիեզիվությունն ու գաղութացումը, ենտերոտոքսինը (ազդում է աղենիլատցիկլազա համակարգի վրա՝ պայմանավորելով դիառեան), ցիտոտոքսինը (հիշեցնում է շիգելաների արտաթույնը), տարբեր ֆերմենտներ (պրոտեազներ, մուցինազներ, դեկարբոքսիլազներ և այլն), ենդոտոքսինը։ Յարկ է նշել, որ սալմոնելաների սպիտակուցային թույներն ունեն ներքջային տեղակայում և մակրոօրգանիզմի ներքին միջավայր են անցնում մանրէի ամբողջականության խախտման դեպքում։**

**Պաթոգենեզ և կլինիկա:** Սալմոնելյոզները պայմանավորված հարուցիչների վիրուլենտությամբ, ինֆեկցող դոզայով և մակրոօրգանիզմի իմուն կարգավիճակով կարող են ընթանալ հետևյալ կլինիկական ձևերով։

- ◆ սննդային տոքսիկոինֆեկցիաներ,
- ◆ սալմոնելային դիառեաներ,
- ◆ գեներալիզացված (տիֆոիդ)։

Սալմոնելաներով զանգվածային ախտահարման ենթարկված սննդամթերքի օգտագործումը առաջացնում է սննդային տոքսիկոինֆեկցիա, որի հիմնական սիմպտոմները պայմանավորված են մեծ քանակով հարուցիչների անցնամբ արյան հոսք, դրանց քայլայնամբ և ենդոտոքսինի անջատմամբ։ Դիառեայի հիմքում ընկած է սալմոնելաներով ենտերոցիտների գաղութացումը, որի հետևանքով վնասվում են միկրոթափիկները, և զարգանում է լորձաթաղանթի չափավոր բորբոքային պրոցես։ Անջատված ենտերոտոքսինը առաջացնում է դիառեա, իսկ ցիտոտոքսինը՝ քջիջների մահ։ Հնարավոր է հարուցիչների անցում լինֆա և արյուն, ինֆեկցիոն

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

պրոցեսի գեներալիզացում ու հիվանդության տիֆոիդ ձևի զարգացում:

**Իմունիտես:** Ելնելով այն հանգամանքից, որ սալմոնելյոզներով հիվանդանում են հիմնականում երեխաները՝ կարելի է եզրակացնել, որ հիվանդությունից հետո զարգանում է բավականին լարված, տիպային սպեցիֆիկության անընկալություն:

**Կանխարգելում և բուժում:** Սպեցիֆիկ կանխարգելման միջոցներ չեն կիրառվում: Բուժումն իրականացվում է հակաբիոտիկներով, օրգանիզմի ջրա-աղային հավասարակշռությունը կարգավորող լուծույթներով:

### 11.2.3. Բակտերիային դիգենտերիայի հարուցիչներ (Shigella)

Բակտերիային դիգենտերիան գրեթե անենուր առավել հաճախ արձանագրվող, օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիայով, հաստ աղիների լորձաթաղանթի յուրօրինակ ախտահարմանք և լուծով ընթացող, քրոնիզացման հակումով, սուր աղիքային ինֆեկցիոն հիվանդություն է: Այն մարդկությանը հայտնի է նաև «արյունային լուծ» անվանումով: 1888-ին Ա.Շանտեմեսի և Ֆ.Վիդալի, այնուհետև Ա.Գրիգորևի ու Կ.Շիգի կողմից ցուցիկաձև մանրէների հայտնաբերումը և դրանց դերի հաստատումը դիգենտերիայի էթիոլոգիայում, ինմը հանդիսացան վերջինս տարբերակելու ամերային ծագման դիգենտերիայից և դիտարկելու այն որպես առանձին նորոլոգիական ձև: Ներկայումս բակտերիային դիգենտերիան համարվում է բազմապատճառային (առլիեֆիլոզիական) հիվանդություն, քանի որ հարուցվում է Enterobacteriaceae ընտանիքի Shigella ցեղի բոլոր չորս տեսակներով՝ *S.dysenteriae*, *S.flexneri*, *S.boydii*, *S.sonnei*, որոնք միավորում են ավելի քան 40 շճատիա:

**Դամաճարակաբանությունը:** Խստ անթրոպոնոզ հիվանդություն է, ինֆեկցիայի աղբյուր են հիվանդ մարդը և բակտերիակիրը: Վարակման եղանակը՝ ֆեկալ-օրու, փոխանցման ուղիները՝ ջրային (գերակշռում է *S.flexneri*-ի դեպքում), ալիմենտար (հիմնականում *S.sonnei*), կենցաղ-կոնտակտային (առավելապես բնորոշ է *S.dysen-*

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

teriae տեսակին): Զգայուն են շրջակա միջավայրի տարրեր ազդակ-ների նկատմամբ, կղանքում պահպանում են կենսունակությունը 6-10 ժամ, զգայուն են դեգինֆեկտանտների նկատմամբ: Դիգենտերիայի համաճարակաբանական առանձնահատկությունը հարուցիչների տեսակային կազմի հաճախակի փոփոխումն է, ինչը հավանաբար պայմանավորված է տվյալ տարածաշրջանի բնակչության մոտ ինուն շերտավորման ձևավորմանը կոնկրետ տեսակի նկատմամբ և վերջինիս արտամղմամբ շրջանառությունից:

**Մորֆոլոգիա և ֆիզիոլոգիա:** Շիգելամերն իրենց կառուցվածքով չեն տարբերվում էշերիխիաներից և սալմոնելաներից՝ միջին չափի, կլորացած ծայրերով, պրեպարատներում խառը դասավորությամբ, գրամ բացասական ցուպիկներ են: Ինչպես և Enterobacteriaceae ընտանիքի մյուս ցեղերն ու տեսակները, օժտված են միկրոբավիկներով, ֆիմբրիաներով, պիլիներով, սակայն անշարժ են՝ զուրկ են մտրակներից: Շնչառության տիպով ֆակուլտատիվ անաերոբներ են, աճի ու բազմացման բարենպաստ ջերմաստիճանը 37°C է, pH-ը՝ 7.2-7.4:

**Կուլտուրալ հատկություններ և կենսաքիմիական ակտիվություն:** Սննդային միջավայրերի նկատմամբ պահանջվում չեն: Մակրոօրգանիզմից անջատման դեպքում պինդ սննդամիջավայրերում որպես կանոն առաջացնում են հարթ եզրերով, հարթ մակերեսով, կլոր, գմբեթաձև բարձրացած, կիսաբափանցիկ, S գաղութներ, որոնք հակված են դիսոցվելու R-տիպի, ընդ որում դիսոցումն առավել բնութագրական է S.sonnei տեսակին: Յեղուկ սննդամիջավայրերում S-ձևերն առաջացնում են դիֆուզ պլտորություն, իսկ R-ձևերը՝ բամբականման նստվածքը: Էնդոյի, Լկինի, Պլոսկիրկի միջավայրերում առաջացրած գաղութներն անգույն են, բացառությամբ S.sonnei տեսակի, որը լակտոզը շատ դանդաղ քայլայելու արդյունքում առաջացնում է բաց վարդագույն գաղութներ: Կենսաքիմիական ակտիվությունը, էնտերոբակտերիաների այլ տեսակների համեմատությամբ, գոեթե բացակայում է (նկ.89): Ըստ մանիստը տարրալութելու հատկության՝ շիգելաները տարբե-

## ՄԱՍՏԻԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

րակվում են մանիտ դրական (*S.flexneri*, *S.boydii*, *S.sonnei*) և մանիտ բացասական (*S.dysenteriae*) տեսակների: Լակտոզը չեն տարրալուծում, բացառությամբ *S.sonnei* տեսակի: Երբեմն քայքայում են գյուկոզը թթվի առաջացմամբ, առանց գագի,  $H_2S$  չեն առաջացնում,

հատկանիշ/տեսակ	<i>S.dysenteriae</i>	<i>S.flexneri</i>	<i>S.boydii</i>	<i>S.sonnei</i>
ֆերմենտացում մինչեւ թթու, առանց գագի	գլյուկոզ	+	+	+
	սախարոզ	-	-	-
	մաննիտ	-	+	+
	լակտոզ	-	-	+
	դուլցիս	-	-	-
$H_2S$ -ի առաջացում	-	-	-	-
ինդոլի առաջացում	+	+	+	-
մեթիլեն կարմիր	+	+	+	+
ՖՊ ռեակցիա	-	-	-	-
որեազա	-	-	-	-
կատալազա	+	+	+	+
ժելատինի ջրիկացում	-	-	-	-

### Նկ.89. Շիգելաների կենսաքիմիական տարրերակումը

որոշ շտամները կարող են առաջացնել ինորու, չունեն ուրեազա: Մեթիլեն կարմիրի փորձը դրական է, Ֆոգես Պրոսկառուերի ռեակցիան՝ բացասական, կատալազա դրական են, ժելատինը չեն ջրիկացնում:

**Անտիգենային կառուցվածք:** Շիգելաներն օժտված են ցեղային, տեսակային կամ խմբային սպեցիֆիկությամբ O, ինչպես նաև մակերեսային, տիպային սպեցիֆիկությամբ K անտիգեններով: Անտիգենային դասակարգման հիմքը O և K անտիգեններն են, ըստ որոնց՝ տարրերակվում են 4 խմբի և ավելի քան 40 շճատիպի (նկ.90):

**Վիրովենտության գործոնները:** Շիգելաների ախտածնությունը պայմանավորող կարևորագույն կենսաբանական հատկությունը դրանց ունակությունն է թափանցելու աղիների եպիթելային բջիջներ, բազմանալու և առաջացնելու վերջիններիս ամբողջականության խախտում, ինչը մեծապես պայմանավորված է վիրովենտության հետևյալ գործոններով:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

♦ աղիեզիա, գաղութացում՝ իրականանում է ֆիմբրիաների, արտաքին թաղանթի մակերեսային սպիտակուցների, մուցինազայի շնորհիվ,

♦ ինվազիա՝ պայմանավորված է մակերեսային սպիտակուցներով, ֆերմենտներով՝ նեյրամինիդազա, հիալուրոնիդազա,

♦ էնդոտոքսին,

♦ էկզոտոքսիններ՝ **ցիտոտոքսիններ**, որոնց սինթեզը կոդավորվում է չափավոր ֆագետով և **էնտերոտոքսիններ**, որոնց սինթեզը վերահսկվում է պլազմիդային գեներով:

Խումբ	Տեսակ	Ընաաիպ
A	<i>S.dysenteriae</i>	1-10
B	<i>S.flexneri</i>	1-6
C	<i>S.boydii</i>	1-15
D	<i>S.sonnei</i>	-

### Նկ.90. Շիգեյաների անտիգենային դասակարգումը

**Պաթոգենեզ և կլիմիկա:** Հարուցիչի մուտքի դուռ է հաստ աղիների լորձաթաղանթը, որտեղ բազմանալով՝ շիգելաները թափանցում են էափելային բջիջներ և շարունակելով բազմացումը դրանց ցիտոպլազմայում՝ նպաստում են վերջիններիս ոչնչացմանը: Դուրս գալով միջքջային տարածք՝ վարակում են ինտակտ բջիջները՝ պայմանավորելով պրոցեսի տարածումն ու խոցային մակերեսների մեծացումը, որը կլիմիկորեն դրսևորվում է աղիքային արյունահոսություններով: Խոցային մակերեսների առաջացմանը նպաստում են նաև ցիտոտոքսինները, իսկ էնտերոտոքսինով պայմանավորվում է դիարեան, ինչը ծանրագույն դեպքերում կարող է արձանագրվել օրվա ընթացքում մինչև 30-40 անգամ: Էնդոտոքսինը պայմանավորում է օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիան, տենդը:

Ինկուբացիոն շրջանը հիմնականում տևում է 2-5 օր, որը սակայն կարող է կրծատվել ընդհուած մինչև մի քանի ժամ: Դիվանդությունը սկսվում է հանկարծակի լուծով, զերմության

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱՔՏԻՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

բարձրացմանք, ցավերով որովայնի շրջանում՝ պայմանավորված հաճախակի տեմեզմներով, օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիայով: Հիվանդության ընթացքում օրգանիզմում կուտակվում են տիպասպեցիֆիկ հակամաժկորոբային հակամարմիններ:

**Լաբորատոր ախտորոշումն իրականացվում է բակտերիաբանական, շճաբանական եղանակներով:**

**Սպեցիֆիկ կանխարգելման միջոցներ չկան:** Կանխարգելումն ուղղված է հիմնականում ընդհանուր սանիտարակիզմիկ միջոցառումների իրականացմանը՝ ջրամատակարարման, սննդարդյունաբերության, դպրոցական և նախադպրոցական հիմնարկներում:

**Բուժումը կատարվում է հակաբիոտիկ պրեպարատներով:**

### **11.2.4. Խոլերայի հարուցիչներ**

**(*Vibrio cholerae*, *Vibrio cholerae eltor*)**

Խոլերան դասվում է հատուկ վտանգավոր բակտերիային ինֆեկցիաների կատեգորիային: Խոլերայի հայրենիքը համարվում է հնդկական տարածաշրջանը, որտեղ էնդեմիկ օջախի երկարատև պահպանումը պայմանավորված է ինչպես խոլերայի հարուցիչների կենսաբանական առանձնահատկություններով, այնպես էլ տվյալ տարածաշրջանի բնակլիմայական (բարձր ջերմաստիճան ու խոնավություն), սոցիալ-տնտեսական (ցածր կենսամակարդակ, բնակեցվածության մեծ խտություն), պայմաններով և նույնիսկ կրոնական ավանդություններով: Պատմությանը հայտնի են խոլերայի 7 պանրեմիա, որոնցից վերջինը՝ յոթերորդը, սկսվել է հնդոնեզիայում:

Առաջին հարուցիչը՝ *Vibrio cholerae asiaticae*-ն, դասվում է *Vibrionaceae* ընտանիքի *Vibrio* ցեղին (*Vibrio cholerae*): Այն հայտնաբերվել է 1882-ին Ռ.Կոխի կողմից՝ «Կոխի ստորակետ», ինչին մեծապես նպաստել է իր իսկ կողմից առաջադրված ազարային պինդ միջավավայրի կիրառությունը բակտերիաների կուլտիվացման նպատակով: Նույն ժամանակահատվածում հայտնաբերվեցին մեծ թվով վիբրիոններ, որոնք օժտված լինելով հեմոլիտիկ ակտիվությամբ՝ համարվեցին ոչ խոլերածին: 1906-ին Գոտշլիխս

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԵՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

ամուսինների կողմից Եգիպտոսի Էլ-Տոր կարանտինային կայանում մուսուլման ուխտազնացների դիակներից անջատվեց հեմոլիտիկ ակտիվությամբ նոր վիբրիոն *Vibrio cholerae* eltor, որը հետագայում հաստատվեց որպես խոլերայի 7-րդ պանդեմիայի էթիոլոգիական ագենտ: Քսաններորդ դարի իննունական թվականներին հարավ-արևելյան Ասիայում արձանագրվեց խոլերայի բռնկում՝ պայմանավորված նախկինում անհայտ **O139 (Bengal)** շճախնճի վիբրիոններով (նկ.91):


Տեսահարուցիչ	V.cholerae	V. eltor	O139-Bengal
Ոչխարի էրփր.հեմոլիք	-	+	-
Հավի էրփր.ազյուտ.	-	+	±
Աճը պոլիմիքսինով միջավայրում - 50մ/նլ	-	+	+
Զգայունուրյունը կլասիկ մոնֆազի նկատմամբ	+	-	-
Զգայունուրյունը Էլ-սոոր մոնֆազի նկատմամբ	-	+	?
ՖՊ ռեակցիա	-	+	±

### Նկ.91. *V.cholerae*-ի և *V. eltor*-ի հիմնական տարրերությունները

**Մորֆոլոգիա և ֆիզիոլոգիա:** Թեթևակի կորացած, գրամ բացասական, պոլիմորֆ ցուլպիկներ են: Սպոր և պատիճ չեն առաջացնում: Շարժուն են՝ ի հաշիվ մոնոտրիխ դասավորության մտրակի (նկ.92): Ֆակուլտատիվ անաերոբներ են, բարենպաստ ջերմաստիճանը 37°C է, ρH-ը հիմնային՝ 8.5-9.0: Սննդային միջավայրերի նկատմամբ պահանջկուտ չեն, լավ աճում ու բազմանում են 1%-անոց հիմնային պեպտոնաջրում, որտեղ առաջացնում են նուրբ, բաց երկնագույն փառ՝ միջավայրի թեթևակի պղտորումով: Պինդ սննդամիջավայրերում առաջացնում են փոքր, կիսաթափանցիկ, երկնագույն, S գաղութներ: Քայլքայում են մի շարք շաքարներ՝ գյուկոզ, մալտոզ, սախարոզ, գլիկոզեն և օսլա, մինչև թթվի առաջացման: Մանզի, սախարոզի և արաբինոզի նկատմամբ վերաբերմունքով, ԽԵՐԵՐԳԸ բոլոր վիբրիոնները դասակարգել է 8 խմբում: Խոլերայի հարու-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ցիչները դասվում են առաջին խմբին՝ տարրալուծում են մանողն ու



### Նկ.92. *V.cholerae*

սախարոզ՝ ցուցաբերելով իներտություն արաբինոզի նկատմամբ (նկ.93): Ուժեն արտահայտված պրոտեոլիտիկ ակտիվություն, ջրիկացնում են ժելատինը՝ ձագարածև, հիդրոլիզում են կազեինը,

Ծաքարմեր	Խումբ							
	1	2	3	4	5	6	7	8
Սանոզ	+	-	+	-	+	-	+	-
Սալարոզ	+	+	+	+	-	-	-	+
Արաբինոզ	-	-	+	+	-	-	+	-

### Նկ.93. Վիրոհումների կեմասարհմական քնութագիր՝ բատ հսկերդի

մակարդում են կաթը և քայքայում մինչև ամոնիակի և ինդոլի առաջացնան:  $H_2S$  չեն առաջացնում, վերականգնում են նիտրատները նիտրիտների և առաջացնում են ինդոլ, որն ընկած է դրական նիտրոզ-ինդոլային փորձի հիմքում՝ խոլերա-ռոտ:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

պլազմակուագուազային ակտիվությամբ (մակարդում են արյան պլազման), ֆիբրինոլիտիկ ակտիվությամբ (ջրիկացմում են մակարդված արյան շիճը): Մինթեզում են այնպիսի ֆերմենտներ, ինչպիսիք են լեցիտինազան, նեյրամինիդազան, լիզինեկարբոքսիլազան, օրնիտինեկարբոքսիլազան, ցիտոքրոմօքսիդազան (նկ.94):

Հատկանիշ/տեսակ	V.cholerae	Ոչ O1 խոնմք	Aeromonas	Enterobacteriaceae	
Օրսիդազան	+	+	+	-	
Լիզինեկարբոքսիլազան	+	+	-	±	
Արգինինոդիհիդրոլազան	-	-	±	±	
Օրնիտինեկարբոքսիլազան	+	+	-	±	
H <sub>2</sub> S-ի առաջացում	-	-	-	-	
Ժելատինազան	+	+	+	+	
Չարքար ների քայլքա յում	զյուկող մաննող մաննիս ինոգիս	+	-	++*	++*
Ազյուտինացիա O1 շիճում	+	-	-	-	

++\* - շաքարների քայրայում թթվի և գազի առաջացմանը

### Նկ.94.Խոլերայի հարուցիչի տարրերակումը

#### գրամ բացասական ցուպիկներից

**Անտիգենային կառուցվածք:** Վիբրիոնների կառուցվածքում տարրերում են Օ ջերմակայուն և H ջերմազգայուն անտիգեններ: Վերջինս ունի խմբային սպեցիֆիկություն, Օ անտիգենը տիպասպեցիֆիկ է, ըստ որի տարրերում են վիբրիոնների շուրջ 139 շճատիպեր, որոնք նշվում են O1-O139: Խոլերայի երկու հարուցիչները (V.cholerae և V.eltor) դասվում են O1 շճատիպին և ազյուտինացվում են O1 իմուն շիճուկով, երրորդը O139 շճատիպին: Դարկ է նշել նաև, որ Օ անտիգենը միատարր չէ և կազմված է երեք՝ A, B, C կոմպոնենտներից, որոնց տարրերը կոմբինացիաները կազմում են Oզավա (AB), Hնաբա (AC), Գիկոշիմա (ABC) բիովարները: O1 իմուն շիճուկով ազյուտինացիայի չենթարկվող վիբրիոնները հաճախ

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

անվանում են չագյուտինացվող՝  (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) Վիբրիններ:

**Վիրուլենտության գործոններ:** Վիրուլենտությունը պայմանավորված է աղիեզիվության, գաղութացման, ինվազիվության և ագրեսիվության գործոններով՝ շարժումություն, ֆիմբրիաներ ու մակերեսային սպիտակուցներ, մուցինազար, նեյրամինիդազար, լեցիտինազար, պրոտեազներ: Գրամ բացասական այլ միկրոօրգանիզմների ննան, խոլերայի հարուցիչները ևս օժտված են էնդոտոքսինով, ինչը խթանում է օրգանիզմում սպեցիֆիկ հականարմինների սինթեզը: Սրանք կոնվլեմենտի առկայությամբ լիզիսի են ենթարկում վիբրիններին՝ նպաստելով լիպովոլիսարիդի էլ ավելի մեծ քանակների անջատմանը, դրանով իսկ օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիային: Էնդոտոքսինի ազդեցությամբ է բացատրվում նաև փսխման սիմպտոմը: Յիվանդության պաթոգենետիկ ընթացքը առավելապես պայմանավորված է վիրուլենտության հիմնական, արտազատվող սպիտակուցային բնույթի տոքսինով՝ **Խոլերոգենով**: Այն ազդեցության մեխանիզմով դասվում է ֆունկցիոնալ բլոկատորներին և վերջիններին ննան բաղկացած է 2 կոմպոնենտներից՝ A և B: B-ն պայմանավորում է A-տոքսիկ կոմպոնենտի անցումը բարակ աղիների էնտերոցիտների ցիտոպլազմա: Այստեղ վերջինս ակտիվացնում է աղենիլատ-ցիկլազային համակարգը՝ նպաստելով ցիկլիկ աղենոզին նոնոֆոսֆատի կուտակմանը էնտերոցիտներում, դրանցում ջրաաղային փոխանակության խանգարմանը և ջրի արտահոսքին աղիների լուսանցքը: Արդյունքում օրգանիզմը օրվա ընթացքում կարող է կորցնել մինչև 30-40 լիտր հեղուկ, ինչը մեծապես պայմանավորում է հիվանդության կլինիկական ընթացքը:

**Պաթոգենեզ և կլինիկա:** Ինկուբացիոն շրջանը տատանվում է մի քանի ժամից մինչև 6 օր, միջինը՝ 2-3 օր: Յաղթահարելով ստամոքսի թթվային արգելքը, կենսունակ մնացած վիբրինները շարժվում են դեպի բարակ աղիների լորձաթաղանթ և քայլայելով այն տարբեր ֆերմենտների (մուցինազար) օգնությամբ՝ աղիեզիայի են ենթարկվում աղիների էպիթելային բջիջների մակերեսին,

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԻ ՀԱՐԱՐԱԾ ՈՒԹՅՈՒՆ

Կորցնում են մտրակներն ու ինտենսիվորեն բազմանալով՝ գաղութացնում են էափելի միկրոթափիկները։ Յետագայում հարուցիչների արտազատած էկզոտոքսինով պայմանավորվում է հիվանդության կլինիկական ընթացքը, որն ըստ ժամրության աստիճանի՝ տարրերակվում է թերեւ, միջին ժամրության և ծանր ձևերի։ Վերջինիս դեպքում հիվանդների մոտ արձանագրվում է հաճախակի լուծ՝ օրվա ընթացքում հասնելով տասնյակ անգամների, կղանքը ջրիկանում է, կորցնում կղանքային տեսքն ու հոտը՝ նճանվելով բրնձի եփուլի։ Շատ արագ դիառեային գումարվում են անզուսաց փսխումները, որի արդյունքում էլ ավելի է խորանում օրգանիզմի ջրազրկումը, խաճարվում է հենոդինամիկան, խիստ տուժում է երիկամների ֆունկցիան, զարգանում է թթվածնային քաղց, ցիանոզ, օրգանիզմի ջերմությունը իջնում է նորմայից, ի հայտ են գալիս ցնցումներ, հիվանդը գիտակցությունը կորցնում է խոլերային ալգիդ, որը շատ հաճախ ունենում է լետալ վախճան։

**Իմունիտետ:** Հիվանդությունից հետո զարգանում է կայուն լարված հակատոքսիկ և հակամանրեային իմունիտետ, կրկնակի հիվանդացումները արձանագրվում են հազվարեա։

**Լաբորատոր ախտորոշումն** իրականացվում է բակտերիոսկոպիկ, իմունոֆլուորէսցենտային, բակտերիաբանական, շճաբանական, կենսաբանական եղանակներով։

**Բուժումն** իրականացվում է ռեհիդրատացիոն թերապիայով՝ գուգակցելով այն արդյունավետ հակաբիոտիկային բուժմամբ։

**Կանխարգելում:** Մշակված են մի քանի վակցինաներ՝ սպանված կորպուսկուլար, կենդանի և խոլերոգեն անատոքսին, որոնք լայն կիրառություն չեն գտել, կիրառվում են հիմնականում էնդեմիկ օջախներում, համաճարակային ցուցումների ժամանակ և ապահովում են անընկալություն 6-8 ամսից ոչ ավելին։ Առավել հաճախ կանխարգելման նպատակով կիրառվում են տետրացիկլինի շաղթի հակաբիոտիկներ։


### 11.2.5. Կլեբսիելամերով պայմանավորված սուր աղիքային ինֆեկցիաներ (Klebsiella)

Մարդու ախտաբանությունում առավել կարևորվում է Klebsiella ցեղի *K.pneumoniae* տեսակը, որը միավորում է 3 ենթատեսակ՝ *K.pneumoniae*, *K.ozaenae*, *K.rhinoscleromatis*: Վերջիններս գրեթե մշտապես հայտնաբերվում են մարդու և կենդանիների մաշկի ու լորձաթաղանթների վրա: Ինչպես կարելի է ենթադրել անվանումից, *K.pneumoniae*-ն մարդու մոտ հարուցում է շնչական համակարգի՝ թոքերի, բրոնխների տարբեր բնույթի ախտահարումներ, սակայն նման հիվանդությունները զարգանում են հիմնականում թույլ օրգանիզմներում: Առավել հաճախ դրանք ներիիվանդանոցային թարախսաբորբքային հիվանդությունների, ինչպես նաև սուր աղիքային ինֆեկցիաների պատճառ են: *K.ozaenae*, *K.rhinoscleromatis* ենթատեսակները առաջացնում են վերին շնչական ուղիների, բրոնխների **սպեցիֆիկ** ախտահարումներ:

#### **Klebsiella pneumoniae**

**Մորֆոլոգիա և ֆիզիոլոգիա:** Միջին չափերի, հաստ, կլորացած ծայրերով, անշարժ, գրամ բացասական ցուպիկներ են: Սպոր չեն առաջացնում, ի տարբերություն էնտերոբակտերիաների մեծամասնության՝ առաջացնում են արտահայտված պոլիսախարիդային մակրոպատիճ: Քսուք պրեպարատներում կարող են դասավորվել ինչպես հատուկենտ, այնպես էլ զույգերով (նկ.95):

Սննդային միջավայրերի նկատմամբ պահանջկոտ չեն, կարող են աճել ցիտրատային «քաղցած» ագարային միջավայրերում: Ֆակուլտատիվ անաերոբներ են, բարենպաստ ջերմաստիճանը  $37^{\circ}\text{C}$  է,  $\text{pH-ը՝ } 7.2\text{-}7.4$ : ՄՊԲ-ում աճը և բազմացումը ուղեկցվում է դիֆուզ պղտորությամբ, երբեմն մակերեսին լորձային փառի առաջացմանը: Պինդ սննդամիջավայրերում առաջացնում են պղտոր, լորձային, մասամբ միաձուլվող, փարթամ գաղութներ: Էնդոյի, Պլոսկիրյովի տարբերակիչ ախտորոշիչ միջավայրերում առաջացնում են կարմիր գաղութներ, որը բնորոշ է կարնաշաքարը տարրալուծող



Նկ.95. *Klebsiella pneumoniae*

միկրոօրգանիզմներին: Տարրալուծում են միշարք շաքարներ մինչև թթվի, երբեմն նաև գազի առաջացման՝ գյուկոզ, վերականգնում են նիտրատները նիտրիտների, օժտված են ուրեազային ակտիվությամբ: Ծծմբաջրածին և ինդոլ չեն առաջացնում, ժելատինը չեն ջրիկացնում (նկ.96):

Կերսիելաների մոտ տարբերում են շուրջ 80 մակերեսային՝ K և 11 սումատիկ՝ O անտիգեններ: Ծճաբանական տարբերակումն իրականացվում է՝ K անտիգենի որոշմանք, որոնք նշվում են արաբական թվերով:

**Ախտածնությունը** հիմնականում պայմանավորված է ֆազոցիտոզ ճնշող պոլիսախարիդային պատիճով, էնդոտոքսինով, ինչպես նաև էնտերո- և ցիտոտոքսիններով: Աղեղիան իրականանում է պլազմիդներով կողավորվող մակերեսային սախտակուցներով, ֆիմբրիաներով: **K.pneumoniae-ն** առավել հաճախ հանդիսանում է - սուր աղիքային ինֆեկցիաների, ներիիվանդանոցային տարբեր տե-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Դակայման թարախաբորբքային հիվանդությունների, հետվիրահատական վերքերի թարախային բարդացումների պատճառ, յուրաքանչյուր դեպքում համապատասխան կլինիկական դրսերումներով: Սակայն ինչպես անվանումն է հուշում, հիմնականում թոքային պաթոլոգիայով, օրգանիզմի ընդհանուր դիմադրողականության անկմանը հիվանդների մոտ այն կարող է պատճառ դառնալ

Հատկանիշ / տեսակ	K.ռուսուո-նիա	K.օզաե-նա	K.rhinosclero-matis		
Քայլայում են շաքարները բրվի առաջացնամբ	զյուկոզ լակտոզ դրուցիտ	+	*	+	-
մերիլն կարմիրի Փորձ	-	+	+	+	-
Ֆ-Դրոսկաների ռեակցիա	+	-	-	-	-
կատարազա	+	+	+	+	-
օքսիմեզազա	-	-	-	-	-
ուրեազա	+	+	-	-	-
ինդոլի առաջացում	-	-	-	-	-
լիզինենկարրուսիլազա	+	+	-	-	-
Էնտերոսուրսին	+	+	+	+	-
հեմոլիզին	+	+	+	+	-

(+\* - շաբարների քայլայում թթվի և գազի առաջացնամբ)

### Նկ.96. Klebsiella ցեղի բակտերիաների կենսաքիմիական հատկանիշները

Թոքերի պարենքիմայի դեստրուկցիայով, արսցեսներով, պլկրալ կայումներով ընթացող, ծանր, ոչ հազվադեպ մահացու ելքով բլթային պնևմոնիայի: Որոշ շտամներ կարող են ախտահարել միզամառական, տեսողական համակարգերը: Գեներալիզացնան արդյունքում արձանագրվում են հոդերի, ուղեղաթաղանթների ախտահարումներ, ծանրագույն դեպքերում սեպտիկոպհեմիա:

**K.օզաենա-ն** համանուն՝ օգենա հիվանդության հարուցիչն է, որն այլ կերպ անվանում են քրոնիկական ատրոֆիկ գարշահոտ հարբուս: Հիվանդությունը բնութագրվում է քիչ լորձաթաղանթի և ուսկրային հյուսվածքի ատրոֆիայով, կարծր կեղևների առաջացումով, գարշահոտությամբ, հոտառության կորստով:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

**K.rhinoscleromatis-ը** հարուցում է ռինոսկլերոնա հիվանդությունը, որն ընթանում է շնչական ուղիների գրանուլեմատող, քրոնիկական բորբոքմամբ: Քթի, կոկորդի, բրոնխների լորձաթաղանթում առաջանում են մածուցիկ խորիտվ պատված, սպիտակավուն, կարծր, հարուցիչների մեծ պարունակությամբ գրանուլեմաներ, ինչը աստիճանաբար դժվարացնում է շնչառությունը և աղեկվատ բուժման բացակայության դեպքում, պայմանավորված թթվածնային քաղցով, կարող է զարգանալ նյութափոխանակային պրոցեսների խանգարումներ ու օրգանիզմի հյուծում:

**Սպեցիֆիկ կանխարգելման միջոցներ չկան:** Կանխարգելումն ուղղված է հիմնականում սննդամբերքների նկատմամբ ընդհանուր սանհտարահիգիենիկ միջոցառումների իրականացմանը սննդարդյունաբերության, դպրոցական և նախադպրոցական հիմնարկներում, ասեպտիկայի, անտիսեպտիկայի կանոնների պահպանությանը բուժպրոֆիլակտիկ հիմնարկներում, ինչպես նաև անձնական հիգիենայի կանոնների պահպանությանը:

**Լարորատոր ախտորոշում:**Պայմանավորված ախտաբանական պրոցեսի տեղակայմամբ, հետազոտվող նյութի (կղանք, մեզ, արյուն, թարոխ, խորիս) բակտերիաբանական՝ նաքուլ կուլտուրայի անջատում լակտոզ պարունակող տարբերակիչ միջավայրերում, բակտերիոսկոպիկ հետազոտություն: Այնուհետև հարուցիչի նույնականացում մինչև տեսակային և ենթատեսակային պատկանելիությունը, կենսաքիմիական ակտիվության, անտիգենային կառուցվածքի (K անտիգեն) բացահայտմամբ: Ծճախտորոշումն իրականացվում է, հիվանդի արյան շիճուկում հակա-O հակամարմինների հայտնաբերմամբ՝ կոմպլեմենտի կապնան ռեակցիայով:

**Բուժումը** կատարվում է հակաբիոտիկ պրեպարատներով:

### 11.2.6. Աղիքային իերսինիոզ (Y.enterocolitica)

Զոռանքուաղոնոց հիվանդություն է, ինֆեկցիայի աղբյուր են հիվանդ մարդիկ, կենդանիները, ինչպես նաև բակտերիակիրները: Հարուցիչը լայնորեն տարածված է բնության մեջ, կարող է

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

անջատվել վայրի և ընտանի կենդանիներից, թռչուններից, միջատներից, բանջարեղենից ու մրգերից, հատկապես պահեստավորված, ինչով և կարելի է բացատրել հիվանդության աշուն-ձմեռային սեզոնականությունը: Մարդու վարակումն իրականանում է գերազանցապես փոխանցման ֆեկալ-օրալ մեխանիզմով, ալիմենտար ճանապարհով: Հիվանդությունն ընթանում է հիմնականում ստամոքսի, բարակ աղիների ախտահարման՝ սուր աղիքային ինֆեկցիաներին բնորոշ ախտանիշներով, կարող է արձանագրվել կեղծ ապենդիցիտ, իլետ, սեպտիցեմիայի հետևանքով երբեմն նաև հոդերի ախտահարում:

**Մորֆոլոգիա և ֆիզիոլոգիա:** Գրամ բացասական, օվոիդ կոկորակտերիաներ են՝  $1-3 \times 0.5-0.8$  մկմ չափերով: Կուլտուրալ պրեպարատներում ներկվում են անհավասարաչափ, երբեմն երկրսեռ բիպուլյար: Սպոր չեն առաջացնում, գուրկ են մակրոպատիճից, սակայն առավել վիրուլենտ ձևերն ունեն նուրբ պատիճ: Օժտված են աերիտրիխ դասավորությամբ մտրակներով, սակայն շարժունակությունը սահմանափակված է  $18-22^{\circ}\text{C}$ -ի սահմաններում,  $37^{\circ}\text{C}$ -ի պայմաններում դրանք կորցնում են մտրակները: Ֆակուլտատիվ անաերոր են, բարենպաստ ջերմաստիճանը  $28-30^{\circ}\text{C}$ ՝ չափավոր պսիհրոֆիլ,  $\text{pH}-\text{ը}$  թույլ հիմնային: Սննդային միջավայրերի նկատմամբ պահանջկուտ չեն, հեղուկ միջավայրերում առաջացնում են դիֆուզ պլտուրություն, թիթեղային ագարի մակերեսին՝  $0.1-0.2$  մ տրամագծով, փայլուն, երկնագույն երանգով,  $S$  գաղութները: Պեկտինային ագարի մակերեսին գաղութները շրջափակված են ջրիկացման գոտիով: Իերսինիաների կենսաքիմիական տարրերակումն իրականացվում է էսկուլինի, ռամնոզի, սախարոզի տարրալուծնան արդյունքներով և ուրեազայի, ինորլի, օօնիտինդեկարբոքսիլազայի առաջացման հնարավորությամբ (Ծկ.97):

**Անտիգեններ:** Օժտված են Ի-մտրակային և  $O$ -սոմատիկ (էնդոտոքսին) անտիգենով: Ըստ Վերջինիս սպեցիֆիկության  $Y$ .enterocolitica տեսակը մի շարք գրամ բացասական բակտերիաների նման տարրերակում է շուրջ 34 շճավարիանտի: Մարդու

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

ախտաբանությունում առավել հաճախ հանդիպում են 03, 05-09 շճավարիանտները:

Հատկանիշ/տեսակ	Y.pestis	Y.pseudotub.	Y.ent.
<b>Ծարժունություն</b>	<b><math>22^{\circ}\text{C}</math></b>	-	+
	<b><math>37^{\circ}\text{C}</math></b>	-	-
<b>քայրայում են շաքարները</b>	<b>գլյուկոզ</b>	+	+
	<b>էսկուզին</b>	+	-
	<b>ռամնոզ</b>	+	+
	<b>սալիցին</b>	±	+
	<b>սախարոզ</b>	-	+
<b>ՖՊ <math>22^{\circ}\text{C}</math></b>	?	-	+
<b>ուրեազա</b>	-	+	+
<b><math>\beta</math>-զալակտոնիլազա</b>	+	+	+
<b>օռիտինդեկարոքորսիլազա</b>	-	-	+
<b>ինդոլ</b>	-	-	+

### Նկ.97. *Yersinia* ցեղի բակտերիաների կենսաքիմիական հատկանիշները

Վիրուլենտությունը պայմանավորված է **աղիեզիններով** (ֆինբրիաներ, միկրոպատիճ), **ինվազիններով** (մակերեսային ցածրամոլեկուլային սպիտակուցներ, որոնք պայմանավորում են բջջների թաղանթների անբողջականության խախտումը և ճնշում են բակտերիցիդ գործոնների ակտիվությունը՝ ֆագոցիտար բջջներ, կոմպլեմենտ և այլն), **ֆերմենտներ** (ֆոսֆատազա, պրոտեինկանազա), **էնդոտոքսին** և գուանիլատ ցիկլազայի օղակով ազդող թերմոստարիլ էնտերոտոքսին:

**Պաթոգենեզ և կլինիկա:** Դիվանության պաթոգենետիկ ընթացքը պայմանավորված է հարուցիչների ներթափանցմամբ աղիների լորձաթանք, դրանց բազմացմամբ էնտերոցիտներում, այնուհետև պեերյան բջերում և որովայնամզային ռեգիոնար լիմֆատիկ հանգույցներում, ինչը կլինիկորեն դրսևորվում է գաստրոէնտերիտի, որովայնամզային լիմֆադենոպաթիայի, սուլ ապենդիցիտի ախտանիշներով՝ փսխում, լուծ, կծկվող ցավեր որովայնի շրջանում: Անբարենպաստ դեպքերում հիվանդության սկզբից 7-14 օր անց,

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱՔՏԱՆ ՈՒԹՅՈՒՆ

գեներալիզացման հետևանքով կարող է զարգանալ սեպտիցեմիա՝ ներքին օրգանների ախտահարում, ռեակտիվ արթիտ, անկիլոզ, սպոնդիլիտ: Ընդ որում, հոդերի ախտահարման պաթոգենեզում կարևորվում է առևտունուն ռեակցիաների զարգացումը, ինչը պայմանավորված է հարուցիչների քայլայման արդյունքում անջատված էնդոտքսինի և մակրոօրգանիզմի հիստոհամատեղելիության (HLA) անտիգենների փոխազդեցության հետևանքով ձևավորված սուպերանտիգեններով, որոնք միաժամանակ խթանում են տարբեր սպեցիֆիկության Դ բիլերների արողիքերացումը:

**Ախտորոշումը** կատարվում է բակտերիաբանական և շճաբանական եղանակներով: Անջատված մաքուր կուլտուրայի վերջնական տարրերակումը իրականացվում է հակա-Օ հակամարմիններով: Արյան շիճուկում սպեցիֆիկ հակամարմինների տիտրը հիվանդության դինամիկայում որոշում են պասսիվ հեմագլուտինացիայի ռեակցիայով, երիթրոցիտար դիագնոստիկումով: Դրական է համարվում հակամարմինների տիտրը 1:400 և ավելին:

**Բուժումը** կատարվում է հակաբիոտիկներով:

### 11.2.7. Կամախիլոբակտերիոզներ


Կամախիլոբակտերիաների առաջին ներկայացուցիչը՝ **C.fetus**-ը, հայտնաբերվել է դեռևս XX դարի առաջին տասնամյակում որպես մանր եղջերավոր կենդանիների ինֆեկցիոն աբորտի հարուցիչ: Սակայն մարդու ախտաբանությունում դրանց դերը պարզաբանվել է համեմատաբար վերջերս՝ յոթանասունական թվականներին, սուր աղիքային ինֆեկցիաների ժամանակ *C.jejuni*-ի երիոլոգիական դերի հաստատմանք: Ավելի ուշ հաստատվել է ևս մի քանի հարուցիչների՝ *C.coli*, *C.lari*, *C.pyloridis*, դերը մարդու ինֆեկցիոն ախտաբանությունում: Վերջին տեսակը XX դարի 80-ական թվականներից առանձնացվել է կամախիլոբակտեր ցեղից և կազմավորվել է նոր, *Helicobacter* ցեղը, իսկ հարուցիչը ստացել է *Helicobacter pylori* անվանումը: Ներկայումս հաստատված է *Helicobacter pylori*-ի դերը

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

ստամոքսի և տասներկումատնյա աղիքի խոցային հիվանդության էթիոլոգիայում:

Կամպիլոբակտերիաների ցեղն ընդգրկում է շուրջ 13 տեսակ, որոնց հիմնական շտեմարանը կենդանիները և թռչուններն են, ինչպես նաև վերջիններիս արտաքրուանքներով աղտոտված սննդամթերքը: Որոշ տեսակներ կարող են մարդու մոտ գեներալիզացված ախտահարումների՝ ինֆեկցիոն արթրիտի, մենինգիտի, վասկուլիտի զարգացման պատճառ դառնալ, սակայն առավել հաճախ կամպիլոբակտերիոզը բնութագրվում է որպես սուր, տենդով, ստամոքսաղիքային տրակտի ախտահարմանք, դիառեայով ընթացող ինֆեկցիոն հիվանդություն, որի էթիոլոգիայուն հիմնականում հանդես են գալիս *C.jejuni*, *C.coli* և *C.lari* տեսակները:

**Մորֆոլոգիա:** Ոլորում, *S* տառը կամ ճայի բացված թևերը հիշեցնող, միջին չափերի միկրոօրգանիզմներ են: Երկարատև կուլտիվացման պայմաններում կարող են հանդես գալ նաև կոկանման ու հիպերսպիրալացված ձևերով (նկ.98): Սպոր և պատիճ



Նկ.98. *C.jejuni*

չեն առաջացնում: Բնորոշ են պտուտակային շարժումները՝ պայմանավորված լոփոտրիխ կամ ամֆիտրիխ դասավորությամբ 1-2

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

մտրակներով, որոնց երկարությունը կարող է մի քանի անգամ գերազանցել բջջի երկարությունը: Գրամ բացասական են, սակայն անիլինային ներկերի ջրային և սպիրտային լուծույթները դժվար ընկալելու պատճառով հիմնականում ներկումն իրականացվում է Ցիլի սարրուաթթվային ֆուքսինի 1:5 նուրացման լուծույթով:

**Ֆիզիոլոգիա և կուլտուրալ հատկություններ:** Ծնչառության տիպով միկրոբներոֆիլ են, արիեստական սննդամիջավայրերում կուլտիվացումն իրականացվում է 10-15% CO<sub>2</sub>-ի պայմաններում՝ կապնօֆիլ են, համապատասխան գազային միջավայրը պահովվում է կոմերցիոն արտադրության գազոգեներատոր պակետների կամ այրվող մոմի միջոցով: Թերմոֆիլ են՝ բարենպաստ ջերմաստիճանը 42°C է, pH-ը՝ 7.0-7.2: Սննդային միջավայրերի նկատմամբ պահանջկուտ են, կիրառվում են արյան շիճուկով, հեմինով, ամինաթթուներով, ֆորմիատներով, ֆումարատներով, ջրածնի իոններով հարստացված էլեկտրիկ միջավայրեր: Յեղուկ սննդամիջավայրերում առաջանում են երկնամոխրագույն փառ, պինդ միջավայրերում խոնավ, լորձային, մոխրավուն, անհարթ եղբերով սողացող գաղութներ, որոնք կարող են լինել նաև շատ փոքր չափերի և հիշեցնել կոնդենսատի կաթիլներ: Շաքարների նկատմամբ իներտ են, սպիտակուցների քայքայումից առաջանալում են H<sub>2</sub>S: Ի տարբերություն Helicobacter pylori-ի վերականգնում են նիտրատները, ժելատինը և միզանյութը չեն հիդրոլիզում (նկ.99): Ֆոգես-Պրոսկառուերի և մեթիլեն կարմիրի ռեակցիաները բացասական են, հեմոլիտիկ և լիպազային ակտիվությունը բացակայում է: Կատալազա և օքսիդազա դրական են: Միջտեսակային տարբերակումն իրականացվում է Na հիպուրատի միջավայրում, որտեղ C.jejuni-ն հիդրոլիզում է այն, իսկ C.coli-ն և C.lari-ն՝ ոչ, ցեֆալուտինի միջավայրում ճնշվում է C.lari-ի ածը, նալիդիքսաթթվի նկատմամբ գգայուն են C.jejuni-ն և C.coli-ն:

Ծրջակա միջավայրի տարբեր ազդակների նկատմամբ բավականին կայուն են, ինչը առավել արտահայտվում է ցածր ջերմաստիճաններում: Սննդամթերթում, կաթում, խնելու և կեղտա-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

ջրերում, արտաքրության մեջ կենսունակ են մնում մի քանի շաբաթների ընթացքում: Զգայուն են բարձր ջերմաստիճանի, արևի

Հասկանիչ		C.jejuni	C.coli	C.lari	H.pylori
աճը	25°C	-	-	-	-
	42°C	+	+	+	33-41 °C
կատարածական		+	+	+	+
օրսիդազան		+	+	+	+
միզանյութի հիպոտիզ		-	-	-	+
ժելազինի հիպոտիզ		-	-	-	±
H,S-ի առաջացում		-	±	+	±
նիտրատունիպուլսազան		+	+	+	-
զգայունուրյուն	ցեֆալուտին	-	-	+	+
	նալդիկսաքքու	+	+	-	±

### Նկ.99. *Campylobacter* և *Helicobacter* ցեղերի

#### որոշ տեսակների տարրերակումը

ուղիղ ճառագայթների, չորացման, թրուների, հիմքերի, սովորական դեղինֆեկտանտների նկատմամբ:

**Անտիգենային կառուցվածքը** ներկայացված է տիպային սպեցիֆիկության Օ-սունատիկ, և ցեղային սպեցիֆիկության Հ-մտրակային անտիգեններով:

**Պարոգենեզ և կլինիկա:** Աղեղիան ստամոքսաղիքային տրակտի էպիթելիային բջջներին պայմանավորված է մակերեսային միկրոբավիկներով, ինվազիան՝ մուցինազա ֆերմենտով, ինչպես նաև բակտերիային բջջի ակտիվ շարժունակությամբ: Այն նպաստում է հարուցիչների ներթափանցմանը հյուսվածքների առավել խորանիստ շերտերը և աղիների լորձաթաղանթի այտուցին, վիստրցմանը, երողիկ բորբոքային, ընդհուպ խոցային օջախների ձևավորմանը: Ըստ տարբեր գրական աղբյուրների՝ արտահայտված ինվազիվ հատկություններով օժտված է նաև որոշ շտամների կողմից սինթեզված **ցիտոստոքսինը**: Ցիվանդրության պարոգենետիկ ընթացքը մեծապես պայմանավորված է բջջապատի լիպոպոլիսախարիդով՝ էնդոտոքսինով, և խոլերոգենը հիշեցնող էնտերոտոքսինով:

Ինկուբացիոն շրջանը տատանվում է մինչև մեկ շաբաթ, հաճախ՝ 3-5 օր: Ցիվանդրությունը հիմնականում սկսվում է սուր էնտերիտի, էնտերոկոլիտի ախտանիշներով, դիարեայով, օրգանիզմի

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ընդհանուր ինտոքսիկացիայով, ցավերով որովայնի ստորին հատվածներում, ծանր դեպքերում արձանագրվում է օրգանիզմի ջրագրկում, արյուն կղանքում: Թույլ օրգանիզմներում հնարավոր է հարուցիչ գեներալիզացում, սեպտիցեմիայի զարգացում, սիրտանոթային, հոդային, նյարդային և այլ համակարգերի ախտահարում:

Դիվանդուրյան ընթացքում սինթեզվում են հակամարժիներ, որոնք հայտնաբերվում են բավականին բարձր տիտրերով, սակայն կայուն, լարված անընկալիություն չեն ապահովում:

Լաբորատոր ախտորոշումն իրականացվում է բակտերիաբանական, բակտերիոսկոպիկ, շճաբանական եղանակներով:

Բուժումը կատարվում է հակաբիոտիկ պրեպարատներով, սպեցիֆիկ կանխարգելման միջոցները բացակայում են:


### 11.2.8. Պրոտեաներով պայմանավորված ինֆեկցիաներ (Proteus)

Proteus ցեղի տարբեր տեսակներ մարդու ախտաբանությունում հաճախ հանդես են գալիս որպես սուր սննդային տոքսիկոինֆեկցիաների էթիոլոգիական ագենտներ: Որոշակի դեպքերում, հիմնականում այլ պայմանական ախտածին մանրէների հետ ասոցացված, կարող են հարուցել տարբեր տեղակայման թարախաբորբքային, սեպտիկ բնույթի հիվանդություններ՝ ցիստիտ, պիելիտ, այրվածքային և վնասվածքային մակերեսների թարախային բարդացումներ, ֆլեգմոնա, արսցես, պլազմա, պնևմոնիա, մենգինգիտ, ինչպես նաև սեպսիս: Բնության մեջ հիմնական շտեմարանը կենդանիների, թռչունների, ջրամբարների տարբեր բնակիչների աղիքային տրակտն է, որտեղից հարուցիչները կարող են անցնել շրջակա միջավայր՝ հող, ջուր՝ պատճառ դաշնալով մարդու վարակման: Շրջակա միջավայրի տարբեր ազդակների, դեղինֆեկտանտների նկատմամբ շատ ավելի կայուն են, քան էշերիխիաները:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Ցեղն ընդգրկում է մի քանի տեսակներ՝ *Proteus vulgaris*, *Proteus mirabilis*, *Proteus morgani* և այլն, որոնցից կարևորվելու են հիմնականում առաջին երկուսը: Տիպային տեսակն է *P.vulgaris*-ը:

**Սորֆոլոգիա և ֆիզիոլոգիա:** Գրամ բացասական, կլորացած ծայրերով, միջին չափերի, մանրադիտակի տեսադաշտում խառը դասավորությամբ ցուցիկներ են, որոնք հակված են պոլիմորֆիզմի և կարող են հանդես գալ կոկանման ու թելանման ձևերով: Սպոր և պատիճ չեն առաջացնում, պերիտրիխ են (նկ.100), սակայն երբեմն կարող են հանդիպել մտրակներից զերծ ձևեր: Ֆակուլտատիվ անաերոր են, բարենպաստ ջերմաստիճանը  $37^{\circ}\text{C}$  է,  $\text{pH-ը}$   $7.2\text{-}7.4$ , առը և բազմացումն ուղեկցվում են նեխած հոտով:



Նկ.100 .*P.vulgaris*

Սմնդային միջավայրերի նկատմամբ պահանջկուտ չեն, հեղուկ միջավայրերում առաջացնում են դիֆուզ պղտորություն: **Չարժուն ձևերը** թիթեղային ագարի մակերեսին առաջացնում են համատարած սողացող աճ առաջնային գաղութից դեպի պերիֆերիա հեռացող, մայր մեղվի շուրջը պտտվող **մեղուների** պարս հիշեցնող, կոնցենտրիկ աճի գոտիներ, որոնք ըստ Է.Վեյլի և Ա.Ֆելիքսի՝ նմանվում են սառը ապակու վրա շնչելիս առաջացած գոլորշու ծածկույթին՝ **Ի-շտամներ** (զերմ. hauch-շնչառություն): **Մտրակներից գործ շտամներն** ագարի մակերեսին առաջացնում են

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

մեկուսի S գաղութներ՝ **Օ-շտամներ** (գերմ. ohne hauch-առանց շնչառության): Պլոսկիրկի միջավայրում առաջացնում են դեղնավարդագույն, բիսմուտ-սուլֆատային ագարում՝ մոխրադարչնագույն գաղութներ: Առանձին տեսակների տարրերակումը հիմնվում է կենսաքիմիական ակտիվության (նկ.101) և անտիգենային կառուցվածքի ուսումնասիրությունների վրա:

Համականիշ/տեսակ		P.vulgaris	P.mirabilis	P.Morgani
Չայքարում են շաքարները թթվի առաջացնամք	զյուկոզ	✚ *	+	+
	մալտոզ	+	-	-
	մաննիտ	-	-	-
	քսիտ	±	+	-
	սալիցին	±	+	-
ինդոլի առաջացում		+	-	+
$H_2S$ -ի առաջացում		+	+	-
ուրեազա		+	+	+
օրնիախնդեկարբոքսիլազա		-	+	+
ժելազինազա		+	+	-

(✚ \* - շաքարների քայքարում թթվի և գազի առաջացմանը)

### Նկ.101. Proteus ցեղի բակտերիաների կենսաքիմիական հատկանիշները

**Անտիգեններ:** Պրոտեաների մոտ հայտնաբերվում են O, H և K անտիգեններ: Ըստ O անտիգենի՝ տարրերակվում են 49, իսկ ըստ H անտիգենի՝ 19 շճավարիանտի: OX շտամներում հայտնաբերվել են ռիկետսիաների O անտիգենին նման անտիգեններ, որոնք նախկինում կիրառվել են ռիկետսիոզների շճաբանական ախտորոշման նպատակով՝ Վեյլ-Ֆելիքսի ազյուտինացիայի ռեակցիա:

Ախտածնությունը պայմանավորված է մակերեսային ֆինբրիաներով, էնդոտոքսինով, անորների թափանցելիությունը մեծացնող, իմունոգլոբուլինները քայքայող պրոտեազներով, ուրեազայով, հեմոլիզիններով և հեմագյուտինիններով:

Լաբորատոր ախտորոշումն իրականացվում է բակտերիաբանական եղանակով: Անջատված մաքուր կուլտուրան նույնականացվում է կուլտուրալ և կենսաքիմիական հատկանիշներով:

Սպեցիֆիկ պրոֆիլակտիկան բացակայում է, բուժումն առավել արդյունավետ է երրորդ սերնդի ցեֆալոսպորիններով, կիրառվում է նաև պրոտեային կամ կոլիապրոտեային ֆագ:

### 11.2.9. Կապտաթարախային ցուպիկ (P.aeruginosa)

Pseudomonas ցեղի բազմաթիվ ներկայացուցիչներ լայն տարածում ունենալով շրջակա միջավայրում և պայմանավորելով նյութերի ու էներգիայի շրջանառությունը բնության մեջ՝ մեծապես բնակեցնում են նաև կենդանիների ու մարդու տարրեր բիոտոպերը, երբեմն նպաստելով վերջիններիս մոտ ինչպես էնդոգեն, այնպես և էկզոգեն թարախաբորբքային հիվանդությունների զարգացմանը, ընդհուաց մինչև սեպսիս: Տեղի ընդգրկում է շուրջ 20 տեսակ, որոնցից մի քանիսը 21-րդ դարասկզբին առնձնացվել է Burkholderia` Burkholderia (*Pseudomonas*) *mallei*, Burkholderia (*Pseudomonas*) *pseudomallei*, ցեղում: Մարդու ախտաբանությունում առավել կարևորվում է *Pseudomonas aeruginosa* տեսակը՝ կապտաթարախային ցուպիկը, որը 5-30% դեպքերում անջատվում է առողջ ու հատկապես հոսպիտալացված անձանցից և հաճախ արձանագրվում է ներիվանդանոցային թարախաբորբքային ինֆեկցիաների էթոլոգիայում: Կապտաթարախային ցուպիկով հարուցված առաջին վնասվածքային ինֆեկցիան նկարագրել է Ա.Լյուկեն՝ նշելով վիրակապական նյութի բնորոշ կապտականաչ գունավորումը:

**Մորֆոլոգիա և ֆիզիոլոգիա:** Միջին չափերի, երբեմն մի փոքր կորացած, գրամ բացասական ցուպիկներ են: Շարժուն են, պայմանավորված մեկ, երբեմն երկու թևեռային տեղակայման մտրակների առկայությամբ, օժտված են մակերեսային միկրոթափիկ-ներով: Ունակ են առաջացնելու պատիճանման թաղանք: Սպոր չեն առաջացնում: Խիստ աերոր են, աճի ու բազմացման ջերմաստիճանային պայմանները տատանվում են լայն սահմաններում՝ 5-ից 42°C, ինչը պայմանավորում է դրանց կենսունակության երկարատև պահպանումը ինչպես արտաքին միջավայրում, այնպես էլ մակրոօրգանիզմում, մարմնի ջերմաստիճանի՝ որպես պաշտպանության ոչ

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

սպեցիֆիկ գործոնի բարձրացման պայմաններում: Աննդային միջավայրերի նկատմամբ պահանջկոտ չեն, երկարատև կարող են գոյատևել սննդային աղբյուրների գրեթե բացարձակ բացակայության պայմաններում: Հեղուկ սննդամիջավայրերում, կուլտիվացման վաղ էտապներում, առաջացնում են մոխրագույն երանգով, արծաթափայլ փառ, այնուհետև միջավայրի պղտորում վերից դեպի վար: Պինդ միջավայրերում առաջացնում են հիմնականում գունավոր, S գաղութներ՝ ի հաշիվ **պիոցիանին** ջրալույժ պիզմենտի, որի գունավորումը պայմանավորված միջավայրի ρH-ով կարող է փոփոխվել՝ կապտականաչ չեղոք և հիմնային միջավայրերում, կարմիր՝ թթվային միջավայրում: Որոշ շտամներ առաջացնում են մելանինային պիզմենտ՝ սև, դարչնագույն և կարմրադարչնագույն (նկ.102):

Հասկանիշ	P.aeruginosa	P.cerapacia	P.mallei	P.pseudomallei
շարժունաթրունք	մոնոտրիխ	լիֆոտրիխ	-	լիֆոտրիխ
լուսարձակող պիզմենտ	+	-	-	-
պիզմենտ	կապտականաչ	դեղն.կանաչ	մոխր.կարմիք	ոսկեգույնագույն
կատարագա	+	+	+	+
օրսիդագա	+	+	+	+
Փերմենտացում	գյուկոզ	+	+	+
	մանիս	±	+	±
	ֆրուկտոզ	±	±	+
մելանինագա	+	-	-	±
կազեինի հիդրոլիզ	+	-	-	±
նիստառաների վերականգնում	N <sub>2</sub>	-	-	-
առ 42°C	+	-	-	-

**Նկ.102. *Pseudomonas* ցեղի որոշ տեսակների հատկանիշները**

Ծաքարոլիտիկ ակտիվությունը թույլ է արտահայտված, սակայն ունի արտահայտված պրոտեոլիտիկ ակտիվություն. Զրիկացնում է մելատինը, մակարդում արյան շիճը, հիդրոլիզում է կազեինը: Վերականգնում է նիտրատները նիտրիտների, այնուհետև մինչև մոլեկուլային ազոտի: Օքսիդագա և կատալագա դրական է:

**Անտիգենային կառուցվածքը:** Օժտված է Օ-սոմատիկ լիպոպոլիսախարիդային անտիգենով, ըստ որի՝ տարբերակվում է ավելի քան 20 շճախմբի, իսկ հ-տիպային սպեցիֆիկությամբ մտրակային անտիգենով՝ 15 շճատիպի: Մուլուղի շտամների մոտ կարելի է հայտնաբերել Կ-մակերեսային անտիգեն:

**Ախտածնությունը** պայմանավորված է մի շարք գործոններով և հատկապես արտահայտված արտաքջային պարագիտիզմով, ինչը պայմանավորում է հարուցիչների ինտենսիվ բազմացումը և դիմակայումը մակրոօրգանիզմի ոչ սպեցիֆիկ պաշտպանական մեխանիզմներին՝ և բջջային, և հումորալ: **Աղիեզիային** նպաստում են հարուցիչի թաղանթային կառուցները՝ միկրոթափիկներ, բջջապատի մակերեսային սպիտակուցներ, **գլիկոլիպիդային** պատիճանման շերտ: Վերջինս ճնշում է ֆագոցիտոզը և քողովում է տոքսիկ ազդեցություն մակրոօրգանիզմի բջիջների վրա:

**Ինվազիվությունը** պայմանավորված է մի շարք ֆերմենտներով՝ ներամինիդազա, իիալուլոնիդազա, տարբեր պրոտեազներ՝ էլաստազա, որը քայլայում է էլաստինը, կազեինը, հեմոգլոբինը, լց-ները, կոնալենենտը և այլն: **Յիմնային պրոտեազան** հիդրոլիզում է մի շարք սպիտակուցներ: Վերջինիս մաքուր պրեպարատի ներերակային ներարկումը փորձարարական կենդանիներին առաջացնում է արյունազեղումներ գործնականում գրեթե բոլոր ներքին օրգաններում: Ներմաշկային ներարկման ժամանակ առաջանում է արյունազեղում, որն ավելի ուշ նեկրոզվում է: **Կոլագենազան** պայմանավորում է շարակցական հյուսվածքի կոլագենի քայլայումը: Նշված բոլոր պրոտեազները ճնշում են ինուն համակարգի սպիտակուցների ակտիվությունը:

#### **Սպիտակուցային թույներ՝**

♦ **Էկզոտոքսին Ա-ն** օժտված է արտահայտված ինվազիվությամբ, տոքսիկ ազդեցությամբ նման է դիֆթերիայի տոքսինին՝ ճնշում է սպիտակուցի սինթեզը մակրոօրգանիզմի բջիջներում:

♦ **Յեմոլիզինը** օժտված է լեցիտինազային ակտիվությամբ, նպաստում է նեկրոտիկ օջախների զարգացմանը:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

♦ **Լեյկոցիտինը** սերտորեն կապված է ցիտոպլազմատիկ թաղանթի հետ, անջատվում է բակտերիային բջի քայքայման ժամանակ, առաջացնում է լեյկոցիտների լիգիս: Ներկայումս ապացուցված է դրա ցիտոստոքսիկ ազդեցությունը նաև այլ բջիջների վրա:

♦ **Էնտերոստոքսինը** սինթեզվում է որոշ շտամների կողմից:

Բջջապատի լիպոպոլիսարիդ՝ **Էնտոքսինը**, թողնում է ընդհանուր տոքսիկ ազդեցություն:

**Պարոգենեզ և կիիճիկա:** Վարակումն իրականանում է իմմնականում կոնտակտային մեխանիզմով: Չնայած վիրուլենտության գործոնների հզոր արտենալի առկայությանը՝ **P.aeruginosa**-ն համարվում է օպորտունիստական ինֆեկցիայի հարուցիչ, քանի որ իիվանդությունը հազվադեպ է արձանագրվում նորմալ ռեզիստենտությամբ և անվնաս անատոմիական պատնեշներով անձանց մոտ: Առաջացած ախտահարումները՝ գերազանցապես այլ թարախածին միկրոօրգանիզմներով (ստաֆիլոկոկեր, պրոտեաներ, էշերիխիաներ) պայմանավորված, վնասվածքային, հետվիրահատական, այրվածքային թարախաբորբոքային արոցեսների բարդացումներ են: Բացի այդ, կապտաթարախային ինֆեկցիայի զարգացմանը կարող են նպաստել օրգանիզմի ընդհանուր դիմադրողականությունը ճնշող բազմազան ախտաբանական իրավիճակներ և բժշկական միջանտություններ, ինչը մեծապես կարևորում է դրանց դերը ներիիվանդանոցային վարակների խնդրում (նկ.103):

Իրավիճակ	Կապտաթարախային ինֆեկցիայի դրսնորում
շաքարային դիաբետ	արտաքին ականջի չարտակ օսխա, դիաբետ
հաճախակի ներքրակային ներարկումներ	Էնդոկրապիխա, օստառնիելիս
լեյկոզներ	սեպտիցեմիա, սերիոնկլստալ արսցեսներ
շարուրակ նորագոյացություններ	սեպտիցեմիաներ, անեմոնիաներ, մենինգիտներ, դիաբետ
անոքների կատերիքացիս	թարախային քրոմբոֆերիտաներ
միզուլիների կատերիքացիս	միզանեռական համակարգի ինֆեկցիաներ
նորածնային շրջան	դիաբետ, մենինգիտներ

**Նկ.103. Իրավիճակներ, որոնք կարող են ապատճառ հանդիսանալ կապտաթարախային ինֆեկցիայի զարգացման**

## ՄԱՍՆԱՎՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

**Իմունիտետ:** Հիվանդությունից հետո սպեցիֆիկ անընկալություն չի առաջանում, օրգանիզմի պաշտպանությունը պայմանավորված է ռեզիստենտության ոչ սպեցիֆիկ գործոններով:

**Լաբորատոր ախտորոշում և բուժում:** Ախտորոշում է բակտերիաբանական եղանակով՝ մաքուր կուլտուրայի անջատում և տարրերակում: **Բուժումն** իրականացվում է վերջին սերնդի հակաբիոտիկներով, անջատված կուլտուրայի զգայնությունը վերջիններիս նկատմամբ հաստատելուց հետո:

### 11.3. ԴԱՏՈՒԿ ՎՏԱՆԳԱՎՈՐ (ԶՈՈՆՈԶ) ԻՆՖԵԿՑԻԱՆԵՐ

Բակտերիային ծագման հատուկ վտանգավոր ինֆեկցիաների կատեգորիային դասվում են **ժանտախտը, բրուցելյոզը, տույարեմիան, սիրիյյան խոցը, խոլերան** և **այլն:** Առաջին չորսը զոհոնող են, իսկ խոլերայով հիվանդանում է միայն մարդը: Այս հիվանդությունները հատուկ վտանգավոր են, որովհետև դրանց հարուցիչները՝

♦օժտված են բարձր վարակելիությամբ (նշված ինֆեկցիաների նկատմամբ ընկալ են բոլոր մարդիկ),

♦ունակ են առաջացնելու ոչ միայն համաճարակներ, այլև պանդեմիաներ (ժանտախտ, խոլերա),

♦առաջացնում են ծանր ընթացող, բարձր մահաբերությամբ հիվանդություններ:

#### 11.3.1. Ժանտախտ (*Yersinia pestis*)

Սուր ինֆեկցիոն հիվանդություն է, հեճռագիկ սեպտիցեմիայի ընթացքով: Նախկինում այն մարդկության համար մեծ աղետ էր: Հայտնի է ժանտախտի երեք պանդեմիա, որոնք միլիոնավոր մարդկային զրհերի պատճառ են դարձել:

**Առաջին** պանդեմիան արձանագրվել է մեր թվարկության VI դարում, որից 530-580թթ. մահացել է 100մլն մարդ՝ Արևելյան Հռոմեական կայսերության բնակչության կեսը: **Երկրորդ** պանդեմիան մոլեգմել է XIV դարում, որը սկիզբ առնելով Չինաստանում,

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

տարածվել է Ասիայի և Եվրոպայի բազմաթիվ երկրներում: Ասիայում դրանից մահացել 1 40մԼ մարդ, իսկ Եվրոպայում՝ 100մԼ բնակչությունից 25մԼ-ը: Երրորդ պանդեմիան սկսվել է 1894-ին և ավարտվել է 1938-ին, տաճելով 12-15մԼ մարդկային կյանք:

**Դամաճարակաբանությունը:** Ժանտախտը գոռնող, բնական օջախայնությամբ հիվանդություն է: Բնության մեջ ինֆեկցիայի աղբյուր են կրծողները, որոնց վարակումը իրականանում է հիմնականում լվերի միջոցով: Լվերի մոտ հարուցիչը բազմանում է մարսողական խողովակի լուսանցքում, վարակիչ է ոչ թե լվի կծելը, այլ կծելու պրոցեսում նրա կողմից արտազատած արտաթրանքները և մեծ քանակով հարուցիչներ պարունակող արյունային խցանը: Մարդը վարակվում է լվերի միջոցով, ախտաբանական նյութի հետ անմիջական շփման, օդա-կաթիլային, հազվադեպ ալիմենտար, ճանապարհներով:

**Դասակարգումը:** Ժանտախտի հարուցիչը՝ *Yersinia pestis*-ը, հայտնաբերել է Գ.Սինիլ 1878-ին և Ա.Իերսենը 1894-ին: Այն դասվում է Enterobacteriaceae ընտանիքի *Yersinia* ցեղին, որն ընդգրկում է 11 տեսակ: Մարդու ախտաբանությունում, ժանտախտի հարուցիչից բացի դեր ունեն դրանցից ևս երկուս՝ *Y.enterocolitica*, *Y.pseudotuberculosis*: Վերջիններս, ինչպես և *Y.pestis*-ը, զոռանքորոպնող ինֆեկցիաների հարուցիչներ են, մարդու մոտ կարող են առաջացնել որովայնամզային լիմֆադենիտ, քրոնիկական դիառեա և ծանր սեպտիցեմիա:

**Մորֆոլոգիա և ֆիզիոլոգիա:** Փոքր չափերով՝ 1-3 x 0.5-0.8մկմ, առավել հաճախ օվլիդ կառուցվածքով, երկընեռ ներկված (ունի տարբերակիչ նշանակություն) ցուայիկներ են: Հեղուկ սննդամիջավայրերում աճեցված կուլտուրաներից պատրաստված քսուքներում դասավորվում են շղթաներով, իսկ ազարային կուլտուրաներից պատրաստված քսուքներում՝ անկանոն: Գրամ բացասական են, սպոր չեն առաջացնում, մտրակներ չունեն (նկ.104): 37°C-ի պայմաններում առաջացնում են գլիկոպրոտեիդային նույր պատիճ, ածի և բազմացման համար բարենպաստ ջերմաստիճանը 27-28°C է

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

(դիպազոնը 0°C-ից մինչև 45°C), pH-ը՝ 6.9-7.1: *Y.pestis*-ը ֆակուլտատիվ անաերոր է, սննդամիջավայրերի մկատմամբ պահանջկուտ չէ, սակայն առավել լավ աճում և բազմանում է հեմոլիզված արյան ավելացման դեպքում, պինդ և հեղուկ սննդամիջավայրերում առաջացնում է բնորոշ աճ:



Նկ. 104. *Yersinia pestis*

Մսապեպտոնային բուլյոնում այն արտահայտվում է փիխրուն փառի առաջացնով, որից հետագայում իջնում են թելիկներ՝ նմանվելով «ստալակտիդների», հաստակում գոյանում է փիխրուն նստվածք: Վիրուլենտ շտամները առաջացնում են R գաղութը, որոնց զարգացումը պինդ սննդային միջավայրերի մակերեսին անցնում է 3 փուլ՝ ցանքից 10-12 ժամ անց մանրադիտակով երևում է աճ անգույն թիթեղիկների տեսքով՝ «փշրած ապակու» փուլ: 18-24 ժամ անց արձանագրվում է «ժանյակավոր թաշկինակի» փուլը՝ անզեն աչքով դիտարկման ժամանակ երևում է արտափքված, դեղնավուն, երբեմն թույլ գորշավուն կենտրոնական նասը՝ շրջափակված լուսավոր ժանյակային գոտիով: 40-48 ժամ անց «հասում գաղութի» շրջանն է գորշ, բծավորված կենտրոնով և արտահայտված պերիֆերիկ գոնայով: Օքսիդազա և ուրեազա

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

բացասական են, կատալազա դրական, մեթիլեն կարմիրի հետ ռեակցիան դրական է,  $\text{NO}_2$ -Պրոսկառուերը՝ բացասական: Ինդոլ և  $\text{H}_2\text{S}$  չեն առաջացնում, տարրալուծում են գյուկոզը, մալտոզը, մանիտը, գալակտոզը մինչև թթվի առաջացնան առանց գազի: Պրոտեոլիտիկ ակտիվությունը բույլ է արտահայտված: Հի ջրիկացնում ժելատինը, կաթը չի մակարդում:

**Ուղիստենոտությունը:** Արտաքին միջավայրում կարող են երկար պահպանվել, դիմանում են ցածր ջերմաստիճաններին,  $0^{\circ}\text{C}$ -ում կարող են կենսունակ մնալ շուրջ 6 ամիս, սառած դիակներում և լվերում մինչև 1 տարի, հողում, ջրում, հագուստի վրա՝ 1-5 ամիս: Զգայուն են ուլտրամանուշակագույն ճառագայթների, չորացնան, բարձր ջերմաստիճանների նկատմամբ: Զգայուն են նաև սովորական դեղինֆեկտանտների նկատմամբ:

**Անտիգենային կառուցվածք:** Բոլոր իերսինիաներն ունեն O անտիգեն (էնդոտոքսին), որը ննան է այլ գրամ բացասական բակտերիաների համանուն անտիգենին: Y.pestis-ը օժտված է պատիճային գլիկոպրոտեիդային անտիգենով՝ **Ֆրակցիա 1 (F1)**, որը պայմանավորում է դրա անտիգենային սպեցիֆիկությունը, պաշտպանում է բակտերիաներին ֆագոցիտների կողմից կլանվելուց, չի թողնում տոքսիկ ազդեցություն, օժտված է իմունոգենությամբ: **V-W անտիգեններից V-ն** սպիտակուցային բնույթի է, տեղակայված է հարուցիչի ցիտոպլազմայում, **W անտիգենը** լիպոպրոտեիդային կոմպլեքս է, երկուսն էլ կապված են բջջաբաղանքին: Անտիգենային հատկությամբ են օժտված նաև պլազմոկոագուլազան, **Ֆիբրինոլիզինը**, թաղանթային տարրեր սպիտակուցները, տոքսինները, ինչպես նաև  $\text{rHb}$  սպիտակուցը: Դարկ է նշել, որ անտիգենային առումով Y.pestis-ը միատարր է, շճատիպերի չի տարբերակվում:

**Վիրովենտության գործոններ:** Բակտերիաների խմբում ժանտախտի հարուցիչը համարվում է առավել ախտածինն ու ազրեսիվը, ընկալ օրգանիզմներում այն ճնշում է ֆագոցիտար համակարգի ակտիվությունը: Դարուցիչը թափանցում է ֆագոցիտներ, ճնշում է

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

«օքսիդացիոն պայթյունն» ու անարգել բազմանում դրանցում: Այդ իսկ պատճառով, ժամտախտի նկատմամբ բարձր ընկալությունը հիմնականում պայմանավորված է ֆագոցիտների կողմից *Y.pestis*-ի նկատմամբ իրենց քիլեր ֆունկցիայի իրականացման անկարողությամբ:

◆ **Աղիեզիվությունը** պայմանավորող գործոններն են՝ ֆիմբրիաները, ներամինիդազան, վերջինս նպաստում է աղիեզիային ազատելով ընկալիչները *Y.pestis*-ի համար:

◆ Մակրոֆագերում և օրգանիզմի հյուսվածքներում հարուցիչի բազմացումը (**գաղութացում**) պայմանավորող գործոններն են՝ V-W անտիգենները, հեմինը կապելու հարուցիչի ունակությունը, դրա աճի ու բազմացման կախվածությունը  $Ca^{2+}$  իոնների առկայությունից:

◆ **Ինվազիվության գործոններն են՝** ֆիբրինոլիզինը, պլազմոկոագուլազան:

◆ **Ազրեսիվության գործոններն են՝** պատիճը (F1), արտաքին բաղանքի սպիտակուցները, V-W անտիգենները, որոնք ճնշում են մակրոֆագերի ակտիվությունը: Ենթադրվում է, որ աղենիլատցիկլազան ճնշում է «օքսիդացիոն պայթյունը» խոչընդոտելով մակրոֆագերի քիլեր ֆունկցիան: թի6 անտիգենը ճնշում է ֆագոցիտողը և օժուված է ցիտոստոքսիկ ազդեցությամբ մակրոֆագերի վրա;

◆ **Տոքսիկ և ալերգեն գործոններից են՝** «մկնային տոքսինը», որը ներբջային տեղակայման (չարտազատվող) սպիտակուցային միացություն է: Այն դասվում է ֆունկցիոնալ բլոկատորներին, տոքսիկոբլոկատոր է, որը բլոկադայի է ենթարկում էլեկտրոնների փոխանցումը սրտի և սարդի միտոքոնդրիումներում՝ ճնշելով վերջիններիս շնչական ակտիվությունը: Միևնույն ժամանակ արձանագրված է «մկնային տոքսինի» ազդեցությունը անոթների ու թրոմբոցիտների վրա: **Պեստիցին,** տարբեր էնդոգեն պուրիններ: **Էնդոտոքսին** և բջջապատի այլ տոքսիկ բաղադրամասեր:

**Պաթոգենեզ և կլինիկա:** *Y.pestis*-ը օրգանիզմ է ներմուծվում տրամամիսիվ, օդակաթիլային, վարակիչ նյութի հետ անմիջական

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

շիման մեխանիզմներով, հազվադեպ՝ ալիմենտար ճանապարհով։ Հարուցիչը կարող է թափանցել մաշկի ամենաչնչին վնասվածքներով, նույնիսկ անվնաս մաշկով, լորձաթաղանթներով։ Դիվանդության զարգացման մեխանիզմն ընդգրկում է 3 հիմնական փուլ՝ 1.հարուցիչի լիմֆոգեն տեղափոխում ներթափանցման վայրից մինչև լիմֆատիկ հանգույցներ, 2.բակտերեմիա, 3.գեներալիզացված սեպտիցիեմիա։ Օրգանիզմ ներթափանցած հարուցիչները ակտիվորեն կլանվում են մակրո- և միկրոֆագերի կողմից, սակայն ֆագոցիտոզն ունի անավարտ բնույթ, ինչը նպաստում է հարուցիչի հետագա տարածմանը։ Մեծ նշանակություն ունի հարուցիչների ինտենսիվ բազմացումը կապիլյարների շուրջ, ինչը նպաստում է դրանց արագ ներթափանցմանը արյան հոսք։ Ժանտախտի ցուցիկը տարածվում է նաև լիմֆոգեն ճանապարհով՝ առաջացնելով պոլիհադենիտ։

Ժանտախտի կլինիկական արտահայտությունը զգալիորեն պայմանավորված է ինֆեկցիայի նույտի դրներով, ըստ որի՝ տարբերում են մաշկային, մաշկաբուրնային, առաջնային և երկրորդային սեպտիկ, առաջնային և երկրորդային թոքային, հազվադեպ՝ աղիքային ծևերը։ Ինկուբացիոն շրջանը տատանվում է մի քանի ժամից մինչև 9 օր։ Դիվանդությունը սկսվում է ջերմության հանկարծակի բարձրացումով, սարսուռով, ուժեղ գլխացավով։ Դենքը հիպերեմիկ է, որը հետագայում նգանում է, աչքերի տակ առաջանում են մուգ գոտի՝ «սև մահ»։ Դիվանդության հաջորդ օրերին ի հայտ են գալիս բուրոններ՝ մեծացած, բորբոքված, խիստ ցավոտ լիմֆատիկ հանգույցներ։ Երեմն հիվանդությունը զարգանում է այնքան արագ, որ հիվանդը մահանում է մինչև բուրոնի ի հայտ գալը։ Առավել ծանր է ընթանում թոքային ժանտախտը, որն արդյունավետ բուժման բացակայության պայմաններում գրեթե 100% դեպքերում վերջանում է մահով։ Համաճարակաբանական առումով նման հիվանդները բացարիկ վտանգ են ներկայացնում շրջապատի համար, քանի որ արյունային խորխի հետ արտազտում են մեծ քանակությամբ հարուցիչներ։ Աղիքային ժանտախտը

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

արտահայտվում է առատ արյունային, լորձային պրոֆուզ դիառեայով, էպիգաստրալ շրջանի ուժեղ ցավերով: Այն հաճախ ավարտվում է մահով: Առաջնային սեպտիկ ժանտախտը արտահայտվում է մաշկի և լորձաթաղանթների բազմաթիվ արյունազեղումներով, ծանր դեպքերում նկատվում են զանգվածային արյունահոսություն երիկամներից, աղիներից, արյունային փախում: Բնորոշ են հարուցիչ բացառիկ արագ տարածումը օրգանիզմում, սեպտիցեմիան, ինտոքսիկացիան, ինչը արագ նպաստում է հիվադի մահվանը:

**Ինունիտետ:** Հետինֆեկցիոն ինունիտետը կայուն է, ցմահ: Արյան մեջ հայտնաբերվում են սպեցիֆիկ հակամարմիններ, որոնք որոշակի են ունեն ձեռքբերովի անընկալության հարցում, սակայն անընկալության բնույթը գերազանցապես բջջային է՝ միջնորդված Տ-լիմֆոցիտներով և մակրոֆազերով՝ ժանտախտով հիվանդացածների կամ վակցինացվածների մոտ ֆագոցիտոզը ավարտուն է:

**Կանխարգելում:** Բնական օջախների նկատմամբ մշտական հսկողությունը և մարդկանց հիվանդացության կանխարգելման միջոցառումների կազմակերպումն իրականացվում է հատուկ հակաժանտախտային ծառայությունների կողմից: Կրծողների մոտ ինֆեկցիայի տարածման դեպքում իրականացվում է դեռատիզացիա և դեզինսեկցիա: Մարդկանց մոտ պեցիֆիկ կանխարգելման համար կիրառվում է EV շտամի կենդանի, թուլացված վակցինան վերմաշկային, ներմաշկային և ենթանաշկային եղանակներով: Առաջարկված է նաև վակցինա պերօրալ կիրառման համար: Հետվակցինացիոն անընկալությունը ձևավորվում է վակցինացման 5-6 օրերի ընթացքում և պահպանվում է շուրջ 1 տարի: Վակցինացման արդյունավետության, ինչպես նաև ռետրոսպեկտիվ ախտորոշման համար առաջարկված է ներմաշկային ալերգիկ փորձ՝ պեստինով: Ունակցիան համարվում է դրական, եթե ներարկման վայրում 24-48 ժամվա ընթացքում առաջանում է հիպերեմիա, հյուսվածքի պնդացում 10մմ-ից ոչ պակաս տրամագծով:

**Լաբորատոր ախտորոշում:** Ժանտախտի հարուցիչ պարունակող նյութով աշխատելիս անհրաժեշտ է պահպանել խիստ ռեժիմ,

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

այդ պատճառով հետազոտությունները իրականացվում են հատուկ պատրաստություն անցած անձնակազմի կողմից՝ հակաժամտախտային հիմնարկներում։ Կիրառվում են մանրադիտակային, բակտերիաբանական, շճաբանական, կենսաբանական մեթոդներ։ Մաշկապերգիկ փորձը պեստինով նշանակություն ունի ռետրոսպեկտիվ ախտորոշման համար։ Y.pestis-ը տարբերակում են ըստ մորֆոլոգիական, կուլտուրալ, կենսաքիմիական հատկանիշների, ինչպես նաև ժանտախտային ֆագով փորձի և կենսաբանական եղանակի օգնությամբ։

**Բուժումն** իրականացվում է հակաբիոտիկ պրեպարատներով։

### 11.3.2. Սիրիոյան խոց (Bacillus anthracis)


Տիվանդությունը հայտնի է դեռևս Յիպոկրատի, Գալենի, Գոմերի ժամանակներից «սուլք կրակ», «պարսկական կրակ» անվանումներով։ Տիվանդության ներկայիս անվանումը՝ **սիրիոյան խոց**, տվել է Ս.Ս.Անդրեևսկին, 18-րդ դարի վերջին Ուրալում խոշոր էպիդեմիկ բռնկման ժամանակ՝ ինքնավարակման ճանապարհով հաստատելով հիվանդության նույնությունը կենդանիների ու մարդու մոտ և նոզոլոգիական ինքնուրույնությունը։ Զարուցիչն է **Bacillus** ցեղի, **Bacillus anthracis** տեսակը, որն առաջինը 1849-ին նկարագրել է Ա.Պոլենդերը, մաքուր կուլտուրան ստացել է Ռ.Կոխը՝ 1876-ին։ 1881-ին Պաստերը առաջարկել է կենդանի վակցինա։

Ինֆեկցիայի աղբյուր են հիվանդ կենդանիները՝ հիմնականում խոշոր և մարդ եղբերավոր կենդանիներ, ձիեր, ուղտեր, խոզեր և այլն։ Տիվանդության ողջ ընթացքում դրանք արտազատում են հարուցիչները թքի, մեզի, կղանքի միջոցով, և հատկապես օրգանական նյութերով հարուստ հողը դառնում է հարուցիչի լրացուցիչ շտեմարան։ Կենդանիների վարակումն իրականանում է հիմնականում ալիմենտար ճանապարհով՝ խոտի, ջրի հետ սպորների կլանման միջոցով, հազվադեպ՝ միջատներով և ավելի հազվադեպ օդով։ Մարդու վարակումն իրականանում է բոլոր հնարավոր

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԵՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

ճանապարհներով հիվանդ կենդանիների և նրանց դիակների հետ անմիջական կոնտակտի, աերոգեն, ալիմենտար և այլ:

**Մորֆոլոգիա:** Խոշոր, 5-10մկմ երկարությամբ, 1.0-1.5մկմ լայնակի կտրվածքով, կլորացած ծայրերով ցուլափիկներ են՝ շղթաների առաջացման դեպքում ծայրերը ուղղի անկյան տակ հատած, ինչը ունի տարբերակիչ նշանակություն: Լավ ներկվում են անիլինային ներկերով, գրամ դրական են, անշարժ են: Ախտաբանական նյութում դասավորվում են զույգերով կամ կարճ շղթաներով՝ շրջափակված ընդհանուր պատիճով, որն ի տարբերություն այլ միկրոօրգանիզմների՝ ունի պոլիպեպտիդային բնույթ: Կուլտուրալ պրեպարատներում առաջացնում են երկար շղթաներ՝ հիշեցնելով բամբուկի ցողունը (նկ.105):



Նկ.105. *Bacillus anthracis*

Պենիցիլինային միջավայրերում կուլտիվացման ընթացքում, սիրիրյան խոցի հարուցիչների բջջապատի քայլայման հետևանքով, առաջացնում են պրոտոպլաստներ, որոնք դասավորվելով

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱՔՑԻ ՈՒԹՅՈՒՆ

շղթաներով քսուք պրեպարատներում նմանվում են «մարգարտե վզնոցի»: Պատիճը շատ ավելի կայուն է թարախածին միկրոֆլորայի ազդեցության նկատմամբ, քան ինքը՝ միկրոբը, այդ իսկ պատճառով քայրաված դիակային պրեպարատներում հաճախ կարելի է տեսնել միայն դատարկ պատիճներ՝ «միկրոբի ստվերը»: Արտաքին միջավայրում առաջացնում են վեգետատիվ ձևի տրամագիծը չգերազանցող, կենտրոնական դասավորությամբ սպորներ:

**Ֆիզիոլոգիա և կուլտուրալ հատկություններ:** Ընչառության տիպով աերոբ են, աճի բարենպաստ ջերմաստիճանը 37-38°C է, միջավայրի pH-ը՝ 7.2-7.6: Սննդային միջավայրերի նկատմամբ պահանջվությունը չեն: Պինդ սննդամիջավայրերում առաջացնում են բնորոշ R գաղութներ, որոնք կենտրոնից ձգվող շղթաների առաջացնան հետևանքով ունեն մեղուզայի կամ առյուծի բաշի տեսք (նկ.106):



**Նկ.106. *Bacillus anthracis*-ի զաղութները**

Հեղուկ միջավայրերում առաջացնում են բամբակի կտորներ հիշեցնող փուխր նստվածք՝ թափանցիկ թողնելով միջավայրը: Ավիրութենու ձևերը առաջացնում են հարթ եզրերով ու մակերեսով կլոր՝ S գաղութներ, հեղուկ միջավայրերում՝ դիֆուզ պղտորություն:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Կենսաքիմիապես բավականին ակտիվ են (նկ.107), տարրալուծում են գյուկողը, սախարոզը, մալտոզը մինչև թթու, առաջացնում են  $H_2S$ , ամոնիակ, վերականգնում են նիտրատները (ունեն նիտրատունագույնությունը), սինթեզում են լեցիտինազա, կատալազա, 3-5 օրվա ընթացքում մակարդում են կարը և պեպտոնացնում այն մինչև ջրիկացնելը: Զրիկացնում են ժելատինը, որն ընդունում է շրջված եղևնու տեսք: Վեգետատիվ ձևերը անկայուն են, արագ ոչնչանում են բարձր ջերմաստիճանում: Սպորները բավականին կայուն են և տասնյակ տարիներ կարող են պահպանվել շրջակա միջավայրում:

Հատկ./տեսակ	B.anthracis	B.cereus	B.subtilis
Պատիճ	+	-	-
Շարժունություն	-	+	+
Խելովիզ	-	+	-
Խելովիչ.	պարզ	պղանք	պղանք
պինդ միջ.	R	S	սոլ.
Ժելատին	շրջ. եղ.	շրիկ.	շրիկ.
Լակմուսային շիճ	կարմիր	կապ.	կապ.

### Նկ.107. *Bacillus* ցեղի բակտերիաների տարրերակիչ հատկանիշները

**Անտիգենային կառուցվածք:** Տարբերում են 3 խումբ հիմնական անտիգեններ՝

1. **Պատիճային անտիգենն** ունի սպիտակուցային բնույթ, դրա նկատմամբ օրգանիզմում սինթեզվում են սպեցիֆիկ հակամարմիններ, որոնք չունեն պաշտպանական նշանակություն:

2. **Սոմատիկ անտիգենն** ունի պոլիսախարիդային բնույթ, դրա նկատմամբ սինթեզված հակամարմինները ևս չունեն պաշտպանական նշանակություն: Այս անտիգենի հայտնաբերման վրա հիմնված է Ասկոլի թերմոպրեցիպիտացիայի ռեակցիան:

3. **Էկզոտոքսինն** օժտված է արտահայտված անտիգենությամբ, ունի բարդ կառուցվածք և ներառում է հետևյալ բաղադրամասերը՝

♦ **պրոտեկտիվ անտիգեն**, որի նկատմամբ մակրոօրգանիզմում սինթեզված հակամարդիններն ունեն պաշտպանական նշանակություն,

♦ **լետալ գործոն՝** ունի ցիտոտոքսիկ ազդեցություն և առաջացնում է թոքերի այտուց,

♦ **այտուցային գործոն՝** առաջացնում է ցիկլիկ ԱՄՖ-ի կուտակում հյուսվածքներում և այտուցի զարգացում:

Տօքսինի բոլոր բաղադրամասերն ել ունեն սպիտակուցային կամ ճարպասպիտակուցային բնույթ, չերմազգայուն են, շճաբանորեն տարբերակվում են և իմունոգեն են: Այս բաղադրամասերն առանձին վերցված տոքսիկ ազդեցություն չունեն:

**Վիրովենտության գործոններ:** **Պատիճը** պաշտպանում է մանրէին ֆագոցիտների ներ- և արտաքիցային պրոդուկտներից ու խոչընդոտում է դրա կլանումը: **Տոքսինով** պայմանավորված է հիվանդության պաթոգենեզը և կլինիկան, դրա կուտակումը հյուսվածքներում և ազդեցությունը կնշ-ի վրա նպաստում է հիվանդության մահացու ելքին, թոքային անբավարարության ու հիպօրօքսիայի ֆոնի վրա:

**Պաթոգենեզ:** Մուտքի դուռ են մաշկը և ստամոքսաղիքային ու շնչական ուղիների լորձաբաղանքները: Մուտքի դռներում ի հայտ է գալիս կարմրություն, որն արագ տրամաֆորմացվում է պղնձակարմիր պապուլայի: Մի քանի ժամ անց պապուլան վեր է ածվում 2-3մմ տրամագծով բշտի (վեգիկով), որի պարունակությունը սկզբում շճային է, հետագայում դառնում է արյունային: Այնուհետև բուշտը պատրվում է, և դրա տեղում առաջանում է սև կեղևով պատված այրված ածուխ հիշեցնող խոց (հուն. *anthrax*-ածուխ): Բնութագրական է դուստր պապուլաների առաջացումը, որոնք անցնելով զարգացման բոլոր էտապները՝ միաձուլվում են՝ պայմանավորելով խոցային մակերեսի մեծացումը: Կեղևը շրջափակվում է ինֆիլտրատով, և որպես կանոն շրջակա հյուսվածքը այտուցվում է, ինչը հակում ունի տարածվելու:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆԱՐԵԱՎԱՆԴՅՈՒՆԵՐՆԵՐ

**Կլիմիկա:** Ըստ մուտքի դռների՝ տարբերում են հետևյալ կլիմիկական ձևերը՝ մաշկային, թղթային, ստամոքսաղիքային: Նշված բոլոր կլիմիկական ձևերի դեպքում էլ հնարավոր է ինֆեկցիոն պրոցեսի գեներալիզացում, անցում սեպտիկ ձևի ու մահվան: Առավել հաճախ հանդիպում է հիվանդության մաշկային ձևը: Ինկուբացիոն շրջանը տատանվում է մի քանի ժամից մինչև 6-8 օր, միջինը՝ 2-3 օր: Մաշկի քաց մասերը ախտահրվում են ավելի հաճախ: Դեմքի սափրովող մասերը նպաստավոր պայմաններ են ապահովում վարակման համար, մաշկի ճարպագեղձերով հարուստ տեղամասերը ավելի քիչ են ենթակա վարակման (քթի մաշկը): Թոքային և աղիքային ձևերը գրեթե միշտ մահացու եր են ունենում:

Հետինֆեկցիոն իմունիտետը կայուն է: Դիվանդության ընթացքում զարգանում է սպեցիֆիկ ալերգիա (դանդաղ տիպի գերզգայունություն), որը հայտնաբերվում է անտրաքսինով՝ իրականացվող, ալերգիկ փորձով:

**Սպեցիֆիկ պրոֆիլակտիկա:** Կենդանիներին վակցինացնում են կենդանի ոչ պատիճային՝ **СТИ** (□□□□□-□□□□□-□□□□□), վակցինային շտամներով: Ուսևի խմբերի ակտիվ իմունացումն իրականացնում են պրոտեկտիվ անտիգենով: Կիրառություն ունի նաև **հակասիբրախոցային ինունուորուլինը:**

**ԲՈՒԺՈՒՄԸ** կատարվում է հակաբիոտիկներով: Անհրաժեշտության դեպքում նաև սիմպոտոմատիկ:

**Լաբորատոր ախտորոշում՝ բակտերիոսկոպիկ (նաև իմունա-ֆյուրեսցենտուային մանրէազննում), բակտերիաբանական, շճաբանական, մաշկային պրոբա անտրաքսինով, Ասկոլի ռեակցիա, կենսաբանական փորձ:**

### 11.3.3. Տուլարեմիա (*Francisella tularensis*)

Բնական օջախայնությամբ, զոտոնող ինֆեկցիոն հիվանդություն է: Մարդու մոտ այն ընթանում է բազմազան կլինիկական ձևերով և աշխատունակության դանդար վերականգնումով: Հարուցիչը՝ *Francisella tularensis*-ի, որպես գետնասկլուռների ժամանակակից անունը:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

տենդի հարուցիչ, հայտնաբերվել է Գ.Մակ-Կոյի և Շ.Զեպինի կողմից, Կալիֆորնիա նահանգի Տուլյարե լճի շրջանում 1912-ին:

**Դամաճարակաբանությունը:** Բնության մեջ հարուցիչի հիմնական շտեմարանը կրօղողներն են, որոնց մոտ բնական պայմաններում արձանագրվում են էալզոստիաներ: Տուլյարեմիայի հարուցիչներով վարակվածությունը հաստատվել է նաև բազմազան արյունածուծ հոդվածուտանիների մոտ, որոնցից առավել մեծ նշանակություն ունեն իկսոդային տգերը: Վերջիններիս մոտ հարուցիչները պահպանվում են ամբողջ կյանքի ընթացքում և նույնիսկ փոխանցվում են սերունդներին: Մարդը մարդու համար վարակիչ չէ: Վարակը փոխանցվում է բոլոր հնարավոր եղանակներով՝ հիվանդ կրօղողների, դրանց դիակների կամ վարակված առարկաների հետ անմիջական և ոչ անմիջական կոնտակտի, ալիմենտար, օդափոշային, տրամամիսիվ, ընդ որում վերջին դեպքում վարակումն իրականանում է ոչ թե տգերի կօնլու հետևանքով, այլ դրանց արտաթորանքով:

**Դասակարգումը:** *Francisella tularensis*-ը և *Francisella novicida*-ն, որի ախտածնությունը մարդու համար հաստատված չէ, ընդգրկված են **Francisella** ցեղում: *F.tularensis* տեսակը շճաբանական դասակարգման չի ենթարկվում, տարբերում են դրա էկոերկրաբանական ենթատեսակները:

◆ **Տիպ A (Nearctica)**՝ անջատվում են բազմաթիվ կրօղողներից և հոդվածուտանիներից: Բարձր վիրուլենտ են մարդու և ճագարների համար: Քայքայում են գլիցերինը, սինթեզում են ցիտրուլինուրեհիդրազա: Տարածված է Հյուսիսային Ամերիկայում, մահաբերությունը առանց բուժման մինչև 6% է:

◆ **Տիպ B (Palaearctica)**՝ անջատվում են ջրից և ջրային կենդանիներից: Սակավ վիրուլենտ են մարդու և ճագարների համար, չեն տարրալուծում գլիցերինը, չեն սինթեզում ցիտրուլինուրեհիդրազա: Տարածված է Եվրոպայում և Ասիայում:

◆ **Միջմասիական տարրերակ՝** չափավոր ախտածին է մարդու և ճագարների համար, քայքայում է գլիցերինը, սինթեզում է ցիտրուլինուրեհիդրազա: Տարածված է Միջին Ասիայում:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

**Մորֆոլոգիա և ֆիզիոլոգիա:** 0.1-0.5մկմ, անշարժ, սպոր չառաջացնող, երբեմն պատիճավորված, արտահայտված պոլիմորֆիզմով օժտված, գրամ բացասական ցուպիկներ են (կոկածկից մինչև թելանման): Կուլտուրաներից պատրաստված քսուքներում գերակշռություն են կոկամման (նկ.108), իսկ օրգաններից պատրաստված դրոշմվածքներում թելանման ձևերը:



Նկ.108. *Francisella tularensis*

Բիպուլյար չեն ներկվում, ինչով և տարբերվում են ժամտախտի հարուցիչներից: Բազմանում են բողբոջմամբ: Ֆակուլտատիվ անաերոր են, սակայն լավ աճում և բազմանում են նաև աերոր պայմաններում, բարենպաստ ջերմաստիճանը 36-37°C է, pH-ը՝ 6.7-7.2: Հասարակ սննդային միջավայրերում չեն աճում: Բազմացման համար որպես աճի խթան միջավայրին ավելացնում են ցիստեին, լավ աճում են դեղնուցային, արյունային, գյոււկով պարունակող միջավայրերում: Պինդ միջավայրերում ցանքից 2-5 օր անց առաջացնում են նուրբ, կլոր, հարթ եզրերով, ուռուցիկ, փայլուն, ցողի կաթիլներ հիշեցնող փոքր չափերի գաղութներ, որոնք հետագայում վեր են ածվում թույլ արտահայտված լորձային կոնսիստենցիայով, նուրբ շագրենային փառի: Նեղուկ սննդամիջավայրերում վատ են

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

աճում: Վիրուլենտ շտամներն առաջացնում են S գաղութներ: F.tularensis-ը ֆակուլտատիվ ներքջային պարագիտ է, լավ աճում և բազմանում է հավի սաղմի դեղնուցապարկում՝ առաջացնելով սաղմի մահ 3-4 օր անց: Կատալազա և օքսիդազա բացասական է, ինդոլ չի առաջացնում, առաջացնում է H<sub>2</sub>S, տարրալուծում է որոշ շաքարներ մինչև թթու, առանց գազի առաջացման:

**Կայունությունը:** Շրջակա միջավայրում տուլյարենիայի հարուցիչները կենսունակությունը պահպանում են երկար ժամանակ՝ ջրում 1°C-ի պայմաններում 9 ամիս, 4°C-ի պայմաններում՝ 4 ամիս: Զերմության բարձրացմանը զուգընթաց՝ հարուցիչի կենսունակությունը իջնում է: Զգայուն են բարձր զերմաստիճանի, տարբեր դեգինֆեկտանտների և հակարիոտիկների նկատմամբ:

**Անտիգեններ:** Տուլյարենիայի հարուցիչների մոտ տարբերում են O և Vi (պատիճային) անտիգեններ, որոնց նկատմամբ մակրոօրգանիզմում սինթեզվում են հակամարմիններ: Նշվում է անտիգենային ընդհանուրություն մարդու համար ոչ պիտածին F.novicida-ի հետ և խաչածև փոխազդեցություն ազյուտինացիայի ռեակցիայում բրուցելաների ու իերսինիաների հետ:

**Վիրուլենտության գործոններն են՝ ֆագոցիտոզը ճնշող պատիճ, հարուցիչի ադիեզիային նպաստող նեյրամինիդազա, էնդոտոքսին, բջջապատի ալերգեն նյութեր, ֆագոցիտներում բազմանալու և դրանց քիլեր ազդեցությունը ճնշելու ունակություն, յուրահատուկ ընկալիչների առկայություն, որոնք ունակ են կապվելու IgG-ի Fc ֆրազմենտի հետ, ինչի հետևանքով խանգարվում է կոնյալեմենտի և նակրոֆագերի համակարգերի ակտիվությունը:**

**Պաթոգենեզ և կլինիկա:** F.tularensis-ը օրգանիզմ է ներթափանցում վնասված և անվնաս մաշկով ու լորձաթաղանթներով, ընդունում ներդրման վայրում հաճախ առաջացնում է առաջնային աֆեկտ: Լիմֆատիկ անոթներով հարուցիչները անցնում են սահմանային լիմֆատիկ հանգույցներ և անարգել բազմանում են դրանցում, որի հետևանքով զարգացող բորբոքային պրոցեսը նպաստում է բուրոնի առաջացմանը: Այստեղից հարուցիչները անց-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

նում են արյան հոսք՝ պայմանավորելով պրոցեսի գեներալիզացումը և տարբեր հյուսվածքներում ու օրգաններում գրանուլեմաների, նեկրոտիկ խոցերի առաջացումը: Բակտերեմիայով և գեներալիզացմանը է պայմանավորված նաև օրգանիզմի ալերգիկ վերակառուցումը: Ինկուբացիոն շրջանը տույսարեմիայի ժամանակ տատանվում է 2-8 օր: Դիվանդությունը սկսվում է սուր՝ չերմության բարձրացում, գլխացավ, մկանացավ, դեմքի հիպերեմիա: Դիվանդության հետագա ընթացքը պայմանավորված է մուտքի դրներով, ըստ որի տարբերում են հետևյալ հիմնական կլինիկական ձևերը՝ բուրոնային, խոցաբուրոնային, ակնաբուրոնային, անգինոզ բուրոնային, թոքային, ստամոքսաղթային և գեներալիզացված (սեպտիկ): Մահացությունը չի գերազանցում 1-2%-ը:

**Ինունիտետ:** Հետինֆեկցիոն ինունիտետը լարված է, կայում, դեպքերի մեծամասնությամբ պահպանվում է ամբողջ կյանքի ընթացքում, պայմանավորված է հիմնականում T-լիմֆոցիտներով և մակրոֆազերով, դեռ ունեն նաև հակամարմինները: Անընկալիություն ունեցող անձանց մոտ ֆագոցիտոզը ավարտուն է:

**Սպեցիֆիկ պրոֆիլակտիկայի** նպատակով էնումիկ օջախներում բնակվող և ռիսկի խնբերին դասվող անձանց պատվաստում են կենդանի ատենուցված տուլարեմիային վակցինայով՝ էլքերտ-Գայսկու վակցինա:

**Լաբորատոր ախտորոշումը** կատարվում է կենսաբանական, բակտերիաբանական, բակտերիոսկոպիկ, մաշկաալերգիկ, շճաբանական եղանակներով:

### 11.3.4. Բրուցելյոզ (Brucella)

Բրուցելա ցեղի միկրոօրգանիզմներով հարուցված, քրոնիկական հակումով, զոռնոզ ինֆեկցիոն հիվանդություն է, որը բնութագրվում է երկարատև տենդով, հենաշարժական ապարատի, նյարդային, սիրտ-անոթային և միզասեռական համակարգերի ախտահարմանք: Դիվանդությունը մարդկությանը հայտնի է դեռևս անտիկ ժամանակներից և ըստ աշխարհագրական տարածվա-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ


ծության՝ տարբեր անվանումներ է կրել՝ մալթիական, նեոպոլիտանական, հիբրալթարյան, միջերկոածովյան և այլ տեսնդեր: Առաջին հարուցիչը հայտնաբերել է Դ. Բրյուսը 1886-ին մալթիական տեսնդից մահացած զինվորի փայտաղից պատրաստված պրեպարատում ու այն անվանել է մալթիական միկրոկոկ՝ *Mikrococcus melitensis*: Դետագայում հաստատվել է, որ վերջինիս հիմնական կրողները մանր եղթերավոր կենդանիներն են: 1897-ին Բ.Բանգը և Բ.Սորիբոլտը հայտնաբերեցին կովերի ինֆեկցիոն աբորտի հարուցիչը՝ *Bacterium abortus bovis* (Բանգի հիվանդություն), իսկ 1914-ին Զ.Տրաումը՝ խոզերի ինֆեկցիոն աբորտի հարուցիչը՝ *Bacterium abortus suis*: Դետագայում երեք հարուցիչներն ել ընդգրկվեցին մի ցեղում և ի պատիվ Բրյուսի՝ անվանվեցին *Brucella-melitensis*, *B.abortus*, *B.suis*: Ավելի ուշ հայտնաբերվեցին այս ցեղին դասվող այլ տեսակներ ևս՝ *B.ovis* - ոչխարներից, *B.canis* - շներից:

Հարուցիչի շտեմարան և ինֆեկցիայի աղբյուր են հիմնականում ընտանի կենդանիները: Մարդը համարվում է երկրորդային տեր: Մարդկանց վարակումը, բացառությամբ լարորատոր վարակման, ծագում է էպիզոոտիաների ֆոնի վրա: Փոխանցման մեխանիզմները և ուղիները բազմազան են, սակայն առավելապես մասնագիտական բնույթ ունեն, բացառությամբ այն երկրների, որտեղ բացակայում է կաթնամթերքների նասսայական պաստերացումը:

**Մորֆոլոգիա:** Բնութագրվում են արտահայտված պոլիմորֆիզմով, դասավորվում են խառը, երբեմն՝ զույգերով: *B.melitensis*-ը հաճախ հանդիպում է մինչև 1մկմ չափերի կոկաննան ձևերով, *B. abortus*-ը և *B.suis*-ը փոքր չափերով՝ 1-2մկմ, կլորացած ծայրերով ցուպիկներ են: Մակրոօրգանիզմում և որոշ միջավայրերում, որոնք պարունակում են 10% ինուն շիճ, ինչպես նաև հավի սաղմում կարող են առաջացնել նուրբ պատիճ: Անշարժ են, սպոր չեն առաջացնում, հեշտությամբ ներկվում են անիլինային ներկերով, գրամ բացասական են (նկ. 109):

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

**Ֆիզիոլոգիա:** Աերոր են կամ միկրոաերոֆիլ, անաերոր պայմաններում չեն աճում: Աճի և բազմացման համար բարենպաստ ջերմաստիճանը 36-37°C է, pH-ը՝ 7.0-7.2: Սննդային միջավայրերի նկատմամբ պահանջկուտ են, լավ աճում են շիճ, արյուն պարունակող միջավայրերում, աճի համար անհրաժեշտ են թիամին, բիոտին, նիացին: Էլեկտիվ միջավայր է Խեղելսոնի լյարդային ազարը: *B.abortus*-ի առանձնահատկությունն է աճման միջավայրում



Նկ. 109. *B.melitensis*

5-10% CO<sub>2</sub>-ի պահանջը: Ախտաբանական նյութից կատարված ցանքի դեպքում առաջին գեներացիաներում շատ բնութագրական է դանդաղ աճը, այն ի հայտ է զալիս 2-4 շաբաթ անց, հետագա գեներացիաներում աճը կարող է արձանագրվել ցանքից 1-2 օր անց: Դեղուկ միջավայրերում բրուցելաները առաջացնում են դիֆուզ պղտորություն, պինդ սննդամիջավայրերում գաղութները S տիպի են, փոքր չափերի, անգույն, թափանցիկ, որոշ դեպքերում մետաղական երանգով, ունակ են R-S դիտցնան: Դակաբիոտիկների ազդեցությամբ կարող են առաջացնել L-ձևեր:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱՔՑԻ ՈՒԹՅՈՒՆ

Կենսաքիմիապես առանձնապես ակտվ չեն՝ տարրալուծում են որոշ շաքարներ, վերականգնում են նիտրատները, կատալազա և օքսիդազա դրական են, որոշ բիովարներ առաջացնում են H<sub>2</sub>S: Տարբերակման համար նշանակություն ունի հիմնային ֆուլվամի և բիոնիմի բակտերիոստատիկ ագրեցության նկատմամբ առանձին տեսակների ու բիովարների գգայունության որոշումը, CO<sub>2</sub>-ի նկատմամբ պահանջը, H<sub>2</sub>S-ի առաջացումը, ինչպես նաև անտիգենային կառուցվածքը (նկ.110):

Հասկանիշ/տեսակ		B.melitensis	BAbortus	B.suis
CO <sub>2</sub> -ի պահանջ		-	+	-
H <sub>2</sub> S-ի առաջացում		-	+	-
Նիտրատների վերականգնում		+	+	+
Աճ ներկերի միջավայրում	Փուրսին	+	+	-
	քլոնին	-	-	-
Ազյուսախնայիա մոնո- վալենտ շիճուկով	A	-	+	+
	M	+	-	-
Լիգիս T6	աշխ. խա.	-	+	-
Փազով	10 աշխ. խա.	-	+	+

### Նկ.110. Brucella-ների տարրեր տեսակների հատկանիշները

Արտաքին միջավայրում համեմատաբար կայուն են՝ խոնավ հողում կարող են պահպանվել մինչև 3 ամիս, կաթնամթերքում՝ 3-6 ամիս, նույնիսկ մեկ տարի: Զգայուն են թթու միջավայրի, բարձր ջերմաստիճանի նկատմամբ: Պաստերացման պայմաններում ոչնչացնում են 10 րոպեի ընթացքում:

**Անտիգենային կառուցվածք:** Օժտված են ցեղային սպեցիֆիկության անտիգեններով, A և M մակերեսային՝ տեսակային սպեցիֆիկության անտիգեններով, որոնց քանակական հարաբերությունը B.melitensis-ի մոտ կազմում է 1:20, իսկ B.abortus-ի և B.suis-ի մոտ 2:1: L թերմոլաբիլ անտիգենն նման է սալմոնելամերի Vi անտիգենին: R շտամներն օժտված են սպեցիֆիկ R անտիգենով:

**Վիրուլենտության գործոններ:** Ախտածնությունը մեծապես պայմանավորված է արտահայտված ինվազիվ հատկություններով օժտված ենդոտոքսինով և հարուցիչների ունակությամբ՝ ճնշելու ֆագոցիտոզը տարրեր ցածրամոլեկուլային պեպտիդների միջոցով,

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

ֆագոլիզոսումի առաջացումը խանգարելու և օքսիդացիոն պայթյունի արգելակման մեխանիզմով (անավարտ ֆագոցիտոց): Բացի այդ, բրուցելաների ախտածնությունը պայմանավորված է նաև հիալուրոնիդազայի ու այլ սպիտակուցային միացությունների սինթեզով, ինչպես նաև վերջիններիս ալերգիզացնող հատկությամբ: Աղիեզիվությունը պայմանավորված է մակերեսային սպիտակուցներով: Էկզոտոքսին չեն արտազատում:

**Պաթոգենեզ և կլինիկա:** Ինչպես արդեն ասվել է, փոխանցման ճանապարհները բազմազան են՝ կոնտակտային, ալիմենտար և ասպիրացիոն: Նկատի ունենալով բրուցելաների զգայունությունը թթուների նկատմամբ և ստամոքսահյութի բակտերիզիտ ազդեցությունը դրանց վրա՝ ենթադրվում է, որ վարակման ալիմենտար ճանապարհի դեպքում հարուցիչները օրգանիզմի ներքին միջավայր են թափանցում ՍԱՏ-ի վերին հատվածների լորձաթաղանթով: Բրուցելաների համար մուտքի դուռ կարող է լինել նաև անվճակ մաշկն ու լորձաթաղանթը: Մուտքի դրներից հարուցիչները լիմֆատիկ ուղիներով անցնում են լիմֆատիկ հանգույցներ, որտեղ բազմանալով՝ առաջացնում են «առաջնային բրուցելոզային կոնպլեքսներ»: Առավել հաճախ դրանք առաջանում են բերանի խոռոչի լիֆատիկ ապարատում, հետընպանային, պարանոցային, ենթածնոտային գեղձերում և աղիների լիմֆատիկ գոյացություններում: Մորֆոլոգիորեն սա արտահայտվում է ռետիկուլոներթելային համակարգի էլեմենտների տարածուն պրոլիֆերացմամբ ու հիպերպլազիայով: Երրորդ շաբաթվա ընթացքում սկսվում է գրանուլեմաների ձևավորման պրոցեսը, ինչի հիմքը կազմում են խոչըն էպիթելիտի բջիջները: Քայլայված մակրոֆագերից հարուցիչները անցնում են արյան հոսք և տարածվելով ախտահարում են լիմֆոհեմոպոետիկ (ռուկրածուծ, լյարդ, փայծաղ), միզասեռական, հենաշարժական, սիրտ-անոթային, նյարդային համակարգերը: Ախտահարված օրգաններում ի հայտ են գալիս ինֆիլտրատով շրջափակված նեկրոզի օջախներ: Չի կարելի բացառել նաև այն հանգամանքը, որ հարուցիչները մուտքի դրներում կարող են

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

կլանվել արյան ֆագոցիտների կողմից և միանգամից տարածվել հեճատողեն ճանապարհով: Հարուցիչները հետագայում կարող են անցնել կրծքագեղձեր և հայտնվել կաթում:

Պայմանավորված պարոգենետիկ ընթացքով՝ ինկուբացիոն շրջանը կարող է տատանվել՝ 1-6 շաբաթվա սահմաններում: Տարբերում են բրուցելյոզի 5 կլինիկական ձև՝

- 1.առաջնային լատենտ,
- 2.սուր սեպտիկ,
- 3.առաջնային քրոնիկական մետաստատիկ,
- 4.երկրորդային քրոնիկական մետաստատիկ,
- 5.երկրորդային լատենտ:

**Առաջնային լատենտ** ձևն ընթանում է անսիմպտոմ: Օրգանիզմի ռեզիստենտության անկման պայմաններում այն կարող է անցնել սուր սեպտիկ կամ առաջնային քրոնիկական ձևերի:

**Սուր սեպտիկ** ձևն արտահայտվում է  $39\text{--}40^{\circ}\text{C}$  տենդով, ինտոքսիկացիայի այլ նշանների բացակայությամբ, հիվանդի բավարար ինքնազգացողությամբ: Բնութագրական են գեներալիզացված լիմֆադենոպարհան, փայծաղի ու լյարդի մեծացումը: Գլխավոր տարբերությունը քրոնիկականից մետաստազմերի (օջախային փոփոխություններ) բացակայությունն է: Տենդի տևողությունը՝ 3-4 շաբաթ և ավելին է:

**Առաջնային և երկրորդային քրոնիկական ձևերը** գործնականում կլինիկորեն չեն տարբերվում՝ առաջնայինի դեպքում անամնեզում բացակայում է սուր սեպտիկ ձևը: Բնութագրվում են ընդհանուր ինտոքսիկացիայով (սուրֆերիլ ջերմություն, թուլություն, և այլն), որոնց ֆոնի վրա հայտնաբերվում են մետաստազմեր: Առկա է գեներալիզացված լիմֆադենոպարհան, լյարդի և փայծաղի մեծացում: Հաճախ ախտահարվում են հենաշարժական, նյարդային և միզասեռական համակարգերը: Առավել բնութագրական են պոլիհարդիտը՝ հիվանդները գանգատվում են մկանային և հոդային ցավերից: Տղամարդկանց մոտ հաճախ արձանագրվում են օրիսիտ, եպիդիլիմիտ, կանանց մոտ՝ սպոնտան աբորտներ, անպտղություն:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Բակտերիմիան և պրոցեսի գեներալիզացումը նպաստում են օրգանիզմի արտահայտված ալերգիզացմանը և դեպքերի մեծամասնությամբ բրուցելյողն ընթանում է որպես քրոնոսեպսիս, ինչը պայմանավորված է անավարտ ֆագոցիտողով։ Գտնվելով և բազմանալով թիրախ բջջներում, այդ թվում նաև ֆագոցիտներում բրուցելաները դառնում են դժվար մատչելի հակամարմինների և քիմիոպրեպարատների նկատմամբ։ Բացի այդ, դրանք կարող են վերածվել L-ձևերի ու այդ վիճակում երկար ժամանակ պահպանվել օրգանիզմում, հետագայում վերադառնալով առաջնային ձևին՝ առաջացնել ռեցիտիվ։

Բրուցելյողին հատուկ է երկարատև ընթացքը՝ մինչև 10 ամիս, ծանր դեպքերում այն կարող է բերել երկարատև անաշխատունակության ու ժամանակավոր հաշմանդամության, բայց, այնուամենայնիվ, արդյունավետ հակաբիոտիկային բուժման դեպքում, որպես կանոն հիվանդությունն ավարտվում է լրիվ առողջացմանք։

**Հետինֆեկցիոն իմունիտետը** երկարատև է, կայուն, սակայն հնարավոր է կրկնակի հիվանդացություն։ Անընկալությունը խաչածն է բրուցելաների բոլոր տեսակների նկատմամբ և պայմանավորված է իմունիտետի բջջային մեխանիզմներով։ Տ լիմֆոցիտներով ու մակրոֆազերով։ Հակամարմինների դերը իմունիտետում ֆագոցիտար ակտիվության խթանումն է։ Անընկալ օրգանիզմներում ֆագոցիտող ավարտուն է։

Համաձարակային ցուցումների դեպքում **սպեցիֆիկ արոֆիլակտիկան** իրականացվում է B.abortus տեսակի BA-19A շտամի կենդանի վակցինայով։ Կիրառվում է նաև քիմիական բրուցելյողային վակցինա (ՔԲՎ), որը ստացվում է բրուցելաների բջջապատի անտիգեններից, օժտված է բարձր իմունագենությամբ և ավելի քիչ ալերգեն է, քան կենդանի վակցինան։ Հիվանդության քրոնիկական ձևերի դեպքում ՔԲՎ-ն կարելի է կիրառել նաև բուժման նպատակով (խթանվում է սպեցիֆիկ իմունիտետը)։

**Լարորատոր ախտորոշումը** կատարվում է կենսաբանական, բակտերիաբանական, շճաբանական եղանակներով։ Ռայտի ծավա-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

լային ազյուտինացիա, Խեղելսոնի ռեակցիա: Կիրառվում է նաև Բյուրնեի մաշկաալերգիկ փորձը բրուցելինով՝ բրուցելաների կուլտուրալ սպիտակուցային էքստրակտ:

### 11.4. ԱՆԱԵՐՈՐ ԻՆՖԵԿՑԻԱՆԵՐԻ ԴԱՐՈՒՑԻՉՆԵՐ

Բոլոր անաերորները ըստ  $O_2$ -ի հետ փոխազդեցության՝ տարբերակվում են խիստ անաերորների, որոնք կորցնում են կենսունակությունը  $O_2$ -ի նույնիսկ չնչին խտության պայմաններում և չափավոր անաերորների, որոնք պահպանում են կենսունակությունը և երբեմն բազմանում  $O_2$ -ի փոքր խտության դեպքում: Մարդու ախտաբանությունում առավել կարևորվում են հետևյալ անաերորները՝

◆սպոր չառաջացնող գրամ դրական Clostridium ցեղի անաերոր բակտերիաներ՝ *C.perfringens*, *C.novyi*, *C.histolyticum*, *C.septicum*, *C.sordellii*, *C.difficile*, *C.tetani*, *C.botulinum*,

◆սպոր չառաջացնող գրամ բացասական անաերոր բակտերիաներ՝ *Bacteroides*, *Fusobacterium*,

◆սպոր չառաջացնող գրամ դրական անաերոր կոկեր՝ *Peptococcus*, *Peptostreptococcus*,

◆սպոր չառաջացնող գրամ բացասական անաերոր կոկեր՝ *Veilonella*.

#### 11.4.1. Գազային անաերոր ինֆեկցիաների

(Գազային գաճգրենա) հարուցիչներ (*Clostridium*)

Այս մանրէները դասվում են *Clostridium* ցեղին, որի անվանումը պայմանավորված է բջջի «հիլիկաձև» տեսքով (հուն. closter-իլիկ): Ցեղն ընդգրկում է բազմաթիվ տեսակներ, որոնք տարածված են հողում, ջրում, մարդու և կենդանիների աղիներում: Դրանց բոլորին միավորում է անաերոր կենսակերպն ու անբարենպաստ պայմաններում վեգետատիվ ձևի տրամագիծը գերազանցող սպոր առաջացնելու ունակությունը: Գազային գաճգրենան

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

բազմապատճառային (պոլիեթիոլոգիական), վերքային ինֆեկցիա է, որը կարող է հարուցվել Clostridium ցեղի մի շարք միկրոօրգանիզմներով՝ *C.perfringens*, *C.novyi*, *C.septicum*, *C.histolyticum*, *C.sordellii*: Մրանք կառուցվածքային, ֆիզիոլոգիական, կուլտուրալ և այլ ընդհանուրյուններին զուգահեռ օժտված են որոշակի առանձնահատկություններով, ինչը հնարավորություն է ընձեռում տարբերակելու դրանց: Տիպային տեսակն է *C.perfringens*-ը, որը լայնորեն տարածված է անկենդան բնության մեջ, առավելապես հումուսվ հարուստ հողերում, կենդանիների, թռչունների, ծկների, ինչպես նաև առողջ մարդկանց շուրջ 20-30%-ի աղիներում:

### 11.4.1.1. *C.perfringens*

**Մորֆոլոգիա:** Միջին չափերի, 1.0-1.5 մկմ լայնակի կտրվածքով, հատած ծայրերով, գրամ դրական, անշարժ ցուպիկներ են (նկ.111):




Նկ.111. *C.perfringens*

Ախտածին կլոստրիոֆիաների խմբում միակն են, որ առաջացնում են պատիճ: Անբարենպաստ պայմաններում առաջացնում են օվալ կառուցվածքի, հիմնականում կենտրոնական դասավորու-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱՔՏԱՆ ՈՒԹՅՈՒՆ

թյամբ, երբեմն նաև ենթածայրային, խոշոր սպորներ, որոնք եռացման պայմաններում կարող են գոյատևել մինչև 6 ժամ:

**Ֆիզիոլոգիա:** Չափավոր աճաերոր են: Բարենպաստ ջերմաստիճանը  $43^{\circ}\text{C}$  է, pH-ը՝ 7.2-7.4: Ածի ու բազմացման նշանները կիտո-Տարոցիի միջավայրում ի հայտ են գալիս ինկուբացիայի առաջին ժամերին, իյուսվածքի կտորների շուրջ գազի պղպջակների առաջացմամբ: Ավելի ուշ միջավայրը պղտորվում է, և արձանագրվում է ակտիվ գազագոյացում ու կարագաթթվի բնորոշ հոտ: Պինդ սննդային միջավայրերում՝ Ցեյսերի արյունային ազար, Վիլսոն-Բլերի միջավայր, որպես կանոն առաջացնում են S գաղութներ: Ցեյսերի միջավայրում գաղութները մոխրագույն են՝ կենտրոնում մի փոքր բարձրացած, շրջապատված հեմոլիզի գոտիով (նկ.112):



**Նկ.112.*C.perfringens*-ի գաղութները**

Աերոր պայմաններում գաղութները ընդունում են կանաչ երանգավորում, ինչն ունի տարբերակիչ նշանակություն: Լեցի-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

տինազային ակտիվության շնորհիվ դեղնուցային ագարում գաղութները շրջապատվում են սաղափափայլ գոտիով: Ազարային սյունակում առաջացնում են ոսպի հատիկներ հիշեցնող գաղութներ:

**Կենսաքիմիական ակտիվությունը** չափավոր է, օժտված է ինչպես շաքարոլիտիկ, այնպես էլ պրոտեոլիտիկ ակտիվությամբ: Ակտիվորեն քայքայում է գյուկոզը թթվի և գազի առաջացմամբ: Այլ կլոստրիդիաներից տարբերվում է լակտոզը, մալտոզը, սախարոզը քայքայելու, նիտրատները վերականգնելու, լեցիտինազա առաջացնելու ունակությամբ (նկ.113): Զրիկացնում է ժելատինը, 2-3 ժամվա ընթացքում ինտենսիվորեն մակարդում է կաթը՝ առաջացնելով խոշոր ծակոտկենությամբ, մինչև փորձանորի եզրերը հասնող սպունգանման մակարդուկ՝ **«штормовая реакция»**, չի քայքայում կազեինը: Ըստ սինթեզվող էկզոտոքսինների անտիգենային հատկությունների՝ տարբերակվում է 6 շճատիպի (A-F), որոնցից մարդու համար կարևորվում են A, C, D տիպերը:

Տեսակ	լեցի-արմա-զա	լիստա-զա	Փերմենտացում			նիտ. վեր.	ինդուկտիվ		ին-դու	H <sub>2</sub> S	շճա-տիպ
			գլ.	մամ.	լրակ.		ժնկ.	կազ.			
C.perfr.	+	-	+	-	+	+	+	- (+)	-	-	ABCDEF
C.novyi	+	+	+	-	-	-	+	-	(+)	+	ABCD
C.sept.	-	-	+	-	+	- (+)	+	-	-	-	
C.hist.	-	-	-	-	-	-	+	+	-	+	

### Նկ.113. Գազային գանգրենայի հարուցիչների տարբերակումը

**Հարուցիչների ախտածնությունը** պայմանավորված է դրանց կողմից սինթեզվող բազմաթիվ ֆերմենտներով, որոնք օժտված են էկզոտոքսիններին բնորոշ հատկություններով և էնտերոտոքսինով: Յիմնական տոքսինները՝ α-(լեցիտինազա), μ-(հիալուրոնիդազա), κ-(կոլագենազա և ժելատինազա), λ-(պրոտեինազա), նեյրամինիդազա, օժտված են նեկրոտոքսիկ, հեմոլիտիկ, լեյկոտոքսիկ, նեյրոտոքսիկ, լետալ ազդեցություններով, որոնք հյուսվածքներում (շարակցական, մկանային), նպաստում են նեկրոզի զարգացմանը: Միևնույն ժամանակ թիրախ բջիջների թաղանթների, արյան

## ՄԱՍՏԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՍՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

մազանոթների թափանցելիության մեծացումը նպաստում է վճաս-նան օջախում այտուցի զարգացմանը, օքսիդավերականգննան պոտենցիալի նվազմանը, ենդոքեն պրոտեազների ակտիվացմանն ու հյուսվածքների առևտողիզմին: A և C շատահարությունը սինթեզում են էնտերոստրոքին, որով պայմանավորվում է սննդային տոքսիկուին-ֆեկտիաների զարգացումը:

**Պաթոգենեզ:** Մուտքի դուռ են բաց, ճգնված, խորը վերքերը, ուր սպորները կարող են անցնել հողի, հողով աղտոտված հագուստի կտորների, ականի բեկորների և այլնի հետ: Հայտնվելով նպաստավոր պայմաններում ճգնված, նեկրոզված հյուսվածքներ, անաերոր միջավայր, սպորները ծլում են, և առաջացած վեգետատիվ ձևերն ինտենսիվորեն բազմանալով՝ արտազատում են վերը նշված ֆերմենտներն ու տոքսինները, որոնց անմիջական ազդեցությունը պայմանավորում է առողջ հյուսվածքների դեստրուկտիվ փոփոխություններն ու նեկրոզը: Հյուսվածքներում ախտաբանական տեղաշարժերը մեծապես պայմանավորված են նաև կլոստրիդիաների կենսաքիմիական ակտիվության հետևանքով գազի կուտակմամբ և այտուցի առաջացմամբ: Բացի այդ, միկրօրգանիզմների կողմից արտազատված ֆերմենտներն ու տոքսինները, ինչպես նաև հյուսվածքների քայլայման արդյունքում առաջացած տոքսիկ մետաբոլիտները, տարածվում են լիմֆոգեն ու հեմատոգեն մեխանիզմներով՝ պայմանավորելով օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիան: Հնարավոր է ծանր անաերոր սեպսիսի զարգացում: Մեծ մասամբ հիվանդությունը առավել ծանր բնույթ է ստանում թարախածին միկրոֆլորայի առկայության դեպքում:

**Կլինիկա:** **Գազային գանգրենայի** ինկուբացիոն շրջանը տատանվում է 1-3 օրերի սահմաններում, այնուհետև վնասման օջախում արձանագրվում է հյուսվածքների նեկրոզ, նեխած հոտով գազի կուտակում, շրջակա հյուսվածքների այտուց և օրգանիզմի ընդհանուր ծանր ինտոքսիկացիա, որը կարող է առաջացնել կենսականորեն կարևոր օրգան-համակարգերի ֆունկցիաների արգելակում և հիվանդի մահ: **C.perfringens**-ի A և C տիպի շտամ-

## ՄԱՍՆԱՎՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԻՉԵՐԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Երբ, պայմանավորված էնտերոռոքսինի սինթեզի ունակությամբ, կարող են առաջացնել սննդային տոքսիկոնֆեկցիաներ, որի մի քանի ժամ տևող ինկուբացիոն շրջանին հետևում է սուր ցավերի զգացումը որովայնի շրջանում, փսխումը, երբեմն՝ արյունային, մեկ-երկու տասնյակ անգամ կրկնվող լուծը և այլն: Դեպքերի մեծամասնությունում հիվանդությունը բարենպաստ ելք է ունենում, սակայն պետք է նկատի ունենալ նեկրոտիկ էնտերիտի զարգացման հնարավորությունը՝ հարուցված հիմնականում *C.perfringens*-ի *C* տիպի կողմից, որը դրսորվում է գրեթե նույն վերը նկարագրված կլինիկական ախտանիշներով, բայց շատ ավելի ծանր ընթացքով և 30-40% դեպքերում 24 ժամվա ընթացքում կարող է հանգեցնել հիվանդի մահվան:

**Իմունիտետ:** Հիվանդությունից հետո օրգանիզմում հայտնաբերվում են հակատոքսիկ հակամարմիններ, սակայն հակատոքսիկ անընկալություն չի ձևավորվում, քանի որ արտազատված տոքսինների տոքսիկ դոզան շատ անգամ նվազ է իմունագեն դոզայից: Հակամիկրոբային հակամարմինները չունեն պրոտեկտիվ նշանակություն և դրանց առկայությունը չի խոչընդոտում կլոստրիդիաների աճն ու բազմացումը օրգանիզմում:

**Սպեցիֆիկ պրոֆիլակտիկայի** համար առաջարկված է *C.perfringens*-ի անատոքսին՝ սեքստանատոքսինի (բոտուլիզմի հարուցիչի A,B,E շճատիպերի, *C.tetani*, *C.perfringens*, *C.novyi* տեսակների անատոքսիններ) կազմում, իրատապ պրոֆիլակտիկայի նպատակով կիրառվում է պոլիվալենտ իմուն շիճուկ:

**Բուժումն** իրականացվում է պոլիվալենտ իմուն շիճուկով և հակաբիոտիկ պրեպարատներով, հարուցիչի տիպը պարզելուց հետո՝ նոնովալենտ իմուն շիճուկով: Նզմված ծավալուն վնասվածքների դեպքերում ցուցված է վերքի վիրաբուժական մշակումը, աերացիայի ապահովումը:

**Լաբորոտոր ախտորոշումն** իրականացվում է բակտերիոսկոպիկ, բակտերիաբանական, կենսաբանական եղանակներով: Հետազոտում են ախտահարված, մեռուկացած հյուսվածքները,


## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱՔՑԻ ՈՒԹՅՈՒՆ

Վերքային արտադրությունը, արյունը, վիրակապական նյութերը, որոնցով մշակվել է վերքը:

### 11.4.2. Փայտացուն (*C. tetani*)

Վնասվածքային, գերազանցապես նյարդային հաճակարգի ախտահարմամբ, մկանային հաճակարգի տոնիկ և կլոնիկ կծկումային նոպաներով, ծանր կլինիկական ընթացքով ու բարձր մահացությամբ բնութագրվող ինֆեկցիոն հիվանդություն է: Դարուցիչը ***C.tetani*-ն** է, որը հայտնաբերվել է Ն.Դ.Մանաստիրսկու և Ա.Նիկոլայերի կողմից (1883-84թ.), մաքուր կուլտուրան ստացել է Ա.Կիտազատոն:

**Մորֆոլոգիա:** Խոշոր չափերի, կլորացած ծայրերով, պերիտրիխ մտրակներով օժտված, գրամ դրական ցուափիկներ են: Կուլտիվացման ուշ էտապներում հանդիպում են թելաննան ձևերը: Պատիճ չեն առաջացնում: Բայուք պրեպարատներում դասավորվում են եզակի, կամ շղթաներով: Առաջացնում են վեգետատիվ ձևեր մի քանի անգամ գերազանցող, կլոր, հիմնականում ծայրային դասավորության սպորներ, որոնք հիշեցնում են թմբկափայտը (նկ.114):



**Նկ.114. *Clostridium tetani***

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

**Ֆիզիոլոգիա և կուլտուրալ հատկություններ:** Խիստ անաերոր են, զգայուն են ՕՀ-ի նույնիսկ չնչին քանակների նկատմամբ: Կուլտիվացումն իրականացվում է Կիտտ-Տարոցիի միջավայրում, շաքարարյունային ագարում: Պիճայի միջավայրի մակերեսին առաջացնում են քափանցիկ, սարդանման R գաղութներ, որոնք միաձուլվելու և ցանցանման ծածկույթ առաջացնելու հակում ունեն: Կարող են առաջացնել նաև S գաղութներ: Ագարի խորքում առաջացնում են ոսպանման կան բամբականման գաղութներ: Արյունային ագարի մակերեսին գաղութները շրջափակվում են հենոլիզի գոտիով: Հեղուկ միջավայրերում առաջացնում են դիֆուզ պղտորություն, այնուհետև՝ նստվածք: Սպորագոյացումը սկսվում է կուլտիվացման 2-3 օրերին, և մեկ շաբաթվա ընթացքում վեգետատիվ ձևերի քայլայման հետևանքով, միջավայրում հայտնաբերվում են միայն սպորներ:

**Կենսաքիմիական ակտիվությունը** թույլ է արտահայտված: Օքսիդագային, ցիտոքրոմօքսիդագային, կատալազային, պերօքսիդագային ակտիվությունից զուրկ են: Զուրկ են շաքարարութիվ ակտիվությունից, բացառությամբ որոշ շտամների, որոնք կարող են տարրալուծել գլուկոզը: Սայստակուլցներն ու պեպտոնները դանդաղ տարրալուծում են մինչև ամինաթրուների, այնուհետև ածխաթթվի, ջրածնի, ամոնիակի: Վերականգնում են նիտրատները, ջրիկացնում են ժելատինը: Մետաբոլիզմի հիմնական արգասիքներն են քացախաթթուն, կարագաթթուն, պրոպինաթթուն, էքանոլը:

Փայտացման հարուցիչների մոտ տարբերում են O տեսակային սպեցիֆիկության և H տիպային սպեցիֆիկության անտիգեններ: Ըստ մտրակային անտիգենի՝ տարբերակվում են 10 շճատիպ, որոնք սինթեզում են միևնույն անտիգենային սպեցիֆիկության սպիտակուցային տոքսին:

**Ախտածնությունը** գերազանցապես պայմանավորված է հարուցիչների կողմից սինթեզվող էկզոտոքսիններով՝ տետանոսապազմին և տետանոլիզին: Տետանոսապազմինը դասվում է ֆունկցիոնալ բլոկադորների նեյրոտոքսիններին և միջավայր է արտազատվում բակտե-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

րիային բջջի քայլայումից հետո: Այն օժտված է արտահայտված նեյրոտրոպ ազդեցությամբ, ֆիբսվում է պերիֆերիկ նյարդային համակարգի բջջների ելուններին, ընկալիչ էնդոցիտոզի մեխանիզմով թափանցում է վերջիններիս ներքին միջավայր և ռետրոդրադ աքսոնային մեխանիզմով հասնում կենտրոնական նյարդային համակարգ: Տղքսինի ազդեցության մեխանիզմը հանգում է սկզբում պերիֆերիկ, այնուհետև նաև կենտրոնական նյարդային համակարգի սինապսներում արգելակող նեյրոնեղիատորների սինթեզի և արտազատման ճնշմանը, որը դրսևորվում է կմախքային մկանների տոնիկ և կլոնիկ կծկումային նոպաներով: **Տետանոլիզինը** արտազատվող տոքսին է, դասվում է մենթրանուտոքսիններին: Օժտված է հեմոլիսիկ, կարդիոտոքսիկ, լետալ ազդեցություններով: Դարկ է նշել, որ վերը նկարագրված տոքսինները ստամոքսաղիքային տրակտի պրոտեոլիտիկ ֆերմենտների ազդեցությամբ քայլայվում են:

**Պարոզենեզ և կլինիկա:** Մուտքի դուր են տարբեր տիպի վնասվածքները, որտեղ արտաքին միջավայրից կարող են ներթափանցել հարուցիչ սպորները և նաև վեգետատիվ ձևերը: Մուտքի դրսերում միկրոօգանիզմների ինտենսիվ քազմացման և կենսագործունեության հետևանքով, կուտակվում է մեծ քանակության տոքսին, որը լիմֆոգեն, հեմատոգեն, նեյրոգեն ճանապարհներով տարածվելով՝ ախտահարում է գերազանցապես նյարդային համակարգը: Դիվանդության ինկուբացիոն շրջանը տատանվում է 6-14 օրվա սահմաններում: Թերև դեպքերում արձանագրվում է լոկալ փայտացում, որը բնութագրվում է ախտահարված հատվածի մկանների կծկումներով: Առավել հաճախ հանդիպում է հիվանդության գեներալիզացված ձևը, որը դրսևորվում է ցնցումային սինդրոմով՝ կմախքային մկանների ցավոտ կծկումներ (տետանուս) և մկանների երկարատև լարում (մկանային ռեգիդություն): Ցնցումային նոպայի բնորոշ արտահայտությունը օպիստոտոնուսն ու սարդոնիկ ժավիտն են: Մարդու մոտ փայտացումն ունի վայրէջ ընթացք: Դիվանդության ժանր ձևերի դեպքում, մահը պայմանավորված է շնչական մկանների

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Խիստ լարման հետևանքով առաջացած շնչահեղձությամբ (ասֆիքսիա), ինչպես նաև կենսական կարևոր օրգան համակարգերի (սիրտ-անոթային, շնչական և այլն) ֆունկցիաները կարգավորող նյարդային կենտրոնների պարավիճով:

**Նետինֆեկցիոն անընկալություն** չի ձևավորվում, քանի որ արտազատված տոքսինների տոքսիկ դոզան իմունոգեն դոզայից բավականին նվազ է:

**Բուժումը** կատարվում է հակաֆայտացման իմուն շիճուկով օրգանիզմում տոքսինի չեղոքացմանք:

**Սպեցիֆիկ պրոֆիլակտիկան** իրականացվում է ԱԿԴՓ, ԱՊՓ, ԱՓ վակցինաներով՝ ըստ վակցինացման օրացույցի: Ցուցումների դեպքում այն անհատական է:

**Լաբորոտոր ախտորոշումն** իրականացվում է բակտերիոսկոպիկ, բակտերիաբանական, կենսաբանական եղանակներով: Նետազոտում են վերքի պարունակությունը, վիրակապական նյութերը, որոնցով մշակվել է վերքը:

### 11.4.3. Բոտուլիզմ (C.botulinum)

Բոտուլիզմը սուր սննդային բռնավորում է, որն ընթանում է գերազանցապես կենտրոնական և վեգետատիվ նյարդային համակարգերի ախտահարումով: Տարուցիչն է Է.Վան Էրմենգեմի կողմից (1869թ.) հայտնաբերված *C.botulinum*-ը:

**Մորֆոլոգիա:** Խոշոր, կլորացած ծայրերով, պերիտրիխ մտրակներով օժտված, գրամ դրական ցուափիկներ են: Պատիճ չեն առաջացնում: Առաջացնում են վեգետատիվ ձևը մի քանի անգամ գերազանցող, ձվածկ, հիմնականում ենթածայրային դասավորության սպորներ, որոնք հիշեցնում են թենիսի ռակետը (նկ.115):

**Ֆիզիոլոգիա և կուլտուրալ հատկություններ:** Խիստ անաերոր են, կուլտիվացումն իրականացվում է Կիտտ-Տարոցիի միջավայրում, որտեղ առաջացնում են դիֆուզ պղտորություն, կծված յուղի հոտով գագ, այնուհետև նստվածք: Շաքարարյունային ագարի մակերեսին առաջացնում են շատ փոքր, դեղնամոխրագույն, կիսաթա-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺԾԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

փանցիկ, ոսպնյականնան (S գաղութ), կամ կտրտված եզրերով, աստղաննան (R գաղութ) գաղութներ՝ շրջափակված հենոլիզի



Նկ.115. *C.botulinum*

գոտիով: Շաքարոլիտիկ ակտիվությունը թույլ է, պրոտեոլիտիկ շտամները քայլայում են ժելատինը, կազեինը, առաջացնում են  $H_2S$ :

**Անտիգեններ:** Օժտված են մարմնական և մտրակային անտիգեններով, ինչը դրանց տարբերակնան առումով դեր չունի: Ըստ էկզոտոքսինի անտիգենային սպեցիֆիկության՝ տարբերակվում են մի քանի շճատիպի՝ A,B,C,D և այլն: Մարդու ախտաբանությունում առավել կարևորվում են A,B,E տիպերը:

**Վիրուլենտությունը** բացառապես պայմանավորված է հարուցիչների կողմից արտազատված ջերմակայուն (եռացմանը դիմակայում է շուրջ 20 րոպե) սպիտակուցային թույնով (բոտուլոտոքսին), որն ըստ ազդեցության մեխանիզմի ընդգրկված է **ֆունկցիոնալ բլոկատորների նեյրոտոքսին** խմբում: Այն ամենահզոր կենսաբանական թույնն է: Բոտուլոտոքսինի 1 գրամ բյուրեղային միացությունը մահացու է  $10^{12}$  թվով մարդկանց համար: Դիվանդության դեպքերն

## ՄԱՍՆԱՎՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԻՉԱՐԵԱՆ ՈՒԹՅՈՒՆ

արձանագրվում են գերազանցապես պահածոյացված, ապխտած սննդամթերքի օգտագործման հետևանքով: Հազվադեպ հանդիպում են վերքային բոտուլիզմի դեպքեր: Ստամոքսաղիքային տրակտի ֆերմենտների ազդեցությամբ բոտուլոտոքսինը չի քայրայվում, լորձաթարանթով ներծծվելով՝ անցնում է արյան հոսք, պերիֆերիկ նյարդային վերջույթների: Այն ընտրողաբար ախտահարում է ողնուղեղի առաջնային եղջյուրների շարժիչ նեյրոնները, բուլբար կենտրոնների բջիջներն ու արգելակում նյարդային իմպուլսների հաղորդումը՝ սինապսներում՝ առաջացնելով տեսողության, շնչառության, քայլվածքի և այլ խանգարումներ:

**Կլինիկա:** Ինկուբացիոն շրջանը տատանվում է իհմնականում 24 ժամվա սահմաններում, երբեմն մինչև 2-3 օր, որը, ինչպես նաև հիվանդության կլինիկական դրսևումները պայմանավորված են սննդամթերքի բնույթով ու դրանում կուտակված տոքսինի քանակով: Ստամոքսաղիքային տրակտի կողմից ախտանիշներ (քերանի չորություն կամ գերբքարտաղորություն, նողկանք, փսխում, ցավեր որովայնում) կարող են նաև չարձանագրվել: Առավել բնուրագրական է գլխացավը, նյարդապարալիտիկ երևոյնները՝ կլման ակտի խանգարում, դիպլոպիա, պտող, անիգրուրիա: Ավելի ուշ կարող են արձանագրվել պարանոցի, վերջույթների, շնչական մկանների, սրտամկանի պարեզ և պարալիչ: Լետալ ելք գրանցվում է ավելի քան 60% դեպքերում:

Մարդը բոտուլիզմի նկատմամբ բնական անընկալությամբ օժտված չէ: Հետինֆեկցիոն անընկալություն չի ծևավորվում, քանի որ արտազատված տոքսինների տոքսիկ դոզան ինունգեն դոզայից բավականին նվազ է:

**Բուժումն** իրականացվում է սկզբում հակաբոտուլինային պոլիվալենտ իմուն շիճուկով՝ 10000 ՄԵ դոզայով, տոքսինի շճատիպը պարզելուց հետո՝ մոնովալենտ իմուն շիճուկով, մինչև կլինիկական արդյունքի արձանագրումը:

**Սպեցիֆիկ պրոֆիլակտիկայի** համար առաջարկված է պոլիանատոքսին՝ A,B,E, որը սահմանափակ կիրառություն ունի:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Հրատապ պրոֆիլակտիկայի նպատակով կիրառվում է հակաբուժության պոլիվալենտ ինուն շիճուկ:

Լաբորոտոր ախտորոշումն իրականացվում է բակտերիոսկոպիկ, բակտերիաբանական, կենսաբանական եղանակներով:

### 11.5. ՕԴԱԿԱԹԻԼԱՅԻՆ ԻՆՖԵԿՑԻԱՆԵՐ


#### 11.5.1. Դիֆթերիա (C. diphtheriae)

Դիմնականում շնչական, միզասեռական ուղիների, հազվադեպ աչքի լորձաթաղանթի, մաշկային ծածկույթների, ֆիբրինոզ բորբոքյային ախտահարումով, օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիայով ընթացող սուր ինֆեկցիոն հիվանդություն է: Մարդկությանը հայտնի է դեռևս անտիկ ժամանակներից՝ որպես շնչահեղձություն առաջացնող, նշիկների չարորակ խոցային հիվանդություն: Դարուցիչն է *Corynebacterium* ցեղի *Corynebacterium diphtheriae* տեսակը, որը հայտնաբերվել է Է.Կլեբսի կողմից 1883-ին, իսկ մաքուր կուլտուրան ստացել է Ֆ.Լյոֆերը 1884-ին: *Corynebacterium* ցեղում ընդգրկված այլ տեսակները՝ *C.pseudodiphtheriae* (hofmanni), *C.xerosis*, *C.ulcerans*, *C.haemolyticum*, մարդու համար պայմանական ախտածին են:

**Դամաճարակաբանությունը:** Դիֆթերիան անթրոպոնոզ ինֆեկցիա է, վարակի աղբյուր են հիվանդները, ուեկոնվալեսցենտները, որոնք հարուցիչները կարող են արտազատել լավացումից հետո մինչև 15-20 օր, և բակտերիակիրները: Վարակի փոխանցումն իրականանում է գերազանցապես օդակաթիլային, երբեմն կենցաղ-կոնտակտային մեխանիզմներով: Վերջինս պայմանավորված է հարուցիչի հարաբերական կայունությամբ արտաքին միջավայրում՝ 60°C-ի պայմաններում՝ 10 րոպե, սենյակային ջերմաստիճանում՝ մինչև 7 ամիս, խաղալիքների վրա, փոշում՝ 2-5 շաբաթ: Կարում դրանց կայունությունը մի քանի շաբաթների ընթացքում չի բացառում ալիմենտար վարակման հնարավորությունը: Դեղինֆեկտանտների և անտիսեպտիկ պրեպարատների նկատմամբ զգայուն են, ոչնչանում են 5-10 րոպեի ընթացքում:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

**Մորֆոլոգիա:** Բարակ, երբեմն մի փոքր կորացած, 1.0-ից 10.0-12.0 մկմ երկարությամբ ցուպիկներ են, որոնց բևեռները գնդաձև հաստացած են՝ պայմանավորված ներքջային պարփակուների կուտակմամբ («վուլուտինյան հատիկներ», «մետաքրոնատինյային հատիկներ»), «Բարեշ-Եռնատի մարմնիկներ»): Սա տարրերակիչ, ախտորոշիչ նշանակություն ունի, քանի որ դիֆթերանման կորինոբակտերիաների մոտ նշված պարփակումները բացակայում են կամ տարածված են բակտերիային բջջի ողջ ցիտոպլազմայով։ Օժտված են արտահայտված պոլիմորֆիզմով, աղիեզիային նպաստող մակերեսային ֆիմբրիաներով, գուրկ են մտրակներից, քսուք պրեպարատներում դասավորվում են միմյանց նկատմամբ անկյան տակ, գրամ դրական են, գործնականում ներկումը իրականացվում է Լյոֆլերի կապույտով կամ Նեյսերի եղանակով։ Սպոր չեն առաջացնում, օժտված են միկրոպատիճով (նկ. 116)։



Նկ. 116. *Corynebacterium diphtheriae*

**Ֆիզիոլոգիա և կուլտուրալ հատկություններ:** Ֆակուլտատիվ անաերոբներ են, աճի ու բազմացման բարենպաստ ջերմաստիճանը  $37^{\circ}\text{C}$  է,  $\text{pH-ը} 7.4\text{-}8.0$ ։ Սննդային միջավայրերի նկատմամբ պահանջ կուտ են, պահանջում են չբնազրկված սպիտակուցների, որոյ աճի գործոնների՝ ամինաթթուների, վիտամինների, մետաղների իոնների

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱՔՏԱՆ ՈՒԹՅՈՒՆ

ավելացում: Կուլտիվացումը իիմնականում իրականացնում են Լյոֆերի շճային կամ կլաուբերզի՝ տելուրիտային միջավայրերում: Տելուրիտային միջավայրում ուղեկցող միկրոֆլորայի աճն ու բազմացումը ճնշվում է, իսկ դիֆթերիայի հարուցիչները, պայմանավորված կալիումի կամ նատրիումի տելուրիտի նկատմամբ բարձր կայունությամբ, անարգել աճում ու բազմանում են՝ առաջացնելով 3 տիպի գաղութ՝ **gravis**, **mitis** և **intermedius**, ըստ որի՝ դիֆթերիայի հարուցիչները տարբերակվում են **համանուն բիովարների**: **Gravis** գաղութները խոշոր են, **R** տիպի, մոխրագույն, կենտրոնում բարձրացած, որից ճառագայթաձև ձգվում են շղթաներ: **Mitis** բիովարը առաջացնում է փոքր, **S** տիպի, փայլուն, սև գաղութներ (Ակ.117): **Intermedius** բիովարի առաջացրած գաղութները միջանկյալ տեղ են զբաղեցնում նշված գաղութների միջև՝ ավելի շատ նման վելով **gravis** տիպի առաջացրած գաղութներին, որը հիմք է դարձել վերջին բիովարը ընդգրկելու **gravis** բիովարի կազմում: Յեղուկ սննդամիջավայրերում **gravis** բիովարը առաջացնում է փառ, որը հետագայում կարող է իջնել փորձանոթի հատակը խոշոր հատիկավոր նստվածքի ձևով՝ երեմն պարզ թողնելով միջավայրը: **Mitis**-ն առաջացնում է դիֆուզ պղտողություն և նստվածք:



**gravis**

**mitis**

### Ակ.117. *C. diphtheriae*-ի առաջացրած գաղութները

Կենսաքիմիական ակտիվությունը բարձր է. տարրալուծում են որոշ շաքարներ մինչև թթվի առաջացման, իսկ **սախարոզը, լակտոզը, մանիտը** չեն քայլայում, ինչն ունի տարբերակիչ

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

նշանակություն: Ներտեսակային տարբերակման համար դեր ունի օսլայի նկատմամբ տարբեր բիովարների վերաբերմունքը՝ այն տարրալուծում է gravis-ը: Քայլայում են ցիստեինը՝ առաջացնելով  $H_2S$ , ինդոլ չեն առաջացնում, չեն քայլայում միզանյութը, գուրկ են ժելատինազային ակտիվությունից: Կատալազա դրական են, սինթեզում են հիալուրոնիդազա, նեյրամինիդազա, ԴՆԹ-ազա:

**Անտիգենային կառուցվածքը:** Օժտված են միկրօպակտերիաների և նոկարդիաների հետ խաչաձև փոխազդող Օ-սոնատիկ և տիպային սպեցիֆիկության Կ-մակերեսային անտիգեններով: Ըստ վերջինիս՝ դիֆթերիայի հարուցիչները տարբերակվում են բազմաթիվ շճավարիանտների:

**Վիրուլենտության գործոններ՝**

◆ **Արիեգիան** պայմանավորված է մակերեսային միկրոթավիկներով ու միկրոպատիճով, որոնցով հարուցիչները ամրանում են էպիթելային բջիջներին և բազմանում՝ նպաստելով տեղային բորբոքային պրոցեսի զարգացմանը, որի բնույթը պայմանավորված է լորձաբաղանքների կառուցվածքով:

◆ **Ֆերմենտները՝** հիալուրոնիդազան, նեյրամինիդազան, ֆիբրինոլիզինը նպաստում են հարուցիչների ինվագիային տարբեր հյուսվածքներ, ընդհուպ մինչև արյան հոսք: Հիալուրոնիդազայով պայմանավորված է արյան անոթների թափանցելիության մեծացումը, արյան պլազմայի ելքը շրջակա հյուսվածքներ և այտուցի զարգացումը:

◆ **Բջջապատի սպեցիֆիկ լիալիդային միացությունները՝ կորինոմիկոլային և կորինոմիկոլինային թթուները, տրեգալոզա դիմիկոլատը (կորդ գործոն), տարբեր ֆուսֆատիդները, օրգանիզմի հյուսվածքների բջիջներում խաթարում են շնչառության պրոցեսները՝ պայմանավորելով դրանց դեստրուկցիան,**

◆ **Էկզոտոքսիններ՝**

**1. Ռեմոլիզին:**

**2. Դերմոնեկրոտոքսինը** հարուցիչի տեղակայման վայրում առաջացնում է բջիջների մեռուկացում (մեկրոզ), ինչի հետևանքով

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

կուտակվող տրոմբոկինազան փոխազդելով արյան հունից հյուսվածքներ թափանցած պլազմայի ֆիբրինոգենի հետ, վերափոխում է վերջինիս ֆիբրինի՝ պայմանավորելով ֆիբրինոգ փառ (**դիֆբերենտիկ բորբոքում**) առաջացումը:

**3.8.Հիսոտոքսիմներին դասվող հիսոտոքսիմը** անցնելով հյուսվածքային քջիների ցիտոպլազմա՝ ազդում է ռիբոսոմներում պոլիպետիդային շղթայի երկարացումն ապահովող տրանսֆերազա-2 ֆերմենտի (երկարացման գործոն) վրա և արգելակում սպիտակուցների սինթեզը: Հիսոտոքսիմի սպեցիֆիկ ազդեցության թիրախ են հիմնականում արյան անորմներով առավել հագեցած օրգաններն ու հյուսվածքները՝ սիրտանոթային համակարգը, միոկարդը, պերիֆերիկ և կենտրոնական նյարդային համակարգերը, երիկամները, մակերիկամները: Դարկ է նշել, որ տոքսինագոյացումը պայմանավորված է չափաբնոր ֆագով լիզոգենացմանը:

**Պաթոգենեզ:** Պայմանավորված փոխանցման մեխանիզմներով՝ մոտքի դուր են քթընապանի, շնչական ուղիների, աչքի, կանանց սեռական օրգանների լորձաթաղանթները: Դեպքերի մեծամասնությամբ վարակումն իրականանում է օդակաթիլային մեխանիզմով: Դարուցիչներն, անցնելով շնչական ուղիների լորձային շերտ ու բազմանալով, նրա վերին հատվածների՝ քթընապանի բազմաշերտ տափակ էպիթելի նակերեսին առաջացնում են դեղնամոխրագույն ֆիբրինոգ փառ՝ դիֆբերիային բորբոքում: Այն անուր կպած է խորանիստ հյուսվածքներին, ու փառն անջատելու փորձերը ուղեկցվում են արյունահոսությամբ: Առավել ստորին հատվածների միաշերտ գլանաձև էպիթելի նակերեսին առաջանում է կրուպող բորբոքում, առաջացած փառը հեշտությամբ շերտազատվում է ու մեծ քվով հարուցիչներ պարունակելու հետևանքով նպաստում է շոշապատի վարակմանը:

Դիվանդության պաթոգենետիկ ընթացքը և կիլինիկական պատկերը մեծապես պայմանավորված է հարուցիչի արտազատած հիսոտոքսիմով, որը բորբոքային օջախում կուտակվելով, հեմատոգեն ճանապարհով տարածվում է օգանիզմում և ախտահարում

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

գրեթե բոլոր օրգաններն ու հյուսվածքները: Տոքսինի առավել արտահայտված ազդեցություն է արձանագրվում սրտամկանի, նյարդային համակարգի, երիկամային հյուսվածքի բջիջների վրա, որոնց դեստրուկցիան նպաստում է կառուցվածքային և ֆունկցիոնալ անվերադարձ փոփոխություններին ու հիվանդի մահվանը:

**Կլինիկա:** Ինկուբացիոն շրջանը տատանվում է 2 օրից մինչև 2 շաբաթ: Դիվանդությունն սկսվում է մուտքի դրամերում դիֆրերիային կամ կրուպով բորբոքային օճախի զարգացմամբ, սուբֆեբրիլ ջերմությունով, օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիայի նշաններով՝ թուլություն, գլխացավ, ախորժակի անկում, փսխում, արտերիային հիպոտենզիա և այլն: Քթընպանում ձևավորվում է ֆիբրինային փառ, այտուց, որը հակում ունի տարածվելու շնչական ուղիների ավելի ստորին հատվածները՝ առաջացնելով կոկորդի լորձաթաղանթի, ձայնալարերի, երեսն նաև շնչափողի, բրոնխիների կրուպով բորբոքում, այտուց, որը կլինիկորեն արտահայտվում է հազորվ, լորձաթաղանթի շերտագատման հետևանքով՝ խորխարտադրությամբ, ինչը հարուստ է հարուցիչներով: Շնչական ուղիների այտուցը և հարթ մկանների կծկումը կարող է բարդանալ դիֆրերիային կրուպի զարգացմամբ՝ շնչական ուղիների խցանմանը (օբստրուկցիա) և շնչահեղձությամբ: Կլինիկական ծանր ձևերի դեպքում արձանագրվում է օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիա՝ երիկանների ախտահարման հետևանքով զարգանում են տոքսիկ գլոմերուլունեֆրիտ, նեֆրոզ, որը դրսառվում է սուր երիկամային անբավարարության ախտանիշներով, սրտամկանի բջիջների դեստրուկցիան պայմանավորում է միոկարդիտի զարգացումը: Նյարդային համակարգի ախտահարման արդյունքում դանդաղում կամ արգելակվում է նյարդային սինապսներից մկաններին փոխանցվող գրգիռները, որը կլինիկորեն դրսառվում է միմիկայի, ակնուղացիայի խանգարումներով, փափուկ քիմքի, ընպանի, լեզվի, պարանոցի, իրանի, վերջույթների, ստոծանու, շնչական մկանների կաթվածով:

## ՄԱՍՆԱՎՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱՔՏԱՆ ՈՒԹՅՈՒՆ

**Իմունիտետը** դիֆթերիայից հետո կայուն է, լարված և պահպանվում է ցմահ: Այն պայմանավորված է գերազանցապես հակատոքսիկ հակամարմիններով, չնայած օրգանիզմում հայտնաբերվում են նաև հակաբակտերիային հակամարմիններ: Կրկնակի հիվանդացումներն արձանագրվում են 5-7% դեպքերում:

**Սպեցիֆիկ կանխարգելումն** իրականացվում է մասսայական, պլանային պատվաստումների անցկացման միջոցով՝ ԱԿԴՓ, ԱԴՓ, ԱԴ վակցինաներով, որոնց կազմում դիֆթերիայի բաղադրիչը ներկայացված է C.diphtheriae-ի մինչև 30 օր, 0.4%-ոց ֆորմալինի և 40°C ջերմության պայմաններում ինակտիվացված, սակայն իմունոգենուրյունը պահպանած տոքսինով՝ անատոքսինով: Վակցինացումը սկսվում է ԱԿԴՓ վակցինայով 3 ամսական հասակից, եռանվագ՝ 1.5 ամիս ընդմիջումներով, որից 1.5-2 տարի անց կատարվում է առաջին ռեվակցինացիան, իսկ հետագայում ԱԴՓ վակցինայով՝ 9, 16 տարեկաններում, այնուհետև՝ յուրաքանչյուր 10 տարին մեկ: Ներկայումս, պայմանավորված մի շարք հանգամանքներով, արձանագրվում է հետինֆեկցիոն իմունիտետի կայունության, լարվածության նվազում, ինչը ենթադրում է պարտադիր վակցինացման իրականացում ընդհանուր կարգով՝ նաև ռեկոնվալեսցենտներին:

**Բուժման** հիմնական մեթոդը հակադիֆթերիային հակատոքսիկ իմուն շիճուկի ներարկումն է միջմկանային կամ ներերակային ճանապարհով՝ 10000-400000 ՄԵ դոզայով: Չուգահեռ իրականացվում է հակաբակտերիային և սիմպտոմատիկ բուժում: Սեփական հակատոքսինների սինթեզի խթանման նպատակով հնարավոր է անատոքսինի կիրառություն:

**Լաբորատոր ախտորոշումն** իրականացվում է բակտերիոսկոպիկ, բակտերիաբանական եղանակներով: Անջատված կուլտուրայի տոքսիգենուրյունը հաստատվում է ըստ Օուխտերլոնի՝ ժել միջավայրում տոքսինի չեղոքացման ռեակցիայով:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

### 11.5.2. Կապույտ հազ (B. pertussis)

Օդակաթիլային մեխանիզմով փոխանցվող, շնչական ուղիների ախտահարումով, նոպայածն ջղաձգային (սպազմատիկ) հազով ընթացող, սուր, մանկական իճֆեկցիոն հիվանդություն է, որը հարուցվում է XX դարի սկզբում հայտնաբերված՝ **Bordetella cteηή**, **Bordetella pertussis** տեսակով: Մաքուր կուլտուրան անջատվել է Ժ.Բորդեի և Օ.ժանգուի կողմից՝ 1906-ին: Բացի նշված հարուցիչից, ցեղն ընդգրկում է մարդու ախտաբանությունում կարևորվող, շնչական համակարգը ախտահարող և երկու տեսակ՝ **B.parapertussis** և **B.bronchiseptica**, որոնք կապույտ հազի հարուցիչի հետ ընդհանրությունների հետ մեկտեղ օժտված են նաև առանձնահատկություններով, ինչն ընկած է դրանց մանրէաբանական տարրերակման հիմքում (նկ.118):


Հասկանիշ	Տեսակ		
	<b>B.pertussis</b>	<b>B.Parapertussis</b>	<b>B.Bronchiseptica</b>
մարսկներ	-	-	+
պատիճ	+	-	-
զարութներ	3-4 օր	2-3 օր	1-2 օր
աճ հաս. միջ.	-	+	+
նիստ.վեր.	-	-	+
կատարագա	+	+	+
ուրեագա	-	+	+ (դանդ.)
օրսիլագա	+	-	+
ագենիլաս ցիկլ.	+	+	+
խճասպեց. ՀԾ	7	7	7
ախլասպեց.ՀԾ	1	14	12

Նկ.118. Bordetella-ների միջտեսակային տարրերակումը

Սորֆոլոգիա՝ հարուցիչները ներկայացված են ձվածե, փոքր չափերի (կոկորակտերիաներ), գրամ բացասական, մակերեսային ֆինբրիաներով օժտված, մտրակներից զուրկ, սպոր չառաջացնող ցուպիկներով (նկ.119): Ցիտոպլազմայում անհավասարաչափ բաշխված պարփակումների շնորհիվ պրեպարատներում ներկվում են երկբևեռ. դասավորությունը խառն է: Մակրոօրգանիզմից

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺԾԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

անջատված կուլտուրաները հիմնականում պատիճավոր են:



**Նկ.119. *Bordetella pertussis***

Օրգանիզմից դուրս արագ ոչնչանում են, զգայուն են տարբեր ֆիզիկաքիմիական ազդակների, դեղինֆեկտանտների նկատմամբ:

**Ֆիզիոլոգիա:** Այս ու բազմացման բարենպաստ ջերմաստիճանը  $37^{\circ}\text{C}$  է,  $\text{pH}-ը$  չեզոք կամ թույլ հիմնային, շնչառության տիպը՝ խիստ աերոր: Աննդային միջավայրերի նկատմամբ պահանջկուտ են, կարիք ունեն սննդամիջավայրերին պրոլիմի, ցիստեինի, գյուտանինաթթվի ավելացման, ինչի աղբյուր է կազեինը: Էլեկտիվ սննդամիջավայր է Բորդե-ժանգուի արյունով հարստացված կարտոֆիլագլիցերինային ագարը, ինչպես նաև կազեինաածխային ագարը: Բորդե-ժանգուի միջավայրում ցանքի 3-4-րդ օրը հայտնաբերվում են մինչև 1մմ չափերի, մետաղական փայլով, սնդիկի կաթիլներ կամ մարգարիտներ հիշեցնող S գաղութներ, որոնց բնորոշ է R-S դիսոցումը: Վիրուլենտ շտամների առաջացրած գաղութները շղթավակված են հեմոլիզի գոտիներում: Յեղուկ սննդամիջավայրերում առաջացնում են դիֆուզ պղտորություն: Կենսաքիմիական ակտի-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Վությունը շատ թույլ է, գործնականում շաքարները և սպիտակուցները չեն տարրալուծում: Շրջակա միջավայրում անկայուն են:

Անտիգենային կառուցվածքը բարդ է: Ունեն ջերմակայուն ցեղային սպեցիֆիկությամբ Օ-սոմատիկ անտիգեն և պատիճանվայանանավորված շուրջ 14 Կ-անտիգենային բաղադրամասեր (կոմպոնենտներ), որոնք թվարկվում են 1,2,3...14 և անվանվում են նաև պատիճային ագյուտինգեներ, քանի որ հայտնաբերվում են ագյուտինացիայի ռեակցիայով: Դրանցից 7-րդը օժտված է ցեղային սպեցիֆիկությամբ և ընդհանուր է ցեղում ընդգրկված ախտածին բորդետելաների համար, իսկ 1-6-րդը, 14-րդը և 12-րդը համապատասխանաբար պայմանավորում են **B.pertussis**, **B.parapertussis** և **B.bronchiseptica** տեսակների սպեցիֆիկությունը: Ավիրուլենտ R շտամները զուրկ են պատիճից և K շիճուկներով չեն ագյուտինացվում:

### **Վիրովլենտության գործոններն են՝**

♦ աղիեզիա թիրախ բջիջների մակերեսին՝ պայմանավորված պատիճանվ, մակերեսային ֆինբրիաներով, ֆիլամենտով հեմագյուտինինով,

#### **♦ գաղութացում,**

♦ պենետրացիա շնչական ուղիների եպիթելային բջիջների, մակրոֆագերի ներքին միջավայր,

♦ **ֆերմենտներ՝** հիալուրոնիդազա, ալազնակոագուլազա, լեցիտինազա,

♦ բջջապատի լիպոպոլիսախարիդ՝ էնդոտոքսին, որը պայմանավորում է օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիան,

♦ սպիտակուցային տոքսին՝ պերտուսիս-տոքսին (պերտուսին, կապույտ հազի տոքսին), որն ազդեցության մեխանիզմով դասվում է ֆունկցիոնալ բլոկատորներին (տոքսիկոբլոկատոր), մեծացնում է անոթների թափանցելիությունը, առաջացնում է ջրաաղային փոխանակության խանգարում, ճնշում է ֆագոցիտոզը: Ունի հիստամինը սենսիբիլիզացնող և լիմֆոցիտոզը խթանող ազդեցություն,

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

◆ չարտազատվող սպիտակուցային տոքսին՝ **տրախեալ տոքսին**, որն օժտված է ցիտոտոքսիկ ազդեցությամբ,

◆ **դերմոնեկրոտոքսին՝** թողնում է ինչպես տեղային ազդեցություն՝ շնչական ուղիների լորձաթաղանթի նեկրոզ, այնպես էլ գեներալիզացման հետևանքով կարող է ախտահարել սիրտանոթային, նյարդային և այլ համակարգերը:

**Պարզենեց:** **Bordetella**-ների համար մուտքի դուռ է վերին շնչական ուղիների լորձաթաղանթը, որտեղ բազմանալով՝ դրանք անցնում են շնչական ուղիների առավել ստորին հատվածներ, մինչև ալվեոլներ: Դիվանդության պաթոգենեզը հիմնականում պայմանավորված է տոքսիններով՝ **պերտուսին, տրախեալ տոքսին, դերմոնեկրոտոքսին:** Վերջիններիս ազդեցությամբ շնչական ուղիների լորձաթաղանթում առաջանում են նեկրոտիկ օջախներ, պոլիմորֆ-կորիզային ինֆիլտրացիա, պերիբոնիսիալ բորբոքում, ինտերստիցիալ պնևմոնիա: Բրոնխիոլների սպազմը, շերտազատված լորձաթաղանթի կտորներով դրանց խցանումը և հիփօքսիայի զարգացումը, ինչպես նաև անորների, նյարդային վերջույթների ախտահարումն ու հազի ընկալիչների գրգռումը դրսևորվում են սպազմատիկ հազի նոպայով: Հազի առաջացման պաթոգենետիկ մեխանիզմում կարևորվում է նշված ընկալիչներից երկարավուն ուղեղի հազի կենտրոն անընդհատ գնացող գրգիռները և տոքսինեմիայի հետևանքով այդ կենտրոնի քչիչների անմիջական ախտահարումը, ինչը պայմանավորում է գլխուղեղում կայուն գրգռման օջախի առաջացումն ու հազի նոպան նույնիսկ ոչ աղեկված գրգիռների՝ լույսի, ձայնի նկատմամբ: **Բակտերինմիան կապույտ հազի ժամանակ բացակայում է:** Հնարավոր է երկրորդային ինֆեկցիա և բակտերիային պնևմոնիայի զարգացում:

**Կլինիկա:** Դիվանդության կլինիկական ընթացքը ինկուբացիոն շրջանի 5-8 օրերից հետո անցնում է մի քանի փուլ: **Կատարալ շրջանը** տևում է մինչև 2 շաբաթ, ընթանում է սուրֆերիլ ջերմությամբ, համեմատաբար թեքն, չոր հազով ու փոշտոցով: Այնուհետև հաջորդում է 4-6 շաբաթ տևողությամբ՝ **ցնցումային կամ ջղաձգային**

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

**շրջանը:** Վերջինս բնութագրվում է օրվա մեջ մի քանի տասնյակ անգամ կրկնվող անզուսապ ջղաձգային հազի նոպաներով, որոնք հետզհետեւ ընդունում են «աքլորի կանչի» (ֆրանս. Coqueluche) բնույթ և հաճախ ավարտվում են փսխմամբ: Ավելի ուշ հազի նոպաների հաճախականությունն ու ինտենսիվությունը աստիճանաբար նվազում է, և հիվանդությունն անցնում է ապաքինման շրջան:

**Լաբորատոր ախտորոշումն** իրականացվում է բակտերիաբանական («հազային թիթեղիկներ»), շճաբանական, ինունոֆյորեսցենտային եղանակներով: Մաքուր կուլտուրայի չանցատման դեպքերում ախտորոշումը հաստատվում է արյան գույգ շիճուկներում հակամարմինների տիտրի աճի արձանագրմամբ:

Հետինֆեկցիոն իմունիտետը կայուն է, լարված, ցմահ և պայմանավորված է գերազանցապես անընկալության հումորալ մեխանիզմով՝ ագլուտինիններ, պրեցիպիտիններ, կոնվլեմենտ կապող հակամարմիններ:

**Սպեցիֆիկ կանխարգելումը** կատարվում է մասսայական, պլանային պատվաստումների միջոցով՝ ԱԿԴՓ վակցինայով, որտեղ կապույտ հազի բաղադրիչը ներկայացված է **B.pertussis**-ի սպանված կուլտուրայով: Վակցինացումը սկսվում է 3 ամսական հասակից, եռանվագ, 1.5 ամիս ընդունումներով, որից 1.5-2 տարի անց կատարվում է ռեվակցինացիա: Համաժարակաբանական ցուցումների դեպքում ճանկական իիմնարկներում կիրառվում է մեկուսի սպանված վակցինան:


### 11.5.3. Տուբերկուլոզ (M.tuberculosis)

Տուբերկուլոզը իիմնականում շնչական, ինչպես նաև լինֆատիկ, ուկրահոդային, միզասեռական և այլ համակարգերի, մաշկի, սպեցիֆիկ բորբոքային փոփոխություններով՝ փոքրիկ թնբիկների (լատ. *tuberculum-թնբիկ*) առաջացումով ընթացող, քրոնիկական հակում ունեցող, մարդուն և կենդանիներին ախտահարող ինֆեկցիոն հիվանդություն է, որը հարուցվում է *Mycobacterium* ցեղի մի քանի տեսակներով՝ *M.tuberculosis*, *M.bovis*, *M.avium*, *M.africanum*:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Տուբերկուլոզը տարածված է ամենուրեք, դրա թոքային ձևը նկարագրվել է դեռևս անտիկ հեղինակների կողմից, սակայն հիվանդության կլինիկական ձևերի բազմազանությունը մինչև XIX դարի վերջը հնարավորություն չի ընձեռել պարզելու վերջիններիս ինֆեկցիոն բնույթը և դրանց էթիոլոգիական միասնությունը: Դիվանդության ինֆեկցիոն բնույթը առաջին անգամ հաստատել է Վիլմանը 1865-ին, իսկ մարդու ախտաբանությունում առավել հաճախ, գրեթե 90% դեպքերում հանդիպող հարուցիչը՝ *M.tuberculosis*-ը, հայտնաբերել է Ո.Կոխը՝ 1882-ին:

**Մորֆոլոգիա:** *M.tuberculosis*-ի դասական ձևերը ներկայացված են բարակ, նուրբ, միջին չափերի, հնարավոր է նի վիզոք կորացած, անշարժ ցուախկներով (նկ.120): Կուլտուրաներում կարող են հանդիպել թելանման, ճյուղավորված ձևերը, ինչը նոկարդիաների



**Նկ.120. *M.tuberculosis***

եւս ծագումնաբանական ընդհանրության վկայությունն է: Մակրո-օրգանիզմում կարող է առաջացնել կոկաննամ, L, ինչպես նաև ֆիլտրվող ձևեր, որոնք հիմնականում պահպանում են ինֆեկցիոնությունը: Հաճախ ցիտոպլազմայում, երբեմն նաև արտաքշային տեղակայման, հայտնաբերվում են բբվազգայուն մետաֆոսֆատային պարփակումներ՝ Մուլիսի հատիկներ, ինչն ունի տարբերակիչ նշանակություն: Ինչպես գրեթե բոլոր ախտածին միկոբակտերիա-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԻՉԱՐԵԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Երբ, բնութագրվում է արտահայտված կայունությամբ թթուների, հիմքերի նկատմամբ՝ պայմանավորված բջջապատում 40-60% թթվակայուն լիպիդային միացություններով՝ միկոլաթթու, սուլֆատիդներ, գլիկոլիպիդներ, տրեգալոզա դիմիկոլատ (կորող գործոն): Գրամ դրական է, սակայն պայմանավորված թթվակայունությամբ՝ ներկումը իրականացվում է **Ցիլ-Նիլսենի** եղանակով, որի արդյունքում ցուպիկները ստանում են ալ կարմիր գույն: Սպոր և պատիճ չի առաջացնում:

**Ֆիզիոլոգիա և կուլտուրալ հատկություններ:** Բարենպաստ ջերմաստիճանը  $37^{\circ}\text{C}$  է,  $\text{pH-ը՝ } 7.0\text{-}7.2$ : Ծնչառության տիպով աերոր է, միջավայրում  $5\text{-}10\%$   $\text{CO}_2$ -ի պարունակությունը նպաստում է առավել ինտենսիվ աճին ու բազմացմանը: Ընդհանուր առմանք բազմացումն իրականանում է շատ դանդաղ, առավելապես առաջին գեներացիաներում: Առաջին նշանները ի հայտ են գալիս ցանքից հետո՝ 1-2 շաբաթից մինչև 2 ամսվա ընթացքում պայմանավորված գեներացիայի ժամանակահատվածի երկարատևությամբ՝ 14-18 ժամ: Մննդամիջավայրերի նկատմամբ պահանջվութ է, աճում ու բազմանում է սպիտակուցներով, գլիցերինով և մի շարք աճի գործոններով հարստացված Լեվինշտեյն-Յենսենի, Դորսեի, Սոտոնի միջավայրերում: Պինդ սմնդամիջավայրերում առաջացնում է չոր, կնճռոտված մակերեսով, կենտրոնում մի փոքր բարձրացած, ծաղկակաղանք հիշեցնող,  $R$  գաղութներ: Վերջիններս միաձուլվելով ձևավորում են փխրուն, բաց դեղնավուն երանգով ծածկույթ (նկ.121):

Հակաբիոտիկների ազդեցությամբ կարող է դիսոցվել՝ առաջացնելով  $S$  գաղութներ: Հեղուկ սմնդամիջավայրերում աճը և բազմացումն արձանագրվում է ցանքի 5-7-րդ օրը՝ չոր կնճռոտված փառի ձևով, սմնդային միջավայրը մնում է պարզ, թափանցիկ: Հարուցիչների անջատումը Պրայսի մեթոդով՝ առարկայական ապակու վրա հեղուկ միջավայրում, հնարավորություն է ընձեռում հայտանաբերելու կորդ գործոնը, որը մանրադիտակային հետազո-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԵՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

տության ժամանակ երևում է հյուսքերի ձևով միմյանց միացած բջջների միկրոգաղութների տեսքով:



**Նկ.121. *M.tuberculosis*-ի զաղութները**

**Կենսաքիմիական ակտիվություն:** Օժտված են ուրեազային, նիկոտինամիդազային ակտիվությամբ, վերականգնում են նիտրատները նիտրիտների, սինթեզում են մեծ քանակության նիկոտինաթթու՝ նիացին,  $68^{\circ}\text{C}$  տաքացման պայմաններում կորցնում են կատալազային ակտիվությունը (նկ.122):

Հասկ.	<i>M.tuberculosis</i>	<i>M.bovis</i>	<i>M.afica-num</i>	<i>M.avium</i>	<i>M.smegmatis</i>
ուրեազա	+	+	+	-	+
նիկոտինամիդազային ակտիվություն	+	-	-	+	+
սինթեզազային ակտիվություն	+	-	-	+	+
կատալազա $68^{\circ}\text{C}$	-	-	-	+	-
նիաց.վեր.	+	-	-	-	+
նիկոտինաթթու	+	-	-	-	-
աճը (օր)	12-15	20-40	20-40	20-40	5-7

**Նկ.122. Միկոբակտերիաների ներցեղային տարրերակումը**

**Կայունությունը:** Շրջակա միջավայրի տարբեր անբարենպաստ ազդակների նկատմամբ բավականին կայուն են. չորացմանը դիմակայում են մի քանի շաբաթ, արկի ուղիղ ճառագայթների ներգործությամբ պահպանվում են մինչև 1 ժամ, ցրված ճառագայթների ներգործությամբ՝ 1 շաբաթից ավելի: Խորխում  $60^{\circ}\text{C}$ -ի

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԻՎԱՐԵՐԱՆ ՈՒԹՅՈՒՆ

պայմաններում պահպանվում են 1 ժամ, նույն չերմաստիճանում կարում ոչնչանում են 15-20 րոպեի ընթացքում, եռացմանը դիմանում են 5 րոպե: Սովորական դեզինֆեկտանտների նկատմամբ հարաբերականորեն կայուն են և դրանց ազդեցությամբ կարող են պահպանվել մինչև 5-6 ժամ:

**Վիրուլենտությունը** պայմանավորող կարևորագույն հատկությունը հարուցիչների ունակությունն է դիմակայելու մակրորդանիզմի պաշտպանական ոչ սպեցիֆիկ գործոններին՝ ֆագոցիտոզին՝ ապահովելով անավարտ ֆագոցիտոզը և հարուցիչների անարգել տարածումը օրգանիզմով: Նշված հատկությունը պայմանավորված է լիափիային և խեժային միացություններով՝ միկոլաբբու, սուլֆատիդներ, գլիկոլիափիդներ, Շխեժ, տրեգալոզա դիմիկոլատ (կորդ գործոն): Վերջինս ոչ միայն պայմանավորում է անավարտ ֆագոցիտոզը, այլև թողնում է արտահայտված տոքսիկ ազդեցություն մակրորդանիզմի հյուսվածքների վրա: Յիշանդության պարոգենեզում կարևորվում է նաև դեռևս Ռ.Կոխի կողմից հայտնաբերված **տուբերկուլինը՝** միկոբակտերիաների կենսագործունեության հետևանքով առաջացած մի շարք սպիտակուցային բնույթի միացություններ:

**Պարոգենեզ և կլինիկական նշաններ**: Վարակումը կարող է իրականանալ ինչպես օդակաթիլային, այնպես էլ կոնտակտային ու ալիմենտար եղանակներով: Մուտքի դրներում, որն առավել հաճախ շնչական ուղիների, ալվեոլների լորձաթաղանթն է, միկոբակտերիաները բազմանալով առաջացնում են սպեցիֆիկ տուբերկուլյոգային թնբիկածն բորբոքային օջախ՝ **ինֆեկցիոն գրանուլենա** (առաջնային աֆեկտ): Խարուցիչները, իիվանդության դինամիկայում կլանվելով ալվեոլար մակրոֆագերի կողմից, դրանց հետ ավշային ուղիներով անցնում են սահմանային տրախեոբրոնխիալ լիմֆատիկ հանգույցներ, շարունակում են բազմացնում՝ նպաստելով **առաջնային տուբերկուլյոգային կոմպլեքսի** ծևավորմանը, որն ընդգրկում է:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

◆ սպեցիֆիկ տուբերկուլյոզային բորբոքային օջախը՝ ինֆեկցիոն գրանովեմա,

◆ մակրոֆագերով բորբոքային պրոցեսի մեջ ընդգրկված ավշային ուղիները՝ լիմֆանգիտ,

◆ սահմանային տրախեոբրոնխիալ լիմֆատիկ հանգույցները՝ լիմֆադենիտ:

Միկոբակտերիաների լիմֆոգեն, այնուհետև նաև հեմատոգեն տարածումը, պայմանավորում է իմուն տեղաշարժերը օրգանիզմում, հյուսվածքների ու օրգանների գերզգայունացումը (սենսիբիլացում) և դանդաղ տիպի գերզգայուն ռեակցիայի զարգացումը: Հյուսվածքներում արձանագրվող սպեցիֆիկ բորբոքային օջախները՝ ինֆեկցիոն գրանովեմա, ըստ էության գերզգայուն օրգանիզմի տեղային ռեակցիայի հետևանք են, ինչն ուղղված է օրգանիզմում հարուցիչների տարածման սահմանափակմանը: Բորբոքային օջախը ձևավորված է կենտրոնում միկոբակտերիաների զգալի պարունակությամբ լորանման (կազեոզ) նեկրոզի գոտիով, որը շրջափակված է լիմֆոիդ ու պլազմատիկ բջիջներով, իսկ պերիֆերիայում նաև ֆիբրոբլաստներով: Բարենպաստ դեպքերում նման օջախները ներծծվում են, նեկրոզված զանգվածը ամրանում ու հագենում է կալցիոնական աղերով և ձևավորվում է պետրիֆիկատ: Վերջինս շրջափակվում է շարակցակայուսվածքային պատյանով, սպիանում և սահմանազատվում առողջ հյուսվածքներից: Այսպիսի օջախներն անվանվում են Հոնի օջախներ: Սակայն այս պրոցեսը չի ավարտվում հարուցիչների ոչնչացմամբ ու լիարժեք հեռացմամբ: Միկոբակտերիաները տրանսֆորմացվում են L-ձևերի, որի հետևանքով պահպանում են կայունությունը բավականին երկար, որոշ դեպքերում նաև ցմահ, պայմանավորելով օրգանիզմի անընկալիությունը կրկնակի վարակումներից՝ ոչ ստերիլ կամ ինֆեկցիոն իմունիտետ:

Անբարենպաստ դեպքերում բորբոքային պրոցեսի մեջ է ընդգրկվում շրջակա թօքային հյուսվածքը, լորանման նեկրոզի օջախը տարածվում է, ձևավորվում են խոռոչներ, որը պայմանավորում է թօքային տուբերկուլյոզի զարգացումը: Բուժման բացակայության պայման-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Երում հարուցիչները կարող են տարածվել արյան հոսքով և ախտահարել գործնականորեն բոլոր օրգանները և համակարգերը՝ ուկրահոդային, ստամոքսաղիքային, միզասեռական և այլն, ինչը կարող է դրսնորվել համապատասխան կլինիկական ախտանիշներով:

**Իմունիտետ:** Յիկանդրությունից հետո օրգանիզմում միկրօպակտերիաների, մասնավորապես դրանց L-ձևերի երկարատև պերսիստենցիայի շնորհիկ զարգանում է ինֆեկցիոն անընկալություն, ինչը պայմանավորված է գերազանցապես բջջային մեխանիզմով՝ T-ցիտոտոքսիկ բջիջներ: Առողջացածների և վակցինացվածների մոտ ֆագոցիտոզը ավարտուն է:

**Լաբորատոր ախտորոշումն** իրականացվում է բակտերիասկոպիական, բակտերիաբանական, կենսաբանական եղանակներով, ինչպես նաև տուբերկուլինային մաշկային փորձով՝ **Մանտուի ներմաշկային փորձ PPD-L-ով:** Վերջինս համարվում է դրական, այսինքն հաստատում է հետազոտվողի վարակվածությունը, եթե ներարկումից 48-72 ժամ անց արձանագրվում է 5նմ և ավելի տրամագծով արտահայտված ինֆիլտրատի՝ պապուլայի առաջացում:

**Բուժումը** կատարվում է հակատութերկուլյոզային հակաբիտիկներով՝ իզոնիազիդի խմբի պրեպարատներ, ոիֆամափցին, ստրեպոտմիցին, ֆուրուսինոլոնի ածանցյալներ և այլն:

**Սպեցիֆիկ պրոֆիլակտիկան** իրականացվում է կենդանի թուլացված BCG (Bacille Calmette-Guerin) վակցինայով՝ առաջարկված Կալմետի և Գերենի կողմից: Այն ստացվել է M. bovis-ի կուլտուրայից՝ լեղու ավելացմաբ կարտոֆիլագլիցերինային միջավայրում 230 փոխացանքերի ճանապարհով, 13 տարվա ընթացքում: Վակցինացումը կատարվում է նորածիններին հետձննյան 2-5 օրերի ընթացքում, ներմաշկային եղանակով: Ռեվակցինացման ենթարկվում են բացասական տուբերկուլինային փորձով անձինք:

### 11.5.4. Բոր (M. leprae)

Հարուցիչն է 1873-ին Ա. Զանսենի կողմից հայտնաբերված **Mycobacterium leprae**-ն, որը մարդու մոտ հարուցում է քրոնիկ


## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՍՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ընթացքով՝ մաշկի, լորձաթաղանթների, հմուն, պերիֆերիկ նյարդային համակարգերի և տարբեր ներքին օրգանների սպեցիֆիկ բորբոքային ախտահարմամբ ուղեկցվող, ծանր, հաճախ ցմահ հաշմանդամություն առաջացնող, ինֆեկցիոն հիվանդություն՝ **Բոր, Լեպու, Պրոկազա** անվանումներով։ Պայմանավորված հիվանդության կլինիկական ընթացքի ծանրությամբ, մահացության ու հաշմանդամության բարձր տոկոսներով՝ դեռևս միջին դարերում հիվանդության էպիտեմիկ տարածումը կանխելու նպատակով, ձևավորվել են հատուկ կառույցներ՝ լեպորազորիաներ, որոնց գործունեության շնորհիվ արդեն XIX դարի սկզբից այս հիվանդությունը զարգացած երկրներում արձանագրվում է շատ հազվադեպ և դադարել է լուրջ հիմնախնդիր ներկայացնել։ Սակայն այն շարունակում է մնալ արդիական տրոպիկական կլիմայական տարածաշրջանների, հիմնականում զարգացող երկրների համար, ինչի վկայությունն է նույնիսկ մեր օրերում մի քանի միլիոն հիվանդների առկայությունը։ Խիստ անթրոպոնոզ ինֆեկցիա է, վարակումն իրականանում է հիմնականում հիվանդի հետ մշտական, երկարատև շվման պայմաններում, ինչպես նաև օդակաթիլային մեխանիզմով։ Կան կարծիքներ, որ հիվանդության տարածման գործընթացում կարող են դեր ունենալ արյունածուծ միջատները։

**Սորֆոլոգիա:** Ուղիղ կամ մի փոքր կորացած, կլորացած ծայրերով, նուրբ, 1-8 մկմ չափերով, անշարժ, սպոր և պատիճ չառաջացնող, գրամ դրական ցուպիկներ են։ Քիմիական կառուցվածքով նման են տուբերկուլոզի հարուցիչներին։ Բջջապատի կազմության մեջ առկա 25-40% լիպիդային միացությունները՝ ֆուֆատիդները, ճարպերը, խեժերը, միկոլաբրուն, ինչպես նաև միայն **Mycobacterium leprae**-ի մոտ հայտնաբերվող խեժը՝ լեպրոզինը, և լեպրոզինային թթուն պայմանավորում են դրանց կայունությունը թթուների, հիմքերի, սպիրտների, ինչպես նաև մակրոօրգանիզմում ֆագոլիզոսումային ֆերմենտների նկատմամբ։ Ցիլ-Նիլսենի եղանակով ներկվում են ալ կարմիր գույնով։ Օժտված են արտահայտված

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

պոլիմորֆիզմով, լեպրոնային թմբիկներում հանդիպում են հատիկանման, կոկանման, բուլավանման, թելանման, ճյուղավորված ձևերը, որոնք կազմում են գնդածև կուտակումներ: Հարուցիչներն այստեղ դասավորվում են միմյանց զուգահեռ՝ հիշեցնելով սիգարետների դասավորությունը տուփում: Որոշ հետազոտողների կարծիքով դրանք կարող են հանդես գալ նաև L-ձևերով (նկ.123):



Նկ.123. *Mycobacterium leprae*

**Ֆիզիոլոգիա:** Համարվում են բացարձակ ներբջջային պարագիտներ: Մինչ XX դարի 70-ական թվականները կենդանիների մոտ արիեստականորեն հիվանդության առաջացման վործերը հաջողություն չեն ունեցել: Ներկայումս դրանց կուլտիվացումը հնարավոր է իրականացնել զրահակիր զոլավոր արմադիների օրգանիզմում, որոշ բջջային կուլտուրաներում և բավականին դժվարությամբ մարդու արյան շիճուկով հարստացված, արյունակարտոֆիլագլիցերինային, ձվային միջավայրում կասերմանի միջավայր: Այս միջավայրում հարուցիչների աճը և բազմացումը, պայմանավորված գեներացիայի ժամանակահատվածի երկարատևությամբ՝ 12-30 օր, իրականանում է շատ դանդաղ, ցանքից 6-8 շաբաթ անց, չոր, կնճռոտված փառի տեսքով: Քայլայում են գյուկոզը և գլիցերինը, ինչը ծառայում է որպես ածխածնի աղբյուր: Անհի ու բազմացման

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

բարենպաստ ջերմաստիճանը  $34\text{--}35^{\circ}\text{C}$  է, ինչը պայմանավորում է դրանց խնամակցությունը ցածր ջերմաստիճանով հյուսվածքների նկատմամբ: Մակերեսային թաղանթային կառուցներում օքսիդավերականգնման ֆերմենտների (պերօքսիդազներ, ցիտոքրոմօքսիդազներ, սուսերօքսիդիամուտազներ և այլն) առկայությունը վկայում է շնչառության աերոր տիպի մասին: Պայմանավորված կուտիվացման դժվարություններով՝ կենսաքիմիական հատկությունները քիչ են ուսումնասիրված:

Բորի հարուցիչները օժտված են միկոբակտերիաներին բնորոշ ցեղային անտիգեններով և տեսակային գլիկոլիպիդային անտիգենով: Վերջինիս նկատմամբ սպեցիֆիկ հականարմինները հայտնաբերվում են միայն բորով հիվանդների մոտ, ինչը ունի կարևոր ախտորոշչիչ նշանակություն:

**Պաթոգենեզ և կլինիկա:** Օրգանիզմ ներթափանցած հարուցիչները, մուտքի դրաներում տեսանելի փոփոխություններ չառաջացնելով, լիմֆոհիմատոգեն ճանապարհով տարածվում են օրգանիզմում՝ ընտրողաբար ախտահարելով մաշկը, նյարդային վերջույթները, անորոշները և այլ օրգաններ ու հյուսվածքներ, պայմանավորելով գրանուլեմատոզ բորբոքային օջախների զարգացումը: Ընդ որում, ախտաբանական փոփոխությունները հյուսվածքներում պայմանավորված են ինչպես հարուցիչների կառուցվածքում առկա խեժաննան, ճարպային սպիտակուցային, գլիկոլիպիդային միացություններով, այնպես էլ առավելապես մակրոօրգանիզմում զարգացող իմուն ռեակցիաներով: Սպեցիֆիկ բորբոքային օջախները՝ գրանուլեմաները, հիվանդության տուբերկուլոիդ ձևի ժամանակ կազմավորված են թմբիկի կենտրոնում եպիթելիոիդ և գիգանտ բջիջներով՝ շրջափակված լիմֆոիդ վալիկով, իսկ լեպրոմատոզ ձևի դեպքում՝ հարուցիչներով հարուստ լեպրոզային բջիջներով, պլազմոնցիտներով, լիմֆոցիտներով ու ֆիբրոբլաստներով: Լեպրոզային բջիջների դերում հիմնականում հանդես են գալիս մակրոֆագերը, որոնք բնութագրվում են դժգույն կորիզով, փրփրում ցիտոպլազմայով՝ պայմանավորված միկոբակտերիաների

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

կենսագործունեության հետևանքով կուտակված մեծ քանակության լիփիդային միացություններով, ինչպես նաև անավարտ ֆագոցիողով:

Հիվանդության ինկուբացիոն շրջանը բավականին երկար է՝ 4-6 տարի, երբեմն 10-15 և ավելի: Պրոդրոմալ շրջանին բնորոշ է տենոր, թուլությունը, ախորժակի անկումը և որ կարևոր է ցավը ռուկրեում: Պայմանավորված օրգանիզմի ընդհանուր ռեզիստենտության մակարդակով՝ հիվանդությունը կարող է տարբեր կլինիկական ընթացք ունենալ՝ **տուլքերկուլոիդ՝** արտահայտվում է հիմնականում մի քանի սիմետրիկ դասավորությամբ, արտահայտված անեսթեզիայով գրանուլային օջախների դրսւորմանբ մաշկի ու լորձաթաղանթների մակերեսին: Դաճախ արձանագրվում է վերջույթների, դեմքի նյարդերի ախտահարման սիմպտոմներ: **Լեպրոմատոզ** ձևի ժամանակ գերազանցապես ախտահարվում է դեմքը, վերջույթների դիստալ հատվածները, ինչը արտահայտվում է տարածուն, կարմրագորշավուն լեպրոնային ինֆիլտրատների զարգացմանը, որոնց հետևանքով կարող է արձանագրվել մազաթափություն, «առյուծի դեմք»՝ պայմանավորված դեմքի ակոսների ու ծալքերի խորացմամբ: Ծանր դեպքերում ողջ օրգանիզմում հայտնաբերվում են բազմաթանակ լեպրոմաներ, որն արտահայտվում է ռուկրեի դեֆորմացիայով, պարեզներով, պարալիզներով, տարբեր օրգանիանակարգերի ֆունկցիաների խանգարմանբ, որոնք ել հիվանդի մահվան պատճառ են դառնում:

**Ինունիտետը:** Օրգանիզմում ընթացող ինուն տեղաշարժերը պայմանավորում են քջային տիպով անընկալության զարգացումը, որի ակտիվությունը առավել արտահայտված է հիվանդության տուլքերկուլոիդ ձևի ժամանակ և իջնում է նվազագույն մակարդակի կամ նույնիսկ բացակայում է լեպրոմատոզ ձևի դեպքում: Ինունիտետի ակտիվության որոշումը հիվանդների մոտ իրականացվում է լեպրամինի ներմաշկային ներարկման ժանապարհով՝ **Միցուղայի ռեակցիա,** որի նկատմամբ օրգանիզմի վաղ ռեակցիան արտահայտվում է ներարկումից 48 ժամ անց՝ հիպերեմիայի, ոչ մեծ

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

պապուլայի տեսքով, իսկ ուշ ռեակցիան՝ 2-4 շաբաթ անց թմբիկի, երբեմն նաև նեկրոզված հանգույցի տեսքով: Այն ունի կարևոր պրոգնոստիկ նշանակություն, քանի որ Միցուդայի դրական փորձը վկայությունն է օրգանիզմի ունակության ձևավորելու ինուն պատասխան լեպրայի միկրոբակտերիաների նկատմամբ: Այն դրական է տուբերկուլոիդ ձևի ու առողջ մարդկանց մեծամասնության մոտ, իսկ լեպրոնատող ձևով հիվանդների մոտ բացասական է պայմանավորված ինուն հաճակարգի հյուծնամբ:

Լաբորատոր ախտորոշումն իրականացվում է ի հիմնականում ախտաբանական նյութի՝ լորձի, ախտահարված մաշկի, քթի լորձաթղանթի քերուկի, օրգանների հյուսվածքների կտորների, բակտերիոսկոպիկ հետազոտությամբ: Տուբերկուլոզի հարուցիչներից տարբերակումն իրականացվում է սպիտակ մկներին ախտաբանական նյութի ներարկմամբ, որոնք բորի նկատմամբ ընկալ չեն:

**Բուժումը** կատարվում է հակաբիոտիկներով:

Կանխարգելումն ուղղված է ազգաբնակչության ընդհանուր սոցիալական կենսամակարդակի բարձրացմանը, հիվանդների կողմից անձնական հիգիենայի տարրական նորմերի պահպանմանը, ինչպես նաև հիվանդների մեկուսացմանն ու բուժմանը լեպրազորիայի կամ նույնիսկ տնային պայմաններում: Ներկայումս ստացված է վակցինա, որի կիրառումը ենթադրում է բորոտության գգալի նվազում:

### 11.5.5. Լեգեննելյոգ (L. pneumophila)

Դայտնաբերվել են XX դարի 70-ական թվականներին, ԱՄՆ-ում թքաբրոբի բռնկման ժամանակ, սակայն նույնանման հիվանդության բռնկումներ արձանագրվել են դեռևս 40-ական թվականներին, ինչի վկայությունն է, սուր ռեսպիրատոր հնֆեկցիաների տարբեր բռնկումներից հետո, հիվանդների պահպանված արյան շիճուկների ռետրոսպեկտիվ հետազոտությունների արդյունքները: Պայմանավորված այն հանգամանքով, որ հիվանդության առաջին հավաստի նկարագրությունը տրվել է «Ամերիկյան լեգիոնի» վետերանների

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

կոնգրեսի աշխատանքի ընթացքում թոքաբորբի բռնկման ժամանակ, որում ավելի քան 4000 մասնակիցներից ընդգրկվել էին 182-ը (29 լետալ վախճանով), իիվանդությունը ստացել է «Լեզիոներների հիվանդություն» կամ լեզիոնելյոզ անվանումը, իսկ անջատված հարուցիչը՝ *Legionella pneumophila*-ն, առանձնացվել է *Legionella* ցեղում: Ներկայում ցեղն ընդգրկում է 9 տեսակ:

**Մորֆոլոգիա և ֆիզիոլոգիա:** Հիմնականում միջին չափերի՝ 2-3 մկմ երկարությամբ, 0.5-0.7 մկմ լայնակի կտրվածքով, երբեմն ավելի խոշոր, արտահայտված պոլիմորֆիզմի հակումով, գրամ բացասական ցուցիկներ են (նկ.124):



**Նկ.124. *Legionella*-ների բազմացումը մակրոֆազերում**

Բջջապատում ճարպաթուների օգալի քանակության առկայությունը պայմանավորում է դրանց ներկումը առավելապես Ռոմանվակի-Գիմզայի եղանակով: Որոշ շտամների ուլտրամանուշակագույն ճառագայթումն առաջացնում է բաց երկնագույն լուսարձակում (ֆյուտրեսցենցիա): Պատիճ և սպոր չեն առաջացնում, շարժուն են՝ ի հաշիվ բևեռային դասավորության մեկ կամ երկու մտրակների: Ֆակուլտատիվ անաերոր են աերորի գերակայությամբ: Աճի ու բազմացնան բարենպաստ ջերմաստիճանը 35°C է, pH-ը՝ 6.9, ընդ որում բավականին օգայուն են բH-ի նույնիսկ չնչին փոփոխությունների նկատմամբ: Սմնդային միջավայրերի նկատ-

## ՄԱՍՏԻՎՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

մանք պահանջկոտ են, լավ աճում ու բազմանում են ցիստեհնով, թիրողինով, հեմոգլոբինով հարստացված միջավայրերում: Նշվում է արյունային ագարի, հիմնային ագարի կիրառության հնարավորությունը, սակայն առավել ընդունելի է ածխադրուժային ագարը: Դարկ է նշել, որ կուլտիվացումը, անկախ կիրառվող միջավայրերից, անհրաժեշտ է կազմակերպել բարձր խոնավության պայմաններում: Լեզիոնելաների կուլտիվացումը կարելի է իրականացնել նաև դրանց բնական տերերի՝ անեռաների օրգանիզմում և մակրոֆագային բջջային կուլտուրաներում: Հեղուկ սննդամիջավայրեր գործնականում չեն կիրառվում: Պինդ միջավայրերում, մասնավորապես ածխախնորասնկային ագարում, ցանքից 3-5 օր անց արձանագրվում են մոխրադարչնագույն երանգով, ապակենման, S զաղութներ, որոնք ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցությամբ լուսարձակում են: Շաքարոլիտիկ ակտիվությամբ օժտված չեն: Օքսիդազա, կատալազա դրական են, ուրեազա՝ բացասական, ջրիկացնում են ժելատինը, նիտրատները չեն վերականգնում:

Լեզիոնելաների կառուցվածքում տարբերում են տիպային և խմբային սպեցիֆիկության անտիգեններ, որոնցով իրականացվում է դրանց տարրերակումը: Դայտնի է շուրջ 12 շճախումբ, որոնցից թոքաբորբերի էթիոլոգիայում առավել հաճախ հանդիպում է առաջին շճախումբը:

**Ախտածնությունը** մեծապես պայմանավորված է մակրոֆագային համակարգի բջջներում պարագիտելու ունակությամբ, ինչին նպաստում են մի շարք գործոններ՝

◆ **Պեպտիդային տոքսիկ միացություններ**, որոնք ճնշում են օքսիդացիոն պայթյունը, խոչընդոտում են ֆագոլիզոսոմի առաջացումը, կապվելով կոմպլեմենտի համակարգի 3b ֆուակցիայի հետ՝ ինակտիվացնում են այն:

◆ **ճնշում** են ՀՀԱ-ների էքսպրեսիան մակրոֆագերի մակերեսին՝ խանգարելով դրանց կողմից անտիգենի ներկայացումը CD4<sup>+</sup> բջիջներին:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

♦ Բակտերիային կատալազան ճնշում է մակրոֆագերի խթանման հետևանքով՝ առաջացած թթվածնի տոքսիկ մետաբոլիտների ակտիվությունը:

♦ Ցիտոտոքսիկություն:

♦ Ռեմոլիզինություն:

♦ Էնդոտոքսին:

**Պաթոգենեզ և կլինիկա:** Դարուցիչի բնական շտեմարան են կապտականաց ջրիմուռները, ինչպես նաև ազատ այրող ամեռաբները: Դայտնաբերվում են հիմնականում բաց ջրամբարներում և հողում: Ինֆեկցիայի աղբյուր են հիվանդ մարդիկ: Վարակվում են աերոգեն մեխանիզմով: Անցնելով շնչական ուղիներով՝ ախտահարում են հիմնականում թոքային հյուսվածքը՝ ընդգրկելով առավել ինտեսիվ գազավիխանակության գոտիները: Ինֆեկցված ալվեոլար մակրոֆագերը սկսում են ինտեսիվորեն արտազատել ցիտոկիններ՝ խթանելով բորբոքային ռեակցիայի զարգացումը: Թոքային պարենքիմայում զարգանում են բազմաթիվ թարախակույտեր (աքսցեներ), որոնք կարող են պատռվել՝ առաջացնելով խոռոչներ (կավերնաներ): Դետագայում հարուցիչները արյան հոսքով գեներալիզացվում են՝ ախտահարելով այլ օրգաններ և հյուսվածքներ: Տարբերում են լեզվոնելոզի երկու հիմնական կլինիկական ձևեր:

**Լեզվոների հիվանդություն:** Ընթանում է ծանր թոքաբորբի (պնևմոնիա) կլինիկական ախտանիշներով: Ինկուբացիոն շրջանը 2-10 օր է: Պրոդրոմալ շրջանը սկսվում է ընդհանուր բնույթի գանգատմերով՝ ջերմության բարձրացում, գլխացավ, մկանացավ, չոր հազ: Այնուհետև հիվանդության 4-5 օրերից սկսած՝ առավելապես թոքերի ստորին հատվածներում, մեկ և երկողմանի օջախային կամ թլքային պնևմոնիայի, երբեմն ինտերստիցիալ պնևմոնիայի, սուր ալվեոլիտի զարգացման արդյունքում, արձանագրվում է տենդ, սարսուռ, շնչահեղձություն, ատաքսիա, զառանցանք, հայուցինացիաներ, որոշ հիվանդների մոտ՝ փսխում, լուծ, լարող ախտահարում և այլն: Ծանր դեպքերում զարգանում է թոք-սրտային անբավարություն, ինչը կարող է մահացու (լետալ) վախճան ունենալ: Մահացությունը

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱՔՏԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Եզակի հիվանդացության դեպքերում տատանվում է 15%-ի սահման-ներում, բռնկումների ժամանակ այն կարող է հասնել մինչև 60%-ի:

**Պոնտիակյան տենդ:** Ընթանում է սուր շնչառական (ռեսպիրատոր) ինֆեկցիաներին բնորոշ սինդրոմներով՝ տենդ, սարսուր, օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիա, գլխացավ, մկանացավ՝ առանց պնևմոնիայի ախտանիշների: Վերջին հանգամանքով է պայմանավորված հիվանդության բարենպաստ ելքը, նույնիսկ առանց հատուկ բուժական միջոցառումների: Մահացու դեպքեր գրեթե չեն արձանագրվում:

**Իմունիտետ:** Կրկնակի հիվանդացման դեպքեր գրեթե չեն արձանագրվում, ինչը հավանաբար պայմանավորված է գերազանցապես անընկալության քջային մեխանիզմով:

**Լաբորատոր ախտորոշումն** իրականացվում է հիմնականում բակտերիոսկոպիկ եղանակով՝ ուղղակի իմունաֆլյուուրեսցենտային մեթոդ, շճախտորոշումը կատարվում է իմունաֆերմենտային անալիզի մեթոդով՝ արյան շիճուկներում սպեցիֆիկ հակամարմինների հայտնաբերման նպատակով:

**Բուժումը** կատարվում է վերջին սերնդի հակաբիոտիկ պրեպարատներով, քանի որ *Legionella pneumophila*-ի շտամների մեծամասնությունը սինթեզում է β-լակտամազներ:

### 11.6. ԱԿՏԻՆՈՍԻԿՈԶՆԵՐ

Հարուցվում են ***Actinomyces*** ցեղին դասվող շողասնկերով, որոնց տիպային տեսակն է ***Actinomyces bovis*-ը**: Կազմավորման մակարդակով զբաղեցնում են միջանկյալ տեղ բակտերիաների և սնկերի միջև (հուն. *aktis*-շղող, ճառագայթ, *mykes*-սունկ): Դրանց ճնշող մեծամասնությունը ազատ ապրող սապրոֆիտներ են, առանձին պայմանական ախտածին տեսակներ մարդու նորմալ միկրոֆլորայի ներկայացուցիչներ են և որոշակի պայմաններում կարող են առաջացնել ակտինոմիկոզներ:

**Սորֆոլոգիա և ֆիզիոլոգիա:** Բարակ, միջին չափերի, պոլիմորֆ ցուրփիկներ են: Արհեստական սննդային միջավայրերում առաջա-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Եռամ են իսկական (թելիկները զուրկ են միջնապատերից) **միցելներ՝** սուլքատրատային կամ օդային, որոնք մինչև 1մկմ տրամագծով և 100-600մկմ երկարությամբ թելիկների ծյուղավորված խուրձ են: Օդային միցելի թելիկների վրա գտնվում են սպորներ և **պտղաբեր ճյուղեր (հիֆեր):** Ցուպիկանման ձևերի ծայրերը հաճախ հաստացած են: Գրամ դրական են, անշարժ, որոշ տեսակները կարող են առաջացնել պոլիսախարիդային պատիճ: Բազմանում են անսեռ ճանապարհով սպորներով, հիֆերի մասնատնամբ կամ բողբջնամբ: Յիմնականում անաերոր են: Սենդային միջավայրերի նկատմամբ պահանջկոտ չեն: Պինդ միջավայրերում առաջացնում են փոքր չափերի, տարբեր գունավորմամբ (նանուշակագույն, կապույտ, կանաչ, կարմիր, գորշ), հարթ կամ անհարթ եզրերով գաղութներ: Կենսաքիմիական ակտիվությունը բազմազան է, դրանցից շատերը սինթեզում են Բ խմբի վիտամիններ, հակաբիոտիկ նյութեր, ինչը մեծապես կիրառվում է միկրոբիոլոգիական արդյունաբերությունում: Ախտածին տեսակներն օժտված են արտահայտված պրոտեոլիտիկ և շաքարոլիտիկ ակտիվությամբ (շաքարները տարալութում են մինչև թթվի առաջացնման):

**Ակտինոմիկոզները** տարբեր օրգան-համակարգերի, քրոնիկական, գրանուլեմատոզ, **բարախարբորբօքային** հիվանդություններ են, հաճախ արսցեսների և խուղակների ձևավորմամբ: Ախտահարված հյուսվածքներում առաջանում են յուրօդինակ նորֆոլոգիական կառույցներ՝ **դրուզներ,** որոնք կենտրոնում խառը միահյուսված, դեպի պերիֆերիան ճառագայթած ձգվող միցելների կուտակումներ են: **Անտիգենությունը** պայմանավորված է հիմնականում բջջապատի պոլիսախարիդով **տեսակային անտիգեն:** Էկզոտոքսին չեն սինթեզում, վիրուլենտության գործոններից են պատիճը, արհեզիվության և ագրեսիվության ֆերմենտները: Բորբոքային օջախում ֆազոցիտոզն անավարտ է: Շրջակա միջավայրում բավականին կայուն են, կարող են դիմակայել և բազմանալ ջերմաստիճանային ու րH-ի լայն դիապազոնում (րH 4.5-9.0):

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Նոկարդիաներն առաջացնում են համանուն՝ նոկարդիոզ հիվանդությունը, որը հիմնականում ընթանում է ներքին օրգանների, հաճախ թոքերի, մաշկի, ենթամաշկի, ոսկրերի թարախսային բորբոքումներով: Մորֆոլոգիական, կուլտուրալ հատկություններով նման են ինչպես ակտինոմիցետներին, այնպես էլ միկրօբակտերիաներին: Դանդիպում են և ցուպիկանման, և թելանման ձևերը, միցելն ավելի արտահայտված է, քան շողասնկերինը, անշարժ են, թթվակայուն, գրան դրական են: Տարբեր տեսակների մոտ գերակշռում է շնչառության աերոր տիպը: Շրջակա միջավայրի ազդակների նկատմամբ բավականին կայուն են, երկարատև կարող են պահպանվել հողում, ինչը համարվում է նրանց բնական շտեմարանը:

### 11.7. ՍՊԻՐՈԽԵՏՈԶՆԵՐ

Պայմանավորված մի շարք մորֆոլոգիական և կենսաբանական հատկություններով՝ սպիրոխետներն ընդգրկվել են Spirochaetales (հուն. speira-գալար, պարույր, chaite-մազ, թելիկ) կարգում, որը բաղկացած է 2 ընտանիքից՝ Spirochaetaceae և Leptospiraceae. Spirochetaceae ընտանիքում մարդու համար ախտածին են *Borrelia* և *Treponema* ցեղերը: Leptospiraceae ընտանիքը ներկայացված է *Leptospira* ցեղով, որի տարբեր տեսակները ախտածին են մարդու և կենդանիների համար: Ոլորուն, շարժուն միկրոօրգանիզմներ են, որոնց չափերը տատանվում են շատ լայն սահմաններում 0.1-0.3 X 5-250մկմ, ընդ որում առավել փոքր չափերով բնութագրվում են մարդու համար ախտածին տեսակները: Ոչ ախտածինները չափերով ավելի խոշոր են, կառուցվածքով՝ կոպիտ, իսկ շարժումները սահմանափակ են: Վերջիններս որոշակիորեն ներկայացված են մարդու նորմալ միկրոֆլորայի կազմում *T.refringens*, *T.buccalis*, *T.denticola*: Գրամի եղանակով բոլոր սպիրոխետները ներկվում են բացասական: Դիմնական կառուցվածքային միավորը պրոտոպլազմատիկ գլանն է՝ ցիտոպլազման շրջափակված ցիտոպլազմատիկ թաղանթով, որն արտաքինից պատված է բազմաշերտ թաղանթով՝ բջջապատով: Ցիտոպլազմատիկ գլանի և արտաքին թաղանթի միջև,

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

իսկ որոշ հեղինակների կարծիքով բջջապատի հաստության մեջ ցիտոպլազմատիկ գլամի երկու ծայրերի հաստացումներից (բլեֆարոպլաստներից) սկսվում և դեպի բջջի կենտրոն միմյանց ընդառաջ են գնում ֆիբրիլներ, որոնք ոլորվում են ինչպես իրենց առանցքի, այնպես էլ մեկը մյուսի և արոտովլազմատիկ գլամի շուրջը՝ պայմանավորելով միկրոօրգանիզմի ոլորում կառուցվածքը։ Ֆիբրիլների քանակը, դրանցով պայմանավորված առաջնային գալարների համաչափությունը, աճալիտուդան, հաճախականությունը և առաջացրած երկրորդային գալարները նշանակություն ունեն նշված միկրոօրգանիզմների դասակարգման և տարբերակման առումով։


### 11.7.1. Սիֆիլիս (*T.pallidum*)

**Տրոպոմա** ցեղն ընդգրկում է մարդու համար ախտածին 4 տեսակ, որոնք հարուցում են համապատասխան հիվանդություններ՝ *T.pallidum* - սիֆիլիս, *T.pertenue* - ֆրամբեզիա, *T.carateum* - պինտա և *T.bejel* - բեյջել։ Նշված միկրոօրգանիզմներով հարուցված ինֆեկցիաների ժամանակ սիֆիլիսի նկատմամբ դրված բոլոր կենսաբանական ռեակցիաները դրական են, հաստատված է նաև խաչաձև ինունիտետը, ինչպես փորձարարական կենդանիների, այնպես էլ մարդկանց մոտ։ Մարդու ախտաբանությունում առավել մեծ դեր ունի *T.pallidum*-ը՝ դժգույն տրեպոնեման, որը հայտնաբերվել է 1905-ին Ֆ.Շաուլինի և Է.Ռոֆմանի կողմից, սիֆիլիսով հիվանդի մոտ։

**Սորֆոլոգիա:** Ինչպես *Spirochaetales* կարգին դասվող բոլոր միկրոօրգանիզմները, ունեն պարուրած կառուցվածք, 0.1-0.2x6.0-20.0մկմ չափեր։ Որպես կանոն երկորորդային գալարներ չեն առաջացնում, առաջնային գալարները՝ թվով 8-12, տեղաբաշխված են բջջի երկարությամբ հավասարաչափ, մոտ 1մկմ հեռավորությամբ (նկ.125)։ Էլեկտրոնային մանրադիտակի տակ նմանվում են անձրևորդի, սակայն նկարագրված սպիրալամնան ձևի հետ միասին դրանց գոյատևման ցիկլը մակրոօրգանիզմում, կարող է ներառել

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Առակ հատիկավոր և ցիստաննան, սֆերիկ մարմինների էտապները, և հենց այդ հատիկավոր ձևերն են, որ ունակ են անցնելու բակտերիային ֆիլտրերով: Վատ են ներկվում անիլինային ներկերով, Ունանովսկի-Գինզայի եղանակով երկարատև ներկման պայմաններում ծեռք են բերում բույլ վարդագույն երանգ, ինչով և պայմանավորված է անվանումը՝ դժգույն տրեպոնեմա: Վերականգնում են արծաթի նիտրատը մետաղական արծաթի, որը նստում է միկրոօրգանիզմի մակերեսին և հյուսվածքներում նրան տեսանելի է դարձնում:



Նկ. 125. *T.pallidum*

**Կուլտուրալ հատկություններ և կենսաքիմիական ակտիվություն:** Սովորաբար բազմանում են միջաձիգ կիսման ճանապարհով՝ գեներացիայի ժամանակը 30 ժամ է: Ծնչառության տիպով անաերոր են: Սմնդամիջավայրերի նկատմամբ խիստ պահանջկոտ են, աճի և բազմացման համար անհրաժեշտ են շուրջ 11 ամինաթրու, աղեր, վիտամիններ, շիճուկային ալբումին: Առաջին անգամ մաքուր կուլտուրան անջատվել է Յա.Գ.Շերեշևսկու կողմից դեռևս 1909-ին, ձիու կիսանակարդված շիճուկում: Ներկայումս տրեպոնեմաների կուլտիվացման համար օգտագործվում է ՄՊԱ կամ յարդային

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

միջավայր՝ ավելացրած ճագարի յարդի և ամործիների կտորներ, որոնցում մանր գաղութները ի հայտ են գալիս ցանքի 3-5 օրերի ընթացքում: Դետագա գեներացիաներում հնարավոր է բազմացումը նաև Կիտտ-Տարոցի միջավայրում, սակայն ախտածին սպիրոխետների կուլտիվացման առավել արդյունավետ միջոցը ճագարների ամործու վարակումն է, եքսպերիմենտալ օրինակու առաջացումը: Կենսաքիմիական հատկությունները քիչ են ուսումնասիրված: Կատալազա, օքսիդազա, ուրեազա բացասական են, որոշ առավել ախտածին շտամներ կարող են տարրալուծել մի շարք շաքարներ, քայլայել սպիրակուցներն ինդոլի և ծծմբաջրածնի առաջացմանը, ջրիկացնել ժելատինը: Եզակի շտամներ կարող են հեմոլիզել մարդու էրիթրոցիտները:

**Անտիգեններ:** T.pallidum-ի կառուցվածքում առկա է սպիրակուցային՝ սպեցիֆիկ, պոլիսախարիդային և լիպիդային՝ ոչ սպեցիֆիկ, անտիգեններ: Վերջինս օժտված է խաչածն փոխազդեցությամբ խոշոր եղջերավոր կենդանիների սրտամկանի լիպիդային անտիգենի հետ, ինչն ընկած է **Վասերմանի** կոմպլեմենտի կապման ռեակցիայի հիմքում: Ծճախմբերի և շճավարիանտների չի տարրերակվում: Դարկ է նշել, որ կուրտուրալ և հյուսվածքային տրեպոնեմաների անտիգենային կազմը գրեթե չեն տարրերվում միմյանցից, և կուլտուրալ տրեպոնեմաներից պատրաստված անտիգենը կիրառվում է շճաբանական ռեակցիաներում:

**Դամաճարակաբանություն:** Տիպիկ անթրոպոնոզ վեներական հիվանդություն է: Ինֆեկցիայի աղբյուրը հիվանդ մարդն է՝ սովորաբար մինչև 5 տարվա ընթացքում: Դիվանդության ավելի ուշ շրջանում հիվանդները սակավ վարակիչ են: Վարակումը հիմնականում տեղի է ունենում սեռական ճանապարհով, հազվադեպ տրանսպլացենտար՝ հիվանդ մորից նարածնին (ի ծնե սիֆիլիս): Դարկ է նշել, որ հղիության առաջին շորս ամիսների ընթացքում տրեպոնեմաները ունակ չեն անցնելու պլացենտար պատճեշը, և գործնականում հնարավոր է մոր բուժումն ու պտղի ապահովումը սիֆիլիսով հիվանդանալուց: Չի բացառվում նաև պրոֆեսիոնալ վարակումը՝

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

հիվանդի արյան կամ այլ կենսաբանական հեղուկների հետ բուժաշխատողների անմիջական շփման ճանապարհով: Տեսականորեն հնարավոր է նաև վարակումը կենցաղ-կոնտակտային ճանապարհով (ճաշի սպասք, անձնական և անկողնային սպիտակեղեն և այլն): Փորձարարական ճանապարհով հնարավոր է կապիկների, ծովախողուկների, ճագարների վարակումը: Վերջիններիս մոտ վարակն ընթանում է անախտանիշ:

Արտաքին ազդակների նկատմանը տրեպոնեմաները անկայուն են. շատ արագ ոչնչանում են չորացման և բարձր ջերմաստիճանի պայմաններում: Ակնթարթորեն կորցնում են շարժունակությունը և ոչնչանում են 0.3-0.5%-ամոց աղաթքվի լուծույթում, մկնդեղի, բիսմուտի, սնդիկի պրեպարատների միջավայրում: Արյան և արյան պրեպարատներում  $4^{\circ}\text{C}$ -ի պայմաններում կենսունակությունը պահպանում են 24 ժամ, ինչն անհրաժեշտ է նկատի ունենալ փոխներարկումների ժամանակ:

**Պաթոգենեզ և վիրուլենտության գործոններ:** Մուտքի դրնով ներթափանցելով՝ տրեպոնեմաները ոչ միայն կլանվում են մակրոֆագների կողմից, այլև ակտիվորեն թափանցում են ձևավորվող սպեցիֆիկ բորբոքային օջախի այլ բջջային տարրերի՝ ֆիբրոբլաստների, լիմֆոիդ, էպիթելային, անօբների էնդոթելային և այլ բջիջների ներքին միջավայր, որոնցում ինտենսիվորեն բազմանալով, հանգեցնում են դրանց ոչնչացմանը: Վերջիններիս ամբողջականության խախտումից հետո վիրուլենտ տրեպոնեմաների մի մասը մնում է շրջափակված ֆագոստի թաղանթներով, ինչը դրանց դարձնում է առավել քիչ մատչելի քիմիոթերապևտիկ պրեպարատների և հակամարմինների համար ու նպաստում է ինֆեկցիոն պրոցեսի գեներալիզացմանը: Տրեպոնեմաների որոշ մասն էլ տարրալուծվում են, որի հետևանքով անջատվում է էնդոտոքսինը: Էկզոտոքսին չեն արտազատում:

**Կիրակա:** Ինկուբացիոն շրջանը սիֆիլիսի ժամանակ տատանվում է 2-10 շաբաթ, միջինը՝ մինչև 4 շաբաթ: Յարուցիչների համար մուտքի դուր են հիմնականում սեռական օրգանների, հազվադեպ՝

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

բերանի խոռոչի, ուղիղ աղիքի լորձաթաղանթները, ինչպես նաև վնասված մաշկը: Դիվանդության առաջին իսկ օրերից տրեպոնեմաներն անցնում են արյան հոսք և տարածվում բոլոր օրգաններն ու հյուսվածքները, այդ թվում նաև պերիֆերիկ ու կենտրոնական նյարդային համակարգ՝ պայմանավորելով օրգանիզմի ռեակտիվության աստիճանական փոփոխությունը տրեպոնեմային հակածինների նկատմամբ, ինչը առավել հստակ արտահայտվում է հետագա փուլերում:

Հարուցիչների ներթափանցման վայրում **առաջնային սիֆիլիմայի** (կարծր շանկը՝ 1-2 սմ տրամագծով, շոշափման ժամանակ կարծր հիմքով, փայլուն մակերեսով խոց) առաջացումով սկսվում է սիֆիլիսի **առաջնային շրջանը**, որը շարունակվում է շուրջ 6-7 շաբաթ: Սովորաբար կարծր շանկի առաջացումից մեկ շաբաթ անց արձանագրվում է սահմանային ավշային հանգույցների մեծացում, հարուցիչների անցում արյան հոսք և **տրեպոնեմային սեպտիցեմիայի** զարգացում: Առաջնային սիֆիլիսի ընթացքում արյան շիճուկում բարձրանում է տարբեր դասերի, այդ թվում նաև Ե-ինունոգլոբուլինների խտությունը տրեպոնեմաների անտիգենների նկատմամբ, որի հետևանքով շճաբանական ռեակցիաները լինում են դրական, ինչը թույլ է տալիս առաջին շրջանը բաժանել սերոպոզիտիվ և սերոնեգատիվ ենթափուլերի:

**Երկրորդային սիֆիլիսը** սկսվում է մաշկի և լորձաթաղանթների գեներալիզացված ցանի առաջացումով, ի հայտ են գալիս ներքին օրգանների, հենաշարժական ապարատի և նյարդային համակարգի կլինիկորեն արտահայտված ախտահարումներ՝ հեպատիտ, նեֆրոզ, պերիօստիտ, արթրիտ, մենինգիտ և այլն: Այն ձգվում է շուրջ 3-4 տարի և դրսևորվում է մի քանի ռեցիդիվներով՝ պայմանավորված տրեպոնեմաների երկարատև պերսիստենցիայով: Հյուսվածքների ախտաբանական փոփոխությունները բնութագրվում են համեմատաբար արագ, ինքնաբերաբար վերացման հակումով ու դեստրուկտիվ փոփոխությունների բացակայությամբ: Երկրորդային

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

սիֆիլիսի ընթացքում օրգանիզմում զարգանում է ոչ ստերիլ կամ ինֆեկցիոն անընկալություն:

Երրորդային սիֆիլիսը բնորոշվում է սահմանազատված կամ տարածուն սպեցիֆիկ ինֆիլտրատների՝ գումաների, առաջացումով: Վերջիններս հետևանք են օրգանիզմում իմունաախտաբանական պրոցեսների (դանդաղ տիպի գերզգայունություն, առտոդիմուն ռեակցիաներ) զարգացման՝ ի պատասխան առկա տրեպոնեմաների: Գումաները հակված են քայլայման, ինչը հետագայում կարող է պայմանավորել ախտահարված օրգաններում և հյուսվածքներում առավել ծանր և ծավալուն դեստրուկտիվ փոփոխությունների առաջացումը: Երրորդային ախտահարումները զարգանում են հիվանդության 3-ից 6 տարվա ընթացքում, բայց երբեմն նաև տասնյակ տարիներ անց: Ուցիղիվները այս փոլում արձանագրվում են հազվադեպ և սովորաբար միմյանցից բաժանվում են երկարատև՝ տարիներ տևող, գաղտնի շրջանով: Բորբոքային օջախներում դժգույն տրեպոնեմաները հանդիպում են շատ չնշին քանակով, և հավանաբար դրանով է բացատրվում այս շրջանում հիվանդների ավելի քիչ վարակելիությունը:

Որոշ ռեապտերում, սովորաբար երկարատև գաղտնի շրջանից հետո, հիմնականում վատ բուժված կամ չբուժված հիվանդների մոտ կարող է զարգանալ կենտրոնական նյարդային հանակարգի ծանր ախտահարումներ, պրոգրեսիվ պարալիչի կամ ողնուղեղային չորուկի ձևով: Սակայն դրանք մեկուսի ախտահարումներ չեն, և շատ հաճախ ուղեկցվում են օրգանիզմի բազմազան հյուսվածքների և ներքին օրգանների՝ հիմնականում սրտի, առոտայի, սարդի, երիկամների, թոքերի՝ վիսցերալ սիֆիլիս, ծանր ախտանատոմիական, ախտաֆիզիոլոգիական փոփոխություններով:

Դարկ է նշել, որ բացի վերը նշված կլասիկ ընթացքից, սիֆիլիսը կարող է ընթանալ նաև ատիպիկ ձևերով, ինչպիսիք են՝ գաղտնի սիֆիլիսը, սիֆիլիսն առանց շանկրի կամ գլխատված սիֆիլիս՝ հիմնականում արձանագրվում է արյան փոխներարկումներից հետո (պարենտերալ վարակում), չարորուկ սիֆիլիսը և այլն:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՐԵԱՐԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Ցետինֆեկցիոն իմունիտետ չի ձևավորվում, և կարող է հանդիպել կրկնակի և նույնիսկ բազմակի հիվանդացման դեպքեր, չնայած մակրոօրգանիզմում տրեպոնեմաները խթանում են սպեցիֆիկ հակամարմինների սինթեզը, որոնք առաջացնում են կենսունակ, շարժում տրեպոնեմաների անշարժացում և մահ, *T. pallidum*-ի առկայությամբ կապում են կոմալեմենտը՝ պայմանավորելով հարուցիչների լիզիսը: Ցիվանդության ընթացքում ինֆեկցիոն ինունիտետի զարգացումը նվազեցնում է սուպեր ինֆեկցիայի հնարավորությունը: Օրգանիզմից դժգույն տրեպոնեմաների լիակատար հեռացման դեպքում մարդը դառնում է ընկալ: Ուեինֆեկցիայի դեպքում հիվանդությունը անցնում է նույն նկարագրված շրջանները:

Լաբորատոր ախտորոշման համար առավել մատչելի մեթոդ՝ շանկրի, ցանային էլեմենտների մակերեսներից պատրաստված պրեպարատների, մանրադիտակային հետազոտությունն է: Ծաբանական ախտորոշումը կատարվում է իիմնականում **Վասերմանի** կոմպլեմենտի կապման ռեակցիայով՝ տրեպոնեմային (սպեցիֆիկ անտիգեն) և կարդիլիպիդային (ոչ սպեցիֆիկ անտիգեն) անտիգենների կիրառմամբ: Կիրառվում են նաև այլ շճաբանական ռեակցիաներ:

Սպեցիֆիկ պրոֆիլակտիկայի միջոցներ չկան, բուժումը կատարվում է հակաբիոտիկներով:


### 11.7.2. Համաճարակային հետադարձ տիֆ (B. recurrentis)

Համաճարակային հետադարձ տիֆը սուր, անթրոպոնոզ հիվանդություն է՝ տրանսմիսիվ փոխանցման մեխանիզմով, համաճարակային հակումով: Հարուցիչն է **Borrelia recurrentis**-ը, որը հայտնաբերվել է O. Оբերմեյերի կողմից 1868-ին: Ցիվանդության հավաստի նկարագրությունը՝ դեռևս 1700-ական թվականներին, հրապարակել է Ռատտին «Վերադարձներով հնգօրյա տենր» անվանումով: XX դարի սկզբին ապացուցվել է ոչիլների դերը ինֆեկցիայի փոխանցման խնդրում: Ներկայումս հանդիպում է

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Իիվանդության «ոզլային հետադարձ տիֆ», «հետադարձ տենդ», «հետադարձ սպիրոխետոզ» անվանումները:

**Մորֆոլոգիա:** Բարակ, 0.3-0.6մկմ տրամագծով, 8-18մկմ երկարությամբ պարուրածն, 3-8 անհամաչափ գալարներով, բարակած ծայրերով, գորամ բացասական միկրոօղգանիզմներ են (նկ.126): Լավ



**Նկ.126. *Borrelia recurrentis***

ներկվում են անիլինային ներկերով: Ոտմանովսկու-Գիմզայի եղանակով ներկվում են կապտանանուշակագույն: Խիստ անաերոբներ են, կուլտիվացվում են կենդանական ծագման չբնագրկված սպիտակուցներով հարուստ սննդամիջավայրերում, հավի աճող սաղմում: Աճման բարենպաստ ջերմաստիճանը 30-37°C է, pH-ը՝ 7.2-7.4: Բորելիաների մակերեսային անտիգենները շատ փոփոխական են: Տարբերակման համար չճարանական, ինչպես նաև կենսաքիմիական ռեակցիաներ չեն կիրառում:

**Դաշտարակաբանություն:** Արտաքին միջավայրի ազդակների նկատմամբ բավականին զգայուն են, արագ ոչնչանում են 50°C-ի պայմաններում: Լավ գոյատևում են ցածր ջերմաստիճաններում: Սննդամթերքում պահպանվում են մի քանի օր: Ինֆեկցիայի միակ աղբյուրը իիվանդ մարդն է: Փոխանցողներ են իիմնականում հագուստի ողիլները, սակայն չի բացառվում նաև գլխի և ցայլքոջիլների դերը: Իիվանդի արյունը ծծելուց հետո բորելիաները բազմանում են ոչիլի հետոլիմֆայում և արդեն 1 շաբաթ անց դրանք դաշնում են վարակիչ: Մարդը վարակվում է ոչիլի ճզմնան և

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՐԴԱՐԱՆ ՈՒԹՅՈՒՆ

հեմոլիմֆայի մաշկի քերծվածքներին շփվելու հետևանքով: Հնարավոր է վարակումը նաև հեմոլիմֆայի լորձաթաղանքների հետ շփման ժամանակ: Ոչիլները հարուցիչին տրանսօվարիալ ճանապարհով սերնդին չեն փոխանցում: Առավելագույն հիվանդացությունը արձանագրվում է ծննան-գարնան ամիսներին:

**Պաթոգենեզ:** Անցնելով օրգանիզմի ներքին միջավայր՝ բորելիանները ինտենսիվորեն բազմանում են լիմֆոիդ, նաև լիմֆադային հանակարգի քջիջներում և անցնում արյան հոսք՝ բորելիմիա, որտեղ դրանց որոշ մասի քայլայման արդյունքում անջատվում է մեծ քանակության էնդոտոքսին, որը կլինիկորեն դրսևորվում է տենդի նոպայով: Ավելի ուշ օրգանիզմի ոչ սպեցիֆիկ և սպեցիֆիկ պաշտպանական մեխանիզմների (ֆագոցիտոզ, սպեցիֆիկ հակամարմիններ) միջոցով հարուցիչները ոչնչացվում են, տոքսինները՝ չեղոքացվում, և արձանագրվում է ջերմության կտրուկ անկում ու նոպայի մարում: Սակայն հարուցիչների մի մասը պահպանվում է և բազմանում իիմնականում ոսկրածուծում, ԿՆ-ում՝ առաջացնելով նոր անտիգենային հատկություններով սերունդ, որոնք անցնելով արյան հոսք՝ պայմանավորում են հիվանդության նոր նոպան: Այնուհետև նույն պրոցեսը բազմից կրկնվում է, և յուրաքանչյուր դեպքում արյան մեջ կուտակվում են հակամարմիններ՝ յուրահատուկ հարուցիչների նոր սերնդին, ինչը նպաստում է հարուցիչների, դրանց տոքսինների վնասագերծնանն ու օրգանիզմից հեռացնանքը: Սրանով հիվանդությունն անցնում է ապաքինման փուլ:

Ախտաբանական փոփոխություններն առավել հստակ արձանագրվում են փայծաղում, յարդում, ոսկրածուծում, որոնցում հակամարմինների ազդեցությամբ առաջանում են բորելիաների ազդագատներ, արյան մազանոթների խցանում և արյան միկրոշրջանառության խանգարումներ: Փայծաղը, յարդը մեծացած են, նկատվում են նեկրոտիկ օջախներ: Արյունազեղումներ, նեկրոտիկ բորբքային օջախներ են արձանագրվում նաև երիկամներում, միոկարդում, էնդոկարդում, սրտամկամի նյարդային հանգույցներում, գլխուղեղում, հատկապես ցողունային մասի թաղանթներում:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**Կլիմիկա:** Ինկուբացիոն շրջանը 3-14 օր է: Ցիվանդությունը սկսվում է համկարծակի՝ դողով, սարսուռով, ջերմության բարձրացումով՝ մի քանի ժամվա ընթացքում մինչև  $39\text{-}40^{\circ}\text{C}$ : Արձանագրվում է տանջող գլխացավեր, մկանացավեր, հոդացավեր, անքնություն: Ախտրժակը բացակայում է, կարող է նկատվել սրտխառնոց, փսխում, լուծ: Տիպիկ ախտանիշներից է ձախ ենթակողում բութ ցավերի զգացումը՝ պայմանավորված փայծաղի ախտահարմանք և մեծացմանք: Յաճախ միաժամանակ նկատվում է հեպատոմեգալիա և դեղնուկի զարգացում: Առաջին ջերմային նոպան տևում է 5-8 օր, որն ավարտվում է առատ քրտնարտադրությամբ, ջերմության անկմանք ու կլիմիկական ախտանիշների մարմանք՝ ապիռեքսիա 7-14 օր տևողությամբ: Յետագայում ջերմային նոպաների տևողությունը կրծատվում է, ապիռեքսիային՝ երկարում: Ցիվանդության անբողջ ընթացքում արձանագրվում է 5-6 նոպա:

Ժամանակին և արդյունավետ բուժման պայմաններում հիվանդության ելքը բարենպաստ է, մահացությունը չի գերազանցում 1%-ը: Յետինֆեկցիոն անընկալությունը կայուն չէ: Առաջացած հակամարմինները երկար չեն պահպանվում: Կանխարգելման յուրահատուկ միջոցներ չկան: Յիմնականում միջոցառումներն ուղղված են ջերմող հիվանդների ժամանակին հայտնաբերմանը և բուժմանը, ոչլուսության վերացմանը:

**Լաբորատոր ախտորոշումն** իրականացվում է իիմնականում արյան բակտերիոսկոպիկ հետազոտությամբ: Էնդեմիկ՝ տօպային հետադարձ տիֆի օջախներում այդ հիվանդության հարուցիչները Օբերմեյերի բորելիաներից տարբերելու համար կիրառվում է կենսաբանական եղանակը: Ծովախողուկները չեն հիվանդանում էպիդեմիկ հետադարձ տիֆի հարուցիչներով վարակելիս:

### 11.7.3. Էնդեմիկ հետադարձ տիֆ

Զոտոնզ, տրամսիսիվ փոխանցման մեխանիզմով, էնդեմիկ օջախայնությամբ ինֆեկցիոն հիվանդություն է: Այն կարող է հարուցվել *Borrelia* ցեղի տարբեր տեսակներով՝ **B.latyschewi**,

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

**B.caucasica, B.persica** և այլն: Յիշվանդության բազմահարուցիչային բնույթը պայմանավորված է կոնկրետ աշխարհագրական գոտիներում բորելիաների որոշակի տեսակների շրջապատճենութով:

Բորելիաների հիմնական շտենարանը տարբեր կրծողներն են և դրանց վրա պարագիտող տգերը, որոնց մոտ հայտնաբերվել է բորելիաների տրանսօվարիալ փոխանցումը: Տարբերում են հիշվանդության բնական և անթրոպուրգիկ օջախներ: Առաջիններում բորելիաների շրջապատճենը ընթանում է տգերի և վայրի կենդանիների ու կրծողների միջև, իսկ անթրոպուրգիկ օջախներում շրջապատճենը մեջ են ընդգրկվում նաև մարդն ու ընտանի կենդանիները: Յիշվանդությունն ունի արտահայտված ամառային սեզոնականություն: Իիշվանդանում են հիմնականում նորեկները, քանի որ տեղական ազգաբնակչությունը, դեռևս մանկական հասակում վարակվելով, ձեռք է բերում ռեզիստենտություն տարածաշրջանում շրջանառվող բորելիաների նկատմամբ: Յիշվանդանում են վարակված տգերի կծելու հետևանքով, միջատի թքի կամ կոքսալ հեղուկի միջոցով, որն արտազատվում է մաշկի վրա արյունը ծծելու պրոցեսում:

Մոլֆոլոգիորեն և կենսաբանական հատկություններով առանձնապես չեն տարբերվում համաճարակային հետադարձ տիֆի հարուցիչից: Պաթոգենետիկ մեխանիզմը նույնպես չի տարբերվում: Յիշվանդությունից հետո ձեռք է բերվում **տեսակային սպեցիֆիկության** անընկալություն, ինչը չի բացառում կրկնակի հիշվանդացում՝ հարուցված բորելիաների այլ տեսակներով:

Կլինիկորեն այն ննան է համաճարակային հետադարձ տիֆին, սակայն ընթանում է ավելի թեթև, ջերմային նոպաները ավելի շատ են և կարճատև, մանրակրկիտ դիտարկաման ժամանակ գրեթե միշտ մաշկի վրա կարելի է հայտնաբերել տղի խայթոցի հետքը՝ առաջնային աֆեկտը, կետային արյունազեղման կամ փոքրիկ պապուլայի տեսքով՝ շրջափակված հեմոռագիկ գոտինվ: Տզային հետադարձ տիֆի հարուցիչներն արյան մեջ հայտնաբերվում են հիշվանդության

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

անբողջ ընթացքում, ինչպես տենդային նոպայի, այնպես էլ ապիռերսիայի ժամանակ:

Լաբորատոր ախտորոշումը և պրոֆիլակտիկան նույնն է, ինչ համարակային հետադարձ տիֆի ժամանակ, բուժումը կատարվում է հակաբիոտիկներով:

### 11.7.4. Լեպտոսապիրոզ (L. interrogans)


Սուր, զողոնոզ, բնական օջախայնությամբ ինֆեկցիոն հիվանդություն է, որի կլինիկան առաջին անգամ նկարագրել է գերմանացի գիտնական Վեյլը (1886թ.), իսկ 1888-ին Բուլկինի աշակերտ Վասիլկը՝ Վասիլկ-Վեյլի հիվանդություն: 1914-15թթ. ճապոնացի հետազոտող Ա.Ինադոյին հաջողվեց հիվանդներից անջատել հարուցիչը՝ *Leptospira icterohaemorrhagiae*:

*Leptospira* ցեղը ներառում է ազատ ապրող և պարագիտ տեսակներ, տիպային տեսակն է *L.interrogans*-ը: Մարդու համար ախտածին բոլոր լեպտոսապիրաները ընդգրկված են այդ տեսակում, որում տարբերում են շուրջ 40 շճախումբ և 200 շճատիպ:

Բնական օջախներում հարուցիչի շտեմարան են կրծողները, միջատակերները և տարբեր վայրի կենդանիները, հազվադեպ՝ թռչունները, անթրոպուրգիկ օջախներում՝ տնային բոլոր կենդանիները, սինանթրոպ կրծողները: Կենդանիների մոտ հիվանդության անսիմպտոմ, քրոնիկական ձևերի զարգացման հնարավորությունը նպաստում է դրանց արտաքրանքներով՝ արտաքին միջավայրի աղտոտմանը, ինչը պայմանավորում է հատկապես ջրամբարների դերը՝ որտեղ լեպտոսապիրաները կարող են ինտենսիվորեն բազմանալ, որպես հարուցիչի լրացուցիչ շտեմարան և հիվանդության մեկ այլ՝ «ջրային տեմպ» անվանումը: Մարդը կարող է հիվանդանալ օգտագործելով աղտոտված ջրամբարների ջուրը՝ խմելու կամ կենցաղային նպատակներով, ինչպես նաև՝ կենսունակ լեպտոսապիրաներով վարակված սննդամբերքը: Դիվանդ մարդը ինֆեկցիայի աղբյուր չէ:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

**Մորֆոլոգիա:** Ունեն սեղմված, բարակ զսպանակի կամ ոլորված պարանի ձև՝ պայմանավորված բազմաթիվ առաջնային մաճր գալարներով: Կարող են առաջացնել կարթածև երկրորդային գալարներ: Ծայրերը կոճականման հաստացած են, շարժուն են: Չափերը տատանվում են 0.07-0.14X15-30մկմ սահմաններում: (նկ.127):



**Նկ.127. *Leptospira icterohaemorrhagiae***

Սպոր և պատիճ չեն առաջացնում: Աճիլինային ներկերով ներկվում են դժվարությամբ, Ռումանովսկի-Գինզայով երկարատև ներկման պայմաններում ընդունում են կարմիր-վարդագույն երանգ: Առավել հաճախ իրականացվում է նատիվ պրեպարատների մանրէազննում: Կուլտուրաներում հայտնաբերվում են կծիկների ձևով:

**Ֆիզիոլոգիա:** Ախտածին լեպտոսպիրաները աերոր են, լավ աճում են հեղուկ և կիսահեղուկ սմնդամիջավայրերում, որոնք պարտադիր պարունակում են 5-10% ճագարի շիճ: Ածի բարենպաստ ջերմաստիճանը  $28\text{-}30^{\circ}\text{C}$  է,  $\text{pH-ը } 7.1\text{-}7.4$ : Ածը նկատվում է 5-8 օրից ոչ շուտ: Հեղուկ միջավայրում կուլտիվացման դեպքում սմնդամիջարը մնում է թափանցիկ և թափանցող լույսի պայմաններում առաջացնում է օպալեսցենցիա: Օժտված են խմբասպեցիֆիկ և տիպասպեցիֆիկ անտիգեններով:

**Կայունություն:** Զգայուն են արևի լույսի, բարձր ջերմաստիճանի նկատմամբ՝  $45^{\circ}\text{C}$ -ում ոչնչանում են 45 րոպեում,  $70^{\circ}\text{C}$ -ում՝ 10 վայրկյանում, չորացնան դեպքում անմիջապես ոչնչանում են: Քաղցրահամ ջրերում կենսունակությունը պահպանում են շուրջ 1,

## ՄԱՍՆԱՎՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

ճահիճներում 6 ամիս: Զգայուն են տարբեր դեզինֆեկտանտների նկատմամբ:

Վիրուլենտության հիմանական գործոնը էնդոտոքսինն է, որն անջատվում է հարուցիչների ամբողջականության խախտման դեպքում և առաջացնում է ընդիանուր ինտոքսիկացիա, ինչպես նաև արյունազեղումներ՝ պայմանավորված անոթների թափանցելիության մեծացնամբ:

**Պաթոգենեզ և կլինիկա:** Մուտքի դուռ են աչքի, քթի, բերանի, կերակրափողի լորձաթաղանթները և վնասված մաշկը: Ստամոքսի թթու միջավայրում դրանք անմիջապես ոչնչանում են: Հաճախ արձանագրվում է համակցված վարակում մաշկի և լորձաթաղանթների միջոցով: Մուտքի դրներում չառաջացնելով բորբոքային երևույթներ՝ լեպտոսպիրաները տարածվում են լիմֆատիկ ուղիներով, սովորաբար չառաջացնելով լիմֆադենիտներ՝ բացառությամբ ճապոնական յոթնօրյա տենդի: Այնուհետև հաջորդում է 4-5 օր տևողությամբ լեպտոսպիրենիայի փուլը, որն ուղեկցվում է հարուցիչի ընտրողական կուտակմամբ պարենքիմատոզ օրգաններում՝ լյարդում, փայծաղում, երիկամներում, թոքերում, ինչպես նաև մկաններում: Ուժակ են անցնելու հեճանողնեցեֆալ պատնեշը և ախտահարելու կտր-ն: Պաթոգենետիկ այս շրջանը համապատասխանում է ինկուբացիոն շրջանին, որը տևում է մոտավորապես 6-14 օր: **Լյարդի ախտահարումը և դեղնուկի առաջացումը** պայմանավորված է ինչպես հարուցիչների արտազատած տոքսիկ միացություններով, այնպես էլ շարժուն լեպտոսպիրաների կողմից հեպատոցիտների մեխանիկական վնասմամբ: Հարկ է նշել, որ դեղնուկի առաջացման մեխանիզմում որոշակի դեր ունի նաև տարածուն հեմոլիզը՝ միջնորդված բազմաքանակ արյունազեղումներով, ինչը պայմանավորված է լեպտոսպիրաների կողմից անոթների էնորթելի վնասումով: **Երիկամների** ախտահարումը արտահայտվում է ոլորուն խողովակների դեստրուկտիվ փոփոխություններով ու միզագոյացման խանգարմամբ, ծանր դեպքերում՝ անուրիա, ուրեմիա: Վարակումից 10-15 օր անց լեպտոսպիրաները կարող են

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԻՉԱՐԵԱՆ ՈՒԹՅՈՒՆ

հայտնաբերվել ուղեղ-ողնուղեղային հեղուկում, ինչի հետևանքով դիտարկվում են մենինգիալ ախտանիշներ: **Անոքների** էնդոթելի վրա լեպտոսպիրաների մեխանիկական ազդեցության հետևանքով խախտվում է դրանց թափանցելիությունը, առաջանում են բազմաթիվ արյունազեղումներ, արյունահոսություններ և մեծ քանակով հեղուկի կորստի պատճառով՝ հիպովոլեմիկ շոկ: Ապաքինումից հետո լեպտոսպիրաները շուրջ մեկ ամիս կարող են արտազատվել մեզով:

Կլինիկորեն տարբերակում են հիվանդության **ոչ դեղնուկային** և **դեղնուկային՝** իկտերուեմոռագիկ, ձևերը: Դիվանական միջին տևողությունը 5-6 շաբաթ է, բնորոշ ախտանիշներն են բարձր ջերմությունը՝ մինչև  $39\text{-}40^{\circ}\text{C}$ , մաշկի և լորձաթաղանթների դեղնուկը, դողը, գլխացավերը, մկանացավերը, հիվանդության ծաղկման շրջանում մարմնի և վերջույթների մաշկի պոլիմորֆ ցանը և այլն: Ծանր դեպքերում ներքին օրգանների ախտահարմանը գործադրության առավել ցայտուն է արտահայտվում հեմոռագիկ սինորոնը, ինչպես մաշկի և լորձաթաղանթի արյունազեղումներով, այնպես էլ ստամոքսի, աղիների, արգանդի, թոքերի արյունահոսություններով: Աղեկվատ բուժման պայմաններում ելքը բարենպաստ է, մահացությունը չի գերազանցում 1-3%-ը:

**Դետինֆեկցիոն իմունիտետը** տիպասպեցիֆիկ է, երկարատև:

**Լաբորատոր ախտորոշումը** կատարվում է բակտերիոսկոպիկ արյան, ողնուղեղային հեղուկի, մեզի ճրնադաշտային և Ռոմանովսկի-Գիմզայի եղանակով ներկված պրեպարատների մանրէազնում, բակտերիաբանական, շճաբանական, կենսաբանական եղանակներով:

**Բուժում:** Կիրառվում են պենիցիլինային շարքի հակաբիոտիկներ և լեպտոսպիրաների առավել տարածված սերովարների դեմ ստացված իմունոգլոբուլին:

**Սպեցիֆիկ կանխարգելում:** Դամաճարակային ցուցումների դեպքում կիրառվում է առավել տարածված սերովարների (*L.ictero-aemorragiae*, *L.gripotyphosa*, *L.pomona*) ֆենոլային մշակման ենթարկված, սպանված պոլիվակցինան:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### 11.8. ԽԱԱՄԻԴԻՌՆԵՐ

Խլամիդիաների դերը նարդու ախտաբանությունում հաստատվել է XIX վերջերին, Փարիզում շուրջ 50 անձանց, ավելի քան 30-40% մահվան ելքով, սուր, ծանր ընթացքով, ատիպիկ բրոնխոպնևմանիայի արձանագրնամբ: Խլամիդացել են գերազանցապես այն անձինք, որոնք անմիջական շփում են ունեցել Արգենտինայից ներմուծված հիվանդ թուրակների հետ, որն էլ պայմանավորել է Ա.Մորանժի կողմից հիվանդության «պիտակող» (հուն. psittakos-thoritawak) անվանումը: Քետագայում ինֆեկցիայի տարածնան խնդրում պարզաբանվել է նաև այլ թռչունների դերը, և ներկայումս հիվանդությունը հայտնի է նաև **օրնիտոզ** (հուն. ornix-թռչուն) անվանումով: XX դարի 40-ական թվականներին պարզաբանվել է նմանատիպ հարուցիչների դերը կուրություն առաջացնող հիպերտրոֆիկ կոնյունկտիվիտի, միզասեռական համակարգի ոչ գոնոկոկային ախտահարումների, նորածինների պնևմոնիայի երիտրոգիայում:

**Chlamydiaceae** (հուն. chlamydos-թիկնոց) ընտանիքում ընդգրկված միակ **Chlamydia** ցեղում տարբերում են մարդուն ախտահարող երեք տեսակ՝ **C.trachomatis**, **C.psitaci**, **C.pneumoniae** (նկ.128):

Տեսակ	Առաջարած ախտահարումներ	Ծնատիպ
C.trachomatis	Տրախոմա, պարատրախոմա	A,B,C
	Ուրոզենիտալ խամբիոզ, նորածինների պնևմոնիա	D,F,G,H,I,J, K
	Վեներական լիմֆոզանուլյոմա	L1, L2, L3
C.psitaci	Օրնիտոզներ	13 (?)
C.pneumoniae	Պնևմոնիա, ՍՈՀ, արերտսկերոզ, բրոնխիալ ասքնա	TWAR, AR,KA, CWL


#### Նկ.128. Մարդուն ախտահարող խամիդիաների դասակարգություն

**Մորֆոլոգիա:** Խլամիդիաները հիմնականում փոքր չափերի (0.2-1.5 մկմ), պոլիմորֆ (գնդաձև, ցուլակաձև), անշարժ, սպոր և պատիճ չառաջացնող պրոկարիոտ միկրօրգանիզմներ են՝ օժտված պարտադիր ներբջային պարագիտիզմով, ինչը պայմանավորում է

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

դրանց տարբերակումը արտա- և ներբջջային ձևերի: Կենսունակ բջջից դուրս խլամիդիաները գոյատևում են 0.2-0.5մկմ չափերով, մետաբոլիկ առումով քիչ ակտիվ, տարրական (էլեմենտար) մարմնիկների (ԷՄ) ձևով, որոնք ինտակտ բջջներն ախտահարող ինֆեկցիոն միավորներ են (նկ.129):

Ներբջջային ռեպրոդուկտիվ ձևը ներկայացված է ավելի խոշոր՝ մինչև 1.5մկմ չափերի, ցանցանման կառուցվածքով, նուրբ բջջապատով, ռետիկուլյար մարմնիկներով (ՌՄ): Վերջիններս ձևավորվում են էլեմենտար մարմնիկներից՝ 5-6 ժամվա ընթացքում, թիրախու



Նկ. 129. *C.trachomatis*

բջջի ցիտոպլազմայում, իսկ թիրախու բջջից անջատման դեպքում գուրկ են ինֆեկցիոնությունից: Սկզբում ԷՄ-ից ձևավորվում է ինիցիալ մարմնիկ, հետո՝ ՌՄ (վեգետատիվ ձև), որն սկսում է կիսվել ախտահարված բջջի ցիտոպլազմայում՝ առաջացնելով հարկորիգային պարփակումներ: Հետագայում ՌՄ-ի կոնդենսացման հետևանքով ձևավորվում է հորթի աչք հիշեցնող միջանկյալ մարմնիկ,

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

որն էլ տրանսֆորմացվում է բջջից դուրս գալու պատրաստ ԵՄ-ների: Եկեմենտար մարմնիկների ելքն ուղեկցվում է ախտահարված բջջի լիզիտվ, ինչով ավարտվում է խլամիդիաների բազմացման 40-72 ժամ տևողությամբ ամբողջական ցիկլը: Արտաքին թաղանթի կառուցվածքով նման են գրամ բացասական միկրոօրգանիզմներին, բջջապատի կառուցվածքում բացակայում է պեպտիդոլիկանը: Առավել լավ ներկվում են Ռոմանովսկի-Գիմզայի եղանակով. էկեմենտար մարմնիկները ստանում են կարմիր, իսկ ռետիկուլյար մարմնիկները՝ կապույտ գունավորում:

Արիեստական սննդամիջավայրերում չեն աճում, քանի որ բացարձակ ներքջային պարագիտներ են, ինչը պայմանավորված է բարձր էներգետիկ միացությունների՝ մասնավորապես ԱԵՖ-ի սինթեզի անկարողությամբ, ցիտոքրոմների բացակայությամբ, այսինքն դրանք «էներգետիկ» պարագիտներ են: Խլամիդիաների կուլտիվացումն իրականացվում է 33-40°C-ում, բջջային կուլտուրաներում, իսկ աճող սաղմի դեղնուցապարկում:

**Անտիգենային կառուցվածք:** Օժտված են ցեղային սպեցիֆիկության բջջապատի լիպոպոլիսախարիդային և տեսակային ու տիպային սպեցիֆիկության սպիտակուցային անտիգեններով:

**Վիստածնությունը** մեծապես պայմանավորված է ֆագոցիտար համակարգի բջջների ակտիվության ճնշման՝ ֆագոլիզոսունի միաձուլման արգելակմանբ, էնդոտոքսինով, ինչպես նաև որոշ շտամների կողմից սինթեզվող լետալ ազդեցությամբ էկզոտոքսիններով:

### 11.8.1. Տրախոնա

**Տրախոնան** (հուն. trachys-անհարթ) էնդեմիկ օջախայնությամբ, քրոնիկական ընթացքով, աչքերի ախտահարմանբ ընթացող անթրոպոնոզ հիվանդություն է, որը հարուցվում է **C.trachomatis** տեսակի **A,B,C** շճատիպերով: Փոխանցվելով գերազանցապես կոնտակտային մեխանիզմով, ախտահարում են աչքի լորձաթաղանթը (հիմնականում երկկողմանի)՝ պայմանավորելով էպիթելիոցիտների քայլայումն ու ֆոլիկուլյար կերատոկոնյունկտիվիտի զարգա-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

ցումը: Յիվանդության ընթացքում ողջ կոնյունկտիվան ծածկվում է տրախոմատոզ գրանուլեմաներով, պրոցեսի մեջ է ընդգրկվում ենթաէպիթելային հյուսվածքները, և հետագայում կոպիտ սպիների ձևավորման հետևանքով կարող է առաջանալ կուրություն: Յաճախ իիվանդությունը կարող է բարդանալ երկրորդային ինֆեկցիայով՝ պայմանավորված տրախոմայի ժամանակ արձանագրվող իմունո-դեֆիցիտով:

### 11.8.2. Ուրոգենիտալ խլամիդիոզ

Ուրոգենիտալ խլամիդիոզը հարուցվում է **C.trachomatis** տեսակի **D,F,G,H,I,J,K** շճատիպերով: Անթրոպոնոզ, սեռական կոնտակտի ճանապարհով փոխանցվող, իմմնականում միզասեռական համակարգը ախտահորող, սուր և քրոնիկական ընթացքով իիվանդություն է: Վարակի փոխանցման խնդրում կարևորվում են նաև կենցաղ կոնտակտային մեխանիզմը, որի վկայությունն է ընտանեկան խլամիդիոզների արձանագրումը անկողնային և անձնական սպիտակեղեն, վերտիկալ մեխանիզմը՝ իիվանդ մորից վարակի փոխանցումը պտղին, ընդ որում նորածինը կարող է վարակվել ինչպես ծննդաբերական ուղիներով անցման ժամանկ (աչքի խլամիդիոզ, խլամիդիային օտիտ, պնևմոնիա), այնպես էլ ներարգանդային զարգացման ընթացքում (ի ժնե խլամիդիոզ):

Յիվանդության ինկուբացիոն շրջանը 5-30 օր է, որին հաջորդում է գոնորեայի կլինիկական պատկերը իիշեցնող ախտանիշների դրսևումը՝ արտադրություն, քոր, ցավեր միզարձակման ժամանակ և այլն: Այնուհետև զարգանում է վերընթաց ինֆեկցիա, ինչը կանաց մոտ արտահայտվում է ցերպիցիտի, ուրեթրիտի, էնդոմետրիտի, սալպինգիտի, տղամարդկանց մոտ՝ ուրեթրիտի, էպիդինիտի, պրոստատիտի կլինիկական պատկերով: Նշված բորբոքային պրոցեսները կանաց փոքր կոնքում կարող են նպաստել սպիների, կպումների առաջացմանը, արգանդի փողերի անանցելիությանը, արտարգանդային հղիությանը: Եվ՝ տղամարդկանց, և կանաց մոտ կարող է զարգանալ երկրորդային անպտղություն:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Որոշ դեպքերում ուրոգենիտալ խլամիդիոզը կարող է պատճառ դառնալ էքստրագենիտալ բարդությունների՝ ՌԵՄՏԵՐԻ հիվանդության (ուրեթրո-օկուլո-սինովիալ սինդրոմ), որի պարոգեննետիկ ընթացքը պայմանավորված է խլամիդիաների կողմից նարդու սպիտակուցներին նմանվող սպիտակուցային միացությունների (խաչաձև փոխազդող անտիգեններ) սինթեզով և կուտակմամբ, ինչը մակրոօրգանիզմում խթանում է առոտություն մեխանիզմների զարգացումն ու կլինիկական ախտանիշների դրսևորումը՝ **ռեակտիվ պոլիարթրիտ**, հիմնականում ստորին վերջույթների սինովիտներ, ասեպտիկ ուրեթրիտ, կոնյուտիվիտ, ինչպես նաև տարբեր լորձաթաղանթների և մաշկի պոլիմորֆ ախտահարումներ:

### 11.8.3. Օրնիտոզ

**Օրնիտոզը՝ պսիտակոզ**, հարուցվում է **C.psitaci** տեսակով, արձնագրվում է ամենուրեք: Ինֆեկցիայի աղբյուր են ընտանի և վայրի թռչունները, որոնց մոտ հիվանդությունը կարող է ընթանալ ինչպես կլինիկորեն արտահայտված, սուր կամ քրոնիկական ընթացքով, այնպես էլ անսիմպտոմ: Վերջինս հաճախ անցնում է երկարատև բակտերիակրության: Մարդը վարակվում է գերազանցացապես օդակաթիլային, օդափոշային մեխանիզմներով, որի հետևանքով զարգանում է հիվանդության բնորոշ թռային ձևը, ինչպես նաև ալիմենտար՝ խլամիդիաներով վարակված, ոչ լիարժեք ջերմային մշակման ենթարկված սննդամթերզով: Մարդու դերը պսիտակոզի տարածման խնդրում բավականին սահմանափակ է:

Ներշնչած օդի հետ խլամիդիաներն անցում են շնչական համակարգ և պայմանավորված արտահայտված խնամակցությամբ շնչափողի, բրոնխների, ալվեոլների, թոքային հյուսվածքի թջիջների նկատմամբ, նպաստում են թքերում գրանուլեմատոզ, նեկրոտիկ օջախների ձևավորմանն ու պնևմոնիայի զարգացմանը: Միևնույն ժամանակ, բորբոքային օջախներում հարուցիչները կլանվում են հյուսվածքային մակրոֆագերի կողմից, որոնցում ֆագոլիզոսումի առաջացումը արգելակելու ունակության շնորհիկ՝ պահպանելով

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Կենսունակությունը և նույնիսկ բազմանալով, դրանց կազմում տարածվում են լիմֆոգեն ճանապարհով ու ախտահարում իիմնականում պարենքիմատող օրգանները՝ յարդը, փայծաղը, երիկամները և այլն: Այնուհետև լիմֆադիմաներն անցնում են արյան հոսք և գեներալիզացվում ողջ օրգանիզմով: Օրնիտոզի բարդացած դեպքերում հնարավոր է մենինգիտի, մենինգուլցեֆալիտի, միոկարդիտի, էնդոկարդիտի զարգացում: Ժամանակին ախտորոշման և աղեկվատ բուժման դեպքերում հիվանդության ելքը բարենապաստ է, սակայն 3-5% դեպքերում հնարավոր է լետալ վախճան:

**Լարորատոր ախտորոշում:** Խլամիդիոզների ախտորոշումն իրականացվում է ինունիքյուռուրէսենտային, բակտերիաբանական՝ ախտաբանական նյութով հավի աճող սաղմի վարակում, շճաբանական, կենսաբանական եղանակներով:

Հիվանդությունից հետո օրգանիզմում հայտնաբերվում են տարբեր դասերի սպեցիֆիկ հակախլամիդիային հակամարմիններ, սակայն վերջիններս չունեն պրոտեկտիվ նշանակություն: Հետինֆեկցիոն անընկալություն չի ծևավորվում: **Սպեցիֆիկ կամիսարգելման** միջոցները բացակայում են, բուժումը կատարվում է հակաբիոտիկներով:

### 11.9. ՈՒԿԵՏՍԻՌՉԱՆԵՐ

Սուր, տրանսմիսիվ ինֆեկցիոն հիվանդությունների ընդարձակ խումբ է հարուցված ռիկետսիաներով, որոնք հայտնաբերել են ամերիկացի գիտնական Յ.Ս.Ռիկետսը մեքսիկական (հետագայում էնդեմիկ) բժավոր տիֆով հիվանդի արյան մեջ 1909-ին, և Ս.Պրովաչեկը Սերբիայում բժավոր տիֆով հիվանդի արյունում 1913-ին: Հետագայում այդ միկրոօրգանիզմները անվանվեցին Rickettsia-ներ:

Ներկայումս Rickettsiaceae ընտանիքն ընդգրկում է մարդու համար ախտածին 3 ցեղ՝ Rickettsia, Rochalima, Coxiella, որոնց տարբեր տեսակներով հարուցված հիվանդությունները տարբերակվում են հետևյալ խմբերի՝

- ♦ բժավոր տիֆ (համաճարակային և էնդեմիկ բժավոր տիֆեր),

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺԾԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

- ◆ տղային պտավոր տենդ (ժայռոտ լեռների պտավոր տենդ, մարսելյան տենդ),
- ◆ ցուցուգամուշի կամ ջունգլիների տենդ,
- ◆ պնևմոիկետսահողներ (Q-տենդ),
- ◆ պարոքսիզմալ տենդ (խրամատային տենդ):

### 11.9.1. Համաճարակային բծավոր տիֆ (R. prowazekii)

Սուր, անթրոպոնոզ ինֆեկցիոն հիվանդություն է, որը բնութագրվում է գեներալիզացված պանթրոնբովասկուլիտի զարգացմամբ, մենինգունցեֆալիտով, ռոգելող-պետեխիալ ցանով, հեպատոսալենոմեգալիայով և օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիայով։ Առաջին տեղեկությունները հիվանդության մասին նշվել են դեռևս անտիկ գրական աղբյուրներում։ Բծավոր տիֆի անյացնող համաճարակները արձանագրվել են մարդկային հասարակության գոյատևման բոլոր պատմական շրջաններում և հանդիսացել են սոցիալական ցնցումների մշտական ուղեկիցը, ինչը իր արտահայտությունն է գտել հիվանդության տարբեր անվանումներում՝ պատերազմական, սոված, բանտային, ողլային տիֆ և այլն։ Հարուցիչն է *Rickettsia prowazekii*-ին։


**Մորֆոլոգիա և ֆիզիոլոգիա:** Գրամ բացասական, 0,3-0,6x0,8-2,0մկմ չափերով, մտրակներից գորիկ, ցուափիկաձև միկրոօրգանիզմներ են։ Օժտված են պոլիմորֆիզմով։ Զորողովսկու եղանակով ներկված պրեպարատներում երևում են վառ կարմիր գունավորմանը՝ դասավորված մեկական կամ շղթաներով (նկ. 132)։

Բացարձակ ներքջային պարագիտներ են։ Մաքուր կուլտուրան ստանում են հավի սաղմի դեղնուցապարկում  $35^{\circ}\text{C}$ -ի պայմաններում, որի հետևանքով էմբրիոնը 6-13 օր անց մահանում է, կամ ագրային ծածկույթով միաշերտ բջջային կուլտուրաներում, որտեղ միկրոօրգանիզմների բազմացման վկայությունը՝ ցանքից 8-10 օր անց, 1մմ տրամագծով բժերի առաջացումն է։

Բծավոր համաճարակային տիֆի հարուցիչների նկատմամբ բավականին զգայուն են ծովախողուկները, որոնց մոտ ռիկետսիա-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԵՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Աերի ներորովայնային ներարկումից գրեթե մեկ շաբաթ անց բարձրանում է ջերմությունը, արու կենդանիների մոտ հաճախ նկատվում



Նկ.132. *Rickettsia prowazekii*

է սկրոտալ ֆենոմենի (պերիօրիսիտ) զարգացում: Ռիկետսիաների կախուկով ներերակային վարակման դեպքում սպիտակ մկները 24 ժամվա ընթացքում սատկում են սուր ինտոքսիկացիայից: Ինտրանազալ վարակման դեպքում զարգանում է մահացու պնևմոնիա: Ռիկետսիաներն անջատվում են փորձարարական կենդանիների արյունից, երիկամներից, մակերիկամներից, ամորձապարկից, փայծաղից և առավելապես ուղեղից:

Շրջակա միջավայրի տարբեր ազդակների և քիմիական նյութերի ազդեցությամբ արագ ոչնչանում են, սակայն մինչև 3 ամիս կարող են կենսունակ մնալ ոչիլի չորացած կղանքում:

**Անտիգենները:** Պրովաչեկի ռիկետսիան օժտված է ջերմակայուն, լիպոպոլիսախարիդային, ցեղային սպեցիֆիկության անտիգենով, որն ընդհանուր է առնետային բժավոր տիֆի հարուցիչի հետ և ջերմազգայուն, սպիտակուցային, տեսակային սպեցիֆիկության անտիգենով:

**Ախտածնությունը** պայմանավորված է աղիեզիվության և ինվազիվության գործոններով, որոնց շնորհիվ ռիկետսիաները ամրանում, ներթափանցում են թիրախ բջիջներ և բազմանում այնտեղ: Օժտված

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Են էնդոքտույնով, իսկ պատիճաննան շերտում հայտնաբերված է տոքսիկ հատկություններով ջերմազգայուն սպիտակուց:

Ինֆեկցիայի աղբյուրը հիվանդ մարդն է, որից հարուցիչները փոխանցվում են առողջին հիմնականում հագուստի ոջիլի երեմն՝ գլխի ոջիլի միջոցով: Ցիվանդի արյան հետ հարուցիչներն անցնում են ոջիլի մարսողական ուղի, որի էպիթելային բջիջներում 4-5 օրվա ընթացքում բազմանալով ու քայքայելով դրանց՝ արտաքրոանքի հետ մեծ քանակով արտազատվում են միջավայր:

**Պարզենեց:** Ցիվանդության նկատմամբ ընկալությունը 100% է: Բժավոր տիֆի զարգացման մեխանիզմը վնասված մաշկով և լորձաթաղանթներով հարուցիչների օրգանիզմ ներթափանցելուց հետո ընդգրկում է մի շարք հաջորդական փուլեր:

◆Ներթափանցում ախտահարված օջախի անոթների էնդոքթելային բջիջներ և բազմացում:

◆Թիրախ բջիջների քայքայում, անցում արյան հոսք՝ ռիկետսեմիա և տոքսեմիա (հիվանդության կլինիկական ախտանիշների արձանագրման շրջան):

◆Հարուցիչների գեներալիզացում և բոլոր օրգանների ու համակարգերի անոթային ապարատի ախտաբանական փոփոխություններ՝ արյան հոսքի դանդաղում, թոռնըների և սպեցիֆիկ գրանուլեմաների առաջացում, անոթների թափանցելիության մեծացման հետևանքով այտուց, հենոռագիա, հիպոտոնիկ շոկի զարգացում: Անոթների ախտահարումով է պայմանավորված նաև մաշկի ու լորձաթաղանթների ցանավորումը, պերիվասկուլյար հյուսվածքների իշեմիան ու նեկրոտիկ փոփոխությունները:

◆Օրգանիզմի պաշտպանական ուժերի ակտիվացում և սպեցիֆիկ ինուն վերակառուցում, ինչը պայմանավորում է հարուցիչի էլիմինացիան և առողջացումը:

Անոթային փոփոխություններ արձանագրվում են գրեթե բոլոր օրգաններում և հյուսվածքներում ըարդ, փայծաղ, երիկամներ, բայց առավել արտահայտված են գլխուղեղում, որի հիման վրա բժավոր տիֆի յուրաքանչյուր դեպք դիտարկվում է որպես սուր մենինգո-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Էնցեֆալիտ, առավելապես գորշ նյութի ախտահարումով: Այստեղ անորոների շուրջ առաջանում են սպեցիֆիկ գրանուլեմաներ (Պոպով-Դավիդովսկու հանգույցներ), զարգանում է այտուց, ուղեղային հյուսվածքի փրում և արյունազեղում, ինչով և պայմանավորվում է հիվանդի էյֆորիկ, տիֆոիդ վիճակը, անհանգստությունը և այլն:

**Կլինիկա:** Ինկուբացիոն շրջանը 12-14օր է, որին հետևում է պրոդրոմալ շրջանը 3-4 օր տևողությամբ, ինչը բնութագրվում է 1-2 օրվա ընթացքում ջերմության բարձրացումով մինչև 39-40°C, ինտոքսիկացիայի նշաններով՝ տանջող գլխացավ, երբեմն գլխապտույտ, սրտխառնոց, թուլություն, անքնություն, լսողական, տեսողական, տակտիլ հիվանդություն և այլն:

Հիվանդության ժաղկման շրջանը սկսվում է կրծքավանդակի, իրանի կողմնային մակերեսների, մեջքի, այնուհետև վերջույյթների վրա պոլիմորֆ, ռոգեոլոզ, պետեխիալ ցանի առաջացումով: Ծանր դեպքերում ցանը կարող է ընդունել հեմոռագիկ բնույթ և տարածվել դեմքի, ափերի, ներբանների մակերեսն: Խորանում են դեռևս պրոդրոմալ շրջանում դրսարոված ինտոքսիկացիայի նշանները, գումարվում են գլխուղեղի ախտահարման սինպատմները՝ հիվանդներն անհանգիստ են, կոպիտ, երբեմն նույնիսկ ագրեսիվ, ժամանակի և տարածության մեջ չեն կողմնորոշվում, խոսքն անկապ է, շտավողական, անիմաստ (հուն. status typhosa-մշուշոտ վիճակ): Բժանոր տիֆով հիվանդների մոտ օրինաչափորեն հայտնաբերվում է սպլենոմեգալիա, իսկ երկրորդ շաբաթից նաև հեպատոմեգալիա:

Ապաքինման շրջանը բնութագրվում է նկարագրված ախտանիշների մարմար, օրգանիզմից հարուցիչների հեռացմամբ և կայուն անընկալության զարգացմամբ: Սակայն որոշ դեպքերում հարուցիչների երկարատև, տասնյակ տարիներ ձգվող պերսիստենցիան գրանուլեմաների կազմում, կարող է նպաստել համաճարակային բժանոր տիֆի ռեցիդիվի՝ Բրիլլի հիվանդություն: Վերջինս արձանագրվում է սպորադիկ դեպքերով, ոջլոտության բացակայու-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

թյան պայմաններում և բնութագրվում է ավելի թերև կլինիկական ընթացքով:

Լաբորատոր ախտորոշումն իրականացվում է Զդրողովակու, Ուռնանովսկի-Գիմզայի եղանակներով ներկված քսուք պրեպարատների մանրէագննմամբ, շճաբանական ռեակցիաներով, կենսաբանական եղանակով:

Կանխարգելումն ուղղված է հիմնականում ոջլոտության վերացնանք, սակայն համաճարակային ցուցումների դեպքում առաջարկված է տարբեր վակցինաներ՝ *Rickettsia prowazekii* կենդանի ատենուացված կուլտուրա, քիմիական վակցինա և այլն:

**Բուժումը** կատարվում է հակաբիոտիկներով:

### 11.9.2. Էնդեմիկ (առնետային) բժավոր տիֆ (R. typhi)

Համեմատաբար թերև տենդային հիվանդություն է, որը նկարագրվել է 1922-ին, իսկ հարուցիչը անջատվել է 1931-ին Ռ.Մուզերի կողմից՝ *R.mouseri*, ներկայում՝ ***Rickettsia typhi***: Բնական շտեմարան են առնետներն ու տարբեր կրծողները, ինֆեկցիայի փոխանցողներն են առնետների վրա մակաբուծող լվերը: Մարդուցմարդուն վարակումը կարող է իրականանալ մարդուն մակաբուծող լվերով և ոչիլներով: Որոշակի դեր ունի նաև ալիմենտար ճանապարհը կրծողների արտաքրուանքներով վարակված սննդամբերի օգտագործման պայմաններում:

Մորֆոլոգիայով էնդեմիկ բժավոր տիֆի հարուցիչները նման են Պրովաչեկի ռիկետսիաներին, սակայն պոլիմորֆիզմը թույլ է արտահայտված: Շատ բնորոշ է թիրախ բջջի ցիտոպլազմայում դրանց ինտենսիվ աճն ու բազմացունք, որի հետևանքով բջիջն անբողջությամբ լցվում է հարուցիչներով՝ «մոլցերյան բջիջներ»: Օժտված են Պրովաչեկի հարուցիչի հետ ընդհանուր, թերմոստաբիլ, լիպոպոլիսախարիդային ցեղային սպեցիֆիկության, և թերմոլարիլ, սպիտակուցային՝ տեսակային սպեցիֆիկության, անտիգեններով: Վերջինով շճաբանական ռեակցիաներում հեշտությամբ տարբերվում է Պրովաչեկի հարուցիչից:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՐԴԱՐԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Ախտածնությունը պայմանավորված է էնդոտոքսինով և յուրօրինակ սպիտակուցային թույնով, որն ինպես էնդոտոքսինը անջատվում է հարուցիչի ամբողջականության խախտման դեպքում։ Ծովախողուկները R. typhi-ի նկատմամբ նույնքան ընկալ են, որքան Պրովաչենի հարուցիչի նկատմամբ, սակայն ներորովայնային վարակման դեպքում սկրոտալ ֆենոմենի առաջացումը ավելի բնութագրական է։ Ինտրանազալ վարակումը նպաստում է մահացու ամևանոնիայի առաջացմանը։

Հիվանդությունը պաթոգենետիկ ընթացքով ու կլինիկական դրսերումներով գրեթե չի տարբերվում համաճարակային բժավոր տիֆից, սակայն հիմնականում ընթանում է ավելի թերև՝ մահացություն գրեթե չի արձանագրվում։

Նետինֆեկցիոն իմունիտետը կայուն է, երկարատև՝ ի հաշիվ հակամիկրոբային և հակատոքսիկ հակամարմինների։ Պրովաչենի ռիկետսիայի հետ ընդհանուր անտիգենով պայմանավորված կարող է ձևավորվել խաչածն իմունիտետ։

Լարորատոր ախտորոշումն իրականացվում է Զդրողովակու, Ռոմանովսկի-Գիմզայի եղանակներով ներկված քսուք պրեպարատների մանրէազննմամբ, շճաբանական ռեակցիաներով, կենսաբանական եղանակով։

Սպեցիֆիկ կամխարգելման համար համաճարակային ցուցումների դեպքում կարող է կիրառվել առնետային բժավոր տիֆի սպանված վակցինան։ Ընդհանուր միջոցառումներն ուղղված են առնետների ոչնչացմանը և սննդամթերքի պահպանությանը կրօղողներից։ Բուժումը նույն է, ինչ որ համաճարակային բժավոր տիֆի ժամանակ։

### 11.9.3. Q-տենտ (C. burnetii)

Սուր ռիկետսիային տենտային հիվանդություն է, հաճախ ընթանում է ինտերստիցիալ պնևանոնիայով և այլ ռիկետսիոններից տարբերվում է ցանի բացակայությամբ։ Հիվանդությունը նկարագրել է Շերրիկը Ավստրալիայում 1935-ին և անվանել է անհայտ ծագման

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

տենդ (անգլ. query-անհայտ, չորոշված): Հարուցիչն անջատել է Ֆ.Բերնետը 1937-ին, որն այժմ ընդգրկված է *Coxiella* ցեղում՝ *Coxiella burnetii*:

Բերնետի կոքսիելան մորֆոլոգիայով, բջջի կառուցվածքով և ֆիզիոլոգիական հատկություններով նման է այլ ոիկետսիաներին: Կարող է լինել ցուպիկաձև, գնդաձև, ունենալ շատ փոքր չափեր և անցնել բակտերիային ֆիլտրերով: Բացարձակ ներբջջային պարագիտ է, օժտված է ֆազային փոփոխականության ունակությամբ, ինչը բնույթով նման է բակտերիաների S-R դիսոցնանը և պայմանավորում է կոկսիելաների պոպուլյացիայում համապատասխանաբար՝ I և II ֆազայի շտամների առկայությունը: Բնույթան մեջ գերակշռում են առաջին ֆազայի ձևերը: Ի տարբերություն մյուս ոիկետսիաների՝ բազմանում է եռկարիոտների ֆագոլիգոսումում և բնութագրվում է բավականին բարձր կայունությամբ թե՛ արտաքին միջավայրում, թե՛ քիմիկական ու ֆիզիկական գործոնների նկատմամբ:

**Անտիգեններ:** Տարբերում են I և II ֆազայի անտիգեններ. ընդորում առաջին ֆազայի անտիգեններն օժտված են առավել հզոր իմունոգեննությամբ և խրանում են հականարմինների սինթեզը և առաջին, և երկրորդ ֆազայի հարուցիչների նկատմանը, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ առաջին ֆազայի անտիգենները պարունակում են թաքնված երկրորդ ֆազայի անտիգենն և օժտված են աղյուվանտի հատկությամբ:

Q-տենդն էնդեմիկ օջախային ինֆեկցիա է: Հարուցիչի բնական շտեմարան են բազմազան վայրի և ընտանի կենդանիները, թռչունները, կրծողները, որոնք միկրոօրգանիզմները կարող են արտագատել կաթի, մեզի, կղանքի, քթի արտազատուկի և առավելապես պլացենտար ու հարպլազենտար հեղուկների միջոցով՝ պատճառ դառնալով մարդու վարակման անմիջական կոնտակտի մեխանիզմով: Նկատի ունենալով հարուցիչների կայունությունը արտաքին միջավայրում՝ վարակումը կարող է տեղի ունենալ նաև աերոգեն,

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

ալիմենտար, ջրային ճանապարհներով: Չի բացառվում կենդանի փոխանցողների դերը:

Դիվանդության ինկուբացիոն շրջանը մինչև 1 ամիս է՝ միջինը 15-20 օր: Առաջնային աֆեկտը և ցանը որպես կանոն բացակայում են: Կիհնիկական ընթացքը բազմազան է, էնդեմիկ օջախներում կարող է ընթանալ անսիմպտոմ, այդ իսկ պատճառով հիվանդությունը հիմնականում ախտորոշվում է շճաբանորեն: Առավել բնութագրական է շնչական համակարգի ախտահարումը, տենդը, որը մեկ օրվա ընթացքում կարող է բարձրանալ մինչև 39-40°C և պահպանվել այդ մակարդակի վրա 8-10 օր: Դիվանդության ընթացքում օրգանիզմում զարգանում է դանդաղ տիպի գերզգայունություն:

**Նետինֆեկցիոն իմունիտետը** կայուն է, երկարատև:

**Լաբորատոր ախտորոշում:** Հարուցիչի անջատում և տարբերակում, շճաբանական հետազոտություն սպեցիֆիկ անտիգեններով, մաշկալերգիկ փորձ:

**Սպեցիֆիկ կամխարգելման համար համաճարակային ցուցումների դեպքում** կիրառվում է լիոֆիլ չորացման ենթարկված կենդանի վակցինա C.burnetii M-44 շտամից: **Բուժումը** կատարվում է հակաբիոտիկներով:

### 11.10. ՄԻԿՈՊԼԱԶՄՈՁԵՐ

Միկոպլազմաները (հուն. mykes-սունկ, plazma-ձև ունեցող ինչ որ սուբստրատ) գրամ բացասական, հիմնականում փոքր՝ 0.2-0.7մկմ չափերի, պրոկարիոտ միկրոօրգանիզմներ են: Պայմանավորված բջջապատի բացակայությամբ՝ բնութագրվում են արտահայտված պոլիմորֆիզմով և նկարագրված ձևի հետ կարող են հանդես գալ ցուպիկանման, թելանման, ճյուղավորված, միցելանման ձևերով (նկ.130):

Բջջապատի ֆունկցիաներն իրականացնում է եռաշերտ ցիտոպլազմատիկ թաղանթը: Միկոպլազմաները բազմանում են պարզ կիսման եղանակով: Աճի ու բազմացման բարենպաստ ջերմաստի-

## ՄԱՍՏԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵԱԲԱՆԻԹՅՈՒՆ

ճանը 36-37° C է, pH-ը՝ 6.8-7.4, շնչառության տիպով ֆակուլտատիվ անաերոր են: Բջջաբաղանքի հիմնական բաղադրամասը խոլեսթերինն է, որը միկոպլազմաներն ինքնուրույն սինթեզել չեն կարող և



**Նկ. 130. *Mycoplasma pneumoniae***


այն ստանում են մակրոօրգանիզմի հյուսվածքներից կամ կուլտիվացման դեպքում սննդային միջավայրից: Պահանջկոտ են սննդային միջավայրերի մկատմամբ, պահանջում են գյուկոզի, արյան շիճուկի, խոլեսթերինի, տարբեր ճարպաթթուների, պուրինային և պիրինիդինային հիմքերի ավելացում: Պինդ սննդամիջավայրերում առաջացնում են կիսաբականցիկ փոքր գաղութներ՝ հատիկավոր, բարձրացած կենտրոնով (նկ.131): Որոշ տեսակներ արյունային ազարի մակերեսին առաջացնում են հեմոլիզ:

Մարդու ախտաբանությունում կարևորվում են ***Mycoplasma pneumoniae*** և ***Ureaplasma urealyticum*** տեսակները:

***Mycoplasma pneumoniae*-ն** անջատվել է Մ.Խոտմի կողմից 1944-ին ատիպիկ պնևմոնիայով հիվանդից: Դասվում են **Tenericutes** բաժնի ***Mollicutes*** դասին, որը միավորում է մարդու ախտաբանու-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

թյունում կարևորվող **Mycoplasma** և **Ureaplasma** ցեղերի տարբեր տեսակներ: Բնության մեջ շտեմարանը համարվում է մարդը, փոխանցման մեխանիզմը օդակաթիլային է:



Նկ. 131. *Mycoplasma pneumoniae*-ի գաղութները

Օժտված է տեսակային սպեցիֆիկության անտիգենով, տիպասպեցիֆիկ անտիգեն չունի:

Վիրովենտության հիմնական գործոններն են միկրոպատիճը, աղիեզինները, մի շարք ֆերմենտներ (ֆոսֆոլիպազա, պեպտիդազա, պրոտեզազա, նեյրամինիդազա, ՌՆԹազա, ԴՆԹազա), էկզո-և էնդոտոքսիններն ու կենսագործունեության արդյունքում սառաջացած սուպերօքսիդանտները ( $O_2^-$ ;  $H_2O_2$  և այլն): Վերջիններս ցուցաբերում են հեմոլիտիկ ակտիվություն: Էնդոտոքսինը թողնում է պիրոգեն ազդեցություն, առաջացնում է թոքերի թրոմբոհեմոռագիկ ախտահարում և այտուց: Քիվանդության պարոգենեզում կարևորվում է մակրոօրգանիզմի հյուսվածքային անտիգենների հետ խաչաձև փոխազդող մակերեսային անտիգենների առկայությունը, ինչը թույլ է տալիս հարուցիչներին խուսափելու մակրոֆագերի ազդեցությունից, ինչպես նաև պայմանավորում է գեներալիզացված առտոդիմուն ռեակցիաների գարգացումը:

## ՄԱՍՏԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

**Պարոգենեզ և կլինիկա:** Միկոպլազմաներն աերոգեն մեխանիզմով անցնելով մակրոօրգանիզմի շնչուղիներ՝ թափանցնում են լորձային շերտով, աղիեզինների օգնությամբ ամրանում են էպիթելային բջիջներին, որտեղ բազմանում են և արտազատված ֆերմենտների, տոքսինների, ինչպես նաև սուպերօքսիդանտների ազդեցությամբ առաջացնում են թիրախ բջիջների դեստրուկտիվ վիզովություններ ու մահ։ Արդյունքում հյուսվածքներում զարգանում է տեղային բորբոքային պրոցես։

**Ուսապիրատոր միկոպլազմոզը** սովորաբար ընթանում է նազոֆարինգիտի, բրոնխիտի, պնևմոնիայի կլինիկական դրսևորումներով, սակայն ինֆեկցիոն պրոցեսի գեներալիզացնան պայմաններում խթանվում է առոտություն ռեակցիաների զարգացումը, ինչը կարող է արտահայտվել մենինգիտով, միոկարդիտով, ռեակտիվ պոլիարթրիտով, հեմոդինամիկայի խանգարումներով և այլն։

**Ուրոգենիտալ միկոպլազմաները** առաջացնում են միզասեռական համակարգի բորբոքային հիվանդություններ, որոնք թե՛ կանանց և թե՛ տղամարդնանց մոտ կարող են նպաստել անպտղության զարգացնանք։

Միկոպլազմոզներից հետո օրգանիզմում հայտնաբերվում են տարբեր դասերի սպեցիֆիկ հակամարմիններ, սակայն վերջիններս չունեն պրոտեկտիվ նշանակություն և հետինֆեկցիոն անընկալություն չի ծնավորվում։

**Լաբորատոր ախտորոշումը** կատարվում է հիմնականում շճաբանական ռեակցիաներով։ Պայմանավորված ինֆեկցիոն պրոցեսի տեղակայմանը՝ հետազոտվում է նաև ախտաբանական նյութը՝ բորբոքային արտազատուկ, բիոպտատ շնչուղիներից, միզասեռական համակարգից, իմունոֆլուորէսցենտային եղանակով։

**Սպեցիֆիկ կանխարգելման** միջոցները բացակայում են, բուժումը կատարվում է հակաբիոտիկներով։

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

### Գլուխ 12 ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ԻՆՖԵԿՑԻԱՆԵՐ

#### 12.1. ՍՈՒՐ ՌԵՍՊԻՐԱՏՈՐ ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ԻՆՖԵԿՑԻԱՆԵՐ

Մարդու ամենատարածված ինֆեկցիաներն են, ինչը պայմանավորված է՝

- ♦ փոխանցման օղակաթիլային մեխանիզմով,
- ♦ հարուցիչների բազմազանությամբ,
- ♦ կրկնակի վարակման նկատմամբ՝ հիմնականում, կայուն անընկալության բացակայությամբ:

##### 12.1.1. Գրիպ (Orthomyxoviridae)


Գրիպը (ֆրանս. gripper-բռնել) սուր, համաճարակային, հիմնականում շնչական, անոթային համակարգերի ախտահարումով, օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիայով, տենդով, ուսկրահոդային ու մկանային ցավերով ընթացող ինֆեկցիոն հիվանդություն է։ Տարածված է ամենուրեք, հիվանդացության ցուցանիշների շեշտակի բարձրացում արձանագրվում է տարվա ցուրտ ամիսներին՝ 2-3 տարին մեկ առաջացնելով համաճարակներ։ Ինֆեկցիայի աղբյուր է հիվանդ մարդը կամ վարակակիրը, ընդ որում ինֆեկցված մարդը շրջապատի համար վարակիչ է դառնում կլինիկական ախտանիշները ի հայտ գալուց դեռևս 18-24 ժամ առաջ և շարունակում է հարուցիչների արտազատումը հիվանդության ողջ ընթացքում ու նույնիսկ լավանալուց հետո՝ մինչև 48 ժամ։

Հարուցիչներն ընդգրկված են **Orthomyxoviridae** (հոլն. orthos-համաշափ, տυχա-լորձ) ընտանիքի **Influenzavirus** (իտալ. influenza di freddo-ներխուժում ցրտի հետևանքով) ցեղում, որի տարբեր ներկայացուցիչները ախտահարում են ինչպես մարդուն, այնպես էլ բազմազան կենդանիներին ու թռչուններին։ Մարդուն ախտահարող առաջին հարուցիչը հայտնաբերվել է 1933-ին Վ.Սմիթի, Ս.Էնդրյուսի և Պ.Լեյլոուի կողմից, որը հետագայում դասվել է գրիպի վիրուսնե-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դի Ա տիպին: Ավելի ուշ՝ 1940-ին, S.Ֆրենսիսը և Ռ.Մեջիլը անջատել են Բ տիպի վիրուսը, իսկ 1949-ին Ռ.Թեյլորի կողմից հայտնաբերվել է Ը տիպը: Գրիպի վիրուսների տարբերակումը A, B, C տիպերի պայմանավորված է միջուկային, ռիբոնուկլեոպրոտեինային անտիգենով, որը չի ապահովում խաչածն միջտիպային շճաբանական ռեակցիաներ:

**Սորֆոլոգիա:** Յիմնականում հանդես են գալիս կլոր կամ օվալաձև, 80-120nm չափերի վիրիոններով (նկ.133), սակայն ճակրոօրգանիզմից անջատված թարմ պրեպարատներում և հավի սաղմում




**Նկ. 133. *Influenzavirus***

Կուլտիվացման պայմաններում հաճախ հանդիպում են նաև ցուպիկանման և թելանման ձևերը: Դասվում են բարդ վիրուսներին՝ վիրիոնի միջուկը ներկայացված է սակրալածն տարածական սինետրիայի, կրկնակի ոլորված նուկլեոկապսիդով՝ կապված վիրիոնային ՌՆԹ պոլիմերազայի (P1) և էնդոնուկլեազայի (P3) հետ:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԵՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Գենոմը ձևավորված է ութ ֆրագմենտներով կազմված բացասական շղթա (-)-ՈՆԹ-ով: Միջուկը շրջափակված է բջջային ծագման երկշերտ լիպոպրոտեինային թաղանթով՝ սուպերկապսիդով, որը միջուկի հետ կապված է մատրիքսային M սպիտակուցով ձևավորված վիրիոնի կառուցվածքը կայունացնող, շերտով: Սուպերկապսիդի մակերեսին տեղակայված են մինչև 10 նմ երկարության վիրուսապեցիֆիկ գլիկոպրոտեիդային ելուններ՝ H-հեմագլուտինին և N-նեյրամինիդազա (նկ.134):



### Նկ.134. Influenzavirus (Վիրիոնի կառուցվածքը)

Հեմագլուտինինը կազմված է 3 մոլեկուլ սպիտակուցից և օժտված է հետևյալ հիմնական ֆունկցիաներով՝

◆ արտորքիոն՝ ճանաչում է թիրախ բջջների մակերեսին սիալաթրու պարունակող մուկոպետիդային ընկալիչները,


◆ ինվազիոն՝ պայմանավորում է վիրիոնի թաղանթի միաձուլումը թիրախ բջջին և դրա լիզոսոմալ թաղանթներին ու վիրուսի ներթափանցումը,

◆ արտահայտված իմունոգենությամբ օժտված անտիգեն է, ինչը պայմանավորում է անընկալության զարգացումը:

Նեյրամինիդազան տետրամեր է, պայմանավորում է վիրիոնների ելքը ախտահարված բջջից՝ նպաստելով հարուցիչի գեներալիզացմանը: Ինչպես հեմագլուտինինը, այն ևս օժտված է անտիգենությամբ, սակայն ավելի թույլ արտահայտված:

## ՄԱՍՏԻՎՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՍՆԵՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Անտիգենային կառուցվածքը ներկայացված է միջուկային S-անտիգենով՝ NP-նուկլեոպրոտեին և M-մատրիքսային սպիտակուց, որոնցով պայմանավորված է գրիպի վիրուսների՝ A, B, C, տիպային սպեցիֆիկությունը, ինչը որոշվում է կոմպլեմենտի կապնան ռեակցիայով: A-տիպի վիրուսները օժտված են նաև ենթատիպային սպեցիֆիկությամ, մակերեսային V անտիգենով՝ ներկայացված հեմագլուտինինի 12 (H1,H2,H3,H4,...H12) և նեյրամինիդազայի 9 (N1,N2,N3,N4...N9) վարիանտներով: Մարդու ախտաբանությունում հանդիպում են հեմագլուտինինի երեք (H1,H2,H3), և նեյրամինիդազայի երկու (N1,N2) վարիանտները, որոնցով ձևավորված երեք ենթատիպեր՝ H1N1, H2N2, H3N2, տարբեր ժամանակաշրջաններում խոշոր պանդեմիաների և համաճարակների պատճառ են դարձել (նկ.136): 1997-ին Չոնկոնգում, 2003-ին Նիդեռլանդներում, 2013-ին Չինաստանում, այնուհետև տարբեր աշխարհանասերում՝ Ասիա,




**Նկ.136.Գրիպի համաժարակաբանությունը**

Եվրոպա, Աֆրիկա, մարդկանց մոտ արձանագրվել են թունագրիպի վիրուսի համապատասխան ենթատիպերով՝ H5N1, H7N7, H9N7, պայմանավորված, մինչև 60% մահվան ելքով թոնկումներ:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Նշված երկու գլիկոպրոտեիդներն ել օժտված են արտահայտված փոփոխականությամբ, ինչի հետևանքով դրանց փոփոխումը մի վարիանտից մյուսին, պայմանավորում է նոր պանդեմիայի սկիզբը, իսկ նույն վարիանտի սահմաններում փոփոխականությունը՝ էափեմիաների անընդհատությունը։ Տարբեր ենթատիպերի առաջացումն ու շրջանառությունը պայմանավորված է գենոտիպային փոփոխականությամբ՝ անտիգենային դրեյֆ և շիֆտ (Ակ.135)։

Անտիգենային դրեյֆը (դանդաղ, մշտական փոփոխություն) պայմանավորված է գլիկոպրոտեիդների սինթեզը կողավորող գենի



**Ակ.135. Անտիգենային դրեյֆ և շիֆտ**

կետային մուտացիաներով, ինչի հետևանքով՝ նույն ենթատիպի սահմաններում, որոշակիորեն փոփոխվում է նոր սերնդի վիրիոնների մակերեսային գլիկոպրոտեիդների անտիգենային կառուցվածքը։ Ոեպրոդուկցիայի են ենթարկվում նախկինում շրջանառվող շտամներին անտիգենային կառուցվածքով նման տարբերակներ, սակայն պոպուլյացիայում շրջանառվող հակամարմինների սպեցիֆիկությունը դրանց նկատմամբ նվազում է և բարձրանում է մարդկանց ընկալությունը տվյալ անտիգենային վարիանտի նկատմամբ, ինչն էլ պայմանավորում է համաճարակների անընդհատությունը։

**Անտիգենային շիֆտը** (թոհջքածև փոփոխություն) հետևանք է գլիկոպրոտեիդների սինթեզը կողավորող գենի ռեկոմբինատիվ փոփոխականության և սինթեզվող գլիկոպրոտեիդի փոփոխարկման այլ

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

անտիգենային վարիանտի: Շիֆտի արդյունքում վերարտադրվում են նախկինում շրջանառվող շտամների հետ կապ չունեցող նոր անտիգենային ենթատիպի վիրիոններ, որոնցով պայմանավորվում է նոր պանդեմիայի զարգացումը: Ենթադրվում է, որ անտիգենային շիֆտը իրականանում է թրչունների օրգանիզմում՝ վիրուսի երկու տարբեր ենթատիպերի միաժամանակյա ռեպրոդուկցիայի դեպքում:

**Վիրուսի ռեպրոդուկցիան:** Թիրախ բջիջների կորիզում, վիրիոնի կազմում գտնվող ՌՆԹ կախյալ ՌՆԹ պոլիմերազա ֆերմենտի (տրանսկրիպտազա) միջնորդությամբ, վիրուսի գենոմային (-)ՌՆԹ-ի տրանսկրիբցիայի շնորհիվ սինթեզվում են 3 տիպի վիրուսապեցիֆիկ ՌՆԹ շղթաներ՝

♦գենոմային (-)ՌՆԹ-ին կոմպլեմենտար, ոչ ամբողջական (**ԻՌՆԹ** շղթաներ, որոնք բջջի ռիբոսոմներում պայմանավորվում են վիրուսապեցիֆիկ սպիտակուցների սինթեզը դրւստր պոպուլյացիայի համար,

♦սահմանափակ քանակով գենոմային (-)ՌՆԹ-ին կոմպլեմենտար, ամբողջական **ՌՆԹ կրպիաներ**, որոնք նատրիքս են դրւստր պոպուլյացիայի գենոմային շղթաների սինթեզի համար,

♦դրւստր պոպուլյացիայի գենոմը կազմող (-)ՌՆԹ շղթաներ:

Բջջի ռիբոսոմներում սինթեզված արտաքին թաղանթի սպիտակուցները միգրացիայի են ենթարկվում դեպի ցիտոպլազմատիկ թաղանթ և միտրոնելով դրա կազմության մեջ՝ նոդիֆիկացնում են այն: Կապսիդային սպիտակուցներով ու գենոմային նուկլեինաթրվով ձևավորվում է նուկլեոկապսիդը, որն ուղղորդվում է դեպի բջջի նոդիֆիկացված ցիտոպլազմատիկ թաղանթը, ճնշում է նրա վրա, առաջացնում վերջինիս արտափրում ու շրջափակվելով այդ թաղանթով՝ պայմանավորվում է հասուն վիրիոնի ելքը բողբջնամբ: Վիրուսի նկարագրված կենսական ցիկլը տևում է 6-8 ժամ:

**Պաթոգենեզը և կլինիկան:** Վիրուսի համար մուտքի դուր է շնչական ուղիների լորձաթաղանթը, որի էափելային բջիջներում ռեպրոդուկցիայի ենթարկվելով ու կուտակվելով մեծ քանակներով՝ դրանք անցնում են արյան հոսք՝ պայմանավորելով վիրուսեմիան:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Արյան հոսք են անցնում նաև հյուսվածքների դեստրուկտիվ փոփոխությունների հետևանքով առաջացած տոքսիկ մետաբոլիտներն ու առաջացնում օրգանիզմի ընդհանուր ինտոքսիվակցիա: Արյան հոսքով վիրուսի շրջանառությունը նպաստում է անորների էնդոքտելի ախտահարումանը, դրանց թափանցելիության մեծացմանը, ներքին օրգաններում սահմանափակ կամ տարածում արյունազեղումներին: Արձանագրվում են ախտաբանական փոփոխություններ միոկարդում, թոքերում, երիկամներում, կենտրոնական նյարդային համակարգում: Ինուն համակարգի բջիջների ախտահարումը նպաստում է օրգանիզմում տրանզիտոր ինունոդեֆիցիտի զարգացմանը և երկրորդային բակտերիային ինֆեկցիաներով հիվանդության բարդացմանը:

Ինկուբացիոն շրջանը տևում է մի քանի ժամից մինչև 2-3 օր, որին անմիջականորեն հետևում է նախանշանների դրսնորումը. Նախ նկատվում է ընդհանուր թուլություն, ջարդվածության զգացում, անհանգստություն, ապա զարգանում են իիմնական սիմպտոմներ՝ տեսնելով մինչև  $38\text{-}39^{\circ}\text{C}$ , հարբուխ, արտադրություն քթից, հազ, փոշտոց, գլխացավեր, մկանացավեր, ցավեր ոսկրերում, հոդերում և այլն: Տենրային շրջանը տևում է իիմնականում 3-5 օր, որին բարենապատ դեպքերում հաջորդում է ապաքինման շրջանն ու կլինիկական ախտանիշների հետ զարգացումը:

Հիվանդությունից հետո օրգանիզմում ծևավորվում է կայուն լարված ենթատիպային սպեցիֆիկության անընկալիություն, ինչի վկայությունն է 1957-ից մարդկային պոպուլյացիաներում շուրջ քսան տարվա բացակայությունից հետո, 1977-ին գրիպի վիրուսի H1N1 ենթատիպի վերադարձի ու շրջանառության պայմաններում, գերազանցապես մինչև 20 տարեկան անձանց ընդգրկումը համաճարակային պրոցեսում:

Լաբորատոր ախտորոշումն իրականացվում է իիմնականում շճաբանական մեթոդներով, ինունոֆյուլուրեսցենցիայի ռեակցիայով, ինչպես նաև վիրուսաբանական, գենետիկական հետազոտության եղանակներով ու էլեկտրոնային մանրադիտակի օգնությամբ:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**Բուժումը** կատարվում է վիրուլոցիդ պրեպարատներով, հակագրիպային լցով, իսկ հիվանդության վաղ շրջանում՝ նաև ինտերֆերոնով:

**Սպեցիֆիկ կանխարգելման**, կոլեկտիվ անընկալության ստեղծման նպատակով կիրառվում են կենդանի ատենուացված, ինակտիվացված վիրիոնային, ենթամիավորային վակցինաներ՝ «Գրիպովակ», «Ինֆյուլվակ», «Ագրիպալ», «Գրիպոլ», «Ֆլյուարիկս» և այլն:

### 12.1.2. Պարամիքսովիրուսներ (Paramyxoviridae)

**Paramyxoviridae** ընտանիքն ընդգրկում է մարդու համար ախտածին 3 ցեղ՝ **Paramyxovirus**, **Morbillivirus**, **Pneumovirus**, որոնք ախտահարում են հիմնականում մանկական տարիքը: Վիրիոնը բարդ կառուցվածք ունի: Դրանք կլոր, սպիրալաձև սիմետրիայի տիպով, 120-500նմ չափերի մասնիկներ են (նկ.137):




**Նկ.137. Paramyxovirus**

Գենոմը ներկայացված է միաթել, անընդհատ, բացասական շղթա (-)ՌՆԹ-ով, որին սերտորեն կապված են **NP** սպիտակուցք և այլին սերտօպային ակտիվությամբ **P** ու **L** ֆերմենտները: Նույնականացված շրջակաված է մատրիքսային **M** սպիտակուցով: Սուպերկապսիդը կազմված է բջջային ծագման երկշերտ լիպոպոտեհիդա-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԻՎԱՐԵԱՆ ՈՒԹՅՈՒՆ

յին թաղանթով ու դրա մեջ ընկղմված վիրուսապեցիֆիկ գլիկոպրոտեինային ելուններով՝ **HN** և **F**: Առաջինն օժտված հեմագյուտինինային և նեյրամինիդազային ակտիվությամբ, **F**-ը պատասխանատու է թաղանթների միաձուլման, սինպլաստների առաջացնան համար, ցուցաբերում է հեմոլիսիկ և ցիտոտոքսիկ ազդեցություն (նկ.138):



**Նկ.138. Paramyxo virus (Վիրիոնի կառուցվածքը)**

Ուպրոդրուկցիան ամբողջությամբ իրականանում է թիրախ բջջի ցիտոպլազմայում: Պարամիքսովիրուսների մոտ տարբերում են տիպային սպեցիֆիկության S-միջուկային և վարիանտային սպեցիֆիկության V-մակերեսային անտիգեններ: Ընտանիքի սահմաններում խաչած վիրուսագոյող անտիգեններից գուրկ են:

Պարամիքսովիրուս ցեղն ընդգրկում է պարագրիպի, որոնք հանդես են գալիս 4 շճավարիանտով և համաճարակային պարօտիտի՝ խոզուկ, հարուցիչները (մեկ շճավարիանտ):

### 12.1.2.1. Պարագրիպ

Պարագրիպի հարուցիչները հայտնաբերվել են 1956-ին Չանոկի կողմից՝ սուր ռեսպիրատոր հիվանդություններով (ՍՈՅ) երեխաներից: Ներկայումս հայտնի բոլոր շճավարիանտները դրսկորում են արտահայտված հեմադրոբցիոն ակտիվություն:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Առանձին շճավարիանտների հեմագյուտինինային ակտիվության դրսևորման տարբերությունները կիրառվում է դրանց տարբերակման համար: Բոլոր շճավարիանտներն օժտված են չափավոր արտահայտված նեյրամինիդազային, հեմոլիտիկ և սիմպլաստ առաջացնող հատկություններով: Առավել ցիտոախտածին ազդեցությամբ օժտված են 1 և 4 շճավարիանտները: Վիրուսի առաջնային ռեպրոդուկցիան իրականանում է շնչական ուղիների վերին հատվածների էպիթելիային թղիջներում, որտեղից վիրուսային մասնիկներն անցնելով արյան հոսք՝ առաջացնում են վիրուսենիա:

Ինկուբացիոն շրջանը 3-6 օր է: Մեծահասակների շրջանում հիվանդությունը հիմնականում ընթանում է վերին շնչական ուղիների կատառով, երեխաների շրջանում հիվանդության ընթացքն ավելի ծանր է ընդհանուր ինտոքսիկացիայի նշաններով: Առավել հաճախ արձանագրվում է լարինգոտրախեռոբրոնխիտ՝ կեղծ կրուպի զարգացնամբ, վաղ մանկական հասակի երեխաների մոտ՝ պնևմոնիա, բրոնխիտով:

Դիվանդությունից հետո զարգանում է կարճատև տիպասպեցիֆիկ հումորալ անընկալիություն, կարևոր նշանակություն ունեն նաև սեկրետոր հակամարմինները: Վակցինոպրոֆիլակտիկա չի կիրառվում:

### 12.1.2.2. Համաճարակային պարօտիտ

**Համաճարակային պարօտիտի հարուցիչը հայտնաբերվել է 1934-ին Կ.Զոնսոնի և Է.Գուլպասչերի կողմից: Այն օժտված է պարամիքսովիրուսներին բնորոշ հատկանիշներով, պարունակում է V և S անտիգեններ, հայտնի է մեկ շճավարիանտ: Բջջային կուլտուրաներում առաջացնում է սինցիտիաներ, հավի սաղմում կուլտիվացման պայմաններում արձանագրվում է վիրուսի ինֆեկցիոն հատկությունների նվազում, ինչը կիրառվում է ատենուացված վակցինային շտամների ստացման համար:**

Վիրուսի առաջնային ռեպրոդուկցիան իրականանում է քթընպանում, որին հաջորդում է վիրուսեմիան, հարուցիչի գեներա-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

լիզացումը և առավելապես գեղձային օրգանների ախտահարումը՝ հարականջային, ենթաստամոքսային, վահանածև գեղձեր, անորդիներ, ծվարաններ, ուղեղ: Առաջնային ռեպրոդուկցիան հնարավոր է նաև հարականջային գեղձերի էպիթելյային հյուսվածքում, ուր հարուցիչները կարող են անցնել ստենոնվան խողովակով գեղձի արտազատիչ ծորանով:

Ինկուբացիոն շրջանը 14-21 օր է, իիվանդության տիպիկ ձևերն ընթանում են միակողմանի կամ երկկողմանի պարուտիտով՝ գեղձերի մեծացմամբ, օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիայով, տենդով: Հնարավոր է սերոզ մենինգիտի, էպիդիմոօրինիտի զարգացում, աղջիկների մոտ՝ ծվարանների բորբքում և այլն:

Դիվանդությունն արձանագրվում է ամենուրեք՝ առավելագույն հիվանդացություն առաջացնելով տարվա ցուրտ եղանակներին: Էպիդեմիկ պրոցեսում ընդգրկվում են հիմնականում 5-10 տարեկան երեխանները: Ինֆեկցիայի աղբյուր է իիվանդ մարդը: Դիվանդությունից հետո զարգանում է կայուն, լարված ինունիտես: Սպեցիֆիկ կանխարգելման նպատակով կիրառվում է կենդանի ատենուացված վակցինա:

### 12.1.2.3. Կարմրուկ

Կարմրուկի վիրուսային ծագումը հաստատել են Զ.Անդերսոնը և Զ.Գոլդբերգը 1911-ին, իսկ հարուցիչը՝ Morbillivirus ցեղում ընդգրկված կարմրուկի վիրուսը, անջատել են 1954-ին Դ.Էնդերսը և Տ.Պիրլզը: Այն օժտված է պարամիքսովիրուսների ընտանիքին բնորոշ հատկանիշների մեջամասնությամբ, սակայն ազյուտինացնում է միայն կապիկի երիթրոցիտները, բացի այդ, այն չունի նեյրամինիդազային ակտիվություն ու դժվար է աղապտացվում հավի սաղմում: Ծճավարիանտների չի տարբերակվում, հեմագյուտինինի և F-սպիտակուցի նկատմամբ սիթեզված հակամարմինները վիրուսով ախտահարված քիջների նկատմամբ ցուցաբերում են ցիտոտոքսիկ ազդեցություն: Բջջային կուլտուրաներում ցիտոախտածին ազդեցությունը դրսևորվում է սիմպլաստների առաջացմանը:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Վիրուսի առաջնային ռեպորտուկցիան իրականանում է քթընպամի, շնչափողի, բրոնխների լորձաթաղանթի և այթելային բջիջներում, լիմֆատիկ հանգույցներում, որտեղից ինկուբացիոն շրջանի 4-5-րդ օրերին հարուցիչներն անցում են արյան հոսք և գեներալիզացման հետևանքով ախտահարում առավելապես ռետիկուլէնդրելային համակարգի բջիջները: Ինուն մեխանիզմների ակտիվացումը նպաստում է ախտահարված բջիջների ոչնչացմանը, հարուցիչների ելքին ու վիրուսենիայի երկրորդ ալիքի զարգացմանը, ինչը պայմանավորում է անորների ենդոթելի, շնչական ուղիների և բերանի խոռոչի լորձաթաղանթի և այթելային բջիջների կրկնակի ախտահարումը, հյուսվածքների այտուցն ու նեկրոտիկ օջախների զարգացումը դրանցում: Ծանր դեպքերում ախտաբանական պրոցեսի մեջ կարող է ընդգրկվել նաև ԿՆ-ը:

Մոտ 8-13 օր տևող ինկուբացիոն շրջանին հետևում է կարճատև, սուր ռեսպիրատոր վիրուսային ինֆեկցիաներին բնորոշ ախտանիշներով (գլխացավ, ռինիտ, ֆարինգիտ, կոնյուլստիվիտ, սուրֆերիլ ծերմություն) արտահայտվող պրոդրոմալ շրջանը: Հիվանդության ծաղկման շրջանին բնորոշ, առավել վաղ, սպեցիֆիկ ախտանիշը ցանից 1-2 օր շուտ, բերանի խոռոչի լորձաթաղանթի վրա՝ այտերի ներսային մակերեսին, **Ֆիլատով-Կոպիկի** բժերի առաջացումն է (կարմիր օղով շրջափակված, սպիտակ, 1-2մն տրամագծով, լորձաթաղանթից մի փոքր բարձրացած կետիկներ): Միաժամանակ նշիկների, ընպանի հետին պատի վրա կարելի է հայտնաբերել անհարթ եզրերով, խոշոր, կարմիր բժեր: Հիվանդության առաջին օրերին դրսեռորդում է նաև պապուլյոզ ցանը, որի էլեմենտները հակում ունեն միաձուլվելու և առաջացնելու տարածում ալ կարմիր բժեր: Ընդ որում, ցանավորումը սկսվում է գլխի, պարանոցի շրջանից և հետո տարածվում է կրծքավանդակի, իրանի, այնուհետև՝ վերջույթների վրա, հետագայում՝ ռեկրնվալեսցենցիայի շրջանում անհետանում է նույն հաջորդականությամբ՝ բռողնելով որոշակի պիգմենտավորում դեռևս 2-3 շաբաթ: Անբարենպաստ

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

դեպքերում կարմրուկը կարող է բարդանալ երկրորդային բակտերիային հնֆեկցիաներով:

Հետինֆեկցիոն իմունիտետը կայուն է, լարված, ցմահ՝ պայմանավորված պաշտպանության հումորալ մեխանիզմով: Կրկնակի հիվանդացություն արձանագրվում է շատ հազվադեպ: Նորածինները կյանքի առաջին մի քանի ամիսների ընթացքում ապահովված են կարմրուկով հիվանդանալուց՝ ի շնորհիվ ճայրական հակամարնինների:

Ինֆեկցիայի աղբյուր է հիվանդ մարդը, փոխանցման մեխանիզմը հիմնականում օդակաթիլային է, չի բացառվում նաև կոնտակտային մեխանիզմը: Համաճարակաբանական առունուվ հիվանդներն առավել վտանգ են ներկայացնում պրոդրոմալ և ցանավորման շրջաններում:

**Սպեցիֆիկ պրոֆիլակտիկան** իրականացվում է հակակարմրուկային իմունոգլոբուլինով, ինչը արդյունավետ է նաև բուժման նպատակով: **Ակտիվ անընկալիություն** ապահովելու համար կիրառվում է կենդանի ատենուացված վակցինա:

### **12.1.2.4. Ենթասուր սկլերեզող պանենցեֆալիտ**

Ենթասուր սկլերեզող պանենցեֆալիտը զարգանում է կարմրուկով հիվանդացած անձանց մոտ, տարիքային բավականին լայն դիապազոնում 2-30 տարեկան հասակներում, որպես հետևանք կենտրոնական նյարդային համակարգի բջիջներում նորբիլիվիրուսի երկարատև պերսիստենցիայի: Գերազանցապես նյարդային համակարգի բջիջների դեստրուկտիվ փոփոխություններով, հոգեհուզական, մտավոր, շարժողական խանգարումներով ընթացող, 100% դեպքերում մահվամբ ավարտվող հիվանդություն է: Ենթադրվում է, որ նյարդային բջիջները չեն ապահովում բարենպաստ պայմաններ վիրուսի լիարժեք ռեպրոդուկցիայի համար, դրանցում խանգարվում է վերջիններիս վերարտադրությունը ինքնահավաքման փուլում և արգելակվում է հասուն վիրիոնների կազմավորումը: Այս հանգամանքը նպաստում է վիրուսսպեցիֆիկ սպիտակուցների, նուկլեինա-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

թքուների, մատրիքսային սպիտակուցից ու սուպերկապսիդից զուրկ դեֆեկտային վիրիոնների կուտակմանը, դրանց երկարատև պերսիստենցիային՝ պայմանավորելով թիրախ բջջների դեստրուկտիվ փոփոխություններն ու մահը: Միևնույն ժամանակ հիվանդության պարոգենեզում կարևորվում է օրգանիզմի կողմից իմուն պատասխանի զարգացման անկարողությունը, ինչը հավանաբար պայմանավորված է վիրուսսպեցիֆիկ գլիկոպրոտեինների էքսպրեսիայի դժվարություններով կամ անհնարինությամբ ախտահարված բջջների մակերեսին, որի հետևանքով Դ ցիտոտոքսիկ բջջների կողմից վերջիններս չեն ճանաչվում ու չի ապահովվում ախտահարված բջջների էլիմինացիան օրգանիզմից:

### 12.1.2.5. PC (Ուսապիրատոր սինցիտիալ) վիրուս

PC վիրուսն ընդգրկված է Pneumovirus ցեղում, այլ պարամիքսվիրուսներից տարբերվում է վիրիոնի արտահայտված պոլիմորֆիզմով, գենոմի առավել բարդ կառուցվածքով և բացի այդ, բնութագրվում է հեմագյուտինինային, հեմադրոքիոն ու նեյրամինիդազային ակտիվության խառար բացակայությամբ: Հաստատված է առանձին շտամների անտիգենային տարբերությունները, ինչը հավանաբար պայմանավորված է մակերեսային NH և F գլիկոպրոտեինների փոփոխականությամբ: Բջջային կուլտուրաներում առաջացնում է սիմպլաստներ և սինցիտիաներ, հավի սաղմում չի աճում:

Նորածինների և վաղ մանկական տարիքի երեխաների շրջանում ստորին շնչական ուղիները ախտահարող առավել հաճախ հանդիպող հարուցիչներից է, ինչը շատ կարևորում է դրա դերը ծանր ներիիվանդանոցային պնևմոնիաների էթիոլոգիայում: Տարիքին զուգընթաց՝ PC ինֆեկցիայի ծանրության աստիճանը նվազում է: Վիրուսի առաջնային ռեպրոդուկցիան իրականանում է շնչական ուղիների լորձաթաղանթի առավելապես ստորին հատվածների էպիթելիալին բջջներում, որին հաջորդում է վիրուսնեմիան ու հարուցիչի գեներալիզացումը: Օրգանիզմում սինթեզվում են

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՐԴԱՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Վիրուսապեցիֆիկ հակամարմիններ, որոնք պայմանավորում են շրջանառվող իմուն կոմպլեքսների առաջացումը և իմունապահտաբանական ռեակցիաների զարգացումը: PC վիրուսը օժտված է արտահայտված իմունոտվյանի ազդեցությամբ, օրգանիզմում ճնշում է իմունիտետի և բջջային, և հումորալ ռեակցիաները, ինչով էլ բացատրվում է հիվանդության հաճախակի բարդացումը բակտերիային ինֆեկցիաներով:

Հիվանդությունից հետո ձևավորվում է կարճատև՝ մինչև 1 տարի, տիպասապեցիֆիկ անընկալություն՝ պայմանավորված հիմնականում S IgA-ով: Վակցինոպրոֆիլակտիկա չի իրականացվում:

### 12.2. ԿԱՐՄՐԱԽՍ (Rubivirus)

Կարմրախտի (**Rubeola**) վերաբերյալ տեղեկությունները, որպես մաշկի մանր պտավոր ցանավորմամբ ու տարածուն լիմֆադենոպաթիայով ուղեկցվող վարակիչ հիվանդություն, հանդիպում են դեռևս միջին դարերում: Սակայն դրա տարրերակումը ննան ախտանիշներով ընթացող այլ հիվանդություններից՝ կարմրուկից, քութեշից, և պաշտոնական գրանցումը որպես ինքնուրույն հիվանդություն կատարվել է XIX դարի վերջում:

**Դասակարգում և մորֆոլոգիա:** Հիվանդության վիրուսային եքիոլոգիան հաստատվել է XX դարի երկրորդ կեսին: Հարուցիչը բջջային կուլտուրայում անջատվել է 1962թ. և դասվել է **Togaviridae** ընտանիքի **Rubivirus** (լատ. rubrum-կարմիր՝ պայմանավորված, բծավոր-պապուլային ցանի առաջացման հետևանքով, մաշկի կարմրությամբ) ցեղին: Վիրիոնը սֆերիկ է, ունի 60-70nm տրամագիծ, բարդ կառուցվածք: Գենոմը ներկայացված է միաթել, դրական շղթա (+) ՈՆԹ-ով, շրջափակված իկոսաեղրիկ կապսիդով ու արտաքին լիպոպրոտեինային թաղանթով: Վերջինիս մակերեսին գտնվում են E1 և E2 գլիկոպրոտեինային փշանման ելունները: Ի տարրերություն այլ տողավիրուսների կարմրախտի վիրուսն ունի հեմագլյուտի-մինային, հեմոլիտիկ և չափավոր արտահայտված ներյրամինիդագային ակտիվություն:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**Անտիգեններ:** Օժտված է նուկլեոկապսիդային, սպիտակուցային բնույթի, կոմպլեմենտի կապման ռեակցիայով հայտնաբերվող C և մակերսային, **հեմագյուտինինային** ակտիվությամբ օժտված E1 ու չեզոքացման ռեակցիայով հայտնաբերվող E2 անտիգեններով։ Ծավարիանտների չի տարբերակվում։ Մակրոօրգանիզմում E2 անտիգենի նկատմամբ սինթեզված հակամարմիններն ունեն արտահայտված պաշտպանական ազդեցություն։

Նարմրախատի վիրուսն արտաքին միջավայրում անկայուն է։ Արագ ոչնչանում է արևի, ուլտրամանուշակագույն ճառագայթների, բարձր ջերմաստիճանի, քլոր պարունակող միացությունների, օրգանական լուծիչների, ֆորմալինի ազդեցությամբ։ Զգայուն է եթերի և դետերգենտների նկատմամբ։ Սառեցման պայմաններում պահպանում է ինֆեկցիոն ակտիվությունը տարիներ։

Արիեստական պայմաններում վիրուսի ռեպրոդուկցիան իրականացվում է մի շարք վերահյուսվող բջջային կուլտուրաներում, որտեղ ցիտոախտածին ազդեցություն գրեթե չի արձանագրվում։ Առավել արդյունավետ վիրուսի վերարտադրությունը իրականանում է մարդկային էնրիփոնի հյուսվածքներից ստացված առաջնային բջջային կուլտուրաներում, ինչը հիմնականում ուղեկցվում է ցիտոախտածին ազդեցությամբ։ Կարմրախատի նկատմամբ զգայուն են որոշ փորձարարական կենդանիներ, որոնց մոտ ինֆեկցիան ընթանում է անսիմպտոմ և կարող է փոխանցվել տրանսպլացենտար։

Նարմրախատը անթրոպոնոց հիվանդություն է։ Ինֆեկցիայի աղբյուր է մարդու հիվանդության և մանիֆեստ և անսիմպտոմ ձևերի ժամանակ՝ ինկուբացիոն շրջանի վերջից մինչև ցանավորնանացին-երկրորդ շաբաթները։ Դամաճարակաբանական առումով կարևորվում են կարմրախտով ծնված երեխաները (ի ծնե կարմրախտ), որոնք վիրուսը կարող են արտազատել հետօննոյան մեկներկու տարիների ընթացքում։ Դարուցիչներն արտաքին միջավայր են անցնում հիվանդի քիթ-ընպանային արտազատուկով, ինչպես նաև մեզով ու կղանքով և քանի որ մակրոօրգանիզմից դուրս դրանք

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

անկայուն են, վարակնան համար, ի տարբերություն կարմրուկի, ջրծաղիկի, համաճարակային պարօտիտի, անհրաժեշտ է ինֆեկցիայի աղբյուրի հետ անմիջական և երկարատև շփում։ Դիվանդանուն են հիմնականուն մանկական տարիքում և մինչև 20 տարեկան հասակը մարդկանց շուրջ 80%-ը ձեռք է բերում անընկալություն կարմրախտի նկատմամբ։

**Պարզգենեզ և կլինիկա:** Տարբերում են կարմրախտի երկու ձև՝ ձեռքբերովի և ի ծնե։ Առաջին դեպքում ինֆեկցիայի նուտքի դուռ են քթընպանի և վերին շնչական ուղիների լորձաթաղանթները, որտեղից հարուցիչները թափանցում են սահմանային ավշային հանգույցներ (պարանոցային, ծոծրակային, հետականջային) և վերարտադրվում այնտեղ։ Վիրուսի առաջնային ռեպրոդուկցիան ուղեկցվում է վիրուսեմիայով, հարուցիչների տարածմամբ ողջ օրգանիզմով և առավելապես լիմֆատիկ հանգույցների ու մաշկի էպիթելային բջիջների ախտահարմամբ, որտեղ արձանագրվում է ինուն-քորբոքային ռեակցիայի զարգացում։

Դնկութացիոն շրջանը 2-3 շաբաթ է։ Դիվանդությունը սկսվում է օրգանիզմի ջերմաստիճանի չափավոր բարձրացմամբ, կատառալ երևույթներով, կրնյուկստիվիտով։ Բնութագրական է ծոծրակային և հետարանոցային ավշային հանգույցների մեծացումը, որոնք շոշափման ժամանակ ցավոտ են։ Նախանշանային շրջանին հաջորդում է հիվանդության ծաղկման փուլը, որը դրսնորվում է մանր կետավոր, պապուլյոզ ցանի առաջացմամբ, սկզբում դեմքի, պարանոցի մակերեսին, այնուհետև մի քանի ժամվա ընթացքում ընդգրկելով մարմնի բոլոր մաշկային ծածկույթները։ 2-3 օր անց ցանային էլեմենտներն անհետանում են առանց որևէ հետք թողնելու, սակայն լիմֆադենիտը պահպանվում է դեռևս 2-3 շաբաթ։ Մանկական հասակում կարմրախտը հիմնականում ընթանում է թեթև։

Մեծահասակների մոտ հիվանդությունն ընդհանուր առնամբ ավելի ծանր է ընթանում, ինտոքսիկացիայի նշաններն ավելի

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱՔՏԱՆ ՈՒԹՅՈՒՆ

արտահայտված են և երկարատև։ Հաճախ արձանագրվում է կարմրախտային արթրիտի, մենինգեֆալիտի զարգացում։

Առավել վտանգավոր է հղի կանանց վարակումը, քանի որ հաստատված է կարմրախտի վիրուսի արտահայտված խնամակցությունը սաղմնային հյուսվածքների բջիջների նկատմամբ և սաղմի ներարգանդային վարակումը, ինչը կարող է պատճառ դառնալ մեռելածնության կամ ի ծնե կարմրախտի զարգացման։

Ի ծնե կարմրախտը դրսարկում է նորածինների մոտ տարբեր անոնմալիաների առկայությամբ, որոնցից առվել հատկանշական են կատառակտը, սրտի արատները, խլությունը։ Կարմրախտով ծնված երեխաների մոտ հաճախ արձանագրվում է կենտրոնական նյարդային համակարգի ախտահարում, կարող է զարգանալ շարժողական, մտավոր ֆունկցիաների ընկճմամբ ուղեկցվող պրոգրեսիվող կարմրախտային պանինցեֆայիտ, որն ի վերջո ավարտվում է մահվամբ։

**Ինունիտետ:** Զեռքբերովի կարմրախտից հետո զարգանում է կայուն, լարված անընկալություն, պայմանավորված գերաանցապես հակահենագլուխինային և վիրուս չեզոքացնող հակամարդիններով։ Ի ծնե կարմրախտի դեպքում անընկալությունը կայուն չէ։

Լաբորատոր ախտորոշումն իրականացվում է վիրուսաբանական, շճաբանական եղանակներով։


**Բուժում և կանխարգելում:** Սաեցիֆիկ բուժնան միջոցներ չկան։ Կանխարգելուն իրականացվում է կենդանի ատենուացված վակցինայով։ Պլանային պատվաստումները կատարվում են 1 տարեկան հասակում ասոցացված վակցինայով (պարօտիտ-կարմրուկ-կարմրախտային վակցինա), ռեվակցինացումները և ռիսկի խնբերի անհատական պատվաստումները՝ մոնովակցինայով։

### 12.3. ԱԴԵՆՈՎԻՐՈՒՍԱՅԻՆ ԻՆՖԵԿՑԻԱՆԵՐ (Adenoviridae)

Աղենովիրուսները հայտնաբերվել են XX դարի 50-ական թվականներին աղենոիդային բջջային կուլտուրաներում։ Ներկայումս հայտնի է կաթնասուններին ախտահարող ավելի քան 90 շճա-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Վարդիանտ, որոնցից 49 հանդիպում են մարդու ախտաբանությունում՝ առաջացնելով հիմնականում տեսողական, շնչական և աղիքային համակարգի ախտահարումներ: Վիրիոնն ունի պարզ կառուցվածք, ներկայացված է իկոսաեղիկ տարածական սիմետրիայով, 70-90nm տրամագծով սֆերիկ մասնիկներով, որոնց 12 գագաթներից դուրս են գալիս թելանման ելուններ (Ակ.139):




Ակ.139. *Adenovirus*

Գենոմը կազմված է երկել գծային ԴՆԹ-ից, որի հետ կովալենտ կապով կապված են վիրուսի ներբջջային ռեպրոդուկցիան իրականացնող, ֆերմենտատիվ ակտիվությամբ օժտված սպիտակուցային մոլեկուլներ՝ նուկլեինաթթվի հետ կազմավորելով վիրիոնի միջուկը: Նուկլեոկապսիդը հանդիսանում է կոմպլեմենտը կապող անտիգեն և նույն է բոլոր շճավարիանուների համար: Վարդիանտային սպեցիֆիկությունը պայմանավորված է գլիկոպրոտեինային թելիկներով, որոնք օժտված են հեմագլուտինացնող հատկությամբ:

Աղենովիրուսների կուտիվացումը հիմնականում կազմակերպվում է բջջային կուլտուրաներում, որտեղ ցիտոախտածին ազդեցությունը պայմանավորվում է ոչ միայն վիրուսի վերարտադրությամբ, այլև անմիջական տոքսիկ ազդեցությամբ: Վիրուսսպեցիֆիկ նուկլեինաթթուների սինթեզը և վիրիոնի ինքնահավաքումն իրականանում է թիրախ բջջի կորիզում, որտեղ առաջանում են բյուրեղաննան

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

**Վիրուսային պարփակումներ** (Ըկ.140): Աղենովիրուսների ելքը թիրախ բջիջներից ուղեկցվում է վերջիններիս ոչնչացմանք:



**Ըկ.140. Աղենովիրուսային ներքջային պարփակումներ**

**Պաթոգենեզ և կլինիկա:** Ինֆեկցիայի աղբյուր է հիվանդ մարդու կամ վիրուսակիրը: Վարակը փոխանցվում է հմնականում օդակաթիլային և ֆեկալ-օրու մեխանիզմներով: Վիրուսի առաջնային ռեպրոդուկցիան իրականանում է շնչական ուղիների և աղիների լորձաթաղանթում, աչքի կոնյուկտիվայում, լիմֆոիդ հյուսվածքում (նշիկներ, աղենոիդներ, մեզենտերիալ լիմֆատիկ հանգույցներ):

Վիրուսենիայի փուլում հարուցիչները ախտահարում են անորոշների էնդոթելը, ինչը պայմանավորում է լորձաթաղանթների էքսուդատիվ բորբոքումը, ֆիբրինոզ թաղանթի և նեկրոզի առաջումը: Աղենովիրուսները ունակ են անցնելու պլազմատար պատճեցը, առաջացնելու պտղի հիվանդություններ, անոնալիաներ, ինչպես նաև նորածինների մահացու պնևմոնիա: Առավել հաճախ աղենովիրուսները հարուցում են սուր ռեսպիրատոր հիվանդություններ՝ ֆարինգիտներ, լարինգիտներ, տրախեոբրոնխիտներ: Երեխաների և մեծահասակների մոտ կարող են առաջացնել

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

ձգձգվող ընթացքով, մանր օջախային կամ նաև ինտերստիցիալ պմևանիաներ: Աղենովիրուսային ինֆեկցիաների համար բնութագրական է լորձաթաղանթների, նշիկների լիմֆոիդ հյուսվածքի, աղենոիդների, կոնյուկտիվայի համակցված ախտահարումները՝ ֆարինգոլոնյուլստիվիտներ, կեռաստոկոնյուլստիվիտներ, որոնք ոչ հազվադեպ կարող են արձանագրվել ներիիվանդանոցային պայմաններում: Աղիքային աղենովիրուսները պատճառ են հանդիսանում սուր գաստրոէնտերիտների բռնկումների, իիմնականում երեխաների և տարեց անձանց շրջանում: Օրգանիզմում երկարատև պերսիստենցիայի հետևանքով, երեխաների մոտ հնարավոր է օրգանիզմի ալերգիզացում և ասթմատիկ բրոնխիտի, լարինգոֆրոնիչիտի զարգացում:

Հիվանդությունից հետո օրգանիզմում ձևավորվում է կարճատև տիպասպեցիֆիկ անընկալություն, ինչի վկայությունն են հետինֆեցիոն մի քանի ամիսների ընթացքում արյան շիճուկում սպեցիֆիկ M և G դասերի հակամարմինների և լորձաթաղանթներում IgA-ի զգալի տիտրի առկայությունը:

### 12.4. ՌԱԲԴՈՎԻՐՈՒՍԵՐ (Rhabdoviridae)

Ընտանիքն ընդգրկում է մարդուն և կենդանիներին ախտահարող ավելի քան 80 վիրուս, միավորված **Lyssavirus** և **Vesiculovirus** ցեղերում: Մարդու ախտաբանությունում կարևորվում են կատաղություն և վեզիկուլյար ստոմատիտ հիվանդությունները:


#### 12.4.1. Կատաղություն (Rabies)

Սուր, զոռանքրոպնոզ, գերազանցապես կենտրոնական նյարդային համակարգի նեյրոնների ախտահարմանք ընթացող, ընդհանուր գրգռվածությամբ, անհանգստությամբ, ջրավախությամբ, շնչառական ու կլման մկանների, հիվանդության վերջում նաև վերջույթների պարալիչներով դրսորվող, ավելի քան 90% դեպքերում նահացու ելքով հիվանդություն է: Այն զարգանում է

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱՔՏԱՆ ՈՒԹՅՈՒՆ

կատաղությամբ հիվանդ կենդանիների կծելու և նրանց թքի հետ վնասվածքային մակերեսների շփնան հետևանքով։ Յարուցիչը դասվում է *Lyssavirus* ցեղին։

**Մորֆոլոգիա:** Վիրիոնն ունի բարդ կառուցվածք, փամփուշտանման է (նկ.141), 50-60nm լայնակի կտրվածքով, մինչև 170nm երկարությամբ։




Նկ.141. Կատաղության վիրուս

Նուկլեոկապսիդը օժտված է սպիրալաձև տարածական սիմետրիայի տիպով՝ շրջափակված սուպերկապսիդով։ Սուպերկապսիդի և կապսիդի միջև ընկած տարածքը զբաղեցնում է M մատրիքսային սպիտակուցը (նկ.142)։

Գենոմը ներկայացված է միաթել բացասական շղթա (-)ՌՆԹ-ով՝ ասոցացված վիրուսի ռեպրոդուկցիան պայմանավորող ֆերմենտներով։ Սուպերկապսիդը ընկղմված է արտահայտված անտիգենությամբ և ինունգենությամբ օժտված G գլիկոպրոտեինային ելուներով։

Տարբերում են կատաղության վիրուսի երկու տիպ՝



### Նկ. 142. Կատաղության վիրուս (վիրիոնի կառուցվածքը)

◆ Վայրի (փողոցային) վիրուս, որը շրջանառվում է տարբեր կենդանիների պոպուլյացիաներում և ախտածին է մարդու համար:


◆ Ֆիքսված վիրուս (virus fixe), որն ստացվել է L.Պասերի կողմից որպես վակցինային շտամ, ճագարների օրգանիզմում վայրի վիրուսի բազմակի պասաժների ընթացքում: Դրա շնորհիվ հիվանդության ինկուբացիոն շրջանը 15-20 օրից կրծատվել է մինչև 7 օր և հետագա պասաժների դեպքում այլևս չի փոփոխվել: Բացի այդ, այն կորցրել է ախտածնությունը մարդու համար:

**Աճտիգենային** առունով կատաղության վիրուսը միատարր է: Վիրուսի երկու տիպն ել օժտված են նույնպիսի սպեցիֆիկության վիրուս չեզոքացնող հակամարմների սինթեզը խթանող մակերեսային, գլիկոպրոտեիդային և կոմպլեմենտը կապող միջուկային, նուկլեոպրոտեիդային անտիգեններով:

Վիրուսի կուլտիվացումն իրականացվում է բջջային կուլտուրաներում, ինչպես նաև էքսպերիմենտալ կենդանիներին ներուղեղային վարակման ճանապարհով: Վարակված կենդանիների գլխուղեղի նեյրոններում վիրուսի ռեպրոդուկցիայի հետևանքով առաջանում են 1-1.5մկմ տրամագծով, ներցիտոպլազմային, եղինոֆիլ վիրուսային պարիփակումներ՝ բարեց-Նեգրիի մարմնիկներ՝ կազմավորված վիրուսային ռիբոնուկլեոպրոտեիններով (նկ. 143):

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**Կայունություն:** Անկայուն է շրջակա միջավայրի տարբեր ազդակների, դեղինֆեկտանտների, ճարպալույժ միացությունների



**Նկ.143. Բարեց-Նեգրի ներքօքային պարփակումներ**

նկատմամբ, լավ պահպանվում է -20°C-ից ցածր պայմաններում:

**Ինֆեկցիայի աղբյուր** են իիվանդ կենդանիները կլինիկական ախտանիշներից դեռևս 1-2 շաբաթ առաջ, ինկուբացիոն շրջանի վերջում և իիվանդության ընթացքում, ինչը դրսկորուվում է առատ թքարտադրությամբ, ջրավախությամբ: Կենդանին դառնում է անհանգիստ, հարձակվում է մարդկանց և կենդանիների վրա, այնուհետև մինչև մեկ շաբաթվա ընթացքում արձանագրվում է պարալիչ ու մահ: Մարդու վարակումն իրականանում է իիմնականում իիվանդ կենդանիների կծելու հետևանքով:

**Պաթոգենեզ և կլինիկա:** Ինֆեկցիայի մուտքի դուռ են կենդանու կծած, թքով ողողված վերքերը, որտեղից վիրուսային մասնիկները աերիֆերիկ նյարդաթելերի աքսոններով հասնում են ողնուղեղի և գլխուղեղի նեյրոններ ու ինտենսիվորեն ռեպրոդուկցիայի ենթարկվելով՝ պայմանավորում են վերջիններիս դեստրուկտիվ, դեգեներատիվ փոփոխություններն ու մահը: Կենտրոնական նյարդային համակարգում վիրուսի վերարտադրությունն ուղեկցվում

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Է վերջիններիս գեներալիզացմանը կենտրոնախույս նյարդաթելերով և դրանց անցումով տարբեր հյուսվածքներ, այդ թվում՝ թքագեղձեր:

Ինկուբացիոն շրջանը մարդու մոտ տատանվում է 1-2 շաբաթից մինչև 2-3 ամիս, ինչը պայմանավորված է վնասվածքների քանակով, բռույթով ու տեղակայմամբ: Որքան վնասվածքը մոտ է ԿՆՀ-ին, այնքան ինկուբացիոն շրջանը կարճատև: Յիշանդրությունը դրսնորվում է թուլությամբ, անհանգստությամբ, վախի օգացումով, գրգռվածությամբ, այնուհետև ի հայտ են գալիս ընպանի, կոկորդի մկանների սպազմատիկ կծկումներ, որոնք առավել ուժգնանում են խմելու փորձեր կատարելիս: Զարգանում է ջրավախություն, օդավախություն, լուսավախություն, աղմկավախություն, հայուցինացիաներ և այլն, իսկ ավելի ուշ՝ հիվանդության 3-7 օրերին, վերջույթների, շնչական մկանների պարալիչ ու մահ:

Ներկայուն ակտիվ սպեցիֆիկ պրոֆիլակտիկան իրականացվում է ուլտրամանուշակագույն կամ γ-ճառագայթներով ինակտիվացված կուլտուրալ վակցինայով: Մեծաքանակ կծվածքների դեպքերում իրատապ պրոֆիլակտիկայի համար կարող է կիրառվել անտիռարիկ իմունոգլոբուլին:

### **12.4.2. Վեզիկուլյար ստոմատիտ**

Դարուցիչն իր հիմնական հատկանիշներով չի տարբերվում Rhabdovirus-ների ընդհանուր նկարագրից, սակայն օժտված է սպեցիֆիկ անտիգեններով, ինչը հնարավորություն է ընձեռում շճարանական ռեակցիաներում (կոմպլեմենտի կապման ռեակցիա, իմունաֆերմենտային անալիզ, ռադիոիմուն անալիզ և այլն) տարբերակելու այն կատաղության վիրուսից: Օժտված է արտահայտված ինտերֆերոնոգեն ազդեցությամբ և բարձր օգայունությամբ վերջինիս նկատմամբ: Ախտահարում է հիմնականում կենդանիներին, որոնցից մարդը վարակվում է մոժակների միջոցով (տիպիկ արբովիրուս է և ենթարկվում է ռեպրոդուկցիայի նաև մոժակների օրգանիզմում):

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Կլինիկորեն հիվանդությունը դրսևորվում է բերանի լորձաթաղանթի, լնդերի, ըմպանի վեզիկուլային ցանով, խոցային մակերեսների առաջացնամբ: Բուժումը սիմպտոմատիկ է, սպեցիֆիկ կանխարգելում չի իրականացվում:

### 12.5. ՀԵՐՊԵՍՎԻՐՈՒՍԵՐ (Herpesviridae)

Herpesviridae (հուն. *herpes*-սողացող) ընտանիքն ընդգրկում է **Alphaherpesvirinae**, **Betaherpesvirinae**, **Gammaherpesvirinae** ենթաընտանիքները, որոնք միմյանցից որոշակիորեն տարբերվում են գենոմի կառուցվածքով, հյուսվածքների նկատմամբ խնամակցությամբ և լատենտ ինֆեկցիայի տեղակայմամբ: Նշված ենթաընտանիքներում տարբերում են մարդու բազմաբնույթ ինֆեկցիաներ առաջացնող մի շարք վիրուսներ՝

Alphaherpesvirinae – Քասարակ հերպեսվիրուս I և II տիպ (ցեղ-Simplexvirus, *Herpes simplex virus-HSV*), Զրծաղիկի վիրուս (ցեղ-Varicellovirus, *Varicella-zoster virus-VZV*),

Betaherpesvirinae – Ցիտոմեգալովիրուս (ցեղ – *Cytomegalovirus*, *Cytomegalovirus - CMV*),

Gammaherpesvirinae – Էպշտեյն-Բարրի վիրուս (ցեղ-Lymphocryptovirus, *Epstein-Barr virus-EBV*):

#### 12.5.1. Herpes simplex virus-HSV


Քարուցում է հերպեսինֆեկցիա կամ հասարակ հերպես հիվանդությունը, որը բնութագրվում է մաշկի և լորձաթաղանթների վեզիկուլային ցանով, պերիֆերիկ և կենտրոնական նյարդային համակարգի ու այլ ներքին օրգանների ախտահարմամբ, ինչպես նաև ցմահ վիրուսակրությամբ ու ռեցիդիվներով:

Տարբերում են Քասարակ հերպեսվիրուսի երկու տիպերը՝ **HSV-1** և **HSV-2**, որոնցից առաջինն ախտահարում է գերազանցապես բերանի լորձաթաղանթը, շուրբերն ու շրջակա մաշկը, աչքերը և կոչ-ն: HSV-2-ը հիմնականում առաջացնում է սեռական օրգանների

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

ախտահարումներ: HSV-ները առաջացնում են ֆիբրոբլաստների, էպիթելիային բջիջների լիսիկ, իսկ նեյրոնների լատենտ ինֆեկցիաներ:


Վիրիոնը բարդ է, խոշոր չափերի՝ 150-200nm: Նուկլեոկապսիդը կառուցված է իկոսաեղրիկ տարածական սիմետրիայի տիպով, բաղկացած 162 կապսոմներից, որը շրջափակված է գլիկոպրոտեինային ելուններով ընկրնված, թիրախ բջջի կորիզաթաղանթից ձևավորված սուպերկապսիդով (նկ.144): Կապսիդի և արտաքին



**Նկ.144. *Herpes simplex virus***

թաղանթի միջև գտնվում են վիրուսի ռեպրոդուկցիան ապահովող ֆերմենտներ ու սպիտակուցներ: Գենոմը ներկայացված է գծային երկբել ԴՆԹ-ով (նկ.145):

### **Herpesviridae**



**Նկ.145. *Herpes simplex virus* (վիրիոնի կառուցվածք)**

## ՄԱՍՏՎԱԾՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ԲԵՆՔԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Օժտված է միջուկային խմբասպեցիֆիկ և մակերեսային տիպային սպեցիֆիկությամբ անտիգեններով:

**Ռեպրոդուկցիա:** Թիրախ բջջի մակերեսին ամրանալուց հետո սուպերկապսիդը միաձուլվում է բջջի թաղանթին, և նուկլեոկապսիդը հայտնվում է ցիտոպլազմայում: Այնուհետև նուկլեոկապսիդը թափանցում է կորիզ, որտեղ նուկլեինաթրվի մերկացումով, բջջային ԴՆԹ կախյալ Ութ պոլիմերազայի միջնորդությամբ սկսվում է վիրուսի բուն ռեպրոդուկցիան: Սինթեզված կապսիդային սպիտակուցներով և գենոմային նուկլեինաթրվով կազմավորվում է նուկլեոկապսիդը, որն ուղղվում է վիրուսսպեցիֆիկ գլիկոպրոտեիններով մոդիֆիկացված կորիզաթաղանթի կողմն ու բողբոջնան մեխանիզմով կորիզից դուրս է գալիս սուպերկապսիդով շրջափակված, հասուն վիրիոնը (նկ.146): Վերջինս Գոլջիի ապարատով տեղաշարժվում է ցիտոպլազմայում և դուրս գալիս բջջից հիմնականում



**Նկ.146. Վերաբեսվիրուսի ռեպրոդուկցիան**

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

ցիտոլիզի, երբեմն նաև էկզոցիտոզի ճանապարհով: Ցիտոախտածին ազդեցությունը դրսևորվում է գիգանտ բազմակորիզ բջիջների առաջացումով: Ինֆեկցված բջիջների կորիզներում հայտնաբերվում են էոզինոֆիլ վիրուսապեցիֆիկ պարփակումներ: Վիրուսը ախտածին է տարրեր էքսպերիմենտալ կենդանիների համար, բնական պայմաններում կենդանիները չեն հիվանդանում:

Արտաքին միջավայրում անկայուն են, արագ ոչնչանում են արևի և ուլտրամանուշակագույն ճառագայթների, ճարպալույթ միացությունների, դեղինֆեկտանտների ազդեցությամբ:  $4^{\circ}\text{C}$  պայմաններում պահպանվում են մեկ ամիս:

Դիվանդությունը լայնորեն տարածված է, հանդիպում է սպորադիկ և փոքր բռնկումների ձևով, իմմնականում մանկական կոլեկտիվներում, հիվանդանոցներում: Մեծահասակ ազգաբնակչության ավելի քան  $80\text{-}90\%$ -ի շրջանում հայտնաբերվում են սպեցիֆիկ հակամարմիններ: Ինֆեկցիայի աղբյուր է հիվանդ մարդը կամ վիրուսակիրը: Վարակումն իրականանում է իմմնականում կրնտակտային մեխանիզմով (վեզիկուլային հեղուկ, սեռական սեկրետներ, կենցաղային իրեր, առարկաներ), պլացենտար (հիվանդ մորից պլոտին), հազվադեպ՝ աերոգեն:

**Պաթոգենեզ:** Տարբերում են առաջնային և ռեցիզիվող հասարակ հերպես: Առաջնային ռեպրոդուկցիան իրականանում է մուտքի դրներում՝ լորձաթաղանթների, մաշկի էպիթելային բջիջներում, որոնցում դեստրուկտիվ, դեգեներատիվ փոփոխությունները դրսևորվում են վեզիկուլների (բշտեր) առաջացնամբ: Որոշ ժամանակ անց վեզիկուլները պատռվում են, առաջանում են խոցեր, որոնք այնուհետև պատվում են կեղևով ու լավանում: Շրջանցելով էպիթելոցիտները՝ վիրիոնների մի մասը նյարդային վերջույթներով անցնում է գանգլիոններ, ռեպրոդուկցիայի ենթարկվում նյարդային բջիջներում՝ պայմանավորելով դրանց դեստրուկցիան ու մահը: Որոշ դեպքերում հերպեսվիրուսները գանգլիոններում չեն վերարտադրվում, այլ առաջացնում են լատենտ, պերսիստենցող ինֆեկցիա, ընդ որում ախտահարված բջիջները պահպանում են իրենց

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Կենսունակությունը: Ենթադրվում է, որ վիրուսի գենոմը դրանց ցիտոպլազմայում գտնվում է ավտոնոմ, մի քանի կրկնօրինակներով, հնարավոր է նաև ինտեգրատիվ փոխազդեցություն: Դիվանդության ռեցիդիվը պայմանավորված է օրգանիզմի ընդհանուր դիմադրողականությունը նվազեցնող բազմազան գործոններով, որոնց ազդեցությունից մի քանի օր անց վիրուսային ԴՆԹ-ն նյարդային աքսոններով վերադառնում է նյարդային վերջույթներ, վերարտադրվում եակիթելային բջիջներում, ինչը դրսկորվում է վեղիկուլների առաջացմամբ:

**Կլինիկա:** Ինկուբացիոն շրջանը տատանվում է 2-12 օրվա սահմաններում, որին հաջորդում է ախտահարված հատվածներում ուժեղ քորի, կարմրության, այտուցի, այնուհետև՝ հեղուկով լցված բշտերի առաջացումը: Վեղիկուլների տեղում հիվանդները նշում են այրող, ուժեղ ցավեր: Բշտերի պատռվելուց, չորանալուց և կեղևի ընկնելուց հետո սպիներ չեն մնում: HSV-ն ախտահարում է մաշկը (հերպետիկ էկզեմա), բերանի խոռոչը և կոկորդը (գինգիվոստոմատիտ, ֆարինգիտ, աֆտոն ստոմատիտ), աչքերը (կերատոկոնյուկտիվիտ), աղիների լորձաթաղանթը, սարդը (հեպատիտ), ԿՆՀ-ն (մենինգիտեֆալիտ, էնցեֆալիտ): Գենիտալ հերպեսվիրուսը ախտահարում է գերազանցապես սեռական օրգանների մաշկն ու լորձաթաղանթը, կանանց մոտ նաև արգանդի վզիկը, ինչը ըստ մի շարք աղբյուրների՝ նպաստում է արգանդի վզիկի քաղցկեղի զարգացմանը: Դերպեսով հիվանդ հղի կանանց մոտ երբեմն հնարավոր է պտղի նեռնատալ հերպեսի զարգացում, ինչը դրսկորվում է հետծննդյան 5-6 օրերի ընթացքում վիրուսեմիայով և մաշկի, լորձաթաղանթների, ներքին օրգանների տարածում հերպետիկ ախտահարումներով:

Դիվանդության ընթացքում արձանագրվում է պաշտպանության և բջջային, և հումորալ մեխանիզմների ակտիվացում, ինչը որոշակիորեն խոչընդոտում է վիրուսի միջքջային դիսիմինացիան, սակայն չի կարող արգելակել դրանց պերսիստենցիան ու հիվանդության ռեցիդիվները: Նշված իմուն տեղաշարժերը պայ-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

մանավորում են օրգանիզմում դանդաղ տիպի գերզգայունության զարգացումը:


**Բուժումն իրականացվում է ինտերֆերոնի և էնդոգեն ինտերֆերոնի սինթեզը խթանող պրեպարատներով:** Որպես հակավիրուսային միջոցներ՝ կիրառվում են ացիկլովիրը, ֆամցիկլովիրը, վալացիկլովիրը, վիդարաբինը և այլն:

**Սպեցիֆիկ պրոֆիլակտիկա:** Ուցիղիվող հերպեսի դեպքերում, ռեմիսիաների էտապում կատարվում է ինակտիվացված կուլտուրալ հերպես վակցինայի բազմակի ներարկումներ:

### 12.5.2. Զրծաղիկի վիրուս (Varicella-zoster virus-VZV)

Հիմնականում մանկական տարիքում արձանագրվող, տենդով, օրգանիզմի ընդիանուր ինտոքսիկացիայով, պարզ հեղուկով լցված վեզիկուլային ցանով ընթացող զրծաղիկ հիվանդության հարուցիչն է: Մեծահասակների շրջանում, մանկական հասակում տարած զրծաղիկի հետևանքով, երբեմն կարող է զարգանալ նյարդաթելերի ուղղությամբ պապուլային, վեզիկուլային ցանով ընթացող, գոտևորող հերպես կամ գոտևորող որթին էնդոգեն ինֆեկցիան:

Վիրիոնը չի տարբերվում այլ հերպեսվիրուսներից (նկ.147), այն բազմանում է մարդկային դիպլոիդ ֆիբրոբլաստներում՝ առաջացնելով ներկորիզային պարիվակում:



Նկ.147. Varicella-zoster virus

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵՄԱՐԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Բազմանում է դանդաղ, ախտահարում է բջիջների ավելի նեղ շրջանակ, քան հասարակ հերպեսվիրուսները: Ցիտոախտածին ազդեցությունը դրսևորվում է գիգանտ բազմակորիզ, սիմպլաստ բջիջների առաջացմամբ:

### 12.5.2.1. Զրծաղիկ

Անթրոպոնոզ ինֆեկցիա է, հիվանդանում են հիմնականում մանկական հասակում (2-10 տարեկան): Ինֆեկցիայի աղբյուր է ջրծաղիկով հիվանդը կամ վիրուսակիրը՝ ինկուբացիոն շրջանի վերջից մինչև ցանավորման 5-րդ օրը: Վարակը փոխանցվում է օդակաթիլային մեխանիզմով, ինչպես նաև մաշկի վեզիկուլների հետ անմիջական շփմամբ: Վիրիոնը արտաքին միջավայրում և տարբեր ֆիզիկաքիմիական ազդակների նկատմամբ անկայուն է:

Հարուցիչների առաջնային ռեպրոդուկցիան իրականանում է վերին շնչական ուղիների լորձաթաղանթում, որտեղից դուստր սերունդը հեճատոգեն ճանապարհով տարածվում է օրգանիզմով՝ ախտահարելով տարբեր օրգաններ ու հյուսվածքներ, առավելապես մաշկի (դերմոտրոպ ազդեցություն) և լորձաթաղանթների էպիթելը: Ջրծաղիկի ինկուբացիոն շրջանը տատանվում է 11-23 օրվա սահմաններում: Դիվանդությունը բնութագրվում է տենդով, իրանի, պարանոցի, դեմքի, վերջույքների, ինչպես նաև բերանի խոռոչի, երբեմն՝ սեռական օրգանների լորձաթաղանթի պապուլային, վեզիկուլային ցանավորմամբ: Բշտերը մի քանի օրից պատռվում են, չորանում: Բարենպաստ դեպքերում հիավանությունը ավարտվում է առողջացմամբ: Վաղ մանկական հասկի երեխաների ու տարեցների շրջանում հիվանդությունը կարող է ծանր ընթացք ունենալ՝ պայմանավորված իմունոդեֆիցիտի, և որպես դրա հետևանք՝ թռքաբորբի, հեպատիտի, ենցեֆալիտի զարգացմամբ:

Դետինֆեկցիոն իմունիտետը կայուն է, լարված, սակայն այն չի խոչընդոտում վիրուսի պերսիստենցիային և գոտևորող որքինի զարգացմանը:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

### 12.5.2.2. Գոտևորող որթին

Գոտևորող որթինը զարգանում է ջրծաղիկով հիվանդացածների մոտ, հիվանդությունից տարիներ, և նույնիսկ տասնյակ տարիներ անց՝ ողնուղեղի բժիշներում պերսիստենցիայի ենթարկված վիրուսի ռեակտիվացման հետևանքով, ինչի պատճառ կարող են հանդիսանալ բազմազան ազդակներ: Դիվանդությունը դրսերպում է դեմքի, իրանի, հիմնականում միջկողային նյարդերի ընթացքով, պապուլային, վեգիկուլային ցանի առաջացմամբ, ինչը ուղեկցվում է ախտահարված շրջանի ուժեղ ցավերով: **Գոտևորող հերպեսով** հիվանդները հիմնականում վարակիչ չեն:

**Բուժման** նպատակով կիրառվում է ինտերֆերոն, տարբեր ինունոմոդուլյատորներ, ացիկլովիր, վիդարաբին: Վեգիկուլները մշակվում են հակասեպտիկ նյութերով՝ բրիլիանտ կանաչի լուծույթ:

**Սպեցիֆիկ պրոֆիլակտիկայի** համար մշակված է կենդանի ատենուացված վակցինա:

### 12.5.3. Cytomegalovirus – CMV

Առաջացնում է բազմազան ձևերով ընթացող (ցմահ լատենտ ինֆեկցիայից, մինչև սուր, գեներալիզացված, ծանր կլինիկական ընթացքով, երեմն լետալ վախճանով) հիվանդություններ: Հարուցիչի անվանումը՝ **Cytomegalovirus** (citos-բժիջ, megas-խոշոր), պայմանավորված է ռեպրոդուկցիայի արդյունքում ցիտոախտածին ազդեցությամբ, ինչը արտահայտվում է ներկորիզային պարփակումներով, գիգանտ բժիշների առաջացմամբ: Կառուցվածքով չի տարբերվում այլ հերպեսվիրուսներից: Արիեստական պայմաններում ռեպրոդուկցիան իրականացվում է միայն մարդու բջջային (ֆիբրոբլաստներ, էպիթելիոցիտներ, մակրոֆագներ) կուլտուրաներում:

Ցիտոմեգալովիրուսի տարածվածության վկայությունը երկրագնդի բնակչության ավելի քան 60%-ի շրջանում սպեցիֆիկ հակամարմինների առկայությունն է: Ինֆեկցիայի աղբյուր է մարդու:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱՔՏԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Վարակը կարող է փոխանցվել կենցաղ-կոնտակտային, աերոգեն, սեռական կոնտակտի, տրանսպլազմատար և այլ ճանապարհներով։ Վարակումից հետո առավել հաճախ ծևավորվում է լատենտ ինֆեկցիա, որը պահպանվում է ողջ կյանքի ընթացքում, որոնք ուղեկցվում են օրգանիզմի ընդհանուր դիմադրողականության, ինուն համակարգի ակտիվության անկանությունը, ինֆեկցիոն և սոմատիկ բնույթի տարբեր հիվանդություններ, արյան և օրգանների փոխպատվաստումներ։ Դիվանդությունը կարող է դրսնորվել տարբեր օրգան-համակարգերի ախտահարումներով։ Դոյջ կանաց պտղի վարակումը կարող է նպաստել վերջինիս մոտ տարբեր անոմալիաների զարգացմանն ու մահվանը։ Չի բացավում ցիտոմեգալովիրուսի դերը չարորակ նորագոյացությունների՝ մասնավորապես շագանակագեղձի ադենոկարցինոմայի էթիոլոգիայում։

**Բուժումը:** Բուժման նպատակով օգտագործում են ացիկլովիր, գանցիկլովիր, ֆոսկարենտ, լամիզոլ, էնդոգեն ինտերֆերոնի ինդուկտորներ, մարդու նորմալ ինունոգլոբուլին։

**Սպեցիֆիկ կանխարգելման միջոցները բացակայում են։**

### 12.5.4. Epstein-Barr virus-EBV

Հարուցում է ինֆեկցիոն մոնոնուկլեոզ հիվանդությունը, որը բնութագրվում է սուր ընթացքով, օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիայով, տենդով, ֆարինգիտով, նշիկների, լիմֆատիկ հանգույցների, փայծաղի, սարոի ախտահարմանը ու չափերի մեծացմանը, ինչպես նաև արյան կազմի փոփոխություններով։ **EBV-ն** ունակ է երկարատև, ցմահ պերսիստենցիայի ենթարկվելու բերանի խոռոչի, թքագեղձերի էափելոցիտմերում, լիմֆատիկ հյուսվածքում պայմանավորելով անսինպտոն քրոնիկական, կամ սուր ինֆեկցիայի զարգացումը։ Առավել կարևորվում է վիրուսի արտահայտված միտոզեն ազդեցությունը Յ լիմֆոցիտմերի վրա և դերը օրգանիզմի տարբեր ինունոդեֆիցիտ իրավիճակներում, լիմֆոպրոլիֆերատիվ ուռուցքային հիվանդությունների էթիոլոգիայում։

## ՄԱՍՆԱՎՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԻՔԱՆԱՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

### 12.6. ՊԻԿՈՎԱԿԻՐՈՒՄՆԵՐ (Picornaviridae)

Picornaviridae (հապ. թիկուզ, ռուս. ожоги) ընտանիքում ընդգրկված է 4 ցեղ՝ Enterovirus, Rinovirus, Cardiovirus, Aphthovirus, որոնցից մարդու ախտաբանությունում կարևորվում են առաջին երկուսը: Կարդիովիրուսները և աֆտովիրուսները ախտածին են գերազանցապես կենդանիների համար: Աֆտովիրուսներին է դասվում մարդուն ախտահարող դարադի վիրուսը: Enterovirus (հուն. enteron-աղիք) ցեղում մարդուն ախտահարող հիմնական հարուցիչներն են պոլիոմիելիտի, Կոկսակի A և B, ECHO և 68-72 համարակալմամբ վիրուսները:


#### 12.6.1. Պոլիոմիելիտ

Կենտրոնական նյարդային համակարգի՝ գերազանցապես ողնուղեղի գորշ նյութի, ախտահարմամբ (հուն. polios-գորշ, myelitis-ողնուղեղի բռրքքում), ծանր դեպքերում մկանային հյուսվածքի ատրոֆիայով, պարեզներով ու պարալիչներով ուղեկցվող, հիմնականում մանկական հասակը ախտահարող սուր ինֆեկցիոն հիվանդություն է: Դարուցիչն առաջին անգամ անջատվել է 1909-ին Կ.Լանդշտեյների և Ե.Պոպպերի կողմից, պոլիոմիելիտից մահացած երեխայի ողնուղեղային հեղուկով կապիկների վարակման ճանապարհով:

Վիրիոններն ունեն շատ փոքր չափեր՝ 20-30nm, պարզ կառուցվածք՝ սուպերկապսիդից գուրկ են (նկ.148): Կապսիդը կառուցված է տարածական սիմետրիայի իկոսաեղիկի տիպով, կապսոներները կազմված են 4 վիրուսսպեցիֆիկ սպիտակուցներով՝ V<sub>1</sub>-V<sub>4</sub>: Գենոմը ներկայացված է միաթել, անընդհատ, դրական շղթա (+)ՈՒԹ-ով՝ ասոցացված միջուկային VPg սպիտակուցի հետ: Մեկուսացված գենոմային (+)ՈՒԹ-ն պահպանում է ինֆեկցիոնությունը: Պոլիոմիելիտի հարուցիչներն օժտված են տիպային սպեցիֆիկության անտիգեններով, ըստ որոնց տարբերակվում են 3 շճատիպի՝ I,II,III: Վերջիններիս նկատմամբ մակրոօրգանիզմում սինթեզված հակա-

## ՄԱՍՏԻՎՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՍՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

մարմիններն օժտված են արտահայտված պաշտպանական նշանակությամբ, սակայն խաչաձև անընկալություն չեն ապահովում: Նշված երեք շճատիպերը պարունակում են կոմպլեմենտի կապման ռեակցիայում հայտնաբերվող ընդիանուր անտիգեն: Սարդու համար առավել ախտածին է և տիպը: Կուլտիվացումն իրականացվում է բջջային կուլտուրաներում, որտեղ արձանագրվում է արտահայտված ցիտոախտածին ազդեցություն:



**Նկ. 148. Poliovirus**

Այլ էնտերովիրուսների նման պոլիոնիելիտի հարուցիչները կայուն են շրջակա միջավայրի տարրեր ազդակների նկատմամբ: Կայուն են թթու և հիմնային միջավայրերում, ճարպալույթ եթերների, ուլտրամանուշակագույն ճառագայթների, չորացման նկատմամբ:  $50^{\circ}\text{C}$ -ի պայմաններում պահպանում են ինֆեկցիոնությունը շուրջ 30 րոպե,  $37^{\circ}\text{C}$ -ում մինչև 2 ամիս,  $4^{\circ}\text{C}$ -ում՝ 2 ամսից ավելի: Ինֆեկցիայի աղբյուր է մարդ՝ վիրուսակիր և հիվանդ՝ ինկուբացիոն շրջանի վերջից մինչև հիվանդության ծաղկման շրջանի ավարտը և որոշ դեպքերում նաև ապաքինման շրջանում: Վիրուսակրությունը ռեկոնվալեսցենտների մոտ կարող է շարունակվել մի քանի ամիս:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՐԵԱՐԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Ինֆեկցիայի տարածման խնդրում կարևոր դեր ունեն աբորտիվ և անսինթապուո ծեներով հիվանդները: Վիրուսը արտազատվում է հիմնականում կղանքով, ինչը և պայմանավորում է վարակի փոխանցման ֆեկալ-օրալ մեխանիզմի գերակայությունը, եադեմիկ օջախներում չի բացառվում նաև ինֆեկցիայի փոխանցման օդակաթիլային մեխանիզմը:

Թիրախ բջջի հետ պրոդրվակտիվ փոխազդեցության առաջին փուլն աղտորքցիան է, որին հաջորդում է ընկալիչ էնդոցիտոզն ու գենոմային նուկլեինարթրվի մերկացումը: Որպես դրական շղթա (+)ՈՒԹ՝ այն իրականացնում է նաև ինֆորմացիոն (Ի)ՈՒԹ-ի ֆունկցիա և ապահովում է վիրուսապեցիֆիկ սպիտակուցների սինթեզը: Թիրախ բջջի ռիբոսոմներում կապսիդային սպիտակուցները սինթեզվում են մեկ ամբողջական, գիգանտ պոլիպեպտիդային շղթայով, որից հետագայում մասնատվում են V<sub>1</sub>-V<sub>4</sub> սպիտակուցները: Ունկիկացիայի արդյունքում ծևավորվում է դուստր վիրիոնների գենոմային ֆոնդը, ապա իրականանում է ինքնահավաքում ու դուստր պոպուլյացիայի ելք, ինչը ուղեկցվում է ցիտոլիզով:

Դարուցիչների մուտքի դուռ է բերանի խոռոչի, քրքմանի, ստամոքսալիքային ուղղու լորձաթաղամթը, որի էակտելային բջիջներում իրականանում է դրանց առաջնային ռեպրոդուկցիան: Նիվանդության ինկուբացիոն շրջանը տևում է 5-12 օր, երբեմն մինչև մեկ ամիս, որի ընթացքում ռեպրոդուկցիայի ենթարկվելով էակտելային բջիջներում, այնուհետև լիմֆատիկ համակարգում, անցնում են արյան հոսք և տարածվում օրգանիզմով: Այս ընթացքում, օրգանիզմի խոնը վերակառուցման շնորհիվ, սկսվում են սինթեզվել վիրիոն չեզոքացնող սպեցիֆիկ հակամարմիններ, որոնք պայմանավորում են հարուցիչների էլիմինացիան օրգանիզմից՝ խոչընդոտելով դրանց մուտքը կենտրոնական նյարդային համակարգ: Նման դեպքերում հիվանդությունն ընթանում է աբորտիվ կամ թերեւ ծևով և ավարտվում է լիարժեք ապաքինմանը: Դակառակ դեպքում, երբ հակամարմինների խտությունը օրգանիզմում չի ապահովում հարուցիչների էլիմինացիան, տարբեր օրգան-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Աերում ռեպրոդուկցիայի ենթարկվելով, դրանք կրկին անցնում են արյան հոսք և պայմանավորում դիսխինացման երկրորդ ալիքն ու ԿՆՀ-ի ախտահարումը: Վիրուսի վերարտադրությունը ողնուղեղի առաջնային եղջյուրների շարժողական նեյրոններում, ինչպես նաև գլխուղեղի տարրեր հատվածների նեյրոններում, առաջացնում է խորը դեգեներատիվ, երբեմն նաև անվերադարձ փոփոխություններ, ինչը կլինիկական պատկերում դրսնորվում է մենինգիտի ախտանիշներով, հյուսվածքների տրոֆիկ խանգարումներով ու թորշոնած պարալիզներով:

Սպեցիֆիկ կանխարգելման նպատակով առաջին ինակտիվացված վակցինան ստացել է Զ.Սոլյկը, ֆորմալինի լուծույթով վիրուսի մշակման ճանապարհով, որն ապահովելով բավականին լարված տիպասպեցիֆիկ հումորալ անընկալություն, ուներ որոշ թերություններ՝ եռանվագ պարէնտերալ ներարկումներ, աղիների տեղային անընկալության անբավարարություն կամ իսպառ բացակայություն: 50-ական թվականներին ԱՄՆ-ում Ա.Սերբինը ստացավ պոլիոնիկելիտի վիրուսի ատենուացված շտամներ, որոնցից Ա.Սմորոդինցելը և Ս.Չումակովը մշակեցին հարուցիչի 3 շճատիպն ընդգրկող կենդանի վակցինա: Վերջինս ինակտիվացվածի նկատմամբ ունի մի շարք առավելություններ՝ օրգանիզմ է ներմուծվում բնական ճանապարհով՝ per oral, ընդհանուր հումորալ իմունիտետին զուգահեռ ապահովում է աղիների տեղային անընկալությունը՝ սպեցիֆիկ ՏԱԼց-ներով, բարակ աղիների էպիթելային բջիջներում պոլիովիրուսի վայրի շտամների հետ ինտերֆերենցիան պայմանավորում է վերջիններիս էլիմինացիան օրգանիզմից: Ստացված վակցինային շտամները գենետիկորեն բավականին կայուն են, մարդու օրգանիզմում չեն վերափոխվում վայրի շտամին և որ շատ կարևոր է՝ ռեպրոդուկցիայի չեն ենթարկվում ԿՆՀ-ի բջիջներում:

### 12.6.2. Կոկսակի վիրուսներ

Առաջին անգամ վիրուսն անջատվել է ԱՄՆ-ի Կոկսակի բնակավայրում պոլիոնիկելիտանման հիվանդությամբ երեխաների

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

աղիներից 1948-ին՝ Գ.Դոլդորֆի և Գ.Սիկլսի կողմից: Հայտնի է Կոկսակի վիրուսների 30 անտիգենային վարիանտներ, որոնցից 24-ը դասվում են A խմբին, 6-ը՝ B: Նշված երկու խմբերի վիրուսներն ել օժտված են ընդհանուր, կոմպլեմենտը կապող անտիգենով և միմյանցից տարբերվում են չեզոքացման ռեակցիայում՝ վարիանտային սպեցիֆիկության անտիգեններով:

Կոկսակի Ա վիրուսները բնութագրվում են արտահայտված տրոպիզմով մկանային հյուսվածքի նկատմամբ, սպիտակ մկների մոտ առաջացնում են թորշոմած պարալիզներ: Մարդկանցից կարող են անջատվել տարբեր կլինիկական համախտանիշների ժամանակ, որոնք ուղեկցվում են տենորով, դիառեայով, մենինգիալ երևույթներով և այլն: Կոկսակի Բ վիրուսները բնորոշվում են առավելապես նեյրոտրոպությամբ և մարդու մոտ առաջացնում են պոլիոմիելիտանման հիվանդություններ: Հետինֆեկցիոն անընկալիությունը լարված է, տիպասսպեցիֆիկ: Ընդհանուր առնամբ Կոկսակի վիրուսները օժտված են պոլիօրգանային տրոպիզմով: Վակցինոպրոֆիլակտիկա չի կիրառվում:

### 12.6.3. ECHO վիրուսներ

Անվանումը հապավում է, որը նշանակում է **մարդու աղիքային ցիտոախտածին «որբ» վիրուսներ՝ ECHO – enteric cytopatogenic human orphans**: 50-ական թվականներին անջատվել են մարդկանց կղանքից Զ.Մելնիկի կողմից և քանի որ դրանց դերը մարդու ախտաբանությունում անհայտ էր, անվանվել են «որբ» վիրուսներ: Պոլիոմիելիտի և Կոկսակի վիրուսներից տարբերվում է կենդանիների նկատմամբ ախտածնության բացակայությամբ: Հայտնի է 34 շճավարիանտ, որոնք ունեն կոմպլեմենտ կապող ընդհանուր անտիգեն:

Ինչպես և Կոկսակի վիրուսները ախտահարում են իիմնականում մանկական հասակը, կարող են առաջացնել պոլիոմիելիտանման հիվանդություններ, ասեպտիկ մենինգիտներ, ենցեֆալիտներ: Որոշ շտամներ առաջացնում են էպիդեմիկ միալգիաներ, միոկար-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱՔՏԻՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

դիտներ, հաստատված է դրանց դերը գաստրոնտերիտների, սուր ռեսպիրատոր ինֆեկցիաների, պարենքիմատող օրգանների հիվանդությունների էթոլոգիայում:

### 12.7. ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԵՊԱՏԻՑԼԵՐ

Վիրուսային հեպատիտները հարուցվում են *vira* թագավորության տարբեր ընտանիքներին դասվող մի շարք ՈՆԹ, ինչպես նաև ԴՆԹ վիրուսներով (Ակ.149), որոնց հիմնական առանձնահատկությունը յուրահատուկ տրոպիզմն է հեպատոցիտների նկատմամբ,

Տիպ	Ընտանիք, ցեղ	չափելու նմ	Գենոմ	Սուպերկապիդի առկայություն	Օմկոգեն ազդեցություն	Ռեարոդուկցիա բջջային կուլտ.	Փոխանցման մեխանիզմը եվ ուղին
Հեպ.Ա (HAV)	Picornaviridae, Enterovirus	27-32	+ՈՆԹ	հկոսաեղր -	-	+	Ֆ/Օ, սննդ., ջրային
Հեպ.Բ (HBV)	Hepadnaviridae Hepadnavirus	42-52	երկրել ոչ լոիվ ՈՆԹ	հկոսաեղր +	+	-	Պ/Է, վերտիկալ, սեռական
Հեպ.Ը (HCV)	Togaviridae, Flavivirus	70-80	+ՈՆԹ	հկոսաեղր +	+	±	Պ/Է, վերտիկալ, սեռական
Հեպ.Ծ (HDV)	Չորասկարգված, դժվեկտային	35-40	միաթել շրջանաձեվ ՈՆԹ	? ?	? ?	-	Պ/Է, տրանսֆուզիոն
Հեպ.Ե (HEV)	Caliciviridae Calicivirus	32-35	+ՈՆԹ	հկոսաեղր -	-	±	Ֆ/Օ, ջրային


### Ակ.149. Սարդու վիրուսային հեպատիտների հարուցիչները ու դրանց համեմատական բնութագիրը

Դրանց ախտահարումն ու ռեստրուկցիան, ինչը կլինիկորեն դրսևորվում է օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիայով, մաշկի և լորձաթաղանթների դեղնուկով: Պայմանավորված հարուցիչների բազմազանությամբ՝ ներկայումս վիրուսային հեպատիտները անվանակարգվում են որպես Հեպատիտ A, Հեպատիտ B, Հեպատիտ C և այլն, իսկ այդ հիվանդությունները պայմանավորող վիրուսները համապատասխանաբար՝ Հեպատիտ A վիրուս, Հեպատիտ B վիրուս, Հեպատիտ C վիրուս և այլն:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

### 12.7.1. Վիրուսային հեպատիտ A

Վիրուսային հեպատիտների եթիլոգիական կառուցվածքում շուրջ 70%-ը կազմում է A հեպատիտը, որը հայտնի է նաև ինֆեկցիոն հեպատիտ, համաճարակային հեպատիտ, Բուլկինի հիվանդություն անվանումներով: Այն հարուցվում է Հեպատիտ A վիրուսով (HAV), որը դասվում է Picornaviridae ընտանիքի Enterovirus ցեղին: Հայտնի է նաև որպես **Enterovirus-72**: Կառուցվածքային ու կենսաբանական հատկություններով չի տարբերվում պիկոնավիրուսների ընդհանուր նկարագրից (նկ.150):



**Նկ.150. Հեպատիտ A վիրուս**

Բնութագրվում է արտահայտված կայունությամբ տարբեր ֆիզիկաքիմիական ազդակների, դեղինֆեկտանտների նկատմար: Ներկայացված է մեկ անտիգենային տիպով: Արիեստական պայմաններում կուլտիվացումը դժվարացած է՝ պայմանավորված դրանց ցածր աղապտատիվ ունակություններով: Ներկայումս HAV-ի վերարտադրությունը կազմակերպվում է վերահյուսվող բջջային կուլտուրաներում, որտեղ ցիտոախտածին էֆեկտ չի արձանագրվում: Օժտված է մարդու համար բավականին բարձր ինֆեկցիո-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Առողջամբ, վարակի աղբյուր են հիվանդ մարդ՝ հիվանդության մանիֆեստ ու անսիմպտոմ ձևերով, ինչպես նաև վիրուսակիրը: Հարուցիչները արտաքին միջավայր են տարածվում հիմնականում կղանքով, ինկուբացիոն շրջանի վերջից մինչև դեղնույկի առաջացումը, ինչպես նաև դեղնույկային շրջանի առաջին շաբաթների ընթացքում: Փոխանցման մեխանիզմը՝ ֆեկալ-օրու, ալիմենտար և առավելապես ջրային ճանապարհներով է, ինչը կարող է նպաստել ջրային և սննդային համաճարակային բռնկումներին՝ հիմնականում կազմակերպված կոլեկտիվներում: Կարևորվում է նաև կենցաղ-կոնտակտային մեխանիզմը, «կեղտոտ ծեռքերի», տարբեր իրերի, առարկաների, խաղալիքների միջոցով:

**Պաթոգենեզ:** Վիրուսի մուտքի դուռ են բերանի խոռոչի, ըմպանի, ստամոքսաղիքային տրակտի լորձաթաղանթները, որոնց էափելային բջիջներում, լիմֆատիկ հանգույցներում իրականանում է հարուցիչների առաջնային վերարտադրությունը, ապա տարածումը ավշային ու արյան համակարգերով: Վիրուսի տարածումը արյան հոսքով ուղեկցվում է օրգանիզմում ընդհանուր ինտոքսիկացիայի զարգացնամք և գերազանցապես լարդի ախտահարմանք: Լյարդում շարունակվում է վիրուսի ռեպրոդուկցիան ու կուտակումը, ինչը նպաստում է հեպատոցիտների թաղանթային կառույցների՝ այդ թվում լիզոսումալ, թափանցելիության մեծացմանը՝ պայմանավորելով դրանց կենսական պոտենցիալի նվազումը և քայրայումը, ինչպես անմիջականորեն վիրուսների, այնպես էլ սեփական լիզոսումալ ֆերմենտների ազդեցությամբ: Լյարդում արձանագրվող դիստրոֆիկ փոփոխությունների գործնթացում կարևորվում են նաև ինուն մեխանիզմները՝ NK և T ցիտոտօքսիկ բջիջներ:

**Կիմիկա:** Յիվանդության ինկուբացիոն շրջանը 15-50 օր է, միջինը՝ մեկ ամիս, որին հաջորդում է 5-7 օր տևողությամբ պրոդրոմալ կամ նախադեղնույկային շրջանը: Այն արտահայտվում է սուր սկզբով. ջերմության բարձրացում մինչև  $38-40^{\circ}\text{C}$ , ռեսպիրատոր երևույթներ, գլխացավ, ախորժակի անկում, սրտխառնոց, ցավեր և պիգաստրալ շրջանում, երբեմն փսխում ու լուծ: Ավելի ուշ

## ՄԱՍՆԱՎՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

արձանագրվում է մեզի նգացում՝ ուրոբիլինուրիա, խոլուրիա, իսկ պրոդրումալ շրջանի վերջում՝ կղաճքի անգունացում՝ ախտիա: Արդեն այս շրջանում հիվանդների արյան շիճուկում հայտնաբերվում են սպեցիֆիկ Մ դասի հականարմիններ, որոնք ունեն ախտորոշչչ նշանակություն: Պրոդրումալ շրջանին հաջորդում է 1-3 շաբաթ, որոշ դեպքերում ավելի երկարատև հիվանդության ժաղկման՝ դեղնուկային շրջանը, որն ուղեկցվում է պրոդրումալ շրջանի ախտանիշների մեղմացմամբ, ջերմության կարգավորմամբ: Հիվանդության ելքը ավելի քան 90% դեպքերում բարենպաստ է:

**Հետինֆեկցիոն ինունիտետը** կայուն է՝ պայմանավորված վիրուս չեղոքացնող հականարմիններով ու հիշորության բջիջներով, ինչպես նաև աղիների տեղային անընկալությամբ:

**Ոչ սպեցիֆիկ պրօֆիլակտիկան** հանգում է ընդհանուր սանիտարահիգիենիկ կանոնների ու նորմերի պահպանությանը և հակահամաճարակային, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպմանը սննդարդյունաբերության, ջրամատակարարման, մանկական և այլ հիմնարկներում: Համաճարակային ցուցումների դեպքում իրականացվում է շճականիսարգելում, **սպեցիֆիկ ակտիվ պրօֆիլակտիկայի** նպատակով կիրառվում է ինակտիվացված կուլտուրալ վակցինա:

### 12.7.2. Վիրուսային հեպատիտ B


Անթրոպոնոզ, վարակման պարենտերալ մեխանիզմով, երկարատև ինկուբացիոն շրջանով, գերազանցապահ յարդի ախտահարմանք բնութագրվող վիրուսային ինֆեկցիոն հիվանդություն է: Այն ընթանում է բազմազան կլինիկական ձևերով՝ վիրուսակրությունից և հիվանդության սուբկլինիկական ձևերից մինչև սուր յարդային անբավարարություն ու ցիրոզ, երբեմն՝ չարորակ տրանսֆորմացում:

Վարակումն իրականանում է արյան և արյան պրեպարատների ներարկումների (Շիճուկային հեպատիտ), բժշկական տարբեր մանիպուլացիաների ժամանակ, եթե խախտվում է մաշկի կամ լորձաբաղանթների ամբողջականությունը, սեռական ճանապարհով,

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱՔՏԱՆ ՈՒԹՅՈՒՆ

ինչպես նաև ուղղահայաց՝ մորից պտղին: B-հեպատիտի վիրուսը կայուն է բարձր ջերմաստիճանի նկատմամբ՝ դիմանում է եռացմանը 15-20 րոպե, կայուն է ուլտրամանուշակագույն ճառագայթների նկատմամբ: Արյան և արյան պրեպարատներում -20°C-ի պայմաններում պահպանում է ինֆեկցիոնությունը տարիներ: Զգայուն է ֆորմալինի և տարրեր դետերգենտների նկատմամբ:

Դարուցիչը՝ HBV-ն, դասվում է **Hepadnaviridae** ընտանիքին, հայտնաբերվել է 1970-ին Դ.Ռեյնի կողմից և հայտնի է նաև Ռեյնի մասնիկներ անվանումով: Մի փոքր ավելի վաղ Բ.Բյուոմբերգի կողմից հայտնաբերվել է հարուցիչի անտիգենը՝ ավստրալիական անտիգեն (**HBsAg**): Շիճուկային հեպատիտով հիվանդների արյան մեջ շրջանառվող վիրուսային մասնիկները հանդես են գալիս երեք մորֆոլոգիական ձևով (Ակ.151):



Ակ.151. Հեպատիտ B վիրուս (Ռեյնի մասնիկներ)

## ՄԱՍՆԱՎՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

◆Առավել հաճախ հայտնաբերվող, 20-22նմ տրամագծով սֆերիկ մարմնիկներ:

◆20-22նմ լայնակի կտրվածքով, միջև 400-500նմ երկարությամբ թելանման (**ֆիլամենտոց**) ձևեր, որոնք, տարբեր ազդակների ներգործությամբ մասնատվելով, կարող են վերածվել սֆերիկ մարմնիկների:

◆Սակավ հանդիպող՝ բոլոր մորֆոլոգիական ձևերի շուրջ 7%-ը կազմող, ամբողջական վիրիոններ՝ **Դեյմի մարմնիկներ**:

Վիրիոնն ունի բարդ կառուցվածք, 40-42 նմ տրամագիծ: Միջուկի կազմության մեջ ընդգրկված է երկրել փակ ԴՆԹ-ն, որի «դրական» շղթան 20-50%-ով կարծ է «բացասականից»՝ դեֆեկտային է: Երկու շղթան ել իրենց ողջ երկարությամբ ունեն ընդհատումներ: Երկար շղթային կովալենտ կապված է վիրուսային կապիկ սպիտակուց: Միջուկի կազմության մեջ մտնում է նաև **ԴՆԹ կախյալ ԴՆԹ պոլիմերազա** ֆերմենտը, որի ակտիվությունը պայմանավորված է միջավայրում  $Mg^{2+}$  իոնների առկայությամբ: Գենոմը շրջափակված է իկոսաեղրիկ տարածական սինետրիայի տիպով կառուցված կապսիդով: Նույլեոկապսիդը շրջափակված է սուպերկապսիդով:


**Դեպատիտ B** վիրուսի կազմում տարբերում են հետևյալ անտիգենները՝

◆մակերեսային, լիպիդային կոմպոնենտով գլիկոպրոտեինային անտիգեն՝ **HBsAg** (ավստրալիական անտիգեն): Հանդես է գալիս անտիգենային 4 տիպով, մշտապես հայտնաբերվում է ինֆեկցված անձանց արյան շիճուկում, հաճախ առաջացնում է դեֆեկտային մասնիկներ՝ զուրկ ինֆեկցիոնությունից (սֆերիկ և ֆիլամենտոց մարմնիկներ), ինչը պայմանավորված է ախտահարված բջջում HBsAg-ի ավելցուկով (նկ.152): Այն կազմված է 2 պոլիպեպտիդային ֆրագմենտից՝ **preS1**-ը օժտված է արտահայտված ինունգենությամբ, **preS2**-ը ընկալիչ է և պայմանավորում է արտորքիան հեպատոցիտների մակերեսին, ունակ է կապվելու շիճուկային ալբումինի հետ՝ դրանք փոխարկելով պոլիհալբումինի:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺԾԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

♦ **HBcAg**-ը նույլեռպրոտեիդ է, հայտնաբերվում է միայն Դեյճի մասնիկների միջուկում («cor» անտիգեն), ներկայացված է անտիգենային մեկ տիպով, արյան հոսքում չի հայտնաբերվում:

♦ **HBeAg**-ը հայտնաբերվում է HBsAg դրական անձանց մոտ, ինկուբացիոն շրջանում անմիջապես HBs անտիգենի ի հայտ գալուց



Նկ.152. Հեպատիտ B վիրուսի անտիգենները

հետո, Դեյնի մասնիկներում չի հայտնաբերվում, չի կազմում վերջիններիս բաղադրիչ մասը: Այն սինթեզվում է HBcAg-ի կազմում, հետագայում վիրոնի կազմավորման պրոցեսում պոկվում է դրանից ու անցնում արյան հոսք՝ հանդիսանալով ակտիվ ինֆեկցիոն պրոցեսի առավել զգայուն ախտորոշիչ ցուցանիշ:

♦ **HBxAg**: Ենթադրվում է, որ այն կապվում է ուռուցքային աճը ճնշող և բջիջների բազմացումը կարգավորող հատուկ սպիտակուցի հետ՝ պայմանավորելով վերջինիս ինակտիվացումն ու հեպատոցիտների չարորակ տրանսֆորմացիան: HBx անտիգենի հայտնաբերումը արյան հոսքում վկայում է լարող քաղցկեղի զարգացման մասին:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Յեպատիտ Յ վիրուսը հավի սաղմում և բջջային կուլտուրա-ներում չի կուլտիվացվում:

Մարդու օրգանիզմում Յեպատիտ Յ վիրուսի ռեպրոդուկցիան իրականանում է հեպատոցիտներում, որոնց ցիտոպլազմա անցման ընթացքում լրացվում է դեֆեկտուային «դրական» շղթայի բացակա հատվածը մինչև երկար շղթայի չափերը: Այնուհետև կորիզում իրականանում է վիրուսի գենոմի ռեալիկացիան ու տրանսկրիպցիան: Տրանսկրիպցիայի արդյունքում սինթեզված **ինֆորմացիոն ՌՆԹ-ի շղթաները** պայմանավորում են վիրուսապեցիֆիկ սպիտակուցների սինթեզը: Գենոմի ռեալիկացիան և վիրուսի նոր սերնդի գենոմային ԴՆԹ-ի սինթեզը իրականանում է յուրօրինակ մեխանիզմով: Նախ ՌՆԹ պոլիմերազայի միջնորդությանք սինթեզվում է երկփեղկված գենոմային **ԴՆԹ-ի «բացասական» շղթային կոմպլեմենտար ՌՆԹ՝ պրեգենոմ**, որի մատրիքսի վրա հակադարձ տրանսկրիպցիայի արդյունքում սինթեզվում է **գենոմային «բացասական» ԴՆԹ:** Այնուհետև, ինքնահավաքնան և ելքի փուլերում, իրականանում է «բացասական» ԴՆԹ-ին կոմպլեմենտար «դրական» ԴՆԹ-ի սինթեզն ու գենոմային նուկլեինաթթվի շղթայի կրկնապատկումը, ինչը թիրախ բջջից վիրիոնի բողըքումից անմիջապես հետո ընդիատվում է: Մրանով է հավանաբար պայմանավորված կարճ շղթայի չափերի տատանումները:

**Պաթոգենեզ և կլինիկա:** Քանի որ վարակումն իրականանում է արյան ծանապարիով, հարուցիչները անմիջապես տարածվում են օրգանիզմով և առաջին հերթին ընտրողաբար ախտահարում են հեպատոցիտները՝ նպաստելով ինչպես պրոդուկտիվ, այնպես էլ ինտեգրատիվ ինֆեկցիայի զարգացմանը: **Պրոդուկտիվ ինֆեկցիայի դեպքում**, վարակումից երկու շաբաթ անց, արյան շիճուկում կարելի է հայտնաբերել վիրուսի վերարտադրության մասին վկայող առավել վաղ ցուցանիշները՝ հակաHBc M դասի հականարմիններ (**հակաHBc IgM**), **HBsAg**, **HBeAg**: Յարկ է նշել, որ վիրուսային Յ հեպատիտի դեպքում հեպատոցիտների դեստրուկտիվ փոփոխություններն ու քայլայունը գերազանցապես պայմանավորված է

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

օրգանիզմում իրականացող իմուն տեղաշարժերով: Վիրուսի վերարտադրության արդյունքում, վիրուսապեցիֆիկ սպիտակուցների դրսերումը թիրախ բջիջների մակերեսին պայմանավորում են առևտինուն ռեակցիաների զարգացումն օրգանիզմում, հեպատոցիտների վնասումը իմուն մեխանիզմների միջնորդությամբ՝ T8-ցիտոտոքսիկ լիմֆոցիտներ, հակամարմին կախյալ ցիտոլիզ, ինչպես նաև NK բջիջներ: Հեպատոցիտներին զուգահեռ՝ ախտահարվում են նաև իմուն հաճակարգի բջիջները՝ նակրոֆագերը, T և B բջիջները, ինչը պայմանավորում է անտիգենի ճանաչման անարդյունավետությունը, իմունոդեֆիցիտի զարգացումն օրգանիզմում՝ պայմաններ ստեղծելով հիվանդության պերսիստենտ ձևին անցնան համար:

Ինտեգրատիվ ինֆեկցիան ուղեկցվում է վիրուսի նուկլեինաթրվի ներդրմամբ հեպատոցիտների քրոմոսոմի կազմության մեջ և պրովիրուսի առաջացմամբ, ինչը արտահայտվում է HBs անտիգենի սինթեզով ու վիրուսակրությամբ: Վերջինս երբեմն կարող է նպաստել լարող քաղցկեղի զարգացմանը:

Ինկուբացիոն շրջանը տատանվում է բավականին լայն սահմաններում՝ 50-180 օր, միջինը՝ 2-4 ամիս, որին հաջորդում է մինչև մեկ ամիս տևողությամբ նախանշանային շրջանը: Դիվանդությունը կարող է ընթանալ դեղնուկային և ոչ դեղնուկային ձևերով: Ի տարբերություն A հեպատիտի, մեծ մասամբ այն ընթանում է ավելի ծանր, ընդհուած կայծակնային ձևի զարգացումը՝ լետալ վախճանով: Դնարավոր է նաև պրոցեսի քրոմիզացում, ինտեգրատիվ ինֆեկցիայի զարգացում՝ լարող ցիրոզ և չարորակ տրանսֆորմացում:

**Անընկալությունը** պայմանավորված է և հումորալ, և բջջային մեխանիզմներով: Դակամարմինները պայմանավորում են վիրուսի էլիմինացիան օրգանիզմից և ինտակտ հեպատոցիտների պաշտպանությունը: T8-լիմֆոցիտները ապահովում են ախտահարված հեպատոցիտների հեռացումը օրգանիզմից:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Բուժումն իրականացվում է ինտերֆերոնով և օրգանիզմում դրա սիթեզը խթանող պրեպարատներով, ինչպես նաև սիմպոտոմատիկ՝ ելնելով հիվանդության կլինիկական ընթացքից:

Ոչ սպեցիֆիկ պրոֆիլակտիկայի հիմքը հնարավոր բոլոր եղանակներով վիրուսով վարակման բացառումն է, բժշկական գանազան պարենտերալ միջամտությունների, արյան փոխներարկումների ժամանակ: Ընդ որում, միջոցառումները պետք է ուղղված լինեն ինչպես հիվանդների, այնպես և ողջ բուժանձնակազմի պաշտպանությանը: Կարևորվում է նաև սեռական ճանապարհով վարակի փոխանցման կանխարգելումը: **Սպեցիֆիկ պրոֆիլակտիկան իրականացվում է ռեկոնքինանտային HBs վակցինայով:**

**Լաբորատոր ախտորոշում:** Հիվանդության սուր ձևերի դեպքում, դեռևս նախադեղնուկային և նաև դեղնուկային շրջանի սկզբնական էտապում, լաբորատոր ախտորոշման հիմք են HBs, HBc անտիգենների, հակաHBc M դասի հակամարմինների հայտնաբերումը արյան հոսքում որպես B հեպատիտի առավել վաղ մարկերներ: Ավելի ուշ էտապներում և ռեկոնվալեսցենցիայի շրջանում B հեպատիտի մարկերներ են հակաHBc M, հակաHBc G, հակաHBs G դասերի հակամարմինները:


### 12.7. 3. Վիրուսային հեպատիտ D

Հեպատիտ D կամ դելտա վիրուսը հայտնաբերվել է քրոնիկական B հեպատիտով հիվանդների մոտ: Վիրիոնը գնդածն է, 36nm տրամագծով, արտաքին պատյանը պարունակում է զգալի քանակով HBsAg: Գենոմը ներկայացված է դեֆեկտային միաթել ՌՆԹ շղթայով, որի շատ փոքր չափերը հավանաբար պայմանավորում են ինքնուրույն ռեպլիկացիայի անընդունակությունը: Գենոմի հետ ասոցացված է միակ վիրուսսպեցիֆիկ սպիտակուցը, որը հայտնաբերվում է շճաբանական ռեակցիաներով (նկ.153):

Դելտա վիրուսի ռեպլիկացիայի համար որպես օգնական հանդես է գալիս HB վիրուսը: Այս հարուցիչների օբլիգատ կապը պայմանավորում է ինֆեկցիայի առաջացման հնարավորությունը

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինչպես միաժամանակյա վարակման, այնպես էլ սուպերինֆեկցիայի մեխանիզմով՝ Բ հեպատիտով հիվանդի վարակումը HD վիրուսով:



**Նկ.153. Դեպատիտ D վիրուս (δ վիրուս)**

Կլինիկորեն այսպիսի համակցված ինֆեկցիաները ավելի ծանր ընթացք են ունենում, որում հավանաբար դեր ունի դելտա վիրուսի անմիջական ցիտոախտաձին ազդեցությունը հեպատոցիտների վրա: Փոխանցվում է բացառապես պարենտերալ մեխանիզմով, սպեցիֆիկ կանխարգելման միջոցներ չկան:

### 12.7.4. Վիրուսային հեպատիտ C


Ծճաբանական հետազոտության մեթոդների զարգացումը և կատարելագործումը հնարավորություն զննելու հաստատելու, որ հետորանսֆուզիոն հեպատիտների որոշ մասը՝ 5-8%-ը, պայմանավորված չէ HB վիրուսով, քանի որ հիվանդների արյան մեջ չեն հայտնաբերվում վերջինիս մարկերները: Ներկայումս հիվանդությունը անվանվում է C հեպատիտ, իսկ հարուցիչը դասվում է **Flavivirus** ցեղին: Վիրուսը մինչև 80մն տրամագծով, իկոսաեղրիկ նուկլեոկապսիդ է շրջափակված սուպերկապսիդով: Գենոմը ներկայացված է միաբեր դրական շղթա (+)ՌՆԹ-ով: Ինֆեկցիայի աղբյուրը մարդն է, վարակի փոխանցումը ինչպես Բ հեպատիտի դեպքում՝ պարենտերալ, սեռական: Հիվանդությունը

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

հաճախ ընթանում է սուբկլինիկական ձևերով, դեպքերի մեծամասնությունում կարող է զարգանալ քրոնիկական հեպատիտ՝ ցիրոզի, հեպատոնայի բարդացմամբ: Ախտորոշումն իրականացվում է հիվանդի արյան շիճուկում սպեցիֆիկ անտիգենի կամ հակամարմինների հայտնաբերմամբ, ընդ որում հակամարմինները հայտնաբերվում են հիվանդության ավելի ուշ էտապներում: Վակցինապրոֆիլակտիկան մշակման էտապում է:

### 12.7.5. Վիրուսային հեպատիտ E

Հիվանդությունը հիմնականում ընթանում է թերեւ, լյարդի չափավոր ախտահարմամբ, կլինիկական ընթացքով նման է A հեպատիտին: Փոխանցման մեխանիզմը ֆեկալ օրալ, հիմնականում կարևորվում է ջրային ճանապարհը: HE վիրուսը դասվում է Calicivirus ցեղին, վիրիոնը ունի փոքր չափեր՝ մինչև 40nm, պարզ կառուցվածք, իկոսաեղթիկ տարածական սիմետրիա (նկ.154):



Նկ. 154. Հեպատիտ E վիրուս

Գենոմը կազմավորված է միաբել դրական շղթա (+)ՌՆԹ-ով: Հիվանդությունն ընթանում է ավելի թերեւ, քան B և C հեպատիտները, հիմնականում ելքը բարենպաստ է, սակայն հղի

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

կանանց մոտ կարող են արձանագրվել բարդություններ: Վակցինապրոֆիլակտիկա չի կիրառվում:


### 12.8. ԶԻԱՅ (Retroviride)

Retroviride ընտանիքն ընդգրկում է **Onkovirinae**, **Sprumavirinae**, **Lentivirinae** ենթաընտանիքները, որոնց տարբեր ներկայացուցիչներն ախտահարում են և մարդուն, և կենդանիներին: XX դարի 70-ական թվականների վերջում ԱՄՆ-ում Ռոբերտ Գալլոն հայտնաբերեց մարդու T բջջային լեյկեմիաները, լիմֆոմաներ առաջացնող, առաջին և երկրորդ տիպերի T լիմֆոտրոպ վիրուսները՝ **HTLV-I** (Human T lymphotropic virus type I), **HTLV-II**, որոնք ընդգրկվեցին **Lentivirinae** ենթաընտանիքում: Յետազայում հայտնաբերվեցին նույն ենթաընտանիքին դասվող և երկու վիրուս՝ **HTLV-III**, **HTLV-IV**, որոնք հաստատվեցին որպես մարդու իմունային անբավարարության հարուցիչներ՝ **ՄԻԱՎ-1** և **ՄԻԱՎ-2 (HIV-I, HIV-II)**: Վերջիններս, ի տարբերություն **HTLV-I** և **II** վիրուսների, որոնք պայմանավորում են T բջջների տրանսֆորմացիան ու հետագա բուժն բազմացնում, առաջացնում են վերջիններիս դեստրուկցիա, մաս և քանակի նվազում:

ՄԻԱՎ վարակը կամ ԶԻԱՅ-ը (ձեռքբերովի իմունաանբավարարության համախտանիշ) պրոգրեսիվող անբրոպնոզ հիվանդություն է, որին բնորոշ է իմուն համակարգի, գերազանցապես CD4 մարկերները կրող բջջների սպեցիֆիկ ախտահարումը՝ իմունոդեֆիցիտի առաջացումը (**СПИД - синдром приобретённого иммунодефицита**), ինչը կարող է բազմազան դրսևորումներ ունենալ: Յիվանդությունն առաջին անգամ նկարագրվել է 1978-ին ԱՄՆ-ում, Տանզանիայում, Յայիթիում: Այնուհետև Նյու-Յորքի համալսարանում Կապոշի սարկոնայով, Լոս-Անջելեսում չարորակ պնևմոնիատոզով երիտասարդ հոմոսեքսուալիստների մոտ և արձանագրվել է իմուն համակարգի նույնափակ ախտահարումներ: 2005թ. հաշվառված է ավելի քան 40 միլիոն ԶԻԱՅ վիրուսակիր և հիվանդ, որոնցից շուրջ 27 միլիոնը մահացել է:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՆՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

**Մորֆոլոգիա:** Վիրիոնը բարդ, է գնդաձև, 100-150nm տրամագծով: Իկոսաեղիրկ նուկլեոկապսիդը շրջափակված է 72 համաչափ ելուններով ընկղմված սուպերկապսիդով (նկ.155):




**Նկ.155. Մարդու իմունաանբարարության վիրուս**

Ելունները կազմված են gp41 և gp120KD գլիկոպրոտեիններից, որոնցից առաջինը թափանցում է արտաքին թաղանթի հաստության մեջ, իսկ gp120-ը միանում է դրա վերթաղանթային հատվածին, առաջացնելով սնկաննան գոյացություն: Արտաքին թաղանթի տակ տեղակայված է մատրիքսային՝ p17/18 սպիտակուցը, որը շրջափակում է վիրուսի կոնաձև միջուկը՝ «core»՝ կառուցված կապսիդային p24 սպիտակուցով: Մեկուսի գենոնք զուրկ է ինֆեկցիոնությունից, այն կազմված է միաթել ՌՆԹ-ի երկու մոլեկուլներից, որոնք միացած են p9 և p7 սպիտակուցներով: Միջուկում գտնվում են վիրուսի ռեպրոդուկցիան կարգավորող հակադարձ տրամսկրիպտազա (ռեերտազա), պրոտեազա, ինտեգրազա ֆերմենտները (նկ.156):

**Գենոմը** կազմված է կառուցվածքային 3 (gag, env, pol) և 6-ից ոչ պակաս կարգավորիչ (tat, rev, vif, vpr, vpu, nef) գեններով: gag-ը կոդավորում է մատրիքսային p17, կապսիդային p24, միջուկային p7

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԵՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

և p9 սպիտակուցները՝ խմբասպեցիֆիկ անտիգեն: ռու-ը կողավորում է gp120 և gp41 գլիկոպրոտեիդները՝ տիպասպեցիֆիկ անտիգեն: pol-ը պայմանավորում է ռեպլիկացիայի ֆերմենտների



### Նկ.156. ՄԻԱՎ (Վիրիոնի կառուցվածքը)

սինթեզը: tat սպիտակուցը 50-1000 անգամ արագացնում է վիրուսի գենոմի տրանսկրիպցիան: ռen ֆուֆոպրոտեինի բացակայությամբ արգելակվում է կառուցվածքային սպիտակուցների սինթեզը: nef գենը կարգավորում է tat գենի աշխատանքը, սահմանափակելով վիրուսի ռեպրոդուկցիան: vif սպիտակուցով պայմանավորված է հասուն վիրիոնների ինֆեկցիոնությունը: vpu և vpr սպիտակուցների դերն առաջմն ճշտված չէ:

Վիրուսի վերարտադրությունը ընթանում է հետևյալ փուլերով՝  
ա)(+)-ՌՆԹ մատրիքսի վրա հակադարձ տրանսկրիպցիայով  
սինթեզվում է (-)-ՌՆԹ, որը կոմպլեմենտարության սկզբունքով կրկնապատկվում է,

բ)ինտեգրացիա՝ էնդոնուկլեազայի, լիգազայի (ինտեգրազա) միջնորդությամբ երկրել ՂՆԹ-ն շրջանաձև փակվում է և ինտեգրվում թիրախ բջջի քոռմոսումի կազմության մեջ՝ պրովիրուս,

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆԻՎԱՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ


գ)տրանսկրիպցիա՝ պրովիրուսի (-)ԴՆԹ-ին կոմպլեմենտար սինթեզվում է (+)ՈՆԹ, որը՝

♦ձևավորում է դուստր պոպուլյացիայի գենոմային ֆոնդը,

♦որպես ինֆորմացիոն ՌՆԹ ապահովում է կառուցվածքային և ռեգուլյատոր սպիտակուցների սինթեզը,

դ)դուստր պոպուլյացիայի ինքնահավաքումն իրականանում է բջջի ցիտոպլազմայում,

ե)ելքը բողոքման ճանապարհով է (Ակ.157):



**Ակ.157. ՄիԱՎ-ի ռեպրոդուկցիան**

Իօֆեկցիայի աղբյուր է հիվանդ մարդը և վիրուսակիրը: Վարակը փոխանցվում է պարենտերալ (տարբեր բժշկական միջամտություններ, արյան և օրգանների փոխապատվաստումներ), կոնտակտային (հիվանդի ցանկացած կենսաբանական հեղուկի շփման դեպքում ռեցիպիենտի վնասված մաշկի և լորձաթղանթի հետ), սեռական և ուղղահայց (հիվանդ մորից երեխային): ՄիԱՎ-ով վարակվածները առավել վտանգավոր են կլինիկական ախտատանիշների դրսնորման շրջանում, երբ հարուցիչների տիտրը օրգա-

## ՄԱՍՏԻՎՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այսօնում՝ արյան մեջ, սերմնահեղուկում, թքում հասնում է առավելագույնի: ՄԻԱՎ ինֆեկցիայի փոխանցման գործընթացում կարևորվում են մի շարք հանգամանքներ՝ ինֆեկցիայի փուլը, վիրուսի տիտրը, մաշկի և լորձաթաղանթի վիճակը, էքսպոզիցիայի ինտենսիվությունը և այլն:

**Պարզենեց:** Պայմանավորված ՄԻԱՎ-ի մակերեսային gp120 սպիտակուցի արտահայտված խնամակցությամբ բջջային CD4 ընկալիչների նկատմամբ մակրոօրգանիզմում առավելապես ախտահարվում են **T-հելպեր** լիմֆոցիտները, որոնց քանակի խիստ նվազումն ու CD4/CD8 փոխհարաբերության խախտումը մի շարք հանգամանքների հետևանք է:

♦ՄԻԱՎ-ը ինտեգրացված վիճակում, չափավոր ռեպրոդուկցիայի արդյունքում պայմանավորում է CD4 լիմֆոցիտների կենսական պոտենցիալի նվազումը և դրանց աճի ու բազմացման զգալի դանդաղումը:

♦**T-հելպերների լիգիս:** Չնայած հաստատված է ՄԻԱՎ-ի ցիտոախտածին ազդեցության բացակայությունը՝ վիրուսի ինտենսիվ վերարտադրությունը և բողբոջման ճանապարհով վիրիոնների զանգվածային ելքը (մեկ բջջի գեներացիայում մի քանի հազար վիրիոն) լիմֆոցիտներից նպաստում է վերջիններիս թաղանթային կառուցների վճարմանը, որոնք չհասցնելով վերականգնվել՝ հանգեցնում են բջջի մահվանը (Ան.158):


♦Վիրուսի ռեպրոդուկցիան ուղեկցվում է վիրուսապեցիֆիկ սպիտակուցների (gp41 և gp120), դրսնորմանք T-հելպեր լիմֆոցիտների մակերեսին, ինչը պայմանավորում է լիմֆոցիտների միաձուլումն ու անկենսունակ, բազմակորիգ սինցիտիաների առաջացումը: Ընդ որում, ախտահարված լիմֆոցիտների հետ, սինցիտիաների կազմում ընդգրկվում են նաև առողջները, ինչը հետևանք է վերջիններիս մակերեսային CD4 ընկալիչներին օրգանիզմում ազատ շրջանառվող վիրուսային gp120 գլիկոպրոտեինի ֆիքսման:

♦Վիրուսապեցիֆիկ գլիկոպրոտեինների առկայությունը ինչպես ախտահարված, այնպես էլ առողջ T հելպերների մակերեսին,

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺԾԿԱԿԱՆՄԱՆՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

պայմանավորում է դրանց ռչնչացումը՝ T8, NK բջիջների և հակամարմին կախյալ ցիտոլիզի մեխանիզմներով:

Տ հելպերներին գործահեռ ախտահարվում են նաև B լիմֆոցիտները, մոնոնոկլինար ֆագոցիտար համակարգի բջիջները (արյան մոնոցիտներ), հյուսվածքային մակրոֆազեր, դենորիտային



**Նկ. 158. CD4 բջիջների քանակի նվազման մեխանիզմները**

բջիջներ), լեյկոցիտները, նյարդային համակարգի բջիջները, որոնց մակերեսին ևս հայտնաբերվում են CD4 ընկալիչներ: Բացի այդ, արձանագրվում է նաև CD4 ընկալիչներից գործ բջիջների ախտահարում՝ ստամոքսաղիքային տրավուի, շնչական ուղիների էպիթելիային, անորների էնդոթելիային բջիջներ և այլն, ինչը եապես դրսնորվում է իիվանդության պարոգենետիկ ընթացքում տարբեր օրգան-համակարգերի ախտահարմամբ:

ՄԻԱԿ-ի ընտրողական ազդեցությունը Th-լիմֆոցիտների վրա և վերջիններիս քանակի նվազումը պայմանավորում է հակավիրուսային, հակամարմիային, հակառաւությային պաշտպանական մեխանիզմների ընկճումը, ինչը նպաստում է օպորտունիստական ինֆեկ-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

ցիաների, չարորակ ուռուցքային պրոցեսների զարգացմանն ու հիվանդության բազմազան կլինիկական դրսուրումներին:

**Կլինիկա:** Ինկուբացիոն շրջանը բավականին երկար է, միջինը՝ 2-4 շաբաթ: Պրոդրոմալ շրջանի ախտանիշները ոչ սպեցիֆիկ բնույթի են տենր, բուլություն, ցավեր մկաններում և հողերում, լիմֆադենոպաթիա, քթըմպանի և վերին շնչառական ուղիների կատառ, դիառեա և այլն: Որոշ ժամանակ անց, վիրուսի պերսիստենցիայի և ինֆեկցիայի անսիմպտոմ ձևին անցնան հետևանքով, նշված սիմպտոմները անհետանում են, իհվանդի ինքնազգացողությունը լավանում է և տարիների ընթացքում հիվանդության առկայության միակ ցուցանիշը արյան մեջ ՄԻԱՎ սպեցիֆիկ հակամարմինների հայտնաբերումն է: Յիշվանդության ծաղկման շրջանը բնութագրվում են առավելապես շնչառական, նյարդային և այլ համակարգերի, աղեստանոքսային տրակտի ախտահարումներով, պնիկունիայի, մենինգիտնեֆալիտի, անզուսպ դիառեայի, ինչպես նաև բուն ձեռքբերովի ինունանբավարարության համապտանիշի եռթյունը կազմող օպորտունիստական ինֆեկցիաների, չարորակ ուռուցքային հիվանդությունների և օրգանիզմի կախեքսիայի զարգացմամբ, որոնք ել պայմանավորում են հիվանդության մահացու ելքը:

**Բուժում:** ԶԻԱՀ-ի բուժման նպատակով իրականացվող հաճախիր միջոցառումներն ուղղված են արյունավետ վիրուլոցիդ պրեպարատների կիրառությանը, իմուն համակարգի տարբեր օղակների ֆունկցիաների կարգավորմանը, ինչպես նաև զանազան օպորտունիստական ինֆեկցիաների ու չարորակ ուռուցքային հիվանդությունների դեմ պայքարին: Դարկ է նշել նաև, որ մինչ այժմ կիրառված հակավիրուսային պրեպարատներից առավել արդյունավետ են եղել վիրուսային հակադարձ տրանսկրիպտազայի ինիիբիտորները՝ ազիդոթիմիդին (գիդովուլին, AZT), ֆուֆազիլ և այլն:

**Սպեցիֆիկ կանխարգելման** միջոցներ դեռևս մշակված չեն: Վակցինաների ստացման դժվարությունը գերազանցապես պայմա-

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ

նավորված է ՄԻԱՎ-ի փոփոխականության գերբարձր հաճախականությամբ: Նույնիսկ մեկ գեներացիայի ընթացքում՝ մուտացիաների և գենետիկական ռեկոմբինացիաների հետևանքով, հիվանդի մոտ առաջանում են վիրուսի բազմազան անտիգենային սպեցիֆիկության շտամներ: Այս հանգամանքը զգալիորեն նվազեցնում է վակցինացման հետևանքով օրգանիզմում սինթեզված վիրուս չեղոքացնող հականարմինների սպեցիֆիկությունը նշված բազմազան անտիգենային շտամների նկատմամբ: **Ոչ սպեցիֆիկ այրոֆիլակտիկայի** հիմքը հնարավոր բոլոր եղանակներով վիրուսով վարակման բացառումն է, բժշկական զանազան պարենտերալ միջամտությունների, արյան փոխարձրկումների ժամանակ: Ընդ որում, միջոցառումները պետք է ապահովեն ինչպես հիվանդների, այնպես էլ ողջ բուժանձնակազմի պաշտպանությունը: Կարևորվում է նաև սեռական ճանապարհով, ուղղահայց մեխանիզմով՝ հիվանդ մորից պտղին, վարակի փոխանցման կանխարգելումը:

Լաբորատոր ախտորոշումն իրականացվում է վիրուսաբանական, շճաբանական վիրուսային անտիգենների և դրանց նկատմամբ սպեցիֆիկ հակամարմինների հայտնաբերման եղանակներով: Կիրառվում են նաև ԴՆԹ-զոնդերի մեթոդն ու աղլիմերազային շղթայական ռեակցիան (ՊՇՈ):

### 12.9. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ԻՆՖԵԿՑԻԱԼԵՐ (Coronaviridae)


Կորոնավիրուսները դասվում են **Coronaviridae** (լատ.corona-թագ) ընտանիքի **Coronavirus** ցեղին, որն ընդգրկում է մարդու, կենդանիների և թռչունների առավելապես շնչական, ինչպես նաև աղեստամոքսային համակարգը ախտահարող շուրջ 20 տեսակ: Մարդու կորոնավիրուսը հայտնաբերել են D. Tyrrell-ը և M. Bynoe-ն 1965-ին սուր ռեսպիրատոր հիվանդություններով անձանցից:

Կորոնավիրուսները մշտապես շրջանառվում են մարդկային պոպուլյացիաներում, հարուցելով հիմնականում թերև ընթացքով ռեսպիրատոր հիվանդություններ, էնտերիտ, գաստրոէնտերիտ, սակայն դրանց դերը մարդու ախտաբանությունում առավել

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Կարևորվեց 21-րդ դարասկզբին՝ 2002-ին ծանր սուր ռեսպիրատոր համախտանիշի (անգլ. severe acute respiratory syndrome, SARS), այնուհետև 2012-ին մերձավոր արևելյան ռեսպիրատոր համախտանիշի (անգլ. Middle East respiratory syndrome, MERS) դեպքերի արձանագրման ու համաճարակային տարածման պայմաններում:

Վիրուսային մասնիկներն ունեն բարդ կառուցվածք, չափերը տատանվում են բավականին լայն սահմաններում՝ 80-220նմ, պոլիմորֆ են, առավել հաճախ հանդիպում են կլոր ձևերը: Նույլեոկապսիդը կառուցված է տարածական սիմետրիայի սպիրալաձև տիպով: Այն շրջափակված է լիպոպրոտեինային թաղանթով՝ սուպերկապսիդ, որի մեջ ընկղզված գուրզայանման վիրուսապեցիֆիկ գլիկոպրոտեինները պայմանավորում են վիրիոնի՝ արեգակի լուսապսակը հիշեցնող, թագանման տեսքը (նկ.159):




**Նկ.159. Կորոնավիրուս**

Գենոմը ներկայացված է միաբել դրական շղթա (+)ՈՆՁ-ով՝ ասոցացված անտիգենային հատկությամբ օժտված նույլեոկապսիդային Ն պրոտեինի հետ, որը պայմանավորում է կորոնավիրուսների ցեղային սպեցիֆիկությունը և հայտնաբերվում է կոմպլեմենտի կապման ռեակցիայով: Սուպերկապսիդը ձևավորված է բջջային ծագման երկշերտ լիպոպրոտեինային թաղանթով, որի վրա տեղակայված են տրամամեմբրանային E1 և մակերեսային E2 գլիկոպրոտեինները (նկ.160): Վերջիններս օժտված են անտիգենությամբ, պայմանավորում են կորոնավիրուսի տիպային սպեցիֆիկությունը և

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆ ՈՒԹՅՈՒՆ


հայտնաբերվում են վիրուսի չեզոքացման ռեակցիայով: E2 գլիկոպրոտեին E2 պատճախանատու են վիրիոնի աղտորքիայի համար: Ռեպրոդուկցիայի ընթացքում դրանց դրսնորումը թիրախ բջջի մակերեսին նպաստում է ախտահարված բջջների միաձուլմանը,



### Նկ.160. Կորոնավիրուս (վիրիոնի կառուցվածքը)

սինցիտիաների առաջացմանը և խթանում է մակրոօրգանիզմում ցիտոստոքսիկ լիմֆոցիտների ակտիվացումն ու պրոլիֆերացումը:

Կորոնավիրուսների վերարտադրությունը՝ վիրուսսպեցիֆիկ նուկլեինաթրուների և սպիտակուցմերի սինթեզ, նուկլեոկապսիդի, հասուն վիրիոնի ձևավորում, իրականանում է ախտահարված բջջի ցիտոպլազմայում (Նկ.161): E1 և E2 գլիկոպրոտեինները տեղաշարժվում են դեպի էնդոպլազմատիկ ցանց, Գոլցիի ապարատ,



### Նկ.161. Կորոնավիրուսի վերարտադրությունը

## ՄԱՍՏԱՎՈՐ ԲԺՇԿԱԿԱՆՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ճեափոխում են դրանց թաղանքները, որտեղից նույլեոկապսիդը բողբջելով՝ պատվում է սուպերկապսիդով և դուրս գալիս ախտահարված բջջից սողոսկման մեխանիզմով:

### 12.9.1. Ծանր սուր ռեսպիրատոր համախտանիշ (SARS)

Արտասովոր ծանր ընթացքով, հաճախ մահվան ելքով պահանջնիայի առաջին դեպքերն արձանագրվել են 2002-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Չինաստանի Գուանդուն նահանգում, Յոնկոնգում, Վիետնամում, Սինգապուրում և լրատվամիջացների հրապարակումներում ստացել է «ատիպիկ պահանջնիա» անվանումը: Այնուհետև դեպքերի քանակն արագ ավելացել է և մինչև 2003-ի վերջը, համաճարակային գործնթացում ընդգրկվել է տարբեր աշխարհամասերի ավելի քան 30 երկրներ՝ շուրջ 8.5 հազար հիվանդների արձանագրում, որոնցից ~10%-ը լետալ վախճանով: Նման տագնապալի իրավիճակը հիմք հանդիսացավ աշխարհի տարբեր առաջատար մասնագիտական խմբերի կողմից ինտեսիվ հետազոտությունների իրականացման համար, ինչը անհավանական կարծ ժամանակահատվածում պսակվեց հաջողությամբ և 2003-ի ապրիլին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը հանդես եկավ հայտարարությամբ, ըստ որի «Ծանր սուր ռեսպիրատոր համախտանիշի» եթուղօգիան պայմանավորված է *Coronaviridae* ընտանիքին դասվող վիրուսի նոր տիպով՝ **SARS-CoV**:

Ինկուբացիոն շրջանը տատանվում է 1-2 օրից մինչև մեկ շաբաթ: Հիվանդության սկիզբը սուր է, արձանագրվում է դող, տենի, ընդհանուր ինտոքսիկացիայի ախտանիշներ՝ թուլություն, գլխացավ, գլխապտույտ, ցավ մկաններում, չափավոր արտահայտված կատարալ երևույթներ՝ թերև հազ, ցավ կոկորդում, ռինիտ և այլն: Մեծամասամբ հիվանդությունն ավարտվում է առողջացմամբ: Որոշ դեպքերում ախտաբանական գործնթացը վերին շնչական ուղիներից տարածվում է առավել ստորին հատվածները, ախտահարվում են բրոնխիոլները, ալվեոլները, թոքային հյուսվածքը, ինչը պայմանավորում է մահացու թոքաբորբի զարգացումը և հիվանդության լետալ վախճանը:

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

### 12.9.2. Մերձավոր արևելյան ռեսպիրատոր համախտանիշ (MERS)

Ուժորոսաթեկտիվ հետազոտությունների արդյունքում հաստատվել է, որ հիվանդության առաջին դեպքերը արձանագրվել են Սաուդյան Արաբիայում 2012-ի ապրիլին, այնուհետև մերձավոր արևելքի այլ երկրներում Հորդանան, Կատար, Արաբական Միացյալ Էմիրություններ: Հետագայում նման հիվանդներ են գրանցվել նաև Հյուսիսային Աֆրիկայի երկրներում, Եվրոպայում՝ Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Մեծ Բրիտանիա, Հարավային Կորեայում, ընդ որում հիվանդների գերակշիռ մասը նշել են Մերձավոր արևելքի երկրներում շրջագայության հանգամանքը:

Մերձավոր արևելյան ռեսպիրատոր համախտանիշի հարուցիչը՝ **MERS-CoV**, դասվում է կորոնավիրուսների ընտանիքին, օժտված է վերջիններիս բնութագրական հատկանիշներով, այդ թվում արտահայտված խնամակցությամբ մարդու շնչուղիների, թոքային հյուսվածքի բջիջների նկատմամբ:

Հիվանդությունն ընթանում է հիմնականում սուր ռեսպիրատոր վիրուսային ինֆեկցիաներին նման կլինիկական պատկերով: Բարենպաստ դեպքերում այն ավարտվում է լավացմամբ, սակայն հիվանդների ~10-30%-ի մոտ (գերազանցապես տարեց, ինուն համակարգի ընկճնամբ, մետաբոլիկ խանգարումներով անձինք) շնչական համակարգի հյուսվաքային բջիջների խորը, ռեստրուկտիվ փոփոխությունները պայմանավորում են ծանր պնևմոնիայի զարգացումը, օրգանիզմի ընդիանուր ինտոքսիկացիան, տարբեր օրգանների տոքսիկ ախտահարումներն ու հիվանդի նահը:

Կորոնավիրուսային ինֆեկցիաների բուժումն իրականացվում է վիրովլոցիդ պրեպարատներով, ինչպես նաև սիմպոմատիկ:

**Լաբորատոր ախտորոշումը:** Վիրուսային անտիգենների և հակավիրուսային սպեցիֆիկ հակամարմինների բացահայտումը կատարվում է շճաբանական ռեակցիաներով՝ կոմպլեմենտի կապման, հեմագլուտինացիայի իմունաֆերմենտային անալիզի: Առավել արդյունավետ է գենոմի բացահայտման պոլիմերազային շղթայական ռեակցիան: Կարող են կիրառվել նաև վիրուսաբանական,


## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵԱԲԱՆ ՈՒԹՅՈՒՆ

Վիրուսուկոպիկ՝ էլեկտրոնային մանրէազննում, ինունոֆյուլորէսցենտային եղանակները:

### 12.10. ԷԲՈԼԱՅԻ ՀԵՄՈՌԱԳԻԿ ՏԵԽՆ

Սուր, հիմնականում անոքների էնդոթելի, բազմազան օրգանների և հյուսվածքների ախտահարումով, օրգանիզմի ջրազրկմանը ու ընդհանուր ինտոքսիկացիայով, տենդով, մաշկի և լորձաթաղնթների ցանավորումով, լոկալ և տարածուն հեմոռագիաներով ընթացող, ծանր, 25-90% մահվան ելքով, բավականին բարձր կոնտագիոզությամբ, էնդեմիկ օջախային ինֆեկցիոն հիվանդություն է, որի առաջին դեպքերը արձանագրվել են 1976-ին կենտրոնական աֆրիկայի երկրներում՝ Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն, Սուդան: Վերջին լայնածավալ համաժարակը սկսվել է 2014-ի մարտին, ընդգրկելով արևմտյան աֆրիկայի մի շարք երկրներ՝ Գվինեա, Լիբերիա, Սիերա-Լեոնե: Առանձին դեպքեր են արձանագրվել նաև Նիգերիայում, Սենեգալում, Մալիում, Իսպանիայում, Սեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում:


Հիվանդության հարուցիչը՝ Էբոլավիրուս, դասվում է **Filoviridae** (լատ. *filum* - թել) ընտանիքին: Վրիոնը թելանման է, ունի բարդ կառուցվածք, երկարությունը տատանվում է բավականին լայն սահմաններում՝ 700-1400նմ, լայնակի կտրվածքը հաստատում է 80նմ (Ակ.162): Գենոմը ներկայացված է միաթել բացասական շղթա



Ակ.162. Էբոլավիրուս

## ՄԱՍՆԱԿՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

(-)Ունթով՝ ասոցացված նուկլեոպրոտեիդային NP, պոլիմերազային ակտիվության L և VP35 սպիտակուցների հետ: Նուկլեոկապսիդը շրջափակված է վիրուսապեցիֆիկ գլիկոպրոտեիդային GP ելուն-ներով ընկղմված, բջջային ծագման սուպերկապսիդով, որը միջուկի հետ կապված է մատրիքսային VP24 և VP40 սպիտակուցներով ձևավորված շերտով (նկ.163):



**Նկ.163. Էրուավիրուս (Վիրիոնի կառուցվածքը)**

Էրուավիրուսի բնական շտեմարան է համարվում կենտրոնական և արևամտյան աֆրիկայի տրոպիկական, խոնավ անտառներում բնակվող չոչիկները, որոնցից վարակվում են կապիկները և բազմազան այլ կենդանիներ: Մարդը վարակվում է հիվանդ կենդանիների, դրանց դիակների հետ անմիջական շփման և հիվանդ կենդանիների արտաքրանքներով աղտոտված հատապտուղների, բանջարեղենի և այլ սննդամբերների օգտագործման միջոցով: Մարդկային պոպուլյացիաներում համաճարակային գործնաթացը զարգանում է գերազանցապես կենցաղ կոնտակտային մեխանիզմով՝ հիվանդ մարդու արյան, կենսաբանական այլ հեղուկների, արտաքրանքների, ինչպես նաև դրանցով աղտոտված անկողնային և անծնական սպիտակեղենի, հագուստի հետ անմիջական շփման ժանապարհով: Յնարավոր է նաև վարակի փոխանցման պարենտե-

## ՄԱՍՆԱՎՈՐ ԲԺՇԿԱԿԱՍՄԱՆ ՐԵՄԱՐԱՆ ՈՒԹՅՈՒՆ

րալ մեխանիզմը՝ հիմնականում հիվանդների հետ աշխատող բուժանձնակազմի և գիտական հետազոտություններ իրականացնող անձանց շրջանում:

Ինֆեկցիայի մուտքի դուռ են վնասված մաշկը և լորձաբաղանքները, որտեղից հարուցիչները անցնում են լիմֆատիկ հանգույցներ, վերարտադրվում այնտեղ և մեծ քանակներով անցնում արյան հոսք: Վիրուսնեմիայի արդյունքում տարբեր օրգանների ստամոքս, աղիներ, թոքեր, յարդ, փայծաղ, երիկամներ և այլն, անոթային համակարգի ախտահարումը, պայմանավորում է դրանցում բորբոքային, նեկրոտիկ օջախների, արյունազեղումների առաջացումը և հիվանդության կլինիկական ախտամիջների դրսևորումը:

Հիվանդության ինկուբացիոն շրջանը տատանվում է մի քանի օրից մինչև 3 շաբաթ: Նախանշանային շրջանը հիմնականում բացակայում է: Հիվանդության սկիզբը սուր է՝ պայմանավորված հյուսվաքների խորը, դեստրուկտիվ փոփոխություններով, օրգանիզմի ընդհանուր ինտոքսիկացիայով և տարբեր օրգանների տոքսիկ ախտահարումներով, ինչը դրսևորվում է տենդով, դողով, ուժեղ գլխացավով, ցավով մկաններում և հոդերում: Այնուհետև առաջին շաբաթվա ընթացքում արձանագրվում է հաճախակի փսխումներ, արյունային լուծ, մաշկի և լորձաբաղանքների բծավոր-պապուլային, վեգիկուլային ցան և այլն: Բարենպաստ դեպքերում՝ վարակվելուց 2-3 շաբաթ անց, հիվանդությունն ավարտվում է լավացմամբ: Ծանր դեպքերում հեմոռագիկ համախտանիշի գարգացման հետևանքով, արձանագրվում են տեղային և տարածուն արյունազեղումներ, արյունահոսություններ, հիպովոլեմիկ շոկ և մահ:

Բուժումն իրականացվում է վիրուլոցիդ պրեպարատներով, ինչպես նաև սինպտոմատիկ՝ ուղղված կենսական կարևորություն ունեցող համակարգերի ֆունկցիաների պահպանանք:

**Լաբորատոր ախտորոշումը:** Վիրուսային անտիգենների և հակավիրուսային սպեցիֆիկ հակամարդինների բացահայտումը կատարվում է շճաբանական ռեակցիաներով՝ կոմպլեմենտի կապ-

## ՄԱՍՆԱՎՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՍՆՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆ

ման, իեմագլուտինացիայի իմունաֆերմենտային անալիզի: Առավել արդյունավետ է գենոմի բացահայտման պոլիմերազային շղթայական ռեակցիան: Կարող են կիրառվել նաև վիրուսաբանական, վիրուսուկոպիկ՝ էլեկտրոնային մանրէազնում, իմունոֆլուորէսցենտային եղանակները:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### **Օգտագործված գրականության ցանկ**

- 1.Շեկոյան Վ.Ա., Շեկոյան Է.Գ., Բժշկական մանրէաբանություն, Վիրուսաբանություն և ինունաբանություն, Լիզանդ, Երևան, 1991.
- 2.Ֆրանգուլյան Լ.Ա., Բժշկական միկրոբիոլոգիա, Լուս հրատարակչություն, Երևան, 1979.
- 3.Борисов Л.Б., Медицинская микробиология, вирусология, иммунология, Медицинское информационное агентство, Москва, 2005.
- 4.Букринская А.Г., Вирусология, Медицина, Москва, 1986.
- 5.Воробьев А.А., Быков А.С., Бойченко М.Н. и др., Медицинская микробиология, вирусология и иммунология, Медицинское информационное агентство, Москва, 2004.
- 6.Воробьев А.А., Быков А.С., Пашков Е.П., Рыбакова А.М., Микробиология, Медицина, Москва, 1998.
- 7.Коротяев А.И., Бабичев С.А., Медицинская микробиология, вирусология и иммунология, Специальная литература, Санкт-Петербург, 1998.
- 8.Кочемасова З.Н., Ефремова С.А., Набоков Ю.С., Микробиология, Медицина, Москва, 1984.
- 9.Поздеев О.К., Медицинская микробиология, ГЭОТАР- МЕД, Москва, 2001.
- 10.Покровский В.И., Поздеев О.К., (главные редакторы), Медицинская микробиология, ГЭОТАР МЕДИЦИНА, Москва, 1998.
- 11.Петров Р.В., Иммунология, Медицина, Москва, 1982.
- 12.Пяткин К.Д., Кривошеин Ю.С., Микробиология, Медицина, Москва, 1980.
- 13.Тимаков В.Д., Левашев В.С., Борисов Л.Б., Микробиология, Медицина, Москва, 1983.

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- 14.Anathanarayan and Paniker's "Textbook of Microbiology", India, 2005
- 15.Bernard N. Fields, David M. Knipe. "Fundamental Virology" Raven Press, New-York, 1986.
- 16.Barbara J. Howard, John f. Keiser, Thomas F. Smith, et all. "Clinical and pathogenic Miicrobiology" (Boston, Chicago, London, Toronto), 1993.
- 17.Eugene W. Nester, Denis G. Andersen, C. Evans Roberts, Jr., etb all "Microbiology" A human perspective. USA (Boston, San Francisco), London, Madrid, Milan, 2004.
- 18.Ivan Roitt, Jonatha Brostoff, David Male "Immunology" (London, New York, Toronto), 2001.
- 19.Jeffrey K. Actor "Immunology and Microbiology", 2007.
- 20.Mark Gladwin, Bill Trattler,. "Clinical Microbiology". Med Master, Ine, Miammi, 2006.
- 21.Paul G.Engelkirk Gwendolyn R.W.Burton "Burton`s Microbiology" for the health sciences, eighth edition, 2007.
- 22.Warren Levinson, Ernest Jawetz "Medical Microbiology, Immunology", New York, London, Madrid, Milan, Sydney, Tokyo), 2000.

## Ց ա ն կ

### Մ ա ս ն ա ռ ա ջ ի ն

<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<b>5</b>
<b>Գլուխ 1. Մանրէաբանության առարկան և խնդիրները .....</b>	<b>5</b>
1.1. Մանրէաբանության զարգացման պատճական էտապները.....	11
1.2. Երևանի Տ.Յերացու անվան պետական բժշկական համալսարանի բժշկական մանրէաբանության ամբիոն.....	17
<b>Գլուխ 2. Մանրէների համակարգումը և դասակարգումը</b>	<b>22</b>
<b>Գլուխ 3. Մանրէների (բակտերիաների) մորֆոլոգիան,     կառուցվածքը և քիմիական կազմը .....</b>	<b>27</b>
3.1.Բակտերիաների հիմնական ձևերը .....	27
3.1.1. Բակտերիային բջջի կառուցվածքը .....	31
3.2. Սպիրոլիսետներ .....	46
3.4. Ոլկետսիաներ .....	47
3.5. Խլամիդիաներ .....	49
3.6. Միկոպլազմաներ .....	50
3.7. Շողասնկեր .....	52
3.8. Սնկեր .....	54
<b>Գլուխ 4. Մանրէների ֆիզիոլոգիան</b>	<b>56</b>
4.1. Մանրէների սնուցումը, սնուցման առանձնահատկություն- ներն ու տիպերը .....	56
4.2. Մանրէների սնուցման մեխանիզմները .....	59
4.3. Բակտերիաների ֆերմենտները .....	60
4.4. Բակտերիաների աճը և բազմացումը .....	62
4.4.1. Բակտերիային պիզմենտներ .....	65
4.5. Մանրէների շնչառությունը.....	66
4.6. Սննդային միջավայրեր .....	68
4.7. Միջավայրի գործոնների ազդեցությունը մանրէների վրա	69
4.7.1. Ստերօգում (ստերիլիզացիա) .....	71
4.7.2. Վարակագերձում (դեզինֆեկցիա) .....	73
<b>Գլուխ 5. Ընդհանուր վիրուսաբանություն .....</b>	<b>75</b>
5.1. Վիրուսների առանձնահատկությունները .....	75
5.2. Վիրուսների դասակարգումն ու անվանակարգումը .....	76

5.3. Վիրուսի (Վիրիոնի) կառուցվածքը և քիմիական կազմը	77
5.4. Վիրուսի և թիրախն բջջի փոխագդեցությունը .....	80
5.5. Վիրուսային կուլտուրաների ստացումը և ինդիկացիան	83
5.6. Բակտերիաների վիրուսներ (բակտերիոֆազ) .....	85
5.7. Պրիոններ .....	89
<b>Գլուխ 6. Միկրոօրգանիզմների էկոլոգիան</b>	91
6.1. Մանրէները և բիոսֆերան .....	91
6.2. Ջողի, ջրամբարների, օդի միկրոֆլորան .....	94
6.3. Մարդու օրգանիզմի միկրոֆլորան .....	96
<b>Գլուխ 7. Մանրէների գենետիկական համակարգի նախն</b>	101
7.1. Ընդհանուր հասկացություն գենետիկական համակարգի նախն .....	101
7.2. Բակտերիաների գենետիկական առանձնահատկությունները .....	102
7.3. Պլազմիդներ, տրանսպորտներ, Is-հաջորդականություններ .....	104
7.4. Մանրէների փոփոխականության ձևերը .....	106
<b>Գլուխ 8. Ինֆեկցիոն հիվանդությունների քիմիոթերապիայի հիմունքները .....</b>	116
8.1. Քիմիոթերապևտիկ պրեպարատների հիմնական խմբերը	117
8.2. Քիմիոթերապիայի բարդությունները .....	120
8.3. Հակավիրուսային պրեպարատներ .....	123
<b>Ս ա ս ն ե ր կ ր ո ր դ</b>	124
<b>ՈՒՍՍՈՒՆՔ ԻՆՖԵԿՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ .....</b>	
<b>Գլուխ 9. Ինֆեկցիայի բնութագիրը և առաջացման պայմանները .....</b>	125
9.1. Ախտածին մանրէները և դրանց հատկությունները .....	127
9.2. Վիրուլենտության գործոնների բնութագիրը .....	124
9.3. Բակտերիային թույների (տոքսինների) բնութագիրը .....	129
9.4. Ինֆեկցիայի ձևերը .....	133
9.5. Ինֆեկցիոն հիվանդությունների զարգացման փուլերը ...	137
9.6. Վիրուսային ինֆեկցիաների առանձնահատկությունները	139

<b>Մ ա ս ն ե ր բ ո ր դ</b>	
<b>ՈՒՍՏՈՒՆՔ ԻՄՈՒՆԻՏԵՏԻ ՄԱՍԻՆ</b>	143
<b>Գլուխ 10. Իմունիտետի բնութագիրը, իմունաբանության գարգացման համառոտ պատմությունը</b>	143
10.1. Իմունիտետի տեսակները .....	146
10.2. Տեսակային իմունիտետ, օրգանիզմի պաշտպանության ոչ սպեցիֆիկ գործոններ .....	146
10.2.1. Մաշկ և լորձաբաղանթներ .....	146
10.2.2. Օրգանիզմի նորմալ միկրոֆլորա .....	149
10.2.3. Ավշային հանգույցներ .....	149
10.2.4. Ֆագոցիտոց .....	150
10.2.5. Բնական քիլեր (NK) բջիջներ .....	154
10.2.6. Կոնվլեմենտի համակարգ .....	154
10.2.7. Լիզոցիմ .....	157
10.2.8. Ցիտոկիններ .....	155
10.2.9. Ինտերֆերոնի համակարգ .....	159
10.2.10. Սուլր փուլի սպիտակուցներ .....	161
10.2.11. Բորբոքում .....	162
10.2.12. Տենդ .....	162
10.3. Զեռքբերովի իմունիտետ .....	163
10.4. Անտիգեն (Հակածին) .....	164
10.4.1. Մարդու օրգանիզմի անտիգենները .....	167
10.4.2. Մանրէների անտիգենները .....	169
10.5. Իմուն համակարգի օրգանները և բջիջները .....	172
10.5.1. Իմունոկոմպետենտ բջիջներ .....	176
10.5.2. Անտիգեն ներկայացնող բջիջներ (ԱՆԲ) .....	180
10.6. Միջքջային կոռոպերացիան իմուն պատասխանի տարրեր ծների ժամանակ .....	181
10.7. Հակամարմիններ .....	184
10.8. Իմունաբանական հիշողություն .....	192
10.9. Իմունաբանական տոլերանտություն .....	193
10.10. Իմունաախտաբանություն .....	194
10.11. Իմունականիսարգելում և իմունաբուժում .....	199

<b>Մ ա ս ն չ ո ր ր ո ր դ</b>	
ՍԱՍՍՎՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱՆՐԵԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	206
<b>Գլուխ 11. Բակտերիային ինֆեկցիաներ</b>	208
11.1. Թարախաբորբքային հիվանդությունների հարուցիչներ	208
11.1.1. Գրամ դրական կոկտեր	208
11.1.1.1. Տեղ Ստաֆիլոկոկ (Staphylococcus)	208
11.1.1.2. Տեղ Ստրեպտոկոկ (Streptococcus)	217
11.1.1.2.1. Streptococcus pyogenes	218
11.1.1.2.2. Պնևմոնիայի ստրեպտոկոկ (Streptococcus pneumoniae)	224
11.1.2. Գրամ բացասական կոկտեր, Տեղ Նեյսերիա (Neisseria)	227
11.1.2.1. Սենինգոկոկ (Neisseria meningitidis)	228
11.1.2.2. Գոնոկոկ (Neisseria gonorrhoeae)	232
11.2. Աղիքային ինֆեկցիաների հարուցիչներ	236
11.2.1. Աղիքային ցուպիկ (Escherichia coli)	237
11.2.2. Տեղ Սալմոնելա (Salmonella)	243
11.2.2.1. Որովայնային տիֆի և պարատիֆերի սալմոնելաներ (S.typhi, S.paratyphi A, S.paratyphi B)	245
11.2.2.2. Սալմոնելոզներ (սալմոնելային դիառեաներ)	251
11.2.3. Բակտերիային դիօքտերիայի հարուցիչներ (Shigella)	253
11.2.4. Խոլերայի հարուցիչներ (V. cholerae, V. cholerae eltor)	257
11.2.5. Կլեբսիելաներով պայմանավորված սուր աղիքային ինֆեկցիաներ (Klebsiella)	263
11.2.6. Աղիքային իերսինիոզ (Y.enterocolitica)	266
11.2.7. Կամպիլոբակտերիոզներ	269
11.2.8. Պրոտեաներով պայմանավորված ինֆեկցիաներ (Proteus)	273
11.2.9. Կապտաքարախային ցուպիկ (P.aeruginosa)	276
11.3. Յատուկ վտանգավոր (զոնոզ) ինֆեկցիաներ	280
11.3.1. Ժամտախտ (Yersinia pestis)	280
11.3.2. Սիրիոյան խոց (Bacillus anthracis)	287
11.3.3. Տուլարեմիա (Francisella tularensis)	292
11.3.4. Բրուցելոզ (Brucella)	296

11.4. Անաերոր ինֆեկցիաների հարուցիչներ .....	303
11.4.1. Գազային անաերոր ինֆեկցիաների (Գազային գանգրենայի) հարուցիչներ (Clostridium)	303
11.4.1.1. <i>C.perfringens</i> .....	304
11.4.2. Փայտացում ( <i>C. tetani</i> ) .....	309
11.4.3. Բուտուլիզմ ( <i>C.botulinum</i> ) .....	312
11.5. Օդակարիլային ինֆեկցիաներ .....	315
11.5.1. Դիփթերիա (C. diphtheriae) .....	315
11.5.2. Կապույտ հազ (B. pertussis) .....	322
11.5.3. Տուբերկուլյոզ ( <i>M.tuberculosis</i> ) .....	326
11.5.4. Բոր ( <i>M. leprae</i> ) .....	332
11.5.5. Լեզեռնելյոզ ( <i>L. pneumophila</i> ) .....	337
11.6. Ակտինոմիկոզներ .....	341
11.7. Սայիրոխետոզներ .....	343
11.7.1. Սիֆիլիս ( <i>T.pallidum</i> ) .....	344
11.7.2. Յամաճարակային հետադարձ տիֆ ( <i>B. recurrentis</i> ) ....	350
11.7.3. Էնդեմիկ հետադարձ տիֆ .....	353
11.7.4. Լեպտոսափիրոզ ( <i>L. interrogans</i> ) .....	355
11.8. Խլամիդիոզներ .....	359
11.8.1. Տրախոնա .....	361
11.8.2. Ուրոզենիտալ խլամիդիոզ .....	362
11.8.3. Օրնիտոզ .....	363
11.9. Ռիկետսիոզներ .....	364
11.9.1. Յամաճարակային բօավոր տիֆ ( <i>R. prowazekii</i> ) .....	365
11.9.2. Էնդեմիկ (առնետային) բօավոր տիֆ ( <i>R. typhi</i> ) .....	369
11.9.3. Q-տենդ (C. burnetii) .....	371
11.10. Միկոպլազմոզներ .....	372
	376
<b>Գլուխ 12. Վիրուսային ինֆեկցիաներ .....</b>	
12.1. Սուր ռեսպիրատոր վիրուսային ինֆեկցիաներ .....	376
12.1.1. Գրիպ (Orthomyxoviridae) .....	383
12.1.2. Պարամիքրովիրուսներ (Paramyxoviridae) .....	383
12.1.2.1. Պարագրիպ .....	384
12.1.2.2. Յամաճարակային պարօտիտ .....	385

12.1.2.3. Կարմրուկ .....	386
12.1.2.4. Ենթասուր սկլերեզող պանէնցեֆալիտ .....	388
12.1.2.5. PC (Ռեսայիրատոր սինցիտիալ) վիրուս .....	389
12.2. Կարմրախտ (Rubivirus) .....	390
12.3. Աղենովիրուսային ինֆեկցիաներ (Adenoviridae) .....	393
12.4. Ռաբդովիրուսներ (Rhabdoviridae) .....	396
12.4.1. Կատաղություն (Rabies) .....	396
12.4.2. Վեզիկուլյար ստոմատիտ .....	400
12.5. Հերպեսվիրուսներ (Herpesviridae).....	401
12.5.1. Herpes simplex virus-HSV .....	401
12.5.2. Զրծաղիկի վիրուս (Varicella-zoster virus-VZV) .....	406
12.5.2.1. Զրծաղիկ .....	407
12.5.2.2. Գոտևորող որքին.....	408
12.5.3. Cytomegalovirus-CMV .....	408
12.5.4. Epstein-Barr virus-EBV .....	409
12.6. Պիկոռնավիրուսներ (Picornaviridae) .....	410
12.6.1. Պոլիոնմիելիտ .....	410
12.6.2. Կոկսակի վիրուսներ .....	413
12.6.3. ECHO վիրուսներ .....	414
12.7. Վիրուսային հեպատիտներ .....	415
12.7.1. Վիրուսային հեպատիտ A .....	416
12.7.2. Վիրուսային հեպատիտ B .....	418
12.7. 3. Վիրուսային հեպատիտ D .....	424
12.7.4. Վիրուսային հեպատիտ C .....	425
12.7.5. Վիրուսային հեպատիտ E .....	426
12.8. ԶԻՎ (Retroviroide) .....	427
12.9. Կորոնավիրուսային ինֆեկցիաներ (Coronaviridae) ....	434
12.9.1. Ծանր սուր ռեսայիրատոր համախտանիշ (SARS) .....	437
12.9.2. Մերձավոր արևելյան ռեսայիրատոր համախտանիշ (MERS).....	438
12.10. Էբոլայի հեմոռօագիկ տենդ .....	439
<b>Օգտագործված գրականության ցանկ .....</b>	443
<b>Ցանկ .....</b>	445